ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 2013

ԳԻՐՔ 2

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2013

ՀՏԴ 332.1:06
ԳՄԴ 65.9(2)
Ս 783

Երաշխավորված է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Սուվարյան**
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Վարդան Բոստանջյան**
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Բենիամին Եղիազարյան**
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ռոբերտ Սարինյան**
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Վիլեն Խաչատրյան**
տնտեսագիտության թեկնածու **Ալվարդ Զատիկյան**
տնտեսագիտության թեկնածու **Կարեն Սարգսյան**

Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Ս 783 Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտական հոդվածների ժողովածու – 2013 / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ; Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, գիրք 2.- 224 էջ:

Գիտաժողովը նվիրված է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013):

Ժողովածուում ընդգրկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում անցկացված «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով հանրապետական գիտաժողովի մասնակիցների գիտական հոդվածները:

ՀՏԴ 332.1:06
ԳՄԴ 65.9(2)

ISBN 978-5-8080-1062-8
© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2013

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Կ. ՍԱՐԳՍՅԱՆ — Հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության վերլուծությունը ֆինանսատնտեսական ճգնաժամի համատեքստում 5

Ա. ԲԱՅԱՌՅԱՆ, Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ — Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին պետական պարտքերն ու դրանց կարգավորման միտումները 10

Ա. ԲԱՅԱՌՅԱՆ, Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ — Հայաստանի Հանրապետության պետական պարտքի գործոնային վերլուծության որոշակի մոտեցումներ 18

Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ — Վարկային դեֆոլտային սվոպներ. ռիսկերի կառավարում, թե ֆինանսատնտեսական համակարգի ապակայունացում: Հետճգնաժամային վերլուծություն 22

Ա. ՁԱԽԱՐՅԱՆ — Ճգնաժամային կառավարումը որպես բաժնետիրական ընկերությունների գործունեության բարելավման միջոց 29

Մ. ՀԱԿՈԲՅԱՆ, Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ — Ստվերային տնտեսության տեսական հարցերի շուրջ 35

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ — Տնտեսության ստվերային հատվածի գնահատման մեթոդների համեմատական վերլուծություն 41

Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ — Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների հարկային և տնտեսական խթանների հարցերի շուրջ 48

Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ — Հարկային պարտավորությունների և հարկման արդյունավետության փոխազդեցության տեսական հարցադրումները 52

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ — Ասիմետրիկ զուգահեռներ Մաքսային միության և ԵՄ շրջանակներում ազատ առևտրի գոտու միջև 56

Թ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ — Հակաճգնաժամային միջոցառումների արտերկրյա փորձի վերլուծությունը 61

Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ — Վարկային ճգնաժամեր. դիտողություններ 66

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ — Կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման խնդիրները և դրանց լուծման ուղիները 70

Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ — Հարկային համակարգի ձևավորման առանձնահատկություններն ու դրանց բարեփոխումը Հայաստանի Հանրապետությունում 73

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ — ՀՀ բաժնետոմսերի շուկայի ներկա վիճակը և հիմնախնդիրները 78

Լ. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ — Արժեթղթերի շուկայի չարաշահումների դեմ պայքարի առանձնահատկությունները միջազգային պրակտիկայում և ՀՀ-ում 83

Տ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ — Հարկային քաղաքականության և հարկային վարչարարության փոխազդեցության տեսական հարցադրումները ՀՀ-ում 88

Տ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ — Հարկերի վճարումից խուսափելու վարքագիծը հարկային պլանավորման համատեքստում 91

В. АМБАРЦУМЯН — Влияние блока БРИКС на международную валютную систему 95

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հ. ԱՎԱԳՅԱՆ — Ամուլսարի ոսկու «հանքավայրի» «կորզաթափոնների» և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը 101

Հ. ԱՎԱԳՅԱՆ, Ի. ՏԱՐԱՆՅԱՆ — Ազնիվ մետաղները Քաջարանի հանքանյութերում 105

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Գ. ՆԱՎՈՅԱՆ — Տնտեսության ագրարային հատվածում բիոէներգետիկայի զարգացման տնտեսական և բնակլիմայական գործոնները 108

Ա. ԲԱՅԱՐԴՅԱՆ, Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ — Գյուղատնտեսական տեխնիկայի վերազինման և օգտագործման արդյունավետության բարձրացման որոշ հնարավոր ուղիներ 116

Լ. ԵԴԻԳԱՐՅԱՆ — Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը 120

Բ. ԽԱԼԱՓՅԱՆ — Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ընդհանուր բնութագիրը և դրանց տեղը հանրային կառավարման համակարգում 127

Շ. ԿՈՍՏԱՆՅԱՆ, Լ. ԱՋԱՏՅԱՆ — ՀՀ ագրարային ոլորտում ինտեգրացիոն հարաբերությունների և տնտեսվարման ձևերի կատարելագործման ուղիները 131

Ն. ԿՈՒՊԵԼՅԱՆՑ — Բուսաբուծական արտադրանքի հետբերքահավաքային գործընթացների կազմակերպման կատարելագործման հիմնական ուղղությունները 137

Ե. ՀԱԿՈԲՅԱՆ — Ոռոգման ոլորտում առկա հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները 150

Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Լ. ԱՋԱՏՅԱՆ — Պարենային անվտանգության ապահովման և գյուղմթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի կարգավորման հիմնահարցեր 153

Ս. ՄԿՐՏՉՅԱՆ — ՀՀ-ում մետաղական ռենտայի ներդրման մեխանիզմի մասին 158

Թ. ՕՀԱՆՅԱՆ — ՀՀ գյուղական համայնքներում բնակչությանը մատուցվող ծառայությունների բարելավման ուղիները 161

A. ЗАТИКЯН — Обеспечение финансирования предпринимательской деятельности в РА: проблемы и перспективы развития 165

Т. ОГАНЯН, Р. АЛОЯН — Формирование и развитие кластеров АПК 170

H. MOTAZARE — Impact of Continuous Workforce Training in Tea Industry on the Quality of Tea 176

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ — Առողջապահության համակարգերն ու ֆինանսավորման աղբյուրները 180

Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ — Էլեկտրոնային կառավարության հայեցակարգը 184

Խ. ՄԽԻԹԱՐՅԱՆ, Ռ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ — Հարաբերական մրցակցային առավելությունները զբոսաշրջության ոլորտում 190

SH. TARJOMAN — Issues and Constraints Hindering Tourism Development in Lahijan City 197

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Կ. ԱԼԹՈՒՆՅԱՆ — Կառավարման հիմնախնդիրը էլիտալոգիայի տեսության շրջանակներում 202

Մ. ԱՂԱՅԱՆ — Տնտեսության մեջ իշխանության դերի հարցի շուրջ 205

Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Վ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ — ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա 210

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ա. ՍԱՐԳՍՅԱՆ — Հակացիկլիկ և երկարաժամկետ կարգավորումները՝ պետական տնտեսական քաղաքականության համատեքստում 215

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ — ԵՄ տնտեսական քաղաքականությունը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի համատեքստում 219

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ճգնաժամի հաղթահարմանն ուղղված հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության կարևոր չափորոշիչներից է համարվում մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան՝ հետճգնաժամային փուլում: Տնտեսության վերականգնման աստիճանը գնահատելու համար կարող ենք դիտարկել տարբեր երկրների ՀՆԱ-ի, տնտեսական ակտիվության ցուցիչի, կուտակված հիմնական կապիտալի, ներմուծման, արտահանման, սպառման, պահանջարկի, ծախսերի, գործազրկության ցուցանիշների շարժը: Նշված շարժի վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը: Առավել արդյունավետ է համարվում ԱՄՆ-ի հակաճգնաժամային միջոցառումները՝ հաշվի առնելով ճգնաժամի հետևանքով առաջացած տնտեսական անկման մակարդակը և տնտեսության հետճգնաժամային վերականգնման տեմպերը: Ինչպես հայտնի է, ԱՄՆ-ում ռեցեսիան սկսվեց ավելի վաղ, քան մյուս երկրներում, քանի որ հենց այդ երկրից սկիզբ առավ վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: 2008 թվականին Միացյալ Նահանգների ՀՆԱ անկումը կազմել է 3,32%, արտադրության անկումը՝ 34,02%, իսկ հիմնական կապիտալում ներդրումները նվազել են 17,84%-ով, որը դիտարկվող երկրների շարքում ամենամեծ ցուցանիշներից է[1]: Բայց, արդեն 2009 թվականի ընթացքում, երբ համաշխարհային տնտեսությունը թևակոխեց խորը ռեցեսիայի փուլ, ամերիկյան տնտեսության մեջ արդեն դրական տեղաշարժեր գրանցվեցին: Մասնավորապես, 2009 թվականի կտրվածքով արձանագրվեց արտադրության աճ՝ 3,18%-ով, իսկ ՀՆԱ անկումը կազմեց ընդամենը -0,54%, ինչը թույլ տվեց եզրակացնել, որ ԱՄՆ-ի տնտեսությունը դուրս է գալիս ռեցեսիայից և թևակոխում է աշխուժացման փուլ: Տնտեսության ամբողջովին վերականգնման համար պահանջվում էր նաև վերականգնել ներքին պահանջարկը, սպառումը, ներդրումները, արտահանումը, որոնց ցուցանիշները 2009 թվականին դեռևս բացասական էին: 2010 թվականին արդեն բոլոր մակրոտնտեսական ցուցանիշների գծով դրական շարժ արձանագրվեց:

Երկրորդ տեղում՝ ըստ տնտեսության անկման և հետճգնաժամային վերականգնման մակարդակի ցուցանիշների, Ռուսաստանն է: Այս երկրում ճգնաժամի հիմնական բացասական հետևանքներն առաջ եկան 2009 թվականին: ՀՆԱ անկումը կազմեց 3,0%, ատադրության անկումը՝ 9,3%, հիմնական կապիտալում ներդրումների կրճատումը՝ 43%: Վերջինս հանդիսանում է դիտարկվող երկրների մեջ ամենաբարձր ցուցանիշը: Ինչ վերաբերում է արտահանմանն ու ներմուծմանը, ապա այս երկրում զուտ արտահանումը կրճատվեց 24%-ով՝ արտահանման և ներմուծման միաժամանակյա կրճատմամբ՝ համապատասխանաբար 16% և 13%: Սակայն, արդեն 2010 թվականին ապահովվեց բոլոր մակրոտնտեսական ցուցանիշների դրական շարժ, որը համարյա նույն մակարդակի էր, ինչ որ մինչճգնաժամային փուլում: 2009 թվականին ՀՆԱ

[1] National Burea of Economic Analysis.

աճը կազմեց 4,4%, արտադրության աճը 8,2%, հիմնական միջոցներում ներդրումների աճը՝ 32%[1]: Բնականաբար, Ռուսաստանում տնտեսության բավական արագ վերականգնմանը մեծապես նպաստեց էներգակիրների գների աճը համաշխարհային շուկայում, որն ապահովեց տնտեսության մեջ լրացուցիչ ֆինանասական ներհոսքեր և հնարավորություն ընձեռեց կառավարությանն իրականացնել լայնամասշտաբ հակաճգնաժամային միջոցառումներ: Այստեղ արժանին պետք է մատուցել ռուսաստանյան կառավարությանը, քանի որ առանց վերջինիս լուրջ միջամտության՝ էներգակիրների վաճառքից ստացված միջոցները կկուտակվեին ֆինանսական հատվածում և չէին ուղղվի տնտեսության իրական հատվածին, ինչի հետևանքով ռեցեսիան այս երկրում ավելի երկար կտևեր ու կունենար ավելի սուր դրսևորումներ:

Դիտարկված երկրների շարքում առանձին դիրք է գրավում Չինաստանը: Բանը նրանում է, որ այս երկրում ռեցեսիա, որպես այդպիսին, տեղ չգտավ, այլ պարզապես արտադրության աճի տեմպերի որոշակի նվազում տեղի ունեցավ: Արտադրության աճի ցուցիչը 2008 թվականին կազմեց ընդամենը՝ 9,93%, հիմնական կապիտալի աճը՝ 24,7%. 2009 թվականին արտադրության աճը կազմեց 8,73%, հիմնական կապիտալի աճը՝ 18,9%: ՀՆԱ աճը 2009 թվականին կազմեց 9,57%[2], այն դեպքում, երբ նվազեցին թե՛ արտահանումը, և թե՛ ներմուծումը, համապատասխանաբար՝ 18% և 13,7%:

Վիճակագրական տվյալների վերլուծությունները ցույց են տալիս, որ առավել շատ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից տուժել է Ճապոնիան և հատկապես նրա տնտեսության իրական հատվածը: Այստեղ կառավարության ընդլայնողական և խթանող քաղաքականությունը սպասված արդյունքը չտվեց: Տնտեսական աճի ցածր տեմպերին գումարվեց նաև ճգնաժամի արդյունքում առաջ եկած համաշխարհային տնտեսության ռեցեսիան: Արդյունքում, 2009 թվականին արտադրության ցուցիչի նվազումը կազմեց 91%, ՀՆԱ կրճատումը՝ 4,82%: Սա թերևս ամենամեծ անկումն էր դիտարկվող երկրների շարքում: Չնայած կառավարության կողմից ձեռնարկված հակաճգնաժամային միջոցառումներին՝ տնտեսության իրական հատվածի ռեցեսիան շարունակվեց նաև 2010 թվականին, երբ արտադրության կուտակային ցուցիչի նվազումը կազմեց 52%, իսկ ՀՆԱ անկումը՝ 2,95%: Ռեցեսիան շարունակվեց 2011 թվականին ևս. արտադրության ցուցիչի նվազումը կազմեց 70%՝ 2010 թվականի համեմատ: Հիմնական կապիտալում ներդրումները կրճատվելով 2008-2010 թվականներին, միայն 2011 թվականին արձանագրեցին դրական շարժ՝ ընդամենը 0,27%-ի չափով[3]:

Ճգնաժամի ազդեցության աստիճանը ԵՄ վրա համադրելի է Ճապոնիայի հետ: ՀՆԱ նվազումը 2009 թվականին կազմեց 4,3%, արտադրության կուտակված ցուցիչի նվազումը՝ 66,3%, իսկ հիմնական կապիտալում ներդրումների կրճատումը `20%`2008 թվականի ցուցանիշների համեմատ: Պետք է փաստել, որ տնտեսության իրական հատվածի աջակցության միջոցառումները չտվեցին ցանկալի արդյունք և չվերականգնեցին մինչճգնաժամային ցուցանիշները: 2010 թվականի արտադրության կուտակային ցուցիչի նվազումը 2009 թվականի համեմատ կազմեց 34,5%, իսկ 2011 թվականին՝ 15,44%՝ 2010 թվականի համեմատ:[4] Սակայն, ՀՆԱ-ն, հիմնական կապիտալում ներդրումները, վերջնական սպառումը, արտահանումը և ներմուծումը ունեցան դրական շարժ արդեն 2010 թվականին, ինչը ցույց է տալիս տնտեսության վերականգնման միտումների մասին: Տնտեսության համաեմատաբար դանդաղ վերականգնումը ԵՄ-ում պայմանավորված էր առկա պարտքային ճգնաժամով և Միության կազմում ավելի թույլ զարգացած երկրների առկայությամբ: Այդ խնդիրների լուծումը մեծ ռեսուրսներ էր խլում ռազմավարական և մարտավարական խնդիրների իրագործման ժամանակ: Հարկ է նշել, որ ԵՄ անդամ առանձին երկրներում, ինչպիսիք Ավստրիան, Գերմանիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և այլն, տնտե-

---

1 www.gks.ru –Федеральная служба государственной статистики.
2 www.stats.gov.cn/english/**statistical**data - National Bureau of Statistics of China
3 Ministry of internal affairs. Statistics Bureau, Japan. http://www.stat.go.jp/english/index/
4 http://epp.eurostat.ec.europa.eu/portal/page/portal/eurostat/home–European comission-Eurostat-home

սության վերականգնման համախմբված ցուցանիշները գրեթե մոտ են գտնվել մինչճգնաժամային ցուցանիշներին:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ տնտեսության վերականգնման տեմպերի առումով ավելի շահեկան դիրք են գրավել ԱՄՆ-ը, Չինաստանը և Ռուսաստանը:

Ինչ վերաբերում է հակաճգնաժամային միջոցառումների վերլուծությանն՝ ըստ արժեքային չափանիշների, ապա այն ներկայացվում է ստորև բերվող աղյուսակում.

Աղյուսակ 1

Հակաճգնաժամային միջոցառումների արժեքների համեմատականն՝ ըստ երկրների

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԱՄՆ	ԵՄ	ՃԱՊՈՆԻԱ	ՉԻՆԱՍՏԱՆ	ՌՈՒՍԱՍՏԱՆ
Ընդամենը տնտեսության իրական հատվածի աջակցություն, մլրդ դոլ.	764,735	773.8	321.75	586	188.02
ՀՆԱ, մլրդ դոլ.	14075	9037	5474	5193	2376
Հակաճգնաժամային միջոցառումների արժեքի և ՀՆԱ հարաբերությունը,%-ով	5%	9%	6%	11%	8%

* ՀՆԱ ցուցանիշները հաշվարկված են հակաճգնաժամային միջոցառումների իրականացման ժամանակահատվածի՝ 2008-2009թթ. միջին ցուցանիշով

Հակաճգնաժամային միջոցառումների բացարձակ արժեքը ամենացածրն է Ռուսաստանում՝ կազմելով ընդամենը 188 մլրդ դոլար: Սակայն, հակաճգնաժամային միջոցառումների և ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է 8% և համարյա գտնվում է ԵՄ մակարդակի վրա (9%): Համեմատության համար նշենք, որ այդ ցուցանիշը ԱՄՆ-ում կազմել է մոտ 5%, Ճապոնիայում՝ 6%: Այս ցուցանիշով առաջատարը Չինաստանն է՝ 11%:

Կարևոր ենք համարում նշել, որ բացի քանակական գնահատականից՝ մեծ կարևորություն ունի նաև հակաճգնաժամային միջոցառումների որակական ասպեկտի դիտարկումը:

Հակաճգնաժամային միջոցառումների որակական կողմը գնահատելու համար կարելի է օգտագործել հետևյալ չափորոշիչները. տնտեսության հակաճգնաժամային կարգավորման առաջնահերթությունները, ձեռնարկված միջոցառումների ուղղությունները, պետական կարգավորման գործիքակազմը, հակաճգնաժամային աջակցության հասցեատերերը, ծրագրի ռազմավարականությունը:

Ենթակառուցվածքային զարգացման ծրագրերի արժեքները Չինաստանում և Ճապոնիայում կազմել են հակաճգնաժամային ամբողջ միջոցառումների արժեքի համապատասխանաբար 24.6% և 21.4%, ԱՄՆ-ում՝ 13%, ԵՄ-ում՝ 7%, Ռուսաստանում՝ 1.6%: Ինչպես տեսնում ենք այս չափանիշով Ռուսաստանը զգալիորեն զիջում է մյուս երկրներին: Ընդ որում ուշագրավ է այն հանգամանքը, որ Ռուսաստանում որպես իրականացված միջոցառումների միակ ենթակառուցվածքային ուղղություն կամ թիրախ է հանդիսանում տրանսպորտային ոլորտը, ապա ԱՄՆ-ում բացի տրանսպորտի ոլորտից, նախատեսված էր նաև գյուղական և քաղաքային ենթակառուցվածքների, կոմունիկացիոն-տեղեկատվական, ջրամատակարարման, էներգետիկ ենթակառուցվածքների զարգացումը, ինչի նպատակով նախատեսվել էր 28,5 մլրդ դոլար: ԵՄ-ում հատուկ ուշադրության է արժանացել համացանցային և տեղեկատվական-կոմունիկացիոն ոլորտը, ինչի նպատակով հատկացվել էր շուրջ 25 մլրդ եվրո: Չինաստանում ենթակառուցվածքների զարգացման հիմնական ուղղությունները տրանսպորտային և արդյունաբերական ենթակառուցվածքներն էին այդ թվում՝ նոր արդյունաբերական օբյեկտների կառուցումը, ինչի նպատակով ընդհանուր առմամբ ծախսվել է շուրջ 144 մլրդ դոլար:

Աղյուսակ 2

Էներգետիկայի և ենթակառուցվածքային ծրագրերի ֆինանսավորումն՝ ըստ դիտարկվող երկրների

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ԱՄՆ	ԵՄ	ՃԱՊՈՆԻԱ	ՉԻՆԱՍՏԱՆ	ՌՈՒՍԱՍՏԱՆ
էներգետիկա, մլրդ դոլ.	32.2	67.5	20.8	31.75	-
Ենթակառուցվածքային ծրագրեր, մլրդ դոլ.	98.5	54.38	69	144	2.85
էներգետիկայի աջակցության միջոցառումների արժեքի և ՏԻԱ աջակցության արժեքի հարաբերությունը, %-ով	4	9	6	5	-
Ենթակառուցվածքային աջակցության միջոցառումների արժեքի և ՏԻԱ աջակցության արժեքի հարաբերությունը, %-ով	12.9	7	21.4	24.6	1.5

Ինչպես տեսնում ենք, Ռուսաստանի հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում էներգետիկայի ոլորտը չի ֆինանսավորվել: Իսկ այս ճյուղի արդիականացումը բարձրացնում է օգտագործվող ռեսուրսների և հետևաբար արտադրության արդյունավետությունը մի կողմից, իսկ մյուս կողմից՝ այն տվյալ ճյուղում ինովացիաների ներդրման և զարգացման համար մեծ ներուժ է ապահովում: ԱՄՆ-ում էներգետիկայի ոլորտի զարգացման համար հատկացվել է 32,2 մլրդ դոլար, Չինաստանում և Ճապոնիայում՝ համապատասխանաբար 31,75 և 20,8 մլրդ դոլար, ԵՄ-ում՝ շուրջ 67,5մլրդ դոլար:

Մեկ այլ կարևոր ուղղություն՝ հակաճգնաժամային միջոցառումների կազմում, գիտության ոլորտի, ինովացիաների և մարդկային կապիտալում ներդրումների ֆինանսավորումն է: Թեև նշված ոլորտների զարգացումն ունի անուղղակի ազդեցություն տնտեսության իրական հատվածի վրա և կարող է դրական էֆեկտ ապահովել միայն երկարաժամկետ հեռանկարում, սակայն, պետք է փաստենք, որ հենց նշված ուղղությունների ֆինանսավորումից և դրանց արագ զարգացումից է ձևավորվում երկրի ապագա տեխնիկական և տեխնոլոգիական ներուժը: ԱՄՆ-ում այդ նպատակներին հատկացվել է հակաճգնաժամային միջոցառումների 34%-ը, Չինաստանում՝ 24%-ը, ԵՄ-ում և Ճապոնիայում՝ 9%-ը, իսկ Ռուսաստանում՝ ընդամենը 2%-ը: Արտասահմանյան երկրների հակաճգնաժամային միջոցառումներն աչքի են ընկնում նաև իրենց սոցիալական ուղղվածությամբ: ԱՄՆ-ում մարդկային կապիտալի զարգացմանը, որն իր մեջ ներառել է նաև առողջապահությունը, կրթությունը, աշխատակիցների որոկավորման բարձրացումը, ուղղվել է տնտեսության հակաճգնաժամային աջակցության միջոցների 33%-ը, Չինաստանում՝ 19%-ը:

Դիտարկվող երկրներում հակաճգնաժամային փաթեթի մեծ մասն ուղղվել է ռազմավարական ոլորտների զարգացմանը, որոնք օժտված են տնտեսության իրական հատվածի վրա հետաձգված ազդեցության էֆեկտով: Նշված ծրագրերի մեծ մասի հատույցի ժամկետը կազմում է 10-15 տարի կամ ընդհանրապես դրանք շահութաբեր չեն, ինչով և կարևորվում է այդ ոլորտների պետական աջակցությունը: Բայց, մյուս կողմից այնպիսի ռազմավարական ոլորտների զարգացումը, ինչպիսիք են ենթակառուցվածքները, էներգետիկան և գիտությունը, տնտեսության տարբեր ճյուղերի վրա ապահովում է համալիր ազդեցություններ և դրանցում գործարար ակտիվությունը կարող է խթանվել արդեն նշված ծրագրերի առաջին փուլերի իրականացման ընթացքում: Ինչպես տեսնում ենք վերոգրյալից, դիտարկված երկրների մեծ մասում հակաճգնաժամային միջոցառումների փաթեթի մեծ մասն ուղղվել են ռազմավարական ուղղությունների աջակցությանն ու զարգացմանը: Ինչ վերաբերում է մեր հարևան Ռուսաստանին, ապա այստեղ այդ մասով խնդիրներ կան. բացակայում է իրականացված հակաճգնաժամային միջոցառումների ռազմավարականությունը: Այս երկրում ֆինանսական միջոցների մեծ մասն ուղղվել է բանկային համակարգի և համակարգաստեղծ խոշոր ձեռնարկությունների ֆինանսական աջակցությանը, ինչը մեծամասամբ արդյունավետ չէր: Դրանով է նաև պայմանավորված Ռուսաստանում հակաճգնաժամային միջոցառումների գործիքակազմի բնույթը, որոնց շուրջ կեսը սելեկտիվ բնույթի են: Ի հակադրություն նշվածի, ԱՄՆ-ում հակաճգնաժամային միջոցառումների միայն 6%-ն է իրականացվել արդյունաբերական քաղաքականության շրջանակներում և կրել սելեկտիվ բնույթ՝ նախատեսված լինելով կոնկրետ ճյուղի կամ ձեռնարկության աջակցությանը:

ԵՄ-ում այս ցուցանիշը կազմում է 9 %, Չինաստանում՝ 10%, Ճապոնիայում՝ 3%: Ռուսաստանում այս ուղղությամբ հատկացվել է տնտեսության իրական հատվածի աջակցությանն ուղղված միջոցների առավել քան 30%-ը: ԱՄՆ-ի տնտեսության աջակցության համար հակաճգնաժամային միջոցառումների ծրագիրը պարունակում էր բազմաթիվ համընդհանուր տնտեսական և ինստիտուցիոնալ միջոցառումներ, որոնք ուղղված էին տնտեսական կառույցների կատարելագործմանը և տնտեսական աճի խթանմանը: Ռուսաստանում, այս առումով, հակաճգնաժամային քաղաքականությունը կրում է ավելի շատ ճյուղային ուղղվածություն և ըստ տնտեսական գործունեությունների՝ հստակ տարանջատվածությամբ էր աչքի ընկնում:

Ամփոփելով, հարկ է նշել, որ հակաճգնաժամային միջոցառումների բազմակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունը կարևոր հիմք է հանդիսանում հետագա ֆինանսա-տնտեսական ճգնաժամերի հաղթահարմանն ուղղված միջոցառումների պլանավորման և իրագործման համար:

Владимир Арутюнян
Карен Саргсян

АНАЛИЗ ЭФФЕКТИВНОСТИ АНТИКРИЗИСНОЙ ПОЛИТИКИ В КОНТЕКСТЕ ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКОГО КРИЗИСА

Аннотация

Одним из важных критериев эффективности антикризисных мер, направленных на преодоление кризиса, является посткризисная динамика макроэкономических показателей. Анализ последнего является важной основой для планирования и осуществления мер, направленных на преодоление дальнейших финансо-экономических кризисов.

Vladimir Harutyunyan
Karen Sargsyan

THE ANALYSIS OF THE EFFECTIVENESS OF ANTI-CRISIS POLICY WITHIN THE CONTEXT OF FINANCIAL CRISIS

Abstract

One of the important criteria for the effectiveness of anti-crisis measures is the post-crisis dynamics of the macroeconomic indicators. The analysis of the latter is an important basis for planning and implementation of measures aimed to overcome the further financial crises.

ԱՇՈՏ ԲԱՅԱԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տ.գ.դ., պրոֆեսոր

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Համաշխարհային ֆինանսատնտեսական համակարգում պետական պարտքը դարեր շարունակ հանդես է եկել որպես կարևորագույն բաղադրիչ: Ամբողջ այս ժամանակահատվածում այն արժանացել է տարբեր մտածողների, փիլիսոփաների, տնտեսագետների, հասարակական և քաղաքական գործիչների ուշադրությանը, ովքեր փորձել են մեկնաբանել տնտեսության և պետականության վրա պետական պարտքի թողած հնարավոր հետևանքներն ու ֆինանսական համակարգի կայունության ապահովման գործում դրա ունեցած դերակատարությունը:

Ժամանակակից տնտեսագիտական գրականությունում պետական պարտքի կառավարման վերաբերյալ հրապարակումները բավականին ակտիվացել են, ինչը պայմանավորված է 2008թ. վերջում սկիզբ առած ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառներով և հետևանքներով: Փաստն այն է, որ հակաճգնաժամային միջոցառումների իրականացմամբ պայմանավորված բազմաթիվ երկրներում շեշտակիորեն աճել են պետական պարտքի կուտակված ծավալները, ինչը որոշ մասնագետների հիմք է տվել եզրակացնելու, որ այն կարող է հանգեցնել մեկ այլ ճգնաժամի՝ «պարտքային ճգնաժամի»[1]:

Մեկ այլ տեսակետի համաձայն վերջին տարիներին պետական պարտքի աճի և դրա վերաբերյալ հրապարակումների ակտիվությունը կապված է ոչ միայն ֆինանսատնտեսական ճգնաժամի, այլ նաև հասարակության տնտեսական կյանքում պետության ներգրավվածության մեծացման հետ[2]: Ներկայումս պետական իշխանությունն ապահովում է ինչպես ավանդական հանրային ծառայություններ (հանրային բարիքների արտադրություն, սոցիալական երաշխիքների ապահովում և այլն), այլ նաև փորձում է ներգրավվել այնպիսի տնտեսական գործընթացներում, որոնք ավանդաբար տրված էին շուկայական մեխանիզմներին: Մինչդեռ պետության ստացած հարկային եկամուտները միշտ չէ, որ բավարարում են նման խնդիրների լուծմանն ուղղված ծախսերի ֆինանսավորմանը: Հետևաբար՝ պետությունը գիտակցված գնում է պետական պարտք ստանձնելու քայլին, որպեսզի կարողանա ֆինանսավորել իր իսկ կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը: Ուստի այս առումով հարկ է նշել, որ վերջին տասնամյակներին ամբողջ աշխարհում պետական բյուջեի դեֆիցիտը հիվանդագին երևույթ է, ինչը ցույց է տալիս, որ պետական իշխանությունները պետական պարտքի կուտակման են գնում անկախ տնտեսության զարգացման փուլային երևույթների հաղթահարման անհրաժեշտության, ինչը ևս հիմնավորում է, որ պետական պարտքը ներկայումս հաճախ դիտվում է որպես «եկամտի աղբյուր»:

Պետական պարտքի կառավարում ասելով ընդունված է հասկանալ այն միջոցառումների ամբողջությունը, որն ուղղված է պարտքի ծավալի և կառուցվածքի կարգավորմանը, նոր փոխառությունների ներգրավմանը և պայմանների որոշմանը, պետական փոխառությունների շուկայի կարգավորմանը, պարտքային խնդիրների հակաճգնաժամային կառավարման միջոցառումների

---

[1] Հարությունյան Վ.Լ., Խաչատրյան Վ.Վ., Ճգնաժամ. Մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 142:

[2] Чепуренко А.Ю., Мифы о социальном рыночном хозяйстве. Социальное рыночное хозяйство: концепции, практический опыт и перспективы применения в России. -М.: ТЕИС, 2007, с. 281.

իրականացմանը, պարտքի մարմանը և սպասարկմանը, պետական երաշխիքների տրամադրման պայմանների որոշմանը, փոխառու միջոցների արդյունավետ օգտագործման նկատմամբ հսկողության իրականացմանը[1]:

Ֆինանսական ճգնաժամերի ժամանակ, պարտքային շուկաների և վարկատուների վերաբերյալ փոփոխական և անորոշ հեռանկարների պայմաններում, մեծանում է ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման կարևորությունը: Մասնավորապես, ճգնաժամերի արտաքին բնույթն առաջացնում է նաև ներքին խնայողությունների վրա հիմնվելու անհրաժեշտություն, որպեսզի ծածկվի արտաքին ֆինանսավորման կտրուկ անկմամբ գոյացած ֆինանսական ճեղքը: Տոկոսադրույքների, փոխարժեքի և պարտքի հոսքերի բարձր տատանողականությունը ստիպում է պարտքի կառավարիչներին պատշաճ կեպով գնահատել և հնարավորինս կանխել ռիսկերը:

Պետական պարտքի կառավարման որակի բարելավման նպատակն է նվազեցնել տվյալ երկրի խոցելիությունը ներքին և արտաքին ֆինանսական շոկերի ազդեցության դեմ: Այդ շոկերի ազդեցությունը հատկապես մեծ է փոքր և զարգացող շուկայական տնտեսությունների համար, քանի որ դրանք հիմնականում դիվերսիֆիկացված չեն, ներքին ֆինանսական խնայողությունների մակարդակը փոքր է, և ֆինանսական համակարգերը զարգացած չեն: Այս առումով կարևոր նշանակություն է ձեռք բերում պետական պարտքի կառուցվածքի փոփոխությունների միտումների ուսումնասիրությունը, ինչը հնարավորություն կտա բացահայտել բացասական դրսևորումները՝ ժամանակին հակամիջոցառումներ իրականացնելու նպատակով:

ՀՀ պետական պարտքը հանդես է գալիս ներքին և արտաքին պարտքի տեսքով: Ներքին պետական պարտքը ձևավորվում է ի հաշիվ թողարկված պետական կարճաժամկետ պարտատոմսերի, միջին ժամկետայնության մասնակի մարումներով և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի: Արտաքին պետական պարտքը ձևավորվում է ըստ վարկառուների (ՀՀ կառավարություն, ՀՀ կենտրոնական բանկ, հատուկ ծրագրեր, ՀՀ կառավարության և ԿԲ-ի երաշխիքներով տրամադրված վարկեր) և ըստ վարկատուների (բազմակողմանի՝ Համաշխարհային բանկ, Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկ, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ, Եվրոպական Միություն, Արժույթի միջազգային հիմնադրամ, Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության հիմնադրամ, Ասիական զարգացման բանկ, և երկկողմանի՝ տարբեր պետություններ. Գերմանիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Ճապոնիա, Ռուսաստանի Դաշնություն):

ՀՀ ներքին և արտաքին պարտքերի վերաբերյալ ավելի բովանդակալից պատկերացում ունենալու համար ներկայացնենք համապատասխան վիճակագրական տվյալներ 2005-2012թթ. վերջի դրությամբ, որոնք ամփոփված են թիվ 1-4 աղյուսակներում[2]:

Ըստ 1 և 3 աղյուսակների պարզվում է, որ ՀՀ պետական պարտքը կազմել է.

- 2005թ. վերջի դրությամբ՝ 546.20 մլրդ դրամ, որից ներքին պարտքը՝ 51.35 մլրդ դրամ, իսկ արտաքինը՝ 494.85 մլրդ դրամ, կամ 1,099.23 մլն ԱՄՆ դոլար:
- 2006թ. վերջի դրությամբ՝ 496.21 մլրդ դրամ, որից ներքին պարտքը՝ 57.96 մլրդ դրամ, իսկ արտաքինը՝ 438.25 մլրդ դրամ կամ 1,205.64 մլն ԱՄՆ դոլար:
- 2007թ. վերջի դրությամբ՝ 507.16 մլրդ դրամ, որից ներքին պարտքը՝ 66.30 մլրդ դրամ, իսկ արտաքինը՝ 440.86 մլրդ դրամ, կամ 1,449.12 մլն ԱՄՆ դոլար:
- 2008թ. վերջի դրությամբ 584.64 մլրդ դրամ, որից ներքին պարտքը 100.89 մլրդ դրամ, իսկ արտաքինը՝ 483.75 մլրդ դրամ, կամ 1,577.11 մլն ԱՄՆ դոլար:
- 2009թ. վերջի դրությամբ՝ 1,270.73 մլրդ դրամ, որից ներքին պարտքը՝ 149.65 մլրդ դրամ, իսկ արտաքինը՝ 1,121.08 մլրդ դրամ, կամ 2,966.68 մլն ԱՄՆ դոլար:
- 2010թ. վերջի դրությամբ՝ 1,379.26 մլրդ դրամ, որից ներքին պարտքը՝ 180.27 մլրդ դրամ, իսկ արտաքինը՝ 1,199.00 մլրդ դրամ, կամ 3,299.02 մլն ԱՄՆ դոլար:

---

[1] Вавилов Ю. Я., Государственный долг, Москва Перспекива 2007, с. 217.

[2] Բոլոր աղյուսակների տվյալները վերցված են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005-2012թթ. հունվար-դեկտեմբեր ամիսներին» հաշվետվություններից, իսկ հաշվարկների հիմնական մասը կատարված է հոդվածագիրների կողմից:

- 2011թ. վերջի դրությամբ՝ 1592.71 մլրդ դրամ, որից ներքին պարտքը՝ 216.21 մլրդ դրամ, իսկ արտաքինը՝ 1,376.50 մլրդ դրամ, կամ 3,568.20 մլն ԱՄՆ դոլար:
- 2012թ. վերջի դրությամբ՝ 1,763.20 մլրդ դրամ, որից ներքին պարտքը՝ 254.68 մլրդ դրամ, իսկ արտաքինը՝ 1,508.52 մլրդ դրամ, կամ 3,737.84 մլն ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 1-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներքին պետական պարտքը ուսումնասիրվող ժամանակահատվածում աճել է 4.96 անգամ՝ 51,348 մլն դրամից հասնելով 254,676 մլն դրամի: Ներքին պետական պարտքի կառուցվածքում ամենամեծ աճն արձանագրվել է երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի ծավալում, որն աճել է շուրջ 9.89 անգամ՝ հասնելով 82,715 մլն դրամի, իսկ միջինից բարձր աճի տեմպ՝ նաև պետական կարճաժամկետ պարտատոմսերի ծավալում, որն աճել է 5,76 անգամ՝ հասնելով 37,427 դրամի: Նման վիճակագրությունը ցույց է տալիս նաև, որ չնայած միջին ժամկետայնությամբ պետական պարտքը բացարձակ մեծությամբ աճել է, այնուամենայնիվ, դրա աճը միջինից ցածր տեմպ է ունեցել:

Աղյուսակ 3-ը որոշակիորեն պատասխան է տալիս միջին ժամկետայնությամբ պարտքի միջինից ցածր աճի տեմպի պատճառների մասին: Մասնավորապես, դա կապված է 1-2 և 3-4 տարի մարման ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսերի համապատասխանաբար 2008 և 2010 թթ. շրջանառությունից հանելու և այլ ժամկետայնությամբ պարտատոմսերով փոխարինելու հանգամանքով:

Միաժամանակ հարկ է նշել, որ 2007թ. շրջանառության մեջ են դրվել խնայողական պարտատոմսեր, որոնց ծավալը, չնայած ներքին պետական պարտքի կառուցվածքում չնչին մասնաբաժնի, անշեղորեն աճել է, և 2012թ. վերջին կազմել է 871 մլն դրամ:

Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ արտաքին պետական պարտքի ծավալը 2005-2012թթ. ընթացքում աճել է շուրջ 3.4 անգամ՝ հասնելով 3,373.8 մլն դոլարի: Ընդ որում, չնայած տարբեր տարիներին ունեցած դինամիկ փոփոխությունների, ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի պարտքերի ընդհանուր աճը նշված ժամանակահատվածում գրեթե նույնն է և կազմել է համապատասխանաբար 3.43 և 3.37 անգամ: Աղյուսակ 4-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ 2005-2012թթ. միջինից զգալիորեն ավելի մեծ աճի տեմպ է արձանագրել երկկողմանի վարկատուների կողմից տրամադրված պետական պարտքը, որն աճել է 9.43 անգամ, այն դեպքում, երբ բազմակողմանի վարկատուների կողմից տրամադրված պետական պարտքը աճել է 2.68 անգամ:

Երկկողմանի վարկատուների շարքում մեծ դեր ունեն Ռուսաստանն ու Ճապոնիան, ընդ որում, եթե պետական պարտքի ֆինանսավորման գործում Ռուսաստանի հետ համագործակցությունը կրում է դրվագային, սակայն նշանակալի բնույթ, ապա ճապոնական կողմի ֆինանսավորումը շարունակական է և քննարկվող ողջ ժամանակահատվածում անընդհատ աճել է

Արտաքին և ներքին պետական պարտքերի մեծությունների քննարկումը ընդհանուր պատկերացում է տալիս դրանց փոփոխությունների և միտումների վերաբերյալ, սակայն պետական պարտքի բնագավառում կատարվող փոփոխությունների որակական գնահատման համար անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թե ինչպիսի կառուցվածքային փոփոխությունների են դրանք հանգեցրել, և արդյոք այդ փոփոխությունները ընդունող կողմի համար դրական կամ բացասական երանգ են պարունակում: Կառուցվածքային փոփոխություններն առավել ակնառու դարձնելու համար նպատակահարմար է դրանք ներկայացնել գծապատկերների տեսքով:

Աղյուսակ 1

ՀՀ ներքին պետական պարտքի կազմը ըստ 2005-2012թթ. վերջի դրությամբ, մլն դրամ

Հոդվածների անվանումները	Տարիները								2012թ.-ը 2005թ.-ի նկատմամբ, աճի տեմպ (անգամ)
	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	
Ընդամենը ներքին պետական պարտք, այդ թվում	51,348	57,963	66,303	100,893	149,650	180,266	216,209	254,676	4.96
1. Պետական կարճաժամկետ պարտատոմսեր	6,500	7,700	7,000	30,134	41,430	51,444	32,951	37,427	5.76
2. Միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսեր	36,488	38,088	47,421	36,874	71,375	86,411	111,201	128,821	3.53
3. Երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր	8,360	12,175	11,711	24,986	27,532	34,538	65,046	82,715	9.89
4. Խնայողական պարտատոմսեր	-	-	171	312	244	605	839	871	-
5. Ներգրավված վարկի ծավալ	-	-	-	8,588	9,069	7,269	6,172	4,843	-

Աղյուսակ 2

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի կազմն ըստ թողարկման ժամկետայնությամբ, մլն դրամ

Տարիներ	Պետական կարճաժամկետ պարտատոմսեր		Միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսեր				Երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր	Ընդամենը
	1-40 շաբաթ	41-52 շաբաթ	1-2 տարի	2-3 տարի	3-4 տարի	4-5 տարի	6 և ավելի տարի	
2005	2,500	4,000	1,151	7,920	6,869	20,549	8,360	51,348
2006	4,668	3,032	3,824	5,959	8,903	19,402	12,175	57,963
2007	1,000	6,000	5,470	7,615	13,916	20,420	11,711	66,132
2008	22,030	8,104	1,875	14,816	4,965	15,218	24,986	91,993
2009	9,865	31,565	-	35,016	3,965	32,394	27,532	140,336
2010	36,882	14,562	-	43,175	775	42,460	34,538	172,393
2011	22,971	9,980	-	50,836	-	60,365	65,046	209,198
2012	21,987	15,440	-	51,811	-	77,011	82,715	248,963
2012թ.-ը 2005թ.-ի նկատմամբ, աճի տեմպ (անգամ)	8.79	3.86	-	6.54	-	3.75	9.89	4.85

Աղյուսակ 3

ՀՀ արտաքին պետական պարտքի կազմն ու կառուցվածքն ըստ վարկառուների (2005-2012թթ. վերջի դրությամբ), մլն դոլար

Հոդվածների անվանումները	Տարիները								2012թ.-ը 2005թ.-ի նկատմամբ, աճի տեմպ (անգամ)
	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	
Ընդամենը արտաքին պետական պարտք, այդ թվում	1,099.2	1,205.6	1,448.9	1,577.1	2,966.7	3,299.0	3,568.2	3,737.8	3.40
1. ՀՀ կառավարության պարտք	916.5	1,036.9	1,277.1	1,420.8	2,465.9	2,736.4	2,950.9	3,143.3	3.43
2. ՀՀ կենտրոնական բանկի պարտք	176.4	163.7	167.1	151.9	500.8	562.6	617.3	594.6	3.37
3. ՀՀ կառավարության և ԿԲ-ի երաշխիքներով վարկեր	3.5	1.0	0.0	0.0	-	-	-	-	-
4. Հատուկ ծրագրեր	3.3	4.1	4.7	4.4	-	-	-	-	-

Աղյուսակ 4

ՀՀ արտաքին պետական պարտքի կազմն ու կառուցվածքը ըստ վարկատուների, մլն ԱՄՆ դոլար

Հոդվածների անվանումները	Տարիները								2012թ.-ը 2005թ.-ի նկատմամբ, աճի տեմպ (անգամ)
	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	
Ընդամենը արտաքին պետական պարտք, այդ թվում	*1,099.2*	*1,205.7*	*1,448.9*	*1,577.1*	*2,966.7*	*3,299.0*	*3,568.2*	*3,737.8*	*3.40*
1. Բազմակողմանի վարկատուներ՝	**982.8**	**1,070.5**	**1,203.7**	**1,234.7**	**2,013.9**	**2,253.9**	**2,475.4**	**2,638.8**	**2.68**
Համաշխարհային բանկ	750.8	849,2	978,5	1,019.1	1,213.9	1,265.5	1,336.9	1,470.2	1.96
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ	14.8	6.9	0.0	0.0	1.3	10.0	13.7	14.3	0.97
Գյուղ, զարգացման միջազգային հիմնադրամ	40.8	49.4	55.9	57.8	60.4	62.0	66.3	67.3	1.65
Արժույթի միջազգային հիմնադրամ	176.4	163.7	157.9	131.8	586.8	740.8	827.5	776.1	4.40
Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության հիմնադրամ (ՕՊՇԿ)	0.0	1.3	11.4	15.0	25.0	28.7	28.3	30.7	-
Ասիական զարգացման բանկ	0.0	0.0	0.0	8.1	126.5	146.7	165.3	187.9	-
2. Երկկողմանի վարկատուներ	**116.6**	**135.1**	**245.2**	**342.4**	**952.8**	**1,045.3**	**1,092.8**	**1,099.1**	**9.43**
Գերմանիա	69.3	86.5	110.4	125.3	142.7	132.7	155.0	193.1	2.79
Ֆրանսիա	4.2	4.7	5.2	5.0	4.8	4.3	4.1	4.0	0.96
ԱՄՆ	41.3	40.3	39.3	37.2	34.7	33.1	31.1	29.3	0.71
Ճապոնիա	1.6	3.7	90.4	174.9	270.6	374.4	397.2	355.9	222.44
Ռուսաստանի Դաշնություն	0.0	0.0	0.0	0.0	500.0	500.0	500.0	500.0	-
Աբու-Դաբիի զարգացման հիմնադրամ	-	-	-	-	0.03	0.86	3.08	3.90	-

Գծապատկեր 1 և 2-ում ներկայացված են ՀՀ ներքին պետական պարտքի կառուցվածքային փոփոխությունների միտումները: Ինչպես հեշտ է համոզվել, 2012թ. վերջի դրությամբ ներքին պետական պարտքն իր կառուցվածքով արդեն մոտ է նախաճգնաժամային տարիներին նկատվող պատկերին: Ճգնաժամային տարիներին նկատվում է միջնաժամկետ պետական պարտքի մասնաբաժնի նվազում, ինչը պայմանավորված է կարճաժամկետ և, մասամբ, նաև երկարաժամկետ պարտատոմսերի ծավալի աճով:

Գծապատկեր 1

ՀՀ ներքին պետական պարտքի կառուցվածքը 2005-2012թթ. վերջի դրությամբ, տոկոսներով



Գծապատկեր 2

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի կառուցվածքն ըստ թողարկման ժամկետայնությամբ (2005-2012թթ. համար), տոկոսներով



Գծապատկեր 3-ում ներկայացված են ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքային փոփոխությունների միտումներն ըստ վարկառուների ինստիտուցիոնալ բնութագրի: Միաժամանակ գծապատկերը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածում ըստ վարկառուների ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքը բավականին կայուն է եղել: Արդյունքում 2012թ. վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է ընդհանուրի 84.09, իսկ ԿԲ -ի պարտքը՝ 15.91 %-ը: ՀՀ կառավարության պարտքի առավելագույն մասնաբաժինը արձանագրվել է 2008թ.՝ հատելով 90%-ի սահմանագիծը:

Գծապատկեր 3

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ վարկառուների (2005-2012թթ. վերջի դրությամբ), տոկոսներով



Գծապատկեր 4-ում ներկայացված են ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքային փոփոխությունների միտումներն ըստ վարկատուների: Գծանկարում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ գրեթե կրկնակի նվազել է Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող վարկերի մասնաբաժինը: Ճգնաժամային տարիներին զգալի ավելացել է Արժույթի միջազգային հիմնադրամի և Ռուսաստանի Դաշնության նկատմամբ պարտքի մասնաբաժինը: Փոխարենը նվազել է ԱՄՆ-ի և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի նկատմամբ պետական պարտքը:

Գծապատկեր 4

ՀՀ արտաքին պետական պարտքի կազմն ու կառուցվածքն ըստ հիմնական վարկատուների (2005-2012թթ. համար), տոկոսներով



Այսպիսով, ելնելով վերոնշյալ վերլուծությունների արդյունքներից, կարելի է գալ այն հետևությանը, որ վերջին տարիներին ներքին պետական պարտքի կառուցվածքում արձանագրվող հիմնական միտումը միջնաժամկետ պետական պարտքի մասնաբաժնի աճն է: Ընդ որում, դա տեղի է ունենում 1-2 և 3-4 տարի մարման ժամկետ ունեցող պարտատոմսերի շրջանառությունից հանելու հետ մեկտեղ, ինչը կարող է հանգեցնել պետական պարտքի կառուցվածքի փոփոխության աճման միտումի, որի արդյունքում կարող է աճել նաև պետական պարտքի անկայունությունը: Ընդհանուր առմամբ, ներքին պետական պարտքի կառավարման անվտանգության տեսանկյունից նպատակահարմար է երկարաժամկետ պարտատոմսերի մասնաբաժնի ավելացումը, քանի որ դրանով պայմանավորված պարտքի սպասարկման ժամկետը և բեռը կբաշխվի էլ ավելի մեծ ժամանակահատվածի վրա:

Արտաքին պետական պարտքի կառուցվածքում կարևորագույն միտումը ճգնաժամային տարիներին երկկողմանի վարկերի մասնաբաժնի ավելացումն է, ինչը կարելի է ներկայացնել որպես բացասական դրսևորում: Նախ, նման կառուցվածքային փոփոխությունը մի կողմից հանգեցնում է առանձին երկրներից կախվածության մեծացման, իսկ մյուս կողմից էլ պակաս կարևոր չէ նաև այն, որ միջազգային կառույցների կողմից տրամադրվող վարկային միջոցները, որպես կանոն, արտոնյալ պայմաններով են տրամադրվում, ինչը նվազեցնում է դրանց սպասարկման բեռը:

Ашот Баядян
Айк Маркосян

ВНЕШНИЙ И ВНУТРЕННИЙ ДОЛГ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ТЕНДЕНЦИИ ИХ РЕГУЛИРОВАНИЯ

Аннотация

В странах с переходной экономикой, как и в Республике Армения, важным является регулирование экономических отношений с различными странами и международными организациями, связанных с формированием внешнего и внутреннего долга, их целевым использованием и возвратом в установленные сроки. В связи с этим в статье проведено исследование государственного долга, обусловленное его динамикой и структурными изменениями, а с точки зрения регулирования представлены авторские подходы.

Ashot Bayadyan
Hayk Markosyan

DOMESTCIC AND EXTERNAL PUBLIC DEBTS AND REGULATION METHODS IN THE REPUBLIC OF ARMENIA

Abstract

In the nations with economies in transition such the Republic of Armenia is, the regulation of economic relations with various nations and international organization (especially donor ones) related with the sources of debt financing, efficient use of these resources, and public debt service in a specific time period are stressed. Hence, the authors attempt to carry out research on the trends in the variables of interest, structural changes, and propose own approaches to debt regulation.

ԱՇՈՏ ԲԱՅԱԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տ.գ.դ., պրոֆեսոր

ՆՎԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱԿԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բյուջետային քաղաքականությունը կախված է ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին գործոններից, քանի որ տարեցտարի աճում են ոչ միայն դրսից ներգրավված միջոցների ծավալը, այլ դրանց դերն ու նշանակությունը պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներում: Դա վկայում է մի կողմից բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների սահմանափակվածության և մյուս կողմից՝ արտաքին աղբյուրներից բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման չափազանց մեծ կախվածության մասին: Ուստի որպես կարևորագույն նախապայման ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի կարգավորման հիմնախնդիրներից է դրա ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառու միջոցների տեսակարար կշռի մեծացումը, որը սերտորեն կապված է պետական պարտքի հետ: Ընդհանուր առմամբ պետական ներքին և արտաքին պարտքի ձևավորման, հաշվառման, կառավարման, մարման և սպասարկման հետ կապված խնդիրները կարգավորվում են 2008 թվականին ընդունված «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով: Պետական պարտքը, որը բաղկացած է ներքին և արտաքին պարտքերից, դա նախորդ տարիների բյուջեի դեֆիցիտի ու տվյալ տարվա ստացվելիք պակասուրդի հնարավորությունն է: Վերջինս նշանակում է, որ բյուջեի դեֆիցիտն ավելացնում է պետական պարտքի չափերը այդ պակասուրդի մեծությամբ: Վերոնշյալներից, ներքին պետական պարտքը ՀՀ անունից իրեն հանդեպ փոխառության կամ վարկային պայմանագրով ստանձնած և որոշակի պահի դրությամբ չմարված պարտքն է, որը ձևավորվում է ՀՀ ազգային արժույթով՝ կենտրոնական բանկի (ԿԲ) և առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերից: ՀՀ-ում ներքին պետական պարտքի հիմքը դրվել է 1995 թվականից, երբ թողարկվեցին և տեղաբաշխվեցին մինչև մեկ տարի շրջանառության ժամկետ ունեցող պետական կարճաժամկետ պարտատոմսերը, որոնց գծով առաջացած պարտքը կազմում է ներքին պետական պարտքի գերակշիռ մասը: Իր հերթին, արտաքին պետական պարտքը ՀՀ կառավարության գծով ԿԲ-ի անունից ոչ ռեզիդենտներին օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հանդեպ փոխառությունների կամ վարկային պայմանագրով ստանձնած և որոշակի պահի դրությամբ չմարված պարտավորությունն է[1]:

ՀՀ պետական պարտքի կազմի և կառուցվածքի, ինչպես նաև ՀՆԱ–ի նկատմամբ փոփոխությունների վերաբերյալ ավելի պարզ պատկերացում ունենալու համար, 2002-2012 թվականների համապատասխան տվյալներով կազմենք աղյուսակ 1-ը:

[1] www.armstat.am

Աղյուսակ 1

ՀՀ պետական պարտքի կազմն ու կառուցվածքը և փոփոխությունները ՀՆԱ–ի նկատմամբ ըստ 2002-2012 թվականների*

Տարիներ	Ընդամենը պետական պարտք (ՊՊ), մլրդ դրամ	Այդ թվում				Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ), մլրդ դրամ	ՊՊ/ՀՆԱ	ՆՊ/ՀՆԱ	ԱՊ/ՀՆԱ	ՆՊ/ԱՊ
		Ներքին պարտք (ՆՊ), մլրդ դրամ	Տեսակարար կշիռ, %	Արտաքին պարտք (ԱՊ), մլրդ դրամ	Տեսակարար կշիռ, %					
2002	623.7	35.3	5.7	588.4	94.3	1,362.5	45.8	2.6	43.2	6.0
2003	658.1	41.0	6.2	617.1	93.8	1,624.6	40.5	2.5	38.0	6.6
2004	618.6	46.4	7.5	572.2	92.5	1,907.9	32.4	2.4	30.0	8.1
2005	544.8	51.3	9.4	493.4	90.6	2,242.9	24.3	2.3	22.0	10.4
2006	496.2	58.0	11.7	438.2	88.3	2,656.2	18.7	2.2	16.5	13.2
2007	507.1	66.3	13.1	440.8	86.9	3,149.3	16.1	2.1	14.0	15.0
2008	584.6	100.9	17.3	483.7	82.7	3,568.2	16.4	2.8	13.6	20.9
2009	1,270.7	149.6	11.8	1,121.1	88.2	3,141.7	40.4	4.7	35.7	13.3
2010	1,379.3	180.3	13.1	1,199.0	86.9	3,460.2	38.9	5.2	34.7	15.0
2011	1,592.7	216.2	13.6	1,376.5	86.4	3,776.4	42.2	6.0	36.2	15.7
2012	1,763.2	254.7	14.4	1,508.6	85.6	3,981.5	44.3	6.4	37.9	16.9

* Աղյուսակի կազմումը և հաշվարկների կատարվել է հեղինակների կողմից:

Աղյուսակ 1-ի տվյալներից ակնհայտ է, որ ՀՀ պետական պարտքն ըստ տարիների ունեցել է աճման միտում, ինչպես ընդամենը, այնպես էլ ներքին և արտաքին պարտքերի առումով: Ճիշտ է մինչև 2009 թվականը ընդամենը պետական պարտքը նվազել է և 2002թ. 623.7 մլրդ դրամի փոխարեն կազմել է 584.6 մլրդ դրամ՝ պակասելով 39.1 մլրդ դրամի չափով, սակայն սկսած նույն թվականից այդ պարտքն ունեցել է աճման միտում (համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով) և 2012 թվականի վերջին կազմել է 1763.2 մլրդ դրամ՝ գերազանցելով 2008թ. մակարդակը 1178.6 (1763.2-584.6) մլրդ դրամով կամ 2 անգամ: Միաժամանակ, ըստ աղյուսակի տվյալների, կառուցվածքային առումով ընդամենը պետական պարտքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել է արտաքին պարտքը, որը 2002թ. կազմել է 84.3%, իսկ ամենացածրը 2008 թվականին՝ 82.7%, իսկ ահա ներքին պարտքը վերջինիս համահունչ եղել է ամենաբարձրը՝ կազմելով 17.3%, որը մեր կարծիքով դրական երևույթ է (ավելի լավ է պարտք ունենալ քո երկրի ներսից, այլ ոչ թե այլ երկրից):

Քանի որ պետական պարտքը և ներքին ու արտաքին պարտքերը պայմանավորված են մեկը մյուսով, ուստի դրանց միջև փոխկապվածությունները բացահայտելու համար կատարենք երկգործոնային վերլուծություն՝ հիմնվելով հետևյալ ռեգրեսիոն հավասարման վրա[1]

$$y_{x_1,x_2} = a_0 + a_1x_1 + a_2x_2 \qquad (1)$$

որտեղ

y_{x_1,x_2} –ը արդյունքային ցուցանիշն է (պետական պարտք),

x_1–ը ազդող գործոն (ներքին պարտք),

x_2 –ը ազդող գործոն (արտաքին պարտք),

a_1–ը և a_2 –ը ռեգրեսիայի գործակիցներ են ըստ x_1–ի և x_2 –ի ազդեցության չափի, որոնք ենթակա են որոշման,

a_0–ն ռեգրեսիայի հավասարման մեջ որոշման ենթակա գործակիցն է, որը ցույց է տալիս այլ գործոնների ազդեցության չափը:

[1] Բայադյան Ա.Հ., Ֆինանսական վերլուծություն, Երևան, 2013, էջ 129:

(1) հավասարման մեջ ներառված a_0, a_1 և a_2 մեծությունների որոշման համար օգտագործենք «Փոքրագույն քառակուսիների» վիճակագրական մեթոդը և դրան համահունչ կազմված նորմալ հավասարումների համակարգը:

$$\begin{cases} \sum y = na_0 + a_1 \sum x_1 + a_2 \sum x_2 \\ \sum yx_1 = a_0 \sum x_1 + a_1 \sum x_1^2 + a_2 \sum x_1 x_2 \\ \sum yx_2 = a_0 \sum x_2 + a_1 \sum x_1 x_2 + a_2 \sum x_2^2 \end{cases} \qquad (2)$$

Հաշվարկը կատարված է Excel ծրագրի միջոցով և արդյունքում ստացվել են՝

a_0=6.2612

a_1=1.1251

a_2=0.9751

Տեղադրելով ստացված մեծությունները (1) հավասարման մեջ՝ կստանանք

$$y_{x_1,x_2} = 6{,}2612 + 1{,}1251x_1 + 0{,}9751x_2 \qquad (3)$$

Որպեսզի համոզվենք, թե ինչպիսի փոխկապվածություններ կան y–ի, x_1–ի և x_2–ի միջև նույն Excel ծրագրով հաշվարկենք կոռելյացիայի գործակիցները (ryx_1, ryx_2, rx_1x_2) և դետերմինացիայի մեծությունները (dyx_1, dyx_2, dx_1x_2-երը արտահայտված %–երով), արդյունքները ներկայացնելով աղյուսակ 2–ում:

Աղյուսակ 2

Կոռելյացիայի գործակիցներ և դետերմինացիայի մեծություններ

	y	x_1	x_2		y	x_1	x_2
y	-	ryx_1=0.9601	ryx_2=0.9977	y	-	dyx_1=92.2%	dyx_2=99.5%
x_1		-	rx_1x_2=0.9439	x_1		-	dx_1x_2=89.1%
x_2			-	x_2			-

Աղյուսակ 2–ում բերված հաշվարկային տվյալներից պարզ է դառնում, որ y–ի, x_1–ի և x_2–ի միջև եղած փոխկապվածությունները բավականաչափ բարձր են, մասնավորապես պետական ու արտաքին պարտքերի միջև կոռելյացիայի գործակիցը (ryx_1) կազմում է 0.9977, իսկ պետական պարտքի կախվածությունը (dyx_1) արտաքին պարտքից կազմում է 99.5%, իսկ ներքին պարտքից՝92.2%: Միաժամանակ բարձր է նաև ազդող գործոնների միջև եղած դետերմինացիան, որը կազմում է 88.1%:

Յուրաքանչյուր երկրի համար կարևորվում է նաև պարտքի և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) հարաբերակցություններն ու դրանց միջև գործող ինդեքսային փոխկապվածությունները: Ուստի, ելնելով վերոնշյալներից՝ աղյուսակ 1–ում ընդգրկված հաշվարկային տվյալների հիման վրա բացահայտենք դրանց միջև փոխկապվածությունները մեր կողմից ներկայացվող ինդեքսային մեթոդով: Այն կունենա հետևյալ տեսքը՝

$$\frac{\text{ՆՊ}\ (y)}{\text{ՊՊ}} = \frac{\text{ՆՊ}\ (1)}{\text{ՀՆԱ}} \times \frac{\text{ՀՆԱ}\ (2)}{\text{ԱՊ}} \times \frac{\text{ԱՊ}\ (3)}{\text{ՊՊ}} \qquad (4)$$

որտեղ՝

ՆՊ/ՊՊ–ը հարաբերակցությունը պետական պարտքում ներքին պարտքի տեսակարար կշիռն է,

ՆՊ/ՀՆԱ–ը հարաբերակցությունը ցույց է տալիս ՀՆԱ–ի նկատմամբ ներքին պարտքի գումարի չափը,

ՀՆԱ/ԱՊ–ը հարաբերակցությունը բնորոշում է արտաքին պարտքի մեկ միավորի բաժնին ընկնող ՀՆԱ–ի արժեքային չափը,

ԱՊ/ՊՊ–ը հարաբերակցությունը արտաքին պարտքի տեսակարար կշիռն է պետական պարտքում:

Պարզաբանման առումով հաշվարկները ներկայացնենք 2002 և 2012թթ. տվյալների հիման վրա

- 2002թ. համար

$$\frac{35.2}{623.7} = \frac{35.2}{1,362.5} \times \frac{1,362.5}{588.4} \times \frac{588.4}{623.7} = \underset{(1)}{0.0258} \times \underset{(2)}{2.3156} \times \underset{(3)}{0.9434} = 0.0564$$

կամ 5.64%:

- 2012թ. համար՝

$$\frac{254.7}{1,763.2} = \frac{254.7}{3,981.5} \times \frac{3,981.5}{1,508.6} \times \frac{1,508.6}{1,763.2} = \underset{(1)}{0.0640} \times \underset{(2)}{2.6392} \times \underset{(3)}{0.8556} = 0.1445$$

կամ 14.45%:

Կատարված հաշվարկներով կարող ենք գալ այն հետևության, որ ըստ 2002 թվականի տվյալների արդյունքային ցուցանիշի (y) վրա 1–ին գործոնն ազդում է 2.6%–ով (որքան փոքր լինի այնքան լավ), 2–րդ գործոնն ազդում է 2.3 անգամ կամ 231.6%–ով (որքան մեծ լինի այնքան լավ) և 3–րդ գործոնն ազդում է 5.6%–ով (որքան փոքր լինի այնքան լավ): Նման ձևով կարող ենք կատարել մեկնաբանություններ 2012 թվականի համար:

Այսպիսով, ելնելով վերոնշյալ վերլուծություններից, որպես անհրաժեշտ նախապայման՝ ներքին և արտաքին պետական պարտքերի խելամիտ կառավարումն ունի իր ուրույն տեղը, քանի որ դրանք կարևորվում են պետական և իրական հատվածների ֆինանսների կառավարման գործընթացում: Ուստի այդ պարտքերի կառավարման բարելավման առումով առաջարկում ենք ուշադրության կենտրոնում պահել ներքին և արտաքին պարտքերի հարաբերակցությունը, արդյունքում աստիճանաբար նվազեցնելով արտաքին պարտքի ձևավորման գումարների չափերը՝ խորացնելով ու նախապատվությունը տալով երկրի ներսում արտոնյալ պայմաններով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությանը:

Ашот Баядян
Нвард Хачатрян

НЕКОТОРЫЕ ПОДХОДЫ К ФАКТОРНОМУ АНАЛИЗУ ГОСУДАРСТВЕННОГО ДОЛГА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Аннотация

В любой стране для осуществления эффективной деятельности важно вести правильную экономическую политику, в частности, связанную с формированием государственного долга и его целевым использованием. Поскольку государственный долг тесно связан с внутренним валовым продуктом (ВВП), в статье поставлена цель провести исследование относительно долга (общего, внутреннего, внешнего) и ВВП, а также факторный анализ между ними.

Ashot Bayadyan
Nvard Khachatryan

SOME APPROACHES TO THE FACTOR ANALYSIS OF THE PUBLIC DEBT OF THE REPUBLIC OF ARMENIA

Abstract

In every nation, implementation of the right economic policy is stressed to ensure efficient performance, namely policies related with the sources of public debt financing and use of the resources are of importance. Taking into account the fact that the public debt is associated with the gross domestic product, we attempt to conduct a research that is related with the domestic and external public debts and the gross domestic product and the factor analysis among these variables.

ԷՄԻԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՎԱՐԿԱՅԻՆ ԴԵՖՈԼՏԱՅԻՆ ՍՎՈՊՆԵՐ. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԹԵ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՈՒՄ: ՀԵՏՁԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ:

Միջազգային ֆինանսական շուկաներում բռնկված խուճապից, թերևս, անցել է հինգը տարի, կարելի է ասել, որ համաշխարհային ֆինանսական համակարգը դեռևս չի ապաքինվել ամբողջովին՝ 2008թ. ենթարկված աղետաբեր ցնցումներից, որոնց ծագումը անկախ ֆինանսական ճգնաժամի հետաքննչական հանձնաժողովի (The Financial Crisis Inquiry Commission) կողմից հրապարակած զեկույցում նշված պատճառներից, որոշ տնտեսագետներ կապում են առևտրային հարաբերություններում ֆինանսական ածանցյալ գործիքների՝ վարկային դեֆոլտային սվոպների (credit default swaps) մասնակցության հետ[1]: Թեև, չի անտեսվում այն փաստը, որ վարկային դեֆոլտային սվոպները սպեկուլյանտների ձեռքին դարձել էին, այսպես ասած, ֆինանսական համակարգն ապակայունացնող զենք, այնուհանդերձ ինչպիսին էր վարկային դեֆոլտային սվոպների մասնակցության չափի իրական գնահատականը հիպոթեքային ճգնաժամի առաջացման գործում, կամ այլ կերպ, կլիներ արդյոք ճգնաժամ առանց վարկային դեֆոլտային սվոպների:

Շնորհիվ ֆինանսական հարաբերությունների կառուցողականության՝ Միացյալ Նահանգներում մշակվեց արժեթղթավորման «սննդե շղթան» (գծապատկեր 1), որն այսպես ասած «ֆինանսական կամուրջ» էր հանդիսանում ԱՄՆ-ի վարկառուների և աշխարհի գրեթե բոլոր երկրների ներդրողների միջև:

Այդ համակարգը թույլ էր տալիս վարկատուներին, ի հաշիվ ներդրումային բանկերի վաճառած վարկառուների պարտքային պարտավորությունները հավաստող փաստաթղթերի խմբավորման միջոցով մշակված բարդ ածանցյալ գործիքների՝ ապահովված պարտքային պարտավորությունների (collateralized debt obligations), փոխանցել վարկային ռիսկը շուկայի այլ մասնակիցների՝ տվյալ դեպքում ներդրողների միջև: Այսինքն՝ պարտատոմսերի բովանդակությանը մոտ ապահովված պարտքային պարտավորությունները թողարկվում էին ներդրումային բանկերի և մարվում ԱՄՆ-ի վարկառուների կողմից, սակայն մինչ ներդրողներին առաջարկվելը վերջիններս ենթարկվում էին վարկանիշավորման «Ստանդարտ ընդ Փուրզ» (Standard & Poor's),

[1] Alexander Floum «What Caused the Economic Crisis?» 24 April 2009 (http://www.globalresearch.ca/what-caused-the-economic-crisis)

«Մուդիզ» (Moody's) և «Ֆիթչ Ռեյթինգս» (Fitch Ratings) աշխարհահռչակ վարկանիշային գործակալությունների կողմից և ի զարմանս արժանանում ամենաբարձր գնահատականներին (AA, AAA)[1]: Արդյունքում, եթե վարկանիշային գնահատականը չէր համապատասխանում ֆինանսական գործիքի բովանդակությանը, ապա տուժում էր միայն դրա սեփականատերը՝ ներդրողը:

Գծապատկեր 1

Արժեթղթավորման «սննդե շղթան» և դրա մեխանիզմը[2]



Գծապատկեր 2

Ոչ ստանդարտ վարկերի (subprime loans) տեսակարար կշիռը ԱՄՆ-ում տրամադրված ընդհանուր վարկերի կազմում (մլրդ ԱՄՆ դոլար)[3]



[1] By Richard Tomlinson & David Evans«CDO Boom Masks Subprime Losses, Abetted by S&P, Moody's, Fitch», May 31, 2007 (http://www.bloomberg.com/news/2007-05-31/cdo-boom-masks-subprime-losses-abetted-by-s-p-moody-s-fitch.html)

[2] http://www.ritholtz.com/blog/2009/10/securitized-loans-are-5x-more-likely-to-be-delinquent/

[3] Գծապատկերը կառուցվել է հետևյալ կայքում ներկայացված պաշտոնական տվյալների հիման վրա http://www.jparsons.net/housingbubble/presentation/

Այսպիսով՝ ստեղծվել էր մի իրավիճակ, համաձայն որի վարկատուներին ոչ թե հետաքրքրում էր վարկառուի հուսալիությունը, այլ տրամադրվող վարկերի ծավալների ընդլայնումը, իսկ ներդրումային բանկերին՝ ոչ թե իրենց կողմից թողարկված արժեթղթերի և դրանց վարկանիշային գնահատականի համապատասխանելիությունը, այլ վերջիններիս վաճառքի ծավալների մաքսիմալացումը:

Հետևաբար և, ԱՄՆ-ի ֆինանսական շուկայի վերը մատնանշված մասնագիտացված անձանց, այսպես ասած, «հետաքրքրությունները» նպաստեցին ԱՄՆ-ում տրամադրվող վարկերի՝ այդ թվում նաև ոչ ստանդարտ վարկերի (subprime loans) ծավալների մեծացմանը (գծապատկեր 2-ը): Վարկերի այս տարատեսակը տրամադրվում է միմիայն կասկածելի վարկային պատմություն ունեցող վարկառուներին՝ այլ կերպ ասած վարկատուն քաջ գիտակցում է տրամադրված ֆինանսական միջոցների անվերադարձելիության բարձր հավանականությունը[1]: Բայց, քանի դեռ, վարկառուի վարկային պարտավորությունները հավաստող փաստաթղթերը գնվում էին ներդրումային բանկերի կողմից, բավականին «հուսալի» ապահովված պարտքային պարտավորություններ թողարկելու նպատակով, ոչ ստանդարտ վարկերի (subprime loans) շուկան շարունակաբար ընդլայնվում էր:

Շահագրգռված լինելով ինչպես վարկերի (այդ թվում ոչ ստանդարտ), այնպես էլ ներդրողների ամենալայն շրջանակներում, վերջիններովս իսկ ապահովված (ի հաշիվ կեղծ վարկանիշային գնահատականների ապահովված պարտքային պարտավորություններում կատարվելիք ներդրումները բավականին հուսալի ներկայացման) ապահովված պարտքային պարտավորությունների վաճառքի ծավալների ընդլայնմամբ, ֆինանսական ինստիտուտների կողմից վարվող գերշահույթային քաղաքականությունը «տնտեսական պղպջակի» ձևավորման պատճառ հանդիսացավ: Ինչը, կարելի է ասել, էլ ավելի պայթյունավտանգ դարձավ 2004թ. ԱՄՆ-ի Արժեթղթերի հանձնաժողովի կողմից ֆինանսական լծակի նկատմամբ սահմանափակումների թուլացման վերաբերյալ ընդունած որոշման համաձայն (պարտք/կապիտալ հարաբերակցությունը 12:1-ից հասցրվեց 30:1-ի)[2]: Սա թույլ տվեց ներդրումային բանկերին մեծացնել սեփական պարտքի չափը, այլ կերպ, հնարավորություն ընձեռվեց էլ ավելի ընդլայնել ներդրումային բանկերի և վարկային կազմակերպությունների փոխկապակցված գործունեության ծավալները:

Ելնելով ներդրումային քաղաքականության արդյունավետ կազմակերպմանն ուղղված՝ ներդրված միջոցների հնարավոր կորուստները հնարավորինս մինիմալիզացնելու միտումից՝ ներդրողներին, «տնտեսական պղպջակի» ժամանակահատվածում, վարկատուների կողմից անտեսված վարկային ռիսկի արդյունավետ կառավարման հնարավորություն առաջարկելու նպատակով, մշակվեց և, այսպես ասած, խաղի մեջ մտցրվեց բոլորովին երիտասարդ (մոտ 10 տարվա պատմություն ունեցող) ածանցյալ գործիքներ՝ վարկային դեֆոլտային սվոպներ: Սրանք ապահովագրական պոլիսներին մոտ համաձայնագրեր են՝ օժտված որոշակի առանձնահատկություններով.

- վարկային դեֆոլտային սվոպների գինը ավելի ցածր է, քան ապահովագրական պայմանագրինը,
- վարկային դեֆոլտային սվոպներ վաճառողներ կարող են լինել ինչպես ապահովագրական ընկերությունները ու հեջավորման ֆոնդերը, այնպես էլ բանկերը, ներդրումային ընկերությունները, ինչպես նաև ֆիզիկական և այլ իրավաբանական անձինք,
- վարկային դեֆոլտային սվոպների ապահովագրական օբյեկտ կարող են լինել ցանկացած տեսակի ապահովագրություններ, ընդ որում՝ գնորդը կարող է ոչ մի կապ չունենալ վերջինիս հետ՝ ի տարբերություն ապահովագրական պոլիսի, որտեղ հստակ պահպանվում է շահերի բացառման սկզբունքը[3]:

---

1 http://www.investorwords.com/6940/subprime_loan.html

2 William D. Cohan «How we got the crash wrong», May 21, 2012 (http://www.theatlantic.com/magazine/archive/2012/06/how-we-got-the-crash-wrong/308984/)

3 «Comparing Credit Default Swaps to Insurance Contracts: Did the New York State Insurance Department Get It Right?», The Journal on the Law of Investment & Risk Management Products, Dec 2008 (http://www.svderivatives.com/wp-content/uploads/2010/10/ComparingCreditDefaultSwaps.pdf)

Թերևս պարզ է, որ նշվածը վարկային դեֆոլտային սվոպներին դարձնում է չափազանց գրավիչ, սակայն միևնույն ժամանակ նույնքան վտանգավոր և անկայուն՝ կեղծ վարկանիշային գնահատականներով օժտված ապահովված պարտքային պարտավորությունների վարկային ռիսկը կառավարելու գործում:

Ինչևէ, վերոնշյալը չխանգարեց աշխարհի խոշորագույն ապահովագրական ընկերությանը՝ «էյ Այ Ջի»-ին (AIG), «տնտեսական պղպջակի» ողջ ժամանակահատվածում պարտքային պարտավորությունների (խոսքը տվյալ պահին գնում է ապահովված պարտքային պարտավորություններով ամրագրված պարտավորությունների կամ այլ կերպ, վարկային ռիսկի մասին) ապահովագրությունը կազմակերպել վարկային դեֆոլտային սվոպների վաճառքի միջոցով՝ նպաստելով վերջիններիս շուկայի ինչպես կայացմանը, այնպես էլ ընդլայնմանը (գծապատկեր 3):

Սակայն, սա միակ ռիսկային քայլը չէր «էյ Այ Ջի»-ի (AIG) կողմից վարվող ներքին տնտեսական քաղաքականության մեջ: Հայտնի է, որ «էյ Այ Ջի»-ին (AIG), տվյալ ժամանակահատվածում, վճարում էր սեփական աշխատակիցներին անհավանական մեծ պարգևավճարներ (բոնուսներ)՝ կնքվող վարկային դեֆոլտային սվոպների ծավալներից ելնելով:

Գծապատկեր 3

Վարկային դեֆոլտային սվոպներ շուկայի ընդհանուր ծավալը (մլրդ ԱՄՆ դոլար)[1]



Նշված երևույթը առանձնակի ուշադրության արժանացավ Արժույթի միջազգային հիմնադրամի 2003-2007թթ. գլխավոր տնտեսագետ Ռագհուրամ Ռաջանի կողմից: Ով, մասնակցելով 2005թ. տեղի ունեցած ամենամյա «Ջեկսոն Հոլ» սիմպոզիումին (այն համարվում է աշխարհի ամենաէլիտար ֆինանսական կոնֆերանսը), որտեղ ներկա էին համաշխարհային բանկային համակարգի այնպիսի հսկաներ, ինչպիսիք են՝ Ալան Գրիսպենը (*ԱՄՆ-ի Ֆեդերալ Ռեզերվային համակարգի նախագահ 1987-2006թթ.*[2]), Բեն Բերնակեն (*ԱՄՆ-ի Ֆեդերալ Ռեզերվային համակարգի նախագահ սկսած 2006թ-ից*[3]), Լոուրենս Սամերսը (*ԱՄՆ-ի ֆինանսների նախարար 1999-2001թթ, «Ազգային տնտեսական խորհուրդի» նախագահ (Director of the National Economic Council)՝ սկսած 2009-ից մինչ օրս*[4]) և այլոք, հանդես եկավ «Ֆինանսական զարգացումը

[1] Գծապատկերը կառուցվել է հետևյալ կայքում ներկայացված պաշտոնական տվյալների հիման վրա http://www.marketoracle.co.uk/Article2894.html
[2] http://www.infoplease.com/biography/var/alangreenspan.html
[3] http://www.infoplease.com/biography/var/benbernanke.html
[4] http://www.biography.com/people/lawrence-h-summers-507286

դարձրե՞ց աշխարհն ավելի ռիսկային» (Has Financial Development Made the World Riskier)[1] զեկույցով: Նա վերլուծական կարծիք ներկայացրեց առանձին կազմակերպությունների կողմից մշակված պարգևատրումային համակարգերի վերաբերյալ՝ համաձայն որի ահռելի մեծ քանակությամբ չարդարացված բոնուսներ էին տրվում կազմակերպության աշխատակիցներին (գծապատկեր 4)՝ ի հաշիվ կարճաժամկետ հատվածում մուտք եղած դրամական միջոցների: Ռագհուրամ Ռաջանը տարօրինակ համարեց նաև այն, որ այդ համակարգերում չի սահմանվում պատժամիջոց՝ ընկերության երկարաժամկետ հատվածում կրած վնասների համար: Ամփոփելով զեկույցը՝ *նա վստահեցրեց ներկաներին, որ նշված պարգևատրային համակարգերը ստիպում են ընկերության աշխատակիցներին դիմել մեծ ռիսկերի* (Կալիֆորնիայի համալսարանի իրավագիտության և տնտեսագիտության պրոֆեսոր Ֆրենկ Փարքնոյի խոսքերի համաձայն՝ Ուոլ սթրիթում (Wall Street) աշխատող անձանց տրված այն հարցին, թե պատրաստ են արդյո՞ք նրանք աշխատել տարեկան լրացուցիչ 2 կամ 10 մլն ԱՄՆ դոլար, միևնույն ժամանակ ծանր իրադրության մեջ դնելով իրենց ընկերությունը, վերջիններիս մեծ մասը առանց տարակուսելու պատասխանել էին՝ այո[2]), *ինչը, վերջնական արդյունքում կարող է հանգեցնել ինչպես առանձին կազմակերպության, այնպես էլ երկրի ամբողջ ֆինանսական միջավայրի խորտակմանը, հետևաբար և արդյունքում էլ համաշխարհային ֆինանսական համակարգի ապակայունացմանը*[3]*:*

Գծապատկեր 4

Ուոլ սթրիթում (Wall Street) տրամադրվող պրեմիաների ծավալները (մլրդ ԱՄՆ դոլար)[4]



Թեև Ռաջանի վերլուծությունը ոչ բավարար հիմնավոր համարվեց Լոուրենս Սամերսի և կոնֆերանսին ներկա որոշ անձանց կողմից, այնուհանդերձ այն ներկայացնում էր տվյալ ժամանակահատվածի ֆինանսական միջավայրի օբյեկտիվ իրականությունը:

2009թ. մարտի 19-ին «Լոս Անջելոս Թայմզ» (Los Angeles Times) ամսագրում տպագրված «Ֆինանսների նախարարության պաշտոնական ներկայացուցիչները անկասկած թույլատրեցին

---

[1] Federal Reserve §Jackson Hole Symposium 2005 Program¦ article, The Washington Post, August 25, 2005 (http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2005/08/24/AR2005082401700.html)

[2] Ճգնաժամի վերաբերյալ փաստավավերագրական Ֆիլմ «Inside Job», ռեժիսոր Չարլզ Ֆերգուսոն, 2010թ., (http://www.filmsforaction.org/watch/inside_job_2010/)

[3] Raghuram G. Rajan «Has Financical Devolopmen Made The World Riskier» report, 57 pages, August 25 2005,(http://www.kansascityfed.org/publicat/sympos/2005/pdf/rajan2005.pdf)

[4] Գծապատկերը կառուցվել է հետևյալ կայքում ներկայացված պաշտոնական տվյալների հիման վրա http://www.davemanuel.com/2010/02/24/wall-street-bonuses-over-the-last-20-years/

«էյ Այ Ջի»-ի բոնուսները» (Treasury officials explicitly allowed AIG bonuses) հոդվածի համաձայն «էյ Այ Ջի»-ի (AIG) կողմից վճարվելիք բոնուսների քանակը գերազանցում էր *3.5 մլրդ ԱՄՆ դոլարը*[1]: Ավելի վաղ՝ 2007թ., դրանց գրավչությամբ տարված աշխատակիցների անմիջական մասնակցությամբ բարձր ռիսկայնության մակարդակ ունեցող ֆինանսական միջոցների մուտքերով պայմանավորված անխուսափելի հետևանքների մասին առաջինը փորձեց բարձրաձայնել ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակից Ջոզեֆ Սենթ Դենիսը: Բազմաթիվ փորձերից հետո, «էյ Այ Ջի»-ի (AIG) ղեկավարության ուշադրությանը չարժանանալով, նա ոչ միայն հրաժարվեց աշխատանքից այլ նաև, գիտակցելով վճարվելիք բոնուսների իրական գինը, դարձավ այն միակը՝ ով սեփական կամքով հրաժարվեց իրեն հասանելիք պարգևավճարի չափաբաժնից[2]: Կարծում եմ ակնհայտ է, որ ընկերության ղեկավարներին, դեռևս, մինչ վարկային դեֆոլտային սվոպների շուկա մտնելը հայտնի էր այն, ինչը բազմիցս անգամ փորձում էր տեղեկացնել Ջոզեֆ Սենթ Դենիսը:

Ընդհանրացնելով «էյ Այ Ջի»-ի (AIG) կողմից վարկային դեֆոլտային սվոպների առևտրի կենսունակ գործունեությունն ապահովող ընթացիկ տնտեսական քաղաքականության առանձնահատկությունների ուսումնասիրությունը՝ պետք է նշել, որ վարկային դեֆոլտային սվոպների մուտքը շուկա վերը նշվածի հետ մեկտեղ լայն հնարավորություն էր ընձեռում ապահովված պարտքային պարտավորությունների իրական բովանդակությանը ծանոթ անձանց (խոսքը ապահովված պարտքային պարտավորություններ թողարկող իրավաբանական անձանց մասին է)՝ խաղալ իրենց իսկ կողմից մշակված «հուսալի» ներդրումների դեմ: Այսպես, օրինակ, 2006թ. վերջերին խոշորագույն ապահովված պարտքային պարտավորություններ թողարկող «Գոլդմեն Սաքս» (Goldman Sachs) ներդրումային բանկը ոչ միայն վաճառում էր ապահովված պարտքային պարտավորություններ, այլ նաև ինտենսիվ փորձում էր աշխատել վերջիններիս սպասվելիք դեֆոլտից՝ միևնույն ժամանակ վստահեցնելով ներդրողներին դրանց բարձր հուսալիության մասին[3]: Շնորհիվ վարկային դեֆոլտային սվոպներին բնորոշ առանձնահատկությունների «Գոլդմեն Սաքսը» (Goldman Sachs) կյանքի կոչեց վերոհիշյալ ծրագիրը՝ բացառապես կապ չունենալով իր կողմից թողարկված ապահովված պարտքային պարտավորություններով ամրագրված պարտավորությունների հետ:

2009թ. «Ուոլ սթրիթ ջուրնալ» (Wall street Journal) թերթում տպագրված «Գոլդմենը տարվեց «էյ Այ Ջի»-ի սպեկուլյացիաներով» (Goldman fueled AIG gambles) հոդվածի համաձայն՝ *2006թ. «Գոլդմեն Սաքսը» (Goldman Sachs) «էյ Այ Ջի»-ից (AIG) գնեց ավելի քան 22 մլրդ ԱՄՆ դոլարի վարկային դեֆոլտային սվոպներ: Այնուհետև, գիտակցելով նշված գործարքի ծավալի մեծությունը, ծախսեց ևս 150 մլն՝* «էյ Այ Ջի»-ի (AIG) *սնանկացումից ապահովագրվելու համար*[4]: Տվյալ իրավիճակում որքան կորցնում էր ապահովված պարտքային պարտավորությունների սեփականատերը, այնքան շահում էր Գոլդմենը: Իհարկե այս ամենի համար Գոլդմենի կառավարիչները 2010թ. ապրիլին ստիպված եղան բացատրություն տալ ԱՄՆ-ի Կոնգրեսի առջև: Լսումների արդյունքում հանրությանը պարզ դարձավ «Գոլդմեն Սաքս»-ի (Goldman Sachs), ինչպես ողջ աշխատակազմի ապահովված պարտքային պարտավորություններին աղբի հետ համեմատելու, այնպես էլ հաճախորդների շահերին հակառակ գործունեություն ծավալելու գործում ոչ եզակի դեպք լինելու կատարյալ խայտառակությունը: Գոլդմենի կառավարիչները խոստովանեցին, որ նման ձևով էին վարվում «Մորգան Սթենլեյը» (Morgan Stanley) (ամերիկյան խոշորագույն ներդրումային բանկ), Ջոն Պոուլսոնը («Պոուլսոն ընդ Քոու» (Paulson & Co) հեջովորման ֆոնդի հիմնադիր և նախագահ, ով համաձայն «Ուոլ սթրիթ ջուրնալ» (Wall street Journal) թերթի՝ *աշխատեց 12.5 մլրդ ԱՄՆ դոլար՝ խաղալով վարկային դեֆոլտային սվոպների*

---

1 James OliphantandRalph Vartabedian, "Treasury officials explicitly allowed AIG bonuses" article, Los Angeles Times, March 19, 2009 (http://articles.latimes.com/2009/mar/19/business/fi-dodd19)

2 Ճգնաժամի վերաբերյալ փաստավավերագրական ֆիլմ «Inside Job», ռեժիսոր Չարլզ Ֆերգուսոն, 2010թ., (http://www.filmsforaction.org/watch/inside_job_2010/)

3 Berry Gray «Goldman Sachs made billions by pushing AIG to bankruptcy», 10 February 2010, (https://www.wsws.org/en/articles/2010/02/gold-f10.html)

4 Carrick Molenkampm and Serena NG, «Goldman fueled AIG gambles» article, The Wall street Jurnal, Dec 12, 2009 (http://online.wsj.com/article/SB10001424052748704201404574590453176996032.html)

դեմ[1]), «Թրիքեյդիա Կապիտալ» (Tricadia Capital) և «Մագնեթար Կապիտալ» (Magnetar Capital) հեջավորման ֆոնդերը «Լեհման Բրադերզ»-ի (Lehman Brothers), «Մերրիլլ Լինչ»-ի (Merrill Lynch), «Ջի Փի Մորգան»-ի (J.P. Morgan) հետ համատեղ (որոնք միակը չէին)[2]:

Ամփոփելով աշխատանքը՝ կարելի է նշել, որ ապահովված պարտքային պարտավորություններով ամրագրված պարտավորությունների դեֆոլտի, ի սկզբանե, բարձր հավանականությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մինչ վարկային դեֆոլտային սվոպների վաճառքը, արդեն իսկ նախօրոք կանխորոշված էր, ինչպես վարկային դեֆոլտային սվոպներ թողարկող ընկերությունների ի հաշիվ կարճաժամկետ հատվածում համալրած դրամական միջոցների երկարաժամկետ հատվածում մեծածավալ վնասներ ունենալու, այնպես էլ շուկայի մասնակիցներին սպեկուլյացիոն գործարքների լայն հնարավորություն ընձեռելու ելքը: Այսինքն, ճգնաժամի առաջացումը մեծապես պայմանավորված է ոչ թե առևտրային հարաբերություններում վարկային դեֆոլտային սվոպների մասնակցության հետ, այլ դրանց միտումնավոր, գուցե և, անմիտ սխալ, ոչ տեղին կիրառության, ինչպես նաև արտաբորսայական ածանցյալների առևտուրը կարգավորող մարմնի բացակայության հետ:

Эмиль Геворкян

КРЕДИТНЫЕ ДЕФОЛТНЫЕ СВОПЫ: УПРАВЛЕНИЕ РИСКАМИ ИЛИ ДЕСТАБИЛИЗАЦИЯ ФИНАНСОВОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ СИСТЕМЫ. АНАЛИЗ КРИЗИСА

Аннотация

Данная статья полностью посвящена исследованию одной из крупнейших инноваций в финансовой сфере XX века – кредитным дефолтным свопам, интерпретации предъявленных обвинений за нахождение их в состав основных причин возникновения мирового финансово-экономического кризиса. На основе проведенных анализов дана являющаяся целью исследования справедливая оценка степени влияния кредитных дефолтных свопов на мировой финансовый кризис.

Emil Gevorgyan

CREDIT DEFAULT SWAPS: RISK MANAGEMENT OR DESTABILIZATION OF THE FINANCIAL - ECONOMIC SYSTEM. ANALYSIS OF THE CRISIS

Abstract

The article presents one of the greatest innovations of the financial system of the 20th century: credit default swaps considered among the main cause-roots of the Global Financial Crisis, and questions this argument to explain the role of the factors in causing the Crisis. The article provides the analysis the author relied on to estimate the real role of credit default swaps in the Global Financial Crisis.

---

1 Gregory Zuckerman, "Trader Made Billions on Subprime" article, The Wall street Jurnal, Jan 15, 2008, (http://online.wsj.com/article/SB120036645057290423.html)

2 http://www.economicpredictions.org/who-is-to-blame-for-the-financial-crisis.htm

ԱՐՄԻՆԵ ՋԱԽԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի դասախոս, պ.գ.թ.

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑ

Շուկայական տնտեսության պայմաններում էապես կարևորվում է ճգնաժամային կառավարման դերը, քանի որ վերջինս կարող է զգալի ներգործություն ունենալ բաժնետիրական ընկերությունների ապագա գործունեության վրա: Արդյունավետ ճգնաժամային կառավարումը ընկերություններին հնարավորություն է ընձեռում խուսափել ռիսկի և անորոշության հետևանքով առաջացող հավանական վնասներից և կորուստներից:

«Ճգնաժամային կառավարում» տերմինն առաջացել է համեմատաբար վերջերս՝ մի շարք երկրների տնտեսությունների վերափոխման մեկնարկի և ճգնաժամային իրավիճակների առաջացման հետ կապված: Հասկանալի է, որ ճգնաժամերի հաղթահարման համար անհրաժեշտ է կառավարման նոր տեսակ (ճգնաժամային կառավարում), որն արմատապես տարբերվում է կայուն պայմաններում իրականացվող կառավարումից: Ճգնաժամային կառավարումը՝ կառավարման այնպիսի տեսակ է, որի դեպքում զարգացած են ճգնաժամի կանխատեսման և մոնիթորինգի, ճգնաժամի բնույթի, հավանականության, հատկանիշների վերլուծության, ճգնաժամերի բացասական հետևանքների նվազեցման մեթոդների կիրառման և ապագայում ավելի կայուն զարգացման համար տվյալ մեթոդների արդյունքների օգտագործման մեխանիզմները:

Համաշխարհային տնտեսական փորձը վկայում է, որ ճգնաժամերի առաջացման պատճառները կարող են լինել[1].

1. Օբյեկտիվ, որոնք կապված են վերակազմակերպման և արդիականացման պարբերական պահանջների հետ:
2. Սուբյեկտիվ, որոնք պայմանավորված են կառավարման ոլորտի սխալներով (բացթողումներով):
3. Բնական, այսինքն՝ կլիման, ընդերքը, ջրային միջավայրը և այլն:

Ճգնաժամերի պատճառները կարող են լինել նաև ***ներքին և արտաքին:*** Արտաքինները կապված են մակրո կամ արտաքին տնտեսական գործոնների ազդեցության հետ, իսկ ներքինները՝ ներքին գործոնների՝ մարքեթինգային ռիսկային ռազմավարության, արտադրության և կառավարման անկատարության, ինովացիոն և ներդրումային սահմանափակ քաղաքականության, աշխատակազմի անարդյունավետ կառավարման հետ:

Քանի որ ճգնաժամը կարող է առաջանալ արտաքին և ներքին գործոնների ամբողջ բազմազանության ազդեցության հետևանքով, ապա այն պետք է կանխազգալ և կանխատեսել մշտապես:

Ճգնաժամի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է հետազոտել ոչ միայն նրա պատճառները, այլև հետևանքները: Օրինակ, ճգնաժամի արդյունքում հնարավոր է կազմակերպության վերակազմակերպում կամ լուծարում, առողջացում կամ իրավիճակի վատթարացում: Ճգնաժամը կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ ծայրահեղ բացասական հետևանքներ: Նրանք կարող են զարգանալ նաև համաձայն ***«դոմինոյի սկզբունքի»***[2]***:*** Հնարավոր է նաև ճգնաժամային իրավիճակների կոնսերվացում (ժամանակավոր կասեցում) բավականին երկար ժամանակով (օրինակ, քաղաքական պատճառներով): Ճգնաժամի հետևանքները կարող են հանգեցնել կտրուկ փոփոխությունների կամ մեղմ ելքերի: Հետճգնաժամային հետևանքները ընկերություններում լինում են *երկարատև* և *կարճատև, դառնալի* և *անդառնալի, քանակական* և *որակական*[3]*:* Ճգնաժամի հետևանքները որոշվում են ոչ միայն նրա բնույթով և պարամետրերով,

---

[1] Уткин Г.П., Антикризисное управление. - М.: Закон и право, ЮНИТИ, 2008.
[2] http://www.econf.rae.ru/pdf/2013/02/2074.pdf
[3] http://www.vestnik-kafu.info/journal/16/642/

այլև ճգնաժամային կառավարման արդյունավետությամբ, որը որոշվում է ճգնաժամի մեղմացման և տեղայնացման նպատակներին հասնելու աստիճանի և ծախսված ռեսուրսների հարաբերակցությամբ: Ճգնաժամային կառավարման արդյունավետության վրա ազդում են հետևյալ գործոնները[1].

1. Ճգնաժամային կառավարման պրոֆեսիոնալիզմը և պատրաստվածությունը:
2. Բնատուր ձևով և հատուկ ուսուցման գործընթացում ձեռք բերված կառավարման արվեստը:
3. Ռիսկային որոշումների մշակման մեթոդաբանությունը:
4. Իրավիճակի գիտական վերլուծությունը և միտումների կանխատեսումը:
5. Կորպորատիվությունը (բոլոր աշխատակիցների կողմից կազմակերպության նպատակների ընկալումն ու ընդունումը, նրանց հասնելու համար ջանասիրաբար աշխատելու պատրաստականությունը):
6. Առաջնորդությունը:
7. Կառավարման օպերատիվությունն ու ճկունությունը:
8. Հակաճգնաժամային ծրագրերի ռազմավարությունը և որակը:
9. Մարդկային գործոնը:
10. Ճգնաժամային իրավիճակների մոնիթորինգի համակարգը և այլն:

Ինչպես հայտնի է, գրեթե բոլոր զարգացող երկրներում գործող ընկերություններն ունեն բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց հաղթահարումը պահանջում է զգալի ջանքերի ներդրում, իսկ որոշ դեպքերում՝ ճգնաժամային կառավարման ներմուծում: Բացառություն չեն կազմում նաև մեր երկրում գործող ընկերությունները: Ասվածը հիմնավորելու համար դիտարկենք Հայաստանի Հանրապետությունում գործող ընկերությունների պարտավորությունների և ժամկետանց պարտքերի, ինչպես նաև լուծարված իրավաբանական անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները: Ստորև բերված աղյուսակ 1-ը տվյալներ է պարունակում ընկերությունների պարտավորությունների և ժամկետանց պարտքերի վերաբերյալ:

Աղյուսակ 1

Ընկերությունների պարտավորությունները և ժամկետանց պարտքերը (2007-2012թթ.) առ 01.01[2]

(մլն. դրամ)

Անվանումը	2007	2008	2009	2010	2011	2012
Ընդամենը պարտավորություններ	***653684.2***	***799013.1***	***913759.6***	***1275483.5***	***1527353.4***	***2014101.0***
որից՝ ժամկետանց	19100.2	1291.0	404.5	789.4	536.2	7284.2
Կրեդիտորական պարտքեր	349211.4	289289.1	328087.3	334474.0	503804.4	675190.1
որից՝ ժամկետանց	19100.2	1228.0	390.8	732.1	523.7	207.7
Ստացած վարկերի և փոխառությունների դիմաց պարտքեր	304472.8	509724.0	585672.3	941009.6	1023549.0	1338910.9
որից՝ ժամկետանց	0.0	63.0	13.7	57.3	12.5	7076.5

Ինչպես վկայում են վերոբերյալ աղյուսակ 1-ի տվյալները, 2012թ. 2007թ. համեմատությամբ ընկերությունների ընդհանուր պարտավորություններն ավելացել են 1360416.8 մլն. դամով: Միաժամանակ, նվազել են ժամկետանց պարտավորությունները՝ 11816 մլն. դրամով: Սակայն, համեմատելով 2009-2011թթ. և 2012թ. տվյալները, նկատում ենք, որ ժամկետանց պարտավորությունները կրկին ավելացել են և կազմել 7284.2 մլն. դրամ: Նշված ժամանակահատվածում ավելացել են նաև կրեդիտորական պարտքերը՝ 325978.7 մլն. դրամով, սակայն ժամկետանց կրեդիտորական պարտքերի գծով նկատվում են աստիճանական նվազեցումներ մինչև 207.7 մլն. դրամ 2012թ.: Ստացած վարկերի և փոխառությունների դիմաց պարտքերը նույնպես ավելացել են 1034438.1 մլն. դրամով, տարեցտարի ավելացել են նաև ստացած վարկերի և փոխառությունների դիմաց ժամկետանց պարտքերը՝ 2012թ. կազմելով 7076.5 մլն. դրամ, ինչն, անշուշտ, մտահոգիչ երևույթ է և պահանջում է համապատասխան միջոցառումների իրականացում:

[1] http://www.teoria-practica.ru/-8-2011/economics/nesterov.pdf/
[2] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011, 2012թթ.:

Այժմ դիտարկենք լուծարված իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալները ստորև բերված աղյուսակ 2-ի և գծապատկեր 1-ի միջոցով:

Աղյուսակ 2

Լուծարված իրավաբանական անձինք (այդ թվում ձեռնարկությունները և առանձնացված ստորաբաժանումները) (2002-20013թթ.) առ 01.01[1]

Անվանումը	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Իրավաբանական անձինք (այդ թվում ձեռնարկությունները և առանձնացված ստո-ռաբաժանումները)	2854	3453	4097	5184	6750	8398	9699	10732	11743	12345	303	160

Գծապատկեր 1

Լուծարված իրավաբանական անձինք (այդ թվում ձեռնարկությունները և առանձնացված ստորաբաժանումները) (2002-20013թթ.)



Ինչպես վկայում են աղյուսակ 2-ի տվյալները, 2002-2011թթ. տեղի է ունեցել լուծարված իրավաբանական անձանց թվաքանակի աստիճանական ավելացում մինչև 12345: Այսպես, 2003թ. 2002թ. համեմատությամբ լուծարված իրավաբանական անձանց թիվն ավելացել է 599-ով, 2004թ. 2003թ. համեմատությամբ՝ 644-ով, 2005թ. 2004թ. համեմատությամբ՝ 1087-ով, 2006թ. 2005թ. համեմատությամբ՝ 1566-ով, 2007թ. 2006թ. համեմատությամբ՝ 1648-ով, 2008թ. 2007թ. համեմատությամբ՝ 1301-ով, 2009թ. 2008թ. համեմատությամբ՝ 1033-ով, 2010թ. 2009թ. համեմատությամբ՝ 1011-ով, 2011թ. 2010թ. համեմատությամբ՝ 602-ով: Այնուհետև, 2012թ. սկսած լուծարված իրավաբանական անձանց թիվը կտրուկ կրճատվել է և 2012թ. կազմել 303, իսկ 2013թ.՝ 160: Անշուշտ, լուծարված իրավաբանական անձանց թվաքանակի կրճատումը դրական երևույթ է, սակայն մեր տնտեսության համար նշված թիվը այդքան էլ փոքր չէ: Իհարկե, եթե իրավաբանական անձանց լուծարումը տեղի է ունենում շուկայի սանիտարական գործառույթի գործողության հետևանքով, ապա դա կարելի է համարել դրական երևույթ: Հասկանալի է, որ միայն արդյունավետ գործող ընկերությունների թվաքանակի ավելացմամբ է պայմանավորված մեր երկրի տնտեսության զարգացման ապագան:

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետությունում գործող ընկերությունների պարտավորությունների և ժամկետանց պարտքերի, ինչպես նաև լուծարված իրավաբանական անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները, հասկանալի է դառնում, որ ճգնաժամային կառավա-

[1] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012թթ. հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎԾ:

ռումը իսկապես կարող է ծառայել որպես գործուն միջոց ընկերությունների գործունեության բարելավման համար:

Ինչպես հայտնի է, ԲԸ-ների ճգնաժամային կառավարման գործընթացում մեծ դերակատարում ունի ճգնաժամային կառավարման տեխնոլոգիական սխեման, որը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ[1].

1. Մասնագիտացված աշխատանքային խմբի ստեղծում:
2. Ճգնաժամային կառավարման միջոցառումների իրականացման նպատակահարմարության և յուրաժամանակության ստուգում:
3. Ճգնաժամային կառավարչական որոշումների մշակում:
4. Կազմակերպությունում սուր հակասությունների վերացմանն ուղղված միջոցառումների համակարգի ստեղծում:
5. Կառավարչական որոշումների իրագործման կազմակերպում:
6. Կազմակերպության գործունեության ցուցանիշների գծով կառավարչական որոշումների իրագործման որակի գնահատում և վերլուծություն:
7. Ճգնաժամային ծրագրի հետագա իրականացման նպատակահարմարության ստուգում:
8. Ճգնաժամային կառավարման տվյալ տեխնոլոգիական սխեմայի համար ապագա ճգնաժամային իրավիճակների կանխատեսման միջոցառումների մշակում:

Բավականաչափ կարևոր է նաև ապագա ճգնաժամային իրավիճակի հատկանիշների վերահսկողության և վաղ բացահայտման համակարգը: Այդ հիմնական հատկանիշներից են.

1. Ձեռնարկության գալիք անհաջողության լուրջ զգուշացում կարող է լինել բիզնես գործընկերների, վարկատուների, բանկերի, մատակարարների և սպառողների բացասական արձագանքը կազմակերպության կողմից իրականացվող տարբեր միջոցառումներին: Կարևոր են դառնում ձեռնարկության տարբեր վերափոխումները (կառուցվածքային, կազմակերպական) և ստորաբաժանումների, մասնաճյուղերի, դուստր ֆիրմաների ստեղծումը կամ գործունեության դադարեցումը, նրանց միաձուլումը, մատակարարների հաճախակի և չհիմնավորված փոփոխությունը, շուկայական նոր հատվածների յուրացումը, աշխատանքի առարկաների գնման ռիսկերը և ռազմավարական փոփոխությունները: Ներդրողների համար կարևոր բնութագրիչ են դառնում կազմակերպության կառավարման համակարգում և կազմակերպական մշակույթում փոփոխությունները:

2. Գալիք ճգնաժամային իրավիճակը բնութագրում են նաև ֆինանսական ցուցանիշների փոփոխությունը, ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական ստուգումների արդյունքները:

Այստեղ մանրազնին ուսումնասիրության առարկա են հանդիսանում.

1. Հաշվապահական փաստաթղթերի ներկայացման ուշացումները (կարող են արտացոլել կանխամտածված գործողություններ կամ ֆինանսական ստորաբաժանումների աշխատակիցների ցածր որակավորումը):
2. Նյութական պաշարների ավելացումը կամ փոքրացումը (կարող է վկայել գիտակցված գործողությունների կամ մատակարարումների իրականացման կազմակերպության անկարողության մասին):
3. Հաշվապահական հաշվեկշռի ակտիվային և պասիվային մասերի փոփոխությունները:
4. Ձեռնարկության եկամուտների փոքրացումը և նրա շահութաբերության նվազումը, նրա բաժնետոմսերի արժեզրկումը, արտադրանքի համար չափից դուրս ցածր կամ բարձր գների սահմանումը և այլն: Անհանգստություն կարող են առաջացնել նաև ձեռնարկության արտապլանային ստուգումները, իշխանության կողմից նրա առևտրային գործունեության սահմանափակումը, լիցենզիաների անվավեր ճանաչումն ու ետ կանչը և այլն:
5. Մատակարարներին և վարկատուներին ձեռնարկության պարտքի ավելացումը:

Հակաճգնաժամային միջոցառումներ իրականացնելիս հատկապես կարևորվում են.

1. ձեռնարկության կադրային կազմի ներուժի վերլուծությունը,

[1] http://www.creativeconomy.ru/articles/8381/

2. փոփոխվող պայմաններին կազմակերպական կառուցվածքների ադապտացման վերլուծությունը,
3. ձեռնարկության ֆինանսական վիճակի վերլուծությունը.
- կազմակերպության գույքի կազմի և կառուցվածքի դինամիկայի վերլուծությունը,
- պահուստների և ծախսերի վիճակի վերլուծությունը,
- ֆինանսավորման աղբյուրների շարժի գնահատումը,
- ֆինանսական գործակիցների վերլուծությունը:
4. աշխատակիցների տեղեկատվական մշակույթի վերլուծությունը,
5. ձեռնարկության և ճյուղի գիտատեխնիկական ներուժի փոփոխության վերլուծությունը,
6. ձեռնարկության գործունեության վրա իրավական դաշտի ազդեցության վերլուծությունը,
7. շրջակա միջավայրի վիճակի փոփոխության և ձեռնարկության գործունեության վրա նրա ազդեցության վերլուծությունը,
8. անվտանգության խնդիրների լուծման վերլուծությունը:

Ինչպես հայտնի է, ճգնաժամում գտնվող ձեռնարկությունում հաճախ տեղի են ունենում գողություններ և հափշտակումներ: Հափշտակումների հնարավոր մեթոդները և նրանց արտացոլումը փաստաթղթերում հետևյալ տեսակների են.

1. կանխիկացման միջոցով պարբերական հափշտակումներ,
2. մատակարարման պայմանագրերով դրամական միջոցների փոխանցումը,
3. նոր ֆիրմաների հիմնադրումը և այնտեղ ֆինանսական միջոցների փոխանցումը,
4. հափշտակումներ մատակարարումների ժամանակ,
5. չհաշվառված պատրաստի արտադրանքի իրացումը,
6. հումքային ծախսերի արհեստական բարձրացումը,
7. աշխատակիցների ֆիկտիվ վարձումը և այլն:

Ճգնաժամային իրավիճակի ախտորոշման հիմնական փուլերն են հանդիսանում[1].

1. ***Վերլուծության օբյեկտի (ճգնաժամի աղբյուրի) որոշումը:*** Այս փուլում գնահատվում է ճգնաժամի մասշտաբը և նրա հնարավոր մակարդակը և բնույթը:
2. ***Պարամետրերի համակարգի որոշումը:*** Հիմնական պարամետրերի և ցուցանիշների համակարգի որոշումը, որոնց տվյալներով հնարավոր կլինի գնահատել ձեռնարկության վիճակը տվյալ ժամանակահատվածում:
3. ***Պատասխանատու անձանց նշանակումը:*** Ձեռնարկության ղեկավարը սովորաբար ունենում է մենեջերների թիմ, որոնք ճգնաժամային իրավիճակում իրականացնում են հակաճգնաժամային ստորաբաժանման գործառույթներ (եթե այդպիսին չկա ձեռնարկությունում):
4. ***Բիզնես միջավայրի հետազոտություն:*** Մակրո և միկրոմիջավայրերի հետազոտությունն ունի կարևոր նշանակություն անհրաժեշտ տեղեկատվության ստացման համար:
5. ***Եզրահանգումների հիմնավորման փուլ:*** Այս փուլում մշակվում է ստացված ամբողջ տեղեկատվությունը, քննարկվում է ձեռնարկության ընթացիկ վիճակը, որոշվում են առաջնահերթ ուղղությունները և խնդիրները:
6. ***Հակաճգնաժամային ծրագրի մշակում և ռազմավարության ընտրություն:*** Սա եզրափակիչ փուլն է, որտեղ կազմվում է հակաճգնաժամային ծրագիրը բոլոր նախորդող փուլերի աշխատանքների հիման վրա: Այս փուլում որոշվում են ստեղծված իրավիճակի հաղթահարման հիմնական միջոցները և մեթոդները: Ընտրված ճգնաժամային ռազմավարությունը կարող է իր մեջ ներառել տարբեր ուղղություններ՝ ծախսերի կրճատումը, որոշ բաժինների լուծարումը, արտադրության ծավալների կրճատումը, լրացուցիչ ռեսուրսների ներգրավումը և այն:

Ընկերությունների գործունեության բարելավման գործում մեծ դերակատարում ունի նաև ***ճգնաժամի կանխարգելման ռազմավարությունը***[2], որի իրացման հիմնական փուլերը ներկայացված են ստորև բերված գծապատկեր 2-ում:

---

[1] http://www.cfin.ru/management/antirecessionary_managment.shtml

[2] Михаленя М.А., Стратегия антикризисного развития предприятия. Корпоративный менеджмент, N3, 2009. - с. 124-128.

Գծապատկեր 2

Ճգնաժամի կանխարգելման ռազմավարության իրացման փուլերը:



Ճգնաժամի կանխարգելման ռազմավարության իրացման գործընթացն, ըստ էության, ռազմավարական ճգնաժամային կառավարումն է, որի նպատակն է նախապես չեզոքացնել ճգնաժամային իրավիճակներ առաջացնող գործոնների ազդեցությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք առաջարկել ճգնաժամային վիճակում հայտնված ընկերությունների գործունեության բարելավման հետևյալ ուղիները.

1. Նոր արդյունավետ ներդրումային նախագծերի մշակում և իրացում:
2. Կառավարման նանոտեխնոլոգիաների կիրառում:
3. Գնագոյացման համակարգի բարելավում:
4. Ապագայում թողարկվելիք նոր արտադրատեսակների մշակում:
5. Ընկերության աշխատակազմում հատուկ որակավորում ունեցող ճգնաժամային կառավարչի ներգրավում:

Այսպիսով, ճգնաժամային կառավարման ներմուծումը նույնպես կարող է նպաստել մեր ընկերությունների գործունեության որոշակի բարելավմանը, և որպես դրա հետևանք՝ Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը:

Армине Захарян

АНТИКРИЗИСНОЕ УПРАВЛЕНИЕ КАК СРЕДСТВО УЛУЧШЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ АКЦИОНЕРНЫХ ОБЩЕСТВ

Аннотация

Настоящая статья посвящена проблеме антикризисного управления акционерных обществ РА. Учитывая наличие проблемы улучшения деятельности в большинстве акционерных обществ РА, в статье сделана попытка выявления основных факторов, способствующих повышению эффективности антикризисного управления акционерных обществ. Особое внимание уделено причинам и последствиям возникновения кризисов и этапам диагностики кризисных ситуаций. Заимствование положительного опыта реализации стратегии недопущения кризиса компаний развитых стран со стороны Армении может значительно способствовать развитию экономики страны. Поскольку антикризисное управление акционерных обществ имеет стратегическое значение как для дальнейшего развития акционерных обществ, так и для экономики в целом, то им должны быть озабочены как акционерные общества, так и государство.

Armine Zakharyan

THE ROLE OF CRISIS MANAGEMENT IN IMPROVING THE PERFORMANCE OF JOINT STOCK COMPANIES

Abstract

This article presents crisis management issues in the joint stock companies of the Republic of Armenia. Taking into account the issues of improving the performance of the majority of joint stock companies in Republic of Armenia, the article attempts to identify the major factors that could increase the efficiency of the crisis management in joint stock companies. The article specially addresses the cause-roots of the crises and the respective consequences the companies could face and how to identify a crisis. By adopting best practices of crisis prevention strategies by Armenian companies that are utilized by companies in the developed nations Armenia could substantially improve its economic performance. Since the crisis management by the joint stock companies is of strategic importance to both the future development of joint stock companies and the growth of the economy, in general, hence both the Government and joint stock companies need to be concerned about crises management practices.

ՄՈՒՇԵՂ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՊՏՀ դոցենտ

ԱԼԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրանտ

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Ստվերային տնտեսության գոյությունը բնական արձագանք է տնտեսության պետական կարգավորման նկատմամբ: Պետական կարգավորումը ենթադրում է որոշակի սահմանափակումներ, իսկ ոչ խելամիտ կիրառումը հանգեցնում է դրանց խախտմանը, հատկապես, երբ առնչվում են տնտեսավարողների շահերին և եկամուտներին: Անշուշտ, ստվերային տնտեսական գործունեության բազմաթիվ դրսևորումներ բացատրվում են պետական կարգավորման թերություններով՝ կառավարման բյուրոկրատացված համակարգով և բարձր հարկային դրույքներով: Սակայն պետք է ընդունել, որ անգամ ամենալավ կազմակերպված և արդյունավետության մակարդակով գործող պետական կառավարման համակարգը, թեև կարող է էականորեն կրճատել ստվերային տնտեսության ծավալները, բայց երբևէ չի կարող ամբողջությամբ վերացնել այն [1]:

Ստվերային տնտեսությանը նվիրված բազմակողմանի ուսումնասիրություններ քիչ են իրականացվել, ինչպես նաև բացակայում է այդ երևույթը բնութագրող մեկ միասնական սահմանում: Կարելի է առանձնացնել ստվերային տնտեսության սահմանման երկու մոտեցում՝ բնութագրական և վարքագծային: Բնութագրական մոտեցման կողմնակիցները ստվերային տնտեսությունը սահմանում են որպես չգրանցվող և չհաշվառվող տնտեսական գործունեություն: Համաձայն Ջ.Թոմասի, դժվար է տալ ստվերային տնտեսության միասնական սահմանում, քանի որ ստվերային տնտեսական գործունեությունը ներառում է գործունեության այն բոլոր տեսակները, որոնք չեն գրանցվում ազգային եկամտի հաշիվներում[2]: Ֆ.Սմիթը այս ոլորտը

[1] Лагов Ю. В. , Ковалев С. Н. Теневая экономика: Учебное пособие для ву-зов / М.: Норма, 2006 Ст. 17.

[2] Tomas Jim (1999), Quantifying the black economy:' measurement without theory'yet again. The Economic journal, 109 (June), pp. 381-389.

սահմանում է որպես շուկայական հիմունքներով ապրանքների և ծառայությունների օրինական կամ անօրինական արտադրություն, որը չի արտացոլվում պաշտոնապես հաշվարկված ՀՆԱ-ի մեջ[1]: Դ. Գիլսը և Լ. Տեդդեսը ստվերային տնտեսությունը սահմանում են որպես տնտեսական գործունեություն, որը չի գրանցվում ազգային հաշիվներում և դուրս է մնում հարկային բազայից:

Ստվերային տնտեսությունը կարելի է դիտարկել մակրո և միկրո մակարդակներում: Մակրոմակարդակում ստվերային տնտեսական գործունեությունը դիտարկվում է տնտեսության ճյուղային կառուցվածքի, ՀՆԱ-ի, արտադրության, զբաղվածության, բաշխման և վերաբաշխման, գնաճի, տնտեսական աճի և այլ ցուցանիշների վրա ազդեցության տեսանկյունից: Միկրոմակարդակում ուշադրություն է դարձվում ստվերային տնտեսական գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի և նրանց կողմից կայացվող որոշումների վրա: Ինստիտուցիոնալ մակարդակում դիտարկվում են ստվերային տնտեսական գործունեությանն առնչվող վարքագծի ֆորմալ և ոչ ֆորմալ կանոնները, պատժամիջոցների կիրառման մեխանիզմները և այլն: Ստվերային տնտեսական գործունեության տարբեր օրինաչափությունների ուսումնասիրություններ կատարվում են նաև իրավագիտության, սոցիոլոգիայի և հասարակական գիտությունների շրջանակներում: Ստվերային տնտեսության մեկնաբանությունը տարբեր ուսումնասիրողների կողմից կախված է այն չափանիշներից, որոնցով որոշվում են տնտեսական հարաբերությունների պատկանելիությունը ստվերային հատվածին: Նշենք, որ անգամ ամենալավ կերպով կազմակերպված և արդյունավետության բարձր մակարդակով գործող պետական կառավարման համակարգը, թեև կարող է էականորեն կրճատել ստվերային տնտեսության ծավալները, բայց երբևէ չի կարող ամբողջությամբ վերացնել այն[2]:

Ստվերային տնտեսական գործունեության նկատմամբ ձևավորվել է համընդհանուր բացասական վերաբերմունք, քանի որ դրա բոլոր և, հատկապես, անօրինական դրսևորումներին հատուկ է հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի համար բացասական ազդեցություն: Հասարակության մեջ ընդունված է համարել, որ ստվերային տնտեսության գոյությունն ինքնին բացասաբար է անդրադառնում թե՛ պաշտոնական տնտեսության, և թե՛ հասարակական բարեկեցության վրա: Ստվերային տնտեսական գործունեության որոշ տեսակներ, փոքր ծավալների մեջ, կարող են միանգամայն բարերար ազդեցություն թողնել թե՛ հասարակական բարեկեցության, և թե՛ պաշտոնական տնտեսության վրա:

Շվեյցարացի տնտեսագետ Դ. Կիսսելը առանձնացնում է ստվերային տնտեսության հետևյալ երեք բարենպաստ ֆունկցիաները[3]:

1. Ստվերային տնտեսության գոյությունը նպաստում է ցիկլային տատանումների մեղմացմանը՝ պաշտոնական և ոչ պաշտոնական տնտեսության միջև ռեսուրսների վերաբաշխման միջոցով: Սա նշանակում է, որ երբ տնտեսությունը գտնվում է անկման կամ լճացման փուլում, անգործության մատնված արտադրության գործոնների մի մասը հոսում է դեպի ստվերային հատված և վերադառնում ճգնաժամի ավարտից հետո:
2. Ստվերային տնտեսությունը նպաստում է սոցիալական լարվածության թուլացմանը: Ոչ պաշտոնական զբաղվածությունը օգնում է բարելավել անապահով խավերի նյութական վիճակը:
3. Ստվերային տնտեսությունը սնում է իր ռեսուրսներով պաշտոնական տնտեսությանը: Այս ոլորտում ստեղծված եկամուտները ծախսվում են ապրանքների և ծառայությունների գնման համար, իսկ հանցավոր ճանապարհով ստեղծված կապիտալը «օրինականացվելուց» հետո ներդրվում է պաշտոնական տնտեսության մեջ:

Սակայն, ընդհանուր առմամբ, ստվերային տնտեսության ազդեցությունը հասարակության վրա պետք է ընդունել բացասական: Առաջին հերթին տեղի է ունենում եկամուտների վերաբաշ-

---

[1] Smith Philip (1994), Assessing the Size of the Underground Economy: #11-010, 3.16 - 33, 18 March.

[2] Лагов Ю. В. , Ковалев С. Н. Теневая экономика: Учебное пособие для ву-зов / М.: Норма, 2006, с. 17.

[3] Cassel D., Cichy U. The Shadow Economy and Economic Policy in East and West: A Comparative System Ap-proach // The Unofficial Economy. Consequences and Perspectives in Different Economic Systems Ed. by S. Alessandrini and B. Dallago. Gower, 1987. P. 140-141.

խում ի օգուտ մարդկանց փոքրաթիվ խմբերի: Բացի դրանից, խարխլվում է տնտեսության պետական կարգավորման միասնական համակարգը: Ոչ պաշտոնական զբաղվածության զգալի ծավալներն աղավաղում են գործազրկության իրական մակարդակի վերաբերյալ պատկերացումները, տեղի է ունենում հարկային եկամուտների թերհավաքագրում: Եվ, վերջապես, ստվերային տնտեսական գործունեության ծավալների աճը բացասաբար է անդրադառնում տնտեսավարման էթիկայի վրա: Այս ամենը կարող է հանգեցնել հասարակության շրջանում ընդունված «խաղի կանոնների» անտեսմանը, որը հղի է ամենաթողության և անկայունության ծայրահեղ դրսևորումներով: Իհարկե, ստվերային տնտեսության դրական և բացասական էֆեկտների հարաբերակցությունը կախված է դրա ծավալներից:

Վերոգրյալը ներկայացնենք հետևյալ գծապատկերում՝

Գծապատկեր 1

Ստվերային տնեսության կախվածությունը դրա հետևանքներից



Գծապատկեր 1-ում արտացոլվում է ստվերային տնտեսության ծավալների նկատմամբ վերահսկողության կարևորություն: Ինչպես տեսանք, հասարակական բարեկեցությունը այս իմաստով կհասնի առավելագույնի, երբ ստվերային տնտեսությունը գոյություն ունենա, բայց փոքր մասշտաբներով, քանի որ այդ դեպքում դրա դրական և բացասական հետևանքների գումարային էֆեկտը կընդունի առավելագույն մեծություն[1]:

Ստվերային տնտեսության համեմատաբար փոքր ծավալների դեպքում դրա գոյության դրական և բացասական հետևանքները հաշվի առնող գումարային էֆեկտը կդրսևորի աճի միտում (հատված OA), այնուհետև դրա աճը կդադարի (A կետում), և գումարային էֆեկտը կսկսի նվազել (հատված AB), իսկ B կետից սկսած գումարային էֆեկտը կընդունի բացասական բնույթ և կսկսի կտրուկ ավելանալ (B կետից հետո):

Ստվերային տնտեսության առաջացման պատճառներն աշխարհի տարբեր երկրներում տարբեր են, սակայն կարող ենք առանձնացնել այնպիսիք, որոնք ընդհանուր են բոլոր երկրների համար: Սովորաբար առանձնացնում են ստվերային տնտեսական գործունեության զարգացմանը նպաստող գործոնների երեք հիմնական խմբեր՝

1. Տնտեսական գործոններ, որոնք ներառում են՝

1. *բարձր հարկային դրույքաչափերը,*
2. *ինստիտուցիոնալ բնույթի սահմանափակումները,*

[1] Теневая экономика: Учебное пособие для вузов / Под ред. проф. В. Я. Кикотя;д Г. М. Казиахмедова. — М.: Норма, 2006. Ст. 19.

3. *տնտեսության պետական հատվածի մեծ ծավալները*
4. *պաշտոնական տնտեսության ընդհանուր վիճակը:*

Այսպես՝ բազմաթիվ հետազոտողներ գտնում են, որ ստվերային տնտեսության զարգացման հիմնական գործոնը հարկային ճնշումն է: Տվյալ գործոնի ազդեցությունը նկատվում է շուկայական տնտեսության ցանկացած մոդել ունեցող երկրներում: Ընդ որում, ցանկացած երկրում առկա են բազմաթիվ առանձնահատկություններ՝ որոշ երկրներում ստվերային հատվածի ծավալների աճին նպաստում են եկամտահարկի և շահութահարկի չափազանց բարձր դրույքաչափերը, այլ երկրներում տնտեսավարողները թաքցնում են իրենց եկամուտների մի մասը սոցիալական ապահովագրության հիմնադրամներին զգալի հատկացումներ կատարելուց խուսափելու պատճառով, ձեռնարկությունները արհեստականորեն նվազեցված են ներկայացնում իրենց արտադրության իրական ծավալներն ավելացված արժեքի հարկի բարձր դրույքաչափերի հետևանքով և այլն:

2. Սոցիալական գործոններ, որոնք ներառում են՝

1. *գործազրկության և աղքատության բարձր մակարդակները,*
2. *եկամուտների խիստ անհավասարաչափ բաշխումը,*
3. *կյանքի ցածր մակարդակը:*

Օրինակ՝գործազրկության բարձր մակարդակն ու եկամտի որևէ աղբյուրի անհաջող որոնումները ստիպում են մարդկանց անցնել աշխատանքի տնտեսության ոչ պաշտոնական հատվածում: Աճող գործազրկությունը, անօրինական ներգաղթյալների աճող քանակությունը և այլ բացասական սոցիալական երևույթները պարարտ հող են ստեղծում ստվերային տնտեսության զարգացման համար: Աշխատանքը կորցրած մարդիկ հաճախ համաձայնվում են ստվերային զբաղվածության բոլոր պայմաններին, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրերի փոխարեն ստվերային գործատուների հետ ձեռք են բերվում բանավոր պայմանավորվածություններ, և ցանկացած ոք կարող է ցանկացած պահի ազատվել աշխատանքից, առանց բացատրությունների և առավել ևս, առանց որևէ սոցիալական երաշխիքների: Իսկ ստվերային գործատուների համար այդպիսի իրավիճակն ավելի քան ձեռնտու է:

3. Իրավական գործոններ, որոնք ներառում են՝

1. *սեփականության իրավունքների ոչ բավարար պաշտպանությունը,*
2. *օրենսդրական թերությունները,*
3. *անկայուն քաղաքական իրավիճակը,*
4. *ստվերի դեմ մղվող պայքարում տարբեր պետական կառույցների կողմից գործադրվող ջանքերի կոորդինացման բացակայությունը կամ ոչ բավարար համագործակցությունը:*

Սովորաբար ստվերային տնտեսությունում սեփականության իրավունքները հատկորոշվում են սոցիալական կամ ավանդական պայմանագրերի հիման վրա՝ ի տարբերություն տնտեսության պաշտոնական հատվածի, որտեղ սեփականության իրավունքները պարզաբանվում են քաղաքացիական պայմանագրերի հիման վրա, իսկ երաշխավորը հանդիսանում է պետությունը, այսինքն՝ ստվերային հատվածում գործում են խմբակային, ազգակցական, հայրենասիրության չափանիշները, ինչն էապես թուլացնում է սեփականության իրավունքի պաշտպանության շարժառիթները և հարուցում հավելյալ գործառնական ծախսեր: Եթե այսպիսի միջավայրում գործարքի կողմ է հանդես գալիս դրսից եկած օտար մեկը, ապա գործարքների մեխանիզմը դադարում է գործելուց, և այս պայմաններում սեփականության օբյեկտների հետ հնարավոր է խմբի շրջանակներում գտնվի մի անձ, որը պատրաստ կլինի վճարել այդ օբյեկտի ամենաբարձր այլընտրանքային արժեքը: Սա նշանակում է կապիտալը ծայրահեղ անարդյունավետ ձևով է գործադրվում: Այդպիսի կապիտալի տեսակը էռնանդո դե Սոտոն անվանում է «մեռած կապիտալ»[1], որը հնարավոր չէ որպես ժառանգություն փոխանցել:

Սեփականության իրավունքների ոչ բավարար պաշտպանությունը համապատասխան վարքագիծ է ձևավորում գործարարների մոտ, ըստ որի, քանի որ իրենց իրավունքները կարող են յուրաքանչյուր պահի ոտնահարվել, և գործող իրավահարաբերություններն ամենևին էլ չեն

[1] http://www.nytimes.com/books/first/d/desoto-capital.html

երաշխավորում իրենց իրավունքների բավարար պաշտպանություն, ապա պետք է ձգտել առավելագույն շահույթի՝ խուսափելով հարկային պարտավորություններից և դիմելով բոլոր հնարավոր միջոցների: Քաղաքական անկայունություններն ունենում են գրեթե նույնանման ազդեցություն տնտեսության ստվերային և պաշտոնական հատվածների հարաբերակցության վրա: Ապագայի նկատմամբ անորոշության զգացողությունը ստիպում է գործարարներին հնարավորության սահմաններում խուսափել հարկերից և օրենքով սահմանված այլ պարտավորություններից՝ կարճաժամկետում ստանալու համար առավելագույն շահույթ:

Ստվերային հատվածի դեմ պայքարի ուղղությունները որոշելիս պետք է հաշվի առնել, որ առանձին օրենքները, միանվագ որոշումները կամ միակողմանի ուժային միջամտությունը չեն կարող լուծել այս խնդիրը[1]: Գործարքների իրականացման ստվերային մեխանիզմը նախ պայմանավորված է օրինական տիրույթում դրանց իրականացման այլընտրանքային ծախսերի բարձր մակարդակով: Դրանք հիմնականում վերաբերում են պայմանագրերի կնքման, իրավունքների հստակեցման և պաշտպանության և երրորդ անձանց ոտնձգություններից պաշտպանվելու հետ կապված ծախսումներին: Ծախսերի այս խումբը ձևավորում է «Օրենքին ենթարկվելու գինը», որը գործարք իրականացնող ագենտները պատրաստ են վճարել, որպեսզի օրենքի պահանջը շրջանցեն: Այն իր մեջ ներառում է՝

1. Օրենքի մատչելիության հետ կապված ծախսերը, որոնք իրենց մեջ ներառում են իրավաբանական անձանց գրանցման, լիցենզիաների ստացման, բանկերում հաշիվներ բացելու, հարկային կարգավիճակը նույնականացնելու և այդօրինակ մյուս ծախսերը:
2. Օրենքի շրջանակներում գործունեությունը շարունակելու հետ կապված ծախսերը, որոնք կապված են օրենքով սահմանված հարկերի վճարման, աշխատանքային պայմանագրերով սահմանված պարտականությունների կատարման կոնֆլիկտների ծագման դեպքում դատական և փաստաբանական ծառայությունների դիմաց վճարման և այլ ծախսերի հետ: Դրանք հիմնականում վերաբերում են աշխատօրվա տևողության, նվազագույն աշխատավարձի պահպանման, սոցիալական երաշխիքների ապահովման և այլ ծախսերի:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ «օրենքին ենթարկվելու գինը» ենթադրում է ոչ միայն ուղղակի դրամական, այլև ոչ դրամական ծախսեր կամ այս կամ այն ընթացակարգի իրականացում: Օրինակ՝ Կոստա Ռիկայում կազմակերպություն բացելու համար անհրաժեշտ է 60 օր[2]: Ժամանակի այդ կորուստներին կարելի է դրամական արտահայտություն տալ, օրինակ՝ դրանք արտահայտել այդ ժամանակամիջոցում այլընտրանքային զբաղվածության դեպքում ստանալիք աշխատավարձի մեծությամբ: Միջազգային ֆինանսական կառույցները, մասնավորապես՝ Համաշխարհային բանկը և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը յուրաքանչյուր տարի իրականացնում են ուսումնասիրություններ՝ պարզելու աշխարհի տարբեր երկրների բիզնես միջավայրի վիճակը, որոնց մեջ մտնում են բիզնեսի գրանցման տևողությունը, հարկային պարտականությունների կատարման աստիճանը, ստվերային տնտեսության ծավալները, կոռուպցիայի մակարդակը, ներդրումային ռիսկերը և այլն: Քանի որ ստվերային տնտեսությունը չունի պաշտոնական գնահատում, առաջանում է նրա ծավալի անուղղակի գնահատման խնդիր: Այդ խնդիրը լուծվում է մի շարք մեթոդներով: Այդ մեթոդներն են՝

1. Դրամական մեթոդներ, որի դեպքում դրամարկղային քաղաքականություն իրականացնող մարմինները, ելնելով դրամական զանգվածի կանխիկ մասի շարժի միտումներից, դրանք համեմատելով ապրանքանյութական արժեքների, ծառայությունների ֆիզիկական ծավալի փոփոխությունների հետ գնահատում են ստվերային տնտեսության մոտավոր ծավալները:
2. Զբաղվածության ծավալի և կառուցվածքի վերլուծություն: Այս դեպքում վերլուծության շրջանակները ելնում են երկար ժամկետում չգրանցված գործազուրկների մեծ ծավալներից, որոշակի գնահատականներ են տալիս «թաքնված զբաղվածությանը», ինչը նույնացվում է ստվերային գործարքների առկայության հետ,

[1] Economic growth with equity: perspectives, K. J. Langford, John R. Hansen, Christine L. Forster, World Bank, Duncan M. Malcolm p. 73.

[2] http://data.worldbank.org/indicator/IC.REG.DURS

3. Տեխնոլոգիական գործակիցների մեթոդ: Այս մեթոդի հիման վրա հնարավոր է բացահայտել եկամուտների իրական ծավալները՝ հաշվի առնելով միավոր արտադրանքի հաշվով այս կամ այն ռեսուրսի ծախսի նորմատիվներից շեղումները (օրինակ՝ հումքի, էլեկտրաէներգիայի, վառելիքի ծախսի նորմատիվները),
4. Ծախսերի և եկամուտների հաշվեկշիռների գնահատման մեթոդ: Որպես կանոն այս դեպքում համադրվում են փաստացի հայտարարագրված եկամուտները այն ռեալ ծախսումների հետ, որը կատարում է այս կամ այն սուբյեկտը, ագենտը:
5. Տնային տնտեսությունների և ընկերությունների ղեկավարների պարբերական հարցումները և դրանց արդյունքների ամփոփման փորձագիտական գնահատականները:
6. Սոցիալական հարցումների մեթոդը[1]:

Այսպիսով, մենք հանգում ենք այն եզրակացության, որ չնայած ստվերային տնտեսության ունեցած որոշակի բարենպաստ ազդեցությանը ազգային տնտեսության կտրվածքով, այն այնուամենայնիվ ընդհանուր առմամբ բացասաբար է անդրադառնում տնտեսության հետագա զարգացման վրա, մասնավորապես՝ բացասաբար է անդրադառնում պետական բյուջեի միջոցների հավաքագրման, տնտեսության պետական կարգավորման, ինչպես նաև օրենքի շրջանակներում գործող տնտեսավարողների գործունեության վրա: Այն որպես հանցավոր գործունեության դրսևորում պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնք տարբեր երկրներում ունեն իրենց առանձնահատկությունները:

Ինչպես և աշխարհի բազմաթիվ երկրներ, Հայաստանի Հանրապետությունը այսօր ևս կանգնած է տնտեսության ստվերային հատվածի զգալի ծավալները կրճատելու կարևորագույն խնդրի առջև, որը խորը արմատներ է գցել՝ դառնալով ազգային անվտանգության լրջագույն սպառնալիքներից մեկը: Ցավոք հանրապետության ստվերային տնտեսությունը կործանարար ազդեցություն է ունենում սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, քանի որ բարձր է շուկայի մոնոպոլացման աստիճանը, սոցիալական բևեռացումն ու քաղաքական անվստահությունը: Դրա դեմ պայքարի առումով կարևոր երաշխիք և լծակ է հանդիսանում ստվերային տնտեսական գործունեության բազմակողմանի ուսումնասիրությունների կազմակերպումը, որոնք թույլ կտան իրականացնել տնտեսության ստվերային հատվածի մասշտաբների օբյեկտիվ գնահատումը, տնտեսական աճի գործոնների բացահայտումն ու հակազդեցության գործուն մեխանիզմների մշակումը:

Мушег Акопян
Альберт Айрапетян

ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ТЕНЕВОЙ ЭКОНОМИКЕ

Аннотация

В данной статье рассматриваются сущность, экономические, социальные и правовые причины возникновения теневой экономики, а также ее социально-экономические последствия. Независимо от позитивного и негативного влияния теневой экономики на общество, она считается преступной деятельностью. Наличие теневого сектора экономики и высокие темпы его развития обусловлены рядом факторов, которые можно разделить на две группы - прямые и косвенные. В результате исследования выяснилось, что незаконная деятельность часто отражает степень несовершенства системы государственного управления данной страны.

[1] ''Вопросы экономик'' 2006 -№12.

Mushegh Hakobyan
Albert Hayrapetyan

THE THEORETICAL ISSUES ON SHADOW ECONOMY

Abstract

The article discusses the nature of shadow economy, its economic, social and legal cause-roots, and socio-economic consequences. Regardless of its negative or positive impact on the society, shadow economy is defined as an illegal activity. The existence of the shadow economy and the high rates at which its size is growing are attributed to several factors that can be divided into two groups: direct and indirect factors. Based on research results the authors identify that illegal activity oftentimes reflects how well the whole system of public administration functions in a given nation.

ԱԼԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ զիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրանտ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՏՎԵՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ստվերային տնտեսական գործունեության մեջ ներգրավված սուբյեկտները մշտապես գերադասում են մնալ ստվերում և չբացահայտել իրենց, հակառակ դեպքում կարող են ենթարկվել վարչական կամ քրեական պատասխանատվության՝ պայմանավորված ստվերային տնտեսական գործունեության անօրինական լինելու հանգամանքով: Վերոգրյալը հաշվի առնելով կարելի է պնդել, որ ստվերային տնտեսության ծավալների ճշգրիտ որոշումը գրեթե անհնար, իսկ մոտավոր գնահատումը չափազանց բարդ խնդիր է:

Տնտեսության ստվերային հատվածի ծավալների գնահատումը բացառիկ կարևոր նշանակություն ունի տնտեսական զարգացման ներկա վիճակի վերլուծության և, հատկապես, պետական քաղաքականության մշակման համար, քանի որ ունենալով ստվերում գտնվող սուբյեկտների և նրանց գործունեության վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ հնարավոր է մշակել ստվերի դեմ պայքարի առավել արդյունավետ միջոցառումներ: Այդ տեսանկյունից շատ կարևոր են այն մեթոդները, որոնց միջոցով կարելի է գնահատել ստվերը:

Ստվերային տնտեսության ծավալները և զարգացման միտումները գնահատելու համար օգտագործվում են տարբեր մոտեցումներ, սակայն պետք է նշել, որ դեռևս մշակված չէ հատուկ մեթոդ, որը հնարավորություն կտար հստակ գնահատել ստվերային տնտեսական գործունեության ծավալները: Տնտեսության ստվերային հատվածի գնահատման համար օգտագործվող մեթոդները պայմանականորեն կարելի է դասակարգել ըստ վերլուծության միկրո և մակրո մակարդակների: Փորձենք կատարել ստվերային տնտեսության ծավալների գնահատման գոյություն ունեցող մեթոդների համեմատական վերլուծություն:

Ուղղակի մոտեցումներ: Միկրոմակարդակում կատարվող հետազոտությունների ժամանակ ստվերային տնտեսության ծավալների գնահատման համար օգտագործվում են վերլուծության ուղղակի մեթոդները, այդ թվում՝ հատուկ հասարակական հարցումներ, ուղղակի ստուգումների և այլ հատուկ մեթոդներ:

1. Հարցումների վրա հիմնված վերլուծությունների ժամանակ իրականացվում են լավ կազմակերպված սոցիալական ուսումնասիրություններ: Որպես օրինակ կարելի է ներկայացնել խորացված հարցազրույցների անցկացման մեթոդը՝ հարցման մասնակից անձի գաղտնիության

պահպանման սկզբունքի հիմման վրա: Այսպիսի հարցումների մասնակիցների ընտրանքը կատարվում է այն անձանց շրջանում, որոնք այս կամ այն չափով ներգրավված են ստվերային տնտեսական գործունեության մեջ կամ անմիջական առնչություն ունեն դրա հետ:

Հարցման ընթացքում մասնակիցներին տրվում են լավ մշակված հարցեր ստվերային տնտեսական գործունեության նկատմամբ իրենց ունեցած վերաբերմունքի, առնչության, հնարավոր մասնակցության, դրսևորումների և այլնի վերաբերյալ: Տրված պատասխանների հիմման վրա հարցման մասնակիցներին կարելի է բաժանել հետևյալ չորս խմբերի[1]՝

1. ստվերային գործունեության մեջ ներգրավված անձինք, ովքեր անմիջականորեն մասնակցում են ոչ պաշտոնական տնտեսական հարաբերություններին և խոստովանում են այդ մասին,
2. ներքին դիտորդներ կամ անձինք, ովքեր գտնվում են ստվերային միջավայրում և դիտում են այն ներսից, սակայն սեփական մասնակցության մասին չեն հիշատակում,
3. արտաքին դիտորդներ կամ անձինք, ովքեր հարցումների ժամանակ կատարում են դատողություններ ստվերային տնտեսության զանազան դրսևորումների վերաբերյալ՝ չլինելով դրանցում ներգրավված կամ լռելով այդ մասին,
4. տնտեսվարող սուբյեկտներ, ովքեր այս կամ այն կերպ տուժել են այլոց ստվերային տնտեսական գործունեության հետևանքով:

Արժանահավատության տեսանկյունից առավել արժեքավոր են համարվում առաջին երկու խմբերի մասնակիցներից ստացված տեղեկությունները, սակայն չպետք է անտեսել նաև հարցումների մնացյալ մասնակիցների արտահայտած կարծիքները:

Այդ մեթոդի գլխավոր թերությունն այն է, որ ուսումնասիրությունների ճշտությունը և արդյունքները մեծապես կախված են հարցվողների համագործակցելու ցանկությունից և նրանց անձի գաղտնիության ապահովման մակարդակից: Դժվար է գնահատել չգրանցված աշխատողների քանակը ուղղակի հարցումների միջոցով. շատ հարցվողներ չեն համարձակվում խոստովանել իրենց անօրինական գործունեությունը, չեն ցանկանանում խոստովանել, որ խախտում են օրենքները և խուսափում են հարկերից, ահա թե ինչու այս մեթոդն այնքան էլ վստահելի չէ:

2. Միկրոմակարդակում տնտեսության ստվերային հատվածի գնահատման հաջորդ մոտեցումը հիմնված է բաց ստուգումների մեթոդի վրա: Այս նպատակով տեսչական մարմինները իրականացնում են ստուգումներ՝ հարկային, մաքսային, բանկային և այլ բնույթի իրավախախտումների հայտնաբերման նպատակով, իսկ ստացված տվյալները օգտագործվում են ստվերային տնտեսության ծավալային գնահատման նպատակով: Այնուամենայնիվ, քանի որ ստուգումների համար ընտրված հարկատուները պատահական չեն, բաց ստուգումների վրա հիմնված գնահատումները արտացոլում են միայն ստվերային եկամտի այն մասը, որը հաջողվել է պարզել, և սա հնարավոր է, որ թաքնված եկամտի միայն փոքր բաժինը լինի:

Այս մեթոդների օգտագործմամբ ուսումնասիրությունները լայն տարածում ունեն մի շարք երկրներում ստվերային տնտեսության ծավալները գնահատելու համար: Դրանց գլխավոր առավելությունը ստվերային տնտեսության կառուցվածքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության հավաքագրման հնարավորությունն է: Ուղղակի կամ միկրո մեթոդների հիմնական թերություններից մեկն այն է, որ ստացված արդյունքները գրեթե միշտ ցածր են իրական մակարդակից: Դա հիմք է տալիս եզրահանգման, որ այստեղ մեծ է սուբյեկտիվիզմը, որը պայմանավորված է այն բանով, որ իբրև տեղեկատվության անմիջական աղբյուրներ հանդես են գալիս այն սուբյեկտները, որոնք այս կամ այն չափով ներգրավված լինելով ստվերային տնտեսության մեջ, ամեն կերպ փորձում են քողարկել այդ գործունեության իրական լինելը: Այս է պատճառը, որ, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, ուղղակի մեթոդներով կատարված գնահատումները, որպես կանոն, փոքրացնում են ստվերային տնտեսության իրական ծավալները:

Անուղղակի մոտեցումներ: Մակրոմակարդակում ստվերային տնտեսության ծավալների գնահատման համար օգտագործվում են անուղղակի մոտեցումներ, որոնք հիմնվում են մակրոտնտեսական ցուցանիշների և պաշտոնական վիճակագրության այն տվյալների վերլուծության

[1] Клямкин И., Тимофеев Л. Теневая Экономика: Экономико-социологическое исследование. М., 2000. էջ. 14.

վրա, որոնք պարունակում են ստվերային տնտեսության զարգացման մասին տեղեկատվություն, այսինքն՝ անուղղակի մեթոդները փորձում են ստվերը գնահատել՝ չափելով վիճակագրության վրա դրա թողած հետքերը: Անուղղակի մոտեցման շրջանակներում գոյություն ունեն մի շարք մեթոդներ, որոնք կիրառվում են տնտեսության ստվերային հատվածը գնահատելու համար: Անուղղակի մեթոդներից են՝

- ազգային եկամուտների և ազգային ծախսերի համադրության մեթոդը,
- իրական և հրապարակված աշխատուժի տարբերության մեթոդը,
- փողի պահանջարկի կամ մոնետար մեթոդը,
- ֆիզիկական ներդրման կամ էլեկտրաէներգիայի ընդհանուր ծախսի մեթոդը
- ռեգրեսիոն վերլուծության մեթոդը և այլն:

Քննարկենք դրանցից յուրաքանչյուրի առավելությունները և թերությունները.

Համադրության մեթոդ: Ստվերային գործունեություն ծավալող սուբյեկտները ձգտում են պետությունից թաքցնել իրենց իրական եկամուտները, բայց դժվարանում են թաքցնել իրենց ծախսերը: Հաշվի առնելով այդ փաստը՝ առաջարկվել է ստվերային տնտեսության գնահատման հետևյալ եղանակը. ազգային եկամտի և ազգային ծախսի տարբերությունը կարող է բավական ճշգրիտ գնահատական լինել: Դրա էությունն այն է, որ հիմնվելով եկամուտների և ծախսերի համադրման վրա, հնարավորություն է առաջանում որոշել, թե որքան է կազմում այն ստվերային շրջանառությունը, որից ստացված եկամուտների հաշվին տնային տնտեսություններն իրականացրել են իրենց ծախսումները: Մասնավորապես այն դեպքում, եթե բացահայտվում է, որ պաշտոնապես հայտարարագրվող ծախսերը գերազանցում են եկամուտներին, ապա ակնառու է այն փաստը, որ տնային տնտեսությունը իր ծախսերի մի մասի ֆինանսավորումը իրականացրել է թաքցված եկամտի աղբյուրների հաշվին:

Ազգային հաշիվներում եկամտային մեթոդով հաշվարկված ՀՆԱ-ն պետք է հավասար լինի ծախսային մեթոդով հաշվարկված ՀՆԱ-ին: Այսինքն՝ այդ երկու ցուցանիշների միջև տարբերությունը կարող է հիմք հանդիսանալ ստվերային տնտեսության ծավալների գնահատման համար: Սակայն այս մեթոդի կիրառման ժամանակ կարող են մի շարք խնդիրներ առաջանալ: Գործնականում, գրեթե միշտ ստացվում է այնպես, որ ազգային ծախսն ավելի մեծ է ստացվում, քան ազգային եկամուտը: Սակայն կան երկրներ, որոնցում դիտվում է հակառակ երևույթը, օրինակ՝ Շվեյցարիայում ազգային եկամուտը վերջին տարիներին ավելի մեծ է, քան ծախսը[1]: Բացի այդ, քանի որ ազգային հաշիվների վիճակագիրները մտահոգված են նվազեցնել այս տարբերությունը, այս նպատակին կծառայեն գնահատման ավելի շատ սկզբնական, քան հրապարակված արդյունքները: Եթե ծախսային մասի բոլոր բաղադրիչները չափվեին անսխալ, ապա այս մոտեցումն, անշուշտ, կհանդիսանար ստվերային տնտեսության չափի գնահատման լավ տարբերակ: Ցավոք, դա այդպես չէ, և տարբերությունը արտացոլում է ոչ միայն ստվերային տնտեսության մոտավոր ծավալները, այլև ազգային հաշիվների վիճակագրական տվյալների բոլոր բացթողումները և թերությունները:

Պաշտոնական և իրական աշխատուժի տարբերության մեթոդ: Ստվերային տնտեսության ծավալների գնահատման ոլորտում լայն կիրառություն գտած հաջորդ անուղղակի մեթոդը զբաղվածության հաշվարկման մեթոդն է, որն այլ կերպ նաև անվանում են իտալական մեթոդ: Այն մշակել է Իտալիայի վիճակագրության ինստիտուտը, որը ներկայում համարվում է ամենահեղինակավոր կառույցը ստվերային տնտեսության պարամետրերի սահմանման ոլորտում: Պաշտոնական տնտեսությունում աշխատուժի մասնակցության նվազումը կարող է դիտվել որպես ստվերային հատվածում գործունեության աճի ցուցիչ: Գոյություն ունեն այս մեթոդի մի քանի տարատեսակներ, հիմնված՝

- փաստացի և պաշտոնապես գրանցված գործազրկության միջև տարբերության վրա,
- փաստացի աշխատած և պաշտոնապես սահմանված աշխատաժամանակի միջև տարբերության վրա:

[1] http://www.keepeek.com/Digital-Asset-Management/oecd/economics/national-accounts-of-oecd-countries-volume-2012-issue-1/switzerland_na_ma_dt-v2012-1-32-en#page4

Այդ մեթոդը խնդիր է դնում որոշել աշխատանքային ծախսումների իրական ծավալը, որը հիմնված է աշխատաժամանակի ուսումնասիրության վրա: Տնային տնտեսություններից պատահական ընտրանքի սկզբունքով հավաքվում են դրանց աշխատաժամանակի վերաբերյալ տեղեկատվություն: Տրվող հարցերը վերաբերում են հարցվողների կողմից այս կամ այն ոլորտում ծախսված աշխատաժամանակին, և այսպիսի մոտեցման արժանիքներից մեկն այն է, որ տրվող հարցերը չեն վերաբերում իրենց եկամուտներին և, հետևաբար, նրանք ոչ մի պատճառ չունեն թաքցնել կամ աղավաղել իրենց աշխատաժամանակի մասին տեղեկատվությունը: Այնուհետև հավաքագրված տվյալները մշակվում են և սահմանվում միջինացված մեծություններ, և հիմնվելով աշխատանքի արտադրողականության ցուցանիշների վրա՝ հետազոտողները հաշվարկում են, թե իրականում որքան է կազմում փաստացի զբաղվածությունը, և ստացված ցուցանիշից հանելով պաշտոնապես հայտնի զբաղվածության ծավալները՝ ստանում են ստվերային զբաղվածության մեծությունը, որն էլ իր հերթին հնարավորություն է տալիս արժեքային արտահայտությամբ ցույց տալ ստվերային շրջանառության ծավալները[1]:

Այդ մեթոդի թերությունն այն է, որ տվյալների ընդգրկման շրջանակները շատ նեղ են, բացի այդ աշխատանքային որոշ ռեսուրսների տեղաշարժերը կարող են նաև պայմանավորված լինել այլ հանգամանքներով, օրինակ՝ կարող են հանդես գալ որպես սոցիալ-ժողովրդագրական երևույթների հետևանք: Ավելին, մարդիկ կարող են աշխատել ստվերային տնտեսությունում՝ միաժամանակ ունենալով աշխատանք պաշտոնական հատվածում: Ահա թե ինչու այսպիսի գնահատումները կարող են համարվել ստվերային տնտեսության չափի և զարգացման թույլ ցուցանիշներ:

Մոնետար մեթոդ: Ամենատարածված մեթոդներից մեկը, որով իրականացվում է մակրոմակարդակում ստվերային տնտեսության ծավալների գնահատումը, մոնետար մեթոդն է, որն այլ կերպ անվանում են նաև փողի պահանջարկի մեթոդ: Այս մեթոդն առաջին անգամ առաջարկել է Պ.Կագանը[2]: Այն հիմնված է ստվերային տնտեսական գործունեության մի շատ կարևոր առանձնահատկության վրա: Եթե պաշտոնական տնտեսությունում դրամահաշվարկային գործառնությունները գործարքների մեծամասնությունը արդեն երկար տարիներ կատարվում են անկանխիկ ձևով, ապա ստվերային տնտեսության մեջ գործարքների ժամանակ նախապատվությունը մեծամասամբ տրվում է կանխիկ դրամին: Այս գաղափարը կարելի է օգտագործել ստվերային տնտեսության ծավալները գնահատելու համար:

Ստվերային շրջանառության ճշգրիտ գնահատման համար ստվերային տնտեսությունը սպասարկող կանխիկի ծավալը, որը տնտեսագիտական գրականության մեջ անվանվում է նաև «չբացատրվող կանխիկի» պահանջարկ[3], նախ ընդհանուր կանխիկի ծավալից, որն ընդունում է Mo դրամական ագրեգատը, հանում ենք, այսպես կոչված, «բացատրելի կանխիկի» պահանջարկի մեծությունը: Ստացված մեծությունը բազմապատկելով փողի շրջապտույտի արագության մեծությամբ՝ ստանում ենք գործարքների այն ծավալը, որն իրականացվել է «չբացատրվող» պահանջարկ ունեցող կանխիկով: Այդ մեծությունն էլ ներկայացնում է ստվերային տնտեսության չափը: Այս մեթոդի օգտագործման ժամանակ որպես հիմնական նախապայմաններ են ընդունվում. փողի շրջանառության արագությունը, նույնն է՝ ինչպես պաշտոնական, այնպես էլ ստվերային ոլորտներում, ստվերային տնտեսական գործունեության ընթացքում որպես վճարման միջոց կիրառվում է կանխիկ փողը, պետության վերահսկողության աստիճանն ու հարկային դրույքաչափերի մեծությունն են ստվերային տնտեսական գործունեության մեծությունը կանխորոշող հիմնական գործոններ: Նաև կարևոր նախապայման է այն, որ համաձայն այս մեթոդի կողմնակիցների՝ հայտնի է որևէ մեկ տարի, որում ստվերային տնտեսությունը իսպառ բացակայում է: Այս մեթոդը զարգացվեց Թանզիի կողմից, որը տնտեսագիտորեն ցույց տվեց փողի պահանջարկի ֆունկցիան, որով փորձեց չափել ստվերային տնտեսությունը ԱՄՆ-ում 1929-80թթ. համար: Նրա մեթոդը ենթադրում է, որ ստվերային գործարքներն արվում են առձեռն վճարումներով՝

[1] http://www.iea.org.uk/sites/default/files/publications/files/IEA%20Shadow%20Economy%20web%20rev%207.6.13.pdf
[2] Cagan P. (1958), "The Demand for Currency Relative to the Total Money Supply", "Journal of Political Economy 66", 303-29.
[3] http://www.roiw.org/2001/239.pdf

հետքեր չթողնելու համար: Ստվերային տնտեսության աճը, հետևաբար կբարձրացնի փողի պահանջարկը: Թանզիի կողմից առաջարկված փողի պահանջարկի մեթոդի հիմնական հավասարումը հետևյալն է[1].

$$l_n\left(\frac{C}{M_2}\right)_t = \beta_0 + \beta_1 l_n(1+TW)_t + \beta_2 l_n\left(\frac{WS}{Y}\right)_t + \beta_2 l_n R_t + \beta_4 l_n\left(\frac{Y}{N}\right)_t + U_t$$

$$\beta_1>0,\ \beta_2>0,\ \beta_3<0,\ \beta_4>0$$

որտեղ՝

C/M2-ը՝ կանխիկ վճարումների հարաբերությունն է կանխավճարային և ընթացիկ հաշիվներին,

TW-ը՝ չափված միջին հարկադրույքը,

WS / Y-ը՝ աշխատավարձերի և ռոճիկների բաժինն ազգային եկամտում,

R-ը՝ խնայողությունների բաժինը,

Y/N –ը՝ մեկ շնչին ընկնող եկամուտը:

Այս մեթոդը, չնայած լայն կիրառություն է գտել ստվերային տնտեսության ծավալների գնահատման ոլորտում, այնուամենայնիվ զերծ չէ թերություններից: Որպես հիմնական թերություն կարելի է նշել այն փաստը, որ հիմնական նախապայմաններից մեկն այն է, որ գոյություն ունի որևէ տարի, որի ժամանակ ստվերային տնտեսությունը իսպառ բացակայում է, իսկ այս ենթադրության մեղմացումը կնշանակի ուսումնասիրությունների արդյունքում ստացված արդյունքների կանոնավորման աճ:

Հաջորդ թերությունն այն է, որ որպես գլխավոր նախապայման ընդունվում է, որ ստվերային գործարքները բացառապես սպասարկվում են կանխիկ փողի միջոցով: Ի հակադրություն այս փաստի՝ պետք է նշել, որ որպես գործարքների սպասարկման մեխանիզմ այս ոլորտում նաև կիրառում են բարտերը, նաև, որոշ դեպքերում՝ ֆինանսական այլ ակտիվներ: Ի լրումն հետազոտության արդյունքները, որ կատարվել են Ա.Իսաշենի և Ս.Սթորմի կողմից, ցույց են տալիս, որ Նորվեգիայում ստվերային շրջանառության միջինը 80%-ն է կատարվել կանխիկ փողով, իսկ մնացած մասը բաժին է ընկել ապրանքափոխանակությանը[2]:

Մյուս թերությունն այն է, որ պաշտոնական և ստվերային հատվածում փողի շրջանառության արագությունն ընդունվում է հավասար: Խնդիրն այն է, որ պաշտոնական հատվածում առանց այն էլ գոյություն ունի մեծ անորոշություն փողի շրջանառության արագության վերաբերյալ, ստվերային հատվածում այն նույնիսկ ավելի դժվար է գնահատել:

Ամփոփելով կարելի է ասել, որ չնայած վերը մատնանշված մի շարք թերություններին, մոնետար մեթոդը, այնուամենայնիվ, ներկայում համարվում է ստվերային տնտեսության ծավալների գնահատման ամենաընդունելի և տարածված մեթոդներից մեկը:

էլեկտրաէներգիայի սպառման մեթոդ: Հաջորդ անուղղակի մոտեցումը ֆիզիկական ներդրման մեթոդն է, որի էությունը հետևյալն է. ընտրել որևէ գործոն, առանց որի անհնար է կազմակերպել որևէ տնտեսական գործունեություն, օրինակ՝ էլեկտրաէներգիան, այնուհետև ուսումնասիրել էլեկտրաէներգիայի ծախսը որոշ ժամանակահատվածում, ապա այն համեմատել այլ տվյալների հետ, ինչից հետո հնարավոր է պատկերացում կազմել ստվերային հատվածի մասին:

Ընդհանուր տնտեսական գործունեությունը (ստվերային և պաշտոնական) չափելու համար այս մեթոդի հեղինակներ Քոֆմանը և Կալիբերդան ընդունում են, որ էլեկտրաէներգիայի սպառումը համարվում է ամբողջ տնտեսական գործունեության ամենալավ ֆիզիկական որոշիչը: Ունենալով փոխարինող չափում ամբողջ տնտեսության համար և հանելով այն պաշտոնական ՀՆԱ-ի չափումներից՝ ստացել են ստվերային տնտեսության չափը: Սա նշանակում է, որ ընդ-

[1] Vito Tanzi, 1980, "The Underground Economy in the United States: Estimates and Implications" Banca Nazionale del Lavoro Quarterly Review, No. 135, December.

[2] Isachsen Arne S. and Steinar Strom (1985), The size and growth of the hidden economy in Norway, Review of Income and Wealth, 31/1, pp. 21-38.

հանուր էլեկտրաէներգիայի սպառման աճը հանդիսանում է պաշտոնական և ստվերային ՀՆԱ-ի աճ: Ըստ այս մեթոդի՝ պաշտոնապես գրանցված ՀՆԱ-ի համախառն ցուցանիշի և ընդհանուր էլեկտրաէներգիայի սպառման ցուցանիշի տարբերությունը կարող է վերագրվել ստվերային տնտեսության աճին: Այս մեթոդը շատ պարզ է և կարող է քննադատվել տարբեր տեսանկյուններից:

- Ոչ բոլոր ստվերային տնտեսական գործունեություններն են պահանջում էլեկտրաէներգիայի մեծ քանակություն, և կարող են օգտագործվել նաև էներգիայի այլ աղբյուրներ (գազ, նավթ, ածուխ և այլն), այնպես որ ստվերային տնտեսության միայն մի մասն է հաշվի առնվում:
- Ժամանակի ընթացքում անընդհատ տեղի է ունեցել տեխնիկական առաջընթաց: Ե՛վ արտադրությունը, և՛ էլեկտրաէներգիայի օգտագործումը այժմ ավելի արդյունավետ են, քան անցյալում, և դա վերաբերում է ինչպես պաշտոնական, այնպես էլ ստվերային հատվածին:
- Ժամանակի ընթացքում զգալի տարբերություններ և փոփոխություններ կարող են լինել երկրների միջև էլեկտրաէներգիա/ՀՆԱ հարաբերության առաձգականությունում:

Այս ամենը հաշվի չառնելու դեպքում այս մեթոդով ստվերային տնտեսության ծավալների հաշվարկը կլինի ոչ արժանահավատ:

Ռեգրեսիոն վերլուծության մեթոդ: Մինչ այժմ նկարագրված բոլոր մեթոդները հաշվի են առնում ստվերային տնտեսության հետևանքների միայն մեկ որոշիչ, վերջին ժամանակներս առավել լայն տարածում են գտել ստվերային տնտեսության գնահատման ռեգրեսիոն վերլուծության մեթոդի տարատեսակները: Դրանցից է, օրինակ, MIMIC մեթոդը (Multiple Indicators and Multiple Causes): Մինչև այժմ «ստվերը» գնահատելու մեթոդների հիմնական թերությունն այն էր, որ դրանք հիմնվում էին ստվերի գործունեության մեկ պատճառի կամ մեկ ինդիկատորի վերլուծության վրա: Ի տարբերություն այդ մեթոդների, MIMIC մոդելները թույլ են տալիս կատարել ստվերային տնտեսության ծավալների բազմագործոն վերլուծություն: Այս մեթոդը բաղկացած է երկու տիպի հավասարումներից. առաջին խմբում հանդես են գալիս ստվեր առաջացնող հիմնական պատճառները, իսկ երկրորդ խմբում՝ ինդիկատոր մեծությունները, որոնք կարելի է նկարագրել ստվերային տնտեսության միջոցով: Ստվերային տնտեսության մոդելն ունի հետևյալ տեսքը[1].

$$\eta = \gamma_1 x_1 + \gamma_2 x_2 + \gamma_3 x_3 + \gamma_4 x_4 + \gamma_5 x_5 + \xi$$

$$y_1 = \lambda_1 \eta + \varepsilon_1$$
$$y_2 = \lambda_2 \eta + \varepsilon_2$$

Ընդ որում՝ η ստվերն է, իսկ X = (χ1χ2χ3χ4χ5) ռեգրեսորներն են, որոնք ծնում են η մեծությունը՝ համապատասխանաբար ուղղակի և անուղղակի հարկային բեռները, գործազրկության մակարդակը և ինքնազբաղվածության մակարդակը:

Y=(y1y2) էնդոգեն ինդիկատորներն են, ցուցանիշները, որոնք կապված են η մեծության հետ, մասնավորապես՝ իրական ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով և բանկերից դուրս շրջանառվող դրամի մասը փողի զանգվածում:

λ=(λ1λ2), γ=(γ1γ2γ3γ4γ5) կառուցվածքային պարամետրեր են,

ε=(ε1ε2), ξ մոդելների սխալներն են, որոնք ենթադրում են անկախ և նորմալ բաշխված մեծություններ:

Այս մոդելում ներառվող գործոնները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ գործոններ, որոնք վերաբերում են հարկային բեռին, և գորոծոններ, որոնք վերաբերում են աշխատուժին: Դիտարկվելիք գործոնները չորսն են՝ հարկային բեռը, աշխատուժի կառավարման մակարդակը, գործազրկության մակարդակը և ինքնազբաղվածության տոկոսը:

[1] ftp://ftp.econ.au.dk/afn/wp/03/wp03_07.pdf

Ծանր հարկային բեռը ստեղծում է ստվերային դաշտ մտնելու նպաստավոր պայմաններ: Այս գործոնը միշտ ներառվում է ստվերի վերլուծության ժամանակ և համարվում ստվերային տնտեսության ամենաառաջնային գործոններից մեկը: Հարկային բեռի տեսանկյունից կարելի է առանձնացնել ուղղակի և անուղղակի հարկերի, ինչպես նաև սոցիալական վճարներ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ուղղակի հարկերի և սոցիալական վճարների ազդեցությունը ավելի տեսանելի են, քան անուղղակի հարկերի ազդեցությունը: Սակայն ռեգրեսիոն վերլուծության ժամանակ բոլորն էլ ունենում են դրական նշաններով գործակիցներ, չնայած ամենամեծ գործակիցը բաժին է ընկնում ուղղակի հարկերին:

Ըստ Վիտո Թանզիի գործազրկության և ստվերի հարաբերությունները քննարկելիս, անհրաժեշտ է դիտարկել երկու դեպք[1]: Մի կողմից գործազրկության աճը կարող է առաջացնել ստվերային տնտեսության նվազում, քանի որ ստվերը կարող է դրականորեն կապված լինել ՀՆԱ-ի աճի և բացասական՝ գործազրկության հետ: Բայց, մյուս կողմից, պաշտոնական գործազուրկները կարող են աշխատել ստվերում: Այսպիսով՝ կարելի է գտնել դրական կոռելյացիա: Թանզին նշում է, որ գործազրկության ու ստվերի կապը ահռելի է, և ստվերի աշխատուժը բաղկացած է տարաբնույթ մարդկանցից, օրինակ՝ գործազուրկներից, անօրինական ներգաղթածներից, տնային տնտեսուհիներից: Ընդ որում՝ կան մարդիկ, ովքեր ունեն պաշտոնական և ոչ պաշտոնական աշխատանք: Այս իմաստով պաշտոնական գործազուրկները թույլ կոռելացված են ստվերի հետ: Այնուամենայնիվ տեսությունը չի տալիս հարցի պատասխանը՝ այս գործոնի նշանը դրական է, թե բացասական, և յուրաքանչյուր երկրի համար այն լուծվում է էմպիրիկ վերլուծության միջոցով: Ընդհանրապես՝ այս տիպի մոդելները տեսականորեն ավելի գերադասելի են, քան մյուս անուղղակի մեթոդները՝ այն պարզ պատճառով, որ այս մեթոդներն իրականում պարունակում են ավելի շատ տեղեկատվություն, քան մյուսները:

Այսպիսով, ամփոփելով ստվերային տնտեսության ծավալների գնահատման մեթոդների համեմատական վերլուծությունը, գալիս ենք եզրահանգման, որ տնտեսագիտությունը դեռևս չի մշակել գնահատման այնպիսի ունիվերսալ միջոց, որը հնարավորություն կտար բարձր ճշգրտությամբ գնահատել ինչպես ստվերային տնտեսական գործունեության առանձին տեսակներ, այնպես էլ ստվերային տնտեսության ծավալներն ամբողջությամբ: Ինչ վերաբերում է ստվերային տնտեսական գործունեության բացասական հետևանքների հաղթահարման գործում դրա գնահատման մեթոդների դերին, պետք է նշել, որ չունենալով գնահատման ճշգրիտ մեխանիզմներ և արժանահավատ գնահատման արդյունքներ՝ իրավասու մարմինների համար բավական լուրջ դժվարություն կլինի մշակել ու հետևողականորեն կյանքի կոչել ստվերային տնտեսության հետևանքների հաղթահարման արդյունավետ ռազմավարություն:

Альберт Айрапетян

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ МЕТОДОВ ОЦЕНКИ ТЕНЕВОГО СЕКТОРА ЭКОНОМИКИ

Аннотация

Оценка масштабов теневого сектора экономики имеет исключительно важное значение для анализа нынешнего состояния экономического развития страны и, особенно, разработки государственной политики, поскольку, владея статистическими данными о субъектах, находящихся в тени, и их деятельности, возможно разработать более эффективные мероприятия по борьбе с тенью. При анализе методы, используемые для оценки теневого сектора экономики, условно можно классифицировать на микро- и макро методы. На микроуровне более часто используются прямые методы, а на макроуровне – косвенные. В данной статье представлены различные методы оценки масштабов теневой экономики, для определения степени эффективности которых проведен сравнительный анализ.

[1] Tanzi V. "The underground economy in united states:annual estimates 1930-1980" IMF staff paper, vol. 30, p.283-305.

Albert Hayrapetyan

THE COMPARATIVE ANALYSIS OF METHODS USED TO MEASURE THE SIZE OF THE SHADOW ECONOMY

Abstract

Measuring the size of the shadow economy is of primary importance for analyzing the current state of economic development, and designing economic policy, since the size of unregistered transactions, if such data are available, will allow the Government to design such measures that will efficiently reduce the number of unregistered transactions and fight against practices adopted by the companies. The methods used in measuring the size of the shadow economy could be broadly classified as macro- and micro-level analysis methods. As a rule, micro-level methods that are used more frequently are direct methods; meanwhile indirect methods are widely used in case macro-level analysis. This article discusses different methods of measuring the size of the shadow economy to identify how efficient they are by comparing advantages and shortcoming of each method.

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հարկ է նշել, որ բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործող փոքր ու միջին ձեռնարկություններ համար սկզբնական փուլերում առավել գրավիչ է գործարար ներդրողների ինստիտուտը: Այս փաստը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ ներդրողը, բացի ընկերության ներդրումային գործընթացներից, մասնակցում է նաև կառավարման գործընթացներին, ընդ որում, ներդրողի «պարգևը» ընկերության կապիտալի մի մասն է՝ ձևակերպված արժեթղթերի տեսքով: Այսպիսով, տվյալ ֆինանսավորման եղանակը վենչուրային ասոցիացիաների ծառայությունների համեմատ դառնում է ավելի էժան, քանի որ այս դեպքում վերանում է արտաքին խորհրդատուների ներգրավման անհրաժեշտությունը: Դա է պատճառը, որ EBAN-ի միջոցով ֆինանսավորվող միջին գործարարության ընկերությունների թիվը շուրջ 605-ով գերազանցում է EVCA-ի միջոցով ֆինանսավորվող ընկերությունների թվին[1]:

ԵՄ երկրներում ՓՄՁ-ների ներդրումային ռազմավարությունների մշակման և իրագործման փորձի ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել նաև Հայաստանում՝ նույն ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման նոր մոտեցումների կիրառման առումով:

Համաշխարհային տնտեսության գլոբալացման և միջազգային ու տարածաշրջանային շուկաներին ինտեգրման պայմաններում՝ ՀՀ փոքր և միջին ընկերությունների ներդրումային ռազմավարությունների ձևավորման և կենսագործման ոլորտում առկա հիմնախնդիրները կարելի է բաժանել չորս հիմնական խմբերի.

1. ֆինանսական միջոցների բաշխման խնդիրներ՝ պայմանավորված հնամաշ տեխնոլոգիաներով և սարքավորումներով,

[1] Munck C., Saublens C., “Statistics compendium”, EBAN, 2006, pp.3-4.

2. ֆինանսական ռեսուրսների ներգրավման խնդիրներ՝ կապված արտադրության ծախսերի աճի, կապիտալ ներդրումների անբավարարության, շրջանառու կապիտալի փոքք ծավալի և վարկավորման անբարենպաստ պայմանների հետ,
3. խնդիրներ՝ կապված ֆինանսական ռեսուրսների օպտիմալացման և ապահովագրական պահուստների ստեղծման հետ,
4. դրամական միջոցների հավաքագրման խնդիրներ՝ կապված գործընկեր-կազմակերպությունների մոտ հաճախակի ծագող վճարունակության դժվարությունների, պահանջարկի ցածր մակարդակի, բարձր մրցակցության հետ:

Վերոհիշյալ խնդիրների լուծման նպատակով կիրառելի գործիքների շարքում կարելի է նշել օվերդրաֆտը, բանկային վարկը, լիզինգը և ֆակտորինգը: Հարկ է նշել, սակայն, որ ներկայացված գործիքներից ֆակտորինգը, լիզինգը և երաշխիքները դեռևս չունեն լայն կիրառում ՀՀ ֆինանսաբանկային ծառայությունների համակարգում: Որպես խնդրի լուծում, կարելի է դիտարկել միջազգային լիզինգային ընկերությունների, հիմնադրամների և ֆինանսական ինստիտուտների հետ համագործակցումը, որի արդյունքում հնարավոր կլինի նվազեցնել ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող ծառայությունների արժեքը և տրամադրել լրացուցիչ երաշխիքներ՝ հաշվի առնելով համաշխարհային ֆինանսական և միջբանկային վարկավորման շուկաներում դրամական միջոցների ներգրավման առումով միջազգային կազմակերպությունների համեմատական առավելությունները:

Մեր հանրապետությունում ՓՄՁ զարգացման խոչընդոտների շարքում կարելի է դասել նաև գործարար ներդրողների ենթակառուցվածքի միջոցով ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման բացակայությունը: Այս իրավիճակը կարելի է մասամբ բացատրել համապատասխան իրավահարաբերությունները կարգավորող ու փոքր ու միջին ընկերությունների և գործարար ներդրողների շահերը պաշտպանող օրենսդրական հենքի բացակայությամբ:

Այս համատեքստում, պետք է արձանագրել, որ ֆինանսաբանկային հատվածի և ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների փոխհարաբերությունների պայմանները առկա օրենսդրական ակտերում ամբողջությամբ արտացոլված չեն. բացակայում են վենչուրային հիմնադրամի, ռիսկային կապիտալի և գործարար ներդրողի բնորոշումները: Թույլ է զարգացած նաև նորարար գործունեության ենթակառուցվածքը, որը կբավարարեր ընկերությունների, ինչպես նաև ներդրումային հիմնադրամների պահանջմունքները:

Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել պետական և միջազգային ծրագրերի համակարգի միջոցով ֆինանսավարկային կազմակերպությունների և հիմնադրամների կողմից ՓՄՁ-ներին տրամադրվող աջակցության համակողմանի ուսումնասիրությանը: Այս ծրագրերը նպատակաուղղված են ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանը, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցմանը, ՓՄՁ-ներին ֆինանսական միջոցների ապահովմանը, վերլուծական հետազոտությունների անցկացմանը, մասնագետների և պետական ծառայողների վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանը, նորարարական ձեռնարկատիրության զարգացմանը և այլն: Հայաստանի Հանրապետությունում միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող աջակցությունը հիմնականում զարգանում է հետևյալ ուղղություններով.

- ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության մակարդակի կառավարման որակի բարձրացում,
- գործող օրենսդրական դաշտի կատարելագործման աջակցություն՝ նոր տնտեսավարող սուբյեկտների կայացման և ընդլայնման իրավական արգելքների վերացման՝ ՀՀ-ում նպաստավոր ներդրումային միջավայրի ձևավորման նպատակով,
- Հայաստանի ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից ընկերությունների ֆինանսավորման արգելքների նվազեցում, մատուցվող ֆինանսական ծառայությունների պատշաճ մակարդակի ապահովում:

Պետք է արձանագրել, որ ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների գործունեության դրական փորձի հետ մեկտեղ՝ առկա են նաև մի շարք հիմնախնդիրներ, որոնց թվում կարելի է առանձնացնել արտասահմանյան մասնագետների կողմից հայաստանյան գործարար միջա-

վայրի յուրահատկությունների ու պայմանների թերըմբռնումը, ծրագրերի իրագործման մեջ տեղական մասնագետների ներգրավվածության համեմատաբար ցածր մակարդակը, որոշ դեպքերում տեղական իշխանության ներկայացուցիչների կողմից փոխըմբռնման բացակայությունը: Հավելելով, պետք է նշել, որ ՀՀ-ում առկա են որոշ բացթողումներ նաև միջազգային կառույցների գործունեության պետական կարգավորման ոլորտում:

Մյուս կողմից, փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման նպատակով միջազգային փորձի կիրառման համատեքստում, անհրաժեշտ է ապահովել ոլորտի զարգացման պետական և միջազգային ծրագրերի կոորդինացումը՝ հաշվի առնելով տնտեսության զարգացման գերակա ուղղությունները:

Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման առումով, կարևոր նշանակություն ունի նաև ՓՄՁ-ների արտահանման ներուժի ընդլայնումը: Ներկայումս փոքր և միջին ընկերությունների կողմից արտահանման գործընթացն իրականացվում է մեծապես սեփական ուժերով: Այս պարագայում միջազգային շուկայում ընկերությունների արտադրանքի ինքնուրույն առաջմղման գործընթացի արդյունավետությունը չի կարող լինել բարձր: Ըստ այդմ, ՓՄՁ-ների արտահանման ծրագրերի աջակցության որոշ դրական օրինակները, որոնք հայաստանյան շուկայում իրագործվում են մասնագիտացված մարքեթինգային-խորհրդատվական ծառայությունների և նման այլ կառույցների միջոցով, բացառություն պետք է համարել:

ՓՄՁ-ների արտահանման ներուժի զարգացման խոչընդոտների շարքում պետք է առանձնացնել նաև արտաքին շուկաներում հայրենական փոքր և միջին ընկերությունների ցածր մրցունակությունը, արտադրանքի առաջխաղացման մարքեթինգային աջակցության մեխանիզմների թույլ զարգացվածությունը կամ բացակայությունը, ՓՄՁ-ների մրցունակության բարձրացմանը և արտահանման ներուժի ընդլայնմանն ուղղված պետական քաղաքականության բացակայությունը, այս ոլորտում իրականացվող տարբեր ծրագրերի միջև կոորդինացման ոչ արդյունավետությունը, տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության ցածր մակարդակը:

Հաշվի առնելով վերոհիշյալ գործոնները, ինչպես նաև հիմնվելով փոքր և միջին ձեռնարկությունների արտահանման ներուժի և ներդրումային գրավչության բարձրացման խնդիրների լուծման ոլորտում առկա համաշխարհային փորձի վրա, անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան քայլեր՝ ոլորտի ենթակառուցվածքային համակարգում ՓՄՁ-ների գնահատման և նրանց համապատասխան վարկանիշի շնորհման մասնագիտացված հաստատության ստեղծման ուղղությամբ: Ընդ որում, արտահանման կողմնորոշում և սոցիալական նշանակության նախագծեր իրականացնող ընկերությունների համար անհրաժեշտ է սահմանել պարտադիր վարկանիշավորման հստակ մեխանիզմ: Այս համատեքստում, առավել կարևոր է պետության դերակատարումը՝ հաշվարկված վարկանիշերի ճանաչման և միջազգային ու տարածաշրջանային շուկաներում ծառայությունների մրցունակության ապահովման նպատակով ստեղծված վարկանիշային կազմակերպության կողմից ձևավորման առումով:

Վերադառնալով ՓՄՁ ներդրումային ռազմավարության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրներին՝ անհրաժեշտ է նաև անդրադառնալ այդ գործընթացներում ֆինանսական ու առևտրային կազմակերպությունների և պետության ակտիվ մասնակցության ապահովմանը: Այս համատեքստում, անհրաժեշտ են հետևյալ քայլերը՝

- միջազգային լավագույն փորձի կիրառմամբ նորմատիվ-իրավական դաշտի բարելավումը և սեղմ ժամկետներում հեռանկարային նախագծերի վերլուծման և գնահատման ունակ վենչուրային հիմնադրամների ու մասնավոր ներդրողների ընկերակցությունների զարգացումը,
- ձեռնարկատերերի վերապատրաստման և որակավորման բարձրացման համակարգի ներդրումը,
- փոքր ու միջին ձեռնարկատիրության ենթակառուցվածքի և ներդրումային ծրագրերի աջակցության առաջատար ինստիտուտների ձևավորումը և զարգացումը՝ ներառյալ հիմնադրման փուլում ընկերությունների ֆինանսավորման մեխանիզմները, գրավա-երաշխիքային մեխանիզմները, ֆրանչայզինգային շղթաները, արտահանման կողմնորոշում ունեցող ձեռնարկությունների վարկավորումը, նրանց կողմից գիտահետազոտական

աշխատանքների իրականացումը, ընկերությունների նորարարական և արտահանման գործընթացներին առնչվող ընթացիկ արտադրական ծախսերի փոխհատուցումը,

- գործարքի հնարավոր մասնակիցների միջև վստահության ամրապնդումը, այդ թվում՝ ՓՄՁ վարկանիշավորման համակարգի ներդրման միջոցով:

Ընդ որում, այս ոլորտում հիմնական շուկայական մեխանիզմ պետք է դիտարկվի, մի կողմից, արտահանման վարկավորումը, որը բանկերի և երաշխիքային կազմակերպությունների միջոցով կտրամադրվի պետության կողմից արտոնյալ վարկերի, միջազգային մրցույթներում մասնակցության երաշխիքների ճանապարհով՝ կոնկրետ արտահանման պայմանագրերի հիման վրա: Այս ամենի հետ մեկտեղ, աջակցության գործիքների համակարգը պետք է ներառի նաև առևտրային ու քաղաքական ռիսկերից արտահանման վարկերի պարտադիր ապահովագրությունը, ինչպես նաև արտաքին շուկաներ ներթափանցելու հետ կապված արտահանման գործառնությունների ապահովագրումը:

Մյուս կողմից, ՓՄ-երի աջակցության նպատակով շուկայական մեխանիզմներից՝ հարկային խթաններն ու հարկային արտոնությունը բերում են վերջիններիս էքստենսիվ և ինտենսիվ զարգացումներին, որոնք ապահովում են պետական բյուջեում եկամուտներ, ճիշտ է՝ նվազող , բայց՝ կայուն, և կարևորը՝ չեն զսպում բարենպաստ բիզնես միջավայրի ձևավորմանը, հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների համար:

Այսպիսով՝ ամփոփելով սույն հոդվածի շրջանակներում առաջ քաշված դրույթներն ու առաջարկությունները, կարող ենք եզրակացնել, որ ՓՄՁ-ների գնահատման և նրանց համապատասխան վարկանիշավորման համար կարևոր դերակատարում ունեն ոչ միայն հարկային խթաններն ու հարկային արտոնությունները, այլ նաև՝ արտահանման վարկավորումը, ձեռնարկատիրության ենթակառուցվածքի և ներդրումային ծրագրերի աջակցության առաջատար ինստիտուտների ձևավորումը: Դրանք ապագայում կընձեռեն նոր հնարավորություններ ՀՀ-ում բարենպաստ գործարար և ներդրումային միջավայր ձևավորելու հարցում, հատկապես՝ փոքր և միջին հարկ վճարողների համար:

Тигран Арутюнян

О ВОПРОСАХ НАЛОГОВЫХ И ЭКОНОМИЧЕСКИХ СТИМУЛОВ МАЛЫХ И СРЕДНИХ ПРЕДПРИЯТИЙ В РА

Аннотация

На основе обобщения выдвинутых в данной статье положений и предложений сделан вывод о том, что при оценке малых и средних предприятий и их соответствующем ранжировании важную роль играют не только налоговые стимулы и налоговые льготы, но и кредитование экспорта, формирование ведущих институтов по развитию инфраструктуры и инвестиционных программ предпринимательства.

Tigran Harutyunyan

ON TAX AND ECONOMIC INCENTIVES PROVIDED TO THE SMALL AND MEDIUM-SIZED ENTERPRISES IN THE REPUBLIC OF ARMENIA

Abstract

Hence, by taking into account the propositions and recommendations proposed in the article, the author concludes, that along with tax incentives and exempts, export credits, establishment of leading institutions that support the development of entrepreneurial infrastructure, and investment projects play a crucial role in small and medium sized businesses valuation and ranking.

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Հարկման արդյունավետության մակարդակի վերաբերյալ հետազոտող տնտեսագետների շրջանում միասնական մոտեցում գոյության չունի և, դեռ ավելին, այն տարբեր դիրքերից է մեկնաբանվում տարբեր հեղինակների կողմից: Սակայն բոլորը կարևորում են հարկման արդյունավետության բարձրացումը, և տարակարծությունները հիմնականում կապված են դրա իրացման միջոցների և ուղղությունների հետ կապված հարցերի շուրջ: Դա բնական է, քանի որ հարկման արդյունավետության մակարդակը մեծապես պայմանավորված է. մի կողմից՝ ֆինանսական միջոցների նկատմամբ պետության ունեցած պահանջարկով և մյուս կողմից՝ հարկ վճարողների վճարունակությամբ: Հետևաբար, «հարկման արդյունավետություն» հասկացությունը իր մեջ որոշակի հակասություն է պարունակում՝ այնքանով, որ որքան մեծ լինի հարկ վճարողների հարկային բեռը, այնքան ամուր կլինի պետության ֆինանսական վիճակը, ու քիչ կլինեն բյուջեի հաշվեկշռման պրոբլեմները և ընդհակառակը: Սակայն շուկայական տնտեսություն ունեցող երկրների հարկային քաղաքականության իրականացման պրակտիկան հիմնավորել է, որ հարկային բեռի մեծացումը՝ նոր հարկատեսակների սահմանման ու ներդրման, հարկի դրույքաչափի բարձրացման և հարկային արտոնությունների կրճատման միջոցով սկզբնական շրջանում ապահովում է հարկային եկամուտների որոշակի բարձր ցուցանիշներ:

Այսպիսով՝ որքան կարևոր, նույնքան էլ բարդ է «հարկային բեռի» սահմանաչափի ճիշտ որոշումը, քանի որ դրա միջոցով է տրվում հետևյալ հարցերի պատասխանները.

- արդյունավե՞տ է արդյոք պետության հարկային համակարգը,
- որքանո՞վ է այն բավարարում պետության ֆինանսական պահանջները,
- նպաստու՞մ է արդյոք հարկ վճարողների տնտեսական ակտիվությանը,
- տնտեսվարման ի՞նչ ուղիներ են առաջարկվում ձեռնարկատիրական գործունեության ընդլայնման նպատակով:

Վերոհիշյալ հիմնահարցերի լուծման տարբեր մոտեցումներով է պայմանավորված «հարկային բեռի» սահմանաչափի շուրջ գոյություն ունեցող տարակարծությունները:

Այսպիսով՝ հարկային բեռի բաշխվածությանը պետք է լինի հավասարաչափ, որի դեպքում յուրաքանչյուրը կվճարի այդ բեռի իր «արդարացի» բաժինը, որպեսզի նվազագույնի հասցվի հարկման արդարության և համընդհանրության սկզբունքների խախտումները:

Բացի պետության հանդեպ ունեցած հարկային պարտավորությունների կատարումից՝ հարկատուները լրացուցիչ միջոցներ և ժամանակ են ծախսում նաև հարկային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ հաշվարկների, հաշվետվությունների ու հայտարարագրերի լրացման, համակարգչային ծրագրերի ներդրման, խորհրդատվական ու փաստաբանական ծառայությունների ստացման և այլնի համար, որոնք բացասաբար են ազդում հարկատուների վճարունակության և պետական բյուջեի մուտքերի մակարդակի վրա: Այդ առումով անհրաժեշտ է կարևորել առանձին երկրների առաջավոր փորձի կիրառումը, երբ պետությունները իրենք են գնահատում և հարկատուներին իրազեկում հարկային հաշվետվությունների փոփոխությունների արդյունքում ունենալիք լրացուցիչ ծախսերի մասին: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում եկամտահարկի գանձման համակարգում ցանկացած լուրջ փոփոխություններ իրականացնելու ժամանակ պարտադիր հաշվարկվում է ժամանակի այն գնահատականը, որը պահանջվում է յուրաքանչյուր հարկատուից նոր կանոններով հարկային հայտարարագիր (դեկլարացիա) լրացնելու համար: Մյուս կողմից՝ պետությունն իր հերթին հարկային եկամուտների հավաքագրումն իրականացնելու ընթացքում միջոցներ է ծախսում հարկային մարմինների

պահպանման և հարկերի գանձման նկատմամբ վերահսկողության իրականացման, դատական համակարգի միջոցով անբարեխիղճ հարկատուներին պատասխանատվության ենթարկելու և այլնի համար, որոնց չարդարացված աճը սահմանափակում է ֆինանսական միջոցների նկատմամբ պետության ունեցած պահանջարկը: Նշված երկու դեպքերում էլ կատարված լրացուցիչ ծախսերը հասարակության համար ֆինանսական միջոցների կորուստներ են, քանի դեռ հավաքագրված միջոցների օգտագործումը չի ապահովում գոնե համարժեք արդյունավետություն: Բայց, նույնիսկ վերջին պայմանի ապահովման դեպքում նախընտրելի է, որ պետությունը նպաստի նվազագույնի հասցնելու այս ծախսերը, քանի որ այն անուղղակիորեն բխում է պետության շահերից և հարկման արդյունավետության բարձրացման պահանջներից: Սա այն դեպքն է, երբ պետական շահը անտագոնիստական հակասության մեջ է մտնում ծանր «հարկային բեռի» հետ, և վերջինս «խարխլում է» պետականության հիմքերը:

Ուստի, առաջին հերթին, պետությունը պետք է շահագրգռված լինի յուրաքանչյուր առանձին վերցված հարկատուի հարկային բեռի կարգավորման հարցում, որի ուղիներ կարող են հանդիսանալ հարկային լծակների ու գործիքների միջոցով հարկային բեռի տեղափոխումը ճյուղից ճյուղ, չունևորից ունևոր, արտադրությունից առևտուր, վնասաբեր, բայց անհրաժեշտ ձեռնարկությունից գերշահույթ ապահովող ձեռնարկություն և այլն, ինչպես նաև պետության կողմից հարկատուներին մատուցվող ծառայությունների բարելավումը՝ կապված հարկային օրենսդրության պարզաբանման ու հստակեցման, հարկատուներին աջակցելու և հարկային մարմինների նկատմամբ հարկատուների վստահությունը ամրապնդելու, հաշվետվությունների ներկայացման գործընթացը թեթևացնելու և այլնի հետ: Բացի վերոհիշյալներից՝ անհրաժեշտ է կարևորել նաև հարկ վճարողների ու հարկման օբյեկտների շրջանակների ընդլայնումը՝ ապահովելով հարկման համընդհանրության ու արդարության սկզբունքների կիրառումը, այսինքն՝ հարկման սկզբունքները պետք է փոխհամաձայնեցված գործեն ու միմյանց լրացնեն, որպեսզի հարկերին բնորոշ գործառույթներին «լիաթոք շնչելու» հնարավորություն տրվի:

Հարկման արդյունավետության գնահատականի հարցը ևս մինչև օրս շարունակում է վիճահարույց մնալ, այսինքն՝ հստակ չէ այն հարցի պատասխանը, թե հարկատուի եկամտի որ մասի գանձումն է արդյունավետ. 30,40 թե 50 տոկոսը[1]: Այդ իսկ պատճառով հարկման արդյունավետության վերաբերյալ քննարկումները, շատ հաճախ, կառուցվում են միջազգային համեմատությունների վրա՝ հիմք ընդունելով մակրոտնտեսական մակարդակում պլանային կամ փաստացի վճարված հարկերի ընդհանուր գումարի և համախառն ներքին արդյունքի, իսկ միկրոմակարդակում՝ պլանային կամ փաստացի վճարված հարկերի ու համախառն եկամտի տոկոսային հարաբերակցության ցուցանիշները:

Այդ ցուցանիշները նշված մոտեցմամբ հաշվարկելու դեպքերում հարկման իրական վիճակը արտացոլել չեն կարող, քանի որ հաշվարկին մասնակից չի դարձվում հարկային մուտքերի ռեզերվ հանդիսացող հարկային ապառքների ներուժը, որի հաշվառման և միջազգային համեմատությունների պարագայում պատկերը էապես կարող է փոխվել: Այդ առումով միջազգային համեմատությունների դաշտ պետք է տեղափոխել նաև փաստացի գանձված հարկերի ու հարկային ողջ պոտենցիալի (փաստացի գանձված հարկեր/փաստացի գանձված հարկեր+հարկային ապառքներ) տոկոսային հարաբերակցության ցուցանիշները, որոնք պատկերացում են տալիս անբարեխիղճ հարկատուների վարքի, կոռուպցիայի չափերի, հարկային համակարգի արդյունավետության և այլնի մասին: Մինչդեռ միայն փաստացի գանձված հարկերի հաշվառմամբ որոշված ցուցանիշները պատկերացում տալիս են միայն օրինապահ հարկատուների և հարկային վարչարարության արդյունավետության մասին:

Հարկման արդյունավետությունը բնութագրող ընդհանրացնող և միջազգային համեմատություններում կիրառվող ցուցանիշ է համարվում նաև բնակչության մեկ շնչին ընկնող

[1] ՀՀ հարկային և մաքսային քաղաքականության վերլուծություն, «Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանություն» ՀԿ, Երևան, 2010, էջ 17-24:

համախառն ներքին արդյունքի ցուցանիշը[1]: Որպես կանոն, որքան բարձր է այս ցուցանիշը, այնքան մեծ է նաև հարկային եկամուտների և համախառն ներքին արդյունքի տոկոսային հարաբերակցության ցուցանիշը: Դա վկայությունն է նաև այն փաստի, որ հարկման արդյունավետության մակարդակը մեծապես պայմանավորված է երկրի զարգացածության ու հարկատուների վճարունակության աստիճանով:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գնահատականների համաձայն՝ անցումային տնտեսությամբ երկրներում հարկատուների եկամուտների 2.1 - 6.8 տոկոսը (ինչը կարելի է համարել կաշառային հարկի «դրույքաչափ»)[2] տարբեր երկրներում օգտագործվում է զանազան պաշտոնյաներին կաշառելու («կաշառային հարկ» վճարելու) համար: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գնահատականներով թե՛ կաշառային հարկի դրույքաչափը, և թե՛ դրա վճարման հաճախականությունը հետազոտված բոլոր երկրներում առավել բարձր է փոքր և միջին ձեռնարկությունների մոտ, իսկ խոշոր ձեռնարկություններում այդ ցուցանիշները համեմատաբար փոքր են: Պակաս կարևոր չէ նաև այն ժամանակը, որը տնտեսվարող սուբյեկտների ղեկավար անձինք կորցնում են պետական պաշտոնյաների հետ տարբեր շփումներում: Անցումային տնտեսությամբ երկրների համար այդ ցուցանիշը, այսինքն՝ ժամանակային հարկի (որը բնութագրում է հարկատուի ղեկավար անձանց ընդհանուր աշխատաժամանակում պետական պաշտոնյաներին հատկացվող աշխատաժամանակի տեսակարար կշիռը) գնահատականները ևս հաստատում են հարկման ոչ ավանդական եղանակներին պատշաճ ուշադրություն դարձնելու անհրաժեշտության մասին:

Հարկ է նշել, որ հարկման արդյունավետությունը բնութագրող ընդհանրացող և միջազգային համեմատություններում կիրառվող ցուցանիշների հաշվարկումը անհրաժեշտ է, բայց բավարար չէ հարկման արդյունավետության մակարդակը ըստ էության գնահատելու համար, քանի որ տարբեր երկրներում կիրառվող հարկման մեխանիզմները միմյանցից տարբերվում են նույնիսկ ըստ հարկատեսակների՝ կապված տվյալ երկրում կիրառվող հարկային արտոնությունների տեսակների և դրանց ընդգրկվածության աստիճանի, հարկման բազայի որոշման ու հարկման օբյեկտի ընդգրկման շրջանակների, հարկադրույքների տարբերակման ու հարկի մեծությունը կանխորոշող այլ գործոնների հետ: Այդ առումով, անհրաժեշտ է կարևորել ու հաշվառել առանձին հարկատեսակների հաշվարկման առանձնահատկությունները, որոնք նվազեցնում կամ մեծացնում են հարկման արդյունավետությունը ըստ առանձին հարկատեսակների:

ՀՀ հարկային օրենսդրության ու դրանում կիրառվող մեխանիզմների մանրամասնեցված ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ հարկման արդյունավետությունը բնութագրող «մասնակի ցուցանիշներ» կարող են լինել.

- Արտահանման և ՀՆԱ-ի տոկոսային հարաբերակցության ցուցանիշը՝ կապված արտահանումը հանրապետությունում ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկելու, ինչպես նաև արտահանվող ապրանքների (ադամանդ, կաուչուկ, պղնձի խտանյութ և այլն) գների հետ, որն ազդում է մի կողմից դրանք արտահանող տնտեսվարող սուբյեկտներից գանձվող ավելացված արժեքի հարկի ու շահութահարկի և մյուս կողմից հանրապետությունում ստեղծվող համախառն ներքին արդյունքի մեծության վրա:
- Մարդասիրական օգնության ձևով ներմուծված ապրանքների արժեքի և ՀՆԱ-ի տոկոսային հարաբերակցության ցուցանիշը՝ կապված մարդասիրական օգնության ձևով ներմուծված ապրանքները ներմուծման հարկերից (ԱԱՀ՝ 20%, մաքսատուրք՝ 10%) ազատելու հետ:
- Ֆինանսական կազմակերպությունների կողմից ստեղծված ՀՆԱ-ի տոկոսային հարաբերակցության ցուցանիշը՝ կապված այդ կազմակերպությունների կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների և մատուցվող ծառայությունների գերակշիռ մասի հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելու միջոցով հարկից ազատելու հետ:

---

[1] Егорова Е., Петров Ю., Сравнительный анализ эффективной ставки налогов в России и зарубежных странах, Налоговый вестник,1995, стр. 3-9.

[2] ՀՀ ԿԱ ՀՊԾ վարչարարական կարողությունների գնահատմանե ծրագիր, օգոստոս-նոյեմբեր, 2012թ, էջ15-17:

- Շահութահարկի և (կամ) շրջանառության հարկի եկամուտ չհամարվող տարրերի, համախառն եկամտից կատարվող բոլոր նվազեցումների գումարային արժեքի և ՀՆԱ-ի տոկոսային հարաբերակցության ցուցանիշը:

Ընդհանուր առմամբ, վերոհիշյալ մոտեցումներով հարկման արդյունավետության գնահատման ցուցանիշների հաշվարկներ, վերլուծություններ և ուսումնասիրություններ կարելի է կատարել բոլոր հարկատեսակների մեծությունները որոշող այն արժեքային ծավալների մասով, որոնց համար սահմանված են հարկային արտոնություններ ուղղակի կամ անուղղակի ձևերով: Սակայն, նկատի ունենալով այդպիսի գործարքների, գործառնությունների ու մնացած տարրերի արժեքային ծավալների մասով պաշտոնական վիճակագրական տվյալների բացակայությունը և ոչ հրապարակայնությունը՝ կբավարարվենք այն ցուցանիշների հաշվարկմամբ ու դինամիկայի ուսումնասիրությամբ, որոնց գծով առկա են հրապարակված վիճակագրական տվյալներ՝ մանավանդ, որ հարկման արդյունավետության գնահատման նշված մոտեցումները նորամուծություն են հարկային տնտեսագիտությունում:

Բացի վերոհիշյալներից՝ հարկման արդյունավետության գնահատման «լրացուցիչ մասնակի ցուցանիշներ» կարող են հանդիսանալ կազմակերպությունների ընդհանուր թվաբանական վնասով աշխատող և խոշոր ու միջին առևտրային կազմակերպությունների թվի, ինչպես նաև դրանց ժամկետանց կրեդիտորական ու դեբիտորական պարտքերի փոփոխությունները:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հարկային պարտավորությունների և հարկման արդյունավետության փոխազդեցությունը հանդես է գալիս որպես հարկային եկամուտների նկատմամբ պետության ունեցած պահանջարկի այնպիսի ձևեր, մեթոդներ ու մեխանիզմներ, որոնք նվազագույնի են հասցնում պետության ու հարկատուների ծախսերի կորուստները՝ առանց վերջիններիս վարքագծի ձևախեղման:

Тигран Арутюнян

ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ВЗАИМОДЕЙСТВИЯ НАЛОГОВЫХ ОБЯЗАТЕЛЬСТВ И ЭФФЕКТИВНОСТИ НАЛОГООБЛОЖЕНИЯ

Аннотация

В статье показано, что взаимодействие налоговых обязательств и эффективности налогообложения выступает в качестве таких форм, методов и механизмов обеспечения имеющейся потребности государства в налоговых доходах, которые доводят до минимума потери расходов государства и налогоплательщиков без деформации поведения последних.

Tigran Harutyunyan

THEORETICAL ISSUES OF INTERACTION BETWEEN TAX LIABILITIES AND TAX EFFICIENCY

Abstract

By summarizing the above-states arguments, the interaction between tax liabilities and tax efficiency could be considered a form, method and mechanism of demand by the Government on tax revenues that minimize the losses of the Government and tax-payers not affecting the behavior of the latter ones.

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՊՃՀ ասիստենտ, պ.գ.թ.

ԱՍԻՄԵՏՐԻԿ ՋՈՒԳԱՀԵՌՆԵՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՄ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՏՈՒ ՄԻՋԵՎ

На развилине путей-дорог лежит Вещий Камень, а на нём надпись:
“Направо пойдёшь – коня потеряешь, налево пойдёшь – себя потеряешь,
прямо пойдёшь – и себя и коня потеряешь”...

Բնաբանի ընտրությունը թելադրված է Հայաստանի տնտեսաաշխարհաքաղաքական վերջին զարգացումներով: Իսկ թնջուկաստեղծ խմորումների մեկնակետը կարելի է համարել 2010թ. մայիսը, երբ Հայաստանը բանակցություններ սկսեց Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրի շուրջ: Ավելի ուշ, 2011թ. ապրիլին համատեղ հռչակագիր է ընդունվում ՀՀ կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև, որտեղ մասնավորապես շեշտվում է Ասոցացման համաձայնագրի շրջանակներում երկկողմ՝ խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի հիմնելու շուրջ բանակցությունների մեկնարկի մասին: Սրան զուգընթաց, ինտեգրացիոն գործընթացի աշխուժացում է նկատվում նաև մեկ այլ տնտեսաքաղաքական հարթությունում. 2010թ. հունվարին հայտարարվում է Ռուսաստան-Բելառուս-Ղազախստան Մաքսային միության ստեղծման մասին, որը հավակնում էր աստիճանաբար ընդլայնվել նախկին խորհրդային տնտեսական տիրույթում և ի վերջո ձևավորել համաշխարհային տնտեսությունում նոր տնտեսական բևեռ՝ Եվրասիական միասնական տնտեսական տարածք (որն էլ ի դեպ, շատ արագ ձևավորվեց՝ 2012թ. հունվարին), էլ ավելի հեռահար՝ Եվրասիական տնտեսական միության ստեղծման նպատակադրմամբ, որի պոտենցիալ մասնակիցներից մեկն էլ Հայաստանն էր:

Հենց սկզբից ակնհայտ էր, որ Հայաստանի համար այս երկու ինտեգրացիոն ուղիները չէին կարող զուգահեռ ընթանալ: Չնայած դրան, բանակցություններ, թվում է՝ ընթանում էին երկու ուղղությամբ էլ, առավել ինտենսիվ՝ ԵՄ հետ Ասոցացման համաձայնագրի շուրջ, որն էլ ենթադրվում էր նախաստորագրել 2013թ. նոյեմբերին՝ Վիլնյուսում կայանալիք Արևելյան գործընկերության գագաթնաժողովում: Միաժամանակ, Մաքսային միությանն անդամակցելու հարցում որոշակի երկչոտություն կար՝ առաջին հերթին պատճառաբանված այդ միության հետ ընդհանուր սահմանի բացակայությամբ[1]: Իրավիճակի խնդրահարույց հանգուցալուծումը տրվեց 2013թ. սեպտեմբերի 3-ին, երբ Հայաստանի և Ռուսաստանի նախագահների հանդիպման ժամանակ, Ս.Սարգսյանը հայտարարեց հենց Մաքսային միությանը միանալու՝ Հայաստանի պատրաստակամության մասին: Եվ որքան էլ, որ նման որոշումը հիմնավորված լիներ տնտեսական ու քաղաքական գործոններով, միևնույն է, մարդկային պահվածքի օրինաչափությամբ, լավագույնը պիտի համարվեր հենց այն տարբերակը, որից հրաժարվեց Հայաստանը: Եվ, չնայած երկու ուղղությամբ էլ համագործակցության խորացումը ենթադրվում էր հատկապես արտաքին տնտեսական ոլորտում[2], այնուամենայնիվ, կողմնորոշման համար առավել կարևոր դրդապատճառները նշանակալից մասով ոչ տնտեսական էին: Փորձենք վերլուծել կատարվածը՝ երկրի տնտեսական, և մասնավորապես՝ արտաքին առևտրային գերակայությունների տեսանկյունից:

---

[1] Այդ հանգամանքն ուղղակիորեն շեշտել են ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանը՝ ռուսական «Կոմերսանտին» տված հարցազրույցում[1] (2012թ. ապրիլ, http://kommersant.ru), ՀՀ փոխարտգործնախարար Շավարշ Քոչարյանը Արմնյուզին տված հարցազրույցում (2013թ. օգոստոս, www.armnewstv.am/hy1361566104/1377025966), և այլ պաշտոնյաներ: Անուղղակիորեն այդ տեսակետը պաշտպանել է նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրման և մակրոտնտեսական հիմնական ուղղությունների գծով նախարար Տատյանա Վալովայան՝ «Միր» հեռուստաընկերության «Ուղիղ խոսք» հաղորդաշարի ընթացքում, շեշտելով, որ Տաջիկստանի անդամակցության հնարավորությունը Մաքսային միությանը, կարելի է դիտարկել միայն Ղրղզստանի անդամակցությունից հետո, երբ կձևավորվի ընդհանուր սահման Մաքսային միության և այդ երկրի միջև[1]: (http://www.mirtv.ru/ programms/4390776/episode/5882167):

[2] Նկատենք, որ բազմիցս շեշտվել է այն հանգամանքը, որ Եվրասիական տնտեսական միությունը բացառապես տնտեսական կառույց է և վերջնարդյունքում քաղաքական նպատակներ չի հետապնդում: http://www.panorama.am/am/economy/2013/05/22/valovaya-moscow/

ԵՄ հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) համաձայնագիրն առաջին հերթին նախատեսում էր 100%-ով մաքսային ազատականացում ԵՄ երկրների և Հայաստանի միջև արտաքին առևտրում, ինչպես նաև՝ ոչ տարիֆային սահմանափակումների զգալի մեղմացում (մասնավորապես ծառայությունների ոլորտում գործարքների ժամանակ), այդ թվում՝ մոտ 95%-ով ազատականացում հեռահաղորդակցության ոլորտում, սանիտարական և ֆիտոսանիտարական միջոցառումների, արտաքին առևտրի տեխնիկական խոչընդոտների կարգավորում, հայկական ապրանքների՝ երրորդ երկրների շուկաներում իրացմանն աջակցում և այլն[1]: Ըստ ECORYS հետազոտական և խորհրդատվական ընկերության վերլուծությունների, համաձայնագրի կնքումը կհանգեցնի կարճաժամկետում ՀՆԱ 1.1%, իսկ երկարաժամկետում՝ 2.3% աճի, բացարձակ ցուցանիշով Հայաստանում ազգային եկամուտը կաճի 146 մլն եվրոյով (իսկ ԵՄ ազգային եկամուտը՝ 76 մլն եվրոյով): Ինչ վերաբերում է արտաքին առևտրին, ապա այստեղ նույնպես Հայաստանի համար դրական արդյունքները երաշխավորվում են. երկարաժամկետում արտահանումը կաճի 15.2 %-ով, իսկ ներմուծումը՝ 8.2%-ով, ինչը հնարավորություն կտա զգալիորեն կրճատել առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը: Իսկ արտահանման նմանատիպ աճը հիմնականում ապահովելու է տեքստիլ արդյունաբերությունը (արտահանման հեռանկարային 363% աճով), թեև արտահանման նշանակալի հեռանկարային աճ են խոստանում նաև «այլ մեքենաներ և սարքավորումներ» (69.3%), «հանգստի և ժամանցի ծառայություններ» (36%), «էլէկտրոնիկա և համակարգիչներ» (21%) և այլ ապրանքային խմբերը: Վերջնաարդյունքում, երկրում նոր աշխատատեղեր են բացվելու, բարձրանալու է աշխատավարձը (2.6%-ով), բնակչության գնողունակությունը (2.5%-ով), կրճատվելու է աղքատությունը (1.4%-ով): Խիստ տպավորիչ հեռանկար խոստացող այս վերլուծության ստվերում թողած հակասություններին դեռ կանդրադառնանք, իսկ մինչ այդ, խոսենք նաև Մաքսային միությանն անդամակցելու՝ ոչ պակաս տպավորիչ տնտեսական հետևանքների մասին:

Մաքսային միության ստեղծման էությունը կայանում է հետևյալում. անդամ երկրները իրականացնում են միևնույն արտաքին առևտրային քաղաքականությունը (ներառյալ՝ մաքսադրույքների, լրահատկացումների, սանիտարական ու ֆիտոսանիտարական, տեխնիկական ստանդարտների սահմանման հարցերում ընդհանուր քաղաքականության իրականացումը), բացի այդ անդամ-երկրներից ներկրված և այդ երկրներ արտահանվող ապրանքների մաքսադրույքները զրոյանում են: Ըստ Եվրասիական զարգացման բանկի Ինտեգրացիոն հետազոտությունների կենտրոնի հաշվարկների, որպես ինտեգրացիոն գործընկեր Մաքսային միության ընտրության պարագայում, Հայաստանը կարճաժամկետում հատկապես երկրի տրանսպորտային և էներգետիկ խնդիրների լուծման արդյունքում կունենա ՀՆԱ 4%-անոց աճի էֆեկտ[2]: Բացի այդ Հայաստանը հնարավորություն կունենա բարձր ավելացված արժեքով ապրանքներ արտահանել Եվրասիական տնտեսական տարածքի «պաշտպանված և տարողունակ» շուկա, ինչի արդյունքում կբարելավի առևտրային բացասական հաշվեկշռի խնդիրը, իսկ արտահանման մաքսադրույքների զրոյացման արդյունքում հնարավոր կլինի գազի սակագինը երկրում իջեցնել 30%-ով (ներկա 270 դոլարից մինչև 180 դոլար): Դրական տեղաշարժեր են ակնկալվում նաև ակնագործության ոլորտում՝ պայմանավորված չմշակված ադամանդի արտահանման մաքսադրույքի հնարավոր նվազեցմամբ:

Թե նշված հետազոտություններից որն է առավել համապատասխանում իրականությանը, դեռ խնդրի միայն մի կողմն է, քանի որ դրանցում առկա են բազմաթիվ հակասական դրույթներ, որոնք ուղղակի իմաստով կարող են դառնալ Հայաստանի տնտեսության հետագա առաջընթացին խոչընդոտող գործոն: Այսպես, օրինակ, ECORYS-ի հետազոտության համաձայն, ԵՄ-ն մեզ առաջարկում է (կամ հնարավորություն է տալիս) թեթև արդյունաբերությունից զատ, զարգացնել ծառայությունների և հանքաարդյունաբերության ոլորտները՝ համապատասխան արտահանման ուղղվածությամբ և փոխարենը, կրճատել վերամշակող արդյունաբերության ճյուղերի՝ մասնավորապես մետաղների վերամշակման, սննդաարդյունաբերության, քիմիական արդյունաբերության հնարավորությունները, համապատասխան ուղղություններով արտահանման

[1] Trade Sustainability Impact Assessment in support of negotiations of a DCFTA between the EU and the Republic of Armenia. (Draft Final Report Executive Summary). ECORYS. Rotterdam,30 May 2013, p 3. www.tsia.ecorys.com/armenia.

[2] Աղբյուրը՝ http://www.eabr.org/r/press_center/press_releases/index.php?id_4=31656:

կրճատման և ԵՄ-ից ներմուծման մեծացման էֆեկտով: Այս առնչությամբ բոլոր տվյալները բերված են աղյուսակ 1-ում, որտեղ ակնհայտ արտացոլված է հնարավոր ձեռքբերումների և կորուստների համադրման անհամաչափ բնույթը: Օրինակ, առաջին տպավորությամբ տեքստիլի և հագուստեղենի արտահանման հսկայական թվացող 363% աճը չի նշանակում ավելին, քան 15 մլն դոլարի բացարձակ ցուցանիշ, որը արտահանման հեռանկարային 15.2% աճի դեպքում կապահովի դեպի ԵՄ արտահանման կառուցվածքում ընդամենը 2.5% տեսակարար կշիռ՝ ներկա 0.9%-ի փոխարեն: Գրեթե նույնքան կկազմի առաջնային մետաղների արտահանման ընդամենը 5.8% աճը, բայց վերջնաարդյունքում ապահովելով ավելի քան 300 մլն դոլարի բացարձակ ցուցանիշ, կամ ԵՄ արտահանման մոտ 65%-ը՝ ներկա 58.1%-ի փոխարեն[1]: Իսկ դա էլ իր հերթին նշանակում է, որ Հայաստան-ԵՄ արտահանումը իրադարձությունների «բարենպաստ» զարգացման պարագայում 90%-ոց հումքային բաղադրիչ էր ունենալու: Մյուս կողմից, ԽՀԱԱԳ-ն մեզ «հնարավորություն կընձեռեր» մոտ 15.8%-ով ավելացնել վերամշակված մետաղների և ավելի քան 50%-ով սննդամթերքի ներմուծումը: ԵՄ շրջանակներում ԽՀԱԱԳ համաձայնագրին առնչվող հետագա մեկնաբանությունները, թերևս, ավելորդ կլինեին, եթե չլիներ հաճախ շահարկվող ևս մի կարևոր հանգամանք. այն, որ համաձայնագիրը Հայաստանին հնարավորություն կտար ինչ-որ կերպ ազդել Թուրքիայի վրա և լուծել տնտեսական շրջափակման հարցը: Այս ակնկալիքները կապվում էին ԵՄ-Թուրքիա Մաքսային միության գոյության հետ, որը, ինչպես հայտնի է, անդամ-երկրներին պարտադրում է վարել միևնույն արտաքին առևտրային քաղաքականությունը: Սակայն ճիշտ այնպես, ինչպես Առևտրի համաշխարհային կազմակերպությանն ՀՀ անդամակցելու պարագայում էր, մեր հարևան երկիրը նախապես էր հոգացել այդ պարտադրանքի բացառման մասին: Իսկ ECORYS-ի վերլուծությունը նույնիսկ առանձին կետով հատուկ նշել է, որ Հայաստանի հետ ԵՄ արտաքին առևտրի ազատականացումը աննշան ազդեցություն է ունենալ երրորդ երկրների, մասնավորապես Թուրքիայի հետ, տնտեսական հարաբերությունների վրա[2]:

Աղյուսակ 1

ԽՀԱԱԳ ազդեցությունը ՀՀ տնտեսության ճյուղերի թողարկման և արտահանման ծավալների վրա[3]

	Ավելացված արժեքի փոփոխություն (տոկոսներով)	Թողարկման փոփոխություն (տոկոսներով)	Արտահանման փոփոխություն (տոկոսներով)	Ներմուծման փոփոխություն (տոկոսներով)
Հագուստեղեն և տեքստիլ	207.13	289.85	362.93	4.77
Այլ մեքենաներ և սարքավորումներ	49.84	62.63	69.37	0.72
Հանգստի և ժամանցի ծառայություններ	15.73	23.24	36.12	0.03
Էլեկտրոնիկա և համակարգիչներ	8.28	9.46	20.84	5.93
Բիզնես և SS	7.68	11.13	18.86	1.05
Օդային տրանսպորտ	7.36	8.17	23.55	5.66
Այլ տրանսպորտային սարքավորումներ	4.34	5.27	17.51	7.20
Առաջնային մետաղներ	2.85	3.57	5.77	6.54
Շարժիչային մեքենաներ	-22.69	-27.37	-7.90	4.40
Բուսական յուղեր և ճարպեր	-10.74	-10.83	4.46	5.82
Կենդանի կենդանիներ և մսամթերք	-6.50	-6.53	0.43	35.10
Կերամիկա, ցեմենտ և այլն	-5.99	-5.77	1.47	9.07
Այլ արտադրանք	-5.87	-6.59	-0.61	14.19
Փայտ, թուղթ, հրապարակված նյութեր	-5.54	-5.42	0.69	8.1
Վերամշակված մետաղներ	-3.82	-3.50	6.99	15.82
Այլ վերամշակված սնունդ	-3.23	-4.08	3.57	24.80

[1] Հաշվարկները կատարվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և EUROSTAT ((Comext, Statistical regime 4); World excluding Intra-EU trade and European Union: 27 members) տվյալների համադրման ճանապարհով:

[2] Trade Sustainability Impact Assessment in support of negotiations of a DCFTA between the EU and the Republic of Armenia. (Draft Final Report Executive Summary). ECORYS. Rotterdam,30 May 2013, p. 4.

[3] Trade Sustainability Impact Assessment in support of negotiations of a DCFTA between the EU and the Republic of Armenia.(Draft Interim Technical Report), p. 96.

Սակայն, եթե ԽՀԱԱԳ համաձայնագիրը Հայաստանի տնտեսության համար վտանգավոր է դիտվում արտաքին առևտրի ապրանքային դիվերսիֆիկացիայի տեսանկյունից, ապա Մաքսային միության ուղղությամբ ինտեգրացիայի խորացումը վտանգավոր է արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքի թույլ դիվերսիֆիկացիայի տեսանկյունից: Ռուսաստանը ներկայում Հայաստանի գլխավոր արտաքին առևտրային գործընկերն է՝ հսկայական տեսակարար կշռով (արտահանման՝ 19.6 % և ներմուծման 24.8%[1]), և արտաքին տնտեսական հարաբերությունների հետագա խորացումն այդ երկրի հետ կարող է տանել միայն տնտեսական անվտանգության տեսանկյունից բացասական միտումների ինտենսիվացմանը: Իհարկե, իրավիճակն ավելի նպաստավոր է ներկայանում, երբ դիտարկվում է Հայաստան-Իրան երկաթուղու կառուցման կամ աբխազական երկաթուղու վերաբացման հեռանկարի համատեքստում, որոնք սակայն, ենթադրում են նաև երրորդ կողմի պատրաստակամություն և ներգրավվածություն: Բացի այդ, տնտեսության հնարավոր զարգացման հեռանկարների հետ անհամատեղելի «հնարավորություններ» է ենթադրում նաև Մաքսային միությունը: Դա դարձյալ վերաբերում է երրորդ կողմի հետ արտաքին առևտրային հարաբերությունների, մասնավորապես տարանցիկ երկրի՝ Վրաստանի հետ մաքսային հարաբերությունների կարգավորմանը, քանի որ վերջինս կարող է զգալի տարանցիկ մաքսադրույքներ գանձել հատկապես Հայաստանի արտաքին առևտրից[2]: Ստացվում է, որ ՄՄ ընձեռած առավելագույն բարենպաստության ռեժիմը կարող է անհնար դառնալ, դրանից բխող բոլոր դրական հետևանքների հետ միասին: Ավելին, ՄՄ անդամակցությունը կստիպի Հայաստանին էականորեն բարձրացնել գործող մաքսադրույքները, որոնք այսօր ամենացածրերից մեկն են աշխարհում (ապրանքների ավելի քան 73%-ը չի ենթարկվում մաքսային հարկման, մնացածի նկատմամբ էլ սահմանված է 10%-ոց մաքսադրույք, բացակայում են քվոտաները և արտահանման մաքսադրույքները), ինչի արդյունքում էլ արտաքին առևտրաշրջանառությունը երրորդ երկրների հետ զգալի կկրճատվի, կաճեն ներմուծվող ապրանքների գները, խնդիրներ կառաջանան Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ:

Փաստ է այն, որ երկու ուղղությամբ էլ ինտեգրացման խորացման տնտեսական շարժառիթները բավական թույլ էին, ընդ որում՝ բոլոր կողմերի համար. Հայաստանի բաժինը ԵՄ թե՛ ներմուծման և թե՛ արտահանման կառուցվածքում մշտապես եղել է 0.0%-ի շրջակայքում[3], և ընդամենը տասնորդական շեղումով էլ՝ 0.1%, ընթացել է Ռուսաստանի հետ արտաքին առևտրային գործընկերությունը: Եթե հավելենք նաև Հայաստանի ոչ տարողունակ շուկայի, թույլ տնտեսական ներուժի, ռազմավարական նշանակության հումքի բացակայության իրատեսական գնահատականները, ապա կարելի է նման շարժառիթներ փնտրել նաև հարաբերությունների կառուցման այլ հարթություններում: Մասնավորապես, չպետք է բացառել խոշոր տերությունների ազդեցության ոլորտների վերաբաշխման խնդիրը: Հիշենք, որ ճիշտ նույնպիսի երկընտրանքի առաջ կանգնած է եղել նաև Ուկրաինան, որի արտաքին առևտրաշրջանառությունը Ռուսաստանի հետ ամենամեծն է ԱՊՀ երկրների շարքում[4], գերազանցելով նույնիսկ Մաքսային միության անդամ երկրների՝ Բելառուսի և Ղազախստանի հետ արտաքին առևտրի ծավալներին, հանգամանք, որը խիստ ցանկալի է դարձնում Ուկրաինայի մասնակցությունը Մաքսային միությանը, և ինչու չէ նաև՝ ԵՄ շրջանակներում ԽՀԱԱԳ համաձայնագրին: Ըստ էության, Ուկրաինայի վերջնական կողմնորոշումը դեպի ԵՄ (որի հետ արտաքին առևտրաշրջանառությունն, ի դեպ, զգալիորեն զիջում է Մաքսային միության անդամ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառությանը) Ռուսաստանի առաջ խնդիր դրեց բարձրացնելու Եվրասիական տնտեսական միության հեղինակությունն ու գրավչությունը ԱՊՀ երկրների համար: Իսկ Հայաստան-Ռուսաստան տնտեսառազմաքաղաքական խիստ փոխսերտաճման պայմաններում ցանկացած այլընտրանք դիտարկելը բացասական պիտի դիտվեր առաջին հերթին՝ ազգային անվտանգության տեսանկյունից: Քանզի տնտեսական ինչպիսի կացության մեջ էլ գտնվի մեր երկիրը, մշտապես առաջ-

---

1 Աղբյուրը՝ http://www.ved.gov.ru/exportcountries/am/about_am/ved_am. Портал внешнеэкономической информации.

2 Հիշենք, որ մինչև ԱՀԿ անդամակցությունը, Վրաստանը խիստ խտրական մաքսային քաղաքականություն էր վարում Հայաստանի հետ:

3 EU bilateral trade and trade with the world (Armenia).DG trade statistics. 5 July, 2013.

4 Ուկրաինայի բաժինը Ռուսաստանի ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման կառուցվածքում ավելի քան 6% է, իսկ Ռուսաստանի բաժինն Ուկրաինայի արտահանման կառուցվածքում 25.6 % է, ներմուծման կառուցվածքում՝ 32.4%:

նային են մնալու ազգային անվտանգության խնդիրները, որոնց լուծումը այսպես, թե այնպես հակասության մեջ է գտնվելու տնտեսական զարգացման առաջնահերթությունների հետ: Ի վերջո, պարզ իրողություն է, որ առավել հաճախ ընտրություն կատարում ենք առաջնորդվելով ոչ թե այն մոտեցմամբ, թե ինչ ենք ցանկանում ունենալ, այլ թե ինչ չենք ցանկանում կորցնել: Այս տեսանկյունից, Մաքսային միությանն անդամակցելու որոշումը լիովին արդարացված էր, հատկապես եթե հաշվի առնենք, որ այդ որոշումն առնչվում է նաև Հայաստանի համար ևս մի կարևոր հիմնախնդրի՝ Ղարաբաղյան հիմնախնդրին, քանի որ Հայաստանին Մաքսային միության մեջ տեսնելով, Ռուսաստանն, ըստ էության, չի շահարկել Լեռնային Ղարաբաղի հետ մաքսային սահմանի բացակայության հարցը, որն էլ թույլ է տալիս հուսալ, որ Ռուսաստանը փաստացի Լեռնային Ղարաբաղը դիտարկում է որպես Հայաստանի մաս:

Վերջում ևս մի դիտարկում. ճիշտ այնպես, ինչպես Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի անդամակցությունը գրեթե ազդեցություն չունեցավ արտաքին առևտրի և տնտեսության վրա, նմանապես ոչ ԵՄ շրջանակներում Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծումը և ոչ էլ Մաքսային միությանն անդամակցությունն ինքնին չեն կարող հանգեցնել ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքի բարելավմանը կամ երկրի տնտեսական զարգացմանը: Արտաքին առևտրի բարելավման ուղիներ պետք է փնտրել ազգային տնտեսության ներքին տարածքում, քանի որ «առավելագույն բարենպաստության ռեժիմը», որն այդքան գովազդվում է գրեթե բոլոր միջազգային տնտեսական կառույցներին անդամակցելիս, անխափան աշխատում է միայն մրցունակ արտադրանքի համար, եթե նույնիսկ այն արտադրող երկիրը չի անդամակցում որևէ հեղինակավոր միջազգային տնտեսական կառույցի: Հայաստանը խնդիր ունի փոխել տնտեսության ներկա կառուցվածքը, շեղել գոյատևման հումքային ուղղվածությունը, աստիճանաբար փոխարինել տնտեսության արմատներում գտնվող օտարերկրյա կապիտալը հայրենականով և կենտրոնանալ գիտելիքահենք տնտեսության ձևավորման ու զարգացման ուղու վրա: Միայն այդ ճանապարհով կարելի է որոշակիորեն մեղմել արտաքին աշխարհում տնտեսական ու քաղաքական փոփոխություններից երկրի կախվածությունը և որոշումների ինքնուրույն կայացման հնարավորություն ձեռք բերել: Եվ միայն այդ դեպքում է երաշխավորվում իրական երկընտրանքների գոյություն և փոխշահավետ համագործակցություն՝ բոլոր հարթություններում:

Гаяне Арутюнян

АССИМЕТРИЧНЫЕ ПАРАЛЛЕЛИ МЕЖДУ ТАМОЖЕННЫМ СОЮЗОМ И ЗОНОЙ СВОБОДНОЙ ТОРГОВЛИ В РАМКАХ ЕС

Аннотация

В статье анализированы основные мотивы и возможные последствия для двух альтернативных интеграционных направлений - Таможенного Союза и УВЗСТ с ЕС. В результате обосновано, что решение Армении вступить именно в Таможенный Союз оправдано как с экономической точки зрения, так и доводов, касающихся национальной безопасности страны.

Gayane Harutyunyan

ASYMMETRIC COMPARISONS BETWEEN THE CUSTOMS UNION AND FREE TRADE AGREEMENT WITH EU

Abstract

The article analyzes the main motives and possible consequences of two integration options: Customs Union or DCFTA with EU. The article justifies that the decision of Armenia to join the Customs Union taking into account the economic benefits and national security concerns.

ԹԱՄԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2009թ. սկիզբ առած ճգնաժամը, որից դեռևս շատ երկրներ են փորձում դուրս գալ, և որի սկզբնական փուլն արդեն թվում է հաղթահարված՝ շնորհիվ խոշոր երկրների համաձայնեցված քաղաքականության, այնուամենայնիվ, դեռևս պարզ չէ՝ արդյոք իրականացված միջոցառումները բավարար էին ճգնաժամը լիարժեք հաղթահարելու համար: Ճգնաժամի վերաբերյալ բազմաբնույթ քննարկումները պատճառ հանդիսացան օրենսդիր և գործադիր իշխանություններում ընդունվող հակաճգնաժամային բազմաթիվ ու բազմաբնույթ միջոցառումների համար:

Այս համատեքստում, առաջին հերթին, կարևոր նշանակություն է տրվում նաև առանձին երկրներում իրականացված հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետությանը:

Անդրադառնալով հակաճգնաժամային միջոցառումների բովանդակությանը, ներկայացնենք աշխարհի զարգացած երկրների, ինչպես նաև ԱՊՀ որոշ երկրների հակաճգնաժամային միջոցառումների հիմնական ուղղությունները: Սկսենք համաշխարհային տնտեսության առաջատար ԱՄՆ-ից, որտեղ սկիզբ առավ ճգնաժամը, և որից էլ մեծապես կախված է ամբողջ համաշխարհային տնտեսության կայունացումը: Առաջին խոշորամասշտաբ հակաճգնաժամային դրամական միջոցառումը, որն իրականացվեց ամերիկյան կառավարության կողմից, դա 2008թ. դեկտեմբերին սենատի կողմից «խնդրահարույց ակտիվների փրկության ծրագրի» հաստատումն էր 700 մլրդ դոլարի չափով, որոնք ուղղվեցին, հիմնականում, բանկերի խնդրահարույց արժեթղթերի ձեռքբերմանը՝ ամերիկյան բանկային համակարգը փրկելով փլուզումից ու կործանումից: Խնդրահարույց ակտիվների փրկության ծրագրի շրջանակներում ամերիկյան կառավարությունը գնեց նաև ֆինանսական հաստատությունների թողարկած էմիսիոն արժեթղթերի զգալի մասը, որը 9 խոշորագույն բանկերի գծով կազմել է 125 մլրդ դոլար: Մասնավորապես, Bank of America-ն բանկին հատկացվել է 20 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ աջակցություն, ինչպես նաև 118 մլրդ դոլար գումարի երաշխիքներ, որոնք հնարավորություն են տալիս բարելավելու բանկի ֆինանսական դրությունը: Բազմազան ու բազմաբնույթ են նաև ամերիկյան կառավարության կողմից ձեռնարկված ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումները[1]՝

- Սնանկացման կանխարգելման նպատակով հիփոթեքային գործակալությունների ազգայնացումը (Fannie Mae և Freddie Mac):
- Հաշվեկշռում գտնվող վարկերի ու արժեթղթերի կորուստների ծածկման նպատակով 306 մլրդ դոլարի տրամադրումը Citigroup-ին, ինչպես նաև պետության երաշխավորությամբ նույն կազմակերպությանը պարտատոմսեր թողարկելու թույլտվության տրամադրումը:
- ԱՄՆ-ի գանձապետարանի կողմից 20 մլրդ դոլարի փոխանակումը Bank of America-ի արտոնյալ բաժնետոմսերի փաթեթի հետ և այլն:

ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման ստորագրեց 787 մլրդ դոլար ծավալով հակաճգնաժամային միջոցառումների ծրագիրը, որը միտված էր ԱՄՆ-ի տնտեսությունը դուրս բերել ծանր վիճակից: Օրենքը նախատեսում էր մոտ 500 մլրդ դոլարի հատկացում ազգային ենթակառուցվածքի զարգացմանը, վերականգնվող աղբյուրներից էներգիայի արտադրությանը, կրթական ու սոցիալական ծրագրերի աջակցմանը, ինչպես նաև՝ շրջակա միջավայրի պահպանությանը: Միաժամանակ քաղաքացիների և գործարարության հարկային բեռը թեթևացվեց մոտ 287 մլրդ դոլար գումարով: Այս միջոցառման նպատակներից մեկն ամերիկացիների գնողունակության

[1] Հարությունյան Վ. Լ., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. Պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասերը, Երևան, ՀՀ ԳԱԱ , «Գիտություն» հրատ., էջ 42-43:

վերականգնումն է, որպեսզի նրանք վերստին կարողանան գնել ավտոմոբիլներ, անշարժ գույք և այլ ապրանքներ՝ այդ կերպ բարելավելով արդյունաբերության համապատասխան ճյուղերի իրադրությունը:

Հակաճգնաժամային միջոցառումները Կանադայում: Կանադայի կառավարության կողմից ձեռնարկված դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից էին՝

- տնտեսությանն աջակցելու համար տրամադրվեց մոտ 24.1 մլրդ դոլար, որից՝
- 6.24 մլրդ դոլար՝ բնակելի շենքեր կառուցելու և էներգետիկ ենթակառուցվածքի վերականգնման ու զարգացման, ինչպես նաև հարկային արտոնությունների, բնակչության անապահով խավերին աջակցության տրամադրման համար,
- 25 մլրդ դոլար՝ հիփոթեքային շուկայի կայունությունն ապահովելու համար,
- 6.02 մլրդ դոլար՝ անտառապահության, էներգիայի և արդյունաբերության այլ հատվածների համար[1]:

Հակաճգնաժամային միջոցառումները Իտալիայում: Իտալիայում 28.11.2008թ. հաստատվեց հակաճգնաժամային դիրեկտիվա, որով նախատեսվում էր տրամադրել 6.4 մլրդ եվրո[2]՝

- միայն 2009թ. տարեկան 22000 եվրոն չգերազանցող եկամուտ ունեցողներին տրամադրվում էին հատուկ բոնուսներ 200-1000 եվրո՝ կախված եկամտի չափից:
- Հարկերի նվազեցում պարգևավճարների համար ՝
- տարեկան 35000 (2008թ.՝ 30000 եվրո) եվրոն չգերազանցող եկամուտ ունեցողներն օգտվում են հարկային նվազեցումներից,
- պարգևավճարները, որոնցից կատարվել են նվազեցումները, 3000 եվրոյից դարձել են 6000 եվրո:
- Բիզնես հարկերի նվազեցում՝
- մեղմացվել է կազմակերպությունների հարկային բեռը,
- 10% եկամտահարկի նվազեցում:
- Բարձրացվել են թոշակառուների թոշակները:
- Աշխատողների համար պարտադիր 13-րդ աշխատավարձի ապահովում և այլն:

2011թ. Իտալիայի խորհրդարանը հաստատեց հակաճգնաժամային խիստ միջոցառումների կիրառման ծրագիրը, որի շրջանակում նախատեսվեց պետական ծախսերի կրճատում և հարկերի բարձրացում, որի արդյունքում 3 տարվա ընթացքում երկրի պետական պարտքը կկրճատվի 54 մլրդ եվրոյով: Բյուջեի պակասուրդի կրճատման ծրագիրը ենթադրում է մի շարք հարկատեսակների բարձրացում և բյուջեի ծախսերի կրճատում: Սա արդեն երկրորդ հակաճգնաժամային ծրագիրն է, որն ընդունում է Իտալիան:

Որքան էլ զարմանալի է, ճգնաժամի հետևանքով ասիական երկրներից ամենաշատը տուժել է տարածաշրջանի ամենազարգացած տնտեսություն ունեցող Ճապոնիան: Ուստի, այստեղ էլ համակարգված հակաճգնաժամային քաղաքականությունն ավելորդ չի եղել: Ճապոնական կառավարության կողմից առաջնահերթ ուղղություններ հանդիսացան սոցիալական օժանդակությունն ու բարձր զբաղվածության ապահովումը՝ համարելով այդ երկու ցուցանիշները ճգնաժամի հետևանքների խորացման հիմնական խթանիչներ: Երկրորդ կարևոր ուղղություն է հանդիսացել մի քանի խոշոր ֆինանսական սուբյեկտների՝ որպես ֆինանսավարկային համակարգի շարժիչ ուժերի օժանդակության տրամադրումը: Ընդհանուր առմամբ, Ճապոնիայի վարած հակաճգնաժամային քաղաքականությունը ներառել է հետևյալ ուղղությունները՝

- օժանդակություն ֆինանսական ինստիտուտներին՝ 13 մլրդ դոլար արժողությամբ արտոնյալ վարկերի տրամադրմամբ,
- օժանդակություն մեծ, փոքր և միջին բիզնեսին՝ 54 մլրդ դոլար արժողությամբ փաթեթով,
- հատուկ կորպորացիայի ստեղծում բանկային վատ ակտիվների գնման և հետագա ընդլայնման համար,

---

[1] Антикризисные социальные программы в различных странах мира: 2008-2009гг, ОБЗОРЫ, Обзор подготовлен сотрудниками Независимого института социальной политики, №12 Весна—Лето 2010, с. 148.

[2] The impact of anti-crisis measures and the social and employment situation, Italy, Dr. Elisa Borghi, p. 3.

- հիփոթեքային վարկավորման ընդլայնում, ինչպես նաև բանկային ավանդների վերադարձի և միջբանկային վարկերի երաշխիքների տրամադրումը՝ 143 մլրդ դոլար ծավալով,
- ակտիվ վարկավորում այն երկրներին, որտեղ գործում են ճապոնական կազմակերպություններ, ինչպես նաև 16,7 մլրդ դոլարի հատկացումը ՓՄՁ-ներին, որոնցում զբաղված է աշխատող ճապոնացիների 70%-ը,

Ճապոնիայի հակաճգնաժամային միջոցառումներն ամփոփ կարելի է ներկայացնել երեք փուլանոց փաթեթի տեսքով: Առաջին փուլում իրականացվեցին միջոցառումներ՝ տնտեսական անկումն ու ճգնաժամի խորացումը կանխարգելող, երկրորդ փուլում՝ ներդրումային քաղաքականության իրականացում տնտեսական սկզբնական վերականգնման համար, երրորդ փուլում (ընդգրկում էր մինչև 2010թ. վերջը)՝ տնտեսական արագ աճի ապահովում՝ արտահանման, նոր ապրանքների և ծառայությունների հաշվին: Սակայն 2012թ. Սինդզո Աբբեի վարչապետ դառնալուց հետո ճգնաժամին դիմակայման ռազմավարությունը փոխվեց, որը ստացավ «աբբենոմիկա» անվանումը: Նոր վարչապետ Սինդզո Աբբեն տարվա սկզբից իրականացրեց տնտեսության խթանման ծրագիր դրամական էմիսիայի՝ ճապոնական իենի անկման և ինֆլյացիայի աճի ճանապարհով: 2013թ. օգոստոսի 2-ին ճապոնական բանկը հայտարարեց ճապոնական իենի դրամական բազայի էմիսիայի նոր ռեկորդի մասին: Բանկի ներկայացուցչը հայտարարեց, որ հուլիս ամսվա համեմատ դրամական բազան մեծացել է շուրջ 1,7 տրլն դոլարով[1]: Ճապոնիայի վարած տնտեսական քաղաքականությունը շարունակում է մնալ աշխարհի ուշադրության կենտրոնում: Ճապոնական ավտոմոբիլային արդյունաբերությունն արդեն իսկ տվել է դրական արդյունքներ «աբբենոմիկայի» կիրառման հետևանքով և բարձրացրել պահանջարկը շուկայում. գործառնական շահույթը մեծացել է 11,4 անգամ և կազմել է 760 մլն դոլար[2]: Մի շարք փորձագետների կարծիքով «աբբենոմիկան» արդեն տալիս է իր արդյունքները և մինչև 2015թ. վերջը երկիրը դուրս կգա լճացման փուլից: Ճապոնիայի բանկը պլանավորել է այս ֆինանսական տարում հասնել 0.6% ինֆլյացիայի, հաջորդ տարում՝ 1.3%-ի, իսկ թիրախային է ինֆլյացիայի 2%-ը[3]:

Հակաճգնաժամային միջոցառումները Ռուսաստանում: Ինչ վերաբերում է համաշխարհային մյուս խոշոր առաջատարին՝ Ռուսաստանին, ապա ՌԴ-ն դեռևս ճգնաժամի սկզբին ձևավորեց և մինչև օրս իրագործում է հակաճգնաժամային միջոցառումների լայն փաթեթ՝ շուրջ 3 տրլն ռուբլի արժողությամբ, որում որպես առաջնահերթություններ հանդիսացան՝

- աջակցություն ֆինանսական ոլորտին,
- բնակչության սոցիալական աջակցություն, նոր աշխատատեղերի ստեղծում,
- տնտեսության իրական հատվածի՝ ճգնաժամին առավել զգայուն առանձին ճյուղերի աջակցություն՝ ներքին պահանջարկի խթանման հիման վրա,
- միջոցառումներ հարկային քաղաքականության շրջանակներում, մասնավորապես շահութահարկի դրույքաչափը 24%-ից իջեցվեց 20%, ամորտիզացիոն պարգևավճարների մեծացումն ըստ հիմնական միջոցների առանձին խմբի կազմեց 10-30%,
- մաքսային-սակագնային քաղաքականության շրջանակներում միջոցառումներ,
- պետության կողմից ՓՄՁ-ների աջակցություն՝ 6 մլրդ ռուբլու չափով, այդ թվում՝ 30 մլրդ ռուբլի ռուսական էկոնոմբանկի կողմից և այլն[4]:

Հակաճգնաժամային միջոցառումները Ղազախստանում: Ղազախստանում հակաճգնաժամային միջոցառումների վերաբերյալ որոշումը կայացվեց նախագահ Նազարբաևի կողմից 2008թ. հոկտեմբերի 13-ին, որը հիմնականում ֆինանսավորվեց Ազգային և կուտակային կենսաթոշակային ֆոնդերի հաշվին շուրջ 10 մլրդ դոլար գումարով[5]: Սակայն կառավարության կողմից հակաճգնաժամային միջոցառումների փաթեթը հաստատվեց 2009թ. 13-ին: Միևնույն ժամանակ, վարչապետ Կարիմ Մասիմովը հայտարարեց, որ գործողությունների նման փաթեթը դեռևս

---

1 http://www.vestifinance.ru/articles/34064
2 http://www.vestifinance.ru/articles/33876
3 http://www.vestifinance.ru/articles/33703
4 http://www.vopreco.ru/rus/redaction.files/5-09.pdf
5 http://www.rusnauka.com/5_PNW_2010/Economics/58868.doc.htm

վերջնական չէ և ենթակա է փոփոխության՝ կախված աշխարհում և երկրում տիրող տնտեսական իրավիճակից: Ծրագրի հիմնական նպատակն է եղել մեղմել ճգնաժամի բացասական հետևանքները Ղազախստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա և ապագայում տնտեսական աճի հեռանկարների ստեղծումը, որի համար Ազգային ֆոնդից տրամադրվեց 4 մլրդ դոլար (480 մլրդ տենգե), որից՝

- անշարժ գույքի շուկայում խնդիրների լուծում՝ 3 մլրդ դոլար (360 մլրդ տենգե),
- ՓՄՁ-ներին աջակցություն, այդ թվում՝ միկրովարկավորում գյուղական ձեռնարկություններին, ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար արգելքների նվազեցում՝ 1 մլրդ դոլար (120 մլրդ տենգե),
- ագրոարդյունաբերական համալիրի զարգացում, մասնավորապես ներդրումներ արտահանմանն ուղղված ոլորտներում՝ 1 մլրդ դոլար (120 մլրդ տենգե),
- նորարարական, արդյունաբերական և ենթակառուցվածքային նախագծերի իրագործում՝ 1 մլրդ դոլար (120 մլրդ տենգե) և այլն:

Ղազախստանի հակաճգնաժամային փաթեթն առանձնանում էր մշակման բարձր մակարդակով[1]:

Այժմ աղյուսակի տեսքով ներկայացնենք նշված երկրների հակաճգնաժամային քաղաքականություններն ըստ առանցքային ուղղությունների:

Աղյուսակ 1

ԱՄՆ-ի, Կանադայի, Իտալիայի, Ճապոնիայի, Ռուսաստանի և Ղազախստանի ու Հայաստանի հակաճգնաժամային քաղաքականության առաջնահերթությունները

Երկիր	Ճգնաժամի հիմնական պատճառները	Հակաճգնաժամային քաղաքականության առաջնահերթությունները
ԱՄՆ	Ֆինանսական բանկային ճգնաժամ, իրացվելիության խնդիրներ	Ֆինանսական ոլորտի կայունացում, ներքին պահանջարկի խթանում
Կանադա	Արտահանման ծավալների նվազում, ներդրումների կրճատում	տնտեսության իրական հատվածի աջակցություն, ենթակառուցվածքների օժանդակություն
Իտալիա	Համաշխարհային շուկայում պահանջարկի նվազում	Պետական ծախսերի կրճատում, հարկերի բարձրացում, երաշխիքների տրամադրում
Ճապոնիա	Համաշխարհային պահանջարկի կրճատում	Արտահանող ճյուղերին աջակցություն, ներքին սպառման խթանում, ներդրումային քաղաքականության իրականացում
Ռուսաստան	Հումքի գների անկում, ներդրողների արտահոսք, իրացվելիության խնդիրներ	Տնտեսության իրական հատվածի իրացվելիության աջակցում, արտահանող ճյուղերին աջակցություն, ներքին սպառման խթանում
Ղազախստան	Հումքի գների անկում, արտահանման ծավալների կրճատում	Ֆինանսական համակարգի աջակցություն, ՓՄՁ-ներին աջակցություն, երաշխիքների տրամադրում
Հայաստան	Հումքի գների անկում, արտահանման ծավալների կրճատում	Հավասարակշռված մակրոտնտեսական քաղաքականությունների իրականացում, ներդրումային ծրագրերին աջակցություն, գործարար միջավայրի բարելավում, ՓՄՁ-ներին աջակցություն

Այս ամենով հանդերձ՝ պետությունների ակտիվ միջամտությունը տնտեսությանը հնարավորություն տվեց բազմաթիվ երկրների արագ կայունացնել տնտեսությունը և նույնիսկ վերադառնալ զարգացման նախաճգնաժամային տեմպերին: Ներկայումս բազմաթիվ երկրներ զբաղված են տնտեսության մեջ ճգնաժամով պայմանավորված դժվարին հիմնախնդիրների բացահայտմամբ և լրացուցիչ միջոցառումների միջոցով դրանց լուծմամբ: Զուգահեռաբար վերահիմաստավորվում են ճգնաժամի պատճառներն ու հետևանքները, իրականացվում միջոցառումներ և բարեփոխումներ, որոնք կկանխեն հնարավոր ճգնաժամերն ապագայում: Դիտարկելով ճգնաժամերի հաղթահարման բնագավառում առկա միջազգային փորձը, պարզ է դառնում, որ ճգնաժամերի հաղթահարման գործում հիմնական դերը պետությանն է պատկանում, որն իր

[1] http://stud24.ru/international-law/antikrizisnye-mery-stran-sng/99774-297395-page1.html

հակաճգնաժամային քաղաքականության շրջանակում համապատասխան լծակների միջոցով ազդում է տնտեսական համակարգի վրա՝ նվազագույնի հասցնելով ճգնաժամի բացասական հետևանքները:

ՀՀ կառավարությունը զգալով ճգնաժամի մոտեցող ալիքի ազդեցությունը (Հայաստանում տնտեսական ճգնաժամի առաջին նշաններն ի հայտ եկան 2008թ. նոյեմբերի վերջերին, երբ միջազգային շուկաներում նկատվեց պղնձի խտանյութի կտրուկ գնանկում) 2008թ. նոյեմբերին ներկայացրեց հակաճգնաժամային միջոցառումների ծրագիր, որը որոշակիորեն և առանձին դեպքերում կրկնեց զարգացած երկրների փորձը, բայց որոշ հարցերում առաջնորդվեց սեփական մոտեցումներով:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, այստեղ, իմ կարծիքով, խնդիրն ավելի շատ ոչ թե մշակված հակաճգնաժամային միջոցառումների թերություններն էին, այլ դրանց իրականացման ընթացքում տեղ գտած թերությունները: Թերությունը կառավարության կողմից մշակված միջոցառումների իրականացման մեխանիզմների անկատարությունն էր, այլ ոչ թե բուն հակաճգնաժամային ծրագրի անարդյունավետությունը:

Պետք է նշել, որ չնայած ամբողջ աշխարհը համակած ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքներին, համաշխարհային տնտեսությունը կարծես թե կարողացավ դիմակայել դրան, և հուսանք, որ մոտ ապագայում կկարողանա ամբողջապես հաղթահարել ճգնաժամը և թևակոխել նոր և ավելի բուռն զարգացման փուլ:

Тамара Арутюнян

АНАЛИЗ ЗАРУБЕЖНОГО ОПЫТА АНТИКРИЗИСНЫХ МЕРОПРИЯТИЙ

Аннотация

В условиях мирового финансового кризиса важное значение имеет также оценка эффективности антикризисных мер, осуществляемых в отдельных странах. В связи с этим в статье изучены антикризисные меры, применяемые в отдельных странах, а также этапы протекания кризиса и его негативные проявления в мире. Очевиден тот факт, что без эффективной государственной антикризисной политики невозможно преодолеть отрицательные последствия кризиса и восстановить экономику.

Tamara Harutyunyan

THE ANALYSIS OF CRISIS RESPONSE MEASURES IMPLEMENTED IN OTHER COUNTRIES

Abstract

The article provides an analysis of crisis response measures implemented in other countries to fight the negative impact of the Global Financial Crisis. Hence, efficient crisis response measures in place can help each nation to fight crisis negative impact and restore economic growth.

ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՊՃՀ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ.

ՎԱՐԿԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԵՐ. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես հայտնի է, վարկը տնտեսական կյանքում ի հայտ է եկել շատ վաղուց: Այն իր որոշակի դերն է ունեցել տնտեսական էվոլյուցիայի կապիտալիստական փոխակերպության տանջալից պրոցեսում: Վարկային գործարքները գերազանցապես հետամտում էին սպառողական նպատակներ, թեև դրանցում դրսևորվում էր վարկային տնտեսության «արմատը»՝ հնարավոր դարձնելով ապրանքաշրջանառությունը: Արդեն զարգացած վարկային տնտեսության պայմաններում առաջնակարգ նշանակություն է ստանում արտադրողական վարկը՝ դառնալով արժեքների շրջանառության և արտադրական գործընթացի նշանակալից գործոն: Ստանձնելով թե՛ փոխանակման, և թե՛ վճարման միջոցի դերը, վարկի շնորհիվ ապրանքաշրջանառության զգալի մասը իրականացվում է առանց կանխիկ դրամի: Փողը՝ որպես վճարման միջոց, երևան է գալիս միայն այն դեպքում, երբ խախտվում է երկկողմանի պարտականությունների շղթան, կամ երբ միակողմանի վճարումները չեն փոխհատուցվում: Բայց այս դեպքում էլ փողի օգտագործումը սահմանափակվում է՝ կապված բանկերի կողմից վճարումների կենտրոնացման և չեկային ու շրջապտույտային շրջանառությունների զարգացման հետ: Փաստորեն, ինչպես նկատում է հայ նշանավոր տնտեսագետներից Մենտոր Բունիաթյանը, «զարգացած վարկային շրջանառության ժամանակ Ապրանք - Փող - Ապրանք բանաձևը մոտենում է Ապրանք - Ապրանք բանաձևին»[1]: Հնարավոր է դառնում շրջանառությունը իրագործել ներկայում, իսկ համարժեքի վճարումը կատարել ապագայում: Այսինքն, ինչպես ասում էր Կ.Մարքսը, վարկային տնտեսության ժամանակ առևտրականը տիրում է հասարակության ողջ դրամական կապիտալի շատ ավելի մեծ մասին, քանի որ նա կարող է չսպասելով գնված ապրանքի վաճառվելուն, կատարել նոր գնումներ... ստեղծելով ֆիկտիվ պահանջարկ[2]: Եվ իրավմամբ, կյանքը պարտքով դարձել է արդի տնտեսությանը բնորոշ գծերից մեկը: Անցումը իրական արտադրության տնտեսությունից ֆինանսական ակտիվների տնտեսությանը, ինչպես նաև արդյունաբերական և սպառողական ապրանքների արտադրության աստիճանական փոխարինումը ֆինանսականի, «պարտքը» որպես այդպիսին դարձրել է օրինաչափ: Գ.Հաբերլերը, նշելով, որ հսկայական պարտքի գոյությունը, թեև ոչ միակ գործոնն է, որը ունակ է վատթարացնել տնտեսության առանց այն էլ անկումային վիճակը, միևնույն ժամանակ ավելացնում է, որ պարտքի աճը ավելի շուտ ճգնաժամի նախանշան է, և ոչ պատճառ[3]:

Վարկային տնտեսությունը դյուրացնում է արժեքների շրջանառությունը, հնարավոր դարձնում գործարքների իրականացումն ավելի քիչ ծախսերով, կապիտալին տալով առավել շարժունակություն՝ դրանով իսկ մեծացնելով վերջինիս նշանակությունն ու ակտիվությունը արտադրական գործընթացում: Եվ այս իմաստով միակողմանի պիտի դիտել տնտեսագիտության մեջ տարբեր ժամանակներում հոլովվող այն տեսակետը, թե վարկի զարգացումը, դրա ծավալը, կառուցվածքը, կապը առանձին ձեռնարկությունների և ազգային տնտեսության ճյուղերի հետ լրիվ և ամբողջությամբ պայմանավորված են արտադրության գործընթացով, և ոչ թե հակառակը[4]:

Միևնույն ժամանակ կարևորվում է վարկի դերը արտադրության գործընթացում կապիտալի բաշխման ժամանակ, որը հնարավոր է դարձնում ազատ կապիտալների կենտրոնացումը և դրանց արտադրողական օգտագործումը, նպաստում միջոցների կենտրոնացմանն առանձին ձեռնարկություններում, որոնք պահանջում են խոշոր կապիտալներ: Հենց այս իմաստով էլ է.Հանսենը գրում է, թե «... որքան շատ է կուտակվում չգործող կապիտալը, այնքան ավելի ուժեղ է արտադրողական կիրառման ոլորտի ելքը գտնելու նրա ձգտումը»[5]: Եվ իրոք, այսօր էլ փողի

---

1 M.Bouniatian, Wirtschaftskrisen und Ueberkapitalisation, München, 1908, S21.

2 Կ.Մարքս, Կապիտալ, Հայաստանի պետական հրատարակչություն, հ.3,1949, էջ 315-316:

3 Хаберлер Г., Процветание и депрессия: теоретический анализ циклических колебаний.- Челябинск:Социум, 2005, с.104-105.

4 И.Блюмин, Критика буржуазной политической экономии, т.2,М.,1962, с.207.

5 Э.Хансен, Экономические циклы и национальный доход, М., 1959, с.370.

հսկայական զանգվածը փնտրելով իրացման իր ուղին, ի վերջո կապիտալացվում է, ինչի համար ամենահարմարը ֆինանսական շուկան է: Վերջին 20 տարիների ընթացքում համաշխարհային տնտեսության մեջ կատարվող էական փոփոխությունների հետևանքով տեղի է ունեցել ֆինանսական շուկաների զգալի լիբերալիզացում: Տնտեսության մեջ պետական միջամտության նվազեցումը, պետական սեփականության մասնավորեցման ակտիվ գործընթացը և դրա հետ մեկտեղ նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացումը ու մի շարք այլ փոփոխությունները ձևավորել են նոր ֆինանսական շուկաներ՝ դրանով իսկ ազգային համակարգերը միավորելով մեկ միասնական շուկայի մեջ:

Ընդհանրապես վարկը դիտվում է որպես մի գործոն, որի կիրառումը առավել լրիվ և ինտենսիվ է դարձնում նրա արտադրողական ուժը: Վարկային տնտեսությունը կապիտալին հաղորդում է ավելի մեծ շարժունակություն, առավել շահավետ եղանակով զուգորդում արտադրողական ուժերը՝ աշխատանքն ու կապիտալը, խրախուսում է արտադրության խթանիչ ուժը հանդիսացող սպառումը և այդպիսով մոբիլիզացնում տնտեսական գործունեության բոլոր ակտիվ ուժերը[1]:

Վարկի հաստատությունը՝ որպես տնտեսական ակտիվությունը պայմանավորող գործոն, կարող է դառնալ նաև ամբողջ տնտեսության համար վտանգավոր փոփոխությունների պատճառ: Այն, շրջանառության վստահելի միջոցը՝ փողը, փոխարինում է առավել պակաս վստահելի դրամային սուռոգատներով: Եվ որ շատ կարևոր է, վարկային տնտեսության զարգացումը ուժեղացնում է առանձին տնտեսական միավորների փոխկապվածությունը ինչպես դրանց վճարունակության և անվճարունակության, այնպես էլ վստահության առումներով, դրանով իսկ տնտեսական կյանքը դարձնելով երերուն ու զգայուն օրգանական խախտումների նկատմամբ: Ոչ պատահականորեն, Ա.Մարշալը չարիքի հիմնական պատճառը համարում է վստահության պակասը: Նման օրինակներից է 1866թ. ճգնաժամը, երբ Անգլիայի ամենահզոր բանկային տներից մեկի վճարումների դադարեցումը՝ առաջացնելով համընդհանուր անվստահություն, պատճառ էր դարձել մասսայական չվճարումների և տագնապ տարածել ամբողջ գործարար կյանքի վրա: Այս առնչությամբ Վարգան մեջբերելով «Times»-ից, գրում է. «Վճարումների դադարեցումը այնպիսի ֆիրմայի կողմից, ինչպիսին որ Overend, Gurney and Co.-ն է, ազգային աղետ է: …Դրան հետևեց ևս 180 ֆիրմաների սնանկացումը…: Անգլիական բանկի զեղչատոկոսը մոտ երեք ամսից ավելի 10% մակարդակի վրա էր: Անգլիական վարկը արտասահմանում այնքան էր հեղինակազրկվել, որ չնայած որ տոկոսադրույքը Բեռլինում (7%), Փարիզում (4%) և Վիեննայում (5%) շատ ավելի ցածր էր անգլիականից, ոսկին չէր հոսում Անգլիա»[2]: Այս առնչությամբ Հանսենը նկատում է, թե ինչպես որ վարկի ավելացումը մեծացնում է վարկավորման հնարավորությունը, այդպես էլ այն դեպքում, երբ վստահությունը փոխարինվում է անվստահությամբ, սնանկացումը և խուճապը ծնում են խուճապ և սնանկացում[3]: Ու թեև ներկայումս վարկային տնտեսությունը, իր քաղաքական ու տնտեսական, արտաքին ու ներքին գործոնների ազդեցության հետ մեկտեղ ոմանց կողմից ներկայացվում է որպես կայուն համակարգ, այնուհանդերձ, արտադրական գործընթացի ընդհատման, դրամաշրջանառության լճացման կամ արժեքների համակարգում անսպասելի հեղաշրջման հետևանքով վճարային պարտականությունների և արժեքային հավակնությունների իրականացման նորմալ ընթացքի խախտման տեսանկյունից այն բավականին լուրջ վտանգ է ներկայացնում տնտեսության համար: Խոսքը վերաբերում է արտադրության, փոխանակման, դրամաշրջանառության և բաշխման ճգնաժամերի տեսքով տնտեսական կյանքի խախտումներին, ինչին արդեն հետևում են ցնցումները վարկային, իսկ այնուհետև ամբողջ տնտեսական համակարգում:

Վարկի երկակի դերը առավել տեսանելի է տնտեսական ակտիվության վերելքի փուլում: Ինչպես նկատում է Մ.Բունիաթյանը, եթե մի կողմից, վարկի զարգացումը տնտեսական աշխուժացման «հզոր զենքն է», ապա մյուս կողմից, օժանդակելով սպեկուլյացիային, այն պատճառ է դառնում արտադրության և սպառման անհամապատասխանության[4]:

Տնտեսական պատմությունից հայտնի է, թե ինչպես վարկի չարաշահումը և դրան հետևող վճարումների դադարեցումը կարող են հանգեցնել անսպասելի աղետի: Հարկ է նկատել, որ

---

[1] M.Bouniatian, Les crises economiques, Paris, 1922, p.65.
[2] Мировые экономические кризисы 1848-1935, М.,1937, т. I, с.141.
[3] Э.Хансен, Экономические циклы и национальный доход, М.,1959, с.353.
[4] М.Бунятян, Экономические кризисы, М., 1915, с 37.

ժուգլյարը, Բլոկը, Վագները, Շտեյնբերգը և մի շարք այլ տնտեսագետներ ճգնաժամերի հիմնական պատճառը տեսնում են հենց վարկի չարաշահման մեջ: Ավստրիական դպրոցի ներկայացուցիչները որպես վարկային էքսպանսիայի պատճառ դիտում էին հումքի գների բարձրացումը, ինչն էլ առաջ էր բերում ինֆլյացիա: Դրա հետ մեկտեղ վարկերի տրամադրման համար բանկերի կողմից ստեղծված նոր փողերը ուղղվում են ոչ թե տնտեսության իրական հատվածը, այլ տարաբնույթ բիրժաներ:

Վարկային էքսպանսիան փոփոխված մոնետար պայմաններում ի հայտ է բերել մի խնդիր, որին եթե մարդկությունը առնչվել է, ապա դա եղել է առանձին երկրի կտրվածքով: Պարտքի ձևավորումը ֆիատային(ոսկով չապահովված) փողերով հանգեցրել է վարկի արդյունավետության կտրուկ նվազմանը: Վերջին 30 տարիների ընթացքում մի շարք երկրներում վարկային էքսպանսիան պատճառ է դարձել ճգնաժամերի, մասնավորապես Ճապոնիայում, 80-ականներին Լատինական Ամերիկայի երկրներում, 90-ականներին Հարավարևելյան Ասիայի երկրներում: Այդ երկրների փորձը վկայում է, որ վարկի աճը ՀՆԱ-ից մոտ 2 անգամ ավելի չափով կարող է մոտակա ճգնաժամի պոտենցիալ վտանգի ազդանշան դառնալ: Ըստ էության դա է վկայում նաև այն փաստը, որ 2008թ. ճգնաժամից առաջ ԱՄՆ-ի պետական պարտքը ՀՆԱ-ի 43 տոկոսից հասել էր 71 տոկոսի՝ անվանական արտահայտությամբ 2,3 տրիլիոն դոլարից 8 տրիլիոնի, առևտրային բանկերի վարկերն աճել էին 3,5 անգամ՝ 2,2 տրիլիոնից հասնելով 7 տրիլիոն դոլարի, շուրջ երեք անգամ աճել էր անապահով սպառողական վարկավորման ծավալը, հասնելով 2,2 տրիլիոն դոլարի, իսկ հիփոթեքային վարկերը՝ 2,9 տրիլիոնից 11 տրիլիոնի[1]: Իհարկե, թե իրականում որոնք էին այդ ճգնաժամի բուն պատճառները, արդյոք այն կարելի է բնական ու անցողիկ համարել, թե աշխարհը ինքնին համակարգային փոփոխությունների շեմին է կանգնած, դժվար է ասել: Առավել ևս, երբ այդ հարցի քննության շուրջ առկա դիտարկումները բազմազան են և տարաբնույթ, սկսած ԱՄՆ-ի հիփոթեքային համակարգում առկա բացթողումներից, մասնավորապես նրա ավելորդ լիբերալ բնույթից, վերահսկողության, հիփոթեքային վարկավորման ռիսկերի անտեսումից, հիփոթեքային բանկերի նկատմամբ ոչ պատշաճ հսկողությունից, երկար տարիների ընթացքում ամերիկյան տնտեսության դրամական ներարկումներից, սպառման և կուտակման միջև խզվածությունից, ինչպես նաև սահմանափակ մարդկանց կանխամտածված գործողություններից, որպես գործնական ծրագրի, որը ենթադրում է որոշակի սկզբունքների և նպատակների իրացում, այն է՝ եկամուտների ավելացում[2], - ինչպես նկատում է Ռ.Սարինյանը, վերջացրած համաշխարհային ֆինանսական համակարգի ձևավորման՝ կապված կապիտալի միջազգային տեղափոխությունների, արտաքին առևտրի և տնտեսական փոխներգործության այլ ձևերի խորացման, տարբեր երկրների վալյուտային փոխարժեքների փոխկախվածության ուժեղացման հետ[3]:

Սովորաբար վարկային ճգնաժամերից առավելապես տուժում են փոքր էմիսիոն բանկերը, սակայն երբ վարկային ճգնաժամին միանում է նաև բանկային ճգնաժամը, կենտրոնական բանկը՝ կապված ազգային տնտեսության իսպառ փլուզումը կանխելու համար ամենաանհրաժեշտ ազատ կապիտալի կամ շրջանառության միջոցների պահանջը բավարարելու անկարողության հետ նույնպես կանգնում է լուրջ վտանգի առջև: Այս պարագայում առաջանում է վարկային պարտականությունների անհապաղ լիկվիդացման անհրաժեշտություն, երբ շատ ցածր գներով արժեթղթերը և ապրանքները նետվում են շուկա, ինչն էլ չափազանց մեծացնում է փոխատվական տոկոսադրույքը: Իրավիճակը էլ ավելի է վատթարանում, երբ վարկի և միաժամանակ դրամային սուբսիդիաների կազմալուծումը, առաջ բերելով շրջանառության միջոցների անբավարարություն, պատճառ է դառնում դրամական ճգնաժամի, ինչն էլ ավելի է սրում վարկային ճգնաժամը:

Որպես դրամական միջոցների անբավարարության խուսափման և ճգնաժամի մեղմացման ու տնտեսական պայմանների առողջացման միջոց հաճախ նշվում է վարկային կազմակերպությունների և պետության կողմից շրջանառության միջոցների քանակության վաղօրոք ավելացումը, և խոշոր ֆիրմաներին վարկ տալու միջոցով վստահության վերականգնումը: Այս երկու միջոցներն էլ ուղղված են վարկային հարաբերությունների լիկվիդացմանը. մի դեպքում, շրջանառության նոր միջոցների թողարկումը ենթադրում է ազատ կապիտալի ստեղծումը ապագա-

---

[1] Главная книга о кризисе, М., 2009, с.207.
[2] Ռ.Ն. Սարինյան, Արդի հայ տնտեսագիտության տեսություն, գիրք 3, Եր., 2011, էջ 52-56:
[3] А. Аганбегян, Кризис: беда и шанс для Росии, М., 2009, с.49-50.

յում, մյուս դեպքում, ապրանքների և դրամային պահանջների վերածումը կանխիկ փողի օժանդակում է տնտեսական շրջանառությանը: Ճգնաժամի թեժ պահին վարկային հարաբերությունների հարկադրական լիկվիդացումն էլ իր հերթին կարող է կազմալուծել տնտեսական կյանքը:

Ելնելով նրանից, որ վարկային ճգնաժամը բարդացվում է դրամականով, որի առկայությունը վարկայինի հետ մեկտեղ տնտեսական ճգնաժամի գագաթնակետն է, առաջին հայացքից թվում է, թե տնտեսական ճգնաժամերի դրսևորման հիմքը կազմում են ճգնաժամերի հենց այս երկու տեսակները, մինչդեռ «դրամական և վարկային ճգնաժամերը լոկ արտադրության և բաշխման գործընթացների խախտումներն արտացոլող երկրորդական զուգահեռ երևույթներ են»[1]: Բայց և այնպես, դրանք գրեթե միշտ թողնում են իրենց բնորոշ արտաքին հետքը տնտեսական ճգնաժամերի վրա:

Հիմնվելով անցյալի այն փաստի վրա, որ բանկային գործի վարման մեջ անփորձությունը և, հատկապես, էմիսիոն բանկերի վատ կազմակերպումը պատճառ են դարձել վարկի չարաշահման և վարկային ճգնաժամերի սրման, դեռ XX դարասկզբին որպես դրա դեմ պայքարի միջոց նշվել է ամբողջ դրամական և վարկային շրջանառությունը վերահսկող կենտրոնական բանկերի ստեղծումը, ինչպես նաև տոմսակների թողարկման կենտրոնացումն ու պետականորեն կանոնակարգումը, ինչը ազգային վարկին տալով միակերպ կառավարում՝ կմեղմացներ ճգնաժամի ընթացքը[2]: Ինչպես վկայում է տնտեսական պատմությունը, բոլոր միջոցառումներն էլ ուղղվում են վարկային ճգնաժամերի մեղմացմանը, և ինչպես մեկ ու կես դար առաջ, այնպես էլ հիմա բացակայում է վերջնական կարծիքը ճգնաժամերի առաջացման պատճառների, դրսևորումների, երաշխավորվող միջոցառումների արդյունավետության մասին[3], որքանով «Օրենքն ու սովորույթները չեն կարող լիովին պաշտպանել մարդուն գայթակղություններից և կանխել բոլոր չարաշահումները: Տնտեսական կազմակերպությունն իր մեջ թաքցնում է պահեր, որոնք տանում են վարկի չարաշահմանը և ստեղծում բարդ իրավիճակներ ինչպես այդ, այնպես էլ տնտեսական կյանքի մյուս բնագավառներում»[4]:

Ակամա հիշում ես Ի.Նյուտոնի այն խոսքերը, թե «Չպետք է ընդունել բնության երևույթների բացատրության համար ավելին այն պատճառներից, որոնք ճշմարիտ են ու բավարար: Բնությունը շատ պարզ է և իրերի պատճառների ավելորդ շռայլություններ չի անում»:

Лиана Арутюнян

КРЕДИТНЫЕ КРИЗИСЫ: ЗАМЕЧАНИЯ

Аннотация

Известно, что кредитная экономика облегчает оборот ценностей, позволяет с меньшими затратами осуществлять сделки, тем самым обеспечивая высокую мобильность капитала. Одновременно, она представляет собой довольно серьезную опасность для экономики, в частности, с точки зрения стагнации денежного оборота, нормального хода исполнения платежных обязательств и, в конечном счете, нарушения ритма производственного процесса.

Liana Harutyunyan

CREDIT CRISIS: REMARKS

Abstract

It is known, that the economy fueled by the credit boom makes the circulation of assets easier, and makes transactions less expensive, thus increasing the mobility of capital. However, it could be a serious threat to the economy: stagnation in the circulation of money; obligations regarding debt service; and finally distortion of effective production processes.

---

1 M.Bouniatian, Wirtschaftskrisen und Ueberkapitalisation, München, 1908, p.68.
2 М.Бунятян, Экономические кризисы, М., 1915, с.36 - 37.
3 Վ. Հարությունյան, Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ, Եր., 2009, էջ12:
4 M.Bouniatian, Wirtschaftskrisen und Ueberkapitalisation, München, 1908, p.30.

ՄՀԵՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու

ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Կանխիկ դրամը համարվում է միակ օրինական վճարամիջոցը, որը հնարավորություն է տալիս արագ իրականացնել քաղաքացիների միջև անհրաժեշտ գործարքները և չի պահանջում լրացուցիչ վճարային համակարգերի կամ բանկային տեխնոլոգիաների առկայություն: Այդ իսկ պատճառով անկանխիկ վճարամիջոցների շեշտակի տարածման պայմաններում չի նվազում նաև կանխիկ դրամի դերը: Կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ անկախ երկրների առանձնահատկություններից այս ոլորտում առկա են մի շարք խնդիրներ և զարգացումներ, որոնք բնորոշ են բոլորին: Մեր կողմից ուսումնասիրվել են այն հիմնական խնդիրները և գործոնները, որոնց կարգավորման համար առաջադրվող լուծումներն ու գործողություններն էական ազդեցություն կարող են ունենալ կանխիկի շրջանառության արդյունավետ կազմակերպման վրա:

Հիմնական խնդիրը, որի շուրջ առաջարկում ենք կենտրոնացնել ուշադրությունը՝ կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման համար պահանջվող ծախսերի աճի միտումն է: Այս ծախսերի հիմնական ուղղությունները կապված են դրամանիշերի թողարկման, պահպանության, կանխիկ դրամի վերահաշվման, տեսակավորման և հաճախորդների սպասարկման հետ: Պահանջվող ծախսերի աճի միտումը զսպելու նպատակով առաջարկում ենք առաջին հերթին միջոցներ ձեռնարկել դրամանիշերի թողարկման համար պահանջվող ծախսերի նվազեցման ուղղությամբ: Նշված խնդրին հասնելու համար կարևոր գործոն է համարվում շրջանառության մեջ դրամանիշերի «կյանքի» տևողության երկարացումը, որը կբերի դրամանիշերի թողարկման ծավալների կրճատմանը:

Վերջին տարիների ընթացքում դրամանիշերի «կյանքի» տևողության երկարացման համար կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման համաշխարհային պրակտիկայում արձանագրված նորարարությունների շարքին կարելի է դասել թղթադրամների փոխարեն պոլիմերային դրամների թողարկումը: Պոլիմերային դրամների թողարկման առաջին փորձերն իրականացվել են 1983 թվականին Կոստա-Ռիկայում, Հայիթիում և Մեն կղզում: Այս փորձերը անբավարար արդյունքներ ունեցան, քանի որ պոլիմերային դրամների վրայից տպագրման համար կիրառված ներկանյութերը հեշտությամբ մաքրվում էին:

Պոլիմերային դրամների լայնածավալ շրջանառության պատմության սկիզբը կարելի է համարել 1988 թվականը, երբ Ավստրալիայի Ռեզերվային բանկի կողմից թողարկվեց 10 ավստրալիական դոլար անվանական արժեքով պոլիմերային դրամը: 1992 թվականին 5, 20 և 50 ավստրալիական դոլար անվանական արժեքով թղթադրամները ևս փոխարինվեցին պոլիմերային դրամներով: 1996 թվականին թողարկելով 100 ավստրալիական դոլար անվանական արժեքով պոլիմերային դրամները Ավստրալիան ամբողջությամբ կանխիկ դրամաշրջանառության թղթադրամները փոխարինեց պոլիմերային դրամներով:

Ավստրալիայի փորձը ցույց տվեց, որ պոլիմերային դրամները ի տարբերություն թղթադրամների իրենց որակական հատկանիշներից ելնելով շրջանառության մեջ կարող են օգտագործվել նվազագույնը 3-ից 4 անգամ ավելի երկար ժամանակահատվածում: Պոլիմերային դրամների շրջանառության արդյունքում պարզ դարձավ, որ դրանք լավ են դիմակայում խոնավ բնակլիմայական պայմաններին, թղթադրամների համեմատ վատ են կլանում շրջակա միջավայրի ազդեցությունները, ինչպես նաև համեմատաբար քիչ են պատռվում կամ վնասվում:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թղթադրամները շրջանառության համար ոչ պիտանի դասելու հիմնական պատճառը կեղտոտվածությունն է: Շրջանառության համար ոչ պիտանի դասված թղթադրամների ավելի քան 80%-ը կազմում են կեղտոտված թղթադրամները: Ավստրալիայում, ինչպես նաև այլ երկրներում պոլիմերային դրամների շրջանառության փորձը ցույց է տալիս, որ դրանք թղթադրամների համեմատ ավելի ուշ են կեղտոտվում, որն էլ կարևոր գործոն է համարվում երկարաժամկետ հատվածում շրջանառության համար պիտանելիության համար:

Ավստրալիայի փորձից ելնելով մի շարք երկրներ թղթադրամների ամբողջ շարքը կամ առանձին անվանական արժեքներ փոխարինեցին պոլիմերային դրամներով: Պոլիմերային դրամներ են թողարկել Ինդոնեզիան, Թայլանդը, Նոր Զելանդիան, Բրազիլիան, Ռումինիան, Նիկարագուան, Բանգլադեշը, Նիգերիան, Հյուսիսային Իռլանդիան, Բրունեյը, Պապուա-Նոր Գվինեան, Չիլին, Պարագվայը, Չինաստանը, Դոմինիկյան Հանրապետությունը, Սինգապուրը, Գվատեմալան, Հոնդուրասը, Հոնկոնգը, Շրի-Լանկան, Թայվանը, Ինդոնեզիան, Քուվեյթը, Մալազիան, Վիետնամը, Մեքսիկան, Զամբիան, Նեպալը և այլն:

Ներկա ժամանակաշրջանում թղթադրամները ամբողջությամբ պոլիմերային դրամներով փոխարինման ծրագիր է իրականացնում Կանադան: Կանադայի կառավարության որոշումով թղթադրամները պոլիմերային դրամներով փոխարինելու գործընթացը պետք է իրականացվի երկու տարվա ընթացքում: 2011 թվականի նոյեմբերին շրջանառության մեջ դրվեցին 100 կանադական դալար անվանական արժեքով պոլիմերային դրամները, 2012 թվականին 50 դոլարանոցները, իսկ 2013 թվականին ավելի փոքր անվանական արժեքները:

Պոլիմերային դրամների կիրառման վերաբերյալ աշխատանքներ են տարվում նաև Անգլիայի բանկի կողմից, ըստ որի նախատեսվում է 2016-2017 թվականներից սկսել դրանց շրջանառությունը:

Նշված երկրների փորձը ցույց է տալիս, որ պոլիմերային դրամների արտադրությունը, ի համեմատություն թղթադրամների, շուրջ երկու անգամ ծախսատար է, սակայն հաշվի առնելով շրջանառության համար առավել երկար պիտանիության ժամկետը, նախնական գնահատականներով կարող ենք ասել, որ պոլիմերային դրամներով շրջանառության կազմակերպումը տնտեսապես արդյունավետ է:

Տնտեսական արդյունավետության վերաբերյալ վերջնական գնահատական ստանալու համար մենք առաջարկում ենք խնդիրը դիտարկել ամբողջական հարթության մեջ: Թղթադրամները պոլիմերային դրամներով փոխարինելու համար անհրաժեշտ ծախսերի շարքում դրամների արտադրության ծախսերից բացի պետք է հաշվի առնել դրանց վերահաշվման, տեսակավորման, հնամաշ դրամների ոչնչացման և ոչնչացված զանգվածի թափոնների օգտագործման, բանկոմատների և կանխիկ դրամով աշխատող այլ սարքավորումների ադապտացման հետ կապված ծախսերը:

Արժեքների պահպանության, կանխիկ դրամի վերահաշվման, տեսակավորման և հաճախորդների սպասարկման ոլորտում ծախսերի նվազեցման նպատակով կարևորում ենք կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման համակարգի օպտիմալացումը և կանխիկ դրամով գործառնությունների էլեկտրոնացումը:

Հաջորդը, որի շուրջ կցանկանայինք կենտրոնացնել ուշադրությունը՝ տեխնիկական առաջընթացի գործոնն է, որի արդյունքում լայնածավալ տարածում են ստացել կանխիկ դրամի ավտոմատ գանձման (տրամադրման) սարքերը: Կանխիկի սպասարկման տեխնիկական միջոցների աշխատանքի անընդհատությունն ապահովելու համար կենտրոնական բանկերից պահանջվում է թողարկել ավտոմատ սարքերի կողմից ճանաչելի և միասնական չափանիշներին համապատասխանող դրամներ: Բացի այդ, թողարկվող դրամանիշերը պետք է համապատասխանեն ժամանակակից դրամներին ներկայացվող հիմնական պահանջներին.

- Հստակ ներկայացնեն թողարկող երկիրը և անվանական արժեքը,
- Չափերը և անվանական արժեքները լինեն հարմարավետ գնվող ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումների իրականացման համար,
- Քաղաքացիների համար լինեն հեշտ ճանաչելի,
- Ունենան մեքենաների միջոցով իսկությունը ճանաչելու, հաշվելու, տեսակավորելու հնարավորություն,
- Շրջանառության համար ապահովեն պիտանիության համեմատաբար երկար ժամկետ (կյանքի տևողություն),
- Քաղաքացիներին ներշնչեն վստահություն:

Տեխնիկական առաջընթացի պայմաններում շատ վայրերում գանձապահի գործառույթները ստանձնում են ավտոմատ համակարգերը, որոնք դրամաշրջանառության կազմակերպման նորագույն տարրերից մեկն են համարվում: Այս պարագայում մեծանում է նաև դրամանենգության հետ կապված ռիսկերը: Մեր կարծիքով դրամանիշերի պաշտպանական հատկանիշերի

բարելավմանը զուգահեռ անհրաժեշտ է զանգվածային լրատվամիջոցներով պարբերաբար մատչելի տեղեկատվություն տրամադրել հասարակությանը և վերապատրաստել գանձապահներին: Արդյունքում կանխիկ դրամաշրջանառության որոշակի փուլերում մարդ-մարդ փոխհարաբերությունը փոխարինվում է մարդ-«ավտոմատ գանձապահ» փոխհարաբերության:

Կանխիկ դրամի սպասարկման տեխնիկական միջոցների բազմազանության պայմաններում կարևորում ենք նաև կենտրոնական բանկերի կողմից նման սարքերի վերաբերյալ որոշակի պահանջների սահմանումը: Մասնավորապես կանխիկ դրամի իսկության ստուգման նվազագույն տեխնիկական պահանջների, սարքերի անվտանգության վերաբերյալ և այլն:

Կարևոր խնդիրների շարքին կարելի է դասել նաև կանխիկ դրամի փոխադրումների (ինկասացիայի) կազմակերպումը: Կանխիկ դրամի ինկասացիայի իրականացման համար հիմնականում պահանջվում են զրահապատ և տեխնիկապես հագեցած փոխադրամիջոցներ: Բացի այդ, փոխադրումների ընթացքում առկա ռիսկերի կրճատման համար պարտադիր պայման է համարվում փոխադրումների ապահովագրումը: Մշտական քննարկման առարկա է նաև ինկասացիայի համար սահմանվող սակագները: Բացի այդ, անկանխիկ վճարամիջոցների զարգացմանը զուգահեռ հարաբերական առումով նվազում է առևտրի ու սպասարկման ոլորտում կանխիկ դրամով իրականացվող վճարումները: Ապագա զարգացումների առումով կարևոր է դիտարկել նաև ինկասացիոն կազմակերպությունների կողմից իրականացվելիք աշխատանքների հնարավոր ծավալների փոփոխությունների միտումները: Նշենք նաև, որ խնդիրը միանշանակ չէ, քանի որ կանխիկ դրամը առօրյա գնումների համար դեռևս համարվում է ամենանախընտրելի վճարամիջոցը: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ առևտրի ու սպասարկման կետերի համար պլաստիկ քարտերով իրականացվող վճարումների համար վճարվելիք սակագները ևս զգալի են և ունեն աճի միտում:

Կանխիկ դրամով մեկ գործարքի համար միջին հաշվով առևտրի ու սպասարկման կետերի համար Անգլիայում պահանջվում է 2 պենս, դեբետային քարտերով մեկ վճարման համար՝ 8 պենս: Միջին հաշվով կրեդիտային քարտերի օգտագործման դեպքում՝ առևտրի ու սպասարկման կետերը կանխիկի սպասարկման սակագների համեմատ ավել են վճարում ավելի քան 17 անգամ:

Մեր կարծիքով ինկասացիոն ծառայությունների գործունեության համար պետք է ապահովել մրցակցային դաշտ: Կարևորում ենք նաև խոշոր առևտրի ու սպասարկման կետերի կանխիկ հասույթների ամենօրյա ինկասացումը:

Мгер Мурадян

ЗАДАЧИ ОРГАНИЗАЦИИ НАЛИЧНО-ДЕНЕЖНОГО ОБРАЩЕНИЯ И ПУТИ ИХ РЕШЕНИЯ

Аннотация

В результате исследования международного опыта организации налично-денежного обращения выявлен ряд задач, нуждающихся в постоянном внимании и обсуждении. Для решения представленных в данной статье задач предложены некоторые подходы и меры, которые могут быть применимы в различных странах, а также в Республике Армения.

Mher Muradyan

ISSUES ON HANDLING MONEY CIRCULATION FUNCTION AND RESPECTIVE APPROACHES TO ADDRESS THEM

Abstract

The study of best practices worldwide applied to handle money circulation function identifies various issues that need to be closely monitored and addressed. The article proposes specific approaches and measures that the author think can address the above-stated issues both in other nations and in the Republic of Armenia.

ԳԱՌՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգի ձևավորման գործընթացը սկիզբ առավ 1991 թվականից: Շուկայական հարաբերությունների ձևավորման և հետագա զարգացման խնդիրները ենթադրում էին նոր հարկային համակարգի ձևավորում, որը կոչված պետք է լիներ իրավական կարգավորում մտցնել օրեցօր զարգացող հասարակական հարաբերություններում, անհրաժեշտ պայմաններ ապահովել տնտեսական լայնածավալ բարեփոխումների իրականացման համար:

Գոյություն ունեն հարկային համակարգի կազմակերպման կարևորագույն, առանցքային սկզբունքներ, որոնք մեծապես կանխորոշում են պետության հարկային քաղաքականության՝ իր առջև դրված նպատակներին հասնելու ունակությունը: Ըստ այդմ էլ, յուրաքանչյուր հարկային համակարգի համար կարևոր է, որ այն կառուցվի արդարության և արդյունավետության սկզբունքների զուգորդմամբ, լինի ճկուն, համապատասխանի երկրում առկա տնտեսական իրավիճակին, լինի պարզ, հարկատուների համար հասկանալի և ընդունելի, համահունչ լինի պետության տնտեսական քաղաքականության հետ[1]:

Տնտեսվարման ներկայիս ժամանակահատվածում գործնական լայն կիրառություն է ստացել հարկային համակարգի կառուցման հետևյալ սկզբունքները:

- պարտադիր,
- արդարության, ըստ որի տարբերում են հորիզոնականը և ուղղահայացը,
- որոշվածության,
- հարկատուներին նպատակահարմարության,
- խնայողության,
- համամասնության,
- միանգամյա հարկման,
- կայունության,
- օպտիմալության,
- միասնության:

Հարկային համակարգի կազմավորման թվարկված սկզբունքները հաշվի են առնվել նաև ՀՀ-ում հարկային համակարգի հիմքերը դնելուց, երբ 1992 թվականին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության հարկերի և տուրքերի մասին» օրենքը, որով օրենսդրորեն ամրագրվեցին հարկեր ու տուրքեր հասկացությունները, սահմանվեցին դրանց տեսակները[2]: Ըստ այդմ սահմանվեցին հետևյալ հարկատեսակները և տուրքերը՝ 1. շահութահարկ, 2. եկամտահարկ, 3. ակցիզային հարկ, 4. ավելացված արժեքի հարկ, 5. սոցիալական հարկ, 6. հողի հարկ, 7. մասնագիտական հարկ, 8. գույքահարկ, 9. բնապահպանման հարկ, 10. ճանապարհային հարկ պետական տուրքեր՝ իրավաբանական և այլ ծառայությունների համար, մաքսատուրքեր՝ արտահանվող և ներմուծվող ապրանքների համար, տեղական հարկեր և տուրքեր:

Հարկ է նշել, որ հետագա մի քանի տարիների ընթացքում ակնհայտ դարձավ հարկային համակարգի բարեփոխման անհրաժեշտությունը, ինչի արդյունքում օրենսդրությունում իրականացվեցին փոփոխություններ և լրացումներ, ընդունվեցին այլ կարևորագույն օրենքներ ևս, որոնք նպատակ էին հետապնդում ամբողջացնելու ՀՀ հարկային օրենսդրությունը: Այս ամենը շատ կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ-ում հարկային համակարգի ձևավորման համար և

---

[1] Բաղդասարյան Վ. Գ., ՀՀ-ում գործող ուղղակի հարկատեսակները, Եր., «Տնտեսագետ», 2007, էջ 22:
[2] ՀՀ օրենքը «Հարկերի և տուրքերի մասին«, Եր., 1992:

հարկային օրենսդրության ելակետը հանդիսացավ «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, ընդունված Ազգային ժողովի կողմից 1997 թվականի ապրիլի 14-ին[1]:

ՀՀ հարկային օրենսդրության 12-րդ հոդվածի հանրապետությունում սահմանված են հետևյալ հարկատեսակները.

1. շահութահարկ,
2. եկամտահարկ,
3. ավելացված արժեքի հարկ,
4. ակցիզահարկ,
5. գույքահարկ,
6. հողի հարկ:

Հանրապետության հարկային համակարգի ձևավորման ճանապարհին կարևոր քայլերից կարելի է համարել հիմնական հարկատեսակների հետ կապված հարաբերությունները կանոնակարգող նոր օրենքների ընդունումը: Դրանք են «Շահութահարկի մասին», «Եկամտահարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին», «Ակցիզահարկի մասին», «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքները: ՀՀ հարկային համակարգի բարեփոխումների նոր փուլի ուշագրավ քայլերից կարելի է համարել 2000 թվականի հուլիսի 1-ից գործողության մեջ մտած «Պարզեցված հարկի մասին» օրենքը: Պարզեցված հարկը ձեռնարկատիրական գործունեության համար պետական բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հարկ է:

Հարկային բարեփոխումների 2008-ից 2012 թվականների համար նախատեսված նախագծում իրականացվում են հարկատեսակների փոփոխություն, և ՀՀ հարկային համակարգում ներառված են հետևյալ հարկատեսակները՝

1. շահութահարկը,
2. շրջանառության հարկը,
3. եկամտահարկը,
4. ավելացված արժեքի հարկը,
5. ակցիզային հարկը,
6. գույքային հարկերը, որի մեջ մտնում են գույքահարկն ու հողի հարկը,
7. հաստատագրված վճարները,
8. արտոնագրային վճարները[2]:

2012թ. հունվարի մեկից ուժի մեջ են մտել մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք վերաբերում են հարկերի, շահութահարկի, եկամտահարկի, ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենքներին, ինչպես նաև մի շարք այլ օրենքների:

Հարկերի մասին օրենքում հիմնական փոփոխություններն են՝ ամբողջությամբ վերանայվել է օրենքի հոդված 26-ը, որը վերաբերում է ապօրինի գործունեությանը: Այժմ ապօրինի գործունեությամբ զբաղվելու համար առաջին անգամ խախտումը արձանագրելու դեպքում տուգանքը սահմանված է իրացման շրջանառության 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 200 հազ. դրամից, 1 տարվա ընթացքում երկրորդ անգամ արձանագրվելու դեպքում տուգանքը սահմանված է իրացման շրջանառության 100 տոկոսի չափով, իսկ նվազագույն տուգանքը դառնում է 500 հազ. դրամ: Արմատական փոփոխությունների է ենթարկվել հոդված 28-ը, որն այլևս դադարում է ստուգման հոդված լինելուց (միայն որևէ կոնկրետ գործարքի գծով կարող է իրականացվել առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքի ստուգում, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, ՀՕ-310-Ն, 07.12.2011), խախտումները արձանագրվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելով: Հասույթի գիրքը այլևս չի կիրառվում, իսկ առաքման գիրքը փոխարինվում է առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանք-

[1] ՀՀ օրենքը «Հարկերի մասին», Եր., 1997:
[2] http://www.taxservice.am

ների գրանցման (հաշվառման) գրքով, որում գրանցվում են տեղափոխվող ապրանքները (արտադրանքները) ուղեկցող փաստաթղթերը: Ընդ որում, հարկ է նշել, որ դրա վարումը պարտադիր է և՛ ԱԱՀ վճարող չհամարվողների, և՛ ԱԱՀ վճարող համարվողների համար, սակայն հարկային հաշիվների գրանցումը գրքում պարտադիր չէ (ՀՀ-ում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման և գրանցման (հաշվառման) կարգի 13-րդ կետ): Հաջորդ հիմնական փոփոխությունը «Հարկերի մասին» օրենքում վերաբերում է գերավճարների հաշվանցման և վերադարձման հարցերի կարգավորմանը[1]:

Շահութահարկի մասին օրենքում հիմնական փոփոխությունն է՝ փոխվել է շահութահարկի կանխավճարի դրույքաչափը: Նախկին մեկ վեցերորդի փոխարեն այժմ հարկատուները եռամսյակային կտրվածքով պետք է վճարեն նախորդ տարվա փաստացի շահութահարկի նկատմամբ հաշվարկված 18.75 % շահութահարկի կանխավճար, որը տարեկան կկազմի նախորդ տարվա շահութահարկի 75 %-ը (75 / 4 = 18.75)[2]:

«Եկամտահարկի մասին» օրենքում փոփոխության է ենթարկվել եկամտահարկի հաշվարկման սանդղակը: Այժմ 2 մլն-ից ավել եկամուտ ունեցող անձինք կվճարեն 392 հազ. դրամին գումարած 2 մլն. գերազանցող գումարի 25 տոկոսը (սոց. վճարը, որը աշխատողների վճարման ուղղված միջոցներ այսուհետև ԱՎՈՒՄ-ի՝ 2 մլն. գերազանցելու դեպքում հավասար կլինի 60 հազ. գումարած 2 մլն. դրամը գերազանցող գումարի 8 տոկոս, և այլ նվազեցումները կատարելուց հետո): Ինչպես շահութահարկի դեպքում, այստեղ նույնպես փոխվել է կանխավճարների հաշվարկման դրույքաչափը՝ նախկին մեկ վեցերորդի փոխարեն 18.75 %[3]:

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում հիմնական փոփոխություններ՝ որոշ ապրանքների համար բարձրացել է մաքսատուրքը: Փոփոխության է ենթարկվել օրենքի 6.1 հոդվածը, մասնավորապես՝ հանվել է կրեդիտների հաշվին հետաձգված ԱԱՀ-ն մարելու հնարավորությունը: Դրա փոխարեն հարկ վճարողը կարող է իր հայեցողությամբ ներմուծման պահին կամ հետագայում հրաժարվել հետաձգման հնարավորությունից ինչպես ամբողջ գումարի չափով, այնպես էլ մասնակիորեն: Դա կիրառելի կարող է լինել այն դեպքերում, երբ, օրինակ, հարկ վճարողին հայտնի է, որ ներմուծված ապրանքը օտարվելու է, կամ օտարվելու է դրա մի մասը: Փոխվել է մոտեցումը կոմիսիայի և գործակալության հիմունքներով իրացումների նկատմամբ:

Անհատույց կամ մասնակի հատուցմամբ իրացման դեպքում ԱԱՀ-ով հարկման շրջանառություն է համարվում գործարքի իրական արժեքի 80 %-ը:

Խստացվել է մոտեցումը անմիջական ներմուծող և անմիջական արտադրող հանդիսացող սուբյեկտների համար, որոնց շրջանառությունը առանց ԱԱՀ հաշվետու ամսվա կտրվածքով գերազանցում է 100 մլն. դրամը, եթե հաշվետու ժամանակաշրջանը ամիս է, և 300 մլն. դրամը, եթե հաշվետու ժամանակաշրջանը եռամսյակ է: Եթե նշված սուբյեկտների՝ առանց հարկային հաշիվների կամ ուղեկցող փաստաթղթերի (որի նկատմամբ պահանջները սահմանվում են նույն՝ օրենքի 8-րդ հոդվածի 12-րդ կետով) շրջանառությունը գերազանցում է ընդհանուր շրջանառության 10 %-ը, ապա այդ շրջանառությունը ավելացվում է 20 %-ով, ապա նոր հարկվում ԱԱՀ-ով[4]:

Փոփոխությունները «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» օրենքում հետևյալն են՝ վարձու աշխատողները սոցիալական վճարումները 2012թ. հունվարի 1-ից հետո հաշվարկված ԱՎՈՒՄ-ի համար կատարվում են հետևյալ դրույքաչափերով՝ 3 % մինչև 2 մլն. ԱՎՈՒՄ-ի դեպքում, իսկ գերազանցող գումարի մասով՝ 60 հազ. գումարած գերազանցող

---

[1] ՀՀ օրենքը «Հարկերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին, ՀՕ-308-Ն, ընդունվել է 07.12.2011:

[2] ՀՀ օրենքը «Շահութահարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ՀՕ-301-Ն, ընդունվել է 29.11.2011:

[3] ՀՀ օրենքը «Եկամտահարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ՀՕ-299-Ն, ընդունվել է 29.11.2011:

[4] ՀՀ օրենքը «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ՀՕ-334-Ն, ընդունվել է 06.12.2011:

գումարի 8 %: Խստացվել է չգրանցված աշխատողներ ունենալու համար պատասխանատվությունը[1]:

Փոփոխություններ են արվել նաև «Հաստատագրված վճարների մասին» և «Արտոնագրային վճարների մասին» օրենքներում: Այսպիսով, 2012թ. հունվարի 1-ից հաստատագրված վճարով հարկվող հետևյալ գործունեությունները հարկվում են ընդհանուր կարգով.

- բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի գործունեություն,
- արդյունագործական ձկնորսության գործունեություն,
- համակարգչային խաղերի կազմակերպում,
- բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպում:

2012թ. ապրիլի 1-ից հաստատագրված վճարով հարկվող հետևյալ գործունեությունների համար պետք է վճարել արտոնագրային վճար և ստանալ արտոնագիր.

- հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն,
- հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեություն,
- վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն,
- ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեություն,
- ավտոկանգառների գործունեություն,
- թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում,
- բիլիարդ խաղի կազմակերպում:

Այս փոփոխությունները անչափ կարևոր նշանակություն ունեցան հարկային համակարգի հետագա կատարելագործման ուղղությամբ: Նշենք, սակայն, որ այս ամենից զատ, հարկային համակարգին բնորոշ են մի շարք հատկանիշներ, որոնք դրանց տարբերում են պետության մյուս՝ ոչ հարկային եկամուտների գանձման մեթոդներից: Հարկին բնորոշ են պարտադիր, անհատույց, նախապես սահմանված որոշակի չափերով ու ժամկետներով եկամուտներից պետությանը վճարումներ կատարելու հատկանիշներ կամ մեթոդներ: Ելնելով այդ հատկանիշներից՝ առաջանում է հարկային համակարգի մեխանիզմների մշակման ու գործնականում կիրառելու անհրաժեշտություն: ՀՀ հարկային համակարգի մեխանիզմների հիմքում ընկած են հետևյալ հասկացությունները.

- հարկի սուբյեկտ կամ հարկ վճարող,
- հարկի օբյեկտ կամ աղբյուր,
- հարկային միավոր,
- հարկի դրույքաչափ,
- հարկի վճարման ժամկետ,
- հարկային արտոնություններ:

Ինչպես յուրաքանչյուր համակարգի, այնպես էլ հարկային համակարգի գոյության և գործունեության առանցքային չափանիշը համակարգը կազմող տարրերի միջև փոխկապվածության և ամբողջականության ապահովման, համակարգի առջև դրված խնդիրների լուծման ունակությունն է: Այսինքն, հարկային համակարգը որոշակի բաղադրիչների օրգանական ամբողջությունն ու միասնությունն է, որոնց միջև կապերի ամրությունն ու ճկունությունը կանխորոշում են համակարգի կարճաժամկետ և ռազմավարական զարգացման հնարավորությունները, ինչպես նաև հարկային համակարգի հիմնական նպատակի՝ պետական հարկային քաղաքականության արդյունավետ իրականացման ապահովումը:

ՀՀ հարկային համակարգի բաղադրիչներն են նաև հարկային ու մաքսային մարմինները, որոնց գործունեությամբ էլ կանոնակարգվում է ոլորտը: Հարկային վարչարարության իրականացման ոլորտում կարևորում ենք ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) , ինչպես նաև առանձին հարկային վարչությունների դերն ու նշանակությունը:

[1] ՀՀ օրենքը «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ՀՕ-303-Ն, ընդունվել է 29.11.2011:

Нерсисян Гарник

ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ НАЛОГОВОЙ СИСТЕМЫ И ПУТИ ЕЕ РЕФОРМИРОВАНИЯ В РА

Аннотация

В Республике Армения процесс формирования налоговой системы начался с момента провозглашения ее независимости. Вопросы дальнейшего развития рыночных отношений требовали формирования новой налоговой системы, призванной осуществить правовое регулирование динамично развивающихся общественных отношений, обеспечение необходимых условий для осуществления широкомасштабных экономических реформ. В статье анализируется роль и значение законов РА «О налогах», «О прибыли», «О подоходном налоге», «Об акцизном налоге», «О налоге на добавленную стоимость», «О платежах по обязательному социальному обеспечению» и внесенные в них изменения, играющие важную роль в формировании и совершенствовании налоговой системы. Показана также роль налоговых и таможенных органов, являющихся неотьемлемой частью налоговой системы, регулирующих деятельность последней в области налогового администрирования, в частности, Комитета государственных доходов РА.

Garnik Nersisyan

THE PECULIARITIES OF FORMING A TAX SYSTEM AND THE REFORM OF THE SYSTEM IN THE REPUBLIC OF ARMENIA

Abstract

The process of forming tax system in the Republic of Armenia has started since the independence. The further development of the market economy required building a new tax system aimed at regulating dynamically growing social relations, ensuring required conditions for implementing large-scale economic reforms. The article analyzes the role and importance of the Law of the Republic of Armenia on Taxes, Profit Tax, Income Tax, Excise Tax, Value Added Tax, Compulsory Social Security Payments, and respective legislative changes (amendments and supplements) that played a crucial role in building and improving the tax system. The article addresses the role of customs and tax authorities as an integral part of the tax system regulating the activities of the latter one through tax administration, namely the State Revenue Committee of the Republic of Armenia.

ԱՄԱԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀՀ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Բնականոն կերպով գործող ֆոնդային շուկան կազմված է երկու հիմնական հատվածներից՝ կորպորատիվ արժեթղթերի շուկայից և պետական արժեթղթերի շուկայից: Հայաստանը դասվում է այն երկրների շարքին, որտեղ առավել ակտիվ գործում է պետական արժեթղթերի շուկան. ավելին, կարելի է պնդել, որ ՀՀ արժեթղթերի շուկայում հիմնական դերը պատկանում է հենց այդ շուկային: ՀՀ արժեթղթերի շուկայում գործարքների գերակշիռ մասը՝ ավելի քան 80%-ը, իրականացվում է պետական պարտատոմսերով: Չնայած այս հանգամանքին, մեր երկրում նույնպես կատարվում են քայլեր և միջոցառումներ արժեթղթերի շուկայի, մասնավորապես կորպորատիվ արժեթղթերի շուկայի կայացման և զարգացման ուղղությամբ: Այնուամենայնիվ, այդ շուկան դեռևս ունակ չէ լուծելու տնտեսության ֆինանսավորման արդյունավետ միջոց հանդիսանալու իր դասական առաքելությունը:

ՀՀ ֆինանսական շուկայի և, մասնավորապես, կորպորատիվ արժեթղթերի շուկայի հիմնախնդիրներն առաջացել են դեռևս արժեթղթերի շուկայի ձևավորման սկզբից: ՀՀ արժեթղթերի շուկայի ստեղծման հիմքը դրվեց Խորհրդային Միության փլուզումից հետո երկրում տեղի ունեցող տնտեսական ընդհանուր բարեփոխումների հետ՝ դրա համար թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ քաղաքական առումով ոչ այնքան նպաստավոր պայմաններում: Արդեն այդ ժամանակ առկա էին մի շարք խնդիրներ, որոնք բացասական ազդեցություն էին ունենում և առ այսօր իրենց հետքն են թողնում Հայաստանի արժեթղթերի շուկայի, հատկապես կորպորատիվ արժեթղթերի շուկայի զարգացման վրա: Հարկ ենք համարում նշել, որ մասնակի անհատույց սեփականաշնորհման արդյունքում բաժնետերեր դարձած բազմաթիվ անձինք առ այսօր չգիտակցելով իրենց՝ որպես բաժնետիրոջ հիմնական իրավունքներն ու պարտականությունները, նույնիսկ ամենատարրական դեպքերում չեն կարողանում պաշտպանել իրենց շահերը: Այդ են վկայում բաժնետիրական ընկերություններում հայտնաբերված խախտումները, բաժնետերերից ստացված դիմում-բողոքներ, ինչը փաստում է այն մասին, որ հայ իրականության մեջ դեռևս ցածր է հասարակության՝ բաժնետերերի, ներդրողների իրավագիտակցությունը, որն էլ իր հերթին օրենսդրական պահանջների բազմաթիվ խախտումների համար բարենպաստ պայմաններ է ստեղծում:

Հայաստանի կորպորատիվ արժեթղթերի շուկայի ներկա վիճակը բնութագրվում է գործարքների աննշան ծավալներով, գործիքակազմի պարզությամբ, դրա գործառնություններում բնակչության չնչին մասնակցությամբ: 2001-2005թթ. ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայում առկա էին միայն մասնավորեցված ընկերությունների բաժնետոմսեր, ըստ այդմ էլ այս շուկան մինչև 2005թ. ներկայացվում էր բաժնետոմսերի շուկայով:

Եթե մինչև 2001թ. կորպորատիվ արժեթղթերի շուկայում իրականացված գործարքների ծավալները, պայմանավորված մասնավորեցման տեմպերով, ինչպես նաև շուկայի մասնակիցների մեծ թվով, համեմատաբար զգալի էին, ապա 2002թ. սկսած՝ դրանք կտրուկ նվազել են: Իսկ ինչ վերաբերում է բաժնետոմսերի շուկայի կարևորագույն, շուկայի վիճակը բնութագրող ամենացայտուն «կապիտալացում» ցուցանիշին, ապա այն 2008թ. հասել է բավականին բարձր մակարդակի, սակայն համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցության հետևանքով 2009-2010թթ. նվազել է, որից հետո նորից վերականգնում է նախկին ծավալները՝ 2013թ. սեպտեմբերին գերազանցելով 63 մլրդ. դրամը: Այնուամենայնիվ՝ կապիտալացում/ՀՆԱ ցուցանիշը դեռևս չի գերազանցել 1.7 % (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ Բաժնետոմսերի շուկայական կապիտալացման ցուցանիշը 2008-2013թ. սեպտեմբերի դրությամբ[1]

	Ընդամենը կապիտալացում (մլն. ՀՀ դրամ)	Այլ թողարկողներ (մլն. ՀՀ դրամ)	Առաջին 5 ընկերություններն ըստ շուկայական կապիտա-լացման (մլն. ՀՀ դրամ)	Կապիտա-լացում/ՀՆԱ
2008թ.	53,991	436	53,554	1.51
2009թ.	53,097	944	52,153	1.66
2010թ.	52,620	2,785	49,836	1.44
2011թ.	53,847	1,844	52,003	1.38
2012թ.	53,332	2,011	51,321	1.28
09.2013թ	63,254	2,011	61,242	-

Աղյուսակից պարզ է դառնում, որ թեև վերջին տարիներին կապիտալացման մակարդակը առանձնապես չի փոփոխվել, սակայն կապիտալացում/ՀՆԱ ցուցանիշը գնալով նվազում է՝ մնալով բավականին ցածր մակարդակի վրա: Միևնույն ժամանակ տեղի է ունենում նաև կապիտալացման կենտրոնացման խորացում ընդամենը մի քանի ընկերություններում (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Առաջին հինգ ընկերությունների կապիտալացման տոկոսը ընդհանուր կապիտալացման ցուցանիշում[2]



Կարելի է միայն նշել, որ շուկայի կապիտալացման 40%-ից ավելին ապահովվում է «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի կողմից, որի կապիտալացման ցուցանիշը 2012թ. ընթացքում ըստ ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի տեղեկագրերի չի փոփոխվել: Բաժնետոմսերի շուկայի կապիտալացման հարաբերական ցուցանիշով Հայաստանը մի քանի տասնյակ անգամ զիջում է անցումային մյուս երկրների համապատասխան ցուցանիշին: Նշենք նաև, որ զարգացած բաժնետոմսերի շուկա ունեցող երկրներում կապիտալացման և ՀՆԱ-ի ցուցանիշները համադրելի մեծություններ են (օրինակ՝ ԱՄՆ-ում ցուցակված թողարկողների կապիտալացումը 2010թ. ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 117.5%, Մեծ Բրիտանիայում՝ 138.3%, իսկ Հոնգ Կոնգի բորսայինը՝ 1207.9%)[3]:

[1] Աղյուսակը կազմված է Նասդաք ՕԷՄԷՔՍ Արմենիայի տվյալների հիման վրա:
[2] Գծապատկերը կազմված է Նասդաք ՕԷՄԷՔՍ Արմենիայի տվյալների հիման վրա:
[3] http:/Data.worldbank. org/indicator/CM.MKT.LCAP.GD.ZS

ՀՀ արժեթղթերի շուկայի համար հատկանշական է բորսայական շուկայի չնչին բաժինը արժեթղթերով գործառնություններում: Բորսայական գործարքների ծավալների դինամիկայում օրինաչափություն չի նկատվում: Նշված երևույթը հիմնականում պայմանավորված է առանձին խոշոր գործարքներով, ինչը բաժնետիրական կապիտալների կենտրոնացված կառուցվածքի հետևանք է: Խոշոր գործարքների մեծ բաժինն է պայմանավորում նաև բորսայական գործարքների ծավալի և գործարքների քանակի դինամիկայի հաճախ ոչ համընթաց բնույթը: Ըստ գործարքների ծավալով առաջատար 5 ընկերությունների՝ արժեթղթերով կատարված գործարքների տեսակարար կշիռն ընդհանուր ծավալում 2012թ. գերազանցել է 71%-ը, մինչդեռ նշված ընկերությունների տեսակարար կշիռը բորսայական գործարքների ընդհանուր քանակի մեջ կազմել է ընդամենը 5%:

ՀՀ-ում բաժնետոմսերի թե՛ առաջնային, և թե՛ երկրորդային շուկան հավասարապես թերզարգացած են: Մինչև 2007թ. ՀՀ բաժնետոմսերի առաջնային շուկան ներկայացնում էր մասնավորեցման արդյունքը և առաջին անգամ միայն 2007թ. «Արարատբանկ» ԲԲԸ-ն սկսեց իրականացնել իր բաժնետոմսերի ուղիղ հանրային վաճառք՝ DPO (direct public offering): Թողարկված բաժնետոմսերը հասարակ (սովորական) անվանական, ոչ փաստաթղթային բաժնետոմսեր էին: Թողարկման ընդհանուր ծավալը կազմեց 381.500 հազ ՀՀ դրամ: Այնուհետև 2009թ. մարտի 3-ից մարտի 20-ը ընկած ժամանակահատվածում «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ն իրականացրեց ՀՀ-ում բաժնետոմսերի առաջին հրապարակային տեղաբաշխումը: Տեղաբաշխված բաժնետոմսերի քանակը 862,074 հատ էր, որոնք ձեռք են բերվել տեղական և օտարերկրյա 1 111 ներդրողների կողմից[1]: Սակայն, հարկ է նշել, որ այն իրենից IPO չէր ներկայացնում, քանի որ կատարվել էր արտաբորսայական շուկայի միջոցով:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 1554000 ՀՀ դրամ ծավալով երկրորդ թողարկումը տեղի է ունեցել երկու փուլով՝ ընկերության բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքով բաժնետոմսերի ձեռքբերմամբ (2010թ. նոյեմբերի 2-ից դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանում) և ազատ բաժանորդագրության միջոցով, որն ընթացել է 2010թ.-ից: Թողարկված բաժնետոմսերի ամբողջ ծավալը տեղաբաշխվել է[2]: 2011թ.-ից ֆոնդային բորսայում ցուցակվում են նաև «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի լրացուցիչ տեղաբաշխված թվով 1400000 հատ բաժնետոմսերը: Ներկայումս բորսայի Բ ցուցակում ընդգրկված են ընկերության 1000 ՀՀ դրամ անվանական արժեքով 7362074 հատ բաժնետոմսեր: Շուկա ստեղծողի կարգավիճակում «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ն ապահովում է բաժնետոմսերի անընդհատ երկկողմանի գնանշումներ՝ երաշխավորելով երկրորդային շուկայում «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի իրացվելիությունը և ներդրողների համար ստեղծելով ցանկացած պահին դրանք վաճառելու կամ գնելու հնարավորություն:

Այսքանով, սակայն, ՀՀ բաժնետոմսերի առաջնային շուկան 2007-2013թթ. սահմանափակվում է, նույնը կարելի է փաստել նաև երկրորդային շուկայի վերաբերյալ:

Բաժնետոմսերի երկրորդային շուկան տարեցտարի ավելանում է, այնուամենայնիվ, 2012թ. ՀՀ արժեթղթերի շուկայի գործիքներով կատարված գործարքների ծավալում միայն 8%-ն է իրականացվել բաժնետոմսերով: Պետք է նաև նշել, որ ՀՀ ում բաժնետոմսերի երկրորդային շուկայում իրականացված գործարքները հիմնականում պայմանավորված են կամ առանձին խոշոր գործարքներով, կամ մանր ներդրողների բաժնետոմսերի գնմամբ և դրանով իսկ բաժնետիրական կապիտալների առավել կենտրոնացմամբ: Բաժնետոմսերով առևտրի ծավալները վկայում են, որ բացակայում է դրանց նկատմամբ առաջարկի ու պահանջարկի որոշակի կայուն ծավալ, և աննշան է գործարքների իրականացման տնտեսական շահագրգռվածությունը:

---

[1] Տե՛ս «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի պաշտոնական կայք http://www.artsakhhpp.com

[2] Տե՛ս նույն տեղում:

Գծապատկեր 2

ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում 2009-2013թթ. ընթացքում բաժնետոմսերով կնքված գործարքների ընդհանուր ծավալը[1]



Գործարքը ֆոնդային բորսայում կնքելու դասական շարժառիթը արժեթղթերի լավագույն գնի ստացումն է, որը, սակայն, հայաստանյան շուկայում չի գործում այն պարզ պատճառով, որ բորսայական գործարքների գերակշիռ մասի համար և՛ գնորդը, և՛ վաճառողը նախապես հայտնի են, ինչը արժեթղթերի շուկայում արդար և արժանահավատ գնագոյացման համակարգի ձևավորման ամենաէական խոչընդոտներից է: Ուստի բրոքերի նպատակը ոչ թե արժեթղթերի վաճառքը շուկայում ձևավորված ամենաբարձր գնով կամ դրա ձեռքբերումը ամենացածր գնով իրացնելն է, այլ ինչ-որ գնով (կողմերի կողմից նախապես պայմանավորված) գործարքի կնքման կազմակերպումն է հենց տվյալ հաճախորդների միջև: Իսկ գործարքի իրական գինը տվյալ դեպքում կարող է էապես տարբերվել հրապարակվող (բորսայական) գնից: Հազվադեպ չեն նաև այն դեպքերը, երբ գործարքի առարկա մեկ բաժնետոմսի գինը սահմանվում է անվանական արժեքից տասնյակ անգամ ցածր կամ բարձր: Այս դեպքերը հերթական ապացույցն են այն բանի, որ բաժնետոմսերի շուկայում գնագոյացման մեխանիզմները բացակայում են: Այսպես, բորսայում 2004թ. ընթացքում գործարքի առարկա հանդիսացած 100 թողարկողի 101 դասի բաժնետոմսերից միայն 6 թողարկողի բաժնետոմսերի առավելագույն գինն է գերազանցել դրանց անվանական արժեքը, իսկ մնացած 86 թողարկողի բաժնետոմսերի դեպքում առավելագույն գինը փոքր է եղել անվանական արժեքից, ընդ որում, դրանցից 40-ի համար (46%)՝ 10-50 անգամ:

2012թ. ընթացքում բորսայում 8 թողարկողի բաժնետոմսերով կնքվել է 254 գործարք: Ընդ որում՝ գրեթե բոլոր դեպքերում բաժնետոմսերով գործարքները կնքվել են դրանց անվանական արժեքից խիստ տարբերվող գներով, բացառությամբ միայն «Արցախ Հէկ» ԲԲԸ-ի, որի բաժնետոմսերով գործարքները կնքվել են անվանական արժեքին գրեթե հավասար գնով (տե՛ս աղյուսակ 2):

[1] Գծապատկերը կազմված է Նասդաք ՕԷՄԷՔՍ Արմենիայի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 2

ՀՀ Բաժնետոմսեր թողարկող ընկերությունների բաժնետոմսերի գները 2012թ. ընթացքում[1]

Բաժնետոմս թողարկող ընկերություն	Անվանական արժեք/ՀՀ դրամ/	Միջին կշռված գին /ՀՀ դրամ/	Արժեթղթերի քանակ/հատ/
«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ	10000	320000	211
«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ	1000	1164.8	108168
«Արարատբանկ» ԲԲԸ	5000	11750	200
«Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ	2500	8469	9660
«Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ	5500	4050	24881
«Ալմաստ» ԲԲԸ	1000	600	33254
«Արփա-Սևան» ԲԲԸ	2500	50000	14
Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ	4000	500	752

Ինչպես կարելի է նկատել աղյուսակ 2-ից՝ գործարքների քանակն այնքան էլ շատ չէ, սակայն, քանի որ դրանք անվանական արժեքից բավականին բարձր գնով են իրականացվում, ծավալները դառնում են համեմատաբար նկատելի, որի հիման վրա էլ ձևավորվում է բաժնետոմսեր թողարկողների առաջին հնգյակը: Վերջիններիս բաժնետոմսերով գործարքների ծավալի տեսակարար կշիռը գործարքների ընդհանուր ծավալում գերազանցում է 94%-ը: Ընդ որում, ուսումնասիրելով ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի ամսական տեղեկագրերը, կարելի է նկատել, որ մինչև օրս բորսայում չի շրջանառվել այնպիսի բաժնետոմս, որով պարտադիր յուրաքանչյուր ամիս գործարք իրականացվի: Ուստի կարելի է եզրակացնել, որ բաժնետոմսեր թողարկողների առաջին հնգյակի բաժնետոմսերով գործարքների ծավալի տեսակարար կշիռը իրականում չի ապահովում բարձր իրացվելիություն, այլ շուկային տալիս է, այսպես կոչված, «օլիգոպոլիստական» բնույթ: Պետք է նկատել, որ այս վիճակին նպաստում է նաև բաժնետոմսերի շուկայում «մարքեթ-մեյքերի» ինստիտուտի պասիվությունը կամ գրեթե բացակայությունը. ՀՀ բաժնետոմսերի շուկայում միայն «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերն են գնանշվում «մարքեթ-մեյքերի» կողմից: Այս իրավիճակը խոչընդոտում է արդար գնագոյացմանը:

Ինչպես վերը պարզաբանվեց՝ ՀՀ բաժնետոմսերի շուկային բնորոշ են մի շարք թերություններ, որոնք խոչընդոտում են կորպորատիվ արժեթղթերի շուկայի զարգացմանը: Կորպորատիվ արժեթղթերի շուկայի հիմնախնդիրներից շատերն առաջացել են մեր երկրում արժեթղթերի շուկայի մասնավորեցմամբ ձևավորման իրավիճակից ելնելով: Այսպիսով, ՀՀ բաժնետոմսերի շուկայի հիմնախնդիրներն են.

- կապիտալացման ցուցանիշի կենտրոնացումը մի քանի ընկերություններում,
- հասարակության՝ բաժնետերերի, ներդրողների իրավագիտակցության ցածր մակարդակը,
- բորսայական առևտրին ներդրողների չնչին մասնակցությունը,
- բաժնետոմսերի թե՛ առաջնային, և թե՛ երկրորդային շուկաների հավասարապես թերզարգացածությունը,
- իրացվելի արժեթղթերի բացակայությունը,
- գործարքների աննշան ծավալները,
- գործիքակազմի պարզությունը,
- արդար և արժանահավատ գնագոյացման համակարգի բացակայությունը,
- բաժնետոմսերի շուկայում «մարքեթ-մեյքերի» ինստիտուտի պասիվությունը կամ գրեթե բացակայությունը:

Այս բոլոր հիմնախնդիրները խիստ փոխկապակցված են, և մեկի առաջացման հետևանքով ծագում են հաջորդները, ուստի դրանց հարթեցման և լուծման համար անհրաժեշտ են համալիր միջոցառումներ:

[1] Գծապատկերը կազմված է Նասդաք ՕԷՄԷՔՍ Արմենիայի 2012թ տվյալների հիման վրա:

Амалия Саргсян

СОВРЕМЕННОЕ СТОЯНИЕ И ПРОБЛЕМЫ РЫНКА АКЦИЙ РА

Аннотация

Нормально функционирующий фондовый рынок состоит из двух основных сегментов: рынка корпоративных ценных бумаг и рынка государственных ценных бумаг. Рынку акций РА присущ ряд недостатков, которые препятствуют развитию рынка корпоративных ценных бумаг. Большинство проблемотечественного рынка акций лежит в плоскости методом формирования рынка ценных бумаг.

Amalya Sargsyan

THE CURRENT STATE OF DEVELOPMENT OF THE SECURITIES MARKET IN THE REPUBLIC OF ARMENIA AND THE ISSUES FACED

Abstract

Efficiently functioning stock markets is composed of two main sub-markets: corporate securities and government bonds sub-markets. The Armenian stock market has several setbacks that prevent the development of the corporate securities market. Many of the issues the stock market is currently facing in our country are owing to methods and practices that are utilized by securities market.

ԼԻԱՆԱ ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հայցորդ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԵՎ ՀՀ-ՈՒՄ

Ֆոնդային շուկայում չարաշահումների իրականացումը խափանում է ազատ գնագոյացման մեխանիզմները, արժեթղթերով իրականացվող ազատ առևտրի սկզբունքները, թույլ չտալով բարեխիղճ ներդրողներին ընդունել որակավորված որոշումներ՝ մեծ վնասներ հասցնելով վերջիններիս և խաթարելով շուկայական տնտեսության կարևոր բաղկացուցիչներից մեկի հիմքերը: Այս խնդիրներն էլ նպաստել են զարգացած երկրներում արժեթղթերի չարաշահումների դեմ պայքարի օրենսդրական միջոցառումների հսկայական համակարգերի ստեղծմանը:

Գրեթե բոլոր զարգացած՝ հատկապես զարգացման անգլոսաքսոնական մոդել ունեցող երկրներում, մինչ 20-րդ դարը ֆոնդային շուկաների կարգավորումն իրականացվել է հենց իրենց՝ բորսաների կողմից: Սակայն 20-րդ դարի սկզբից պարզ դարձավ, որ ֆոնդային կարգավորումը հենց իր մասնակիցների կողմից չի ապահովում ներդրողների շահերի լիարժեք պաշտպանություն: Եվ ահա 30-ական թվականներին ԱՄՆ-ում առաջին անգամ ստեղծվեց պետական վերահսկողական մարմին՝ արժեթղթերի և բորսաների հանձնաժողով (Securities and Exchange Commission):

Ներկայումս, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի ուսումնասիրությունը, արժեթղթերի շուկայի չարաշահումների դեմ պայքարն իրականացվում է ֆինանսական շուկայի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից, որոնց վերապահված է իրավասությունների և գործիքների լայն շրջանակ՝ նպաստելու հնարավորինս արդյունավետ կազմակերպել արժեթղթերի շուկայի չարաշահումների դեմ պայքարը: Հայաստանի Հանրապետությունում այդ գործառույթը վերապահված է ՀՀ կենտրոնական բանկին[1]: Օտարերկրյա մի շարք պետությունների արժեթղթերի շուկայի չարաշահումների դեմ պայքարի իրականացման համար լիազորված մարմիններին վերապահվում են մի շարք իրավասություններ, որոնք ներկայացվում են ստորև բերվող աղյուսակ 1-ում:

[1] «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 39[1] հոդված:

Աղյուսակ 1

Արժեթղթերի շուկայում չարաշահումների դեմ պայքարի համար անհրաժեշտ իրավասությունները մի շարք երկրներում[1]

	«Համակարգի բնութագրիչներ»	Ֆրանսիա	Գերմանիա	Նիդեռլանդներ	Էստոնիա	Ֆինլանդիա	Մեծ Բրիտանիա	Ռուսաստանի Դաշնություն
1	Վերահսկող մարմին	«Ֆինանսական շուկայի վերահսկող մարմին (Autorité du marché financier)»	«Ֆինանսական վերահսկողություն իրականացնող դաշնային մարմին (Bundesanstalt für Finanzdiensteistungsaufsicht)»	«Ֆինանսական շուկաների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին (Authority for the Financial markets)»	«Ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմին (FSA)»	«Ֆինանսական վերահսկող մարմին (FIN-FSA)»	«Ֆինանսական ծառայությունների մարմին (Financial Services Authority)»	«Ֆինանսական շուկաների վերաբերյալ դաշնային մարմին (Федеральная служба по финансовым рынкам)»
2	Վերահսկողի իրավասություններ							
3	Տեղեկություններ և փաստաթղթեր պահանջելը և ստանալը, այդ թվում՝ երրորդ անձանցից	√	√	√	√	√	√	√
4	Բացատրություններ տալու համար անձանց հրավիրելը	√	√	√	√	√	√	√
5	Վերահսկողության իրականացում	√	√	√	√	√	√	√
6	Միջազգային համագործակցություն	√	√	√	√	√	√	√
7	Ակտիվների սառեցում						√	
8	Գործարքների կասեցում	√	√	√	√	√		√
9	Հեռախոսային և այլ հաղորդակցությունների վերաբերյալ տեղեկությունների ստացում, որը ներառում է ինչպես հաղորդակցության բովանդակության, այնպես էլ դրա այլ տվյալների ստացում	√			√		√	

[1] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հաշվի առնելով մի շարք երկրների առանձնահատկությունները և գործող կանոնները:

Ինչպես տեսանելի է աղյուսակից, արժեթղթերի շուկայի չարաշահումների դեմ պայքարի համար միջազգային պրակտիկայում լիազոր մարմիններին վերապահվող հիմնական իրավասություններն են՝

1. փաստաթղթերի և տեղեկությունների ստացումը (այդ թվում՝ երրորդ անձանցից),
2. բացատրություններ պահանջելը,
3. հեռակա վերահսկողության և տեղերում ստուգումների իրականացումը,
4. միջազգային համագործակցությունը,
5. արժեթղթերով առևտրի կասեցումը,
6. ակտիվների սառեցումը,
7. հեռահաղորդակցության տվյալների ստացումը:

Քննարկենք վերը թվարկված կետերը առավել մանրամասն:

Ուսումնասիրված բոլոր երկրներում վերահսկող մարմինները ինչպես վերահսկվող, այնպես էլ երրորդ անձանցից արժեթղթերի շուկայի ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ ցանկացած փաստաթղթեր և տեղեկություններ պահանջելու և ստանալու ուղղակի իրավասություն ունեն: Ընդ որում, այդպիսի պահանջի չկատարման դեպքում սահմանվում է պատասխանատվություն: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում, Գերմանիայում և Էստոնիայում սահմանված է տուգանք[1]: Միաժամանակ, վերահսկող մարմինները փաստաթղթեր և տեղեկություններ կարող են պահանջել նաև այլ պետական մարմիններից: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ վերահսկող մարմինը իրավասու է տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել և՛ պետական մարմիններից, և՛ իրավաբանական և ֆիզիկական անձանցից:

Ըստ աղյուսակի՝ մյուս իրավասությունը վերահսկվող անձանցից բացատրություններ պահանջելու գործընթացն է, որը նույնն է, ինչ փաստաթղթեր և տեղեկություններ պահանջելը, ինչպես արդեն ներկայացվեց վերևում[2]:

Բացի այդ, ուսումնասիրված բոլոր պետությունների օրենսդրությամբ, ինչպես նաև ԱՀՄԿ-ի սկզբունքների և ԵՄ հրահանգի համաձայն՝ վերահսկողին վերապահված է արժեթղթերի շուկայի չարաշահումների դեմ պայքարի շրջանակներում ինչպես տեղում ստուգումներ իրականացնելու, այնպես էլ հեռակա վերահսկողություն իրականացնելու իրավասություն[3]:

Ինչ վերաբերում է միջազգային համագործակցությանը, ապա ուսումնասիրված երկրների օրենսդրությունները դրույթներ են նախատեսում վերահսկող մարմնի կողմից օտարերկրյա վերահսկող մարմինների հետ համագործակցության վերաբերյալ: Մի շարք երկրներում հստակորեն կարգավորված են գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման շրջանակները: Այսպես, ՌԴ օրենսդրությամբ թույլատրվում է փոխանակել գաղտնի տեղեկատվություն (բացառությամբ պետական և հարկային գաղտնիքի), պայմանով, որ համագործակցող երկիրը կապահովի տեղեկատվության պահպանման համարժեք գաղտնիության մակարդակ: Իսկ, օրինակ, Գերմանիայի օրենսդրության համաձայն գաղտնի տեղեկատվությունը չի կարող տրամադրվել, եթե դա կարող է վնասել Գերմանիայի ինքնիշխանությանը, անվտանգությանը կամ հասարակական կարգին, կամ Գերմանիայում առկա է դատական գործ միևնույն իրավախախտման վերաբերյալ:

Աղյուսակում ներկայացված գրեթե բոլոր երկրների համապատասխան մարմինները օժտված են արժեթղթերի առևտրի կասեցման, ինչպես նաև ակտիվների սառեցման ընդհանուր իրավասությամբ: Վերջինս սահմանված է բազմաթիվ պետությունների օրենսդրությամբ: Այսպես՝ օրինակ Շվեդիայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի օրենսդրությամբ վերահսկողը կարող է

---

[1] "Report on Administrative Measures and Sanctions as well as the Criminal Sanctions available in member States under the Market Abuse Directive 2007"- The Committee of European Securities Regulators, Estonia Securities Market Act, Bundesanstalt fur Finanzedinstleistungsaufsicht, закон «О рынке ценных бумаг», Уголовный кодекс РФ.

[2] Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության (այսուհետ ԱՀՄԿ) իրավակիրառման վերաբերյալ 9-րդ սկզբունքը, ԵՄ 2003/6 Հրահանգի 12-րդ հոդվածի 2-րդ կետի (b) ենթակետի:
ԱՀՄԿ-ն ստեղծվել է 1983թ. և հանդիսանում է արժեթղթերի շուկաների համար միջազգային ստանդարտներ սահմանող կարևոր մարմին:

[3] ԱՀՄԿ իրավակիրառման վերաբերյալ 8-րդ սկզբունք, ԵՄ 2003/6 Հրահանգի 12-րդ հոդվածի 2-րդ կետի (c) ենթակետ:

դիմել դատարան ակտիվների սառեցման թույլտվություն ստանալու համար[1]: Ուշագրավ է, որ ԱՄՆ-ի օրենսդրությամբ վերահսկողի կողմից այս իրավասության իրականացումը հնարավոր է առանց դատարանի թույլտվության[2]:

Հաջորդ իրավասությունը՝ վերահսկողի կողմից հեռահաղորդակցության տվյալների ստացումը, որ ներկայացված է աղյուսակում, անմիջապես վերահսկողի կողմից հնարավոր է ոչ բոլոր երկրներում: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի օրենսդրությունը սահմանում է, որ վերահսկողն իր այդ իրավասությունը կարող է իրականացնել միայն քրեական գործի և միայն դատարանի համապատասխան որոշման առկայության դեպքում[3]: Իսկ Ֆինլանդիայի օրենսդրության համաձայն՝ այդ իրավասության իրականացումը հնարավոր է միայն ոստիկանության կողմից քրեական վարույթի իրականացման ընթացքում:

Ստացվում է, որ արժեթղթերի շուկայի դեմ պայքարի իրականացման արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից ելնելով, միջազգային պրակտիկայում համապատասխան վերահսկող մարմիններին տրվում է իրավասությունների լայն շրջանակ՝ առավել ամբողջական և համապարփակ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով: Վերջինս էլ արդյունավետ որոշումներ կայացնելու և համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու կարևոր հիմք է:

Ինչպես արդեն նշվել է հոդվածի սկզբում, ՀՀ-ում արժեթղթերի շուկայի չարաշահումների դեմ պայքարի իրականացումը վերապահված է ՀՀ ԿԲ-ին: Վերջինս վերը ներկայացված իրավասությունների մասով կարող է փաստաթղթեր և տեղեկություններ պահանջել վերահսկվող անձանցից, ինչպես նաև իրականացնել թե՛ տեղերում ստուգումներ, թե՛ հեռակա վերահսկողություն: Սակայն ի տարբերություն ՌԴ-ի կամ այլ երկրների, ՀՀ ԿԲ-ին վերապահված չէ իրավասություն՝ ձեռք բերել իր կողմից չվերահսկվող անձանց վերաբերյալ փաստաթղթեր և տեղեկություններ: Այս հանգամանքը կարող է հետագայում խոչընդոտ հանդիսանալ արժեթղթերի շուկայի չարաշահումների դեմ պայքարի արդյունավետ կազմակերպման հարցում, քանի որ անհրաժեշտ տեղեկատվության անհասանելիությունը կսահմանափակի հնարավոր չարաշահիչ դեպքերի բացահայտման հնարավորությունները, հետևաբար նաև դրանց կանխմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը:

Միջազգային համագործակցության մասով նշենք, որ «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ ԿԲ-ն իրավունք ունի համագործակցելու արժեթղթերի շուկայի օտարերկրյա կարգավորողների հետ: Այդ համագործակցությունը ներառում է կարգավորման առարկային վերաբերող տեղեկություններ հայթայթելն ու փոխանակելը, ինչպես նաև նման տեղեկություններ ստանալուն աջակցելը: ԿԲ-ն իրավունք ունի օրինական հիմքով իր տիրապետմանն անցած տեղեկությունները փոխանցել այդ մարմիններին՝ պայմանով, որ դրանց փոխանցումն օրենքին չի հակասում, փոխանցումից հետո կպահպանվի դրանց՝ օրենքով սահմանված գաղտնիության ռեժիմը, և այդ տեղեկությունները կօգտագործվեն բացառապես օրենքի խախտումները կանխելու կամ հետապնդելու նպատակով:

Հարկ է նշել, սակայն, որ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը միջազգային համագործակցությանն անդրադառնում է միայն 173-րդ հոդվածի 3-րդ մասում, ըստ որի՝ ՀՀ ԿԲ-ն հավաքագրում, պահպանում և օգտագործում է չարաշահումների վերաբերյալ տեղեկությունները և փաստաթղթերը բացառապես վերոնշյալ օրենքով սահմանված պարտականությունների կատարման և խախտումները հայտնաբերելու, իր պարտականությունները կատարելու և այլ երկրների իրավասու մարմինների հետ համագործակցելու նպատակներից ելնելով:

Այսպիսով, միջազգային համագործակցության ոլորտում ՀՀ օրենսդրությունն ունի հետևյալ թերացումները՝

առաջին՝ ՀՀ ԿԲ-ն լիազորված չէ արժեթղթերի շուկայի օտարերկրյա կարգավորողներին տրամադրել գաղտնիք պարունակող տեղեկություններ,

---

[1] Commission des Opérations de Bourse (COB)-France; Sweden's Criminal Code; Chapter 9, Section 9, Financial Instruments Trading Act (1991:980); Chapter 7, Section 1; Financial Services Act-UK.

[2] Court and Commission precedent-USA.

[3] FSMA - Financial Services and Markets Act 2000, FSA's Decision Procedure and Penalties Manual (DEPP).

երկրորդ՝ տեղեկությունները կարող են տրամադրվել այն պայմանով, որ դրանք կօգտագործվեն բացառապես օրենքի խախտումները կանխելու կամ հետապնդելու նպատակով:

ՀՀ ԿԲ-ն օժտված չէ նաև արժեթղթերի շուկայի չարաշահման մեջ կասկածվող անձանց ակտիվների սառեցման իրավասությամբ: ՀՀ օրենսդրությամբ ակտիվների սառեցման համանման գործողություններ նախատեսված են քրեական և վարչական դատավարությունների շրջանակներում:

Ինչ վերաբերում է նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների ու հեռախոսային խոսակցություններին, ապա ՀՀ-ում նշված գործընթացի վերահսկումն իրականացվում է միայն որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում կամ քրեական վարույթի առկայության դեպքում՝ քննչական գործողություն՝ դատարանի որոշման հիման վրա: Նշված իրավասությունը ներկայումս արժեթղթերի շուկայի չարաշահման դեպքերի մասով քրեական հետապնդման մարմինների կողմից չի կարող իրականացվել, սակայն դրա իրականացման համար բավարար է արժեթղթերի շուկայի չարաշահման քրեականացումը:

Ներկայացված խնդիրները լուծելու համար, հաշվի առնելով, որ ֆինանսական համակարգի վերահսկողությունը վերապահվում է ՀՀ ԿԲ-ին, առաջարկում ենք արժեթղթերի շուկայի չարաշահումների դեմ պայքարի ոլորտում ՀՀ ԿԲ-ին վերապահել պետական մարմինների հետ փաստաթղթեր և տեղեկություններ փոխանակելու իրավասություն՝ կատարելով համապատասխան փոփոխություն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում: Միևնույն ժամանակ, ՀՀ ԿԲ-ին ոչ վերահսկվող անձանցից տեղեկություններ և փաստաթղթեր ուղղակիորեն ձեռք բերելու իրավասության վերապահումն իր հերթին ևս կնպաստի արժեթղթերի շուկայում չարաշահումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը: Ինչպես նաև առաջարկում ենք մշակել պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու մեխանիզմներ այն դեպքերի համար, երբ անձը հրաժարվում է ներկայացնել դրանք:

Երկրորդ՝ առաջարկում ենք «Արժեթղթերի շուկայի մասին» և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ՀՀ ԿԲ-ին վերապահելով արժեթղթերի շուկայի չարաշահման դեմ պայքարի նպատակով օտարերկրյա գործընկերների հետ բանկային և ծառայողական գաղտնիք փոխանակելու իրավասություն, որը կնպաստի բարձրացնել արժեթղթերի շուկայի չարաշահումների դեմ պայքարի արդյունավետությունը միջազգային համագործակցության շրջանակներում:

Лиана Улиханян

ОСОБЕННОСТИ ПРОТИВОДЕЙСТВИЯ МАНИПУЯЦИИ НА РЫНКЕ ЦЕННЫХ БУМАГ В МЕЖДУНАРОДНОЙ ПРАКТИКЕ И В АРМЕНИИ

Аннотация

В статье описывается совокупность принимаемых уполномоченным органом мер по противодействию малипуляциям на рынке ценных бумаг как в международной практике, так и в Армении. Выявлены основные недостатки механизмов, принимаемых надзорным органом Армении.

Liana Ulikhanyan

SPECIFICS OF PREVENTING SECURITIES MARKET MANIPULATIONS WORLDWIDE AND IN ARMENIA

Abstract

The article presents the measures (instruments and tools) undertaken and implemented by regulatory institutions to prevent manipulations in the securities markets worldwide and in Armenia as well. The author identifies the major disadvantages of the existing mechanisms utilized by the respective supervisory institution in charge of regulating securities market in Armenia.

ՏԱԹԵՎԻԿ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հարկային քաղաքականության արդյունավետությունը կարելի է, առաջին հերթին, բնութագրել տնտեսության հիմնախնդիրների կիզակետում գտնվող ստվերային տնտեսության չափերի տեսանկյունից: Ստվերային տնտեսության հիմնական բնութագրիչները ոչ միայն հարկման դաշտից դուրս գործող սուբյեկտների ֆինանսատնտեսական հարաբերությունների միջոցով ձևավորված շրջանառությունն ու դրա արդյունքն են, այլ նաև մրցակցային և ներդրումային հարաբերությունների խեղաթյուրումը: Իսկ ստվերային տնտեսությունը կառավարության վերահսկողությունից դուրս է գտնվում: Վերջինիս գնահատումը բավականին բարդ է, և չնայած գոյություն ունեն ստվերային տնտեսության գնահատման մի քանի մեթոդներ, պետք է նկատի ունենալ, որ ցանկացած մեթոդով հաշվարկված ստվերային տնտեսության չափը ճշգրիտ չէ: Սա զարմանալի չէ, քանի որ հաշվարկվում է այն տնտեսավարող սուբյեկտների իրականացրած գործունեությունը, որոնք ցանկանում են աննկատ և չգրանցված մնալ: Ստվերային տնտեսությունն իր հերթին կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝

- ստվերային տնտեսություն, որը պայմանավորված է պետական մարմիններում կաշառակերության և հովանավորչության առկայությամբ,
- ստվերային տնտեսություն, որը պայմանավորված է որոշ «հնարամիտ» տնտեսվարող սուբյեկտների կողմից, առանց հարկային մարմիններին կաշառք վճարելու, հարկերից խուսափելու կարողությամբ:

Երկրորդ խումբն, իհարկե, անհամեմատ ավելի քիչ է տարածված, քան առաջինը:

Ստվերային տնտեսության պատճառած վնասները չեն սահմանափակվում միայն նրանով, որ այդ գումարները չեն մտել պետական բյուջե և չեն ծախսվել սոցիալական կամ երկրի պաշտպանունակության բարձրացման նպատակով: Կա ևս մեկ, ոչ պակաս կարևոր խնդիր, օրինակ՝ տնտեսական բոլոր գործընթացների աղավաղումը, ինչն երկարաժամկետ հատվածի համար ավելի վատ արդյունքների կարող է հանգեցնել, քան ներկայիս ուղղակի կորուստները: Խնդիրը կայանում է նրանում, որ տնտեսությունում ոչ բոլորն են հավասարապես օգտվում հարկերից խուսափելու «արտոնությունից», և նա, ով կարողանում է ավելի շատ խուսափել, հայտնվում է հատուկ արտոնյալ դիրքերում և սկսում է դուրս թողնել մյուս գործարարներին՝ գրավելով շուկան:

Հնարավոր է, որ այդպես են ձևավորվել Հայաստանում տարբեր ոլորտներում մոնոպոլիստական դիրք գրավող շատ խոշոր բիզնեսներ: Եթե մանր կաշառակերության միջոցով շատերը կարող են «օգտվել» հարկերն ամբողջությամբ չվճարելու հնարավորությունից և այդտեղ, ասես թե, «հավասարակշռություն է ձևավորվել», խնդիրն էականորեն բարդանում է, երբ բարձր հովանավորչության արդյունքում որոշ գործարարներ սկսում են գերիշխող դիրք գրավել: Հարկերից խուսափումը հաջողակ գործարարի համար նույնն է, ինչ որ պետությունից աջակցություն ստանալը: Փաստորեն, ստացվում է, որ պետությունն «արտոնյալ» գործարարներին ամեն տարի կոնկրետ գումար է տալիս, որը նպաստում է նրանց գործունեության ընդարձակմանը, և ինչքան մեծ է հարկերից խուսափումը, այնքան ավելի շատ է աջակցությունը: Այն կոչվում է «*տնտեսական աղավաղումներ*», քանի որ գործարարները բաժանվում են *աջակցություն ստացող* և *աջակցություն չստացող* խմբերի: *Աջակցություն չստացող* գործարարները հրաժարվում են ներդրումներ անելուց, կապիտալը երկրից դուրս է հոսում, որի արդյունքում տնտեսությունը չի զարգանում իր ներուժին համարժեք:

Պետության կողմից հարկային դրույքաչափերի բարձրացումն ինքնըստինքյան խթանում է հարկային պարտավորություններից խուսափումը: Եթե հարկերը բարձր են, նվազում է նաև քաղաքացու բարեխղճությունը, այսինքն՝ տնտեսավարող այն սուբյեկտները, որոնք ցածր հարկերի պայմաններում պարտաճանաչ մուծում էին հարկերը, հարկային բեռի մեծացման դեպքում գերադասում են հարկերից խուսափելու միջոցով, թեկուզ մասամբ, թեթևացնել հարկային պարտավորությունների իրենց բեռը: Հարկային բեռի բարձրացումը կարող է պայմանավորված լինել մի քանի գործոններով, մասնավորապես՝ հարկային դրույքաչափերի բարձրացմամբ: Ըստ Արթուր Լաֆֆերի՝ հարկային դրույքաչափի բարձրացման դեպքում հարկային եկամուտները սկզբում աճում են, իսկ հետո՝ ինչ-որ կետից սկսած, նվազում. ավելի բարձր դրույքաչափերը զսպում են տնտեսական աճը (նվազում են խնայողությունները, ներդրումները, սպառումը և այլն), հետևաբար՝ կրճատվում է հարկային բազան: Ուստի, նույնիսկ հարկային դրույքաչափերի աճի դեպքում, հարկերի գումարը նվազում է: Հիմնական խնդիրն այն է, որ իրականում դժվար է պարզել, թե Լաֆֆերի կորի որ մասում է գտնվում տնտեսությունը: Բացի այդ, հարկերի ազդեցությունը կախված է նաև հարկային դրույքաչափերի նկատմամբ տնտեսության զգայունությունից: Այսպես, օրինակ՝ դժվար է միանշանակ պնդել, որ եկամտահարկի դրույքաչափի նվազեցման արդյունքում մարդիկ կսկսեն ավելի շատ աշխատել, այլ ոչ թե կնախընտրեն հանգստանալ, քանի որ այդ դեպքում ավելի քիչ աշխատելով կարելի է ստանալ նույն տնօրինվող եկամուտը:

Ստվերային հատվածի գործունեությանը նպաստում է ոչ միայն հարկային դրույքաչափերի բարձր մակարդակը, այլև երկրում առկա ընդհանուր հարկային անկարգապահության մթնոլորտը: Արդյունավետ հարկային վարչարարության և հարկային վճարումներից խուսափելու դեպքում բարձր տույժերի պայմաններում, բարձր սահմանային հարկային դրույքաչափերը կարող են չնպաստել ստվերային գործունեության ծավալների մեծացմանը, այսինքն՝ կարելի է ենթադրել, որ ոչ բավարար հարկային վարչարարությունը և պետական ծախսերի անարդյունավետ կառավարումը կարող են տնտեսության ստվերայնացման խթան հանդիսանալ:

Այլ խոսքերով, տնտեսավարող սուբյեկտները, որոնց տնտեսական գործունեության իրականացման հաշվառումը վարվում է նաև մասնակիորեն ոչ ֆորմալ միջավայրում, ստիպված են վճարել «մուտքի գին», որոնք ներառում են ինչպես օրենքով սահմանված բոլոր հարկային պարտավորությունների կատարման վճարները, այնպես էլ՝ ստվերային տնտեսական գործունեություն ծավալելու համար պահանջվող լրացուցիչ ծախսերը:

Դա ցույց է տալիս, թե տնտեսվարող սուբյեկտների այն դիրքորոշումը, որը հակված է հարկերը վճարելուց խուսափելու կամ հարկային պարտավորությունները թերակատարելու ուղղությամբ, լրացուցիչ ծախսեր է պահանջում, որոնք չեն կարող ամբողջությամբ վճարվել ձեռներեցների կողմից: Այն, մի կողմից հանգեցնում է ստվերային գործունեության իրականացմանը, որի նպատակն է թաքցնել շրջանառության մի մասը՝ նվազեցնելով օրենքին ենթարկվելու գնի մեծությունը: Մյուս կողմից, պետությունը կրում է բյուջետային վնասներ, իսկ տնտեսվարող սուբյեկտների այդ խումբն, իսկապես, կրում է լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնվածություն՝ մուտքի վճարված գինը վճարելու արդյունքում:

Ուստի, ստվերային տնտեսության կառուցվածքը բավականին բարդ է և իր մեջ ներառում է տարբեր գործունեության ոլորտներ, որոնք պայմանավորված են արտադրության կամ եկամուտների վերաբաշխման հետ, և բավականին հեշտությամբ դրանց տարբերություններն ու շեղումները բացահայտվում են, սակայն դժվարությամբ են գնահատվում: Այլ խոսքերով, ստվերային տնտեսական գործունեության բովանդակությունը և դրա առանձին տարրերի գնահատման բարդության աստիճանը պայմանավորված են տնտեսական գործունեության ֆինանսատնտեսական արդյունքները ներկայացնող հաշվետվությունների և դրանց վերահսկողության հարցում արժանահավատության, հավաստիության և ամբողջականության սկզբունքների պահպանման անհնարինությամբ:

Բացի այդ, պետությունը պետք է շահագրգռված լինի յուրաքանչյուր առանձին վերցված հարկ վճարողի հարկային բեռի կարգավորման հարցում, որի ուղիներ կարող են հանդիսանալ հարկային լծակների ու գործիքների միջոցով հարկային բեռի տեղափոխումը ճյուղից ճյուղ,

չունևորից ունևոր, արտադրությունից առևտուր, վնասաբեր, բայց անհրաժեշտ կազմակերպությունից գերշահույթ ապահովող կազմակերպություն, ինչպես նաև պետության կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների բարելավումը՝ կապված հարկային օրենսդրության պարզաբանման ու հստակեցման, հարկ վճարողներին աջակցելու և հարկային մարմինների նկատմամբ հարկատուների վստահությունը ամրապնդելու, հաշվետվությունների ներկայացման գործընթացը թեթևացնելու և այլնի հետ: Ընդ որում, անհրաժեշտ է կարևորել նաև հարկ վճարողների ու հարկման օբյեկտների շրջանակների ընդլայնումը՝ ապահովելով հարկման համընդհանրության ու արդարության սկզբունքների կիրառումը, այսինքն՝ հարկման սկզբունքները պետք է փոխհամաձայնեցված գործեն ու միմյանց լրացնեն, որպեսզի հարկերին բնորոշ գործառույթներին «լիաթոք շնչելու» հնարավորություն տրվի, և կրճատվի հարկ վճարողների շրջանակներում հարկերի վճարումից խուսափելու հոգեբանական վարքագիծը:

Татевик Парсаданян

ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ВЗАИМОДЕЙСТВИЯ НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ И НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ В РА

Аннотация

Данная статья посвящена вопросам взаимодействия налоговой политики и налогового администрирования. Причем их оптимальным соотношением можно охарактеризовать в первую очередь находящиеся в центре экономических проблем причины возникновения и масштабы теневой экономики. Основными характеристиками последней являются не только теневой оборот и его последствия, являющиеся результатом финансово-экономических отношений субъектов, находящихся вне поля налогообложения, но и искажение конкурентных и инвестиционных отношений.

Tatevik Parsadanyan

ON ECONOMIC ISSUES RELATED WITH THE INTERPLAY OF TAX POLICY WITH TAX ADMINISTRATION

Abstract

The article presents the interplay of tax policy with the tax administration. Moreover, the real relation between both of them can, first of all, assist to identify the sources of unregistered income and measure the size of the shadow economy. The characteristics that describe the existence of the shadow economy are not only revenues received by the informal businesses and the negative impact caused by the informal activities, but also distortion of competitive and investment relations.

ՏԱԹԵՎԻԿ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՎԱՐՔԱԳԻԾԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Տնտեսավարման ներկա հասարակարգում գնալով մեծանում է տնտեսավարող սուբյեկտների ուշադրությունը հարկային պլանավորման համակարգի ռազմավարության ընտրության հարցերին: Դա պայմանավորված է ժամանակակից բիզնեսի համար աճող ռիսկերով, ինչպիսիք են՝

1. հարկային օրենսդրության անկայունությունն ու առանձին հարկատեսակների վերաբերյալ օրենքների մեկնաբանական հակասությունները,
2. տնտեսությունում պարբերաբար կրկնվող ճգնաժամերը, արհեստական արժութային տատանումները և ներքին շուկայի քաղաքականացվածության բնույթը,
3. բարձր հարկային դրույքաչափերը և ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվող հարկային բեռի բարձր մակարդակը,
4. հարկման արդարության ու հավասարության սկզբունքների փոխադարձ խախտումն ու հակասության առաջացումը:

Գործարար ակտիվության արդյունավետության աստիճանը բարձրացնելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ է ձևավորել բարենպաստ հարկային միջավայր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր երկրներում հարկային օրենսդրության և հարկային քաղաքականության առանձնահատկությունները պայմանավորված են ոչ միայն հարկային դրույքաչափերով, այլև կիրառվող հարկման մեթոդներով և եղանակներով[1]:

Ուստի, բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ, օգտագործելով այս կամ այն հարկային արտոնությունները և դրանց կողմից ընձեռված առավելությունները, օրենքի սահմաններում կամ այդ սահմաններից դուրս փորձում են կրճատել հարկային բեռը՝ նպատակ ունենալով այդ գործողության արդյունքում ավելացնել սպասվելիք շահույթի մեծությունը:

Փորձենք ներկայացնել և վերլուծել հարկերի վճարումից խուսափելուն նպաստող և հարկային օրենքները խախտելուն ուղղված հիմնական գործոնները, որոնք, վերջին հաշվով, նպաստում են ստվերային եկամուտների ձևավորմանը: Բացի այդ, մեր կողմից կատարված ստվերային եկամուտները բացահայտելուն ուղղված հետազոտությունը և դրա արդյունքները ապագայում կարծում ենք կնպաստեն հարկային վարչարարության ոլորտում բարեփոխումների իրականացմանը:

Այսպես, ստվերային եկամուտների առաջացումը ուղղակիորեն պայմանավորած է հարկերը վճարելուց խուսափելու և հարկային օրենքները խախտելու փոխազդեցությունից: Ընդ որում, վերջինիս վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնք պայմանականորեն կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

1. Գործոններ, որոնք պայմանավորված են տնտեսավարող սուբյեկտի վարքագծային մոդելի առանձնահատկություններով: Օրինակ՝ տնտեսավարող սուբյեկտների տարբեր տեսակներ (իրավաբանական և ֆիզիկական անձինք, անհատ ձեռներեց, ներկայացուցչություն) տարբեր կերպ են հակված լինում կոռուպցիոն և հարկերից խուսափելու երևույթներին: Օրինակ՝ անհատ ձեռներեցի համար հարկերը վճարելուց խուսափելու և հարկային օրենքները խախտելու վարքագծի հիմքում ընկած է նրա պարտաճանաչ լինելու, պատասխանատվություն կրելու, օրենքը գերակա համարելու անձնական հատկությունները: Իրավաբանական անձանց համար ստվերային եկամուտներ առաջացնելու գործում հիմք է

[1] Torrey, A. 2008. “The Discriminant Analysis Used by the IRS to Predict Profitable Individual Tax Return Audits.” Bryant University, Smithfield, NH.

ընդունվում ընկերության մասնագիտացվածության բնույթը, կազմակերպության չափն ու ֆինանսական դրության վերաբերյալ առանձնահատկությունները[1]:

2. Գործոններ, որոնք պայմանավորված են հարկման արդարության սկզբունքը խախտելու հետ: Այսպես, յուրաքանչյուր հարկ վճարողի համար հարկային քաղաքականության արդյունավետության աստիճանը, առաջին հերթին, պայմանավորված է նրանով, թե արդյոք հարկային բեռն իր համար նույնն է այլ հարկ վճարողների համեմատ, թե՝ ոչ: Ուստի, ցանկացած հարկ վճարող հարկման արդարության սկզբունքը գնահատում է՝ հիմք ընդունելով.
   - հարկային բեռի մակարդակի համեմատական գնահատումը այլ հարկ վճարողների նկատմամբ, որի արդյունքում, հնարավոր շեղումներ բացահայտելիս փնտրվում է ուղիներ հարկման արդարության սկզբունքը վերականգնելու համար, գործադրելով՝ նպատակ ունենալով հաստատել հարկման «ներքին արդարության» սկզբունքը կոռուպցիոն ռիսկի գնալու և ստվերային եկամուտներ առաջացնելու պայմաններով,
   - հարկային ծառայողների և հարկ վճարողների փոխհամաձայնեցված գործողությունների արդյունքում հարկվող եկամուտների թերհայտարարագրման փաստը,
   - պետական ֆինանսների յուրացմամբ, որը նպաստում է պետական կառավարման ցածր մակարդակի և այդ համակարգում կոռուպցիոն ռիսկի և «տնտեսական աղավաղումների» և այլ տնտեսական երևույթների առաջացմանը:
3. Գորոծոններ, որոնք պայմանավորված են հարկերի վճարման ընթացակարգերի վարչարարական բեռի հետ՝ հարկային հաշվետվությունների քանակի, դրանց լրացնելու ժամանակային ծախսի և հարկային դրույքաչափերի բարձր մակարդակի հետ: Հարկերի վճարման ընթացակարգերի բարդ գործընթացից խուսափելու համար հաճախ տնտեսավարող սուբյեկտները և հարկային ծառայողները գաղտնի և անօրինական համաձայնության են գալիս հարկային հաշվետվությունները մասնակի ներկայացնելու կամ դրանք ընդհանրապես չներկայացնելու համար[2]: Այլ խոսքերով, դրանց իրական դրդապատճառները կրում են սոցիալական բնույթ. մի կողմից հարկային ծառայողների աշխատավարձի ցածր մակարդակը նպաստում է կոռուպցիոն ռիսկի աճին, մյուս կողմից՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից համապարտադիր և անհատույց բնույթ կրող հարկերի վճարումը պահանջում է օրինական դաշտում անցնել հարկային վարչարարության բավականին բարդ և «թանկարժեք» ճանապարհով, ինչից խուսափելու համար նրանք հակված են լինում հարկվող եկամուտը թաքցնելու, այն թերհայտարարագրելու և կոռուպցիոն ռիսկ առաջացնելու վարքագծի դրսևորմանը[3]:
4. Գործոններ, որոնք պայմանավորված են տնտեսական այլ օրենքների տեսանկյունից դրանց երկիմաստ մեկնաբանման և նույնիսկ հաճախ հանդես եկող միմյանց հակասող ճյուղային առանձնահատկություններով: Օրինակ՝ ՀՀ օրենսդրության փոփոխման և պաշտոնական մեկնաբանությունների անկանխատեսելիությունը, հարկային վարչարարության անբավարար մակարդակը ցույց է տալիս, որ հարկային համակարգի կատարելագործման հիմնական ուղղությունների մեջ առանձնացվում է հարկային օրենքների դրույթների պարզեցումը, պահանջների հստակեցումը՝ ՀՀ օրենսդրության մեջ առկա անվստահությունները և երկիմաստությունները վերացնելու միջոցով: Հայտնի է, որ հարկային հարաբերությունները կարգավորող ընթացակարգերի անկատարությունը հաճախ հանգեցնում է միմյանց հակասող իրավական նորմերի գործողության: Այդ տեսանկյունից, գործնականում հաճախ հանդիպող և տնտեսավարող սուբյեկտների ու հարկային մարմինների միջև քննարկման և վեճերի առարկա է դարձել մի խնդիր, որն առնչվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից նախորդ տարիների գծով ինքնուրույն հայտնաբերված սխալների ուղղումների՝ հարկային հաշվարկներում արտացոլմանը: Կարծում ենք, որ այս վերլուծա-

---

[1] ВСЕМИРНЫЙ БАНК, “Проведение налоговых проверок на основе системы оценки рисков: Подходы и опыт различных стран.”, 2009 г. Вашингтон, стр. 46-47.

[2] Alm, J., R. Bahl, and M. Murray. 1993. “Audit Selection and Income Tax Underreporting in the Tax Compliance Game.” Journal of Development Economics 42 (1): 1–33p.

[3] Andreoni, J., B. Erard, and J. Feinstein. 1998. “Tax Compliance.” Journal of Economic Literature 36 (2). 60p. (818p.)

կանը կարող է հանդիսանալ այդ մասով համապատասխան իրավական դրույթների վերաձևակերպման և անորոշությունների վերացման դրդապատճառ:

5. Սոցիոլոգիական գործոններ, որոնք պայմանավորված են տվյալ երկրի մշակութային նորմերի, էթնիկական պատկանելության, կառավարության նկատմամբ վերաբերմունքի, տարիքի, սեռի, կրթության մակարդակի հետ: Այլ խոսքերով, սոցիոլոգիական գործոնների արդյունքում կարելի է ասել, հարկագանձումն իրականացվում է ոչ միայն որպես պետական բյուջեում եկամուտ ապահովելու համար, այլ այն պատճառով, որ այդպիսին են խաղի կանոնները, դրանք հավասար են բոլորի համար, ուստի բոլորն էլ պետք է ենթարկվեն այդ կանոններին:
6. Տնտեսական գործոններ, որոնք նպաստում են հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը և բարենպաստ բիզնես միջավայրի ձևավորմանը, ինչպիսիք են՝ ներդրումային ակտիվությունը բարձրացնելու համար կիրառվող տոկոսադրույքների քաղաքականությունը, բնակչության ժողովրդագրական կառուցվածքը, հարկային համակարգում լայն կիրառություն ունեցող հարկային գործիքների և հարկային լծակների փոխազդեցություն և դրանց արդյունավետության բարձրացմանն ուղված քաղաքականությունը, պետական քաղաքականության ուղղվածությունն ու միջազգային կազմակերպություններին ինտեգրման աստիճանը, ինֆլյացիայի սպասումներն և արտաքին, ներքին շուկաներում մրցակցության աստիճանն ու դրանց քաղաքականացված բնույթը:
7. Հոգեբանական գործոններ, որոնք պայմանավորված են հարկ վճարողի անձնական և սուբյեկտիվ վարքագծի դրսևորման առանձնահատկություններով, ինչպիսիք են՝ ագահություն, ռիսկի գնալու կարողություն, վստահության, արժեքային համակարգի, արդարության և հավաստիության սկզբունքների փոխազդեցություն ու դրանց խախտման պատճառով հարկերը վճարելուց խուսափելու իրական հնարավորությունը:

Այսպիսով, հարկեր վճարելուց խուսափելու և հարկային օրենքները խախտելուն նպաստող՝ տնտեսվարող սուբյեկտների մոտեցումները կարող ենք ներկայացնել աղյուսակ 1-ի միջոցով, որտեղ բերված են այն հիմնական գործոնները, որոնք, վերջին հաշվով, նպաստում են ստվերային եկամուտների առաջացմանը:

Աղյուսակ 1

Հարկերը վճարելուց խուսափելու և հարկային օրենքները խախտելու փոխազդեցության արդյունքում ստվերային եկամուտների առաջացման վրա ազդող գործոնները[1]

Գործոնները	Ընդհանուր բնութագիրը
Տնտեսվարող սուբյեկտների վարքագիծ	Կառուցվածքը (իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ անհատ ձեռներեց), տնտեսվարող սուբյեկտների չափն ու գործունեության իրականացման ժամանակահատվածը, տնտեսական գործունեության տեսակն ու եկամուտների ձևավորման աղբյուրներն՝ ըստ աշխարհագրական տեղադիրքի (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ, ներքին և արտաքին շուկաներ), ֆինանսական տվյալներ (նախնական կապիտալ ներդրում), տնտեսվարող սուբյեկտների միջնորդների տեսակները:
Հարկման արդարության սկզբունքի պահպանում	Հարկման արդարության սկզբունքի տնտեսագիտական բովանդակությունը կայանում է նրանում, որ այն պարունակում է «հարկային էտատիզմի» նշանակությունը: Վերջինս պայմանավորված է հարկային հարաբերության մեկ մասնակցի՝ հարկ վճարողի շահերի նկատմամբ մյուսի՝ պետության շահերի գերակայության ապահովմամբ: Պետության շահերի գերակայության ապահովումը զուգակցվում է հարկ վճարողի իրավունքների նկատմամբ նրա պարտականությունների սահմանման հետ՝ հիմք ընդունելով, որ հարկագանձումը համապարտադիր և անհատույց բնույթ է կրում բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար:
Հարկերի վճարման ընթացակարգերի վարչական բեռ	ՀՀ հարկային օրենսդրության անկատարությունը և հարկային ծառայողների հետ գաղտնի համաձայնության գալու հնարավորությունն այն հիմնական հանգամանքներն են, որ թույլ են տալիս խուսափել հարկերից:

[1] Исследовательские записи Института Кавказа, "Экономика старн Южного Кавказа в период кризиса 2009-2010гг.". N5- Июль, 2011г. с. 36-39 (55с).

Գործոնները	Ընդհանուր բնութագիրը
Ճյուղային գործոններ	Ճյուղի տեսակն ու չափը, դրա հիմնական ներկայացուցիչը, ծախսերի կառուցվածքն ու շահութաբերության նորման, կարգավորող ճյուղի աշխատանքային գործունեությունը, ճյուղային հարցեր (մրցակցության մակարդակ, սեզոնային գործոններ և ենթակառուցվածքների զարգացվածության աստիճան):
Սոցիոլոգիական գործոններ	Մշակութային նորմեր, էթիկական պատկանելություն, կառավարության նկատմամբ վերաբերմունք, տարիք, սեռ, կրթության մակարդակ:
Տնտեսական գործոններ	Ներդրումներ, տոկոսադրույքների դեմոգրաֆիական կառուցվածք, հարկային համակարգ, պետական քաղաքականության ուղղվածությունն ու միջազգային կազմակերպություններին ինտեգրման աստիճան, ինֆլյացիա և շուկաներում մրցակցության աստիճանն ու դրանց քաղաքականացված բնույթ:
Հոգեբանական գործոններ	Ագահություն, ռիսկ, վստահություն, արժեքային համակարգ, արդարության և հավասարության սկզբունքների փոխազդեցություն ու դրանց խախտման պատճառով հարկեր վճարելուց խուսափելու իրական հնարավորություն:

Բացի այդ, հարկային օրենքները խախտելու և հարկերը վճարելուց խուսափելու համար հարկային քաղաքականության մեջ առանցքային դեր է կատարում նաև հարկային ստուգումների համակարգը: Գտնում ենք, որ ստվերային եկամուտները չեզոքացնելու և դրանք վերացնելու համար հարկային եկամուտների կամավորության ինքնահայտարարագրման համակարգը կնպաստի հարկային վարչարարության բարելավմանը, տնտեսվարող սուբյեկտների կողմից հայտարարագրվող եկամուտների իրական պատկերի ներկայացմանն ու հարկային ծառայողների կատարողականների բարձրացմանը օրինական դաշտում:

Татевик Парсаданян

ПОВЕДЕНИЕ УКЛОНЕНИЯ ОТ УПЛАТЫ НАЛОГОВ В КОНТЕКСТЕ НАЛОГОВОГО ПЛАНИРОВАНИЯ

Аннотация

Данная статья посвящена исследованию основных факторов, способствующих уклонению от уплаты налогов и обеспечивающих нарушение налоговых законов, которые в конечном счете содействуют формированию теневых доходов. Кроме того, считаем, что результаты проведенного нами исследования по выявлению теневых доходов в дальнейшем могут послужить основой для проведения реформ в сфере налогового администрирования.

Tatevik Parsadanyan

ON THE FRAMEWORK OF TAX PLANNING OF TAX EVASION BEHAVIOR

Abstract

The article studies the main factors that support adoption of tax evasion practices and violation of tax laws that overall case increase in unregistered incomes. Moreover, the research carried out by the author to identify sources of unregistered incomes and the results of the study could assist implementation of tax administration reforms in the future, as the author believes.

ВИКТОР АМБАРЦУМЯН

Аспирант РЭУ им. Г.В. Плеханова

ВЛИЯНИЕ БЛОКА БРИКС НА МЕЖДУНАРОДНУЮ ВАЛЮТНУЮ СИСТЕМУ

Тенденции последних лет демонстрируют усиление экономических позиций стран БРИКС. Прогнозы ведущих финансовых институтов и независимых аналитических агентств позволяют утверждать, что данные тенденции сохранятся в будущем. Рост объемов финансирования окажет положительное влияние на динамику роста производственных мощностей данных стран и укрепление внутреннего спроса.

Мировой финансовый кризис проявил сильные стороны финансово-экономической системы стран блока БРИКС. Эффективность антикризисных мер, в частности наращивание золотовалютных резервов, снижение объемов излишней денежной массы, изменение структуры экспорта способствовали смягчению экономического удара по странам БРИКС. Это в свою очередь показало слабую зависимость финансовой системы стран БРИКС от международной финансовой системы.

Задачи исследования:

- проанализировать финансовые показатели функционирования БРИКС;
- провести сравнительный анализ деятельности БРИКС с другими странами;
- выявить основные тенденции развития блока БРИКС.

Территория и население стран БРИКС составляет соответственно 25 % и 40% суши и населения в мире. Совокупный ВВП в 2011 г. составил 13,9 трлн. долл. Для сравнения ВВП США в 2011 г. составил 15,1 трлн. долл. На современном этапе страны БРИКС аккумулируют более 40 % золотовалютных резервов и на них приходится 45 % внешнеторгового мирового оборота. По На 2010 г. страны БРИКС по своим экономическим результатам превзошли страны Евросоюза.

Динамика реального ВВП стран БРИКС представлена в таблице 1.

Таблица 1

Динамика изменения ВВП стран БРИКС, 2009-2012 гг. (в % к предыдущему году)[1]

Страны	2010 г.	2011 г.	2012 г.	Отклонение 2012 г. от 2010 г.	Отклонение 2012 г. от 2011 г.
Бразилия	7,5	4,5	4,1	-3,4	-0,4
Россия	4,0	4,8	4,5	0,5	-0,3
Индия	10,4	8,2	7,8	-2,6	-0,4
Китай	10,3	9,8	9,5	-0,8	-0,3
ЮАР	2,8	3,5	3,8	1	0,3

Таким образом, рост ВВП Бразилии в 2012 г. составил 4,1 %, России – 4,5 %, Индии – 7,8 %, Китая – 9,5 %, ЮАР – 3,8%. Наибольшее отклонение 2012 г. от 2010 г. в приросте ВВП было у Бразилии (минус 3,4 %), на втором месте Индия (минус 2,6 %).

Развитие внешнеэкономических отношений стран БРИКС на мировой арене опирается на текущий уровень производственного потенциала (таблица 2). Совокупный объем ВВП составил 67 %. При этом есть существенные перспективы дальнейшего роста ВВП. Экспортоориентированная политика стран БРИКС обеспечивают высокий уровень экономического

[1] Большая восьмерка может покинуть авансцену [Электронный ресурс]. - Режим доступа: http://www.dw-world.de/dw/article/4463193.html.

роста и создает своего рода «подушку безопасности» в виде золотовалютных резервов в размере 3,5 трлн. долл.

Таблица 2

Международные торгово-экономические и финансовые позиции блока БРИКС, 2009–2010 гг.[1]

Страны	Экспорт товаров (цены FOB);доля страны в мировой торговле, % (2010 г.)	Импорт товаров (цены CIF); доля страны в мировой торговле, % (2010 г.)	Общие резервы (включая золото), трлн долл. (2009 г.)
Китай	10,35	9,07	2,5
Россия	2,63	1,62	0,4
Индия	1,42	2,10	0,3
Бразилия	1,33	1,25	0,3
ЮАР	0,54	0,61	0,04
БРИКС	16,26	14,64	3,5
США	-	-	0,4
Все страны	15,2	15,4	-

Анализ данных таблицы 2 показывает, что наибольшая сумма общих резервов в 2009 г. была у Китая (2,5 трлн.долл.), остальные страны БРИКС имели незначительные по сравнению с Китаем резервы от 0,04 трлн. долл. у ЮАР до 0,4 трлн.долл. в России. Для сравнения: у США золотовалютные запасы также были на уровне 0,4 трлн.долл.

При оценке шансов выдвижения общей национальной валюты стран БРИКС требует анализа текущего положения и развития финансового сектора. Показатели финансового рынка стран БРИКС представлены в таблице 3.

Таблица 3

Показатели финансового рынка стран БРИКС[2]

Страны	Депозитные ставки, %			Кредитные ставки, %		
	2007	2008	2009	2007	2008	2009
Китай	4,1	2,3	2,3	7,5	5,3	5,3
Россия	5,1	5,8	8,6	10	12,2	15,3
Индия				13	13,3	12,2
Бразилия	10,6	11,7	9,3	43,7	47,3	44,7
ЮАР	9,2	4,6	8,5	8,1	5,1	3,3
БРИКС				16,46	16,64	16,16

Показатели финансового рынка стран БРИКС находились в состоянии снижения в отношении депозитных ставок в Китае в 2009 г. по сравнению с уровнем 2007 г. на 1,8 %, Бразилии на 1,3% и ЮАР на 0,7%. Рост депозитных кредитных ставок отмечен у России на 3,5 %. Динамика кредитных ставок показывает рост в 2009 г. по сравнению с уровнем 2007 г. у России на 5,3 %, Бразилии на 1,0 %. Кредитная ставка ЮАР показала снижение в 2009 г. по сравнению с уровнем 2007 г. на 4,7%, Индии на 0,8 %, Китая на 2,2 %.

Перспективы выдвижения национальных валют стран БРИКС или разработка общего денежного эквивалента данной группы зависит напрямую от их экономического роста и

---

[1] Большая восьмерка может покинуть авансцену [Электронный ресурс]. - Режим доступа: http://www.dw-world.de/dw/article/4463193.html.

[2] International Financial Statistics. – W.: IMF, 2002. – P. 186-193, 240-243, 450-453, 740-745, 914-921. http://data.worldbank.org/indicator.

влияния на мировое сообщество. Причем объективная оценка влияния блока БРИКС на МВС может быть осуществлена при анализе макроэкономических показателей за длительный период. В нашем случае берется диапазон 2000-2010 г. Этот временной интервал является оптимальным, так как учитывается экономическое положение стран группы БРИКС в докризисный, кризисный и посткризисный период. Целесообразным будет проанализировать динамики ведущих показателей стран БРИКС в сравнении с другими группами.Прогнозные показатели финансовых институтов ВТО и МВФ также способствуют оценке перспективы экономического развития.

Динамика роста ВВП по регионам за 2000-2010 гг. представлена в таблице 4.

Таблица 4

Динамика роста ВВП по регионам за 2000-2010 гг., млрд долл.[1]

ВВП по регионам	2000 г.	2005 г.	2010 г.	2016 г. прогноз
Мировой ВВП	32227,4	45562,3	62909,3	90451,6
Динамика роста по периодам, %	-	41%	38%	44%
Развитые страны	25694,0	34712,9	41531,0	53283,7
Динамика роста по периодам, %	-	35%	20%	28%
Страны БРИКС	2713,4	4967,4	11328,9	21038,9
Динамика роста по периодам, %	-	83%	128%	86%
Страны СНГ	349,2	994,6	1934,9	4125,2
Динамика роста по периодам, %	-	185%	95%	113%

Данные таблицы 4 свидетельствуют о росте доли ВВП стран БРИКС за 10 лет. Она составила 18%, а доля стран СНГ увеличилась почти в 3 раза и достигла 3%. Наибольший рост отмечен в странах БРИКС за 2005-2010 гг. Следовательно, даже в период кризиса страны БРИКС продолжали развиваться и наращивать производственный потенциал. Лидером по росту ВВП был Китай (рост ВВП на 160%, доля 9,3%), второе место заняла Бразилия (135%, доля 3,3%), третье у России (92%, доля 2,3%). Рассматривая прогнозные показатели МВФ на 2011-2016 гг. отметим, благоприятный прогноз по росту экономики России (на 121 %), Китая (на 91 %) и Индии (81 %). Следовательно, страны, имеющие лучшие прогнозы входят в состав группы БРИКС. Удельный вес развитых стран в мировом ВВП снизился на 13,4 % и составил в 2010 г. 66 %. Прогноз МВФ неблагоприятный. В 2016прогнозимруется снижение еще на 7 %.

Графически динамика доли ВВП регионов в мировом ВВП представлена на рисунке 1.

Рисунок 1

Доля ВВП регионов в мировом ВВП[2]



[1] Составлен на основании данных МВФ.
[2] Составлен на основании данных МВФ.

Показатели роста ВВП: доля стран БРИКС в мировом ВВП увеличилась с 8,4% в 2000 г. до 18,0 % в 2010 г., в странах СНГ – с 1,1% до 3,1% соответственно.Мировой ВВП за исследуемый период увеличился почти в 2 раза. Ключевую роль в развитии экономики страны играют инвестиции.

В2000 году доля инвестиций развитых стран в общей совокупности составила почти 80%. В 2010 г. показатель роста инвестиций имел тенденцию к снижению и составил 14359 млрд долл. По прогнозам на 2016 г. сумма мировых инвестиций составит 23183,6 млрд долл. (рис.2).

Рисунок 2

Динамикаинвестиций регионов в глобальном объеме инвестиций[1]



За 2000-2010 гг. доля инвестиций стран БРИКС возросла в 3 раза (с 10% до 29,4%). Наибольший рост произошел за последние 2005-2010 гг. Показатели стран СНГ также проявляют положительную динамику, к 2010 году доля инвестиций этого блока в мире возросла до 2,9% с 0,9% в 2000 году (рис.3).

Рисунок 3

Доля инвестиций регионов в глобальном объеме инвестиций[2]



Мировой товарооборот по странам БРИКС показывает наращивание объемов реализации. За счет роста объема товарооборота стран БРИКС растет экономическое и политическое влияние стран-участниц. Рост объемов мирового внешнеторгового оборота в 2010 г. по сравнению с уровнем 2000 г. составил 17434 млрд долл. Темп прироста данного показателя

[1] Составлен на основании данных МВФ.
[2] Составлен на основании данных МВФ.

составил 43,4 %. В развитых странах показатель находится на уровне мирового и составил 19250 млрд долл., в странах БРИКС в 2010 году отношение импорта и экспорта к ВВП региона составило 42%, в странах СНГ – 51%. Для сравнения в 2000 г. оно составило 65 %. Динамика товарооборота по регионам в мировом товарообороте за 2000-2010 гг. представлена на рисунке 4.

Рисунок 4

Динамика товарооборота по регионам в мировом товарообороте за 2000-2010 гг.[1]



Данные по странам СНГ характеризуют снижение доли их товарооборота в общемировом. Производственные потенциалы этих стран за 2010-2012 гг. способствовали переориентации их внутренних ресурсов страны.

Сказанное вышеподтверждает тенденцию изменения соотношения экономических и политических сил в мире. Высокие темпы роста Китая и Индии, а также их способность переносить систематические финансовые кризисы способствуют росту конкурентоспособности экономик этих стран на глобальном уровне. Эти обстоятельства требуют пересмотра основной классификации стран по регионам, так как экономика ЕС находится в затяжной рецессии и прогнозы аналитиков неутешительны, а экономика США не вызывает доверия из-за постоянного роста государственного долга.Эта постановка была озвучена на саммите G20 в Южной Корее.

В целом, подводя итоги деятельности стран БРИКС за 2000-2012 гг., можно отметить, что хотя БРИКС и не является жестко организованным союзом или блоком, а сами глобальные экономические реформы реализуются достаточно медленно, его дальнейшее развитие может быть успешно использовано для продвижения российских внешнеполитических интересов. Стратегическое партнерство стран БРИКС способствует созданию своего рода противовеса влиянию США и Евросоюза на мировую экономику. Деятельность блока БРИКС была наиболее успешной за 2005-2010 гг. Результаты его деятельности обусловили развитие как положительных, так и отрицательных тенденций в мире.

Следовательно, действуя на принципах комплексного взаимодействия экономик, объединение БРИКС позволяет странам-участницам наращивать производственный потенциал, оптимизировать использование материальных, трудовых и финансовых ресурсов, реформировать национальные экономики согласно отраслевой специфике и технологическому развитию. Рост мирового влияния стран-участниц блока возможен только при политике прорыва в глобальную экономику.

Следует, однако, оговориться, что данные тенденции и базирующиеся на них выводы действительны лишь для определенного периода развития мировой экономики и валютно-финансовой системы. Через 10-12 лет может наступить новый цикл их развития и тренд

[1] Составлен на основании данных ВТО и МВФ.

может измениться на противоположный. Развитые стран получили колоссальный инновационно-научный потенциал, который в настоящее время не может быть использован в полной мере вследствие перевода ряда промышленных производств в страны с низким уровнем оплаты труда. Россия, которая всю свою историю конкурировала с западными странами, в настоящее время низведена до уровня их сырьевого придатка. Она входит в группу развивающихся стран, каковой по существу и является БРИКС. Валютно-финансовая система России базируется на исключительно на реализации топливно-энергетических ресурсов. Она становится аутсайдером даже в масштабах БРИКС. Промышленный потенциал России сдерживается в своем развитии конкуренцией дешевых китайских товаров. Но будущее российской экономики и ее валютно-финансовой системы – в создании инвестиционной экономики и ориентироваться в этом процессе необходимо не на развивающиеся страны, а на наиболее развитые страны, в число которых Россия должна войти в середине XXI в.

Վիկտոր Համբարձումյան

ԲՌՀՉՀ ԲԼՈԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ

Ամփոփագիր

Հոդվածում վերլուծվում են հիմանական տնտեսական ցուցանիշները, որոնք նկարագրում են ԲՌՀՉՀ բլոկի կատարողականը: 2000-2010թթ. ԲՌՀՉՀ երկրների ֆինանսական ցուցանիշների վերլուծություն է իրականացվում ի համեմատություն այլ երկրների (տարածաշրջանային սկզբունքի հիման վրա): Բացահայտվել են հիմնական օրինաչափությունները և գործոնները, որոնցով միավորումը ազդում է համաշխարհային արժութային համակարգի զարգացման և, ընդհանուր առմամբ, համաշխարհային տնտեսության վրա:

Viktor Ambartsumyan

THE IMPACT OF THE BRCIS ASSOCIATION ON THE INTERNATIONAL MONETARY SYSTEM

Abstract

The paper analyzes the main economic indicators and/or variables that describe the performance of the BRICS nations. The financial indicators for 2000-2010 are compared with the same indicators of the peers (based on the regional principle). The article identifies the main patterns and factors through which the BRICS association affects the state of development of the international monetary system and the world economy, in general.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՐԱՉԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, երկր. հանք. գիտ. դոկտոր

ԱՄՈՒԼՍԱՐԻ ՈՍԿՈՒ «ՀԱՆՔԱՎԱՅՐԻ» «ԿՈՐՁԱԹԱՓՈՆՆԵՐԻ» ԵՎ ԴՐԱՆՑ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

«Ամուլսար» անունը տվյալ պարագայում բոլորովին էլ սազական չի այդ սարին: Անունն ասում է այն մասին, որ դա պետք է, որ «ստերիլ»՝ ամուլ լիներ, բայց, իրականում դա բոլորովին էլ այդպես չէ: Այդ սարը ոչ միայն «ստերիլ» չէ, այլև շատ հարուստ սար է: Դրա ընդերքում է տեղադրված Կաքավասարի ոսկի-բազմամետաղային հանքաերևակումը, որի ընդերքի հարստությունների (ռեսուրսների) քանակը երկրաբանների կողմից գնահատված է. պղնձինը՝ 30 հազ. տ, կապարինը՝ 400 հազ. տ, ցինկինը՝ 100 հազ. տ, ոսկունը՝ 20 հազ. կգ, արծաթինը՝ 1500 տ, բիսմուտինը՝ 1425 տ, սելենինը՝ 258 տ, տելլուրինը՝ 450 տ, կադմիումինը՝ 8750 տ, գերմանիումինը՝ 125 տ, գալիումինը՝ 700 տ, ինդիումինը՝ 450 տ, ծծմբինը՝ 144 հազ. տ:

Նույն Կաքավասարի հանքաերևակման վերին հորիզոնը՝ սարի գագաթային մասը, արհեստականորեն անջատվել է որպես առանձին հանքավայր և անվանվել է սարի անունով՝ «Ամուլսար»: Նման տիպի հանքայնացումները երկրաբանության մեջ անվանվում են «երկաթյա գլխարկներ»:

Այդ մասին է վկայում ոչ միայն այն փաստը, որ Ամուլսարի ոսկու «հանքավայրը» տարածականորեն տեղադրված է Կաքավասարի ոսկի-բազմամետաղային հանքաերևակման հետ միևնույն վայրում, այլև այն, որ ամբողջովին նույնն է դրանց երկրաբանական կառուցվածքը: Այստեղ տարածված են ստորին, միջին և վերին էոցենի, ստորին օլիգոցենի, ինչպես նաև միոպլիոցենի հասակների հրաբխանստվածքային առաջացումները: Էոցենի հրաբխանստվածքային առաջացումները պատռված են օլիգոցենի հասակի տարբեր կազմի ներծին (ինտրուզիվ) ապարներով՝ մոնցոնիտներով, գաբրոներով, գրանիտ-սիենիտներով, գաբրո-դիորիտներով և այլն: Ամուլսարի հյուսիսարևելյան մասում մերկանում են գաբրո-սիենիտներն ու քվարցային սիենիտները:

Այստեղ որպես հիմնական օգտակար հանածո է ճանաչվել ոսկին և հետախուզվել ու գնահատվել է հենց այդ մետաղը: Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ այստեղ ևս առկա են այն բոլոր տարրերը, որոնք հայտնաբերվել են Կաքավասարի հանքաերևակման ընդերքում (հայտնաբերվել են նույնիսկ մի քանի այլ տարրեր, որոնք նախկինում երկրաբանների ուշադրությունից դուրս էին մնացել):

Քանի որ Ամուլսարի «հանքավայրը»՝ Կաքավասարի վերին հորիզոնի հանքագոյացումը, որը, մեր կարծիքով, առաջացել է Կաքավասարի հանքաբեր ջրաջերմային թթու լուծույթների ազդեցության ներքո, երկրակեղևի մակերեսին մոտ տարածքում՝ այդ լուծույթների ալկալային մասի հիմնական «բեռի բեռնաթափումից» հետո, ուստի բոլոր օգտակար տարրերի պարունակություններն էլ (այդ թվում նաև ոսկունը) եղել են շատ ավելի ցածր, քան ստորին հորիզոններում՝ Կաքավասարի տեղամասում (Ամուլսարի տեղամասի տակ):

Ձեռք բերված 40 նմուշների (№№ AR001292-AR001331) անալիզների տվյալներով մեր կողմից հաշվարկվել են Ամուլսարի «հանքավայրի» ոսկու տեղամասում հայտնաբերված հարակից բաղադրիչների միջին պարունակությունները, որոնք կազմում են՝ ոսկունը՝ 0,004775 գ/տ, արծաթինը՝ 3,2 գ/տ, մկնդեղինը՝ 22,13 գ/տ, բերիլիումինը՝ 1,33 գ/տ, բիսմուտինը՝ 1,925 գ/տ, կադմիումինը՝ 1,46 գ/տ, կոբալտինը՝ 17,98 գ/տ, քրոմինը՝ 11,1 գ/տ, պղնձինը՝ 101,14 գ/տ, երկաթինը՝ 6,055%, տիտանինը՝ 0,3575%, ուրանինը՝ 7,5 գ/տ, վանադիումինը՝ 159,85 գ/տ, վոլֆրամինը՝ 5,5 գ/տ, ցինկինը՝ 546 գ/տ, սնդիկինը՝ 2,6885 գ/տ, գալիումինը՝ 11,375 գ/տ, մոլիբդենինը՝ 2,5375 գ/տ, նիկելինը՝ 12,815 գ/տ, կապարինը՝ 30,055 գ/տ, ծարիրինը՝ 16,92 գ/տ,

սկանդիումինը՝ 13,7875 գ/տ, ստրոնցիումինը՝ 453,675 գ/տ, թորիումինը՝ հիմնականում փոքր է որպես էտալոն՝ կորզելի ամենափոքր պարունակություն ընդունված՝ 20գ/տ քանակից (դրա միջին պարունակությունը մեր կողմից չի հաշվարկվել):

Ամուլսարի ոսկու «հանքավայրը» հետախուզող «Գեոթիմ» կազմակերպության կողմից Կանադա անալիզի ուղարկված 40 նմուշներից ոչ մեկը տվյալ «հանքավայրի» համար, ոսկու պարունակությամբ, բնութագրական չի եղել («հանքավայրի» հաշվեկշռային, ինչպես նաև արտահաշվեկշռային պաշարներում ոսկու միջին պարունակությունը կազմել է 0,89 և 0,512 գ/տ, իսկ Կանադա ուղարկված նմուշներում՝ 0,005-0,008 գ/տ, բացառիկ դեպքերում՝ 0,009, 0,011 և 0,017 գ/տ, որոնք «հանքավայրում» ոսկու միջին պարունակությունից փոքր են 30-ից մինչև 180 անգամ): «Հանքավայրում» այլ մետաղների գնահատման համար անհրաժեշտ է (պարտադիր պահանջ է) հիմնական օգտակար տարրի, տվյալ պարագայում ոսկու գծով, բնութագրական նմուշների անալիզների տվյալներ ունենալը: Բայց, քանի որ այդպիսի նմուշների անալիզներ չունենք, ուստի մեր գնահատականն էլ կլինի կողմնորոշիչ բնույթի (կարծում ենք, որ ստորև բերվող ոսկու հետ հարակից մետաղների պարունակություններն էլ կարող են լինել նույնքան անգամ փոքր, որքան և ոսկու գծով է):

Ամուլսարի ոսկու «հանքավայրում» ոսկու հետ հարակից տարածված են՝ արծաթ, մկնդեղ, բերիլիում, բիսմուտ (քիչ քանակությամբ), կադմիում, կոբալտ, քրոմ, պղինձ, երկաթ (հիմնականում պիրիտ հանքանյութի և դրա օքսիդացված հանքանյութերի հետ կապված), գալիում, նիկել, կապար, ծարիր, սկանդիում, ստրոնցիում (համեմատաբար բարձր պարունակությամբ), տիտան, ուրան (ցածր պարունակությամբ), վանադիում, ցինկ և սնդիկ: Նշված մետաղների գերակշիռ մեծամասնությունը պատկանում է ծանր մետաղների թվին, հետևապես դրանք, ինչպես նաև թունահարույց հատկություններով օժտված տարրերը՝ մկնդեղն ու բերիլիումը, խիստ վտանգավոր են մարդու օրգանիզմի համար:

Ունեցած անալիզների (40 նմուշների) տվյալներով մենք մոտավոր քանակներով գնահատել ենք դրանց ռեսուրսները, որոնցից մի քանիսի տվյալները բերվում են ստորև՝ մկնդեղինը՝ 575,4 տ, բերիլիումինը՝ 34,58 տ, բիսմուտինը՝ 50,05 տ, կադմիումինը՝ 37,96 տ, կոբալտինը՝ 467,48 տ, քրոմինը՝ 288,6 տ, պղնձինը՝ 2629,64 տ, երկաթինը՝ 1.574.300 տ, գալիումինը՝ 295,75 տ, նիկելինը՝ 333,2 տ, կապարինը՝ 781,43 տ, ծարիրինը՝ 441,48 տ, սկանդիումինը՝ 358,47 տ, ստրոնցիումինը՝ 11 795,55 տ, տիտանինը՝ 92.950 տ, ուրանինը՝ 195 տ, վանադիումինը՝ 4156,1 տ, ցինկինը՝ 14 196 տ, սնդիկինը՝ 69,9 տ (ընդ որում՝ կադմիումի համեմատաբար բարձր պարունակություններ հայտնաբերվել են այն նմուշներում, որոնցում համեմատաբար բարձր պարունակություններով է ներկայացված ցինկը):

Այսպիսով, Ամուլսարի ոսկու «հանքավայրում» ծանր մետաղների ռեսուրսների ընդհանուր քանակը՝ ոչ բնութագրական նմուշների անալիզների տվյալներով, երկաթի հետ համատեղ, կազմում է 1 703 644,8 տ, իսկ առանց երկաթի՝ 129 344,8 տ: Թունահարույց հատկություններով օժտված երկու տարրերի՝ մկնդեղի և բերիլիումի, ռեսուրսների ընդհանուր քանակը կազմում է 609,98 տ:

Նշենք նաև այն, որ Ամուլսարի ոսկու «հանքավայրի» հյուսիսարևմտյան մասում՝ Ամուլսարի գագաթից ընդամենը 5 կմ հեռավորության վրա է գտնվում նույնանուն ուրանի հանքաերևակումը[1], որը, միևնույն ժամանակ, հանդիսանում է Ամուլսարի ոսկու «հանքավայրի» հյուսիսարևմտյան շարունակությունը, այն քվարցիտների առկայությամբ, որոնք ոսկու «հանքավայրում» հանդիսանում են ոսկի ներփակող (ոսկի կրող) հիմնական ապարները: Ուրանի հանքաերևակման տարածքն ունի ոսկու «հանքավայրի» հետ միասին միևնույն երկրաբանական կառուցվածքը՝ ապարների կազմության, հասակի, փոփոխվածության և այլ առումներով:

Ուրանի հանքայնացումը ներկայացված է երկրորդական հանքանյութերով՝ օթենիտով, թորբերնիտով և մետաթորբենիտով: Դեպի երկրակեղևի խորքը ուրանի հանքայնացումը հետախույզ-երկրաբանների կողմից հետապնդված է մինչև 50-60 մ, սակայն չի բացառվում, որ այն ձգվում է ավելի խորը՝ 300-400 մ և ավելի (այդ մասին է վկայում ցածր հորիզոններում՝ Գնդևազ

[1] Алоян П.Г. Ресурсный потенциал радиоактивного сырья Армении и перспективы его освоения. Записки Ереванского Горнометаллургического института. Библ. «Армнипроцветмета», 2009.

գյուղի մակարդակում, ռադոն գազի առկայությունը), չնայած նրան, որ երկրաբաններից ոմանք (Պ.Ալոյան) ենթադրում են, որ ուրանի հանքայնացումը մարում է դեպի խորքը 100 մ վրա:

Կարևորագույն իրավիճակներից մեկն էլ այն է, որ Ամուլսարի ուրանի հանքաերևակման կտրուկ սահմանները ոչ միայն դեպի խորք, այլև հորիզոնական ուղղություններով այժմյան դրությամբ դեռևս որոշված չեն: Հետևապես. ինչո՞վ համոզված լինենք, որ ոսկու «հանքավայրի» հյուսիսարևմտյան ծայրամասի շահագործման ընթացքում բացհանքը չի բախվելու ուրանի հանքաերևակման հարավարևելյան ծայրամասի հետ, և այդ տարածքից ևս որոշակի քանակի ուրանի հանքանյութեր չեն արդյունահանվելու և թափվելու ոսկու կորզման վայրեր՝ Որոտան գետի վերին հոսանքներ: Ես, համենայն դեպս, այդպիսի համոզվածություն չունեմ:

Ամուլսարի «հանքավայրի» շահագործման պարագայում հանքաքարերից ոսկին պետք է կորզվի «կուտակային տարրալուծման» եղանակով, ասել է թե՝ արդյունահանված հանքաքարերը ջարդման ու փշրման և ապա դրանք կուտակման են ենթարկվելու տեղում՝ «հանքավայրի» մոտակայքում, կարծում ենք ոչ այլ տեղ, քան Ամուլսարի արևելյան ստորոտում, Սիսիանի շրջանում, Որոտան գետի վերին հոսանքների մեղմաթեք լեռնալանջերի վրա, որոնք, ի դեպ, հանդիսանում են հոյակապ արոտավայրեր: Այնուհետև փշրված, մանրացված և կուտակված հանքաքարերի վրա են լցվելու ուժեղ թունավոր նյութերի դասին դասվող կալիումի կամ նատրիումի ցիանիդներ: Վերջիններս հանքաքարերից լուծելով ազնիվ մետաղները մեղմաթեք լանջերով հոսելով դեպի ցած հավաքվելու են չլուծվող անոթների մեջ: Այնուհետև դրանցից տեղակալման եղանակով անջատվելու է ոսկին, միայն և միայն ոսկին, իսկ մյուսները, թվով 20 ծանր մետաղներ և թունավոր տարրեր մնալու են տեղում՝ «կորզապոչերում» և հարյուրավոր ու հազարավոր տարիներ իրենց թույնն են սփռելու շրջապատի վրա՝ Որոտան գետի հոսանքով դեպի ցած ընկած տասնյակ գյուղերի ու Սիսիան քաղաքի վրա:

Այժմ գնահատենք ոսկու «կորզապոչերի» (թափոնների) մեջ մնացող ծանր մետաղների և թունավոր տարրերի արժեքը:

Աղյուսակ 1

Ամուլսարի ոսկու «հանքավայրի» շահագործման վերջնական արդյունքով «կորզապոչերի» (թափոնների) մեջ մնացող ծանր մետաղների և թունավոր տարրերի արժեքի հաշվարկը

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Մկնդեղ	տ	575,4	1640	943.656
Բերիլիում	տ	34,58	900 000	31.122.000
Բիսմուտ	տ	50,05	24 440	1.223.222
Կադմիում	տ	37.96	6330	202.327
Կոբալտ	տ	467.48	66 660	31.162.217
Քրոմ	տ	288,6	7900	2.279.940
Պղինձ	տ	2629,64	9420	24.771.209
Երկաթ	տ	1.574.300	300	472.900.000
Գալիում	տ	295,75	460 000	136.045.000
Նիկել	տ	333,2	44 780	14.920.696
Կապար	տ	781,43	2100	1.641.003
Ծարիր	տ	441,48	5500	2.428.140
Սկանդիում	տ	358,47	5.216.700	1.870.186.950
Ստրոնցիում	տ	11.795,55	7000	82.568.850
Տիտան	տ	92,95	18000	1.673.100
Ուրան	տ	195	2.943.300	573.943.500
Վանադիում	տ	4156,1	396280	1.646.979.308
Ցինկ	տ	14,196	3233	45.895.668
Սնդիկ	տ	69,9	7500	524.250
Վոլֆրամ	տ	143	55 880	7.990.840
Ընդամենը				4.949.401.876

Նշենք, որ տարրերի գները վերցված են հիմնականում 2007 թ.՝ նախաճգնաժամային տարվա և, բացառիկ դեպքերում, 2011 թ. տվյալներից (2011 թ. տվյալներից վերցվել են սնդիկի, ուրանի և վանադիումի գները, քանի որ 2007 թ. մեր ունեցած տվյալների մեջ այդ տարրերի գները չենք ունեցել): Ընդ որում վանադիում մետաղի գինը Չինաստանում 2011 թվականին կազմել է 396 280 դոլար մեկ տոննայի համար, իսկ Լոնդոնի բորսայում վանադիումի հինգօքսիդի մեկ տոննայի գինը 2007 թ. կազմել է 40 000 դոլ., որտեղից էլ հաշվարկները պարզում են, որ վանադիում մետաղի գինը կարող էր կազմել 71428 դոլ/տ, սակայն մենք որպես հիմք ընդունում ենք 2011 թ. տվյալը՝ 396280 դոլ/տ:

Բերված աղյուսակը մեզ պատկերավոր կերպով ցուցադրում է, որ Ամուլսարի ոսկու «հանքավայրի» ընդերքից արդյունահանված և ազնիվ մետաղների կորզման ու «կորզապոչերի» հետ բնական միջավայր թափված օգտակար տարրերի, որոնք չկորզման հետևանքով դառնում են թունավոր ու խիստ վտանգավոր բուսական ու կենդանական աշխարհի համար, արժեքը կազմում է ավելի, քան 4,9 մլրդ դոլար, այն պարագայում, երբ հաշվեկշռային և արտահաշվեկշռային պաշարներում առկա 20014,4 կգ ոսկին ամբողջությամբ (100 տոկոսով) կորզելու պարագայում դրա արժեքը 2011 թ. հունիս ամսվա գներով (49300 դոլար մեկ կգ), որն ամենաբարձրն է մինչ այդ եղած գներից, կարող է կազմել 986,71 մլն դոլար: Հարցը ոչ այնքան այդ տարրերի արժեքին է վերաբերում, որքան դրանց վտանգավորությանը:

Միևնույն ժամանակ՝ թե ինչ վտանգներ են սպասվում տարածաշրջանին, հատկապես Սիսիանի շրջանի բնակչությանը, տարածաշրջանում արածող կենդանիներին ցիանիդների օգնությամբ «կուտակային տարրալուծման» եղանակով ոսկու կորզման հետևանքով, դժվար է այժմ կանխագուշակել, քանի որ այդ եղանակը Հայաստանում կիրառվելու է առաջին անգամ: Բայց, որ դա բոլորովին անվտանգ լինել չի կարող, ինչպես հավաստիացնում են «Գեոթիմ» ընկերության անդամները, կասկածից վեր է:

Ոմանք, հատկապես հանքաքարերից ազնիվ մետաղներ կորզողները, ովքեր ինչ-որ չափով տեղյակ են ցիանիդներին առնչվող քիմիական գիտությանը, հայտարարում են, որ ցիանիդները օդում արագ քայքայվում են և դառնում բոլորովին անվտանգ: Դրանք ճիշտ են այն հարցում, որ ցիանիդները օդում՝ CO_2 գազի ազդեցությամբ բավականին արագ քայքայվում են անջատելով ուժեղ (շատ ուժեղ) թունավոր նյութ՝ կապտաթթու (սինիլաթթու) (HCN) դառնալով կարբոնատ: Ահա դրա քիմիական ռեակցիան՝ $2KCN+H_2O+CO_2=K_2CO_3+2HCN$: Բայց, հարկ ենք համարում նշել, որ այդ քայքայումը տեղի է ունենում ոչ թե ակնթարթաբար, այլ ժամանակի ընթացքում, հակառակ դեպքում ցիանիդները չէին կարողանա կատարել իրենց տարրալուծման գործողությունը: Կապտաթթուն (սինիլաթթուն) էլ արագ ցնդող (դարձյալ ոչ ակնթարթային, այլ ժամանակի ընթացքում) նյութ է, և այդ գործընթացն անվտանգ, բայց ոչ բոլորովին, կարող է լինել, եթե ազնիվ մետաղների «կուտակային տարրալուծման» գործողությունը կատարվեր մեկ օր (մեկ կամ երկու անգամ): Սակայն այդ գործողությունը կատարվելու է անընդհատ, ամեն օր, ամեն ամիս և տարիներ շարունակ: Հետևապես ցիանիդները և դրանց քայքայման հետևանքով առաջացող կապտաթթուն (սինիլաթթուն) դեռևս չցնդած ու չոչնչացված միջավայր են նետվելու դրանց նորանոր բաժիններ, որոնք տարածվելու են լեռնալանջերով ներքև: Դրանք վտանգավոր կարող են լինել հատկապես անձրևների ժամանակ, քանի որ ցիանիդները ջրում ենթարկվելով հիդրոլիզի, առաջացնում են ալկալի միջավայր և կապտաթթու (սինիլաթթու)՝ $KCN+H_2O=K^{+}+OH^{-}+HCN$:

Կարծում ենք «կուտակային տարրալուծման» տեղամասից (տեղամասերից) գիպսոմետրիկ ներքև ընկած տարածքներում արածող կենդանիները կարող են ենթարկվել թունավորումների կապտաթթվի (սինիլաթթվի) այն բաժիններով, որոնք դեռևս չեն հասցրել ցնդել, բայց հասցրել են հասնել արոտավայրեր:

Ահա՜ սրանք են մեր կասկածները, որոնք կարող են հաստատվել կամ փարատվել ազնիվ մետաղների կորզման որոշակի ժամանակ անց (3-4 տարի հետո):

Грачик Авакян

ОЦЕНКА ПОЛУЧЕННЫХ ПОСЛЕ ИЗВЛЕЧЕНИЯ ЗОЛОТА ОТХОДОВ И ИХ ЭКОЛОГИЧЕСКИХ ПОСЛЕДСТВИЙ АМУЛСАРСКОГО МЕСТОРОЖДЕНИЯ ЗОЛОТА

Аннотация

В статье обсуждаются вопросы вреда и опасности, наносимых природной среде в результате разработки Амулсарского месторождения золота. В результате подсчета данных 40 анализов проб показано количество опасных тяжелых металлов и ядовитых элементов, оставшихся на территории верхнего течения реки Воротан после извлечения золота путем кучного выщелачивания руды, которые вредны для животного мира.

Hrachik Avagyan

"EXTRACTED SCRAPS" OF AMULSAR "GOLD MINE" AND THE ENVIRONMENTAL Ddamage CAUSED BY THEM

Abstract

The article discusses the environmental damage and threats caused by exploiting the mine. Based on the calculations made on the results of 40 tests the article justifies that after extracting gold by heap-leach technique the toxic elements and heavy metals that remain on the site, the area of upper streams of Vorotan River could be extremely dangerous for humans and animals.

ՀՐԱՉԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, երկր. հանք. գիտ. դոկտոր

ԻՐԻՆԱ ՏԱՐԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ԱԶՆԻՎ ՄԵՏԱՂՆԵՐԸ ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԵՐՈՒՄ

Ա.Ֆարամազյանի[1] տվյալներով մոլիբդենի 49,4%-անոց խտանյութում ազնիվ մետաղների պարունակությունները կազմում են. ոսկունը՝ 1 գ/տ, արծաթինը՝ 30,3 գ/տ, պալադիումինը՝ 0,22 գ/տ, պլատինինը՝ 0,39 գ/տ:

Պղնձի 16,45%-անոց խտանյութում ոսկու պարունակությունը կազմում է 1,8 գ/տ, արծաթինը՝ 41,8 գ/տ, պալադիումինը՝ 0,065 գ/տ, պլատինինը՝ 0,008 գ/տ: Այժմ Զանգեզուրի պղնձա-մոլիբդենային կոմբինատի կողմից թողարկվում է պղնձի խտանյութ ոչ թե 16-17% պղնձի պարունակությամբ, այլ 28%: Եթե ազնիվ մետաղների պարունակությունները վերահաշվարկենք 28% պղնձի խտանյութի համար, ապա ոսկու պարունակությունը կկազմի 3,06 գ/տ, արծաթինը՝ 71,14 գ/տ, պալադիումինը՝ 0,1106 գ/տ, պլատինինը՝ 0,0136 գ/տ:

Եթե մոլիբդենի 49,4%-անոց խտանյութում, որտեղ մոլիբդենիտ հանքանյութի բաժինը կազմում է 82,47%, ապա մաքուր մոլիբդենիտ հանքանյութի մեջ ազնիվ մետաղների պարունակությունները կկազմեն. ոսկունը՝ 1,213 գ/տ, արծաթինը՝ 36,74 գ/տ, պալադիումինը՝ 0,2668 գ/տ, պլատինինը՝ 0,4729 գ/տ: Պղնձի 16,45%-անոց խտանյութում խալկոպիրիտ հանքանյութի բաժինը կազմում է 47,58%, այս պարագայում մաքուր խալկոպիրիտ հանքանյութի մեջ ազնիվ մետաղ-

[1] Фарамазян А.С., Калинин С.К., Терехович С.Л. Особенности геохимии элементов групы платины в рудах медно-молибденовых месторождений Армении. ДАН СССР, т. 190, № 6, с. 1455-1457.

ների պարունակությունները կկազմեն. ոսկունը՝ 3,78 գ/տ, արծաթինը՝ 149,394 գ/տ, պալադիումինը՝ 0,1366 գ/տ, պլատինինը՝ 0,0168 գ/տ:

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի 2006թ. հաստատված հաշվեկշռային պաշարների քանակները կազմում էին. հանքաքարերինը՝ 2.230.763,6 հազ.տ, պղնձինը՝ 5250,34 հազ.տ, մոլիբդենինը՝ 727.800,2տ, ոսկունը՝ 59010,59կգ, արծաթինը՝ 3314,07տ: 2006թ. մինչև 01.01.2013թ. հանքավայրի ընդերքից արդյունահանվել և մշակվել են մոտավորապես 56363,6 հազ. տ հանքաքարեր, հետևապես առ 01.01.2013թ. դրությամբ հանքավայրում մնացած հաշվեկշռային պաշարների քանակները կազմում են. հանքաքարերինը՝ 2.174.400 հազ. տ, պղնձինը՝ 5117,69 հազ. տ, մոլիբդենինը՝ 709412,23 տ, ոսկունը՝ 57.519,68 կգ, արծաթինը՝ 3230,34 տ:

Հաշվարկները ցույց են տալիս, որ 5117,69 հազ. տ պղնձին համապատասխանում է 14.803.847,27 տ խալկոպիրիտ հանքանյութ, իսկ 709412,23 տ մոլիբդենին՝ 1.184.327,6 տ մոլիբդենիտ հանքանյութ: Այս տվյալներով և ազնիվ մետաղների վերը բերված պարունակություններով այժմ հաշվարկենք ազնիվ մետաղների քանակները Քաջարանի հանքավայրի հիմնական մոլիբդենիտ և խալկոպիրիտ հանքանյութերում:

- Մոլիբդենի մոլիբդենիտ հանքանյութում ոսկու քանակը կազմում է 1436,59կգ, արծաթինը՝ 43,51տ, պալադիումինը՝ 316կգ, պլատինինը՝ 560,07կգ:
- Պղնձի խալկոպիրիտ հանքանյութում ոսկու քանակը կազմում է 55.958,54կգ, արծաթինը՝ 2211,6տ, պալադիումինը՝ 2022,2կգ, պլատինինը՝ 248,7կգ:

Ազնիվ մետաղների ընդհանուր քանակները Քաջարանի հանքավայրի երկու հիմնական մոլիբդենիտ և խալկոպիրիտ հանքանյութերի մեջ 01.01.2013թ. դրությամբ կազմում են. ոսկունը՝ 57395,13կգ, արծաթինը՝ 2255,11տ, պալադիումինը՝ 2338,2կգ, պլատինինը՝ 808,77կգ: Երբ այստեղ հաշվարկված ոսկու և արծաթի քանակները համեմատում ենք նույն մետաղների հաստատված պաշարների հետ տեսնում ենք, որ ոսկու գծով երկու տվյալները համընկնում են համարյա 100 տոկոսով, սակայն արծաթի գծով տարբերությունը զգալի է. արծաթի հաշվարկված քանակը 975,23 տոննայով պակաս է հաստատված պաշարից: Դրա պատճառը, հավանաբար, երկրաբանական գիտությունների ինստիտուտի քիմիական լաբորատորիայի սխալն է, կամ այդ քանակը կապված է պիրիտ հանքանյութի հետ: Այդ հարցը ճշտելու համար դիմենք մեկ այլ հաշվարկի.

2003 թ. Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից թողարկված պղնձի 27,41% պարունակության խտանյութում արծաթի պարունակությունը՝ երկրաբանական գիտությունների ինստիտուտի քիմիական լաբորատորիայի կողմից կատարված անալիզներով, կազմել է 65,5 գ/տ, հետևապես մաքուր խալկոպիրիտ հանքանյութի մեջ արծաթի պարունակությունը կկազմի 82,61 գ/տ, որը 1970 թ. Ա.Ֆարամազյանի տվյալներից փոքր է 66,784 գ/տ-ով: Այս փաստն ասում է այն մասին, որ Հայաստանի երկրաբանական գիտությունների ինստիտուտի քիմիական լաբորատորիան արծաթի գծով անալիզներ կատարելիս ունենում է պարբերական ցածր տվյալներ: Սակայն, քանի որ պլատինոիդների գծով այլ տվյալներ չունենք, վերը բերված տվյալներն ընդունում ենք որպես հիմք և հետագա տնտեսական հաշվարկները կատարում ենք այդ տվյալներով:

Քաջարանի հանքավայրի շահագործման վերջին տեխնիկատնտեսական հիմնավորման համաձայն հանքավայրի ընդերքից տարեկան 9 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում պետք է ստացվեն.

- պղնձի խտանյութ՝ 60170տ, պղնձի 28% պարունակությամբ,
- մոլիբդենի խտանյութ՝ 6400տ, մոլիբդենի 50% պարունակությամբ:

Այժմ Քաջարանի հանքավայրի ընդերքից Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը տարեկան արդյունահանում և մշակում է 20 մլն տ հանքաքար: Եթե օգտակար տարրերի կորզումները կատարվեն նույն հարաբերականությամբ (նույն տոկոսներով), ապա պետք է, որ ստացվեն.

- պղնձի խտանյութ՝ 133710տ, պղնձի 28% պարունակությամբ,
- մոլիբդենի խտանյութ՝ 14220տ, մոլիբդենի 50% պարունակությամբ:

Այս պարագայում ազնիվ մետաղների կորզումները Ա.Ֆարամազյանի տվյալներով հաշվարկված, կարող են կազմել.

- պղնձի խտանյութում (108.298,5տ խալկոպիրիտի մեջ). ոսկունը՝ 409,37կգ, արծաթինը՝ 16,18տ, պալադիումինը՝ 14,8կգ, պլատինինը՝ 1,82կգ,
- մոլիբդենի խտանյութում (11869,8տ մոլիբդենիտում). ոսկունը՝ 14,4կգ, արծաթինը՝ 436,1կգ (0,436տ), պալադիումինը՝ 3,17կգ, պլատինինը՝ 5,61կգ:

Կորզվող ազնիվ մետաղների ընդհանուր քանակը 20 մլն տ հանքաքարերից կարող է կազմել. ոսկունը՝ 423,77կգ, արծաթինը՝ 16,616տ, պալադիումինը՝ 17,97կգ, պլատինինը՝ 7,43կգ:

Պ.Ալոյանը[1] գրում է. «Շատ ու շատ երկրներում հանքաքարերի համալիր մշակման պարագայում կորզվում են շատ ավելի փոքր պարունակություններով ազնիվ մետաղներ. ոսկի՝ 0,1 գ/տ պարունակությամբ, արծաթ՝ 1-2 գ/տ, պալադիում՝ 1-2 մգ/տ, պլատին՝ 1-2 մգ/տ: Հարց. Ինչո՞ւ նույնը չի կարելի անել մեզ մոտ՝ Հայաստանում, և այն էլ այն պարագայում, երբ ազնիվ մետաղների պարունակությունները չափվում են տասնյակ և հարյուրավոր միլիգրամներից մինչև մի քանի գրամը»:

Հայտնի է, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից թողարկված պղնձի խտանյութի վաճառքի ժամանակ գնահատվում է նաև խտանյութ անցած ոսկու մի մասը (կարծում ենք 60%-ը) այն էլ այն պարագայում, եթե ոսկու պարունակությունը խտանյութում ցածր չէ 3,5 գ/տ-ից: Մյուս բոլոր ազնիվ մետաղները՝ մոլիբդենի խտանյութում ամբողջությամբ, իսկ պղնձի խտանյութում ոսկու 40%-ը և մյուսներն ամբողջությամբ չեն գնահատվում և փոշիացվում են:

Այսպիսով. պղնձի խտանյութում առկա 409,37 կգ ոսկուց փոշիացման է ենթարկվում 163,75 կգ, արծաթ՝ 16,18 տ, պալադիում՝ 14,8 կգ, պլատին՝ 1,82 կգ: Մոլիբդենի խտանյութում առկա ազնիվ մետաղները փոշիացվում են (գնորդներին են նվիրվում) ամբողջությամբ՝ ոսկի՝ 14,4 կգ, արծաթ՝ 436,1 կգ, պալադիում՝ 3,17 կգ, պլատին՝ 5,61 կգ: Փոշիացվող ազնիվ մետաղների ընդհանուր քանակը կազմում է. ոսկունը՝ 178,15 կգ, արծաթինը՝ 16,616 տ, պալադիումինը՝ 17,97 կգ, պլատինինը՝ 7,43 կգ:

Պղնձի խտանյութում փոշիացվող ազնիվ մետաղների արժեքը՝ 2013թ. փետրվարին գործող գներով (ոսկու մեկ գրամի գինը 51,01 դոլար, արծաթինը, 0,93 դոլ., պլատինինը՝ 51,96 դոլար, պալադիումինը՝ 23,92 դոլար) կազմում է 23 մլն 853 հազ. 387 դոլար, իսկ մոլիբդենի խտանյութում՝ 1 մլն 507 հազ. 439 դոլար: Պղնձի և մոլիբդենի խտանյութերում, մեկ տարվա աշխատանքի արդյունքով, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն ազնիվ մետաղների փոշիացման հետևանքով ունենում է 25 մլն 360 հազ. 826 դոլարի կորուստ:

Նշված 25 մլն 360 հազ. 826 դոլարի կորստի մեջ ոսկու և արծաթի բաժինը կազմում է 24 մլն 639 հազ. 441 դոլար, իսկ պլատինոիդների խմբի մետաղներինը (պլատինինն ու պալադիումինը)՝ 821 հազ. 385 դոլար:

Грачик Авакян

БЛАГОРОДНЫЕ МЕТАЛЛЫ В МИНЕРАЛАХ КАДЖАРАНА

Аннотация

В статье по данным литературных источников оценены размеры финансовых потерь горнорудного комбината в результате распыления благородных металлов, перешедших в концентраты меди и молибдена Каджаранского медно-молибденового месторождения. Выяснено, что при ежегодной добыче и переработке 20 млн. тонн руды и продаже полученных концентратов меди и молибдена, горнорудный комбинат в результате недооценки только благородных металлов – золота, серебра, платины и палладия, недополучает 25.36 млн долларов.

[1] Алоян П.Г., Алоян Г. П. Платиноиды в промышленных рудах Армении. Ереван, ГЕОИД, 2003, 162с.

Hrachik Avagyan

PRECIOUS METALS IN QAJARAN MINE

Abstract

The article, based on the data provided by various authors, provides an estimate of losses that the mining company suffers owing to precious metals that appear in the concentrates of copper and molybdenum in Qajaran cooper and molybdenum extraction site. It has been identified that owing to extraction, processing of 20 million tons, and sales of concentrates the loss that mining company suffers is estimated to be 25.36 million USD due to the quantities of precious metal that appear in the concentrates such as gold, silver, platinum and palladium.

ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, տ.գ.դ., պրոֆեսոր

ԳՈՀԱՐ ՆԱՎՈՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասպիրանտ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԲԻՈԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Աշխարհում վառելիքաէներգետիկ ռեսուրսները իրենց հիմքում ունեն երեք աղբյուր՝

1. արևային էներգիա
2. հանածո էներգակիրներ (գազ, նավթ, ածուխ և այլն), որոնք կուտակվել են երկրի ընդերքում
3. գրավիտացիոն էներգիա՝ առաջացնելով մակընթացություններ և տեղատվություններ:

Այս երեք աղբյուրներից գլխավորը արևային էներգիան է, որը ինչպես և քամու, ջրի և կենսազանգվածի էներգիան դասվում է վերականգնվող էներգիաների շարքին: Հանածո էներգիայի աղբյուրները, այնպիսին ինչպիսիք են նավթը, գազը, քարածուխը, իրենցից ներկայացնում են միլիոնավոր տարիներ կուտակված արևային էներգիա, բայց այսօր պայմաններ չկան դրանց առաջացման համար և այդ պատճառով էլ դասվում են չվերականգնվող էներգիայի աղբյուրների շարքին: Մարդկության էներգիայի պահանջմունքների 70%-ից ավելին բավարարվում է հանածո վառելիքի հաշվին: Բացի դրանից վերջին 50 տարիների ընթացքում էներգիայի օգտագործումը ավելի արագ տեմպերով է աճել, քան երկրագնդի բնակչությունը, և մոտ ապագայում այդ միտումները պահպանվելու են: Հաշվարկներն ու կանխատեսումները հաստատում են, որ չվերականգնվող էներգիայի պաշարները 21-րդ դարի ընթացքում հիմնականում ծախսվելու են: Որքան վաղ կստեղծվեն տեխնոլոգիաներ չվերականգնվող հանածո էներգակիրներին փոխարինելու համար, այնքան շատ կլինեն հնարավորություններն ապագայում մարդկության էներգետիկ կարիքները բավարարելու:

Հետազոտությունները վկայում են, որ ներկայումս աշխարհում սպառվող առաջնային էներգիայի մոտ 20%-ը բաժին է ընկնում վերականգնվող էներգիային, ընդ որում դրա 2/3-ը կազմում է կենսազանգվածից ստացվող և միայն 1/3-ը՝ հողմային էներգիայից: Վերականգնվող էներգիակիրների օգտագործման մասնաբաժինը և կառուցվածքը կախված է բնակլիմայական պայմաններից, պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանից, գիտատեխնիկական առաջընթացի տեմպերից և այլ գործոններից:

Գիտության և տեխնիկայի զարգացման ներկայիս տեմպերը ագրարային արտադրությունում առաջացրեցին և զարգացրեցին բիոէներգետիկան՝ հիմնված բիոզանգվածի վրա, որը թույլ է տալիս բիոզանգվածից ստանալ հետևյալ տեսակի բիոէներգետիկ ռեսուրսները.

- բիոդիզել, որը ստացվում է հլածուկի յուղից,
- բիոէթանոլ՝ ոչ հացահատիկային հումքից,
- բիոգազ՝ անասնաբուծության, թռչնաբուծության և վերամշակող արդյունաբերության մնացորդներից,
- բիովառելիք, օրգանական թափոններից պիրոլիզի միջոցով ստացվող (պինդ, հեղուկ, գազանման),
- պինդ բիովառելիք՝ փայտամշակման և անտառների մնացորդներից
- բիոբութանոլ՝ օրգանական հումքից:

Ի տարբերություն այլընտրանքային էներգիայի մնացած տեսակների, բիոզանգվածը հնարավոր է կուտակել, պահեստավորել, պահպանել և վերածել անհրաժեշտ ձևի էներգիայի՝ պահանջի դեպքում: Տարբեր տեխնոլոգիաների կիրառմամբ բիոզանգվածից ստանում են հեղուկ, պինդ և գազանման էներգակիրներ, որից հնարավոր է ստանալ ջերմային, էլեկտրական, մեխանիկական էներգիա: Ներկայում բիոզանգվածից էներգիայի վերածման պրոցեսը մեխանիկական է, բայց ավելի հաճախ անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ ծախսեր պահանջող ջերմաֆիզիկական, ֆիզիկաքիմիական կամ բիոքիմիական պրոցեսներ:

Օրգանական մնացորդներն ըստ ծագման կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ արդյունաբերական և քաղաքային մնացորդներ, բուսաբուծության երկրորդական արտադրանք, անասնաբուծության մնացորդներ:

Վերջին երկու խումբը պատկանում են գյուղատնտեսական ծագման թափոններին, որոնք իրենց բնական վիճակում ունեն ոչ բարձր որակական հատկանիշներ, ինչը թույլ է տալիս դրանք համարել ցածրորակ վառելիք: Անասնապահության մնացորդները ունեն բնական բարձր խոնավություն, ինչը խոչընդոտում է նրա օգտագործումն առանց նախնական չորացման: Գյուղատնտեսական թափոնների էներգետիկ նպատակներով օգտագործման ընդհանուր խնդիրը տարածքային առումով ապակենտրոնացված լինելն է, որը դժվարություններ է ստեղծում հիմնելու խոշոր վերամշակող կենտրոններ գյուղական շրջանները լրացուցիչ էներգիայով ապահովելու համար: Գոմաղբի միջին օրական ելքը 200 գլուխ կաթնային մասնագիտացմամբ ֆերմաներում կազմում է ավելի քան 10 տ, համալիրներում՝ 30-60 տ: 1 կգ կաթի հաշվով գոմաղբի ելքը կարող է կազմել 3-5 կգ[1]:

Բիոէներգետիկ ռեսուրսների արտադրության հիմնական ուղղությունները ներկայացված են գծապատկեր 1-ում:

Գոմաղբի և թռչնաղբի ավանդական մեթոդներով օգտահանումը (ուտիլիզացիա), պահպանումը, ախտահանումը պահանջում է հողային տարածքներ, վառելիքի և էներգիայի ծախս: Միայն բարձման-բեռնաթափման և տրանսպորտային աշխատանքների վրա ծախսվում է անասնաբուծական ֆերմայի կամ համալիրի ամբողջ ծախսերի 25-40%-ը: Դրանց մոտ կեսը բաժին է ընկնում գոմաղբի հեռացման համակարգին:

Գոմաղբի օգտահանության եղանակը փոխկապակցված է մի շարք գործոնների հետ և կախված է անասունների ու թռչունների գլխաքանակի խտությունից, պահվածքի ձևից, մասնագիտացումից, ցամքարայի նյութից, սննդի ռացիոնից: Ըստ Կուզմենկոյի, անասունների և թռչունների գլխաքանակի ավելացմանը զուգահեռ, որպես կանոն, աճում են վառելիքաէներգետիկ ռեսուրսների տեսակարար ծախսերը՝ գոմաղբի և թռչնաղբի հավաքման և հեռացման:

[1] http://globalunichip.ru/oborudovanie-ferm/212-vyhod-navoza-i-rashod-podstilki.html

Գծապատկեր 1

Տնտեսության ագրարային հատվածի բիոէներգետիկ ռեսուրսների արտադրության հիմնական ուղղությունները



100 կով ունեցող ֆերմայում գոմաղբի հեռացման վրա ծախսվում է 6 Կվտժ էներգիա 1 գլխի համար, իսկ 400 գլուխ ունեցող ֆերմայի համար՝ 11,8 Կվտժ: Գոմաղբը համարվում է բարձրորակ էներգիայի աղբյուր: Տեղացի և արտասահմանյան հետազոտողների կողմից հաստատված է, որ անաերոբ խմորման պայմաններում 1 տ գոմաղբից կարելի է ստանալ 40-65 մ^3 բիոգազ: Բիոգազի ջերմատվությունը կազմում է 6-7,5 Կվտժ/մ^3, որը համապատասխանում է 0,7-0,9 կգ պայմանական վառելիքի: 1 կովից տարեկան ստացվող գոմաղբը վերամշակելուց հնարավոր է ստանալ 580-680 մ^3 բիոգազ, որը համազոր է 480-520 կգ պայմանական վառելիքի: Այսպիսով, կաթնային ուղղվածությամբ ֆերմաներում կամ համալիրներում գոմաղբի հավաքման, օգտահանության, հեռացման պրոցեսները, որոնք ամբողջությամբ էներգատար և էներգիայի ծախս պահանջող պրոցեսներ են՝ կարող են դառնալ էներգիագեներացնող:

Գոմաղբի օրական ելքը տատանվում է լայն սահմաններում և կախված է պահվածքի եղանակից (ցամքարայով կամ առանց դրա), կենդանու տեսակից և սեռահասակային խմբից, սննդի ռացիոնի բաղադրությունից և կերակրման եղանակից և վերջապես գլխաքանակի խտության աստիճանից ու արտադրական հզորությունից:

Գոմաղբի քանակությունը $Q_{օր}$ կգ, որը հնարավոր է ստանալ մեկ կենդանուց մեկ օրում, հաշվարկվում է հետևյալ բանաձևով[1].

$$Q_{օր} = 4(0,5ΣK_{չ.ն.} + Π_{չ.ն.})$$

որտեղ $K_{չ.ն.}$– սննդի ռացիոնում չոր նյութերի քանակը, կգ,

$Π_{չ.ն.}$– ցամքարայում չոր նյութերի քանակը, կգ:

Գոմաղբի տարեկան ելքը հաշվարկվում է:

$$Q_{տար} = (q_{արտ} + q_{մ} + q_{ջ} + Π)Դm$$

որտեղ $q_{արտ}$ – մեկ կենդանու միջին օրական արտաթորանքն է, կգ,

$q_{մ}$ – մեկ գլխի հաշվարկով մեզի օրական քանակն է, կգ,

$q_{ջ}$ – մեկ կենդանու գոմաղբի հեռացման վրա օրական ծախսվող ջրի քանակը,կգ,

Π – մեկ գլխի հաշվով ցամքարայի օրական նորման, կգ,

Դ - գոմաղբի կուտակման օրերի քանակը,

m – կենդանիների թիվը շենքում:

Գիտահետազոտական ինստիտուտների կողմից կատարվել են հաշվարկներ, մշակվել են օրինակելի նորմատիվային ցուցանիշներ՝ գոմաղբի և թռչնաղբի անաերոբ խմորման միջոցով բիոգազի ստացման:

Աղյուսակ 1

Անասնաբուծական թափոններից տարբեր տեխնոլոգիաների միջոցով ստացվող բիոգազի օրինակելի նորմաները[2]

Արտադրության և տեխնոլոգիայի ձևը	Բիոգազի օգտակար ելքը 1 գլխի հաշվով տարեկան, կգ պ.վ.	Բիոգազի օգտակար ելքը 1 գլխի հաշվով տարեկան, Կվտժ
Կաթի արտադրություն կովերի կապովի պահվածքի դեպքում	840	4000
Կաթի արտադրություն կովերի ազատ պահվածքի դեպքում	520	4330
Կաթի արտադրություն կովերի զուգակցված պահվածքի դեպքում	505	4210
Հոտի համալրման նպատակով մատղաշի աճեցում	270	2250
Մատղաշի բտում կլոր տարին ազատ պահվածքի պայմաններում	195	1625
Խոզերի բտում	116	964
Ձվի արտադրություն	15,5	129
Թռչնի մսի արտադրություն (բրոյլեր)	9,1	76

[1] http://globalunichip.ru/oborudovanie-ferm/212-vyhod-navoza-i-rashod-podstilki.html

[2] Биоэнергия, основные данные, nachwachsende-rohstoffe.de (Возобновляемые энергии в ЕС)

Բիոգազը, ինչպես և բնական գազը հնարավոր է բազմակի ձևերով օգտագործել: Օրինակ, Գերմանիայում արդեն կան արդյունաբերական բիոգազային տեղակայանքներ տարբեր հզորությամբ, որտեղ բիոգազը օգտագործվում է ջերմային և էլեկտրական էներգիա ստանալու համար փոքր ՋԷԿ-երում: Հետազոտությունները, որոնք կատարվել են Գերմանիայի դաշնային տարբեր հողերում, գրականության աղբյուրների վերլուծությունը հաստատում են, որ 1մ^3 բիոգազից հնարավոր է արտադրել 5-7 Կվտժ էներգիա կամ 0,60-0,84կգ պ.վ.:

Բիոգազի արտադրությունը բազմաստիճան պրոցես է, որտեղ միկրոօրգանիզմները անաերոբ խմորման պայմաններում (առանց թթվածնի մուտքի) նյութափոխանակության համար օգտագործում են քիմիական էներգիան՝ կուտակված օրգանական զանգվածի ածխաջրերում, ճարպերում և սպիտակուցներում: Ինչպես բոլոր նյութափոխանակության պրոցեսներում, բիոգազի առաջացման պրոցեսում էլ պահանջվում է միջավայրի բարենպաստ պայմաններ, որոնց մեջ կարևոր են ջերմաստիճանը, pH, միջավայրի կոնցենտրացիան և քիմիական ռեակցիան դանդաղեցնող նյութերը: Ջերմաստիճանը բարձրացնելուց ռեակցիան արագանում է: Բիոգազային տեղակայանքների մեծամասնությունը աշխատում է 25-40° C-ի պայմաններում՝ դա օպտիմալ ռեժիմ է: Տեղակայանքների մեծամասնությունը աշխատում են խոշոր եղջերավոր անասունների հեղուկ գոմաղբով, ավելի հազվադեպ՝ խոզի: Բայց քանի որ հեղուկ գոմաղբում ածխաջրերի, ճարպերի և սպիտակուցների գումարային պարունակությունը հարաբերականորեն ցածր է, հիմնական միջավայրը ենթարկում են կոֆերմենտացիայի, այսպես կոչված, կոսուբստրատներով, ինչի արդյունքում բիոգազի արտադրությունը մեծանում է:

Կոսուբստրատներ կարող են ծառայել գյուղատնտեսական արտադրության բուսական մնացորդները և կենսազանգվածը: Անասնաբուծության թափոններից բիոգազի ելքի վրա ազդում են, օրինակ, կերը, կենդանու պահվածքի ձևը և գոմաղբի հեռացման եղանակը, գոմաղբի պահպանման տևողությունը: Տարբեր սուբստրատներից բիոգազի ելքի ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ ավելի մեծ արդյունավետությամբ աչքի են ընկնում բուսական ծագման մնացորդները՝ եգիպտացորենի սիլոսը, տարբեր հատիկային կուլտուրաների մանրացված ծղոտը:

Աղյուսակ 2

Գյուղատնտեսական տարբեր թափոններից բիոգազի ելքը[1]

Թափոնի տեսակը	Բիոգազի ելքը 1տ թափոնից, մ^3
Խոշոր եղջերավոր անասունի գոմաղբ	50
Խոզի գոմաղբ	65
Մանր եղջերավոր անասունի գոմաղբ	38
Թռչնաղբ	90
Եգիպտացորենի սիլոս	400
Թարմ խոտ	500

Բայց բուսական ծագման մնացորդների օգտագործումը որպես միակ կամ հիմանական կոմպոնենտ, որպես խմորման սուբստրատ, նպատակահարմար չէ, քանի որ բույսերի արտադրությունը կապված է որոշակի ծախսերի հետ: Դրա համար էլ նպատակահարմար է որպես հիմնական կոմպոնենտ օգտագործել գոմաղբը, իսկ լրացուցիչ՝ բուսական ծագման հումքը:

Գյուղատնտեսական ձեռնարկությունների բիոգազային տեղակայանքներում բիոգազի ամբողջ պրոցեսը բաժանվում է հետևյալ փուլերի՝

- անասնաբուծական թափոնների (սուբստրատի) տեղափոխումը և նախապատրաստումը ֆերմենտացիային,
- ֆերմենտացիա-բիոգազի առանձնացում,

[1] Биоэнергия, основные данные, nachwachsende-rohstoffe.de (Возобновляемые энергии в ЕС)

- բիոգազի մաքրում և օգտագործում,
- ֆերմենտացիայի օրգանական մնացորդների պահպանում և օգտագործում:

Զտված, մաքրված բիոգազը կարելի է բազմաձև օգտագործել, ինչպես բնականը: Բիոգազից ջրածնի ստացումը դեռևս մնում է հեռավոր ապագայի խնդիր, բայց նրանից էլեկտրական էներգիա ստանալ, ավտոմեքենաների, տրակտորների, կոմբայնների համար որպես վառելիք օգտագործել արդեն հնարավոր է: Այսօր պահանջվում է դեռևս լուծել տեխնիկական, էկոլոգիական և իրավական հարցեր: Ամենաշատը ուսումնասիրված է բլոկային ջերմաէլեկտրակայաններում բիոգազից ջերմային էներգիայի և էլեկտրական էներգիայի ստացման տեխնոլոգիան: Բլոկային ջերմաէլեկտրակայանը կազմված է ներքին այրման շարժիչից, որն աշխատում է բիոգազով, որն էլ իր հերթին շարժման մեջ է դնում գեներատորը էլեկտրաէներգիայի ստացման համար: Փորձը ցույց է տալիս, որ 1 մ^3 բիոգազից հնարավոր է ստանալ 5-7 Կվտժ էներգիա, դրանից 1,5-2,5 Կվտժ էլեկտրական, այսինքն՝ շուրջ 1/3-ը, մնացած մասը կազմում է ջերմային էներգիան: Ջերմային էներգիայի 30-50%-ը օգտագործվում է պրոցեսն ապահովելու համար, իսկ 50-70% կարելի է օգտագործել շենքի տաքացման և տաք ջուր մատակարարելու համար: Այսպիսով, գոմաղբի վերամշակումը բիոգազային տեղակայանքում կարող է նպաստել բիոգազից ջերմային և էլեկտրական էներգիայի ստացմանը:

Աղյուսակ 3

Անասնաբուծական 1 տ թափոնից ջերմային և էլեկտրական էներգիայի ելքը[1]

Թափոնի տեսակը	էլեկտրաէներգիայի ելքը, Կվտժ	Ջերմային էներգիայի ելքը, Կվտժ
Խոշոր եղջերավոր անասունի գոմաղբ	84-114	105-143
Խոզի գոմաղբ	114-194	143-243
Մանր եղջերավոր անասունի գոմաղբ	50-91	87-120
Թռչնաղբ	103-207	129-259

Բիոզանգվածի վերամշակումից ստացվում է նաև բիոպարարտանյութ՝ ֆերմենտացիայի մնացորդը: Բիոպարարտանյութը ունիվերսալ է և կարող է օգտագործվել բոլոր տեսակի գյուղատնտեսական կուլտուրաների և ցանկացած տեսակի հողի համար: Օպտիմալ չափաբաժինը համարվում է 1հա-ի համար 300 կգ: Մեթանային խմորումը թույլ է տալիս պահպանել ամբողջ ազոտը ամոնիակային կամ օրգանական ֆորմաներում: Ֆոսֆորը բիոպարարտանյութում գտնվում է ֆոսֆատների ձևով, կալիումը՝ լուծվող աղի ձևով, որն էլ լավ յուրացվում է բույսերի կողմից: Համաձայն վիճակագրական տվյալների բերքի ավելացումը կարող է կազմել՝ ցորեն՝ մինչև 22%, հնդկաձավար՝ մինչև 27%, գարի՝ մինչև 14%, սիսեռավարսակային խառնուրդ՝ մինչև 34%, վարունգ՝ մինչև 25%, պոմիդոր՝մինչև 13%[2]:

Բիոպարարտանյութի օգտագործման այսպիսի բարձր արդյունավետությունը բացատրվում է միկրոբիոլոգիական պրոցեսների փոփոխություններով հենց հողում, որոնք նպաստում են սննդարար նյութերի առաջացմանն ու կուտակմանը բույսերի համար մատչելի ձևով: Բիոօրգանական պարարտանյութերի օգտագործումը տնտեսապես և էկոլոգիական տեսանկյունից շահավետ է հանքայինի համեմատությամբ:

Անասնաբուծության թափոններից բիոգազի արտադրության էկոլոգիատնտեսական արդյունավետությունը նպատակահարմար է գնահատել հետևյալ կրիտերիաներով.

- որպես վառելիք,
- որպես բիոպարարտանյութ,
- բնապահպանական էֆեկտ՝ հողի և ջրի քիմիական և բակտերիալ աղտոտվածության կրճատմամբ,
- օդի աղտոտման կրճատում՝ ավանդական վառելիքը բիոգազով փոխարինման հետևանքով:

[1] Белоусова, Н.И. ..Биогаз из органических отходов...
[2] Белоусова, Н.И. ..Биогаз из органических отходов...

Գազամատակարարման հուսալիությունն ապահովելու համար անհարժեշտ է, որպեսզի գյուղական ապրանքարտադրողները ունենան ստացվող բիոգազի մշտական պաշար: Ավելցուկի դեպքում այն կարելի է օգտագործել այլ արտադրական նպատակներով: Կարելի է պնդել, որ գյուղական բնակավայրերի մեծ մասը հնարավոր է գազաֆիկացնել բիոլոգիական վառելիքով: Դա թույլ կտա լուծել գյուղի կարևորգույն սոցիալական խնդիրներից մեկը:

1մ^3 բիոգազը էներգիայի պարունակությամբ համարժեք է 0,7-0,8 կգ պայմանական վառելիքի, 2 Կվտժ էլեկտրական էներգիայի, 0,6 կգ կերոսինի, 1,5 կգ քարածխի, 3,5 կգ փայտի, 0,4 կգ բութանի, 12 կգ գոմաղբի բրիկետի: 1 տ (չոր նյութերի հաշվով) օրգանական հումքից խմորման պրոցեսում առաջանում է մինչև 350-600 մ^3 բիոգազ[1]:

Համաձայն կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե.Ս.Պանցխավի, յուրաքանչյուր ռուբլի, ներդրված բիոէներգետիկ տեղակայնքի ստեղծման մեջ, կարող է տնտեսել տարեկան շուրջ 1,5-20 ռուբլի միայն էկոլոգիական էֆեկտի հաշվով:[2] Այսպիսով, բուսաբուծական որոշակի տեսակների երկրորդական արտադրանքի և անասնաբուծական թափոնների անաերոբ վերամշակումը բիոգազի և օրգանական պարարտանյութի բնութագրվում է բավականաչափ բարձր էկոլոգիատնտեսական արդյունավետությամբ: Խոշոր բիոէներգետիկ տեղակայնքների կողքին, մեր երկրի պայմաններում, բավականաչափ հեռանկարային կարող են լինել ոչ մեծ անհատական ԲԳՏ (բիոգազային տեղակայանքներ), որոնք կաշխատեն իրար փոխլրացման ռեժիմով՝ արևային, երկրաջերմային տաքացուցիչներով, հողմային ագրեգատներով, որպես բարձր արդյունավետությամբ, ավտոնոմ, էկոլոգիապես մաքուր և վերականգնվող էներգիայի աղբյուր ոչ մեծ բնակավայրերում կենցաղային նպատակով օգտագործման համար: Գյուղատնտեսական թափոնների վերամշակման կազմակերպատնտեսական մեխանիզմի մշակումը հիմնված է տեղական պայմանների մաքսիմալ օգտագործման վրա, ներկայացնում է գիտական հետաքրքրություն և կարող է նպաստել ռեգիոնի ագրոարդյունաբերական համալիրի վառելիքաէներգետիկ ռեսուրսների էական տնտեսմանը:

Մեր երկրում կենսազանգվածի արտադրության զարգացումը կարող է ագրարային հատվածի զարգացման մեջ մեծ ներդրում ունենալ, ինչը կօգնի լուծելու սոցիալական և էկոլոգիական խնդիրները, կլուծի գյուղատնտեսության էներգակախվածությունը՝ սեփական էներգառեսուրսների օգտագործման հաշվին:

Համաձայն USAID ծրագրի, Հայաստանում բիոգազի պոտենցիալը 2006-2020թթ. համար գնահատված է հետևյալ կերպ՝ 34.17 մլն դոլար ներդրման դեպքում ամեն տարի հնարավոր է ապահովել 38.34 մլն մ^3 բիոգազ, որը կրճատում է ջերմոցային գազերի մթնոլորտ արտանետումը և համարժեք է 544,6 հազար տոննա CO_2 տարեկան:[3]

Եզրակացություն: Հայաստանի համար վերականգնվող էներգետիկայի զարգացումը ռազմավարական նշանակություն ունի: Մեր հանրապետությունը չունի հանածո վառելիքաէներգետիկ ռեսուրսներ, և նրա կախվածությունը ներկրվող վառելիքից զգալի է: Վերականգնվող էներգետիկայի տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն կտա Հայաստանին մեծացնել էներգետիկ անկախությունն ու անվտանգությունը:

Գիտատեխնիկական առաջընթացը արդեն այսօր առաջարկում է տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ, որոնք այսօր թույլ են տալիս արդյունավետ օգտագործել գյուղատնտեսության էներգետիկ ռեսուսները՝ կենսազանգված, բուսական մնացորդներ, անասնաբուծական թափոններ և բավականին նվազեցնել էներգակախվածությունը կենտրոնական էներգամատակարարումից: Հայրենական և միջազգային փորձը հաստատում է, որ ժամանակակից աշխարհում ինտենսիվորեն ձևավորվում է ագրարային էկոնոմիկայի ինքնուրույն հատված՝ բիոէներգետիկա, որն հիմնված է բիոզանգվածի վերամշակման վրա, այդ թվում ագրարային արտադրանքի թափոնների վրա և որի արդյունքում ստացվում է որակյալ բիոգազ, ջերմային և էլեկտրական էներգիա, էկոլոգիապես մաքուր բիոպարարտանյութ:

---

[1] Биоэнергия, основные данные, nachwachsende-rohstoffe.de (Возобновляемые энергии в ЕС)
[2] Жученко А.А. ..Энергетический анализ в сельском хозяйстве..
[3] http://www.nature-ic.am/

Самвел Аветисян
Гаяне Навоян

ЭКОНОМИЧЕСКИЕ И ПРИРОДНО-КЛИМАТИЧЕСКИЕ ФАКТОРЫ РАЗВИТИЯ БИОЭНЕРГЕТИКИ В АГРАРНОМ СЕКТОРЕ ЭКОНОМИКИ

Аннотация

Сегодня восстанавливающаяся энергетика стала движущей идеей современного мира. До последнего времени бытовало мнение, что восстанавливающаяся энергетика имеет скорее всего природоохранное, нежели экономическое значение, поскольку не допускалась мысль о том, что в обозримом будущем восстанавливающаяся энергетика может стать серьезной альтернативой традиционным методам энергетики. В статье представлены виды возобновляемой энергии. Также показано, что биоэнергетика, основанная на биомассе, позволяет получить разные виды биоэнергетических ресурсов. Рассмотрены факторы экономического и био-климатического развития биогаза, его роль и значение в аграрном производстве. Биогаз, полученный в результате брожения анаэробов отходов животноводчества, считается универсальным топливом. Он используется для получения тепловой и электрической энергии. В статье рассмотрены полезный способ получения биогаза из животноводческих отходов, эколого-экономическая продуктивность получения биогаза, количество электроэнергии, полученной от него, органического удобрения.

Samvel Avetisyan
Gayane Navoyan

ECONOMIC AND NATURAL-CLIMATIC FACTORS AFFECTING THE DEVELOPMENT OF BIOENERGY IN AGRARIAN SECTOR OF THE ECONOMY

Abstract

Currently, the renewable energy is the driver of new ideas in the modern world. Up to present the idea that renewable energy has been viewed as a nature conservation tool and not of economic importance, since nobody had ever thought that in the foreseeable future renewable energy could be considered as a serious alternative to traditional energy. The article presents the types of renewable energy: bioenergy (based on bio-mass) produced from the use of various sources of energy; factors affecting economic and bio-climatic development; the role and importance of renewable energy in the agro-processing sector. The biogas that is produced due to anaerobic digestion of wastes of the cattle-breeding is considered a universal fuel. Biogas is used to produce heat and electricity. The article describes a useful process of producing biogas from wastes of the cattle-breeding, economic and environmental efficiency of biogas production; provides the estimates of kilowatt hours and organic fertilizers to be produced.

ԱՇՈՏ ԲԱՅԱՌՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տ.գ.դ., պրոֆեսոր

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐ

Գյուղատնտեսությունը հանրապետության կարևորագույն ճյուղերից է, որին վերջին 5 տարիների (2008-2012) միջին տվյալներով բաժին է ընկնում երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մոտ 17,0%-ը, իսկ հանրապետության ընդհանուր զբաղվածության մեջ գյուղատնտեսության մասնաբաժինը կազմում է 45,0%:

Միաժամանակ հանրապետության պարենային հաշվեկշռի տվյալներով տեղական արտադրության գյուղատնտեսական ծագման արտադրատեսակներին բաժին է ընկնում սպառված էներգետիկ արժեքի 58-60%-ը:

Ոլորտի կայուն զարգացման հիմնական ուղղություններից են գյուղտեխնիկայի հավաքակայանի արդիականացման, տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացման, կոոպերատիվ հիմունքներով տեխնիկական միջոցների օգտագործման մեխանիզմների ներդրման, ձեռքի աշխատանքի նվազման և ոլորտի աշխատանքի արտադրողականության բարձրացման պահանջները:

Ագրարային ոլորտի մրցունակության բարձրացման, գյուղատնտեսական արտադրատեսակների արտադրության ավելացման և ճյուղի արտադրական ներուժի լիարժեք օգտագործման հիմնական գործոններից մեկը համալիր մեքենայացումն է: Սակայն գյուղատնտեսության մեքենատրակտորային հավաքակազմի նորացման տեմպերը շատ ցածր են, որի հետևանքով առկա տեխնիկայի օգտագործումը ծախսատար է և ցածր արտադրողական:

Գյուղատնտեսության զարգացման համար տեխնիկական առաջընթացի և սահմանափակ ռեսուրսների պայմաններում հիմնական ուղին արտադրության արդիականացումն է: Սակայն Հայաստանի գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի և խիստ մասնատված հողակտորների պայմաններում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը լուրջ դժվարությունների է հանդիպում, մեծանում է մեքենայական ագրեգատների պարապուրդը և կրճատվում հիմնական աշխատանքի տևողությունը: Ճյուղի ինտենսիվացման մակարդակի բարձրացմանը խոչընդոտում են նաև գյուղատնտեսական տեխնիկայի ոչ բավարար լինելը, առկայի ծայրաստիճան բարձր մաշվածությունը և փոքր տնտեսություններում դրանց ոչ արդյունավետ օգտագործումը, որն էլ իր հերթին մեծացնում է նորոգումների ու տեխնիկական սպասարկումների ծախսերը և միաժամանակ բարձրացնում ծառայությունների սակագները:

Ակնհայտ է ձեռքի աշխատանքով զբաղվածության բարձր տեսակարար կշիռը և արտադրության ինտենսիվացման ցածր մակարդակը, և միաժամանակ շատ դեպքերում էլ մեքենայական աշխատանքների բարձր սակագների պատճառով ագրոտեխնիկական կանոններով պահանջվող գործընթացները կամ չեն կատարվում կամ էլ իրականացվում են ձեռքի աշխատանքով, որն էլ իր հերթին խիստ բարձրացնում է մշակության աշխատատարությունը՝ խախտելով աշխատանքների կատարման նորմավորված ժամկետները:

Ուստի, ելնելով հանրապետությունում տնտեսական աճի ապահովումից, արդեն խիստ անհրաժեշտություն է դարձել հասնելու գյուղատնտեսական տեխնիկայի վերազինմանն ու դրա օգտագործման արդյունավետության բարձրացմանը՝ հողօգտագործողների միջև համագործակցության տարբեր ձևերի խթանման և հողակտորների միավորման միջոցով: Այժմ ստորև

բերվող աղյուսակի տվյալներով ներկայացնենք 2012թ. վերջի դրությամբ ՀՀ-ում գյուղ. տեխնիկայի առկայի և սարքինության վիճակը:

Աղյուսակ

ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակը՝ ըստ 2012 թվականի

Անվանումներ	Առկա քանակը, հատ	որից սարքին վիճակում, հատ	Սարքինության մակարդակը, %
1. Տրակտորներ	14683	11625	79.2
2. Բեռնատար ավտոմեքենաներ	15294	11630	75,9
3. Հացահատիկահավաք կոմբայն	1362	1005	73.8
4. Տրակտորային կցասայլեր	6075	5284	87.0
5. Տրակտորային խոտհնձիչներ	1971	1693	85.9
6. Կերահավաք կոմբայններ	347	246	70.9
7. Հատիկազտիչ մեքենաներ	432	364	84.3
8. Տրակտորային շարքացաններ	1866	1615	86.9
9. Տրակտորային գութաններ	3809	3425	89.9
10. Կուլտիվատորներ	2210	1898	85.9
11. Հավաքիչ մամլիչ մեքենաներ	1524	1314	86.2
Ընդամենը	49573	40099	80,9

Վիճակագրական տեղեկագիր 2013թ.

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ 2012 թվականի վերջում գյուղ. տեխնիկայի փաստացի վիճակը կազմում է 49573 միավոր, որոնցից սարքին վիճակում եղել են 49099 միավոր, իսկ սարքինության մակարդակը կազմել է 80.9%: Միաժամանակ ըստ տարատեսակների 2013թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում առկա է 1362 միավոր հացահատիկահավաք կոմբայն, 347 միավոր կերահավաք կոմբայն, 15294 միավոր բեռնատար ավտոմեքենա, և 14683 միավոր տարբեր տեսակի տրակտորներ: Միաժամանակ ըստ տարատեսակների գյուղատնտեսական տեխնիկայի սարքինության մակարդակի վերլուծությունը ցույց է տալիս, որ ըստ այդ ցուցանիշի՝ տրակտորներինը կազմում է 79.2%, հացահատիկահավաք կոմբայններինը՝ 73.8%, խոտհնձիչներինը՝ 85.9%, գութաններին՝ 89.9%, կուլտիվատորներինը՝ 85.9%-ը և այլն: Սա առկա տեխնիկայի բարոյապես և ֆիզիկապես մաշվելու, ժամանակին չնորոգվելու և տեխնիկական խնամքի բացակայության հետևանք է, քանի որ աստիճանաբար նվազել է տեխնիկայի սարքինության մակարդակը, որն էլ մեծացնում է նորոգումների և տեխնիկական սպասարկումների ծախսերը՝ բարձրացնելով ծառայությունների սակագները:

Անհրաժեշտ է նշել նաև այն իրողությունը, որ գործող գյուղատնտեսական տեխնիկայի սահմանափակ քանակի, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի և մեծ թվաքանակի հետևանքով, դրանց որոշակի մասն է, որ ապահովված է սեփական միջոցներով: Այսպես, 100 գյուղացիական տնտեսության հաշվով ապահովվածության ցուցանիշը ըստ սարքին տեխնիկայի ունի հետևյալ տեսքը՝ կոմբայններինը՝ 0,3%, տրակտորներինը՝ 3.4 %, գութաններինը՝ 0.90%, շարքացաններինը՝ 0.5%:

Գյուղատնտեսության տեխնիկայի հավաքակայանի տարիքային կազմում տրակտորների ընդհանուր թվի 15.4 %-ը՝ շահագործվում է 30 տարուց ավելի, 32,8 %-ը՝ 26-30 տարի, 46.2%-ը՝ 11-25 տարի, 5.6%-ը ՝ մոտ 10 տարի:

Գյուղատնտեսական տեխնիկայի ավելացման նպատակով, դրամաշնորհների հաշվին, 1998-2010թթ. ներմուծվել են 116 հացահատիկահավաք կոմբայն և 885 տրակտոր, որը երկարաժամկետ ու աճուրդ վարձկալությունների միջոցով հատկացվել է հողօգտագործողներին: Միաժամանակ, «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստան» ծրագրից, «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի վարկային ծրագրի աջակցությամբ լիզինգային գործարքներում մատչելի գներով գյուղատնտեսությունում տնտեսվարողներին է տրամադրվել է 32 միավոր անիվավոր տրակտոր:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ցածր են գյուղացիական տնտեսությունների տեխնիկական միջոցներով ապահովվածության մակարդակը, կան դժվարություններ և ոչ հավասար պայմաններ գյուղացիական տնտեսությունների ու գյուղատնտեսական տեխնիկան տնօրինող սեփականատերերի միջև: Արդյունքում, տեխնիկական միջոցների ցածր արտադրողականությունը բացասաբար ներգործություն է ունենում գյուղատնտեսական արտադրության արդյունավետության վրա:

Գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումների և մատակարարումների գործընթացի բարելավումը հնարավոր է համարվում տարբեր դրամաշնորհային և վարկային ծրագրերով, պետական աջակցությամբ հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկական միջոցների բազայի հիման վրա՝ մեքենատրակտորային կայանների ստեղծման և դրանց գործունեության ապահովման միջոցով: Միաժամանակ, արտադրատեխնիկական սպասարկումների ներկա վիճակից ելնելով, առկա խնդիրների գնահատման արդյունքում, անհրաժեշտ է ոլորտում տեխնիկական վերազինման հիմնական ուղղությունների մշակում և դրանց համահունչ գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման միջոցով այդ ոլորտում տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացում: Ուստի դրանց հասնելու համար անհրաժեշտ է .

- համատեղ գործունեության նպատակով (պետություն – մասնավոր հատված) կոոպերացված սուբյեկտներին գյուղ. տեխնիկայի ձեռքբերման համար երկարաժամկետ և արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրում,
- դրամաշնորհներով ստացված գյուղատնտեսական տեխնիկայի բաշխման մեխանիզմների բարելավում՝ աջակցելով կոոպերատիվների ձևավորմանը,
- գյուղատնտեսական տեխնիկա արտադրող ընկերությունների հետ վստահելի փոխհարաբերությունների ձևավորում ներքին շուկայում՝ տեխնիկայի մատակարարման և տեխնիկական սպասարկումների ցանցի ստեղծման համար,
- գյուղատնտեսական արտադրությունում մեքենայական աշխատանքների ծավալների ընդլայնում և ծառայությունների մատչելիության ապահովում:

Գյուղատնտեսության մեքենատրակտորային կայանի հետագա համալրումը կարող է հիմնականում իրականացվել 7-10 տարի ժամկետով և մատչելի տոկոսադրույքով լիզինգային գործարքների իրականացմամբ

Պետք է նշել նաև այն իրողությունը, որ գյուղատնտեսության մեջ մեքենայական աշխատանքների իրականացումը կապված է ռիսկերի հետ: Այսպես, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և հողատեսքերի կտրտվածությունը բացասաբար է ազդում տեխնիկայի օգտագործման արտադրողականության վրա, որը պահանջում է միջոցառումների իրականացում տնտեսությունների խոշորացման և հողերի միավորման ուղղությամբ :

Այդ միջոցառումների թվին են դասվում՝

- ոլորտում տնտեսվարողների մրցունակության ապահովում և դրանց կենսամակարդակի բարձրացում,
- գյուղական համայնքների արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների զարգացում և գյուղական տարածքներում ոչ գյուղատնտեսական զբաղվածությամբ գործունեության ընդլայնում,
- գյուղական համայնքներում տնտեսվարողների համար վարկային միջոցների ձեռքբերման մատչելիության ապահովում և փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ընդլայնում:

Ագրարային ոլորտում տեխնիկական միջոցներով վերազինման և դրա օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ստեղծել նպաստավոր պայմաններ ու հնարավորություններ, որոնք պայմանավորված կլինեն կոոպերացված գյուղատնտեսական սուբյեկտների (կոոպերատիվների) լիարժեք գործունեությամբ: Ուստի այդ առումով էլ գյուղատնտեսական կոոպերատիվներին տեխնիկական միջոցներ տրամադրելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ սկզբունքները՝

- ըստ մարզերի և առանձին տարածաշրջանների գյուղատնտեսական տեխնիկայի ապահովվածության փաստացի մակարդակի գնահատմամբ,
- մրցութային կարգով կատարել մեքենայական աշխատանքներ իրականացնող կոոպերատիվների ընտրություն՝ պահպանելով հետևյալ պահանջները:

ա) կոոպերատիվը պետք է լինի 15 անդամից ոչ պակաս, և 40 հեկտար սեփականության իրավունքով մշակովի հողատարածք,

բ) կոոպերատիվի անդամները պետք է ունենան տեխնիկան օգտագործելու փորձ, որը կլինի վարձակալած կամ սեփական տեխնիկա:

Միջազգային փորձը վկայում է, որ կոոպերատիվի գործունեության պետական կարգավորման հիմնական ուղիներն են հարկման արտոնություններից օգտվելը, սուբսիդիաների տրամադրումը, արտոնյալ վարկավորումը և ապահովագրությունը: Միաժամանակ կարևորվում է ֆինանսական աջակցությունը՝ ուղղված գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ու իրացման կատարելագործմանը:

Այսպիսով, ագրարային ոլորտի առջև ծառացած խնդիրների որոշակի մասի լուծմանը կամ մեղմացմանը կարող են նպաստել տվյալ ճյուղում տեխնիկական միջոցներով վերազինումը և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը՝ հիմնվելով կոոպերացման գործընթացի արմատավորման և դրա գործունեության համար նպաստավոր պայմանների ու մեխանիզմների ստեղծման վրա:

Ашот Баядян
Лена Оганесян

НЕКОТОРЫЕ ВОЗМОЖНЫЕ ПУТИ ПЕРЕВООРУЖЕНИЯ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОЙ ТЕХНИКИ И ЭФФЕКТИВНОСТИ ЕЕ ИСПОЛЬЗОВАНИЯ

Аннотация

В условиях технического прогресса и ограниченности ресурсов основным направлением развития сельского хозяйства является индустриализация сельскохозяйственного производства. Для этого необходимо создание оснащенных новой сельскохозяйственной техникой кооперативов по их совместному использованию, которые позволят обеспечить эффективную организацию механизированных работ, рост производительности труда и снижение расходов по обслуживанию в полной себестоимости продукции, тем самым повышая конкурентоспособность местного производства. Следовательно, необходимо внедрение кооперации в сельском хозяйстве и создание благоприятных условий и механизмов для деятельности кооперативов.

Ashot Baydyan
Lena Hovhannisyan

THE POSSIBLE APPROACHES TO MODERNIZING AGRICULTURAL MACHINERY AND TO INCREASING THE UTILIZATION EFFICIENCY

Abstract

In case of technological progress and scarcity of resources production modernization is the main path to ensuring the development of the agriculture. Cooperatives are required that will own agricultural machinery to ensure efficient utilization of the machinery, increase in productivity, and reduction of cost of services in the per-unit self-cost, thus increasing the competitiveness of the local products. Hence, it is required to build the capacities of cooperatives and improve the conditions and offer such mechanisms that will promote establishment of cooperatives nationwide.

ԼՈՒՍԻՆԵ ԵԴԻԳԱՐՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հայցորդ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը փորձել ենք գնահատել գյուղական համայնքներում գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի գործունեության արդյունքների գնահատման հիման վրա:

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի կազմը և կառուցվածքը ընդունել ենք պայմանականորեն մեկ (միջինից մեծ չափեր ունեցող) համայնքի, մասնավորապես որոնք ունեն շուրջ 2000 հա վարելահողեր, շուրջ 150 հա բազմամյա տնկարկներ, շուրջ 650 հա խոտհարքներ և այլն:

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի կազմում առաջարկվում է հետևյալ տեխնիկական միջոցները՝

- անիվավոր և թրթուրավոր տրակտորներ,
- տրակտորային գութաններ,
- տրակտորային շարքացաններ,
- տրակտորային կուլտիվատորներ,
- տրակտորային խոտհնձիչներ,
- տրակտորային սրսկիչներ,
- հացահատիկահավաք կոմբայններ,
- տրակտորային կցասայլեր:

Արտադրատեխնիկական սպասարկումների համատեղ օգտագործման կառույցի արդյունավետ գործունեության համար կարևոր նախապայման է համարվում տեխնիկայի անհրաժեշտ ծանրաբեռնվածության ապահովումը:

Կառույցի համար առաջարկվում է տեխնիկական միջոցների հետևյալ կազմը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի տեխնիկական միջոցների առաջարկվող կազմը

Տեխնիկական միջոցի անվանում և մակնիշը	Քանակը, միավոր	Տեխնիկական միջոցի անվանում և մակնիշը	Քանակը, միավոր
Անիվավոր տրակտորներ, ընդամենը	12	Տրակտորային շարքացաններ	
այդ թվում՝		ՍՋ-3.6	6
ՄՏԶ-80	3	Տրակտորային խոտհնձիչներ	
ՄՏԶ-82	4	ԿՍ-2.1	6
ՅուՄԶ-6	2	ԿՍԳ-2.1	3
Տ-40 տարբեր մոդիֆիկացիաների	3	Տրակտորային խոտի փոցխ	
Թրթուրավոր տրակտորներ		ԳՊՊ-6.0Գ	3
ԴՏ-75ՄՎ	2	Տրակտորային մամլիչ բարդոցիչ	
Տրակտորային գութաններ		ՊՊԼ-Ֆ-1.6Գ	3
ՊԼՆ-3-35	7	Տրակտորային սրսկիչներ	
ՊԼՆ-5-35	2	ՕՎՏ-1Վ	5
ՊԼՍ-5-25Ա	2	Հացահատիկահավաք կոմբայն	
Տրակտորային կուլտիվատորներ		ՍԿ-5	2
ԿՊՍ-4	9	Տրակտորային կցասայլեր	
ԿՌՆ-4.2	6	2-ՊՏՍ-4Մ-785Ա	10

Գյուղատնտեսական տեխնիկայի, մասնավորապես տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների միավորների թիվ վերցվել է այն համամասնությամբ, որպեսզի հնարավոր լինի ապահովել տեխնիկայի նորմատիվային ծանրաբեռնվածությանը մոտ ծանրաբեռնվածություն:

Արտադրատեխնիկական սպասարկումների գործընթացում արդյունավետությունը պայմանավորված է գյուղատնտեսական տեխնիկայի, գյուղատնտեսական ագրեգատների համար համապատասխան ծանրաբեռնվածության ապահովման դեպքում: Հակառակ պարագայում գյուղատնտեսական տեխնիկայի թերբեռնվածությունը կհանգեցնի միավորի՝ 1 հա-ի, 1 տկմ, 1 տոննայի վրա կատարվող տեսակարար ծախսերի ավելացմանը և արդյունավետության անկման:

Առաջարկվող գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի մեջ ընդգրկվող տեխնիկական միջոցների տարեկան ծանրաբեռնվածության կողմնորոշիչ նորմաները հետևյալն են (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցում ընդգրկվող տեխնիկական միջոցների տարեկան ծանրաբեռնվածության կողմնորոշիչ նորմաները[1]

Գյուղատնտեսական տեխնիկայի անվանումը և մակնիշը	Տարեկան ծանրաբեռնվածությունը		
	Պայմանական էտալոնային հեկտարներով	Ֆիզիկական հեկտարներով	Ժամերով
Տրակտորներ			
ՄՏԶ-80	945	-	1335
ՄՏԶ-82	945	-	1335
ՅուՄԶ-6	810	-	1350
ԴՏ-75ՄՎ	1320	-	1200
Գութաններ			
ՊԼՆ-3-35	-	125	250
ՊԼՆ-5-35	-	125	250
ՊԼՍ-5-25Ա	-	125	250
Կուլտիվատորներ			
ԿՊՍ-4	-	240	200
ԿՌՆ-4.2		240	200
Շարքացաններ			
ՍԶ-3.6	-	132	118
Խոտհնձիչներ			
ԿՍ-2.1	-	102	185
ԿՍԳ-2.1	-	102	185
Խոտի փոցխ			
ԳՊՊ-6.0Գ	-	355	188
Հավաքիչ-մամլիչներով			
ՊՊԼ-Ֆ-1.6Գ	-	144	188
Սրսկիչներ			
ՕՎՏ-1Վ	-	336	168
Հացահատիկահավաք կոմբայն			
ՍԿ-5	-	119	209
Տրակտորային կցասայլեր			
2-ՊՏՍ-4Մ-785Ա	-	-	580

Տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի գործունեության արդյունավետության հաշվարկման համար անհրաժեշտ է ունենալ տեխնիկական միջոցների արժեքը, տեխնիկայի հիմնական մասը ընդունել ենք որպես նոր: Տեխնիկայի արժեքը ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ներկայացվում է ստորև (աղյուսակ 3):

[1] Հիմք են ընդունվել՝ Ա. Հ. Համբարձումյան, Հ.Ս. Ծպնեցյան, Ա.Ս. Մարգարյան, Գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների գնահատումը, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2001թ., էջ 17-21 նյութերը

Աղյուսակ 3

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի կազմում գտնվող տեխնիկական միջոցների արժեքը[1]

Գյուղատնտեսական տեխնիկայի անվանումը և մակնիշը	Տեխնիկայի արժեքը	
	ԱՄՆ դոլար	հազ. ՀՀ դրամ
1	2	3
Տրակտորներ		
ՄՏԶ-80	17150	7061
ՄՏԶ-82	18950	7802
ՅուՄԶ-6	15000	6176
Տ-40 (տարբեր մոդիֆիկացիայի)	6000	2470
ԴՏ-75ՄՎ	25000	10293
Գութաններ		
ՊԼՆ-3-35	1800	741
ՊԼՆ-5-35	2620	1079
ՊԼՍ-5-25Ա	1850	762
Կուլտիվատորներ		
ԿՊՍ-4	3920	1614
ԿՌՆ-4.2	2000	823
Շարքացաններ		
ՍԶ-3.6	4500	1853
Խոտհնձիչներ		
ԿՍ-2.1	790	325
ԿՍԳ-2.1	975	401
Խոտի փոցխ		
ԳՊՊ-6.0Գ	2000	823
Հավաքիչ-մամլիչներով		
ՊՊԼ-Ֆ-1.6Գ	5400	2223
Սրսկիչներ		
ՕՎՏ-1Վ	3000	1235
Հացահատիկահավաք կոմբայն		
ՍԿ-5Մ	70000	28819
Տրակտորային կցասայլեր		
2-ՊՏՍ-4Մ-785Ա	3500	1441

Փորձ ենք արել հաշվարկել գյուղատնտեսական մեքենայացված հիմնական աշխատանքների սակագները: Կիրառելով առաջադրված մեթոդական մոտեցումները կատարվել է համապատասխան հաշվարկներ ուղղված գյուղատնտեսական առանձին ագրեգատներով սպասարկումների սակագների հաշվարկման ուղղությամբ: Ընդ որում սակագնի կազմում ընդգրկել ենք ինչպես շահույթի մասը ծախսերի 20 %-ի չափով և ավելացված արժեքի հարկը: Ըստ առանձին ագրեգատների և հացահատիկահավաք կոմբայնի սակագնի հաշվարկի արդյունքային մասը ներկայացվում է 4-րդ աղյուսակում:

Հիմք ունենալով գյուղատնտեսական տեխնիկայի մակնիշային կազմը, թվաքանակը, նորմատիվային (նախընտրելի) ծանրաբեռնվածությունը, ըստ առանձին մեքենայական ագրեգատների սակագնի հաշվարկի տվյալները, փորձել ենք գնահատել գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի գործունեության արդյունավետությունը:

Նշված հաշվարկները կատարելու համար տեխնիկայի, մասնավորապես տրակտորների տարեկան ծանրաբեռնվածությունը բաշխել ենք ըստ մեքենայական ագրեգատների և արտադրական գործընթացների: Ինչպես նաև հաշվարկվել է առաջարկվող ծանրաբեռնվածությամբ աշխատելու պայմաններում, առանձին արտադրական գործընթացների ծավալները և դրանց իրականացումից ստացվող հասույթը և սպասվող շահույթը: Վերջինիս արդյունքները ներկայացված է 5-րդ աղյուսակում:

[1] www.belagrosnab.ru, kruida-agro.kazprom.net, www.zol.ru, mehanizator-ua.ru, www.mtz.ru, www.agroserver.ru, nizhegorodskaya.all.biz

Աղյուսակ 4

Գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների ագրեգատներով սպասարկումների սակագնի հաշվարկի արդյունքները

Արտադրական գործընթացի անվանումը	Մեքենան կամ ագրեգատը (տրակտորը, սարքավորումը և սանիտարական)	Տեղադրանքը, ընդհանրացված տարեկան մեքենաժամ	1 մաս աշխատանքի կատարման ինքնարժեքը, դրամ/մաս	1 մաս աշխատանքի գործարանային ինքնարժեքը, դրամ/մաս	1 մաս աշխատանքի 20 %-ի չափով դրամ	1 մաս աշխատանքի գործարանային ինքնարժեքը և շահույթը, դրամ/մաս	Աշխատանքի գործարանային ինքնարժեքի 20%, դրամ/մաս	Սակագինը, դրամ/մաս	Մեքենայի փաստացի ինքնարժեքը, դրամ/մաս, տ.կմ/մաս, տ.կմ/մաս	Սակագինը, դրամ/մաս, տ.կմ/մաս
	ՄՏՋ-80/82	1350								
Վար	ՊԼՆ-3-35	250	11088.0	11420.6	2284.1	13704.7	2740.9	16445.7	0.8	21358.0
Կուլտիվացիա	ԿՊՍ-4	200	11072.2	11404.4	2280.9	13685.3	2737.1	16422.3	3.1	5272.0
Կուլտիվացիա միջշարային	ԿՌՆ-4.2	178	10078.8	10381.2	2076.2	12457.4	2491.5	14948.9	1.9	7822.5
Ցանք	ՍՋ-3.6	118	12180.1	12545.5	2509.1	15054.6	3010.9	18065.6	2.5	7168.9
Հունձ	ԿՍ-2.1 (ԿՍԳ-2.1)	185	9500.6	9785.6	1957.1	11742.7	2348.5	14091.3	1.3	10881.3
Հավաքում մամլում	ՊՊԼ-Ֆ-1.6Գ	188	11542.2	11888.4	2377.7	14266.1	2853.2	17119.4	3.5	4891.2
Սրսկում	ՕՎՏ-1Վ	203	9494.8	9779.6	1955.9	11735.5	2347.1	14082.6	2.2	6489.7
դաշտային մշակաբույսերի համար									16.8	838.3
Փոխադրում	2-ՊՏՍ-4Մ-785Ա	580	6425.3	6618.0	1323.6	7941.6	1588.3	9529.9	33.6	283.6
	ՅուՄՋ-6	1350								
Վար	ՊԼՆ-3-35	250	9233.8	9510.8	1902.2	11413.0	2282.6	13695.6	0.7	19154.6
Կուլտիվացիա	ԿՊՍ-4	200	9424.1	9706.8	1941.4	11648.1	2329.6	13977.8	2.9	4832.4
Կուլտիվացիա միջշարային	ԿՌՆ-4.2	178	8430.6	8683.6	1736.7	10420.3	2084.1	12504.3	1.8	7046.7
Սրսկում	ՕՎՏ-1Վ	203	8052.6	8294.2	1658.8	9953.0	1990.6	11943.6	2.0	5927.4
				0.0	0.0	0.0	0.0	0.0	15.6	765.6
Փոխադրում	2-ՊՏՍ-4Մ-785Ա	580	5395.2	5557.0	1111.4	6668.4	1333.7	8002.1	31.2	256.5
	Տ-40 (տարբ. մոդիֆ.)	1200								
Վար	ՊԼՍ-5-25Ա	250	8195.4	8441.3	1688.3	10129.6	2025.9	12155.5	0.3	34929.5
Կուլտիվացիա միջշարային	ԿՌՆ-4.2	178	7482.8	7707.3	1541.5	9248.7	1849.7	11098.5	1.6	6775.6
Հունձ	ԿՍ-2.1 (ԿՍԳ-2.1)	185	6904.6	7111.7	1422.3	8534.0	1706.8	10240.8	1.1	9226.0
Խոտի փոցխում	ԳՊՊ-6.0Գ	188	6684.2	6884.7	1376.9	8261.6	1652.3	9914.0	2.2	4589.8
Փոխադրում	2-ՊՏՍ-4Մ-785Ա	580	4802.7	4946.8	989.4	5936.2	1187.2	7123.4	28.8	247.3
	ԴՏ-75ՄՎ	1200								
Վար	ՊԼՆ-5-35	250	13236.3	13633.4	2726.7	16360.1	3272.0	19632.1	0.8	23796.5
Կուլտիվացիա	ԿՊՍ-4	200	12592.2	12970.0	2594.0	15564.0	3112.8	18676.8	3.3	5596.0
Ցանք	ՍՋ-3.6	118	13700.1	14111.1	2822.2	16933.4	3386.7	20320.0	2.7	7525.9
	ՍԿ-5Մ	205								
Կոմբայնային բերքահավաք		205	49993.0	51492.7	10298.5	61791.3	12358.3	74149.6	2.6	28063.0

Աղյուսակ 5

Տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ծանրաբեռնվածության բաշխումը և արտադրական գործընթացների ծավալները, սպասվող հասույթի և շահույթի հաշվարկման արդյունքները

Արտադրական գործընթացի անվանումը	Ագրեգատի կազմը (տրակտոր և գյուղատնտեսական մեքենա)	Տեխնիկայի միավորները	Առանձին արտադրական գործընթացների վրա ծախսվող աշխատանքային ժամանակը, ժամ	Առանձին արտադրական գործընթացների ծավալը, հա, տ, տ.կմ,	Ծառայություններից սպասվող հասույթը, հազ. դրամ	Շահույթը ծախսերի և հարկերի փոխհատուցումից հետո, հազ. դրամ
	ՄՏԶ-80/82	7				
Վար	ՊԼՆ-3-35	5	1250	963	20557.12	2855.38
Կուլտիվացիա	ԿՊՍ-4	5	1000	3115	16422.32	2281.06
Կուլտիվացիա միջշարային	ԿՌՆ-4.2	3	534	1020	7982.71	1108.80
Ցանք	ՍԶ-3.6	4	472	1189	8526.95	1184.39
Հունձ	ԿՍ-2.1 (ԿՍԳ-2.1)	6	1110	1437	15641.30	2172.58
Հավաքում մամլում	ՊՊԼ-Ֆ-1.6Գ	3	564	1974	9655.32	1341.12
Սրսկում	ՕՎՏ-1Վ	4	650	1501	9148.09	1270.67
Սրսկում դաշտային մշակաբույսերի համար			162	2728	2287.02	317.67
Փոխադրում	2-ՊՏՍ-4Մ-785Ա	6	3480	116928	33164.22	4606.51
	ՅուՄԶ-6	2				
Վար	ՊԼՆ-3-35	2	500	358	6847.78	951.16
Կուլտիվացիա	ԿՊՍ-4	2	400	1157	5591.10	776.60
Կուլտիվացիա միջշարային	ԿՌՆ-4.2	1	178	316	2225.77	309.16
Սրսկում	ՕՎՏ-1Վ	1	162	644	1939.65	269.42
Սրսկում դաշտային մշակաբույսերի համար			41	633	484.91	67.35
Փոխադրում	2-ՊՏՍ-4Մ-785Ա	2	1160	36192	9282.43	1289.33
	Տ-40 (տարբ. մոդիֆ.)	3				
Վար	ՊԼՍ-5-25Ա	2	500	174	6077.73	844.20
Կուլտիվացիա միջշարային	ԿՌՆ-4.2	2	356	583	3951.05	548.80
Հունձ	ԿՍ-2.1 (ԿՍԳ-2.1)	3	555	616	5683.66	789.46
Խոտի փոցխում	ԳՊՊ-6.0Գ	3	564	1218	5591.47	776.66
Փոխադրում	2-ՊՏՍ-4Մ-785Ա	2	1160	33408	8263.19	1147.76
	ԴՏ-75ՄՎ	2				
Վար	ՊԼՆ-5-35	2	500	413	9816.05	1363.45
Կուլտիվացիա	ԿՊՍ-4	2	400	1335	7470.71	1037.68
Ցանք	ՍԶ-3.6	2	236	637	4795.53	666.10
	ՍԿ-5Մ	2				
Կոմբայնային բերքահավաք			205	542	15200.66	2111.37
Ընդամենը					**216606.74**	**30086.68**

Արտադրական գործընթացների ամփոփ ծավալները հետևյալն են՝

- վար՝ 1907 հա,
- կուլտիվացիա միջշարային՝ 5607 հա,
- կուլտիվացիա միջշարային՝ 1919 հա,
- ցանք՝ 1827 հա,
- հունձ՝ 2054 հա,
- խոտի փոցխում՝ 1218 հա,
- խոտի հավաքում մամլում՝ 1974 տոննա,
- շարային կուլտուրաների, այգիների սրսկում՝ 2144 հա,
- դաշտային մշակաբույսերի սրսկում՝ 3362 հա,
- փոխադրում՝ 186528 տ.կմ,
- կոմբայնային բերքահավաք՝ 542 հա:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ տարվա կատարված արտադրական սպասարկումների արդյունքում հասույթը տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի հաշվով կազմում է 216.6 մլն դրամ, իսկ հաշվարկային շահույթը բոլոր ծախսերը փոխհատուցելուց հետո կազմում է 30.1 մլն դրամ:

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ ենք համարում գնահատել այդ կառույցի տեխնիկական միջոցների համալրման համար պահանջվող ծախսերը և գնահատել դրա փոխհատուցման ժամկետը:

Տեխնիկական միջոցների համալրման համար ծախսերի հաշվարկը ներկայացվում է 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի տեխնիկական միջոցների համալրման ծախսերի հաշվարկը

Գյուղատնտեսական տեխնիկայի անվանումը և մակնիշը	Տեխնիկայի արժեքը, հազ. դրամ	Տեխնիկայի միավորները	Ընդհանուր արժեքը, հազ. դրամ
Տրակտորներ			
ՄՏԶ-80	7061	3	21183
ՄՏԶ-82	7802	4	31208
ՅուՄԶ-6	6176	2	12352
Տ-40 (տարբեր մոդիֆիկացիայի)	2470	3	7410
ԴՏ-75ՄՎ	10293	2	20586
Գութաններ			
ՊԼՆ-3-35	741	7	5187
ՊԼՆ-5-35	1079	2	2158
ՊԼՍ-5-25Ա	762	2	1524
Կուլտիվատորներ			
ԿՊՍ-4	1614	9	14526
ԿՌՆ-4.2	823	6	4938
Շարքացաններ			
ՍԶ-3.6	1853	6	11118
Խոտհնձիչներ			
ԿՍ-2.1	325	6	1950
ԿՍԳ-2.1	401	3	1203
Խոտի փոցխ			
ԳՊՊ-6.0Գ	823	3	2469
Հավաքիչ-մամլիչներով			
ՊՊԼ-Ֆ-1.6Գ	2223	3	6669
Սրսկիչներ			
ՕՎՏ-1Վ	1235	5	6175
Հացահատիկահավաք կոմբայն			
ՍԿ-5Մ	28819	2	57638
Տրակտորային կցասայլեր			
2-ՊՏՍ-4Մ-785Ա	1441	10	14410
Ընդամենը			**222704**

Այսպիսով, սպասվող շահույթի հաշվին գյուղատնտեսական տեխնիկայի համալրման ծածխսերը փոխհատուցվում է 7.4 տարվա ընթացքում (222704:30086): Վերջինս հիմնական միջոցների համար փոխհատուցման նորմալ ժամանակահատված է: Սակայն, հարկ է կրկին նշել, որ տեխնիկայի օգտագործման արդյունավետության ապահովման կարևոր նախապայման է տեխնիկայի անհրաժեշտ (նորմատիվային) ծանրաբեռնվածության ապահովումը:

Лусине Едигарян

ЭФФЕКТИВНОСТЬ МЕР, НАПРАВЛЕННЫХ НА УЛУЧШЕНИЕ СОСТОЯНИЯ ПРОИЗВОДСТВЕННО – ТЕХНИЧЕСКОГО ОБСЛУЖИВАНИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА

Аннотация

В рамках статьи сделана попытка оценить эффективность мер, направленных на улучшение состояния производственно-технического обслуживания сельского хозяйтва, на основе оценки результатов деятельности структуры по совместному использованию сельскохозяйтвенной техники в сельских общинах. На основе марки, количества, нормативной (предпочтительной) нагрузки сельскохозяйственной техники, данных для расчета тарифов по отдельным машинным агрегатам была оценена эффективность деятельности структуры по совместному использованию сельскохозяйтвенной техники. Произведенные расчеты показали, что в результате производственно-технического обслуживания выручка, согласно расчетам структуры по совместному использованию техники, составляет 216.6 млн. драмов в год, а рассчитанная прибыль после возмещения всех расходов - 30.1 млн. драмов. Для оценки эффективности деятельности структуры по совместному использованию сельскохозяйтвенной техники считаем необходимым оценить требуемые расходы на пополнение технических средств этой структуры (222.7 млн. драм) и оценить срок их компенсации. Таким образом, расходы на пополнение сельскохозяйственной техники за счет ожидаемой прибыли компенсируются в течение 7.4 года.

Lusine Edigaryan

EFFICIENCY OF MEASURES AIMED AT IMPROVING THE STATE OF AGRICULTURAL EQUIPMENT MAINTENANCE SERVICES

Abstract

The article attempts to estimate the efficiency of the utilized scheme of joint use of the agricultural equipment in the rural communities to identify the measures that will increase the efficiency of agricultural equipment maintenance services. The efficiency of the utilized scheme of joint use of the agricultural equipment is estimated based on the model of the equipment, quantity, normative (recommended) workload or utilization parameters, and per unit cost. The calculations show that due to utilized scheme of joint use the revenue is amounted to 216.6 million AMD, and the profit comprises 30.1 million AMD in case of annual maintenance. In order to estimate the efficiency of the utilized scheme of joint use the author thinks that the cost of modernization of the agricultural equipment needs to be estimated (227.7 million drams) and pay-back period needs to be identified. Thus, due to expected/forecasted profits the pay-back period is estimated to be 7.4 years.

ԲԵԼԱ ԽԱԼԱՓՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՂԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Տեղական կառավարումը հանրային կառավարման համակարգի կարևոր տարրերից է, որն իրականացվում է պետության վարչատարածքային բաժանման հիման վրա: Երկրի վարչատարածքային բաժանման համար հաշվի են առնվում բազմաթիվ գործոններ՝ տարածքը, աշխարհագրական դիրքը, ինչպես նաև էթնիկական բնույթի և պատմամշակութային առանձնահատկությունները, որոնցով էլ պայմանավորված առանձնացվում են մի քանի մակարդակներ՝ **պետություն, տարածաշրջան** (նահանգ, մարզ) և **բնակավայրեր** (քաղաքներ, ավաններ, գյուղեր, համայնքներ, ծխեր և այլն):

Համաշխարհային քաղաքակրթությունը ձևավորել է վարչատարածքային կառավարման երկու հիմնական ռազմավարություն՝ պետական կառավարում և տեղական ինքնակառավարում: Նշված ռազմավարությունների իրականացման համար պետության ողջ տարածքը բաժանվում է առանձին վարչական միավորների, որոնցից յուրաքանչյուրում ձևավորվում են հանրային կառավարման համապատասխան մարմիններ: Ընդունված է տարբերակել բնական և արհեստական վարչատարածքային միավորներ: Բնական վարչատարածքային միավորները բնակավայրերն են (քաղաքներ, ավաններ, գյուղեր), որոնք կառուցվել են պատմականորեն բնակության համար բարենպաստ վայրերում, և դրանց կառավարման ձևը ժամանակակից իրավագիտության մեջ ստացել է **համայնքային կամ կոմունալ ինքնակառավարում** անվանումը: Մեծ երկրները բաժանվում են *արհեստական վարչատարածքային միավորների* (ռեգիոն, պրովինցիա, դեպարտամենտ, մարզ, շրջան և այլն), որոնք սահմանազատելիս հաշվի են առնվում պատմական, բնական, աշխարհագրական, սոցիալ-տնտեսական, պատմամշակութային, ժողովրդագրական, էթնիկական և այլ գործոններ:

Ունիտար պետություններում վարչատարածքային բաժանումը գտնվում է կենտրոնական իշխանության, իսկ դաշնություններում՝ սուբյեկտների իրավասության շրջանակներում: Տեղական ինքնակառավարում իրականացնելու համար պետության տարածքը կարող է ենթարկվել ***երկաստիճան*** (վերին՝ մարզեր, պրովինցիաներ, կոմսություններ, և ստորին՝ համայնքներ, կոմունաներ), ***եռաստիճան*** (մարզեր, շրջաններ, համայնքներ) և ***քառաստիճան*** (ռեգիոններ, դեպարտամենտներ, շրջաններ, համայնքներ) բաժանման: Տարբեր պետություններում երկրի տարբեր տարածքների նկատմամբ կիրառվում են վարչատարածքային բաժանման տարբեր մոտեցումներ: Այսպես, Մեծ Բրիտանիայում իրականացվում է բազմամակարդակ տեղական ինքնակառավարում, Նիդեռլանդներում, Բուլղարիայում՝ երկաստիճան բաժանում, Չինաստանում, Հնդկաստանում՝ եռաստիճան, Ֆրանսիայում՝ քառաստիճան և այլն:

Տեղական ինքնակառավարումը՝ որպես հասարակական կյանքի ինքնուրույն երևույթ և քաղաքացիական հասարակության ինստիտուտ, առաջացել է Մեծ Բրիտանիայում վաղ միջնադարում և հայտնի էր ***բորո*** (borough) անվամբ: Սակայն այն իր զարգացման բարձր մակարդակին է հասել Ֆրանսիայում XIX դարում մունիցիպալ բարեփոխումների շնորհիվ:

XIX դարում տեղական կառավարումը, որն իրականացվում էր համայնքի բնակչության կողմից ընտրված մարմինների միջոցով, անվանվեց *տեղական ինքնակառավարում:* Այս տերմինի հեղինակը, համաձայն գերմանացի իրավագետների, պրուսական նախարար, բարեփոխիչ բարոն Հայնրիխ ֆոն Շտայնն է (1757-1831թթ.):

Ժամանակակից գիտական գրականության մեջ առանձնացվում է տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման *հինգ հիմնական տեսություն*:

Ազատ, անկախ համայնքի տեսությունը ձևավորվել է XIX դարի սկզբին գերմանացի գիտնականների կողմից:

Հասարակական ինքնակառավարման տեսությունը, որը լայն տարածում գտավ Ռուսաստանում XIX դարի 60-ական թթ., առաջ էր քաշում այն գաղափարը, որ ինքնակառավարումը կրում էր տնտեսական բնույթ:

Պետական ինքնակառավարման տեսությունը ձևավորվել է գերմանացի գիտնականներ Շտայնի և Գնեյստի կողմից XIX դարում, ըստ որի՝ ինքնակառավարումը տեղերում պետական կառավարման ձև է, սակայն, իրականացվում է ոչ թե պետության, այլ տեղաբնակների կողմից

Տեղական ինքնակառավարման դուալիստական տեսությունն առաջացել է մունիցիպալ գործունեության երկակի բնույթից՝ տեղական գործունեության մասին ինքնուրույն որոշումների կայացում և տեղական մակարդակում պետության կողմից որոշակի գործառույթների իրականացում:

Սոցիալական ծառայությունների մատուցման տեսությունը համարում է, որ ՏԻՄ-երի հիմնական խնդիրն է բնակչությանը որոշակի բնույթի ծառայություններով ապահովելը, իսկ նպատակը՝ բնակչության բարձր կենսամակարդակի ապահովումը:

Տեղական ինքնակառավարումը տեղական գործունեության կառավարման այնպիսի համակարգ է, որն իրականացվում է հատուկ ընտրովի մարմինների կողմից, որոնք ներկայացվում են վարչատարածքային բաժանման այս կամ այն միավորի բնակչությանը: Կենտրոնական իշխանության երեք ճյուղի, ինչպես նաև դաշնության սուբյեկտների ինքնուրույնությունը հիմնվում է սեփական իրավունքի վրա, այսինքն՝ նրանց լիազորություններն ամրագրվում են սահմանադրությամբ: Ի տարբերություն այս մարմինների՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները տրվում են օրենքով, այսինքն՝ կենտրոնական իշխանության մարմինների կողմից, թեև հիմնադրույթները սահմանվում են սահմանադրությամբ[1]:

Տեղական ինքնակառավարումը իրականացվում է հատուկ ընտրովի մարմինների կողմից: Տարբեր երկրների վարչատարածքային միավորումներում կառավարումն իրականացվում է ընտրված կամ նշանակված մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից: Եվրոպական հռչակագիրը տեղական ինքնակառավարման համար սահմանել է ընդհանուր հայեցակարգեր, որոնք դարձել են ունիվերսալ և ընդունվել բոլոր ժողովրդավարական պետությունների կողմից: Այդ իրավունքն իրականացվում է խորհուրդների կամ ժողովների կողմից, որոնց անդամներն ընտրված են ազատ, փակ, գաղտնի, հավասար, ուղղակի և համընդհանուր քվեարկության ճանապարհով: Խորհուրդները կամ ժողովները կարող են ունենալ հաշվետու գործադիր մարմիններ: Այս դրույթը չի բացառում քաղաքացիների՝ ժողովին, հանրաքվեին մասնակցելը կամ ուղղակի մասնակցության ցանկացած այլ ձևի դիմելը (հոդված 3-րդ)[2]:

Զարգացած ժողովրդավարական պետություններում, անկախ նրանց ազգային առանձնահատկություններից, տեղական ինքնակառավարման զարգացման ներկա մակարդակին բնորոշ են հետևյալ ընդհանուր բնութագրիչները.

- կոլեկտիվ ներկայացուցչական մարմին կազմող տեղական մակարդակում ընտրվածների նկատմամբ ժողովրդավարական հսկողություն,
- իրավաբանական անձի կարգավիճակ,
- տեղական տուրքերի որոշման իրավունք,
- մշտական, բավական խոշոր կառավարչական ապարատի գոյություն (կազմված տեղական ծառայողներից), որը կա՛մ պետական ծառայության միասնական համակարգի մաս է, կա՛մ կազմում է առանձին համակարգ,
- իրավասությունների բազմագործառույթ ոլորտ, որը լիազորությունները իրագործելու լայն շրջանակ է տալիս:

Տեղական ինքնակառավարման գերակա իրավասությունն իր արտացոլումն է գտել տեղական ինքնակառավարման եվրոպական հռչակագրում, որի հիմքում երեք հիմնարար սկզբունքներ են՝

---

[1] Տե՛ս Օրդյան Է.Հ., Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Եր., 2000, էջ 14:

[2] Տե՛ս Европейская хартия о местном самоуправлении. Принята в Страссбурге. 1985. Русская версия. Страссбург, Совет Европы . Отдел изданий и документов, май 1990, ст. 3.

1. տեղական ինքնակառավարման իրավունքը, որն իր արտահայտությունն է գտնում սահմանադրական համակարգի շրջանակներում, այդ դրույթի օրենսդրորեն ամրագրմամբ տեղական իշխանություններն ունեն հստակ որոշված կարգավիճակ, որը երաշխավորվում է ազգային սահմանադրությամբ կամ հիմնական օրենքով (հոդված 4-րդ),
2. ընդհանուր իրավասության իշխանություն, որը հնարավորություն է տալիս տեղական ինքնակառավարման մարմիններին ձեռնարկելու իրենց համայնքի շահերից բխող ցանկացած գործողություն՝ բացառությամբ այնպիսիների, որոնք արգելված են ազգային օրենսդրությամբ (հոդված 4-րդ, կետեր 2-րդ և 4-րդ),
3. դրամական օժանդակություն, ըստ որի՝ որևէ գործունեության համար նախատեսված ֆինանսական միջոցները պետք է համապատասխանեն սահմանադրությամբ կամ օրենքով նրանց տրված լիազորություններին (հոդված 9-րդ):

Տեղական ինքնակառավարման կազմակերպումը տարբեր ժողովրդավարական երկրներում, երբեմն նույնիսկ որոշ դաշնային երկրների տարբեր մասերում, ունեն տարբեր մեկնաբանումներ և իրականացման տարբեր ձևեր: Տարբեր երկրներում տեղական ինքնակառավարման կազմակերպչական նմանությունները և տարբերությունները գնահատելու համար նպատակահարմար է դրանք դիտարկել՝ ըստ հետևյալ հիմնական հատկանիշների՝

1. տեղական ինքնակառավարման մարմինների իրավական կարգավիճակը,
2. տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման ձևը,
3. տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների շրջանակը,
4. կենտրոնի (դաշնային պետություններում՝ առավելապես դաշնության սուբյեկտների) կողմից իրականացվող տեղական ինքնակառավարման մարմինների վերահսկողության միջոցները:

Հաշվի առնելով նշված հատկանիշները՝ տարբեր հետազոտողներ կատարել են դասակարգում, որոնցից առավել տարածվածն ու ընդունվածը *Լիմանսի* դասակարգումն է, որի արդյունքում առանձնացվում է երեք հիմնական խումբ՝ **երկատված** *(dual),* **միաձույլ** *(fused)* **և ճեղքված հիերարխիային** *(split-hierarchy):*

Երկատված համակարգը, որը կոչվում է նաև անգլո-սաքսոնական, ծնունդ է առել Մեծ Բրիտանիայում և ներկայումս գործում է առավելապես անգլախոս երկրներում՝ Միացյալ Թագավորությունում, Կանադայում, ԱՄՆ-ում՝ որոշ վերապահումներով, Նոր Զելանդիայում, Ավստրալիայում և այլուր: Այս դեպքում իշխանության տեղական մարմինները չունեն սահմանադրական կարգավիճակ, այլ սովորաբար ստեղծվում են համապատասխան օրենսդրական ակտով, որն ընդունում է երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի կողմից: Տեղական իշխանություններն ունեն մեծ անկախություն կենտրոնի նկատմամբ, երբ խոսքը վերաբերում է ամենօրյա գործունեությանը: Կենտրոնի և տեղերի միջև հարաբերությունները կրում են հորիզոնական բնույթ, և այդ պատճառով էլ կենտրոնը և տեղական ինքնակառավարումը երկու տարբեր մակարդակներ են:

Միաձույլ համակարգը անվանվում է նաև մայրցամաքային կամ ֆրանսիական, քանի որ այս համակարգի հիմքը դրվել է Ֆրանսիայում: Այս խմբի մեջ են մտնում տեղական ինքնակառավարման այն համակարգերը, որոնք այս կամ այն չափով հետևում են ֆրանսիական (նապոլեոնյան) մոդելին: Նրանում ՏԻՄ-երն ունեն սահմանադրական կարգավիճակ, սակայն ծառայություններ մատուցելիս կախվածության մեջ են ապակենտրոնացված կենտրոնական գործակալությունների օգնությունից ու կարգադրություններից: Այս մոդելում ՏԻՄ-երի գործունեության և գոյության գլխավոր իմաստը ավելի շատ քաղաքական է, քան վարչական: Այս համակարգը ներկայումս կիրառվում է տարբեր պետություններում՝ մայրցամաքային Եվրոպայի երկրներում (Պորտուգալիա, Իսպանիա, Իտալիա, Բելգիա, որոշ չափով նաև Հունաստան), Աֆրիկայի ֆրանսախոս երկրներում, Մերձավոր Արևելքի երկրներում[1]:

Ճեղքված հիերարխիայի համակարգը անվանվում է նաև հյուսիսային կամ կենտրոնական եվրոպական տարբերակ և միջանկյալ տեղ է գրավում նախորդ երկու համակարգի միջև: Այս դեպքում կենտրոնական իշխանությունը զգալի ազդեցություն ունի տեղական ինքնակառավար-

[1] Տե՛ս Եդիգարյան Վ., Պետական և մունիցիպալ վարչաքաղաքական կառավարում, Եր., 2005թ., էջ 87:

ման վերին օղակի վրա, որը վերջինիս գործադիր մարմինն է: Տեղական իշխանության ստորին աստիճանը՝ կառավարման համայնքային մարմինները, կազմավորվում է ընտրությունների միջոցով և ինչպես երկատված համակարգում, պահպանում է լայն ինքնուրույնություն իր լիազորությունների շրջանակում: Այդպիսի տարբերակում տեղական ինքնակառավարումն ունի ուժեղ սահմանադրական կարգավիճակ, ինչպես նաև որոշումների ինքնուրույն կայացման իրավունք ու ֆինանսական համեմատաբար մեծ անկախություն: Այս համակարգը տարածված է սկանդինավյան (Նորվեգիա, Շվեդիա, Դանիա) և մի շարք այլ երկրներում՝ Ավստրիա, Գերմանիա, Նիդեռլանդներ, Ճապոնիա և այլն: Հյուսիսային կամ կենտրոնական եվրոպական տարբերակը զարգացած ժողովրդավարությամբ ամենից տարածված խումբն է ներկայացնում: Ավելին, այդ ուղղությամբ է զարգանում արևելյան երկրների տեղական ինքնակառավարումը:

Ի տարբերություն պետական իշխանության ինստիտուտների՝ ՏԻՄ-երն ունեն սկզբունքորեն այլ նշանակություն և ավելի են հակված քաղաքացիական հասարակությանը: Դրանք պետական իշխանության սուբյեկտներ չեն, այլ մտնում են հանրային իշխանության սուբյեկտների խմբի մեջ: ՏԻՄ-երի որոշումների կիրառման օբյեկտը հենց քաղաքացիական հասարակությունն է: Տեղական ինքնակառավարման անկախությունը հարաբերական է, քանի որ նրան բնորոշ է երկու տիպի սահմանափակում. առաջինը տնտեսական և սոցիալական տարբեր աղբյուրների սահմանափակումներն են, երկրորդը՝ տեղական անկախության սահմանափակումը կառավարման վերին մակարդակների կողմից, պետական մարմինների կողմից ՏԻՄ-երի գործունեության վերահսկման ձևերն ու մեթոդները, ինչպես նաև ՏԻՄ-երի իրավասությունների դաշտը և դրանց իրականացման ձևերն ու մեթոդները:

Վերջին տասնամյակների բարեփոխումները ցույց են տալիս օրենսդրական կարգավորման գերակայության միտում ավելի մեծ թվով երկրներում, որը լիովին համապատասխանում է հասարակության առավել ժողովրդավարական դրվածքին: Վերջին երկու տասնամյակում ՏԻՄ-երի զարգացումն ուղեկցվում է կենտրոնի կողմից իշխանական լիազորությունների որոշ մասի նրանց փոխանցումով:

Ակնհայտ է, որ իր առանձնահատկություններից և բարդությունից ելնելով՝ երկրի վարչատարածքային բաժանումն անընդհատ փոփոխվել չի կարող: Դրանով է պայմանավորված, որ սա այն բացառիկ օրինագծերից է, որի օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է միայն կառավարությանը: Այս տեսանկյունից չեն կարող արդարացվել վարչատարածքային բարեփոխումների շտապողականությունն ու քաղաքականացումը: Անշուշտ, դժվար է տարբերանշել այն սահմանը, որից այն կողմ նպատակահարմար կամ աննպատակահարմար է իրականացնել տեղական ինքնակառավարում: Սակայն կյանքը ցույց է տալիս, որ զարգացած երկրներում չեն ընդհատվում համայնքների խոշորացմանն ու օպտիմալացմանն ուղղված քաղաքական գործընթացները[1]:

Бела Халапян

ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА РЕГИОНАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ И ИХ МЕСТО В СИСТЕМЕ ОБЩЕСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ

Аннотация

Местное управления является важным элементом системы общественного управления, которое осуществляется на основе административно-территориального разделения государства. Мировая цивилизация сформировала две основные стратегии административно-территориального управления: государственное управление и местное самоуправление. Для реализации указанных стратегий вся территория государства делится на отдельные административные единицы, в каждой из которых формируются соответствующие органы

[1] Տե՛ս Ղազարյան Է., Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման կատարելագործման հայեցակարգային ուղղությունները, Եր., Դար, 2004թ., էջ 4-5:

общественного управления и форма их управления в современной юридической науке получила название общинного или коммунального самоуправления. Местное самоуправление осуществляется специально выбранными органами. В административных единицах различных стран управление осуществляется выбранным или назначенным органом или должностным лицом. Европейская хартия местного самоуправления определяет общие концепции, которые являются универсальными и приняты всеми демократическими государствами.

Bela Khalapyan

GENERAL CHARACTERISTICS OF THE REGIONAL GOVERNANCE AND LOCAL SELF-GOVERNANCE AND THEIR ROLE IN THE SYSTEM OF PUBLIC ADMINISTRATION

Abstract

Local governance is one of the main elements of the system of public administration that is implemented based on the administrative-regional division in a given nation. Two main strategies on administrative-regional governance have been deigned in the modern civilized world: public administration and local governance. In order to implement the above stated strategies, the whole territory of the nation is divided into separate administrative units, and in each unit respective local governing (public administration) authorities are established, and the respective form of governance in the in the modern jurisprudence is known as local or communal self-governance. Local self-governance is implemented by the specially elected authorities. In administrative-regional units of various nations the governance in implemented either by elected or by appointed authorities or officials. The European Charter for the local self-governance defines general concepts that are currently considered universal and are adopted by all democratic nations.

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ԼԻԱՆԱ ԱՋԱՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությունը զարգացման բոլոր փուլերում համարվել է տնտեսության առաջնային զարգացման ճյուղերից մեկը և գտնվել է կառավարության ուշադրության կենտրոնում:

Գյուղատնտեսության մեջ հիմնական հողօգտագործողները գյուղացիական տնտեսություններն են, որոնք ըստ 2012թ. վիճակագրական տվյալների տնօրինում և օգտագործում են վարելահողերի 71.7%-ը, բազմամյա տնկարկների 78.3%-ը և խոտհարքների 48.4%-ը, իսկ այդ ոլորտի համախառն արտադրանքի ավելի քան 97%-ն արտադրում է մասնավոր հատվածը:

ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք որոշումներ և հայեցակարգեր, որոնցից են «Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգը», «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն

զարգացման ռազմավարությունը», «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հայեցակարգը»:

Օրենսդրության բարելավման և պետական աջակցության շնորհիվ ստեղծվել են 148 գյուղատնտեսական կոոպերատիվներ: Ջանազան դրամաշնորհների և պետական աջակցության շնորհիվ հիշյալ կոոպերատիվներն իրենց առաջին քայլերն են անում:

Սկսած 2007թ. պետական աջակցությունը մեծ թափ է ստացել, որը միջազգային դոնոր կազմակերպությունների հետ միասին զգալիորեն նպաստել է գյուղատնտեսության զարգացմանը:

Իրականացվող ծրագրերի մեջ մեծ տեղ ունեն «Գյուղական բիզնես կապերի խթանում» (մրցակցային դրամաշնորհ), ինչպես նաև «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը, որի բաղադրիչներից է «Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգը», որի շնորհիվ 6 մարզերի 55 համայնքներում հիմնադրվել է «Արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներ», որոնցից 49-ը պաշտոնապես գրանցվել են: Միաժամանակ միավորումներ և ասոցիացիաներ են ստեղծվել Ստեփանավանում, Տավուշում՝ 2, Կապանում 2 և այլն: Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրով ֆինանսավորման վերաբերյալ ավելի պարզ պատկերացում ունենալու համար համապատասխանաբար տվյալները ներկայացնենք աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Ծրագրով նախատեսված ֆինանսավորման գումարները՝ ըստ 2011-2016թթ.

(ԱՄՆ մլն դոլար)

Բովանդակություն	Ծրագրի ընդհանուր արժեքը	որից	
		Հ. Բ. վարկ	Կառավարություն և շահառուներ
Ծրագրի ֆինանսավորման միջոցները, այդ թվում	21.34	16.0	5.34
բաղադրիչ 1՝ համայնքների արոտավայրերի կառավարման համակարգ	15.36	11.52	3.84
բաղադրիչ 2՝ գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում	2.48	1.86	0.62
բաղադրիչ 3՝ մրցակցային դրամաշնորհներ	2.05	1.54	0.52
բաղադրիչ 4՝ ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում	1.45	1.09	0.36

Տվյալները «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն ԾԻԳ»:

Աղյուսակ 1-ի տվյալներից ակնհայտ է, որ ծրագրով նախատեսված 21.34 մլն դոլարից միայն 16.0մլն դոլարը կամ 75.0% -ը բաժին է ընկնում Համաշխարհային բանկին տրամադրվող վարկերի գծով:

Արտասահմանյան դրամաշնորհների օգնությամբ և ՓՄՁ-ների աջակցությամբ (տես աղյուսակ 2) առաջին քայլերն է անում չրագործությունը Մեղրիի, Արմավիրի և Արագածոտնի տարածաշրջաններում: Արդյունքում Արմավիրի Հացիկ համայնքում կազմակերպվել են «Նոր Նաիրի» և «Նաիրի» կոոպերատիվները, որոնք այս տարվա ընթացքում արդեն մեծ ակնկալիքներ ունեն պատրաստի չրերի իրացումից:

Աղյուսակ 2

ՀՀ ՓՄՁ-ի կողմից իրականացվող աջակցությունները 2011-2012թթ.

Տրամադրված աջակցության ուղղություն	Տրամադրված աջակցության քանակը, հատ		1-ին կիսամյակի ընթացքում աջակցության քանակը, հատ		Աճի տեմպը 1-ին կիսամյակում 2013թ. 2012թ.-ի նկատմամբ, %
	2011թ.	2012թ.	2012թ.	2013թ.	
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	3588	7398	3985	8589	2.1 անգամ
Ուսուցողական աջակցություն	-	515	254	274	8%
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	95	209	103	233	2.2 անգամ
Սկսնակ գործարարների ֆինանսական աջակցություն	17	120	14	102	7.2 անգամ
Վարկային երաշխավորությունների տրամադրում	11	30	11	18	1.6 անգամ
ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	22	94	29	141	4.8 անգամ
Տեղական տնտեսական զարգացման ծրագրեր	-	6 համայնք	3 համայնք	10 համայնք	3.3 անգամ
Ոլորտային աջակցության ծրագրեր	-	47		52	
Ընդամենը	3733	8413	4396	9409	2.1 անգամ

Տվյալներն ըստ «Հայաստանի փոքր ու միջին Ձեռնարկատիրության Զարգացման Ազգային Կենտրոն» -ի

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են, որ տարեցտարի աջակցությունների քանակն ավելանում է բոլոր ուղղություններով: Այսպես, օրինակ, 2012թ. 2011թ. համեմատությամբ սկսնակ գործարարների ֆինանսական աջակցությունն ավելացել է 7.1 անգամ ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում այն ավելացել է 4.3 անգամ, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություններն ավելացել են 2.1 անգամ: Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 6.2 տոկոսը գտնվում է Երևանում, իսկ մնացած 93.8 տոկոսը՝ ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ համայնքներում:

Վերոհիշյալներին համահունչ դեռևս կան գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմանը նպաստող խոչընդոտներ, որոնցից կարող ենք առանձնացնել.

1. Կոոպերացիայի բնագավառի իրավական դաշտի անկատարությունը:
2. Համատեղ ներդրումներով գործունեություն իրականացնելու ցանկությունն ու վստահության պակասը:
3. Կոոպերատիվների գործունեությունը չխթանող հարկային օրենսդրության ոչ լիարժեք լինելը:
4. Գյուղատնտեսությունում կոոպերացման գործընթացը խթանող աջակցության ծրագրերի սակավությունը և ոչ շարունակական լինելը:
5. Անհամաչափ տարածքային զարգացումը:
6. Ցմշակվող վարելահողերի առկայությունը, որը կազմում է մոտ 30 %, այն դեպքում, երբ Հայաստանը համարվում է սակավահող հանրապետություն:

Նշված խոչընդոտները հաղթահարելու համար անհրաժեշտ է.

- Կատարելագործել տարբեր ուղղվածություն ունեցող կոոպերատիվների համար օրենսդրական բարելավում:
- Գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունների համար արտադրությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ ըստ տարածաշրջանների և արտադրական ուղղվածություն ունեցող տնտեսությունների օպտիմալ

չափերի, գյուղատնտեսական արտադրանքների եկամտաբերության ապահովման և արտադրության ռացիոնալ կառուցվածքի վերաբերյալ խորհրդատվության անցկացում:

- Շարունակել համայնքների տնտեսական զարգացմանն ուղղված զանազան ծրագրերի և աջակցությունների ներդրումը:

Գյուղատնտեսական կոոպերացիաների զարգացման կարևորագույն ուղղություններից է համարվում բնագավառը կարգավորող օրենսդրական հիմքերի կատարելագործումը և համալրումը, որը ենթադրում է կոոպերատիվների առավելությունների վերաբերյալ տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացում: Այդ նպատակի համար պետք է ուժեղացնել խորհրդատվական ծառայությունները:

Գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման իրավական դաշտի ապահովման գործում անտարակույս, հիմնական դերը պատկանում է կոոպերատիվների կանոնադրությունների մշակմանը, որոնցում հստակ կերպով պետք է տրված լինի՝

- ընդհանուր դրույթները,
- կոոպերատիվի գործունեության առարկան և նպատակը,
- կոոպերատիվի իրավական կարգավիճակը,
- կոոպերատիվի անդամների իրավունքներն ու պարտականությունները,
- կոոպերատիվի վերակազմավորումը և լուծարումը:

Քանի որ առևտրային բանկերը սկսնակ տնտեսվարող սուբյեկտներին դիտարկում են բարձր ռիսկային և հրաժարվում են տրամադրել վարկային ռեսուրսներ, ուստի այդ առումով էլ ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց մտնել ռիսկային գոտի և օժանդակել ձեռներեցներին: Ըստ այդ որոշման համապատասխան մասնագետները երեք ամիս շարունակ ձեռնարկատերերի հետ փորձում էին ընկալելի դարձնել բիզնես - գործընթացի գաղափարը, կատարում էին հաշվարկներ ու վերլուծություններ, և որից հետո միայն տվյալ ծրագիրը ֆինանսավորվում էր: Միշտ չէ որ սկսնակ բիզնեսմենը (գործարարը) հասնում է հաջողության, ուստի այդ նպատակին անհրաժեշտ է, որ պետական աջակցությունը լինի շարունակական:

Գյուղում ենթակառուցվածքները զարգացնելու համար անհրաժեշտ է համայնքներում ստեղծել վճարովի ծառայություն կատարող կառույց կամ կոոպերատիվ, գյուղացիական տնտեսություններին արտադրական սպասարկման և պարարտանյութերով ու թունաքիմիկատներով և այլ նյութական միջոցներով ապահովելու համար:

Պետության կողմից տարբեր ծրագրերով հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկան, պարարտանյութերը և նմանատիպ այլ նյութական ռեսուրսներն անհրաժեշտ է տրամադրել ոչ թե առանձին անհատ հողագործներին, այլ համայնքներում ձևավորված ու մասնագիտացված կազմակերպություններին (կոոպերատիվներին) և գյուղացիական այլ տնտեսություններին՝ օբյեկտիվ և հավասարաչափ սպասարկման նկատառումով:

Հանրապետությունում գյուղատնտեսության կոոպերացման գործընթացը զգալիորեն կբարձրացնի գյուղական բնակչության զբաղվածության, արտադրական ներուժի օգտագործման մակարդակը, կավելանան գյուղատնտեսական մթերքների ու դրանց վերամշակումից ստացվող արտադրատեսակների ծավալները, որի արդյունքում կբարձրանա բնակչության կենսամակարդակը, կմեղմացնի պարենային անվտանգության հետ կապված խնդիրների լուծումը:

Ինչպես նշվել է, գյուղատնտեսական արտադրության բարձրացման գործընթացում մեծ է կոոպերացիայի դերը, իսկ այդ ուղղությամբ կատարվող ուսումնասիրություններն էլ արդիական են, որոնք բխում են հանրապետության ագրոպարենային համակարգի ներկա պայմաններից: Կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը հրատապ է, որի համար, մեր կարծիքով անհրաժեշտ է՝

- մշակել գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման և բոլոր տեսակի ներդրումների պետական միասնական ծրագիր, դրանում ընդգրկելով գյուղում եղած սեփականության բոլոր ձևերը, գյուղական բնակչությանը, ոչ գյուղատնտեսական ճյուղերի ձեռնարկությունները,

- մշակել և ընդունել համապատասխան օրենքներ վարկային կոոպերատիվների ստեղծման և դրանց հետագա գործունեության կարգավորման վերաբերյալ, այդ կոոպերատիվներին վերապահելով լայն իրավունքներ, հատկապես ներդրումների տնօրինման հարցում, ինչպես նաև որոշակի ժամանակահատվածում (ասենք՝ 5 տարի) ազատելով նրանց ամեն տեսակի հարկումից,
- կոոպերատիվների ձևավորման մեկնարկային փուլում ապահովել պետության ակտիվ մասնակցությունը, ակնկալելով բյուջեից որոշակի հատկացումներ: Նման մոտեցումը հնարավորություն կընձեռի սատարելու կոոպերատիվների համակարգված ձևավորմանը,
- ի հաշիվ բյուջետային, արտաբյուջետային, ինչպես նաև կոոպերատիվների արտադրա-ֆինանսական գործունեությունից գոյացած միջոցների, ստեղծել գյուղացիական կոոպե-րատիվների աջակցության «Կենտրոնական հիմնադրամ»,
- յուրաքանչյուր մարզում վերոհիշյալ հիմնադրամի, ինչպես նաև առանձին կոոպերատիվ-ների սեփական միջոցների հաշվին կազմակերպել խորհրդատվական կենտրոններ, լայնո-րեն օգտագործելով համակարգի գիտահետազոտական կենտրոնների, ինստիտուտների և այլ գիտական ստորաբաժանումների գիտական ներուժը, ակնկալելով պայմանագրային հիմունքներով բիզնես-ծրագրերի կազմում և զանազան ծառայությունների մատուցում,

Մեր կարծիքով, ոլորտում ի վերջո կոոպերատիվների ձևավորումը հնարավորություն կստեղծի օգտագործելու արտադրության տեխնիկական միջոցները, արդյունավետ կազմակեր-պելու գյուղմթերքների վերամշակումն ու իրացումը, որի արդյունքում կոոպերատիվի անդամները կստանան ինչպես տնտեսական մեծ շահ, այնպես էլ կձգտեն իրենց տնտեսությունը հասցնել ավելի բարձր տեխնիկական ու տեխնոլոգիական մակարդակի:

Կարելի է համոզված լինել, որ նաև կխթանվի ագրոշուկայի ձևավորումն ու զարգացումը, որն իր հերթին կնպաստի արտաքին շուկայի հետ հարաբերությունների կարգավորմանը, կստեղծվեն բարենպաստ պայմաններ տեղական ու արտասահմանյան գործարարների կողմից հանրապետության ագրարային ոլորտում ներդրումներ կատարելու համար: Գյուղում կստեղծվի նոր սոցիալ-տնտեսական իրավիճակ, հիմնականում կլուծվեն գյուղական բնակչության զբաղվածության հիմնախնդիրները:

Ըստ կատարված ուսումնասիրությունների աջակցության ծրագրից օգտված համայնքնե-րում հիմնական մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացել են ոչ միայն քանակա-պես, այլև աչքի են ընկել բարձր բերքատվությամբ, և արդյունքում աշնանացան ցորենի ու գարնանացան գարու համախառն արտադրանքի ավելացումը կրկնակի անգամ գերազանցել է պետական աջակցության գումարին:

Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2012թ. արձանագրվել է գյուղա-տնտեսության ոլորտում ցուցանիշների աճ: Ըստ այդ տվյալների 2012թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 840.4 մլրդ դրամ, նախորդ տարվա համեմատ աճել է 9.5%-ով, ընդ որում՝ բուսաբուծությունում այդ աճը կազմել է 14%, իսկ անասնաբուծությունում 3.2%:

Հայտնի է, որ չի կարող լինել զարգացող գյուղատնտեսություն առանց հարմարավետ գյուղի: Հետևապես պետք է ուժեղացնել համայնքների տնտեսական զարգացման ծրագրերը, որոնք կօգնեն ընտրված համայնքներին պլանավորելու, ֆինանսավորելու և ղեկավարելու ներդրումների իրականացումը, նրանց հետագա նպատակայնությունն ու շարունակելիությունը:

Անհրաժեշտ է պետական ռեսուրսների լայն օգտագործում՝ գյուղատնտեսական ենթակա-ռուցվածքների պահպանման և հզորացման համար, դրանց համահունչ փոխառու ֆինանսական միջոցների մատչելիության ավելացում և գյուղացիական տնտեսություններին բանկային և այլ տիպի ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնում:

Գյուղերում տնտեսվարող սուբյեկտներին սպասարկելու համար պետք է ստեղծել մար-քեթինգային ծառայություն, որը հնարավորություն կընձեռի առանց ապրանքարտադրողների ինքնուրույնությանը կպչելուն, օժանդակել ձևավորելու պահանջարկի և առաջարկի համամաս-նություն: Այդպիսի ծառայությունների վերջնական նպատակը պետք է լինի՝ տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծելու նպաստավոր պայմաններ, կողմնորոշվելու շուկաներում տիրող

իրավիճակին, ինչպես նաև հզորացնել կապերը ֆերմերների, ասոցիացիաների, կոոպերատիվների, ծառայություն մատուցողների, ագրովերամշակողների և մարքեթինգային գործակալների միջև:

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք, պետք է հանգել այն հետևության, որ գյուղատնտեսության պետական աջակցության նախորդ տարիների փորձի վերլուծությունը վկայում է, որ անհրաժեշտ է այդ աջակցությունը նպատակաուղղել կարևոր պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացմանը և սահմանամերձ ու բարձր լեռնային գյուղական բնակավայրերի զարգացմանը:

Шушаник Костанян
Лиана Азатян

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИНТЕГРАЦИОННЫХ ОТНОШЕНИЙ И ФОРМ ХОЗЯЙСТВОВАНИЯ В АГРАРНОЙ СФЕРЕ РА

Аннотация

В Республике Армения нормальное развитие агропромышленного комплекса обусловлено расширением кооперации. Следовательно, одним из основных направлений аграрной политики Армении является углубление реформ, развитие кооперации. В последние годы правительство осуществляет ряд мероприятий по поддержке фермерских хозяйств, кооперативов, ассоциаций, оказываемых в форме предоставления финансовых и материальных ресурсов. Благодаря улучшению законодательства и государственной поддержке созданы 148 сельскохозяйственных кооперативов, которые на основе грантов и программ поддержки делают свои первые шаги. Несмотря на это, необходимо усовершенствовать законодательство для кооперативов различной направленности. С целью эффективной организации производства для крестьянских хозяйств, сельскохозяйственных торговых организаций необходимо обеспечить расширение консультации, улучшение маркетинговых услуг относительно рациональной структуры производства. Внедрение различных программ поддержки и грантов, направленных на развитие общин, должно быть постоянным.

Shushanik Kostanyan
Liana Azatyan

APPROACHES TO INTEGRATING RELATIONS AND IMPROVING ACTIVITIES IN THE AGRARIAN SECTOR IN THE REPUBLIC OF ARMENIA

Abstract

The common development of the agro-processing system is associated with the increase in the number of cooperatives in the Republic. Hence, one of the main directions of the agrarian policy aimed at the development of the agricultural sector of the economy needs to be deepening agrarian reforms and development of cooperatives. In the past couple of years the government implemented various programs and measures by providing assistance (financial and other type of assistance) to farms, cooperatives, associations. Due to legislative changes and state support 148 cooperatives were established. Due to various grants and government assistance the stated cooperative have started their business activities. However, the legislation that regulates the activities of cooperatives that are engaged in several economic activities needs to be improved. Various consulting and marketing services provided to the farms and commercial organizations engaged in agricultural activities on making production processes more efficient due to rational production structure needs to be improved and the range of services needs to be increased. Programs implemented aimed at economic development of communities and assistance provided needs to be continuous.

ՆՈՆՆԱ ԿՈՒՊԵԼՅԱՆՑ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հայցորդ

ԲՈՒՍԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԵՏԲԵՐՔԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բուսաբուծական արտադրանքի հետբերքահավաքային գործընթացների կազմակերպման կատարելագործումը ճյուղի արդյունավետության բարձրացման կարևորագույն նախապայմաններից է:

Կազմակերպման գործընթացի կատարելագործումը ներառում է կազմակերպական-տեխնիկական և սոցիալ-տնտեսական միջոցառումների մշակում, որոնք ապահովում են բուսաբուծական արտադրանքի հետբերքահավաքային գործընթացում օգտագործվող ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը, տվյալ գործընթացում ընդգրկված աշխատանքի բարենպաստ պայմանների ապահովումը, արդիական տեխնոլոգիաների կիրառումը, արդյունքում գործընթացի որակական կատարելագործումը:

Հիմք ունենալով կատարված ուսումնասիրությունները՝ բուսաբուծական արտադրանքի հետբերքահավաքային գործընթացների կազմակերպման կատարելագործման հիմնական ուղղությունները դիտարկվել են ըստ հետբերքահավաքային գործընթացների հաջորդական փուլերի:

Բերքի հասունացման փուլի կազմակերպման գործընթացի կատարելագործումը հանգում է գյուղատնտեսական տարբեր մթերքների հասունացման փուլի ճիշտ գնահատման և բերքահավաքը վերջինիս հետ համապատասխանեցման: Կարևոր է համարվում հասունացման աստիճանի ճիշտ որոշումը՝ ելնելով գյուղատնտեսական մթերքների օգտագործման նպատակներից: Նշված փուլի կազմակերպման գործընթացում կարևորվում է, գյուղատնտեսական մթերքների օգտագործման նպատակից ելնելով, հասունացման փուլերի (բերքահավաքային, սպառողական, տեխնիկական և ֆիզիոլոգիական) ճիշտ գնահատումը և դրան համապատասխան բերքահավաքը ժամանակի առումով ճիշտ իրականացումը:

Հասունացման նշված փուլերի միջև խստագույն սահմանազատում չկա: Դրա տիպիկ օրինակ կարող են հանդիսանալ լոլիկի պտուղները: Դրանց տեխնիկական հասունացումը մարինադ պատրաստելու համար կաթնագույն սպիտակ գունավորումն է: Հյութ, մածուկ պատրաստելու համար պտուղները պետք է լինեն լրիվ գունավորված: Վերջին դեպքում պտուղները ձեռք են բերում լիակատար սպառողական հատկություններ և պիտանի են թարմ օգտագործման համար: Այս դեպքում լոլիկի սերմերը ձեռք են բերում ծլելու հատկություն, այսինքն՝ պտուղները հասել են ֆիզիոլոգիական հասունացման:

Երկարատև պահպանման համար նախատեսված բերքը հավաքում են, այսպես կոչված, բերքահավաքային հասունացման փուլում: Խակ պտուղներն ավելի ինտենսիվ են շնչում և ծախսում պահեստային նյութերը, իսկ լրիվ հասունացածները արագորեն գերհասունանում են և կորցնում իրենց ապրանքային տեսքը, ինչպես նաև սպառողական մյուս հատկանիշները: Այդ պատճառով էլ հասունության աստիճանի ճիշտ որոշումը կարևոր նշանակություն ունի որակի պահպանման գործում:

Պտղաբույծները և բանջարաբույծները, ելնելով իրենց հմտություններից, կարող են որոշել բուսաբուծական մթերքների հասունության աստիճանը, ինչպես նաև պահպանման համար տվյալ բերքի պիտանելիությունը՝ պահունակությունը՝ հաշվի առնելով դրանց չափը, արտաքին գունավորվածությունը, սերմերի գույնը, պտղամսի համը և այլ ցուցանիշներ: Հաճախ հասունության աստիճանի որոշմանը լուրջ մոտեցում չի ցուցաբերվում: Սակայն փորձը ցույց է տալիս, որ վերոհիշյալ ցուցանիշներն այնքան էլ կայուն չեն և կախված են տվյալ մասնագետի սուբյեկտիվ ընկալումից, հետևաբար որոշակի սխալի դեպքում պահպանման արդյունքը կարող է լինել մեծ խմբաքանակով բերքի կորուստը:

Բուսաբուծական մթերքների հասունության աստիճանի վերաբերյալ առավել ճշգրիտ տեղեկություններ կարող են տալ դրանց ֆիզիկաքիմիական հատկանիշների ուսումնասիրությունները՝ քիմիական անալիզի կամ հատուկ գործիքների միջոցով:

Նշված հետ մեկտեղ հասունության աստիճանի գնահատման օբյեկտիվ եղանակները բավականին սահմանափակ են: Հետևաբար անհրաժեշտ ենք համարել անդրադառնալ զարգացած երկրներում օգտագործվող և հեռանկարային համարվող հասունացման գնահատման կիրառվող եղանակներին:

Հասունացման աստիճանի որոշման ամենատարածված քիմիական մեթոդը յոդոսլայական ռեակցիան է: Տվյալ դեպքում օգտագործվում է յոդի գունային ռեակցիան օսլայի հետ: Ընդհանուր առմամբ խակ պտուղներում պարունակվում է մեծ քանակությամբ օսլա, որը յոդի լուծույթի հետ տալիս է մուգ կապտագույն գունավորում: Հասունացման գործընթացին զուգընթաց պակասում է օսլայի պարունակությունը պտղամսում, և յոդի լուծույթի մեջ ընկղմելիս պտղի կտրվածքի վրա կապույտ գունավորումը ևս նվազում է:

Նշված եղանակով հասունության աստիճանը որոշելիս պտուղները բաժանվում են 3, 5 կամ 8 դասի: Գործնական կիրառության առումով առավել նպատակահարմար է 3 դասի բաժանելը:

Մասնագիտական գրականությունից հայտնի է, որ նպաստավոր հասունացման փուլում բերքահավաք կազմակերպելիս, առանց լրացուցիչ ծախսերի կարելի է ստանալ զգալի հավելյալ բերք, օրինակ՝ տանձենու համար 24 %: Նպաստավոր հասունության փուլում խնձորենու բերքը հավաքելիս այն ավելանում է մոտ 6-9 %-ով, իսկ 6 ամիս սառնարանային պտղապահեստում կորուստների քանակը նվազում է 8-12 %-ով: Միայն բերքահավաքի ճիշտ կազմակերպման միջոցով հնարավոր է ստանալ 14-21 % հավելյալ պտուղ[1]:

Գործնականում տարածում գտած մյուս եղանակը հենված է պտղամսի պնդության վրա, որը զարգացած երկրներում որոշվում է հատուկ սարքավորման՝ պենետրոմետրի (penetrare-ներթափանցել և metron-չափ բառերից), միջոցով:

Պտղաբուծության մեջ հասունության աստիճանը որոշելու նպատակով օգտագործվում է նաև պտուղների կեղևի հիմնական և ծածկութային գունավորվածությունը: Այդ նպատակով հասունության տարբեր փուլերում ֆիքսվում է պտուղների գույնը, որի հիման վրա ստեղծվում է կոլորիմետրիկ (գունավոր) քարտ:

Արտասահմանյան մի շարք երկրներում կիրառվում են հասունացման տարբեր մեթոդներ, որոնք մեր հանրապետությունում գտնվում են հետազոտությունների սկզբնական փուլում:

Համեմատաբար նոր մեթոդ է պտուղների և բանջարեղենի հասունության աստիճանի որոշումը ձայնային արձագանքների կիրառման միջոցով:

Գոյություն ունեն նաև բուսաբուծական մթերքների հասունության աստիճանի որոշման այլ մեթոդներ, սակայն գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի և ներկայիս վճարունակության պայմաններում դրանց կիրառությունը հնարավոր և արդյունավետ չի լինի, դրանք հետաքրքրություն կարող են ներկայացնել գյուղատնտեսական կոոպերատիվների, խոշոր ապրանքային տնտեսությունների համար:

Բերքահավաքի գործընթացի կազմակերպման կատարելագործումը հանդիսանում է բերքի ավելացման և արտադրության արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններից մեկը: Տվյալ դեպքում կազմակերպման կատարելագործումը պետք է ուղղվի բերքահավաքի մեքենայացման մակարդակի բարձրացմանը, մեքենայացված աշխատանքների ծախսերի կրճատմանը, ինչպես մեքենայացված, այնպես էլ ձեռքով բերքահավաքի դեպքում ագրոտեխնիկական պահանջների պահպանման միջոցով բերքի կորուստների կրճատումը:

Հանրապետությունում գործող գյուղացիական տնտեսությունների չափերից, դրանց վճարունակությունից, բերքահավաքի տեխնիկայի բարձր արժեքից և դրա օգտագործման համար առանձին մասնագիտական հմտությունների պահանջից ելնելով՝ առանձին տնտեսավարողների կողմից բերքահավաքի տեխնիկայի տնօրինումը որպես սեփականություն մատչելի չէ և

[1] Սնապյան Գ.Գ., Պտուղների և բանջարեղենի սառնարանային տեխնոլոգիան, Երևան, «Ասողիկ», 2001թ., էջ 103:

տնտեսապես էլ չի հիմնավորվում: Բերքահավաքի համար անհրաժեշտ է համարվում տեխնիկայի վարձակալումը՝ հացահատիկային և կերահավաք կոմբայններ, խոտհնձիչներ, կարտոֆիլաքանդիչներ, հավաքիչ մամլիչներ, տրանսպորտային միջոցներ և այլն:

Առավել հիմնավորված է համարվում բերքահավաքի աշխատանքների կազմակերպումը համատեղ օգտագործման, կոոպերացման սկզբունքով կամ այլ կազմակերպական ձևերով գործող սպասարկումներ իրականացնող կառույցների միջոցով: Այդ կենտրոնների ձևավորումը սկզբնական ժամանակահատվածում պահանջում է որոշակի աջակցություն՝ դրամաշնորհների, նպատակային վարկերի, մատչելի պայմաններով լիզինգի և այլ մեխանիզմների միջոցով: Հաշվի առնելով գյուղատնտեսական տեխնիկայի փոխադրման հետ կապված դժվարությունները և լրացուցիչ ծախսերը՝ նպատակահարմար է համարվում նշված արտադրատեխնիկական սպասարկման կառույցները ձևավորել գյուղական համայնքներում: Այդ կառույցների աշխատանքը հնարավոր է կազմակերպել գյուղատնտեսական մթերքներ արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատման միջոցով, որը երաշխիք է բերքահավաքի ժամկետների պահպանման և կորուստներից խուսափելու համար: Արտադրատեխնիկական սպասարկման կառույցների կազմակերպական սխեման տրված է 1-ին գծապատկերում:

Բերքահավաքի կազմակերպումը նշված սխեմայով հնարավորություն կտա ապահովել հետևյալ արդյունքները՝

- գյուղական համայնքներում առկա բերքահավաքի տեխնիկայի համակարգված և ծանրաբեռնված օգտագործում,
- բերքահավաքի տեխնիկայի սարքինության մակարդակի բարձրացում և տեխնիկայի ծանրաբեռնված օգտագործման ապահովում,
- ելնելով ագրոտեխնիկական պահանջներից՝ մեքենայական բերքահավաքի որակի ապահովում,
- ռեսուրսների մատակարարման, տեխնիկական սպասարկումների ու նորոգումների արդյունավետ կազմակերպման միջոցով ծառայությունների սակագների մատչելիության ապահովում,
- բերքահավաքի աշխատանքների համար գյուղացիական տնտեսությունների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատում,
- բերքահավաքի աշխատանքների հետ կապված ընդհանուր (ոչ արտադրական) ծախսերի կրճատում,
- տեխնիկական միջոցների նորացման հնարավորությունների ստեղծում (լիզինգ, ապրանքային վարկեր, դրամաշնորհներ),
- բերքի կորուստների կրճատում և որակի բարելավում:

Բուսաբուծական արտադրանքի (բերքի) ընդունման գործընթացի կազմակերպման կատարելագործումը կապված է կոմբայնային բերքահավաքի համար ժամանակին համապատասխան տրանսպորտային միջոցների, իսկ պտղի, խաղողի, բանջարեղենի ընդունման համար սահմանված պահանջները բավարարող տարաների ապահովման գործընթացի արդյունավետ կազմակերպման հետ: Վերջինիս համար կարևոր է բերքի ծավալին համապատասխան տրանսպորտային միջոցների ապահովումը, անհրաժեշտ տարողության, նյութից և ձևի տարաների ապահովումը: Կերային մշակաբույսերի բերքի ընդունման համար կարևորվում է ագրոտեխնիկայով սահմանված ժամկետներում հավաքիչ մամլիչներով կահավորված տրակտորային ագրեգատների ապահովումը: Վերջինիս կազմակերպումն արդյունավետ կարող է լինել նշված արտադրատեխնիկական սպասարկման կառույցների և բուսաբուծական մթերքներ արտադրողների միջև պայմանագրային հարաբերությունների ձևավորման կամ կոոպերացիայի սկզբունքով տեխնիկայի օգտագործման դեպքում:

Բուսաբուծական արտադրանքի (բերքի) ընդունման համար կարևոր է համապատասխան տարաների ընտրությունը: Տարաները պետք է հարմար լինեն տեղափոխման, պահպանման և օգտագործման համար, լինեն ամուր, ինչպես նաև հնարավորինս թեթև:

Գծապատկեր 1

Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման կառույցների գործունեության կազմակերպական սխեմա



Բուսաբուծական արտադրանքի առանձնացման փուլի կազմակերպման կատարելագործման ուղղություններից է գյուղատնտեսական մթերքներ արտադրողների և վերամշակողների միջև, ինչպես նաև մեծածախ գնորդների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատումը, իրացման գործառույթ ունեցող կոոպերատիվներին անդամակցումը և, պայմանագրերին համապատասխան, բերքի առանձնացումը, որի համար կարևորվում է նաև անհրաժեշտ պայմանների առկայությունը՝ համապատասխան շինություններ, պահեստային և սառնարանային կարողություններ, տարաներ և այլն:

Բուսաբուծական արտադրանքի պահպանման կազմակերպման կատարելագործումը պետք է նպատակաուղղվի գյուղատնտեսական մթերքների պահպանման պահանջները բավարարող պահեստային, սառնարանային կարողությունների ստեղծմանը և դրանց նպատակային օգտա-

գործմանը: Վերջինս հնարավոր է համարվում միայն նպատակային վարկերի, լիզինգային մեխանիզմների, մրցակցային դրամաշնորհների և աջակցության այլ մեխանիզմների կիրառման միջոցով: Այս փուլի կազմակերպման իրական հնարավորություններից է կոոպերացման (համատեղ օգտագործման սկզբունքով), պայմանագրային հարաբերությունների հիման վրա գործող պահեստային կարողությունների ստեղծումը և դրանց օգտագործումը:

Հաշվի առնելով գյուղատնտեսությունում վճարունակության վիճակը, նաև այլ պայմաններ՝ նպատակահարմար ենք գտնում առաջարկել սառնարանային (պահեստային) տնտեսության ստեղծման (կառուցման) ու շահագործման հետևյալ տարբերակները՝

- նկատի ունենալով, որ գյուղացիական տնտեսություններին միջին հաշվով բաժին է ընկել 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր՝ նպատակահարմար է, որ գյուղացիական տնտեսությունները միավորվեն և համատեղ միջոցներով կոոպերացման սկզբունքով կառուցեն և շահագործեն սառնարանային տնտեսությունը: Տվյալ դեպքում սառնարանային տնտեսությունը կհամարվի գյուղացիական տնտեսությունների համատեղ սեփականությունը և կօգտագործվի իրենց կողմից արտադրված արտադրանքի պահեստավորման և հետագա իրացման համար,
- գյուղատնտեսական արտադրանք իրացնող միջնորդ կազմակերպությունը կամ կոոպերացման սկզբունքով գործող ընկերությունը կառուցում և շահագործում է սառնարանային տնտեսությունը և, գյուղացիական տնտեսություններից ձեռք բերելով արտադրանքը, պահեստավորում և իրականացնում է հետագա իրացումը,
- գյուղատնտեսական արտադրանք իրացնող միջնորդ կազմակերպությունը կամ այլ իրավաբանական անձ կառուցում է սառնարանային տնտեսություն և վարձակալությամբ տրամադրում գյուղացիական տնտեսություններին ու գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողներին՝ կոնկրետ ժամանակահատվածի համար ինչպես նաև ապահովում է պահպանման կազմակերպատեխնոլոգիական պայմանները: Այս դեպքում նպատակահարմար է կառուցել բազմախցիկ սառնարանային տնտեսություն, որը կտրամադրվի առանձին կամ խումբ տնտեսությունների՝ տարբեր պահպանման ռեժիմներ ունեցող մրգի ու բանջարեղենի համար:

Առավել հեռանկարային է համարվում կոոպերացման սկզբունքով սառնարանային (պահեստային) տնտեսության ստեղծումը և նրա անդամների կողմից համատեղ շահագործումը: Նշված սառնարանային տնտեսության կազմակերպական սխեման ներկայացվում է 2-րդ գծապատկերում:

Չափորոշման և տեսակավորման փուլի կազմակերպման կատարելագործումը պետք է ուղղվի չափորոշման և տեսակավորման գործընթացի մեքենայացման մակարդակի բարձրացմանը, այդ նպատակով անհրաժեշտ տեխնիկական բազայի համալրմանն ու եղածների վիճակի բարելավմանը:

Չափորոշման և տեսակավորման տեխնիկական բազայի համալրումը հնարավոր է համարվում գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությունում այլ տնտեսավարողների համար մատչելի մեխանիզմների կիրառման միջոցով:

Գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի և վերջիններիս կողմից արտադրվող բուսաբուծական մթերքների փոքր ծավալների պայմաններում, նշված սարքավորումների համար հնարավոր չէ ապահովել անհրաժեշտ ծանրաբեռնվածություն, ուստի գործընթացի կազմակերպումը հնարավոր է համարվում համատեղ օգտագործման մեխանիզմների կիրառմամբ, մասնավորապես՝ գյուղական համայնքներում բուսաբուծական մթերքների տեսակավորման և չափորոշման համատեղ գործող կարողությունների ձևավորման միջոցով: Այս փուլի կազմակերպման կատարելագործման արդյունքում բուսաբուծական մթերքների կորուստների կրճատման, որակի բարելավման, ավելացված արժեքի ստեղծման միջոցով արդյունավետության բարձրացման հաշվին կփոխհատուցվեն տվյալ փուլի կազմակերպման կատարելագործման համար կատարվող ծախսերը:

Գծապատկեր 2

Կոոպերացման սկզբունքով գործող սառնարանային (պահեստային) տնտեսության կազմակերպման սխեման



Բուսաբուծական արտադրանքի ստուգման և որակի վերահսկման աշխատանքների կազմակերպման կատարելագործումը պետք է ուղղվի տվյալ գործընթացի ապահովման համար անհրաժեշտ համապատասխան տեխնիկական բազայի համալրմանը: Այն պետք է իրականացվի ինչպես սննդամթերքի անվտանգության հանրապետական և տարածաշրջանային լաբորատորիաներում, այնպես էլ գյուղատնտեսական մթերքների իրացման շուկաների ծառայություններում: Նշվածի հետ մեկտեղ լաբորատոր փորձաքննության ենթարկվող նմուշների թիվն անհրաժեշտ է

հասցնել պահանջվող քանակության, որը հնարավորություն կտա լիարժեք բնութագրել ամբողջ իրացված արտադրանքի վիճակը: Տվյալ փուլի կազմակերպման կարևորագույն բաղադրիչ է համարվում անհրաժեշտ կադրային կազմի ապահովումը: Վերջինս պետք է իրականացվի կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացի կազմակերպման միջոցով: Վերջինս հիմնականում պետք է իրականացվի ինչպես ՀՀ պետական բյուջեի, միջազգային կազմակերպությունների, այնպես էլ տնտեսավարողների միջոցներով (վերամշակող ընկերություններ, մեծածախ և մանրածախ առևտրի կազմակերպություններ): Տվյալ փուլի կազմակերպման կատարելագործումը կհանգեցնի արտադրանքի որակի բարելավմանը և իրացման ծավալների, հատկապես արտահանման ավելացմանը, արդյունքում բուսաբուծությունից ստացվող հասույթի և եկամուտների ավելացմանը:

Բուսաբուծական արտադրանքի փաթեթավորման և տարավորման փուլի կազմակերպման կատարելագործումը պետք է ուղղվի փաթեթավորման և տարավորման տեխնոլոգիական, տնտեսական և օգտագործման հետ կապված պահանջների ապահովմանը: Տվյալ փուլի կազմակերպման կատարելագործման կարևոր բաղադրիչներից փաթեթավորման նյութերին և տարաներին ներկայացվող պահանջների պահպանումը: Այդ տեսակետից կարևոր ենք համարել այդ պահանջների ներկայացումը: Սովորաբար այդ պահանջները կարելի է ստորաբաժանել՝ տնտեսականի, տեխնոլոգիականի և օգտագործման հետ առնչվող պահանջների: Նշված պահանջներն ամփոփված ձևով ներկայացվում են 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

Բուսաբուծական արտադրանքի փաթեթավորման նյութերին և տարաներին ներկայացվող պահանջները

Ներկայացվող պահանջները ըստ առանձին բաղադրիչների		
Տնտեսական	Տեխնոլոգիական	Օգտագործման համար հարմարավետության
Հնարավորինս ունենա ցածր գին	Օժտված լինի համապատասխան օդա և ջերմակարգավորող հատկությամբ	Հարմար լինի տեղափոխման և օգտագործման համար
Փաթեթի կամ տարայի գինը չպետք է էապես ազդի մթերքի գնի և մրցունակության վրա	Մթերքը պաշտպանի ֆիզիկական և քիմիական ազդեցություններից, արևի ուլտրամանուշակագույն ճառագայթներից, ջրային գոլորշիների թափանցումից	Հնարավորինս թեթև լինի
Տեղեկատվություն կրի փաթեթավորված մթերքի և արտադրողի մասին	Մթերքները պաշտպանի կենսաբանական և մանրեաբանական ազդեցությունից	Տարան և փաթեթը կիրառվի բազմակի անգամ
Սպառողին գրավելու համար ունենա ժամանակակից արտաքին ձևավորում և գրավիչ տեսք	Ունենա հուսալի ամրություն, նյութը օգտագործվի օպտիմալ ձևով	Տարան լինի հավաքովի (օգտագործումից հետո ծալվեն կամ քանդվեն, հետագայում դյուրին հավաքվեն)
	Պատրաստված լինի հեշտությամբ օգտահանվող կամ վերամշակման ենթարկվող նյութերից	

Տվյալ փուլի կազմակերպումն արդյունավետ կարող է լինել համատեղ գործունեության մեխանիզմներով:

Գյուղատնտեսական հումքի վերամշակումը հանդիսանում է բուսաբուծական արտադրանքի հետբերքահավաքային գործընթացների այն կարևոր փուլը, որի կազմակերպման կատարելագործումն առավել մեծ ազդեցություն է ունենում բուսաբուծական մթերքների արտադրության ծավալների ավելացման և արտադրության արդյունավետության բարձրացման վրա:

Վերամշակման փուլի կազմակերպման կատարելագործման աշխատանքներն անհրաժեշտ են իրականացնել հետևյալ ուղղություններով՝

- գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման և տեխնիկական վերազինման,
- արտադրական, փոխադրման ծախսերի կրճատման, փաթեթավորման և տարավորման, ապրանքային տեսքի բարելավման միջոցով տեղական արտադրանքի մրցունակության բարձրացման, ներմուծման փոխարինման,
- հումքի տեսականու ու որակի բարելավման, արտադրվող արտադրատեսակների տեսականու ավելացման և կառուցվածքի բարելավման:

Վերը նշվածի աշխատանքների իրականացումը պահանջում է մեծածավալ ներդրումներ, որոնք առավել իրատեսական են համարվում փոխառու միջոցների ներգրավմամբ, մասնավորապես՝ մատչելի նպատակային վարկեր, դրամաշնորհներ, լիզինգային մեխանիզմների միջոցով նոր տեխնոլոգիական սարքավորումների ներդրում և այլն:

Գյուղատնտեսական մթերքների վերամշակման բնագավառի կազմակերպման կարևորագույն ուղղություններից է համարվում գյուղատնտեսական մթերքներ արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների կատարելագործումը և գյուղատնտեսական մթերքներ արտադրողների և վերամշակողների կոոպերացման մեխանիզմների մշակումն ու ներդրումը: Վերջինս հնարավոր է ինչպես առանձին գյուղացիական տնտեսությունների (գյուղատնտեսությունում տնտեսավարողների) վերամշակողների, այնպես էլ գյուղատնտեսական կոոպերատիվների և գյուղատնտեսական հումք վերամշակող ընկերությունների միջև:

Գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական կոոպերատիվների ու գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերությունների հետ փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների հաստատումը կնպաստի գյուղատնտեսական մթերքների իրացման պայմանների լավացմանը և գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտի կազմակերպման կատարելագործումը պահանջում է մի շարք միջոցառումների իրականացում, որոնք տարանջատվում են ինչպես օրենսդրական, այնպես էլ կազմակերպական բնույթի:

Բուսաբուծական արտադրանքի կամ վերամշակվածի տեղափոխման (փոխադրման) փուլի կազմակերպման կատարելագործմանը պետք է ուղղվի հետևյալ աշխատանքների իրականացումը՝

- տրանսպորտային հավաքակազմի տեխնիկական վերազինումը,
- մասնագիտացված տրանսպորտի ձեռքբերումը,
- փոխադրումների համար պայմանագրային հարաբերությունների կիրառումը,
- մթերքների փոխադրման համար մասնագիտացված ծառայությունների ստեղծումը:

Նշված գործընթացի կազմակերպման կատարելագործումը հնարավոր է համարվում գյուղատնտեսական կոոպերատիվների կամ արտադրատեխնիկական սպասարկման վերը նշված կառույցների ձևավորման շրջանակներում:

Տվյալ փուլի համար տեխնիկական բազայի համալրումը հնարավոր է տեխնիկական միջոցների մատակարարման մատչելի մեխանիզմների՝ լիզինգի, ապրանքային վարկերի, նպատակային վարկերի կիրառման միջոցով:

Մեծածախ և մանրածախ առաքում, իրացում: Այս փուլի կազմակերպման կատարելագործումը հանդիսանում է գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման և արդյունավետության բարձրացման ուղղություններից մեկը: Մեծածախ և մանրածախ առաքման, իրացման բնագավառի կազմակերպման կատարելագործմանը պետք է ուղղվի հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- գյուղատնտեսական մթերքների մեծածախ և մանրածախ իրացման համակարգի կատարելագործումը, արդյունքում բուսաբուծական մթերքների ապրանքայնության մակարդակի բարձրացումը,

- հանրապետությունում գյուղատնտեսական մեծածախ շուկաների համակարգի, իրացմամբ զբաղվող կոոպերատիվ կառույցների ստեղծումը,
- արտահանմամբ զբաղվող մասնագիտացված կառույցների ձևավորումը:

Բուսաբուծական արտադրանքի իրացման բնագավառում առկա վիճակը պահանջում է իրացման ոլորտի կազմակերպման կարգավորման այլ մեխանիզմների մշակում և ներդրում: Հաշվի առնելով բուսաբուծական մթերքների իրացման բնագավառում առկա չկանոնակարգված վիճակը՝ փորձ ենք արել առաջադրել իրացման գործընթացի կազմակերպման որոշակի մեխանիզմներ:

Առաջարկվում է գյուղական համայնքներում ձևավորել իրացման գործընթացը կազմակերպող կոոպերատիվ, կամ առավել նպատակահարմար է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված, առանց իրավաբանական անձ ձևավորելու, գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիների համատեղ գործունեության պայմանագրով միավորումը և իրականացնել շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակային գործունեություն: Համատեղ գործունեության պայմանագիրը կնքվում է գրավոր[1]: Առանց իրավաբանական անձ ձևավորելու համատեղ գործունեության պայմանագրով գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներն ունեն նաև ավելացված արժեքի հարկի արտոնություն, համատեղ պայմանագրով միավորված սուբյեկտները հանդես են գալիս որպես ավելացված արժեքի հարկի առանձին վճարողներ և նրանց գործունեությունից՝ արտադրանքի իրացման շրջանառությունը չի գերազանցի ավելացված արժեքի հարկի 58.35 մլն դրամի չհարկվող նվազագույն շեմը[2]: Կազմակերպական տվյալ ձևն ունի իր առավելությունները նաև հիմնադրման առումով:

Առաջարկվում է բուսաբուծական արտադրանքի իրացման կազմակերպման կատարելագործման հետևյալ հաջորդական քայլերը:

Անհրաժեշտ է յուրաքանչյուր գյուղական բնակավայրում ձևավորել համատեղ գործունեության պայմանագրով միավորված գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպական միավորներ՝ առանց իրավաբանական անձ ձևավորելու: Համատեղ գործունեության պայմանագրով ձևավորված կազմակերպական միավորի հիմնական գործառույթը պետք է լինի բուսաբուծական մթերքների հավաքման և կարճատև պահպանման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Վերջինիս անվանենք բուսաբուծական արտադրանքի համայնքային հավաքման կետեր: Նշված հավաքման կետերը պետք է ձեռք բերեն նաև անհրաժեշտ տարաներ, հետագա տարիներին անհրաժեշտ է համարվում նաև փաթեթավորման պարզագույն սարքավորումների ձեռքբերումը, ինչպես նաև սառնարանային տնտեսությունների հիմնումը կամ վարձակալումը: Համայնքային հավաքման կետի հիմնադրման և շահագործման ծախսերին կանդրադառնանք առանձին առաջիկա բաժիններում: Սառնարանային տնտեսության ներդրման արդյունավետությանը նույնպես կանդրադառնանք առանձին:

Հանրապետության գյուղական համայնքներում համատեղ գործունեության պայմանագրով գործող տնտեսավարողների միջոցով բուսաբուծական արտադրանքի իրացման առաջարկվող կազմակերպական սխեման ներկայացված է 3-րդ գծապատկերում:

---

[1] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք: ՀՕ-239, 1998թ., հոդված 1026:

[2] «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-118, 1997թ., հոդված 3:

Գծապատկեր 3

Հանրապետության գյուղական համայնքներում համատեղ գործունեության պայմանագրով գործող տնտեսավարողների միջոցով բուսաբուծական արտադրանքի իրացման առաջարկվող կազմակերպական սխեմա



Գյուղական համայնքներում համատեղ գործունեության պայմանագրով գործող տնտեսավարողների միջոցով բուսաբուծական մթերքների իրացումը կատարվում է հետևյալ մեխանիզմով:

Համատեղ գործունեության պայմանագրով միավորված տնտեսավարող սուբյեկտները տարբեր մշակաբույսերի, պտղի, խաղողի պարբերական բերքահավաքից հետո բերքն իրենց փոխադրամիջոցներով տեղափոխում են համայնքային հավաքման կետ: Փոխադրված բերքը հավաքման կետի պատասխանատուների կողմից, արտադրողի ներկայությամբ, կշռվում է, տեսակավորվում և տարայավորվում:

Հաշվառման գրքույկում իրականացվում են համապատասխան գրանցումներ: Անհրաժեշտ խմբաքանակով (շուրջ 4 տոննա) բերքի հավաքագրումից հետո բուսաբուծական մթերքները բեռնվում են տրանսպորտային միջոց և իրացման պատասխանատուների ուղեկցությամբ փոխադրվում գյուղատնտեսական մթերքների քաղաքային շուկաներ՝ իրացման: Իրացումից հետո գյուղատնտեսական մթերքներ արտադրողները ստանում են իրացված արտադրանքի արժեքը: Փոխադրման հետ կապված և իրացման պատասխանատուների աշխատանքի դիմաց վճարումներն իրականացվում են արտադրողների միջոցների հաշվին:

Գյուղատնտեսական հումք վերամշակող ընկերություններին բուսաբուծական մթերքների իրացումը հիմնականում իրականացվում է պայմանագրային հարաբերությունների հիման վրա: Այս դեպքում, մթերքների փոքր խմբաքանակների իրացումը կատարվում է համայնքային հավաքման կետերի միջոցով: Մեծ խմբաքանակների դեպքում, երբ տրանսպորտային միջոցն ամբողջովին բեռնվում է, արտադրողի տնտեսությունից փոխադրումը կատարվում է անմիջապես դեպի վերամշակող ընկերություն: Վճարումը կատարվում է համատեղ գործունեության պայմանագրով գործող տնտեսավարողների և վերամշակողների միջև կնքված պայմանագրի ժամկետներին և պայմաններին համապատասխան:

Բուսաբուծական մթերքների փոխադրումն իրականացվելու է ինչպես համատեղ գործունեության պայմանագրով գործող տնտեսավարողների փոխադրամիջոցներով՝ մինչև արտահանող կազմակերպության պահեստ, այնպես էլ անմիջապես հավաքման կետից՝ արտահանման գործառույթ ունեցող կազմակերպությունների տրանսպորտային միջոցներով: Բուսաբուծական մթերքների դիմաց վճարումները կատարվում են ինչպես անմիջապես, այնպես էլ պայմանագրով սահմանված այլ ընդունելի ժամկետներում:

Բուսաբուծական մթերքների որոշ մասի փոքր խմբաքանակով իրացման տարբերակ է հանդիսանում նաև գյուղացիական տնտեսության անդամների կողմից անմիջապես իրենց միջոցներով քաղաքային շուկաներում գյուղատնտեսական մթերքների իրացումը:

Հնարավոր է համարվում նաև վերամշակող ընկերություններին բուսաբուծական արտադրանքի (հիմնականում խաղողի) իրացումն անմիջապես գյուղացիական տնտեսությունների կողմից:

Տվյալ մեխանիզմի կիրառումը հնարավորություն կտա բարձրացնել բուսաբուծական մթերքների ապրանքայնության մակարդակը, կրճատել բերքի կորուստները, խնայել բուսաբուծական մթերքներ արտադրողների ժամանակը և նյութական ու դրամական միջոցները, ինչպես նաև մթերքների իրացման գործում ներդնել փոխշահավետ պայմանագրային հարաբերություններ:

Բուսաբուծական արտադրանքի իրացման առաջարկվող տարբերակ է նաև գյուղատնտեսական մեծածախ շուկաների համակարգի ներդրումը: Տվյալ դեպքում բուսաբուծական արտադրանքը մեծածախ կենտրոնական շուկա է ուղղվում հավաքման կետերի միջոցով, այնուհետև, համապատասխան գործընթացներ (տեսակավորում, տարավորում, փաթեթավորում) անցնելուց հետո, բուսաբուծական արտադրանքը միջնորդավորված ձևով ուղղվում է սպառման: Գյուղատնտեսական մեծածախ շուկաների միջոցով արտադրանքի իրացման կազմակերպական սխեման ներկայացված է 4-րդ գծապատկերում:

Գծապատկեր 4

Գյուղատնտեսական մեծածախ շուկաների միջոցով արտադրանքի իրացման կազմակերպական սխեման



Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պարենային մեծածախ շուկաների ստեղծումը հանդիսանում է ապրանքների տեղաբաշխման համակարգի վերակառուցման առաջին և անհրաժեշտ փուլ:

Нонна Купелянц

ОСНОВНЫЕ ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ОРГАНИЗАЦИИ ПОСЛЕУБОРОЧНЫХ ПРОЦЕССОВ РАСТЕНИЕВОДЧЕСКОЙ ПРОДУКЦИИ

Аннотация

В статье на основании выполненных исследований представлены основные направления совершенствования организации послеуборочных процессов растениеводческой продукции на всех этапах, а именно, процесса созревания урожая, сбора, приема, отделения, хранения, сортировки, работы по проверке и контролю качества, процесса упаковки, переработки сельскохозяйственного сырья, перевозки и транспортировки продукции растениеводства или переработанной продукции, оптовой и розничной доставки, реализации. Для совершенствования процесса сбора урожая предложено создать организационные единицы по производственно-техническому обслуживанию сельского хозяйства, а также дана схема организации этого процесса. Представлена схема действия холодильного хозяйства по принципу кооперации, а также схема, предложенная сельским областям республики, по реализации растениеводческой продукции на основе договора о совместной деятельности хозяйствующих субъектов, схема организации реализации продукции через сельскохозяйственные оптовые рынки.

Nonna Kupelyants

THE MAIN DIRECTIONS TO IMPROVE THE POST-HARVESTING PROCESSES UTILIZED IN CROP PRODUCTION

Abstract

Based on various studies reviewed the author provides main directions to improve post harvesting processes utilized in crop production as different stages: crop cultivation; harvesting; accepting; separating; maintaining postharvest quality; sorting; quality control; packaging, agricultural processing; warehousing and transportation logistics/supply chain (to wholesalers and retailers). The author proposes to establish institutions to provide agricultural production and technical services for harvesting stage and provides its respective organizational chart. The author provides respective charts that describe the following processes: warehousing based on the cooperation principle; and sales of produced crops/produced items in the agricultural wholesale and/or retail markets by farmers/entities in the rural communities of the Republic based on joint activity agreements.

ԵՎԳԵՆՅԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՈՌՈԳՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ոռոգման ջրի ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման գործում կարևորվում է ներդրումային քաղաքականության դերը: Ավելին, համակարգի գանձումների ավելացումը, կորուստների կրճատումը, կառավարման բարելավման ճանապարհով ֆինանսական առողջացումը և ֆինանսական հոսքերի ծրագրի կատարումը, սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերին համապատասխան անխափան ու անվտանգ շահագործումն իրատեսական կարող են լինել միայն բավարար ներդրումների իրականացման պայմաններում: Այդ գործում վճռորոշ դեր ունեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկային և դրամաշնորհային միջոցները, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեից ներգրավված միջոցները, որոնց նպատակային և արդյունավետ օգտագործման ապահովումը դարձել է կարևորագույն նախապայման:

Մեր կարծիքով, ջրային տնտեսության համակարգի տեխնիկական վերազինման նպատակով անհրաժեշտ է մշակել համապատասխան ներդրումային ծրագրեր և միջազգային ֆինանսական կազմակերպությունների նպատակային վարկերի հաշվին իրականացնել ջրամատակարարման ինքնահոս համակարգերի կառուցում և կաթիլային ոռոգման համակարգերի ներդրում:

Ծրագրերի իրականացման հիմքում մշտապես պետք է դրված լինի էլեկտրաէներգիայի և ջրի խնայողության, մեխանիկականից ինքնահոս ջրամատակարարման անցնելու միջոցառումների իրականացումը, ինչպես նաև շարունակական ջրամատակարարման ապահովումը:

Ոռոգման համակարգի հիմնական նպատակային ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2013 թվականին բարեփոխումների ինդեքսը կազմել է 2.67, 2014-ին լինելու է 3.0, իսկ 2025-ին՝ 4.33: Որպես բազային տարի է վերցվել 2010 թվականը: ՋՕԸ-ների կողմից սպասարկվող ընդհանուր ոռոգելի հողատարածքները բազային տարում (2011թ.) եղել են 129.4 հազ. հա, 2025թ. լինելու են 138 հազ.հա (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ոռոգման համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները [1]

Ցուցանիշներ	Բազային տարի	2013	2014	2015	2016	2017	2021	2025
Բարեփոխումների ինդեքս (ՎԶԵԲ-ի կողմից հրապարակվող ցուցանիշ. Transition Indicator)	2.33 (2010)	2.67	3.0	3.33	3.33	3.67	4.0	4.33
ՋՕԸ-ների կողմից սպասարկվող ոռոգելի հողատարածքներ, հազ.հա	129.4 (2011)	129.7	130.4	131	131.7	132.4	135	138
Պետական ներդրումների մակարդակ. տոկոս՝ՀՆԱ-ի նկատմամբ	0.8 (2011)	0.14	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.3
Սակագնի ընթացիկ ծախսածածկման (հաշվեգրային) մակարդակ,%	48 (2011)	78.4	83.4	90.9	95	100	120	120

Ինչ վերաբերում է արտերկրյա ներդրումային ծրագրերին ու դրանց բարեփոխումներին, պետք է նշել, որ Համաշխարհային բանկի կողմից իրականացվող Արմավիրի և Թալինի մայր

[1] http://www.mfe.am/up/programs/Final%20DraftADS_Nov%2020%202012_arm.pdf

ջրանցքների առաջնահերթ վերանորոգմանն ուղղված ներդրումները կազմում են 36.0 մլն ԱՄՆ դոլար, որից 6.0 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության համաֆինանսավորման գումարն է[1]:

Ոռոգման ջրամատակարարման կառավարումն իրականացնում է ջրային համակարգերի կառավարման մարմինը կամ ջրօգտագործողների ընկերությունը (ջրօգտագործողների ընկերությունների միությունը)՝ «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ոռոգման համակարգում խոշոր ջրամբարները, մայրուղային և միջհամայնքային ջրատարները հանդիսանում են ոռոգում-ջրառ ուղղվածություն ունեցող ընկերությունների սեփականությունը, որոնց բաժնետոմսերը 100 տոկոսով պատկանում են պետությանը: Ոռոգման ջրի երկրորդական բաշխումն իրականացվում է ՋՕԸ-երի կողմից, որոնք հանդիսանում են ջրօգտագործողների կողմից ստեղծված շահույթ չհետապնդող կազմակերպություններ: ՋՕԸ-երը ստեղծվել են ջրօգտագործողներին ոռոգման ջրով ապահովելու նպատակով և իրականացնում են միայն ոռոգման համակարգի շահագործման ու պահպանման գործառույթներ: Ի տարբերություն խմելու ջրի մատակարարման համակարգի, ոռոգման համակարգում առաջնային և երկրորդական (մեծածախ և մանրածախ) ջրամատակարարման իրականացման գործառույթները տարանջատված են տարբեր կազմակերպությունների միջև: ՋՕԸ-երը մեծածախ գնով ջուր են գնում ոռոգում-ջրառ ընկերություններից՝ հետագայում բաշխելով ջրօգտագործողներին:

ՋՕԸ-երին պայմանագրային հիմունքներով անհատույց օգտագործման տրամադրված շահագործվող ոռոգման միջհամայնքային ցանցերը հանդիսանում են պետական սեփականություն, իսկ ներհամայնքային ցանցերը՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականություն:

Չնայած ջրօգտագործողների ընկերությունները իրավաբանորեն արդեն ստեղծվել են, սակայն նրանք գտնվում են ձևավորման վաղ շրջանում: Բացակայում է նրանց անդամների ակտիվ մասնակցությունը: Ոռոգման ենթակառուցվածքների քայքայված վիճակը ֆինանսական և տեխնիկական բազմաթիվ խնդիրներ են առաջացնում նրանց համար, որոնց հաղթահարումը սեփական ուժերից վեր է: Կառավարման մարմիններն իրենց պատրաստվածությամբ (վարչական խորհուրդ, գործադիր մարմիններ, վերստուգիչ և վեճեր լուծող հանձնաժողովներ) դեռ չեն համապատասխանում ջրօգտագործողների ընկերությունների զարգացման պահանջներին: Ոռոգման ոլորտի հետագա զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել՝

- համապատասխան ներդրումների ներգրավում,
- խոշոր ջրային համակարգերում անվտանգության միջոցառումների իրականացում,
- ջրօգտագործողների ընկերությունների խոշորացում,
- ոռոգում-ջրառ իրականացնող ընկերություններից ջրօգտագործողների ընկերություններին որոշակի համակարգերի պահպանության ու օգտագործման գործառույթների փոխանցում,
- ջրօգտագործողների ընկերություններին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու և վեճերի լուծման համար անհրաժեշտ ներքին մեխանիզմների ստեղծում,
- ընդհանուր ջրաղբյուրից օգտվող ջրօգտագործողների ընկերությունների միջև արդյունավետ համագործակցության համար նորմատիվային հիմքերի ստեղծում,
- ոռոգման ոլորտի ընկերություններին տեխնիկական, հաշվապահական հաշվառման և իրավաբանական ստորաբաժանումների մասնագետների, ջրօգտագործողների ընկերություններին վարչական խորհուրդների, վեճեր լուծող և վերստուգիչ հանձնաժողովների անդամների ուսուցում և վերապատրաստում,
- ոռոգման ոլորտի մասնագետների անընդհատ վերապատրաստում, գործուղումների տրամադրում՝ արտերկրյա փորձի արդյունավետ ներդրման նպատակով,
- ոռոգման նորագույն տեխնոլոգիաների ուսուցման տրամադրման հնարավորություն:

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման հեռանկարները, հետզհետե ավելանում են ՀՀ պետական բյուջեի մուտքերը, որոնք ըստ էության պետք է նպաստեն սույն ոլորտի կապիտալ ներդրումների ավելացմանը ոչ միայն դոնոր

[1] http://www.scws.am

միջազգային կազմակերպությունների կողմից, այլ նաև ՀՀ պետական բյուջեից: Նշված գործընթացն արդեն իսկ իրականացվում է: Այսպես, 2008–2009թթ. ՀՀ պետական բյուջեից ոռոգման համակարգերի վերանորոգման, դրանց արդիականացման համար հատկացվել է տարեկան շուրջ 1.5 մլրդ դրամ[1]:

Այսպիսով, ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված կապիտալ ներդրումները պետք է ապահովեն՝ ջրանցքների ջրթողունակության բարձրացման նպատակով ոռոգման մայր ջրանցքների առաջնահերթ վերանորոգումը կամ վերականգնումը այն տարածքներում, որտեղ ինքնահոս ջրամատակարարումը հնարավոր չէ պոմպակայանների արդիականացմամբ, ջրօգտագործողների ընկերությունների կողմից շահագործվող ներտնտեսային ջրանցքների կառուցմամբ կամ վերականգնմամբ, ինչը հնարավորություն կտա նվազեցնել ջրի կորուստները, ավելացնել ջրամատակարարման արդյունավետությունը, տեղափոխվող ջրի կառավարման բարելավումը, բնակավայրային տարածքներում վնասներ պատճառող ֆիլտրացիոն երևույթների բացառումը: Միաժամանակ ներդրումները նպատակահարմար է ուղղել փորձարարական սարքավորումներով կահավորված ոռոգման կենտրոնի հիմնադրմանը, ոռոգման ոլորտի կազմակերպություններին սարքավորումներով, մեքենամեխանիզմներով, համակարգչային տեխնիկայով, ծրագրային փաթեթներով համալրմանը, ջրօգտագործողների ընկերություններում ոռոգման ոլորտի մասնագետների և ֆերմերների տեխնիկական և ֆինանսական գիտելիքների ձեռքբերմանն ուղղված ուսուցմանը, այդ թվում՝ գյուղացիական տնտեսությունների կողմից կաթիլային և անձրևացման համակարգերի ստեղծման միջոցով ջրման նոր տեխնոլոգիաների կիրառման սահուն անցմանը, ինչը կնպաստի բարձրարժեք մշակաբույսերի մշակմանը, արտադրվող գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցմանը և ջրօգտագործողների վճարունակության բարձրացմանը:

Հիմք ընդունելով սույն հոդվածի շրջանակներում կատարված վերլուծության արդյունքները, գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում ոռոգման զարգացմանն ուղղված առաջնահերթ ներդրումների համար ֆինանսական աղբյուրները ներկայումս հնարավոր է իրականացնել միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող արտոնյալ վարկերի հաշվին, ինչը լուրջ մարտահրավեր է ՀՀ կառավարության համար:

Евгения Акопян

ПРОБЛЕМЫ В СФЕРЕ ИРРИГАЦИИ И ПУТИ ИХ РЕШЕНИЯ

Аннотация

В рамках данной статьи в теоретической плоскости рассмотрены проблемы в сфере ирригации. Также предложены основные механизмы улучшения данной сферы, что способствует дальнейшему развитию инфраструктуры в сфере водоснабжения.

Evgenia Hakobyan

THE CURRENT ISSUES THE IRRIGATION SECTOR FACES AND APPROACHES TO ADDRESS THEM

Abstract

The article identifies the issues of the irrigation sector based on the theoretical principles, and proposes the main mechanisms that would develop the sector and would further improve state of water supply infrastructure.

[1] http://parliament.am/

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.

ԼԻԱՆԱ ԱՋԱՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ ԻՆՔՆԱԲԱՎՈՒԹՅԱՆ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հաշվի առնելով ագրարային ոլորտի առանձնահատկությունները և դրանում ստեղծված իրավիճակը, երկրի պարենային անվտանգության և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունը, կարևորվում է ագրարային ոլորտի իրավական ձևավորման, գյուղատնտեսությունում տնտեսվարողների գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովման, գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության խթանման, նոր տեխնոլոգիաների ներդրման, սննդամթերքի անվտանգության հարցերը:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում 2012 թվականին գրանցվել են դրական տեղաշարժեր: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը 2012թ. կազմել է 787.9 մլրդ դրամ. որը գերազանցում է նախորդ տարվա. նույն ցուցանիշը 8.3 %-ով: Միայն 2012թ. բուսաբուծության ճյուղում այն կազմել է 507.8 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվան 12.8%-ով, իսկ անասնաբուծության ճյուղում կազմել է 280 մլրդ. դրամ, որը նախորդ տարվան գերազանցում է 3.8%-ով: Դրական տեղաշարժ է նկատվել վարելահողերի օգտագործման բնագավառում՝ նպատակային օգտագործման մակարդակը ավելացել է 3.9%-ով: 2012թ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 303.6 հազ հա, նախորդ տարվա 286.7 հազ. հա դիմաց, ավելանալով 16.9 հազ. հա-ով:

Ըստ ուսումնասիրվող երկու տարիներին (2011-2012թթ.) համախառն արտադրանքի աճ է նկատվում համարյա բոլոր բուսաբուծական արտադրատեսակների գծով, հիմնականում ցանքատարածությունների ավելացման և որոշ չափով ինտենսիվացման մակարդակի բարձրացման հաշվին (տե՛ս աղյուսակ 1): Այսպես, կարտոֆիլի գծով աճ է գրանցվել 88.7 հազ. տոննա կամ (15.9%), բանջարեղենի գծով՝ 61,7 հազ տոննայով. կամ (7.8%), իսկ պտղի և հատապտղի գծով՝ 92.2 հազ. տոննայով կամ (38.5%): Խաղողագործության ճյուղի զարգացմանը խանգարում է սորտային կազմի անհամապատասխանեցումը վերամշակող արդյունաբերությանը և շուկայի պահանջներին:

Աղյուսակ 1

Բուսաբուծական արտադրատեսակների արտադրության ծավալները՝ ըստ 2011-2012թթ.[1]

հազ. տոննա

Արտադրատեսակների անվանումը	2011թ.	2012թ.	2012թ.-ը 2011թ. նկատմամբ	
			բացարձակ	հարաբերական %
Հացահատիկ	440.6	455.0	14.4	3.3
այդ թվում ցորեն	224.0	234.0	12.0	4.5
Կարտոֆիլ	557.3	646.0	88.7	15.9
Բանջարեղեն	787.1	848.8	61.7	7.8
Պտուղ և հատապտուղ	239.4	331.6	92.2	38.5
Խաղող	229.6	242.0	12.4	5.4

[1] Տվյալները՝ ԱՎԾ-ից:

2012թ. նախորդ տարվա համեմատ խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը ավելացել է 27.9 հազ. գլխով, այդ թվում կովերինը՝ 10.8 հազ., մանր եղջերավորներին՝ 57.7 հազ. գլխով: Թռչունների գլխաքանակը ավելացել է 561 հազ. գլխով:

Միաժամանակ, ըստ 2-րդ աղյուսակում բերված տվյալների անասնաբուծական արտադրատեսակների առումով, 2012թ. նախորդ տարվա նկատմամբ. միսը կենդանի քաշով ավելացել է 5.6 հազ. տոննայով կամ 4,4 տոկոսով , կաթը 27,5 հազ. տոննայով կամ 4.6 տոկոսով, իսկ ձուն 14.9 մլն. հատով կամ 2.4 տոկոսով:

Աղյուսակ 2

Հիմնական անասնաբուծական արտադրատեսակների արտադրության ծավալները՝ ըստ 2011-2012թթ.[2]

հազ. տոննա

Արտադրատեսակների անվանումը	2011թ.	2012թ.	2012թ.-ը 2011թ. նկատմամբ	
			բացարձակ	հարաբ %
Միս/կենդանի քաշով/ հազ. տոննա	127.9	133.5	5.6	4.4
Կաթ, հազ տոննա	601.5	629.0	27.5	4.6
Ձու, մլն հատ	633.6	648.5	14.9	2.4

[2] Տվյալներ՝ ԱՎԾ-ից:

Ըստ աղյուսակներ 1 և 2 տվյալների ավելացել են գյուղատնտեսական արտադրատեսակների արտադրության ծավալները, որոնցով պայմանավորված կմեծանա դրանց ինքնաբավության մակարդակը: Վերջինս որոշելու համար անհրաժեշտ է նախ և առաջ հաշվի առնել հիմնական գյուղատնտեսական մթերքներով բնակչությանը ապահովման պահանջարկը՝ հաշվարկման հիմքում դնելով՝ մեկ բնակչի հաշվով սննդամթերքների տարեկան ֆիզիոլոգիական գիտականորեն հիմնավորված նորմերը և բնակչության թվաքանակը: Նվազագույն պարենային զամբյուղում ներառված կենսապես կարևորագույն սննդամթերքի նկատմամբ ներքին շուկայում սպառողական պահանջարկի բավարարումը տեղական արտադրության հաշվին հանդիսանում է պարենային անվտանգության ապահովման կարևորագույն նախապայմանը: Երկրի պարենային ինքնաբավության մակարդակը համարվում է ապահովված, եթե այն կազմում է 75-80 %:

Նվազագույն պարենային զամբյուղի կազմի, կառուցվածքի և դրանց օրաբաժնի էներգետիկ արժեքի վերաբերյալ պատկերն ըստ 2012-ի տվյալների բերված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3-ի տվյալներից պարզվում է, որ օրաբաժնի ամենամեծ էներգետիկ բաժինն ընկնում է հացամթերքին՝ 992.5 կկալ, որից ձավարեղենինը՝ 175.5 կկալ: Իր հերթին ամենամեծ կալորիականությունն ունի նաև կաթնամթերքը՝ 339.7 կկալ, որից կաթի գծով 122 կկալ:

Ըստ ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի 2012թ. տվյալների վերլուծության մի շարք կարևորագույն սննդամթերքի ինքնաբավության մակարդակը՝ էներգետիկ արժեքով հաշվարկված, ցածր է, այն կազմել է միջինը՝ 58.5%, այդ թվում մթերքների նշված նորմերն են . հացամթերք՝ 38.7%, կարտոֆիլ՝ 99.9%, բանջարեղեն և բոստան՝ 100.6%, պտուղ և հատապտուղ՝ 99.3%, բուսական յուղ՝ 4.3%, շաքար՝ 2.4%, ձու՝ 101.4%, կաթ՝ 98.1%, հավի միս՝ 21.2%, տավարի միս՝ 77.8%, խոզի միս՝ 50.4%, ոչխարի միս՝ 20.0%:

Հիմնական պարենային մթերքների ինքնաբավության ապահովման, հատկապես հացահատիկի, բուսական յուղի, շաքարի, մսի, ձկան համար պահանջվում է տեղական արտադրության խթանում և տեխնիկական աջակցություն և կարտոֆիլի վերամշակման կարողությունների ապահովումը: Միաժամանակ որոշակիորեն հիմնավորվում է անհրաժեշտ պարենամթերքի ներմուծումը, սակայն անհրաժեշտություն է տեղական արտադրությամբ փոխարինման կարևորությունը, որը հնարավոր է ապահովել տեղական արտադրության արտադրանքների մրցունակության բարձրացման և արտադրության ծավալների ավելացման միջոցով:

Աղյուսակ 3

ՀՀ առողջապահության նախարարության կողմից առաջարկվող նվազագույն պարենային զամբյուղի կազմը, կառուցվածքը և էներգետիկ արժեքը[3]

	Պարենամթերքի անվանումը	Չափի միավոր	Օրական սպառումը 1 շնչի հաշվով	Օրաբաժնի էներգետիկ արժեքը /կկալ/
1	2	3	4	5
1.	Հացամթերք այդ թվում՝	գ	355	992,2
	հաց	-,,-	250	622.5
	ալյուր	-,,-	20	70.5
	մակարոնեղեն	-,,-	15	55
	ձավարեղեն	-,,-	50	175.5
	ընդեղեն	-,,-	20	68.5
2.	Մսամթերք	-,,-	100	203
3.	Կաթնամթերք	մլ	255	339.7
	այդ թվում `կաթ	-,,-	200	122
	պանիր	գ	25	66.8
4.	Կարտոֆիլ	-,,-	250	167.5
5.	Բանջարեղեն	-,,-	300	87
6.	Միրգ	-,,-	200	96
7.	Շաքար	-,,-	50	193.5
8.	Ձու	հատ	0.5	40
9.	Ձեթ	գ	20	176.8
10.	Ձուկ	-,,-	30	44.4
11.	Թեյ, աղ և այլ համեմունք	-,,-	15	
	Ընդամենը			2412.1

[3] Տվյալները՝ ԱՎԾ-ից:

Պարենային անվտանգության հիմնախնդրի կարգավորման համար անհրաժեշտ է՝

ա) գյուղատնտեսական հողատեսքերի միավորում և տնտեսությունների խոշորացում, մշակաբույսերի բերքատվության բարձրացում՝ ագրոտեխնիկայի առաջադիմական համակարգի ներդրման միջոցով:

բ) անասնապահության ճյուղում կենդանական տոհմի բարելավում, գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելում, կերարտադրության արդյունավետության բարձրացում և այլ բարելավման համալիր միջոցառումների իրականացում:

գ) գյուղտեխնիկայի տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացում, կոոպերատիվ հիմունքներով տեխնիկական միջոցների համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրում, ձեռքի աշխատանքի նվազեցում և աշխատանքի արտադրողականության բարձրացում:

դ) կամավոր հիմունքներով կոոպերատիվների, ընկերությունների, ասոցիացիաների ստեղծում և պետական աջակցությամբ ապրանքային տնտեսությունների ձևավորում:

Պարենային անվտանգության ապահովման հիմնական խնդիրներից են ագրոպարենային ոլորտի տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործումը, տեղական արտադրության սննդամթերքի ինքնաբավության ավելացումը, մակրոտնտեսական վիճակի բարելավման միջոցով՝ սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացումը և այլն:

Յուրաքանչյուր երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության զարգացման այնպիսի մակարդակ, որը երաշխավորում է բնակչության համար առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը: Պարենամթերքի տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացման համար պահանջվում է 1 շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի, նվազագույն և միջին ամսական աշխատավարձի, կենսաթոշակի և նպաստի ավելացում: Այն կնպատակաուղղվի

ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի պաշտպանությանը, սննդամթերքի տեղական արտադրության մեխանիզմների և արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, սննդամթերքի արտաքին ապրանքաշրջանառության բարելավմանը, տեղական արտադրության արտահանման խրախուսմանը և աշխատատեղերի ստեղծմանը: Պարենամթերքի ֆիզիկական մատչելիության մակարդակի բարձրացման, արտադրության ծավալների ավելացման հետ մեկտեղ կարևորվում է նաև դրանց կառուցվածքի բարելավումը, ինչպես նաև գյուղացիական տնտեսություններին և գյուղտնտեսվարողներին բուսաբուծական, անասնաբուծական մթերքների վերամշակման բնագավառում ապահովել առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում, մատչելի պայմաններով նպատակային վարկերի ավելացում և տրամադրում, ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծում: Կարևորվում է աջակցության տարբեր մեխանիզմներով (նպատակային վարկեր, տոկոսադրույքի սուբսիդավորում և այլն) արտահանման ուղղվածություն ունեցող արտադրատեսակների արտադրության և արտադրանքի արտահանման խթանմանը:

Հանրապետության սննդամթերքի անվտանգության օրենսդրությունը միջազգային հետևյալ չափանիշներին համապատասխանեցնելու առումով կարիք ունի կատարելագործման՝

1. սննդամթերքի արտադրական գործընթաց է՝ «դաշտից մինչև սեղան» դիտարկել որպես մի ամբողջություն,
2. սննդամթերքի ապրանքային շարժի բոլոր փուլերում տնտեսվարողների անմիջական հսկողության պատասխանատվության բարձրացում,
3. ռիսկերի պարտադիր գնահատում և վերլուծություն,
4. սպառողների շահերի պաշտպանություն և իրազեկում, տեղեկատվության փոխանակում:

Քանի որ Հայաստանը համարվում է ազատական շուկա ունեցող երկիր, որտեղ ներմուծվող և վերամշակված սնունդ արտադրող սուբյեկտները բազմազան են, օգտագործում են տարբեր տեսակի տեխնոլոգիաներ, չունեն սննդամթերքի անվտանգության վերահսկման համակարգ, հետևաբար վտանգ է ստեղծվում սպառողների առողջության համար: Գյուղատնտեսական արտադրանքի մրցակցությունը բարձրացնելու համար պահանջվում է սննդի անվտանգության պահանջներին համապատասխան ստանդարտներ և տեղական սպառողների սննդամթերքի անվտանգությանն արդյունավետ մոտեցում ապահովելով մրցակցություն, ինչպես ներկրվող ապրանքների, այնպես էլ արտահանման ապրանքների որակական ստանդարտների հետ:

Հիմնականում արտադրողների և վերամշակողների ներքին պահանջարկն է թելադրում սննդամթերքի անվտանգության ու որակի բարելավման պահանջները, աստիճանաբար ընդունելով այդ պահանջներին համապատասխան անվտանգության ցուցանիշներ սահմանող նորմատիվ իրավական ակտերը, ապահովելով ներքին շուկա ներկրվող սննդամթերքը՝ փոխարինելով տեղական արտադրությամբ, ընդլայնելով արտահանման հնարավորությունները:

Հայաստանն ունենալով արտահանման արտադրանքի փոքր ծավալներ և ցածր արժեք ունեցող ապրանքներ, միջազգային շուկաներում լինում են՝ «գին ընդունող» և ոչ թե «գին թելադրող»:

Սննդամթերքի անվտանգության համակարգում պահանջվում է պետական քաղաքականության սկզբունքների և խնդիրների հստակեցում ու դրանց իրականացում: Այսինքն՝ մարդու կյանքի, առողջության ապահովման նպատակով ունենալով անվտանգ սննդամթերքի օգտագործում, և պետական հսկողության աջակցություն:

Սննդի անվտանգության համակարգի զարգացման համար անհրաժեշտ են համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումներ: Դրանք են՝ սննդամթերքի անվտանգության ապահովման համար ազգային ստանդարտների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին, ակտիվացնել համագործակցությունը սպառողների և դրանց շահերի պաշտպանության ու այլ հասարակական կազմակերպությունների հետ:

Կարևորվում է տեղական սննդամթերքի արտադրության անվտանգության բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ աջակցություն տնտեսվարող սուբյեկտներին, ներդնելու «Վտանգի աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման /ՎԱՎԿԿՀ/» համակարգը:

Սննդամթերքի անվտանգության համակարգի կատարելագործումը կնպաստի սննդամթերքի մրցունակության բարձրացմանը, որն էլ կապահովի արտահանման խթանումն ու պարենամթերքի արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի բարելավումը:

Лена Оганесян
Лиана Азатян

ПРОБЛЕМЫ РЕГУЛИРОВАНИЯ МИНИМАЛЬНОГО УРОВНЯ ПРОИЗВОДСТВА СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОЙ ПРОДУКЦИИ И ОБЕСПЕЧЕНИЯ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ

Аннотация

В статье рассматриваются вопросы обеспечения продовольственной безопасности страны. Обосновано, что для обеспечения продовольственной безопасности необходимы соответствующие реформы, а именно, приведение национальных стандартов в соответстие с требованиями международных критериев, а также активизация взаимодействия потребителей. Совершенствование данной системы способствует повышению конкурентоспособности продовольственных товаров, что способствует расширению экспорта.

Lena Hovhannisyan
Liana Azatyan

THE ISSUES ON REGULATING THE MINIMUM REQUIREMENTS ON AGRICULTURAL PRODUCTS AND ENSURING FOOD SECURITY

Abstract

The article discusses the issues on ensuring food security. The article justifies that in order to ensure food security respective reforms are required, namely to ensure compliance of national standards with the international ones and activate cooperation with the consumers as well. The improvement of the given system supports further increase in competitiveness of the goods, thus promoting the growth of exports.

ՍԱՌԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՊՃՀ ասիստենտ, տ.գ.թ.

ՀՀ-ՈՒՄ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՌԵՆՏԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ

Հումքային տնտեսություններում բնական ռեսուրսների հյուծման պատճառով տնտեսական աճի այլընտրանքային աղբյուրների որոնումը որոշ երկրներում լուծվել է հումքային ռենտայի ներդրմամբ արտադրական հզորություններում, իսկ որոշները այն օգտագործել են ֆինանսական ակտիվների կուտակման վրա (Պարսից ծոցի երկրներ): Ներկայումս Հայաստանում բացակայում է մետաղական ռենտայի ներդրման մեխանիզմը, որը նպաստում է տնտեսական աճի անկայունության աճին՝ կայուն զարգացման հայեցակարգի համատեքստում:

Կապիտալի օպտիմալ կուտակման հիմնախնդրի տեսական պատասխանը Հարտվիկի կանոնն է, ըստ որի չվերականգնվող ռեսուրսներից ստացված ռենտային եկամուտները չպետք է սպառվեն ներկա սերնդի կողմից[1]: Հարտվիկի կանոնը կապ է հաստատում կայունության, որը որոշվում է որպես չնվազող օգտակարություն, և նրա հետ կապված կապիտալի պաշարի հետ: Հետագայում ցույց տրվեց, որ Հարտվիկի կանոնը կարող է ձևակերպվել որպես ամբողջական կապիտալի պահպանման պահանջ, որի մեջ մտնում են ոչ միայն ֆիզիկական կապիտալը (արտադրության միջոցներ), այլև մարդկային կապիտալը (գիտելիքների և հմտությունների պաշար), բնական կապիտալը (բնական ռեսուրսներ և շրջակա միջավայրի որակ), իսկ որոշ հետազոտողների կարծիքով՝ նաև ինստիտուցիոնալ գործոնը: Հաշվի առնելով հիմնական պարամետրերը՝ ամենաընդհանուր տեսքով կայուն զարգացման պայմանը ժամանակի մեջ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$\frac{dF(L,K,N,I)}{dt} \geq 0, \qquad (1)$$

որտեղ՝ F-ը՝ կայուն զարգացման ֆունկցիան է, L-ը՝ աշխատանքային ռեսուրսները, K-ն՝ արհեստականորեն ստեղծված (ֆիզիկական) կապիտալը, N-ը՝ բնական ռեսուրսները, I-ն՝ ինստիտուցիոնալ գործոնը:

Մաթեմատիկորեն (1) պայմանը տեղի ունի, եթե N-ի չվերականգնվող մասի փոքրացումը փոխհատուցվում է N-ի վերականգնվող մասի, L-ի, K-ի, I-ի աճով, այսինքն՝ կայունության ապահովման նպատակով անհրաժեշտ է չվերականգնվող հանքային ռեսուրսների հյուծումը փոխհատուցել այդ ռեսուրսներից ստացված ռենտան ներդնելով ֆիզիկական, մարդկային և վերականգնվող բնական կապիտալում, ինչպես նաև ինստիտուցիոնալ գործոնի կատարելագործման ոլորտում: ***Կայուն զարգացումը ապահովվում է տնտեսական կապիտալում բնական ռենտայի ներդրմամբ, որն անհրաժեշտ է փոխանցել հաջորդ սերունդներին այնպիսի համամասնությամբ, որ պահպանվի սպառման հաստատուն մակարդակ: Սերունդների միջև փոխհատուցումը պետք է իրականացնել՝ ներկա սերունդների վրա հարկեր դնելով և ռեսուրսների մեջ ներդրումներ կատարելով:***

Այդ նպատակով հեղինակի կողմից առաջարկվել է մի շարք երկրների օրինակով Հայաստանում ստեղծել «Չվերականգնվող մետաղական ռեսուրսների արդյունահանումից կայունացման հատուկ ֆոնդ», որին կատարվող հատկացումների ընդերքօգտագործողի պարտականությունը կներառվի ընդերքօգտագործման պայմանագրում:

Նորվեգիան, ԱՄՆ-ը և նավթարդյունահանող մի շարք երկրներ ստեղծել են այդպիսի հատուկ ֆոնդեր և կատարում են հաստատուն հատկացումներ հյուծվող վառելիքաէներգետիկ ռեսուրսների արդյունահանումից: Այս «կայունացնող» քաղաքականությանը հետևած Ռուսաստանի փորձը (կայունացման ֆոնդի ստեղծումը) կարող է օգտակար լինել Հայաստանի և ԱՊՀ մյուս, հատկապես անկայուն երկրների համար: Ակնհայտ է, որ Հայաստանի տնտեսությունը իր

[1] Hartwick J.M. Intergenerational Equity and the Investing of Rents from Exhaustible Resources // American Econ. Rev. – Vol. 67 (5). – 1977. – P. 972–974.

զարգացման մակարդակով զիջում է վերոհիշյալ երկրների տնտեսություններին: Հեղինակը հաշվի է առել երկրների զարգացման միջև առկա մեծ տարբերությունները և ներկայացվող մոտեցման մեջ առաջադրել համապատասխան սկզբունքներ: Այսպես, եթե զարգացած որոշ երկրների հումքային ռենտայի հաշվին ձևավորված ֆոնդերի ակտիվները և դրանցից ստացվող եկամուտները (տոկոսները) ամբողջությամբ պահվում են ապագա սերունդների համար, իսկ զարգացող մի շարք երկրներ հիմնադրամին հատկացումները՝ ֆինանսական ակտիվների տեսքով թողնում են անձեռնմխելի, իսկ դրանցից ստացված տոկոսները ներդնում են տնտեսությունում, ապա Հայաստանի պարագայում հեղինակը նպատակահարմար է գտնում ներկայումս հիմնադրամի միջոցներն ու ստացված եկամուտները ներդնել երկրի կայուն տնտեսական աճն ապահովող ոլորտներում: Նման մոտեցումը հիմնավորվել է նաև այլ հեղինակների կողմից: Այսպես, Ֆ. Պլոեգը և Ա.Վենաբլեսը վերջին հետազոտություններում (2011թ.) ցույց են տվել, որ զարգացող երկրներում ռեսուրսային եկամուտները՝ ռենտան, նախընտրելի է ներդնել ներքին կապիտալում և կատարելագործել ենթակառուցվածքները[1]:

«Չվերականգնվող մետաղական ռեսուրսների արդյունահանումից կայունացման հատուկ ֆոնդի» ստեղծումը հնարավորություն կտա մետաղական ռեսուրսների հյուծումը փոխհատուցելու մարդկային, ֆիզիկական և վերականգնվող բնական ռեսուրսներում համարժեք ներդրումներով, որը ըստ Հարտվիկի կանոնի, կապահովի չնվազող տնտեսական պոտենցիալի կայունությունը ժամանակի մեջ: Նպատակահարմար է ֆոնդին կատարվող հատկացումները կատարել ՀՀ մետաղական օգտակար հանածոների օգտագործման դիմաց սահմանված ռոյալթիից: ՀՀ-ում ***01.01.2012թ.-ից գործում է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար բնօգտագործման վճարի՝ ռոյալթիի վճարման նոր մեխանիզմ***[2]***:*** *Ռոյալթին* մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացումից ստացվող բարձր շահութաբերության համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է: Ռոյալթիի համար սահմանվում է ռոյալթիի հաշվարկման բազայի նկատմամբ արժեքային (տոկոսային) դրույքաչափ, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$R = 4 + [Շ/(Հx8)]x100,$$

որտեղ՝ R-ը ռոյալթիի դրույքաչափն է, տոկոսով, Շ-ն շահույթն է նախքան հարկումը, դրամով, Հ-ն արտադրանքի իրացումից հասույթն է՝ առանց ԱԱՀ-ի, դրամով: Ռոյալթիի հաշվարկման բազա է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված մետաղի խտանյութի իրացումից հասույթը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Ռոյալթիի դրույքաչափն ունի ֆիքսված և ադվալորային բաղադրիչներ: Ֆիքսված դրույքաչափը փոխարինում է բնօգտագործման վճարին, որը նախկինում (մինչև 2012թ.) գանձվում էր հանքաքարի մարված պաշարներից և ներկայումս երաշխավորված մուտքեր է ապահովում իրացված մետաղական արտադրանքից: Ադվալորային բաղադրիչը կապված է ընկերության շահութաբերության հետ և ապահովում է գերշահույթներից վճարվող մուտքեր:

Մետաղական ռոյալթիից «Չվերականգնվող մետաղական ռեսուրսների արդյունահանումից կայունացման հատուկ ֆոնդին» ներդրումները հեղինակը հիմնավորում է նրանով, որ այն կապահովի ապագա սերունդների պահանջմունքների բավարարման հնարավորության չփոքրացման կայուն զարգացման սկզբունքը՝ մետաղական ռեսուրսների հյուծման չափով համարժեք հատկացումներ կատարելով կապիտալի այլ ձևերում, ապահովելով կայուն տնտեսական աճը այլընտրանքային աղբյուրներով:

Խնդրի լուծումը առաջարկված մոտեցմամբ չի մեծացնի ռենտա վճարող ընկերությունների հարկային բեռը: Իսկ պետական բյուջեի մուտքերի փոքրացումը հօգուտ կայունացման ֆոնդի կարող է փոխհատուցվել տնտեսական այլընտրանքային աճով պայմանավորված մուտքերից,

---

[1] van der Ploeg F., Venables A.J.Harnessing Windfall Revenues: Optimal Policies for Resource-Rich Developing Economies // Economic J. – Vol. 121. – 2011. – P. 1–30.

[2] ՀՀ օրենքը «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին», ընդ.28.12.1998թ., լրաց. 28.11.11 ՀՕ-284-Ն:

որոնք կապահովվեն ռենտայի (ռոյալթիի) ներդրմամբ մարդկային, ֆիզիկական և վերականգնվող բնական կապիտալում, ինչպես նաև ինստիտուցիոնալ ոլորտում:

Մետաղական ռոյալթիի սահմանումը էականորեն բարձրացրել է բնօգտագործման և բնապահպանական վճարների մասնաբաժինը հարկային մուտքերում: Մինչև նրա ընդունումը այն կազմում էր միջինում 0,6 տոկոս (2011թ. կազմել է 0,72 % կամ 5596,1 մլն. դրամ՝ 775923 մլն. դրամ հարկային մուտքերում)[1], իսկ ըստ ֆինանսների նախարարության հաշվետվության տվյալների՝ 2012 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 11 մլրդ. դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ՝ կազմելով հարկային եկամուտների 3,4%-ը, որից 6,6 մլրդ. դրամը կազմել է մետաղական ռոյալթին[2]:

Հեղինակի կարծիքով՝ Հայաստանի մետաղական ռենտան նպատակահարմար է ներդնել կայունությունը բարձրացնող կապիտալի հետևյալ ձևերում.

- մարդկային կապիտալում,
- ԳՏԱ-ի ներդրումներով ֆիզիկական կապիտալում՝ մետաղների վերամշակման ռեսուրսախնայողական, բնապահպան, սակավաթափոն տեխնոլոգիաներում,
- «Կանաչ տնտեսությունում», որը թույլ կտա անցում կատարել տնտեսական աճի կանաչ մոդելին,
- մետաղական ռեսուրսների նոր պաշարների հետախուզմանը,
- շրջակա միջավայրի էկոլոգիական բարելավմանը:

Մետաղական ռենտայի ներդրման առաջարկվող ոլորտները տնտեսական աճի այնպիսի աղբյուրներ են, որոնք բարձրացնում են երկրի կայունության մակարդակը ըստ կայուն զարգացման հայեցակարգի, այսինքն՝ ապահովում են կայուն տնտեսական աճ:

Сара Мкртчян

О ВНЕДРЕНИИ МЕХАНИЗМА ИЗЪЯТИЯ РЕНТЫ ОТ ЭКСПЛУАТАЦИИ МЕТАЛЛИЧЕСКИХ РУД

Аннотация

В современных условиях металлические ресурсы Армении эксплуатируются экстенсивным способом, углубляя проблему их истощения. Рента, полученная от эксплуатации металлических руд, полностью потребляется нынешним поколением, тем самым нарушая основополагающий принцип устойчивого развития равноправия всех поколений и условие устойчивости. Автор предлагает внедрение механизма изъятия горной ренты от эксплуатации месторождений металлических руд в РА, обосновывая его теоретически и исходя из опыта других стран.

Sara Mkrtchyan

ON INTRODUCING METAL RESOURCES RENT TAX IN THE REPUBLIC OF ARMENIA

Abstract

Currently metals in Armenia are extracted extensively, thus making the depletion issue of high importance. The received resources rent taxes are completed consumed by the current generation, thus violating the grounding principle of sustainable development, namely intergenerational equity, and sustainability condition. The author proposes to introduce a mechanism of levying metal resources rent taxes in the Republic of Armenia that is grounded on the theory and is justified by taking into account the practices applied in other nations.

---

1 www.taxservice.am , www.armstat.am՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012թ, էջ 213:
2 http://www.minfin.am/up/pbkat/2012q2report.pdf

ԹԱԳՈՒՀԻ ՕՀԱՆՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի հայցորդ

ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ըստ «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի 915 համայնքերի գերակշիռ մասը՝ 866-ը (95%-ը), գյուղական են, որոնց մեջ մեծ թիվ են կազմում լեռնային, բարձր լեռնային, սահմանամերձ համայնքները: Տեղական ինքնակառավարումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, որի դրույթները տարածվում են ՀՀ բոլոր համայնքների վրա՝ անկախ կարգավիճակից: Սակայն, փաստ է, որ համայնքի ղեկավարին օրենքով վերապահված լիազորությունները բոլոր համայնքներում հավասարապես չեն իրականացվում: Այսպես, համաձայն օրենքի՝ համայնքի ղեկավարի լիազորությունները լինում են կամավոր, պարտադիր և պետության կողմից պատվիրակված:

Սույն հոդվածի շրջանակներում կցանկանայինք անդրադառնալ ՀՀ գյուղական համայնքներում քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման իրական վիճակին:

Թեպետ օրենքով ՏԻՄ-երի պարտադիր և պետության պատվիրակած լիազորությունները ենթակա են համայնքի կողմից առաջնահերթությամբ և օրենքով սահմանված կարգով կատարման[1], այնուհանդերձ, փաստերը վկայում են, որ դրանցից ոչ բոլորն են կատարվում: Մասնավորապես՝ ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներքին շրջանառության փաստաթղթերի տվյալների՝ գյուղական 866 համայնքներից սոցիալական ծառայություն, նոտարի և քաղաքացիական կացության ակտերի գրանցման (զագսի) ծառայություններ են մատուցում 5-ում, իսկ այն համայնքները, որոնցում առկա են թվարկված բոլոր ծառայություններն էլ՝ երեքն են (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ գյուղական համայնքների ցանկը, որոնցում առկա են սոցիալական, նոտարի և զագսի ծառայություններ

ՄԱՐԶԸ	Համայնքը	Սոցիալական ծառայության առկայությունը	Նոտարական գրասենյակի առկայությունը	Զագսի ծառայության առկայությունը
Արագածոտն	Ծաղկահովիտ	+	+	+
Արմավիր	Բաղրամյան	+	+	-
	Փարաքար	-	+	-
Շիրակ	Ախուրյան	+	+	+
	Աշոցք	+	+	+

Այստեղ ուշադրություն դարձնենք հատկապես զագսի ծառայությանը. ըստ ՏԻՄ օրենքի հոդված 33-ի՝ որպես պետության պատվիրակած լիազորություն, համայնքի ղեկավարը կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեությունն այն համայնքներում, որտեղ գտնվում են համապատասխան կառույցները: Այսինքն, ՀՀ գյուղական համայնքների ընդամենը 0,35%-ում է իրականացվում տվյալ գործառույթը: Հանրապետության որոշ մարզերում հատկապես աշնան և ձմռան ամիսներին բնակլիմայական անբարենպաստ պայմանների, մի շարք գյուղական համայնքների միջև անանցանելի ճանապարհների, համապատասխան տրանսպորտային միջոցների բացակայության պայմաններում, շատ դեպքերում հնարավոր չի լինում հասնել մոտակա քաղաքային համայնք՝ ծնունդ, ամուսնություն կամ, ցավոք, մահվան դեպք գրանցելու: Իսկ համայնքներում համապատասխան ծառայությունների

[1] Տե՛ս ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», հոդված 10:

բացակայությունը կարող է հանգեցնել նրան, որ շատ ամուսնություններ, ծնունդներ և մահեր կարող են չգրանցվել, ինչն էլ, իր հերթին, կհանգեցնի բնակչության թվի ոչ ճիշտ հաշվառմանը և, որ ամենակարևորն է՝ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի դրույթների չկատարմանը[1]: Ավելին, զագսի ծառայության գանձվող պետական տուրքերն էլ մուտքագրվում են այն համայնքի բյուջե, որտեղ գտնվում է համապատասխան ծառայությունը, թեև վերջինիս պահպանման ծախսերը, որպես պետության կողմից պատվիրակված լիազորության իրականացման ծախսեր, կատարվում են պետական բյուջեից:

Բացի դրանից, համայնքներում զագսի ծառայության բացակայությունը հակասում է նաև «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթներին, ըստ որոնց՝ «ծննդի պետական գրանցումն իրականացվում է երեխայի ծննդի կամ ծնողների (ծնողներից մեկի) բնակության վայրի ՔԿԱԳ մարմինը»: Նույնը վերաբերում է նաև ամուսնության, ամուսնալուծության և մահվան պետական գրանցման հանգամանքներին[2]:

Իհարկե, ծնունդների պետական գրանցման հարցը որոշ չափով կարելի է համարել լուծված, քանի որ ըստ «Տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի (ընդունված 16.09.2010)՝ համայնքի ղեկավարը «միջոցներ է ձեռնարկում իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն»[3]:

Անդրադառնանք մահվան դեպքերի պետական գրանցմանը: Ըստ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ մահվան պետական գրանցումն իրականացվում է հետևյալ հիմքերի առկայության պայմաններում՝ բժշկական կազմակերպության կամ բժշկի տված՝ մահը հաստատող սահմանված ձևի փաստաթուղթ կամ անձի մահվան փաստի հաստատման կամ անձին մահացած ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ[4]: Սակայն, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ գյուղական համայնքների մի մասում հիվանդանոցների փոխարեն գործում են բուժկետեր, իսկ սպասարկումն էլ իրականացնում է բուժքույրը, ապա տվյալ համայնքի բնակչի մահվան դեպքում հարազատները ստիպված են լինում մոտակա գյուղի հիվանդանոցից տեղեկանք վերցնել, ընդ որում, ըստ նույն օրենքի՝ «մահվան մասին հայտարարությունը պետք է տրվի ոչ ուշ, քան մահը վրա հասնելուց կամ մահացածի դին հայտնաբերելուց երեք օր հետո»[5]: Հետևաբար, եթե վերը նշված դեպքերում երեք օրվա ընթացքում մահացածի հարազատները չեն կարողանում բժշկական կազմակերպությունից ներկայացնել մահը հաստատող փաստաթուղթ, ապա ստիպված պետք է լինեն դիմել դատարան՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը ստանալու համար:

Եթե քաղաքացիները համապատասխան տրանսպորտային միջոցների և ֆինանսական միջոցների բացակայության կամ ժամանակի սղության պատճառով չեն կարողանում կազմակերպել մահացածի բժշկական զննումը (դիահերձումը) եռօրյա ժամկետում և, հետևապես, բժշկական տեղեկանքի ստացումը, ապա նրանք պետք է դիմեն դատարան՝ անձին մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռը ստանալու: Քիչ չեն դեպքերը, երբ քաղաքացիները հետևողական չեն լինում, մահվան փաստերը չեն գրանցվում, ինչն էլ երբեմն պատճառ է ընտրացուցակներում կամ կենսաթոշակային ցուցակներում մահացածների անունների առկայության:

Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 33-ի պահանջների՝ համայնքի ղեկավարը, որպես պարտադիր լիազորություն, կազմակերպում է համայնքի բնակիչների հաշվառումը, իսկ որպես պետության պատվիրակած լիազորություն՝ կազմում է ընտրողների ցուցակները: Սակայն, անձի մահվան փաստի գրանցումն իրականացնում է զագսի մարմինը, ինչն էլ, կարծում ենք, վերը բերված փաստարկների պայմաններում, շատ դեպքերում լիարժեք չի իրականացվում: Այսպես, մեր ուսումնասիրած գյուղական չորս համայնքներից ոչ

---

1 Տե՛ս ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին», հոդված 6:
2 Տե՛ս ՀՀ օրենքը «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին», հոդված 15, կետ 1, հոդվածներ 25, 32, 65:
3 Տե՛ս ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ՀՕ-123-Ն:
4 Տե՛ս ՀՀ օրենքը «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին», հոդված 64:
5 Տե՛ս ՀՀ օրենքը «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին», հոդված 66, կետ 2:

մեկում չկա զագսի ծառայություն, իսկ մոտակա համայնքը, որտեղ կա՝ Բերդ քաղաքն է: Ուստի, ելնելով փաստարկներից՝ առաջակում ենք, որ այն համայնքներում, որտեղ չկա տվյալ ծառայությունը, մահվան պետական գրանցման գործառույթը օրենքով վերապահվի տվյալ համայնքի ղեկավարին: Արդյունքում, և՛ կհեշտանա բնակիչների հաշվառման գործընթացը համայնքներում, և՛ օրենքով սահմանված մահվան պետական գրանցման համար նախատեսված պետական տուրքը կուղղվի տվյալ համայնքի բյուջե, ինչն էլ կավելացնի բյուջեի եկամուտները:

Հաջորդ խնդիրը նույնպես վերաբերում է համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությանը: Այսպես, ըստ ՏԻՄ օրենքի՝ քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարը իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը. «վավերացնում է համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը, եթե այդ համայնքում չկա մշտապես գործող նոտար և հաստատում է համայնքի բնակիչ համարվող անձանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու, աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ (այդ թվում՝ դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիրը, եթե այդ համայնքում չկա մշտապես գործող նոտար»[1]: Սակայն «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ով, այն է՝ «Նոտարին պաշտոնում նշանակելը», սահմանված է, որ «նոտարի պաշտոնում կարող է նշանակվել ՀՀ գործունակ յուրաքանչյուր քաղաքացի, որն ունի իրավաբան բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում, չունի դատվածություն, անցել է նոտարական գործունեության առնվազն 6 ամսվա ստաժավորում, իսկ 3 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժի կամ գիտական աստիճանի առկայության դեպքում՝ առնվազն 3 ամսվա ստաժավորում և որակավորման քննական հանձնաժողովին հանձնել է նոտարի որակավորման քննությունները: Արդարադատության նախարարը նոտարի պաշտոնում կարող է նշանակել նաև նոտարական գործունեության ստաժավորում չանցած և որակավորման քննություն չհանձնած այն անձին, որը արդարադատության նախարարության համակարգում կամ նոտարական պալատում իրականացրել է նոտարիատի բնագավառի մասնագիտական ոչ պակաս, քան երեք տարվա աշխատանքային գործունեություն»[2]:

Ելնելով վերոնշյալ օրենքից՝ տեսնում ենք, որ նոտարի պաշտոնում նշանակվող անձը, ի թիվս այլ պահանջների, պետք է ունենա իրավաբանական կրթություն, սակայն ՏԻՄ օրենքով, համայնքի ղեկավարի պաշտոնի համար նման կրթական ցենզ սահմանված չէ, ավելին՝ օրենքը նաև թույլ է տալիս, որ համայնքի ղեկավարն ունենա միջնակարգ մասնագիտական կրթություն[3]:

ՏԻՄ օրենքի հոդված 33-ի՝ մեր առանձնացրած դրույթը հակասում է նաև «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի մեկ այլ՝ հոդված 21-ին, այն է՝ «Նոտարական գործունեության իրականացումը այլ պաշտոնատար անձանց կողմից», որտեղ սահմանված չէ նոտարական գործունեության իրականացումը ՏԻՄ-երի կամ համայնքների ղեկավարների կողմից:

Ելնելով մեր փաստարկներից, կարող ենք արձանագրել, որ ՏԻՄ օրենքի վերը նշված պահանջը հակասում է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքին:

Այսպիսով, ամփոփելով քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարի պետության պատվիրակած լիազորությունները, առաջարկում ենք՝

- համայնքի ղեկավարին, որպես պետության պատվիրակած լիազորություն, օրենքով օժտել քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության որոշակի լիազորություններով (այն համայնքներում, որտեղ չկա համապատասխան ծառայություն), մասնավորապես՝ ամուսնությունների, ծնունդների, մահվան փաստերի պետական գրանցում՝ իհարկե, համապատասխան բժշկական փաստաթղթերի առկայության պայմաններում (խոսքը վերաբերում է ծնունդների և մահվան պետական գրանցմանը),

---

[1] Տե՛ս ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», հոդված 33:

[2] Տե՛ս ՀՀ օրենքը «Նոտարիատի մասին», հոդված 10, ընդունվել է 04.12.2001 և ՀՀ օրենքը «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, կետ 1), ընդունվել է 25.05.2011:

[3] Տե՛ս ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», հոդված 24:

- համայնքի ղեկավարներին ազատել օրենքով սահմանված կարգով նոտարական գործառույթներից՝ ելնելով «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի պահանջների և ՏԻՄ օրենքի պահանջների անհամապատասխանությունից:

Վերը նշված հիմնախնդիրների լուծումն էլ իր հերթին կհանգեցնի համայնքի ղեկավարի մյուս՝ քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարի լիազորությունների կատարմանը: Իսկ ըստ ՏԻՄ օրենքի հոդված 33-ի (համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում)՝ համայնքի ղեկավարն այս ոլորտում որպես պարտադիր լիազորություն իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում պաշտպանելու համայնքի բնակիչների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը:

Тагуи Оганян

ПУТИ УЛУЧШЕНИЯ ПРЕДОСТАВЛЕНИЯ УСЛУГ НАСЕЛЕНИЮ В СЕЛЬСКИХ ОБЩИНАХ РА

Аннотация

Местное самоуправление регулируется согласно закону РА «О местном самоуправлении», положения которого распространяются на все общины РА вне зависимости от их статуса. Однако факты свидетельствуют о том, что полномочия, которыми наделёна глава муниципалитета, не во всех общинах РА осуществляются на равном уровне. Несмотря на то что, обязательные и делегированные государством полномочия подлежат исполнению муниципалитетом в первоочередном и установленном законом порядке, тем не менее, уровень исполнения этих полномочий остается неудовлетворительным. Кроме этого, существуют определённые несоответствия между некоторыми положениями законов РА «О местном самоуправлении», «О нотариате» и «Об актах гражданского состояния», что, в свою очередь, также препятствует эффективному исполнению полномочий главы муниципалитета.

Taguhi Ohanyan

APPROACHES TO IMPROVE THE QUALITY OF SERVICES PROVIDED TO THE RESIDENST OF LOCAL COMMUNITIES IN RURAL COMMUNITIES OF THE REPUBLIC OF ARMENIA

Abstract

The local self-governance is regulated by the Law of the Republic of Armenia on Local Self-Government, and the provisions stated by the Law are universal for all communities in the Republic of Armenia regardless the status of community. However, evidently, not all chiefs of the communities are exercising their power as the Law requires. Although local self-government bodies by the law and in accordance with powers delegated by the Government are required to address priorities first, the facts show that the local self-government bodies are not exercising their powers and implementing respective measures to address priorities. Moreover, some provisions stated in the Law of the Republic of Armenia on Local Self-Government contradict some provisions stated namely in the Laws on Notary Service, and in the Law on Acts of Civil Status, not allowing the chiefs to exercise their powers.

АЛВАРД ЗАТИКЯН
Зам. директора института экономики им. М.Котаняна НАН РА, к.э.н.

ОБЕСПЕЧЕНИЕ ФИНАНСИРОВАНИЯ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В РА: ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ

Повышение конкурентоспособности в предпринимательской деятельности рассматривается как условие устойчивого развития экономики. Формирование конкурентной среды, позволяющей предпринимателям эффективно выполнять стоящие перед ними задачи, не может быть полноценным без развития соответствующей инфраструктуры, которая обеспечивает доступ к финансовым ресурсам для всех хозяйствующих субъектов независимо от их организационной и правовой формы, а также территориальной принадлежности.

Предпринимательская деятельность имела место еще в древнем мире. В научной литературе пока еще нет однозначного определения понятия предпринимательства хотя оно вошло в экономическую сферу в конце XVII века и сохранится, пока существует рыночная экономика.

Впервые концепцию предпринимательства разработал ученый-экономист Ричард Кантильон, считающий предпринимателем человека, действующего в условиях риска. Он – родоначальник тезиса в определении понятия предпринимателя как хозяйствующего субъекта, принимающего на себя обязанность несения различных рисков из-за неопределенности исхода экономической деятельности.

В разработку теории предпринимательства значительный вклад внес А.Смит. Эпоха Смита была периодом расцвета английской мануфактуры, кануном промышленного переворота. Каждый отдельный человек стремится к наиболее выгодному приложению капитала. «Он имеет в виду свою собственную выгоду, - пишет Смит, - а отнюдь не выгоды общества. Но когда он принимает свою собственную выгоду, это естественно или, точнее, неизбежно приводит его к предпочтению того занятия, которое наиболее выгодно обществу.»[1] Смит был глубоко убежден в том, что, важнейшим условием роста богатства страны является свобода хозяйственной деятельности. В ликвидации унаследованной от феодализма регламентации хозяйства он видел одну из главных предпосылок быстрого экономического прогресса Англии. Государственное регулирование целесообразно только в тех случаях, когда свобода угрожает общественному благу.

Большой вклад в становление теории предпринимательства в начале Х1Х в. внес выдающийся ученый-экономист Ж.Б.Сей, который в своем «Трактате по политической экономии» утверждал, что в создании стоимости участвуют три фактора: капитал, земля и труд. Капитал порождает прибыль и процент, земля – ренту и труд – заработную плату. Сей очень оберегает предпринимателей, он даже готов согласиться, чтобы общество в целом несло расходы по оказанию помощи рабочим, лишь бы не обременять предпринимателей. «Новое», что Сей вносит, заключается в том, что процент, согласно его теории трех факторов, рассматривается или как результат «услуги» капитала, а предпринимательский доход - как вознаграждение за предприимчивость предпринимателя, за его таланты, за риск и т.д. Сей уверяет, что капиталист и предприниматель – не одно и то же, и высказывает свое отношение к предпринимателям: «Обыкновенно предприниматель промышленного дела старается достать средства, в которых ООН нуждается. Я не делаю из этого вывода, что предприниматель должен быть непременно богат, потому что он, может завести свое дело и на заемные средства…Этот род труда (т.е. труда предпринимателя) требует таких нравст-

[1] А. Смит «Исследование о природе и причинах богатства народов, т.2, 1935г., стр. 30.

венных качеств, которые не часто соединяются в одном лице». [1] У Сея прибыль, как особая категория, фактически выпадает: результатом функционирования капитала он считает процент. А предпринимательский доход им трактуется как плата за высококвалифицированный труд, т.е. как заработная плата самого предпринимателя.

Отметим еще, что Сей противоречит самому себе. Из его теории трех факторов производства вытекает, что рента есть особый доход, что она – результат «услуги» земли, а, сводя ее к предпринимательскому доходу, он ее превращает в результат деятельности землевладельца. Но узкий горизонт Сея сужает его мысль и отклоняет ее в сторону от общего им же самим проложенного пути. Этому еще способствовала и недостаточная развитость капиталистических отношений во Франции. С одной стороны, крупная промышленность была еще мало развита – преобладали мелкий и средний предприниматель. А с другой стороны, крупное фермерство во Франции не развивалось, - наоборот, революция насаждала и укрепляла мелкие крестьянские хозяйства. Следовательно, и землевладельца не особенно трудно было представить в виде труженика.

Крупнейший представитель неоклассического направления в экономической науке А.Маршалл, добавил к перечню «трех факторов производства» теории Ж.Б.Сея организацию, признал деятельность предпринимателя в качестве обязательного элемента эффективного хозяйствования.

Большинство ученых указывает на неразрывную связь конкуренции как движущей силы эффективного развития экономических систем и предпринимательского сектора как основного участника конкурентных отношений. Дж. Б. Кларк в своем труде «Распределение богатства» выделяет деятельность предпринимателя как отдельный фактор производства, которому «...свободная конкуренция дает….то, что создается функцией координировании».[2] Одновременно он признал, что чистая предпринимательская прибыль выступает как побудитель к конкуренции.

Американский ученый австрийского происхождения Й. Шумпетер, развивая эту идею, фактически утверждает, что успех в конкурентной борьбе может быть обеспечен только посредством новаций. Функцией предпринимателя, на его взгляд, является именно обеспечение экономического роста на основании нововведений, которые предприниматели внедряют в производственный процесс с целью использования новых видов потребительских товаров. Новых производственных и транспортных средств, рынков и форм организации в промышленности.[3] По мнению Й. Шумпетера, предприниматель может появиться только в развивающейся экономике. Предпринимателем он называл не какую-то конкретную личность, а всякого человека, в функцию которого входит реализация новой комбинации факторов производства. Согласно Шумпетеру, новые комбинации факторов производства могут быть очень многообразны, они наталкивается на различные препятствия технического, субъективного и социального характера. Препятствия технического порядка связаны с тем, что усложняется расчет издержек производства и продажной цены, осуществляемый предпринимателем. Обстоятельства субъективного порядка заключается в том, что предприниматель должен преодолеть силу сопротивления рутины. К трудностям социального порядка относятся трудности внедрения новых комбинаций в потребление, трудности убеждения компаньонов в том, чтобы их принять, преодоление сопротивления рабочих и вытеснение конкурентов. Для Шумпетера предприниматель – это человек инициативы, кем бы в экономическом отношении он ни был – собственником, капиталистом или человеком, работающим по найму. По утверждению Шумпетера, позиция крупного предпринимателя быстро изменяется. Это происходит потому, что те препятствия , которыми сталкивается

---

[1] Ж. Сей « Трактат по политической экономии». «Библиотека экономиста». Изд. «Солдатенков», 1896г., с.59-60.
[2] Дж. Б. Кларк «Распределение богатства». М.: Гелиос АРВ. 2011г.
[3] Й. Шумпетер «Теория экономического развития». М.: Прогресс. 1982г.

предприниматель в выполнении своих функции. Быстро теряет свою силу. Общество все больше привыкает к нововведению. Новые комбинации принимаются уже все чаще и легче, поэтому для выполнения функции предпринимателя требуется наличие действительно исключительных качеств. Наблюдается прогрессивная демократизация функции предпринимателя.

Значительный вклад в развитие теории предпринимательства внес известный американский ученый П. Друкер, который считает, что предпринимательство – это конкретная деятельность, практика, имеющая свою базу знаний. Он содержанием, функцией предпринимательства считает нововведения во всех сферах деятельности, в том числе и в управлении, поэтому управление - это технология. Нововведения по П. Друкеру. Являются особым инструментом предпринимателей, средством, при помощи которого они используют изменения как благоприятную возможность для осуществления своих замыслов в сфере бизнеса и услуг.

Ф.Хайек также указывает на поиск новых экономических возможностей как на сущность предпринимательской деятельности.

Следовательно, предпринимательство следует рассматривать как движущую и целенаправленную силу экономического развития, а предпринимательскую деятельность как процесс координированного упорядоченного движения факторов (ресурсов) производства, направляемый предпринимателем, обладающим соответствующими особенностями и склонностями к риску, новациям, управлению.

Итак, предпринимательскую деятельность можно рассматривать как совокупность независимых, предприимчивых, конкурентных действий в любой сфере: соответствующие действующему законодательству; способствующие получению прибыли; осуществляемых субъектами предпринимательской деятельности.

На эффективность функционирования и тенденции развития предпринимательской сферы экономики влияет прежде всего наличие и доступность финансовых ресурсов, которыми хозяйствующих субъектов обеспечивают кредитные банковские и небанковские организации, субъекты финансового рынка, составляющие финансово-кредитную инфраструктуру рыночной среды.

Для развития предпринимательства в Армении существенное значение, по нашему мнению, имеет понимание того, что не любое новое дело является предпринимательством. Предпринимательство в первую очередь связано с эффективным использованием всех факторов производства в целях экономического роста и удовлетворения потребностей общества. Основная функция предпринимательства должна состоять в том, чтобы производить, «доводить» до потребителей товары, услуги, работы и получать за это материальное и моральное вознаграждение.

Неблагоприятный предпринимательский климат в Армении является корнем всех проблем в экономике. В результате проведенного исследования было выявлено, что такими проблемами являются: наличие большого неформального сектора экономики, политическая нестабильность, несовершенство налогового поля и администрирования. В целом проблемами экономики страны являются ее слабая диверсификация, высокие транспортные расходы, большая зависимость от денежных трансфертов из-за рубежа и зависимость от импорта энергоносителей. Местное производство неконкурентоспособно на внешних рынках и в основном удовлетворяет потребности внутреннего рынка. Накапливаемое в стране богатство распределяется не среди широких слоев населения, а концентрируется в рамках ограниченного количества людей, создается олигопония. Армения имеет большой потенциал для развития с точки зрения привлечения к этому процессу зарубежной армянской диаспоры, однако данный потенциал плохо используется.

Помимо этого, в имеющихся исследованиях не прослеживается борьба двух тенденций, которые характерны для развития экономики страны. С одной стороны, стремление подчеркнуть

то, что предпринимательство развивается сугубо исходя из требований законов рыночной экономики и соответственно не может быть подвергнуто регламентации со стороны государства, т.е. признание того, что сам рынок будет регулировать развитие предпринимательства. С другой стороны, те условия экономического развития, которые в ходе воспроизводственного цикла обостряются, заставляют рассматривать малое и среднее предпринимательство как объект управления. Необходимо здесь, как и в области развития экономики в целом и отдельных отраслях соблюдать соотношение между рыночным фактором и государственным управлением. Кризис привел к падению производства во всех отраслях экономики и высвобождению работников. Поэтому и возникает проблема компенсации экономических и социальных потерь, что связано со значительными инвестициями.

Развитие малого и среднего предпринимательства в сельских местностях страны могло бы нейтрализовать угрозу продовольственной безопасности страны в условиях, когда доля отечественных производителей на рынке продовольственных товаров достигает критического уровня. Это заставляет формировать запасы продовольствия: поскольку нет уверенности в том, что поток произведенных товаров из-за рубежа останется стабильным. Ведь в этих странах также имеет место спад производства. В то же время правительство будет ограничивать импорт продовольствия, чтобы поддержать отечественных производителей. Здесь будет зависеть от соблюдения пропорций между отечественными и зарубежными производителями. В сельских местностях значительная доля населения, занятая в малом и среднем предпринимательстве ориентирована не на производство, а на торговлю. Большие возможности открываются в развитии предприятии малого и среднего предпринимательства по переработке сельскохозяйственной продукции, которые могли бы функционировать круглогодично при условии организации парникового хозяйства, соответствующих складских помещений. Имеются немало объектов недвижимости, которые могли бы быть использованы как складские помещения при условии создания на их базе предпринимательских структур с долевым участием как самих производителей, так и соответствующих органов. Следует отметить, что усиление направленности малого и среднего предпринимательства во многом зависит от того, какие взаимоотношения у него с базовыми отраслями. Малые и средние предприятия имеют достаточно высокий уровень автоматизации производства и высококвалифицированные кадры, которые могут обслуживать (снабжать) несколько крупных предприятий. Но, к сожалению, подобная практика в нашей стране не развивается из-за кризиса.

По нашему мнению, в стране должны быть созданы совместные предприятия на базе существующих частных, где привлекаемые предприятия малого и среднего предпринимательства выступали бы дольщиками (пайщиками).

Исходя из анализа формирования ресурсной финансовой базы следует отметить, что предпринимательская деятельность обладает значительным потенциалом для развития. Между тем на практике существует проблема инфраструктурного обеспечения соответствующих источников финансирования. Значительные диспропорции имеются и в ресурсном обеспечении предпринимателей в территориальном разрезе.

Самофинансирование обеспечивает в предпринимательской сфере превосходство в конкуренции и благоприятные условия для развития за счет сокращения издержек по привлечению дополнительного капитала и снижения рисков. Однако, несмотря на положительные аспекты, оно в большинстве случаев (в частности в малом и среднем предпринимательстве) оказывается недостаточной основой для развития.

Государственная поддержка предпринимательской деятельности включает:

- целевые программы поддержки малого бизнеса;
- предоставление бюджетных ассигнований в рамках государственных контрактов.

Это ограничивает круг возможных пользователей этих ресурсов. Кроме того, на льготных условиях государственные средства могут предоставляться организациям агропромышлен-

ного комплекса. В целом это также не способствует повышению доступности данного источника финансирования для всех субъектов предпринимательской деятельности.

Нередко сфера предпринимательской деятельности стремится получить инвестиционные ресурсы от государства, считая их более дешевым источником внешнего финансирования. Однако предоставление бюджетных инвестиций юридическим лицам, не являющимся государственными, влечет появление права государственной собственности на эквивалентную часть уставных капиталов этих юридических лиц. Такая «оценка» за государственные ресурсы в значительной степени снижает их привлекательность для большого количества субъектов предпринимательской деятельности, поскольку предполагает потерю контроля над частью бизнеса в обмен на финансирование из бюджета.

Таким образом, анализируя институциональные основы предпринимательской деятельности, представляется целесообразным наиболее подробно остановиться на финансово-кредитной инфраструктуре, которая обеспечивает финансирование хозяйствующих субъектов на возвратной основе за счет заемных и инвестиционных ресурсов.

Итак, государственные организации должны ограничивать свое участие в деятельности предпринимателей, чтобы не создавать необоснованных конкурентных преимуществ из-за доступа отдельных предпринимателей к государственным бюджетным ресурсам, распределяемым на безвозмездной основе.

Соответственно в систему инфраструктурного обеспечения необходимо включить финансово-кредитные организации, предоставляющие финансирование сферы предпринимательской деятельности на возвратной коммерческой основе.

Следует выделить некоторые проблемы в развитии инфраструктуры, обеспечивающей финансирование предпринимательского сектора экономики:

- финансирование сферы предпринимательской деятельности экономики представляют в основном коммерческие банки;
- преобразование финансово-кредитной системы происходит в пользу более крупных организаций. В сущности превышение оптимальных масштабов неравномерности развития финансово-кредитной системы создает угрозу взаимоотношениям и может повлечь за собой распад системы в целом.
- государственное финансирование де-факто закрыто для субъектов малого предпринимательства, которые объективно не могут иметь равных возможностей с крупными организациями при получении прав на аренду государственного имущества и размещение государственного заказа.

Итак, задача обеспечения сферы предпринимательской деятельности экономики доступными источниками финансовых ресурсов в любое время по оптимальной цене может быть решена только системой, состоящей из крупных, средних и малых финансово-кредитных организаций, находящихся в частной собственности и функционирующих в условиях сформированной конкурентной среды. Только такая система способна в полной мере обеспечить банковскими ресурсами всех экономических субъектов страны.

Таким образом, тот факт. что экономический потенциал в большинстве регионов страны не обеспечен соответствующим финансовым капиталом, соответствует действительности. Зависимость территориальных разделов финансово-кредитной инфраструктуры от уровня экономического развития подтверждается опытом: территории, на которых наблюдаются относительно непродолжительные процессы производства, не имеют конкурентоспособных финансово-кредитных учреждений.

Итак, пока территориальные диспропорции в инфраструктурном обеспечении процесса финансирования предпринимательской деятельности не будут преодолены, неизбежны искажения в экономической структуре и несбалансированность экономического развития.

Ալվարդ Զատիկյան

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ՝ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է ձեռնարկատիրական սուբյեկտների գործունեության ֆինանսավորման մեթոդական և գործնական ուսումնասիրություններին: Սահմանված են ֆինանսավորման աղբյուրները, առանձնացված են հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները:

Alvard Zatikyan

ENSURING ACCESS TO FINANCIAL RESOURCES TO DEVELOP ENTREPRENEURSHIP IN THE REPUBLIC OF ARMENIA: ISSUES AND DEVELOPMENT PERSPECTIVES

Abstract

The article studies practical and methodological and/or systemic aspects of providing funding or ensuring access to financial resources to develop entrepreneurship in the modern period. The article defines the sources of funding, stresses the issues and development perspectives.

ТАТЬЯНА ОГАНЯН

Старший научный сотрудник института экономики им. М.Котаняна НАН РА, к.э.н.

РУЗАННА АЛОЯН

Старший научный сотрудник института экономики им. М.Котаняна НАН РА, к.э.н.

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ КЛАСТЕРОВ АПК

В условиях глобализации экономики главным субъектом экономичских отношений становятся структуры – межотраслевые хозяйственные объединения, осуществляющие стратегическое управление технологическими связями: от добычи сырья и разработки новой продукции до ее производства и оптовой или розничной продажи. Подтверждением существования указанной тенденции служит активизация процессов образования кластеров на уровне регионов.

Роль и значение кластеров в социально-экономическом развитии республики в целом обусловливают необходимость мер государственной поддержки и стимулирования развития кластеров в РА. В связи с этим появляется термин “кластерная поли-тика” – мероприятия, проводимые муниципальными и государственными органами власти по созданию и поддержке развития кластеров на определенных территориях, в том числе меры нормативно-правового обеспечения, инвестиционные, финансово-бюджетные механизмы, информационная поддержка.

Опыт развитых стран показывает, что формирование кластеров приводит к более эффективному взаимодействию целых групп отраслей, способствуя росту занятости и трансфертов технологий в национальной экономике.

Кластер представляет собой группу соседствующих взаимосвязанных компаний и связанных с ними организаций, действуюших в определенной сфере и характеризуюшихся общностью деятельности и взаимодополняющих друг друга.

Позитивное влияние кластеров на конкурентноспособность региона базируется на

росте производительности компаний, входящих в него; ускорении инновационных процессов, складывающих фундамент будущего роста эффективности; создании новых компаний и новых бизнесов. Интеграция такого рода дает возможность участвующим в ней, не теряя своей гибкости и независимости, приобретать те же преимущества, которые независимые компании могут получить, только увеличивая масштабы производства или осуществляя формальные альянсы с другими организациями. Все участники объединения получают дополнительные конкурентные преимущества под воздействием совокупного влияния эффектов масштаба, охвата и синергии.

Мультипликативный эффект кластеров определяется тем,что результаты осуществления конкретного проекта с привлечением средств государства не исчерпываются получением доходов от него, а предполагают вовлечение в орбиту деловой активности возможно большего количества смежных производств.

Синергетический (совместное действие) эффект обеспечивается за счет совместного использования ресурсов или производственного потенциала. При этом укрепляется взаимодействие органов власти и бизнеса при разработке и реализации целевых программ, направленных на увеличение доходного потенциала консолидированного бюджета области, оказании содействия выстраиванию эффективных коммуникаций между предприятиями и организациями для разработки единой маркентинговой политики и стандартов позиционирования на рынках, поддержке проведения конференций, специализированных выставок, форумов, совещаний, рабочих встреч, стимулировании развития контактов малого бизнеса с участниками кластеров.

Цели кластерной политики – повышение конкурентоспособности и инновационного потенциала предприятий и отдельных отраслей, развитие малого и среднего бизнеса и содействие диверсификации региональной экономики через стимулирование и развитие отраслевых кластеров. Основное направление кластерной политики – укрепление взаимосвязей между экономическими субъектами – участниками кластера в интересах упрощения доступа к новым технологиям, оптимального распределения рисков, совместного выхода на внешние рынки, организации совместных НИОКР, совместного использования знаний и основных фондов.[1]

С учетом вышеизложенного, можно сказать, что стратегия социально-экономического развития региона должна опираться на создание высокоэффективных кластеров, интегрирующих в единый комплекс системообразующие и инфраструктурные предприятия и организации региона, научно-исследовательские центры, вузы и другие организации, взаимодополняющие друг друга в достижении системного эффекта.

Эффективность кластерной политики может быть достигнута, в первую очередь, в сельском хозяйстве и пищевой промышленности. Обоснование создания и функционирования кластеров предполагает использование таких критериев, как удельный вес производства в структуре выпуска продукции сельского хозяйства, коэффициент локализации; коэффициент специализации; коэффициент душевого производства. Поэтому формирование кластеров предлагается на основе следующей методики, приведенной ниже.

Коэффициент локализации показывает, во сколько раз концентрация данной отрасли в данном регионе больше (или меньше, если значение меньше единицы), чем в целом по стране и рассчитывается по формуле:

$$Кн = \frac{Ор}{Пр} \Big/ \frac{Ос}{Пс} \qquad (1)$$

где Ор – отрасль региона; Пр – объем производства в регионе; Ос – отрасль страны; Пс – объем производства в стране.

[1] Морозов Н.М. Агропромышленные кластеры малой формы , Экономика с/х и перерабатывающих предприятий, 2009, N 2, с. 30-33.

Коэффициент душевого производства (КД) исчисляется как отношение удельного веса отрасли хозяйства региона в соответствующей структуре отрасли страны к удельному весу населения района в общем населении страны.

$$Кд = \frac{Ор}{Ос} \Big/ \frac{Нр}{Нс} \qquad (2)$$

где Нр – население региона; Нс – население страны.

Коэффициент специализации аналогичен по содержанию, но основан на другом методе расчетов:

$$Кco = \frac{Aco}{Ap} \qquad (3)$$

где Ксо – коэффициент специализации отрасли в регионе; Асо – доля региона в объеме выпуска отрасли; Ар – доля региона в объеме валового выпуска в стране.

В агропромышленном комплексе региона выделяются четыре направления, образущие соответствующие виды кластеров.

1. Кластер по производству и переработке зерна, включая производство продукции мукомольно-крупяной, комбикормовой, спиртовой промышленности.
2. Кластер по производству и переработке сахарной свеклы с последующим производством продукции пищевой промышленности.
3. Кластер по производству и переработке картофеля, овощей бахчевых культур, фруктов с последующим производством продукции консервной промышленности.
4. Кластер по производству и переработке животноведческой продукции.

Создание кластеров следует рассматривать не в качестве самостоятельной концепции регионального развития, а в качестве механизма реализации региональной и муниципальной политики, вписывающегося в концепцию системного подхода и активизирующего процессы межрегиональной и межмуниципальной интеграции.

Сельскохозяйственное производство тесно взаимосвязано с другими отраслями, и обеспечивает развитие, в первую очередь, пищевой и перерабатывающей промышленности. На современном этапе сельское хозяйство и пищевая промышленность характеризуются наличием недоиспользуемых мощностей и ресурсов, то есть обладают значительным потенциалом роста. Актуальность развития агропромышленного комплекса усиливается на фоне общемировых тенденций к расширению рынка сельскохозпродукции и продукции пищевой промышленности. [1]

Экономические перспективы базируются на развитии крупных агропромышленных объединений, прежде всего холдингов, формирующих позиции области на армянском агропродовольственном рынке. В то же время подъем малых форм хозяйствования, обеспечиваюших весомую долю областного рынка, позволит повысить устойчивость аграрного сектора,что, в свою очередь, положительно повлияет на социальную структуру сельских территорий области. В связи с этим возникла необходимость формирования и поддержания связанных групп или кластеров конкурентных предприятий или целых отраслей. Эффективность кластерной политики может быть достигнута, в первую очередь, в сельском хозяйстве и пищевой промышленности (отраслевая корпоративная и технологическая граница между ними интенсивно стирается в целом ряде секторов производства). В настоящее время кластер получает широкое распространение в аграрной сфере. Кластеры – это сконцентрированные по географическому признаку группы взаимосвязанных компаний, специализированных поставщиков услуг, фирм в соответствующих отраслях, а также связанных с их деятельностью организаций в определенных областях, конкурирующих, но вместе с тем

[1] Некрасов Р.В. Методологические вопросы статистической диагностики наличия экономических кластера в регионе, Вестник государственного университета, 2008, N 84, с. 44-49.

ведущих совместную работу.[1] В то же время кластер это система взаимосвязанных фирм и организаций представляют собой комбинацию конкуренции и кооперации.

В Ширакской области создаются фермерские кластеры для экспорта овощей. Компания, экспортирующая из Армении свежие фрукты и овощи, в 2013г. начала закупать овощи местных крупных фермеров. Чтобы обеспечить нужные нам обьемы, крупные хозяйства стали стихийно формировать кластеры, кооперируясь с более мелкими. В конце 2013г. компания готовится приобрести у фермеров морковь, картофель, капусту и свеклу – начиная с 5 тыс.тонн каждой культуры. Аналогичный опыт фермеры, через своих партнеров, хотят применить и в Араратской долине. Здесь фермеры попытаются продвинуть сезонность продуктов. Они хотят попробовать войти на рынок овощей раньше, чем обычно, и заявить фермерам о своем спросе. они могут предложить ранние овощи и зелень разными способами, на свое усмотрение: либо тонельными теплицами, либо ранней посадкой в открытый грунт. В результате, компании удастся расширить сезон работы, не ограничив его поздней весной-осенью.С одной стороны этим расширится экспорт зимой, с другой – летом можно будет начать экспортировать молодой картофель и зелень на одну или несколько недель раньше.

Можно ожидать, что в ближайшем будущем основную роль в обеспечении устойчивой конкурентоспособности для большинства кластеров будет играть фактор качества корпоративной стратегии. В частности, ключевым аспектом стратегического развития кластеров будет являться глобализация операций потребителей конкретных региональных рынков, увеличение сервисной составляющей продукции, экспорт инжиниринговых услуг при сохранении лидерства в новых технологиях.

Аграрный кластер обладает сложной и динамичной структурой, так как, имея сельскохозяйственный уклон, подразумевает в своем функционировании решение проблем, свойственных отрасли на сегодняшный день. Агропромышленный кластер предполагает наращивание системности на основе передовых инновационных технологих мирового уровня в уже имеющихся в сельском хозяйстве слабосвязанных промышленных группах и категориях хозяйств. С учетом специфики сельского хозяйства региона при проектировании аграрного кластера необходимо закладывать для всей системы более гибкие свойства, которые будут одновременно усиливать синергетический эффект кластера и максимально соблюдать полезную автономность каждого звена кластера. Разумное равновесие интересов звеньев кластера должно обеспечиваться “элементами сорегулирования”, включающими различных участников рынка и государство, и поддерживаться средствами внутрикластерной коммуникации, которые реализуют информационную взаимосвязь между всеми участниками.

Таким образом, очевидно, что постоянное информационное взаимодействие является первой константой парадигмы агропромышленного кластера.Системность, целост-ность, а, следовательно, синергетическая эффективность кластеров в значительной мере обусловливается информационными технологиями и высоким уровнем интенсивности использования профильной производственной информации. Данный аспект в построении кластеров является мало исследованным, однако он имеет принципиальное значение для успешной итоговой деятельности. Тем не менее, вопрос построения универсальной информационной инфраструктуры в модели армянского кластера остается пока открытым.

Решением такой постановки задачи и должен послужить подход построения информационных тематических порталов (портал от англ. в переводе означает главный вход, ворота, в общем смысле – точка соединения, объединение чего-либо.), использующих базы данных и автоматизированные информационно-поисковые системы посредством сети Интернет. Нужно отметить, что Интернет в сельском хозяйстве сегодня не является новым “словом”. На сегодняшний день многие передовые предприятия агропромышленного комплекса успешно используют и автоматизированные информационные системы и сетевые техноло-

[1] Некрасов Р.В. Опыт развития кластеров в Самарской области,Экономика с/х и перерабатывающих предприятий,2009, N 6, с. 28-31.

гии.Уже никого не нужно убеждать в очевидной пользе внедрения в хозяйственную деятельность сельхозпредприятий как на локальном, так и на глобальном уровне автоматизированных систем.[1]

Информационные связи в структуре производственных кластеров помимо интегрирования в общее мировое информационное пространство подразумевает перманентное использование замкнутых каналов, то есть обязательно получение обратной связи от всех его состзвляющих и формированиеобщей рабочей платформы.

С этой целью предлагается Проект создания некоммерческого портала, который может использоваться как предприятиями, объединенными в сельскохозяйственный кластер, так и хозяйственно самостоятельными организациями, отдельными подсобными хозяйствами и физическими лицами, имеющими отношение к отрасли АПК.

Проект предполагает формирование общей интегрированной среды кластера посредством использования возможностей Интернета.

Принципиальной новизной предлагаемого Проекта является возможность композиции общей виртуальной рабочей области, то есть построение своеобразной общей рабочей площадки для активного обсуждения текущих дел, детального рассмотрения рабочих ситуаций, выдвижения идей и т. д. для всех участников портала. Такое решение базируется на точке зрения, что непосредственный обмен информацией между источником и пользователем имеет гораздо большую эффективность, чем обычное анонсирование информации. Портал включает ссылки не только на свои внутренние корпоративные страницы (в этом случае можно говорить только об Интернет - проекте), но и содержит централизованное обьединение всех проблемных и актуальных аспектов деятельности и развития АПК Армении:

- освещение и обсуждение вопросов законодательной базы АПК;
- решение проблемы кадрового обеспечения и менеджемента в сельском хозяйстве в целом;
- научные публикации и новинки в технике и технологиях отраслей АПК Армении, ближнего и дальнего зарубежья;
- профессиональный форум (консультации специалистов, общение он-лайн);
- блоки информации по различным тематикам в АПК, статистиеские данные, ссылки на актуальные сайты и т.д.

Рассмотрим предметно применение и реализацию возможностей кластера на примере одной из функций кадрового менеджмента – оценки персонала. Концепция информационного портала позволяет организовать процедуру онлайн оценки кадров, а также его учет в режиме реального времени. Программирование специальных сервисов, доступных через Интернет (или используемых в локальной сети предприятия), для онлайн оценки позволяет производить в кластере часть процедуры предварительного отбора персонала дистационно. При этом кандидаты на вакантное место могут проходить подобное тестирование в любое удобное для себя время и из любой точки своего географического положения. Здесь очевидна экономия времени и затрат на проезд до места собеседования, проводимого в привычном формате. Результаты оценки могут быть оперативно представлены по заданным работодателям критериям в рейтинговом порядке в любое звено кластера и гарантировать мгновенную обратную связь.

Практически реализовать размещение подобной методики в Интернет можно на платформе ЛАМ, которая стала популярной благодаря ряду важных качеств, основными из которых являются[2]:

- все составляющие платформы распространяются бесплатно;

---

[1] Семаева И.А. Информационные технологии в кластерах АПК, Экономика с/х и перерабатывающих предприятий , 2009, N 1, с. 21-25.

[2] Бойцов А.С. К вопросу о теории кластеров в кластерном подходе, Экономика с/х и перерабатывающих предприятий, 2009, N 10, с. 25-32.

- веб-сайт, созданные и работающие на основе ЛАМП, не требуют высокопроизводительных серверов, но в то же время существует возможность для масштабирования платформы (разделение нагрузки по нескольким серверам);
- относительная простота настройки и работы с платформой ЛАМП:
- доступный хостинг веб-сайтов.

Одним из важных преимуществ описанного решения является отсутствие необходимости держать свой собственный корпоративный сервер каждому звену кластера (что для большинства современных сельхозпроизводителей трудно реализуемо с точки зрения материальных затрат и далеко не в каждом случае целесообразно). Возможно сделать один или несколько общедоступных серверов, с помощью которых, как обусловлено выбранной выше темой примера, оказывать услуги по подбору и оценке кадров. В этом случае основной комплекс оценочных методик различного уровня сложности (тесты, рекомендации к проведению интервью, пометки и замечания и т.д.) может быть размещен физически в одном месте, то есть на одном сервере. Это позволит унифицировать работу кадровой службы всех предприятий кластера.

При таком подходе, во-первых, каждое сельскохозяйственное предприятие сможет провести грамотное тестирование, предварительный отбор и общение с кандидатом в максимально короткие сроки, во-вторых, отпадает необходимость дорогостоящего содержания в своем штате высококвалифицированного рекрутера и администратора сервера, в третьих, конечному пользователю не нужно проходить дополнительное обучение по использованию программы.

Տատյանա Օհանյան
Ռուզաննա Ալոյան

ՀՀ ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԿԼԱՍՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Ամփոփագիր

Հոդվածում քննարկված են կլաստերների ձևավորման հարցերը, նրանց դերը ու նշանակությունը ՀՀ-ի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ: Կլաստերների արդյունավետությունը, առաջին հերթին, կարող է հաջողություն ունենալ գյուղատնտեսությունում և սննդամթերքի արդյունաբերությունում: Այդ պատճառով, հոդվածում առաջարկվում է կլաստերների ձևավորման մեթոդիկան, որը ենթադրում է օգտագործել այնպիսի չափանիշներ, ինչպիսին են արտադրության տեսակարար կշիռը, տեղայնացման գործակիցը և այլն:

Tatyana Ohanyan
Ruzanna Aloyan

BUILDING CLUSTERS BASED ON THE AGRICULTURAL AND INDUSTRIAL COMPLEX IN THE REPUBLIC OF ARMENIA

Abstract

The article discusses the issues on building clusters, their roles and importance in the social and economic development of the Republic of Armenia. First of all agribusiness clusters can be efficiently built. Hence, the article proposes a cluster building methodology that relies on criteria such as the share of production and localization ratio.

HADI MOTAZARE

Ph.D. student at M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences of the Republic of Armenia

IMPACT OF CONTINUOUS WORKFORCE TRAINING IN TEA INDUSTRY ON THE QUALITY OF TEA

Due to limited use of pesticides in the production of green leaf, Iran's produced tea is considered one of the purest and healthiest teas in the world[1]. Although 100 years have passed since tea cultivation and production started in Iran, land area cultivated for tea production has increased, and number of tea producing factories has increased, no progress has been reported regarding the improvement of quality of produced dried tea, and this product doesn't meet the qualitative and quantitative needs of consumers[2]. Taking into account special place of tea in the basket of Iranian consumers, employment it provides to more than 70,000 households being engaged in tea cultivation and production, the role and share of the industry in the economy of Guilan & Mazandaran Province has doubled, stressing the need to conduct a research to find out the issues the tea industry faces and to ensure qualitative and quantitative improvement. In this article, impact of continuous training of workforce in tea industry as a parameter of utilization of management system on the quality of produced tea is studied. The method used in this research is field work: to interview respondents for collecting data to address the research questions.

Although Iran has a special place in the global production of agricultural products such as pistachio, saffron and dates, and etc., unfortunately, its share in the global tea market is negligible, and the share in the domestic market is not very high. Iran is currently considering increasing the land areas for cultivating tea and number of tea factories; however, Iran has failed to improve the quality of produced tea.

Iran is among the countries that have higher per capita tea consumption than the average across the globe: 1% of the world population consumes about 5% of the total tea produced[3], and in terms of consumption Iran is the 9th largest consumer of tea in the world[4]. 100 years have passed since tea cultivation and production started in Iran; this country still imports tea from other countries. On average, Iran consumes 120,000 tons of dried tea annually: almost 50% is produced locally while the rest is either imported officially or non-officially (contraband)[5].

Basically, tea quality depends on the quality of raw material (Tea Green Leaf) which in its turn depends on various factors: pre- and harvesting and post-harvesting factors. Among pre-harvesting factors are cultivated land, soil minerals, irrigation, types of bushes and their respective condition, types and composition of consumed fertilizers, temperature and pruning, and etc. Harvesting and post-harvesting factors are season and time of harvesting, types of harvesting, methods of logistics of green leaf from tea garden to factory, packaging of tea green leaf. Although if the quality of cultivated green leaf is acceptable the substandard operations utilized in production won't ensure the desired quality. Hence, in order to produce high quality tea, business operations utilized determine final quality of tea; although in previous tea producing stages quality standards have been met.

---

1 Gholizadeh, Mohammad Hossein, et al; Measurement and Analysis of Affective Factors on State Tea Processing Industries Utilization; Development & Agriculture Economy; 17th Years; No. 67; Autumn 2009.

2 Motiei Langerodi, Seyed Hassan, et al; Appraisal of Performance of Implementation of Tea Amendment Plan in View of Tea Farmers; Cheshmandaz Joghrafiayee Magazine (Scientific-Research); 4th Years; No. 10; 2010.

3 Darvish Rahimabadi, Ebrahim; Study the Status of Main Products of Guilan Province; Guilan Province Management & Planning Org.; 2003; Page 94.

4 Jalili Sarabi, Samira; Economic Appraisal of Iran's Tea Industry and its Business Systems, Emphasizing on Export with assist of Mr. Hamid Fotohi; M.A Dissertation of Business Administration; Islamic Azad University of Rasht; 2002; Page 131.

5 Cheraghi, Davood; Tea Market; Business Researches & Studies Institutes; 2010; Page 70 & 107.

Some issues that state-owned tea companies face are the decrease of tea quality produced and loss of market share to successful tea producers from countries such as India, Sri Lanka, Kenya & China. The reasons are provided below:

1. Despite experience, knowledge of tea farmers to apply modern methods of cultivation, nurse and harvest tea, maintain soil fertility and use proper combination of required fertilizers, timely and properly prune and keep standards of harvesting methods, and transport green leaf to the factory is limited and the workforce needs continuous trainings.
2. Most state-owned tea gardens are created traditionally and without considering agricultural, scientific principles so that the majority of them do not have desirable conditions: rows and cultivation distance, slope of the land and other required criteria of tea gardens that eventually lead to increasing maintenance and utilization costs. Therefore, it is necessary to plan and conduct continuous training courses for farmers to keep the above-stated standards while creating new tea gardens and apply the knowledge to improve the performance of the existing ones over in the long-run.
3. Most of tea factories lack specialists and rely on seasonal workers that have no specific knowledge on principles and standards applied in dried tea production. Therefore, tea produced by these factories doesn't meet the standards and is not of required quality.
4. Most factories lack standard warehouses and proper packaging system. Managers of these factories lack required information about conditions and standards on maintenance of dried tea and quality of appropriate packaging materials for tea. If dried tea is not packaged in proper containers and according to standards procedures, not maintained in dark and dry warehouses, it will lose its aroma and flavor shortly after production[1].

The author, among various factors affecting the quality of produced tea, has studied the impact of continuous training of the workforce in tea industry on the quality of produced tea. The author thinks that the results of this research could assists to remove the problems of produced tea by state-owned companies and increase the quality.

Research Methodology:

The author relied on descriptive and inferential statistics. Thus, description of status of tea cultivation and industry, identification of method to estimate the impact of continuous training of workforce on the quality of produced tea has been studied and analyzed. The author conducted fieldwork, and desk research. The author interviewed tea specialists and experts of tea cultivation and industry to collect data to study and analyze key variables of interest. The author designed the survey questionnaire distributed it among the respondents. To define and explain variables, he used means, standard deviations, and column chart and one-tailed t-test to test the hypotheses.

Population is the entire number of managers and experts of tea making factories of Guilan Province, all tea experts and specialists employed by Tea Organization, State Tea Research Center and other related organizations with tea. Furthermore, the population was constructed by including the number of managers, experts and specialists of tea factories of Lahijan City, the 2nd largest tea producer. Then, the respective sample was drawn.

Table of Frequency Distribution related to Research Hypothesis (Workforce Continuous Training)

Description	Frequency	Cumulative Frequency
Very Low	0	0
Low	0	0
Average	0	0
High	11	10.5
Very High	94	89.5
Total	105	100.0

[1] Impact of Packaging Material & Time of Storage on Quality of Orthodox Tea; Translated by Rofigari Haghighat, Shiva; Scientific-Technical Magazine of State Tea Organization; Tea Research Services Dept.; No. 2; Winter 2001.

Diagram of Frequency Distribution related to Research Hypothesis (Manpower's Continuous Training)



Diagram of Research Hypothesis Testing (Workforce Continuous Training)



Research Hypothesis:

Continuous training of workforce in tea industry has no effect on quality of produced tea. **H_0: μ =3**

Continuous training of occupied manpower in tea cultivation and industry affects the quality of produced tea. **H_1: $\mu \neq 3$**

Table of Results of Research Hypothesis Testing (Workforce Continuous Training)

Research Hypothesis	Sample Size	Mean	Standard Deviation	Mean of Measurement Error
Workforce Continuous Training	105	4.90	0.308	0.030

Table of Results of Research Hypothesis Testing (Workforce Continuous Training)

Research Hypothesis	Calculated t-statistics value	Degrees of freedom	Significance level	Critical -value of t statistics	Mean Deviation	Confidence Interval for the Mean difference from the Theoretical Mean	
						Lower endpoint	Upper Endpoint
Workforce Continuous Training	63.112	104	0.000	1.9830	1.8951.933	1.84	1.95

$$t = \frac{\bar{x} - \mu}{\frac{s}{\sqrt{n}}} = \frac{4.90 - 3}{\frac{0.308}{\sqrt{105}}} = 63.112$$

Decision Making:

Considering the results of the above table, the value of calculated t-statistics is larger than the critical value: reject H_0 and accept H_1 (impact of continuous training of workforce in tea industry on quality of produced dried tea). Hence, continuous training of workforce in tea industry affects the quality of produced dried tea.

To increase the quality of dried tea produced by state-owned companies the author proposes the followings:

1. Conduct training courses on standards and new methods of tea cultivation, nursing and harvesting, method and time of various pruning for tea farmers.
2. Conduct training courses on standards and new methods of tea production for tea experts.
3. Send experts abroad to become familiarized with best practices worldwide applied in tea production.
4. Set up tea departments in tea growing regions to provide required expertise on workforce development to tea factories.

Հադի Մոթազարե

ԹԵՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԴՐՎԱԾ ԹԵՅԻ ՈՐԱԿԻ ՎՐԱ

Ամփոփագիր

Իրանի Իսլամական Հանրապետությունում արտադրված թեյը համարվում է աշխարհում ամենամաքուր ու առողջարար թեյերից մեկը: Իրանի սպառողական զամբյուղում թեյի զբաղեցրած հատուկ տեղի, մշակման ու արտադրության գործընթացում ավելի քան 70 000 տնային տնտեսությունների ներգրավման և Գիլան ու Մազանդարան գավառների տնտեսություններում դրա ունեցած դերի ու տեղի շնորհիվ անհրաժեշտություն առաջացավ հետազոտություններ իրականացնել, որոնց միջոցով կբացահայտվեն թեյի մշակման ոլորտում առկա հիմնախնդիրների լուծումները և դրա քանակական ու որակական բարելավման ուղիները: Ստացված տվյալների վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ թեյի արդյունաբերության ոլորտում ներգրավված աշխատողների շարունակական վերապատրաստումները և թեյի մշակումը ազդում են արտադրված չոր թեյի որակի վրա:

Хади Мотазаре

ВЛИЯНИЕ ПОСТОЯННЫХ ПЕРЕПОДГОТОВОК РАБОТНИКОВ, ВОВЛЕЧЕННЫХ В СФЕРУ ПРОИЗВОДСТВА И ОБРАБОТКИ ЧАЯ, НА КАЧЕСТВО ПРОИЗВЕДЕННОГО ЧАЯ

Аннотация

Чай, произведенный в Исламской Республике Иран, считается одним из самых экологически чистых и оздоровительных чаев в мире. Необходимость проведения исследований с целью выявления решений существующих проблем в сфере обработки чая и поиска путей количественного и качественного улучшения данной сферы обусловлена особым местом, занимаемым чаем в потребительской корзине Ирана, вовлеченностью в процесс его обработки и производства более чем 70,000 домашних хозяйств, а также ролью и местом чая в экономике провинций Гилан и Мазандаран. Результаты анализа данных, полученных в ходе исследований, показали, что постоянные переподготовки работников, вовлеченных в сферу производства и обработки чая, влияют на качество чая.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԳՈՀԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՊՃՀ, պ.գ.թ., դոցենտ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Առողջապահության արդյունավետությունն ու մատուցվող ծառայությունների որակը մեծապես կախված են նրա կազմակերպման համակարգից, ըստ որի էլ որոշվում են ֆինանսավորման աղբյուրներն, ինչպես նաև այս ոլորտի մատչելիության աստիճանը: Ժամանակակից աշխարհում գործում են առողջապահության կազմակերպման միմյանց լրացնող մի քանի մոդելներ, որոնցից են.

- առողջապահության ազգային պետական համակարգը, որն հիմնված է բժշկական հաստատությունների ուղղակի պետական ֆինանսավորման սկզբունքի վրա և ապահովում է անվճար բժշկական օգնություն,
- պարտադիր բժշկական ապահովագրությունը, որն ապահովում է որոշակի ծավալի բժշկական ծառայությունների ֆինանսավորում պետության կողմից, որոնք ստեղծում են սոցիալական երաշխիքներ, իսկ ապահովագրական մուծման չափը կապված չէ բժշկական օգնության ծավալի և ապահովագրված անձի առողջական վիճակի հետ,
- կամավոր բժշկական ապահովագրությունը, որն ընդգրկում է պարտադիր բժշկական ապահովագրության ոլորտից դուրս մնացած բժշկական սպասարկման տեսակները: Այս դեպքում ապահովագրական մուծման չափը համամասնորեն կախված է ապահովագրական ռիսկից, որն էլ որոշվում է ապահովագրվող անձի առողջական վիճակով: Ապահովագրության շուկայական համակարգն ընդլայնում է պարտադիր առողջապահությանը հատուկ բժշկական օգնության սահմանները, մտցնում բազմազանություն և ընտրության հնարավորություն՝ մեծացնելով նաև պատասխանատվությունն ապահովագրվող անձի նկատմամբ և, հետևաբար, բարձրացնում ծառայությունների որակը,
- վճարովի կամ մասնավոր առողջապահության համակարգը, որը ենթադրում է բժիշկների ու առողջապահական կազմակերպությունների ֆինանսավորում հիվանդների անձնական միջոցների հաշվին:

Պետական առողջապահությունը միատեսակ բժշկական ծառայություններ է տրամադրում բոլոր սոցիալական խմբերին: Սակայն հասարակության բոլոր խավերի պահանջները բավարարելու համար պահանջվում է սպասարկման բավականին բարձր մակարդակ, որը պետությունը միշտ չէ, որ կարող է ապահովել: Տարբեր եկամուտներն ու սոցիալական մակարդակները ենթադրում են տարբեր պահանջներ, իսկ պետությունը չի ցանկանում ավելին ծախսել, քան անհրաժեշտ է՝ առաջնորդվելով բյուջեի ծախսերի կրճատման անհրաժեշտությամբ: Պետական առողջապահության համար այլընտրանք կարող են լինել պարտադիր ու կամավոր ապահովագրությունն ու մասնավոր բժշկությունը: 20-րդ դարի սկզբին շատ եվրոպական երկրներում ընդունվեց օրենք պարտադիր բժշկական ապահովագրության մասին, ըստ որի բժշկական ծառայությունների փոխհատուցումը մասամբ կատարվում էր բանվորների ու գործատուների կողմից (25-40%-ը), իսկ մնացածը՝ վճարում էր պետությունը: Հետագայում Մեծ Բրիտանիայում, Շվեդիայում, Դանիայում բժշկական ապահովագրությունն աստիճանաբար ձևափոխվեց պետական առողջապահության, իսկ Գերմանիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում և Շվեյցարիայում գերակշռում է ապահովագրական առողջապահությունը: Այդ երկրների մեծաքանակ միջին խավը գերադասում է կամավոր ապահովագրությունը, որի ծախսերի մի մասը պատրաստ է փոխհատուցել սեփական միջոցների հաշվին՝ փոխարենն ակնկալելով ծառայությունների ավելի բարձր որակ: Սոցիա-

լական սանդղակի վերին խավի ներկայացուցիչները նախընտրում են մասնավոր բժշկությունը, որը ձգտում է միավորել բարձր մասնագիտական ունակություններն ու առավելագույն հարմարավետությունը:

Այս մոդելներից ոչ մեկը չի գործում մաքուր ձևով, որն էլ պայմանավորում է առողջապահության ֆինանսավորման աղբյուրների բազմազանությունը: Դրանք կարելի է բաժանել չորս խմբի՝ բյուջետային ֆինանսավորում, տնային տնտեսությունների անձնական միջոցների հաշվին կատարվող ուղղակի ծախսեր, հասարակական կազմակերպությունների կողմից ստացվող միջոցներ և ապահովագրական վճարներ: Հայաստանի Հանրապետությունում 2001-2007 թվականների ընթացքում առողջապահության ընդհանուր ծախսերն աճել են 79 մլրդից մինչև 139 մլրդ դրամի, իսկ բացարձակ թվերով միջին տարեկան աճը կազմել է 10 մլրդ դրամ: Ընդհանուր ծախսերում բյուջեի հատկացումները 2001 թվականի 23,7 %-ից 2007 թվականին հասել են 47,3%-ի, իսկ տնային տնտեսությունների ծախսերը 68,7%-ից իջել 48,2%-ի: Սակայն 2008 թվականին, կապված տնտեսական ճգնաժամի հետ, բյուջետային հատկացումները դարձյալ նվազել են, իսկ տնային տնտեսությունների ծախսերն՝ ընդհակառակը, աճել 2,6 մլրդ դրամով, որի պատճառով վերջիններիս տեսակարար կշիռն աճել է մինչև 50,8 %-ի[1]: Առողջապահության ոլորտի պետական ծախսերի մակարդակը ՀՆԱ-ի նկատմամբ 2013-2015թթ. միջնաժամկետ ծրագրով դրսևորում է նվազման միտում, որը բացատրվում է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի ավարտմամբ: Եթե 2009 թվականին դրանք կազմում էին ՀՆԱ-ի 1,74%-ը, ապա 2015 թվականին կկազմեն ընդամենը 1,31%-ը: Համեմատության համար կարող ենք բերել մի շարք զարգացած երկրների առողջապահական ծախսերի տոկոսային հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ: Օրինակ, ԱՄՆ-ում այն կազմում էր ՀՆԱ-ի 15.8, Ֆրանսիայում՝ 11.9, Կանադայում՝ 9.9, Մեծ Բրիտանիայում՝ 8.1, Ճապոնիայում՝8%-ը և այլն[2]:

Առողջապահության արդյունավետությանը կարող է նպաստել բժշկական ապահովագրության կիրառումը և ընդհանուր ծախսերում դրա տեսակարար կշռի աճը, որը 2008 թվականի տվյալներով կազմել է ընդհանուր ծախսերի ընդամենը 0,2%-ը[3]: Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ առողջապահության ֆինանսավորման աղբյուրների զգալի մասը ձևավորվում է ապահովագրական մուծումների հաշվին: Փորձի սոսկ արձանագրության առումով նկատենք, որ ԱՄՆ-ում բոլոր ծախսերի 43 տոկոսը կազմում է պետական ապահովագրությունը, 33 տոկոսը՝ մասնավոր ապահովագրությունը, 24 տոկոսը վճարում են անմիջական սպառողները: Կանադան իրականացնում է ազգային բժշկական ապահովագրություն, որի դեպքում կառավարությունն ապահովում է բժշկական ծառայությունների բազային հավաքածու, որը բնակչությանն է տրամադրվում անվճար կամ ցածր գներով, իսկ ծախսերը ֆինանսավորվում են հարկային մուտքերի, այլ ոչ թե ապահովագրական մուծումների հաշվին:

Հայաստանում ևս, հաշվի առնելով բնակչության տարբեր խավերի ֆինանսական վիճակների տարբերությունը, կարելի է բժշկական ապահովագրության համակարգում իրականացնել դիֆերենցում: Այս իմաստով, հաշվի առնելով հանրապետության հնարավորությունները, ավելի հավանական է ներկայանում կանադական տարբերակի առանձին տարրերի կիրառումը: Հանրապետության բյուջեն այսօր չունի այդ հնարավորությունները, կամ էլ այդ բազային հավաքածուն կարող է բաղկացած լինել ծառայությունների այնպիսի նվազագույն քանակից, որը էական ոչ մի ազդեցություն չի կարող ունենալ ներկա իրավիճակի վրա: Ինչ վերաբերում է ապահովագրական համակարգին, ապա այն նպատակահարմար է բաժանել պետական և կամավոր ապահովագրության: Պետական ապահովագրության համակարգի մեջ կընդգրկվեն բնակչության անապահով խավերը, պահանջվող ֆինանսական միջոցները ձևավորելով պետական բյուջեի ներկայիս հատկացումների և պարտադիր բժշկական ապահովագրության վճարների հաշվին, որը պետությունը կսահմանի բոլոր կազմակերպությունների ու անհատների համար: Անհատներից դրանք նույնիսկ կարելի է գանձել եկամտահարկի ձևով, աշխատավարձի 2-3 տոկոսի

---

[1] Առողջապահության համակարգի գործունեության գնահատումը, Եր., 2005թ., էջ 45:
[2] OECD Health Data 2007: Statistics and Indicators fqr 30 Countries. Paris.
[3] Առողջապահության համակարգի գործունեության գնահատումը, Եր., 2005թ., էջ 45:

չափով, որը կգումարվի այսօր գանձվող հարկերին, բայց ոչ թե կմուտքագրվի բյուջե, այլ պետական բժշկական ապահովագրության հիմնադրամին և կծախսվի այդ ծառայությունների նվազագույն փաթեթի իրականացման համար: Այս ձևով կարելի է բավարարել ոչ միայն հասարակության անապահով խավերի, այլ բոլոր անդամների նվազագույն պահանջարկն առողջապահական ծառայությունների նկատմամբ, քանի որ մուծումները կարվեն ամբողջ կյանքի ընթացքում, իսկ այդ ծառայություններից շատերը կարող են ընդհանրապես չօգտվել կամ էլ օգտվել խիստ հազվադեպ: Առավել նպատակային դարձնելու համար կարելի է այդ մուծումները կատարել անվանական սկզբունքով և, կախված աշխատավարձի չափից, ձևավորել տարբեր մեծության ապահովագրական ֆոնդեր, որը թույլ կտա օգտվել տարբեր ծառայություններից: Բացի այդ շահագրգռվածություն կառաջանա լրացուցիչ մուծումներ կատարել այդ ֆոնդերին՝ ծառայություններից օգտվելու շրջանակն ընդլայնելու նպատակով: Այսինքն՝ պարտադիր բժշկական ապահովագրությունից բացի կարելի է կիրառել նաև կամավոր ապահովագրության սկզբունքը, որն արդեն յուրաքանչյուր անհատ կիրականացնի՝ ելնելով իր ցանկությունից և ֆինանսական հնարավորություններից:

Առողջապահության համընդհանուր մատչելիությունն ապահովելու նպատակով պետությունը կարող է կիրառել «մասնակցիր կամ վճարիր» սկզբունքը, ըստ որի գործատուները պետք է ապահովեն իրենց աշխատողների բազային ապահովագրությունը (մասնակցիր) կամ վճարեն հատուկ հարկ՝ չապահովագրված աշխատողների համար (վճարիր): Ընդ որում՝ աշխատանքը փոխելիս մարդիկ չպետք է կորցնեն ապահովագրությունը: Որպեսզի առողջապահական հիմնարկները չմեծացնեն ծախքերը և չփորձեն, մեծ գումարներ ստանալու ակնկալիքով, պարտադրել լրացուցիչ ծառայություններ, ապահովագրական կազմակերպությունները կամ պետական ապահովագրության հիմնադրամը փոխանցումները կարող են կատարել ըստ հիվանդությունների ախտորոշման, այսինքն՝ յուրաքանչյուր հիվանդության համար նախապես հաշվարկված կայուն գումարների:

2011 թվականից ՀՀ կառավարության կողմից սոցիալական փաթեթի կիրառմամբ փորձ է արվում բնակչության որոշ խավերի համար իրականացնել պարտադիր բժշկական ապահովագրություն: Իհարկե, առայժմ դա վերաբերում է բավականին սահմանափակ խմբի՝ ընդգրկելով միայն ՀՀ պետական մարմինների, կրթության, մշակույթի ու սոցիալական պաշտպանության ոլորտների պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողներին: Սոցիալական փաթեթը բժշկական ապահովագրությունից բացի ներառում է նաև հիփոթեկային վարկի ամսական վճարի մարումը, ուսման վճարը և հանգստի ապահովումը Հայաստանում ու Արցախում: Ընդ որում՝ բժշկական ապահովագրությանն է ուղղվում սոցիալական փաթեթի 132 հազար դրամից 52 հազարը, իսկ ապահովագրական գումարը կազմում է 3,8 մլն դրամ: Սոցիալական փաթեթում նշվում է ծառայությունների այն ցանկը, որից ապահովագրվողը կարող է օգտվել կենտրոնական բանկի կողմից պետական գրանցում և ապահովագրական գործունեության իրականացման արտոնագիր ստացած որևէ ընկերության հետ պայմանագիր կնքելու դեպքում: Պայմանագրում ընդգրկվում են սոցիալական փաթեթում սահմանված առողջապահության բազային ծառայությունները, իսկ ապահովագրվողը կարող է ընտրել նաև ապահովագրական ընկերության կողմից առաջարկվող բժշկական ապահովագրության ցանկացած փաթեթ՝ անհրաժեշտության դեպքում վճարելով տարբերությունը; Առողջապահական ծառայությունների բազային փաթեթի բաղադրիչներն են հիվանդանոցային բուժօգնությունը (թերապևտիկ բուժում, վիրաբուժական միջամտություն պահանջող հիվանդություններ, վնասվածքների, էլեկտրահարությունների, այրվածքների ու ցրտահարությունների բուժում), ախտորոշիչ լաբորատոր և գործիքային հետազոտությունները, կանխարգելիչ բուժումը: Նշվում են նաև ապահովագրական հատուցման բացառությունները և այն հիվանդությունները, որոնք դուրս են մնում պարտադիր ապահովագրության ծածկույթից:

Սոցիալական փաթեթի վերաբերյալ կառավարության որոշմանը պետք է հաջորդեն հետագա քայլեր՝ բժշկական ապահովագրությունը մասսայականացնելու ուղղությամբ: Կամ դա կարող է տեղի ունենալ ընդգրկվածության աստիճանը մեծացնելու եղանակով՝ պետական բյուջեի հնա-

րավորություններից կախված աստիճանաբար ավելի մեծ թվով մարդկանց սոցիալական փաթեթ հատկացնելով, կամ էլ պարտադիր ու կամավոր բժշկական ապահովագրության մասին օրենք ընդունելով:

Ինչ խոսք, բժշկական ապահովագրության համակարգը ևս զերծ չէ թերություններից, սակայն կարող է նպաստել առողջապահության առջև դրված հիմնահարցերի լուծմանը, ինչպիսիք են ծառայությունների որակի բարելավումը, կանխարգելիչ ամբուլատոր առողջապահության դերի բարձրացումը, առողջապահության մատչելիությունը, հատկապես, սոցիալապես անապահով խավերի համար, կոռուպցիայի կրճատումը և այլն: Հակառակ պարագայում մենք կունենանք բժշկի դիմող հիվանդների քանակի կրճատում՝ բնակչության առողջական վիճակի վատթարացման պայմաններում:

Гоарик Григорян

СИСТЕМЫ ЗДРАВООХРАНЕНИЯ И ИСТОЧНИКИ ФИНАНСИРОВАНИЯ

Аннотация

В современном мире существует несколько моделей организации здравоохранения: национально-государственная система здравоохранения, обязательное (всеобщее) медицинское страхование, добровольное медицинское страхование и платная или частная медицина. Соответствено и источники финансирования их различны, от правильного сочетания которых зависит качество и уровень доступности услуг здравоохранения. В статье исследованы проблемы, связанные с применением социального пакета в РА и дальнейшим реформированием системы здравоохранения.

Goharik Grigoryan

HEALTHCARE SYSTEMS AND SOURCES OF FUNDING

Abstract

In the modern world several models of building healthcare system exist: national state healthcare system; mandatory and voluntary health insurance; paid or private healthcare system. Depending on a given system sources of funding vary respectively, and their right combination determines the quality and affordability of health services provided. The article analyzes issues related with utilization of the social package and further reforms in the healthcare system of the Republic of Armenia.

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Մարդկության պատմության ողջ ընթացքում տեղեկատվությունն առանձնահատուկ դեր և նշանակություն է ունեցել: Մարդկային հասարակության ձևավորումն իր գոյությամբ պարտական է տեղեկատվության պահպանման և սերունդներին փոխանցման թեկուզ և պարզունակ, սակայն գործուն գործիքների ստեղծմամբ: Բնականաբար հասարակարգի զարգացմանը զուգահեռ զարգանում էին նաև տեղեկատվության պահպանման, փոխանցման և մշակման գործիքները՝ բանավոր խոսքից, ժայռապատկերներից և ծիսակարգերից հասնելով տեղեկատվության ներկայացման տպագիր, մաթեմատիկական և ներկայացման այլ ձևերին: Հետևաբար տեղեկատվական հասարակություն բնորոշումը ինչ–ինչ վերապահումներով հատուկ է նաև մինչև 20-րդ դարի հասարակությանը:

Սակայն տեղեկատվական հեղափոխության և հասարակության մասին քննարկումները հատկապես լայն թափ ստացան 20-րդ դարի 60-ական թվականներին, ինչը կապված էր էլեկտրոնային տեխնոլոգիաների զարգացման և հասարակական կյանքում տեղեկատվության դերի կտրուկ ավելացման հետ: Տեղեկատվական տեխնոլոգիաների և սարքավորումների մատչելիության ավելացմանը զուգահեռ այն մուտք էր գործում ավելի ու ավելի մեծ թվով ոլորտներ, որոնց շարքում է նաև պետական կառավարման համակարգը: Արդյունքում ի հայտ եկավ մինչ այդ հանրությանը անհայտ մի երևույթ, որը ստացավ էլեկտրոնային պետություն կամ կառավարություն անվանումը:

Միացյալ ազգերի կազմակերպության սահմանմամբ էլեկտրոնային կառավարությունը սահմանվում է որպես քաղաքացիներին կառավարության կողմից տեղեկատվական ծառայությունների մատուցման ժամանակ ինտերնետի և վեբ տեխնոլոգիաների կիրառում (United Nations, 2006; AOEMA, 2005)[1]: Էլեկտրոնային կառավարությունը հայկական և օտարալեզու գրականությունում ներկայացվում է բազմաթիվ տերմիններով, որոնցից են էլեկտրոնային կառավարությունը կամ էլեկտրոնային պետությունը (Electronic government, կամ կրճատ՝ E-Government, e-gov), ինտերնետ կառավարումը (Internet government), թվային կառավարումը (digital government), առցանց կառավարումը (online government), համակցված կառավարումը (connected government), և այլն:

Չնայած տերմինների նման բազմազանությանը՝ հայեցակարգային առումով դրանք բնութագրում են միևնույն բովանդակությունը՝ այն է, մի կողմից կառավարության և մյուս կողմից քաղաքացիների, ձեռնարկատիրության, աշխատակիցների, կառավարության ներքին մարմինների և գործակալների միջև էլեկտրոնային եղանակով փոխհարաբերությունները: Բոլոր այս փոխհարաբերությունները բնութագրելու համար մասնագիտական գրականությունում բավականին տարածված է լատինատառ հապավումների օգտագործումը, որում որպես հիմք է ընդունվում գործառնության մասնակիցների բնութագիրը[2]: Ըստ այդմ տարբերում են էլեկտրոնային կառավարության հետևյալ տարատեսակները.

- Կառավարության և քաղաքացիների միջև՝ G2C (Government to Citizens)
- Կառավարության և բիզնեսի միջև՝ G2B (Government to Businesses)
- Կառավարության և աշխատակիցների միջև՝ G2E (Government to Employees)
- Կառավարության և կառավարության միջև՝ G2G (Government to Governments)
- Քաղաքացիների և կառավարության միջև՝ C2G (Citizens to Governments)[3]

---

[1] United Nations Department of Economic and Social Affairs, "United Nations E-Government Survey 2012". New York, United Nations, 2012.

[2] Jeong Chun Hai Ibrahim, Fundamental of Development Administration. Selangor, Scholar Press, 2007.

[3] Mary Maureen Brown, Electronic Government. Jack Rabin (ed.). Encyclopedia of Public Administration and Public Policy, Marcel Dekker, 2003, pp. 427–432.

Պետական մարմինների հետ փոխհարաբերության պարզագույն ձևը էլեկտրոնային փոստի օգտագործումն է, սակայն ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս այդ հարաբերություններում կիրառել շատ ավելի մեծ հնարավորություններ ապահովող մեխանիզմներ, որոնց օգնությամբ ավելանում է բնակչությանը, բիզնեսին և մյուս գործակալներին տրամադրվող ծառայությունների անվանացանկը: Ժամանակակից պատկերացումներով էլեկտրոնային կառավարության զարգացման հայեցակարգային դրույթները ենթադրում են, որ տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները պետք է կիրառվեն կառավարման բոլոր մակարդակներում և կառավարման բոլոր մարմինների կողմից, իսկ մատուցվող ծառայությունները պետք է անընդհատ օպտիմալացվեն, որի նպատակը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն ու կառավարման ներքին և արտաքին կապերի վերափոխմամբ նոր մշակույթի ձևավորումն է, որտեղ կարևորագույն նշանակություն պետք է ձեռք բերեն համացանցն ու տեղեկատվության ներկայացման նոր միջոցները[1]:

Չնայած էլեկտրոնային կառավարությունը առավել հաճախ ասոցացվում է համացանցի հետ, և անգամ տարբեր սահմանումներում այն սահմանվում է որպես թվային կամ առցանց կառավարում, այնուամենայնիվ հարկ է նշել, որ էլեկտրոնային կառավարման գործիքակազմում գոյություն ունեն բազմաթիվ համացանցի վրա չհիմնված գործիքներ: Դրանց թվում են հեռախոսակապը, ֆաքսը, բջջային կապի կարճ և մեդիա հաղորդագրությունները, անլար կապի միջոցները, բիոմետրիկ նույնականացման համակարգերը, հերթերի և տրանսպորտի կարգավորման համակարգերը, նույնականացման էլեկտրոնային քարտերը, հեռուստատեսությունը, ռադիոն և այլն: Այնուամենայնիվ, էլեկտրոնային կառավարության քննարկման ժամանակ հաճախ շեշտվում է համացանցի հենքը, քանի որ այն ոչ միայն առավել հարուստ, հարմարավետ և հասանելի միջավայրն է, այլ նաև այն պատճառով, որ տեխնոլոգիական զարգացմանը զուգահեռ նշված գործիքները հաճախ գործում են համացանցի հիման վրա: Օրինակ՝ թվային հեռուստատեսությունը, նույնականացման քարտերի օգտագործումը և մի շարք այլ գործիքների կիրառումն այնքան սերտ կապի մեջ են համացանցի հետ, որ երբեմն նույնիսկ անհնար է պատկերացնել դրանց աշխատանքն առանց համացանցի: Հետևաբար, պետք է հիշել, որ էլեկտրոնային կառավարությունը կարող է և հենվել ոչ համացանցային գործիքների վրա, սակայն այն իր ողջ հմայքը ցուցադրում է հենց համացանցի միջավայրում գործելիս:

Էլեկտրոնային կառավարության ներդրումն ունի մի շարք առավելություններ: Նախ նշենք, որ էլեկտրոնային կառավարության գերագույն նպատակը քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների անվանացանկի ընդլայնումն է: Միաժամանակ, էլեկտրոնային կառավարությունը թույլ է տալիս ավելացնել կառավարության գործունեության թափանցիկությունը, ինչը դեմոկրատական հասարակության կարևորագույն պահանջներից է: Կառավարության թափանցիկության շնորհիվ քաղաքացիները տեղեկանում են կառավարության կողմից իրականացվող միջոցառումների, ստացած արդյունքների և թերացումների մասին, ինչը այդ միջոցառումների համար պատասխանատու մարմիններին ստիպում է ավելի զգաստ լինել:

Էլեկտրոնային կառավարության համակարգի միջոցով կառավարման մարմինների հետ կապված քաղաքացիների պարզ կամ ստանդարտ խնդիրների լուծումը կարելի է զգալիորեն հեշտացնել: Նման խնդիրների թվին են դասվում բնակավայրի փոփոխության, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունների և շատ ու շատ այլ գործողությունների իրականացման առաջադրանքները, որոնք իրենց բնույթով պարզ են և հեշտ մոդելավորվող, սակայն առանց էլեկտրոնային կառավարման համակարգի քաղաքացիներից շատ ժամանակ և ռեսուրսներ են պահանջում:

Էլեկտրոնային կառավարության համակարգը նպաստում է նաև քաղաքացիների՝ քաղաքական արշավներին և որոշումներ կայացնելու գործընթացների մասնակցության աստիճանի ավելացմանը: Արդեն իսկ շատ երկրներում ներդրված է քվեարկություններին էլեկտրոնային եղանակով մասնակցելու հնարավորությունը, ինչը ևս էլեկտրոնային կառավարության մաս է

[1] Koh, C.E., Prybutok, V.R. (2003). "The three-ring model and development of an instrument for measuring dimensions of e-government functions". Journal of Computer Information Systems 33 (3): 34–9.

կազմում: Կյանքը ցույց է տվել, որ վերջին տասնամյակներում զարգացած երկրներում նկատվում է բնակչության կողմից ընտրություններին մասնակցության ցուցանիշի անընդհատ նվազման միտում, ինչը կապված է ոչ միայն բնակչության քաղաքականն անտարբերությամբ, այլ նաև քվեարկություններին մասնակցելու ֆիզիկական անհարմարություններով: Այս դեպքում էլեկտրոնային քվեարկության մեխանիզմը կարող է դրական անդրադառնալ մասնակցության ցուցանիշի բարելավման վրա:

Էլեկտրոնային կառավարության դրական ազդեցությունն ակնհայտ է նաև բիզնեսի համար: Տարբեր հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորությունը, հարկերի, տուրքերի և այլ ֆինանսական պարտավորությունների առցանց մարման հնարավորությունները, օրենսդրական և իրավական դաշտի փոփոխություններին անմիջապես տեղեկանալու հնարավորությունը նպաստում է բիզնեսի տրանսակցիոն, ինչպես նաև ժամանակային և մարդկային ռեսուրսների ծախսերի նվազմանը, հետևաբար խնայողությունների և բիզնեսն ընդլայնելու հնարավորություն են ապահովում:

Այսպիսով, էլեկտրոնային կառավարության ներդրումից ակնկալվող ուղղակի արդյունքները վերաբերում են արդյունավետության, ծառայությունների որակի և հասանելիության, թափանցիկության և հաշվետվողականության ավելացմանը[1]: Սակայն էլեկտրոնային կառավարության ներդրումն ապահովում է նաև կողմնակի կամ ածանցյալ դրական արդյունքներ, որոնք նույնպես չպետք է անտեսել: Դրանց շարքին է դասվում հասարակական հարաբերությունների դեմոկրատացումը, շրջակա միջավայրի վրա դրական ազդեցությունը, պետական համակարգի աշխատանքի և փոփոխություններին արձագանքելու արագության ավելացումը, տեղեկատվական համակարգերի ներդրմամբ պայմանավորված փոխկապակցված ոլորտներում տնտեսական աշխուժացումը և աճը, սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող մարդկանց՝ հասարակական կյանքին ինտեգրելու հնարավորությունները և այլն:

Բնականաբար, էլեկտրոնային կառավարության հայեցակարգի վերաբերյալ կան նաև բացասական կարծիքներ: Որպես էլեկտրոնային կառավարության հիմնական թերություն նշվում է այն հանգամանքը, որ ինտերնետ կապի հասանելիությունը հանրության տարբեր խմբերի համար գործնականում տարբերվում է, հետևաբար պակաս հասանելիության խմբերն ավելի քիչ են մասնակցում էլեկտրոնային կառավարմանը: Միաժամանակ, հաճախ է վիճարկվում այն հարցը, թե որքան վստահելի է համացանցում տեղադրված տեղեկատվությունը, քանի որ վերահսկողություն ունեցող մարմինները կարող են հեշտությամբ խեղաթյուրել այդ բովանդակությունը և ազդել հանրային կարծիքի վրա: Բացի այդ, հենց միայն էլեկտրոնային կառավարության համակարգի մշակումն արդեն որոշակի հիմնախնդիրների լուծում է պահանջում, որոնցից են կառավարության և քաղաքացիների անմիջական, չմիջնորդավորված և չֆիլտրված հարաբերությունների, հիպեր հանցագործությունների և քաղաքական, սոցիալական և տնտեսական միջավայրի վրա բացասական ազդեցություն ունենալու վտանգները[2]:

Էլեկտրոնային կառավարության բացասական դրսևորումների շարքում հաճախ շահարկվում է գերվերահսկողության հիմնախնդիրը: Մասնավորապես, կարծիք կա, որ գործակալների և կառավարության միջև փոխհարաբերությունների էլեկտրոնային եղանակը հնարավորություն է տալիս կուտակել և մշակել այն, որի արդյունքում առաջ է գալիս տեղեկատվական անհավասարություն: Դրա արդյունքում վտանգվում է ոչ միայն անձնական տեղեկատվության անձեռնմխելիությունը, այլ նաև հիմք է ստեղծվում քաղաքացիների և մյուս գործակալների համատարած վերահսկողության համակարգ ստեղծելու համար[3]: Որոշ մասնագետներ վիճարկում են անգամ էլեկտրոնային կառավարության տնտեսական արդյունավետության պնդումները: Չնայած արդեն ներդրված էլեկտրոնային կառավարության համակարգերի ընթացիկ ծախսերը բավականին քիչ

---

[1] Atkinson, Robert D.; Castro, Daniel (2008). Digital Quality of Life . The Information Technology and Innovation Foundation. pp. 137–145.

[2] Atkinson, Robert D.; Castro, Daniel (2008). Digital Quality of Life (PDF). The Information Technology and Innovation Foundation. pp. 137–145.

[3] Lyman, Jay. "AT&T Sued for Role in Aiding US Government Surveillance". TechNewsWorld. 2006-02-01.

են, այնուամենայնիվ, նման համակարգերի ստեղծման, ինչպես նաև շահագործման թաքնված ծախսերը հաշվի առնելու դեպքում կարելի է հիմնավորել, որ էլեկտրոնային կառավարության ներդրման տնտեսական արդյունավետությունն այդքան էլ միանշանակ չէ[1]: Ավելին, կասկածի տակ է դրվում անգամ կառավարման գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության վերաբերյալ պնդումը: Ընդդիմախոսները գտնում են, որ եթե էլեկտրոնային կառավարության տեղեկատվական համակարգերը վերահսկվում են կառավարության կողմից, ապա թափանցիկության և հաշվետվողականության վերաբերյալ պնդումները անմիջապես հօդս են ցնդում: Էլեկտրոնային տեղեկատվական համակարգերում տեղեկատվությունը կարելի է ինչպես թաքցնել, այնպես էլ հեշտությամբ խեղաթյուրել: Հետևաբար էլեկտրոնային կառավարությանը զուգահեռ պետք է գործեն նաև այդ տեղեկատվության հանրային վերահսկողության ինստիտուտներ: Լավագույն դեպքում, էլեկտրոնային կառավարության գործիքները պետք է ապահովեն ժամանակի տարբեր պահերին տեղեկատվությունը դիտելու հնարավորություն, ինչպես նաև տեղեկատվության փոփոխության ժամանակի և կատարողների մասին տվյալների պահպանման և ցուցադրման հնարավորություններ:

Հարկ է նշել, որ էլեկտրոնային կառավարության բնագավառում վերջին զարգացումները վերաբերում են արդեն նաև բջջային կապի ընձեռած հնարավորությունների կիրառմանը, ինչը համահունչ է տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների այլ ոլորտի զարգացումների միտումներին: Այնուամենայնիվ, էլեկտրոնային կառավարության ծառայությունների մատուցման գերակա ձևը շարունակում է մնալ համացանցային վեբ պորտալների գործիքը, ինչը հնարավորություն է տալիս մեկ տեղում կենտրոնացնել ծառայությունների ամենալայն տեսականին, իսկ բջջային հավելվածներն արդեն օգտագործվում են որպես այս պորտալների հետ կապի լրացուցիչ ձև: Որոշ դեպքերում էլեկտրոնային կառավարության առանձին ծառայությունները կարող են խմբավորվել և առաջարկվել առանձին պորտալներից՝ հաշվի առնելով ծառայության շահառուների շրջանակը: Այսպես, հարկային հարաբերությունները կարգավորող, ավտոտրանսպորտի հետ կապված, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և ցանկացած այլ ծառայություններ կարող են կենտրոնացվել համապատասխան գերատեսչությունների կայքերում, սակայն խորը ինտեգրված էլեկտրոնային կառավարման համակարգը ենթադրում է, որ դրանց հիմքում պետք է լինեն միասնական տվյալների բազաներ[2]:

Էլեկտրոնային կառավարության համակարգում ժամանակակից զարգացումներից է նաև սոցիալական ցանցերի՝ պետական կառույցների կողմից օգտագործման դրսևորումները: Այս մոտեցման կողմնակիցները պնդում են, որ սոցիալական ցանցերում կառավարության մասնակցությունը կառավարությանը և քաղաքացիներին բերում է նույն իրավական և սոցիալական մակարդակի, ինչը նրանց շփումը դարձնում է ավելի անմիջական և ավելացնում դրա արդյունավետությունը: Ներկայումս Facebook, Twitter, կամ YouTube ցանցերում կարելի է գտնել բազմաթիվ երկրների պաշտոնական գերատեսչությունների էջեր և հրապարակումներ, որոնք ասվածի վառ ապացույցն են:

Ընդհանուր առմամբ, էլեկտրոնային կառավարության ներդրման նպատակների շարքում կարելի է առանձնացնել հետևյալները.

- ակտիվացնել կառավարության և գործակալների համագործակցությունը,
- ինտեգրել կառավարության և գործակալների կողմից օգտագործվող ինֆորմացիոն համակարգերը,
- օգնել կառավարությանը իրագործելու իր առաքելությունը և հասնելու իր առջև դրված նպատակներին,
- նպաստել համացանցի և նորագույն տեխնոլոգիաների կիրառման ընդլայնմանը,
- նպաստել կառավարության կողմից մշակվող տեղեկատվական համակարգերում քաղաքացիների և մյուս գործակալների ցանկությունների և շահերի ներառմանը,

[1] "The pros and cons of e-government". Economist. 2008-02-14.
[2] Government Technology's Public CIO Thought Leadership Profile "Expanding eGovernment, Every Day" 2006.

- նվազեցնել բիզնեսի և այլ ինստիտուտների գործառնական ծախսերը,
- նպաստել իշխանության կողմից որոշումների կայացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը,
- նպաստել կառավարության կողմից մատուցվող ծառայությունների տարբեր ուղիներով տեղաբաշխմանը,
- նպաստել կառավարուբան աշխատանքի թափանցիկության և հաշվետվողականության ավելացմանը,
- վերափոխել կառավարության աշխատաոճն ու գործիքները՝ գործակալների փոխառնելով լավագույն փորձն ու մոտեցումները,
- հնարավորություն տալ կառավարության տեղեկատվական համակարգերում իրագործել ազգային անվտանգության և անձնական տեղեկատվության գաղտնիության պահանջ-ները,
- մեկտեղել տարանջատված տեղեկատվությունն ու բացառել հակասական և ժամկետանց տվյալների առկայությունը և այլն:

էլեկտրոնային կառավարության պատրաստվածության գնահատման համար կիրառվում են տարբեր չափանիշներ և ցուցանիշներ: Դրանց թվում են Eurostat-ի, Economist պարբերականի, Brown University համալսարանի, և Միավորված ազգերի կազմակերպության e-Government Readiness Index ցուցանիշները: Վերջինս էլեկտրոնային կառավարության կայացվածության և պատրաստվածության գնահատման ամենահաճախ օգտագործվող ցուցանիշն է, որը ներկա-յացվում է ՄԱԿ-ի նույնանուն հաշվետվությունում: Վերջինս ներկայացվում է երկու տարին մեկ կտրվածքով, ընդգրկելով ՄԱԿ անդամ բոլոր երկրները: Աղյուսակում ներկայացված են 2012թ. հաշվետվության համաձայն մի շարք երկրների էլեկտրոնային կառավարության պատրաստվա-ծության գործակիցները[1]:

Տեղը	Երկիրը	Ինդեքսի արժեքը		Տեղը	Երկիրը	Ինդեքսի արժեքը
1	Կորեա	0.9283		42	Լատվիա	0.6604
2	Նիդեռլանդներ	0.9125		46	Չեխիա	0.6491
3	Մեծ Բրիտանիա	0.896		56	Արգենտինա	0.6228
4	Դանիա	0.8889		61	Բելառուս	0.609
5	ԱՄՆ	0.8687		68	Ուկրաինա	0.5653
6	Ֆրանսիա	0.8635		69	Մոլդովա	0.5626
10	Սինգապուր	0.8474		72	Վրաստան	0.5563
11	Կանադա	0.843		78	Չինաստան	0.5359
16	Իսրայել	0.81		80	Թուրքիա	0.5281
17	Գերմանիա	0.8079		91	Ուզբեկստան	0.5099
18	Ճապոնիա	0.8019		94	Հայաստան	0.4997
20	Էստոնիա	0.7987		96	Ադրբեջան	0.4984
21	Ավստրիա	0.784		99	Ղրղզստան	0.4879
23	Իսպանիա	0.777		100	Իրան	0.4876
24	Բելգիա	0.7718		122	Տաջիկստան	0.4069
27	Ռուսաստան	0.7345		125	Հնդկաստան	0.3829
28	ԱՄԷ	0.7344		126	Թուրքմենստան	0.3813
29	Լիտվա	0.7333		188	Նիգերիա	0.1119
32	Իտալիա	0.719		189	Չադ	0.1092
38	Ղազախստան	0.6844		190	Սոմալի	0.064

[1] United Nations Department of Economic and Social Affairs, "United Nations E-Government Survey 2012". New York, United Nations, 2012.

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանը 190 երկրների շարքում էլեկտրոնային կառավարման պատրաստվածության ցուցանիշով գրավում է 94–րդ հորիզոնականը: Դա նշանակում է, որ չնայած վերջին տարիներին Հայաստանում էլեկտրոնային կառավարության ոլորտում ձեռնարկվել են զգալի քայլեր, դրանք դեռևս բավարար չեն համաշխարհային մասշտաբով բարձր գնահատականներ արձանագրելու համար: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նույնիսկ ետխորհրդային երկրների շարքում Հայաստանի դիրքերը բավականին թույլ են, քանի որ Հայաստանից ցածր վարկանիշ ունեն այնպիսի երկրները, ինչպիսիք են Ադրբեջանը, Ղրղզստանը, Տաջիկստանը և Թուրքմենիան: Հետևաբար անհրաժեշտ է ուսումնասիրություններ կատարել՝ Հայաստանի նման ցածր վարկանիշի հիմքում ընկած գործոնները պարզելու և դրանց հաղթահարման ուղիներ մշակելու ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա կյանքի կոչել էլեկտրոնային կառավարության ընձեռած բոլոր դրական հետևանքները:

Айк Маркосян

КОНЦЕПЦИЯ ЭЛЕКТРОННОГО ПРАВИТЕЛЬСТВА

Аннотация

Информационная революция 20-ого века нашла свое отражение также в системе государственного управления, обеспечив развитие концепции формирования электронного правительства. Электронное правительство, как новый подход к организации общественных услуг, повышает эффективность государственного управления. Несмотря на то, что за последние годы в Армении предприняты существенные шаги в направлении внедрения электронного правления, Армения по данному показателю занимает 94 позицию среди 190 стран мира, что означает, эти шаги еще не достаточны для фиксации в мировом масштабе высоких оценок.

Hayk Markosyan

THE CONCEPT ON E-GOVERNANCE

Abstract

The information revolution in the 20th century affected the system of public administration, thus stressing the need for note on the e-governance. E-governance, as a new approach to provision of public services increases the efficiency of public administration. Although Armenia has reported a significant progress in having a well-designed e-governance system, Armenia is ranked 94th among 190 nations taking into account E-Government Readiness Index, which means that the initiated measures are not enough to report higher rankings.

ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀՊՏՀ գիտության բաժնի պետ, պ.գ.թ.

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀՊՏՀ հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի ասիստենտ

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Զբոսաշրջային հոսքերը սովորաբար մեկնաբանվում են պահանջարկի գործոններով, որոնցից են եկամուտների աճը զարգացած պետություններում և այցելուների նախասիրությունների փոփոխությունները: Սակայն այս տեսանկյունն արդարացված է կարճաժամկետ կանխատեսումներում, այն դեպքում, երբ երկարաժամկետում առավել խոր հետազոտությունների կարիք է զգացվում, որպեսզի հնարավոր լինի պարզել, թե ինչու են որոշ երկրներ առավել գրավիչ զբոսաշրջության տեսանկյունից, քան մյուսները:

Առևտրային հարաբերությունների տեսանկյունից խնդիր է դրվում ուսումնասիրել, թե ինչու են որոշ երկրներ արտահանում որոշակի ապրանքներ, իսկ այլոք՝ ոչ: Չնայած առևտրային հարաբերությունները հայտնի են մարդկային քաղաքակրթությունների ակունքներից, այնուամենայնիվ միայն վերջերս են մասնագետները փորձում հասկանալ, թե ինչ պետք է արտադրեն առանձին երկրները և ում օգնությամբ: Ադամ Սմիթի բացարձակ առավելության և Դավիթ Ռիկարդոյի հարաբերական առավելությունների տեսությունները ճանապարհ հարթեցին այս հետազոտությունների համար, սակայն միայն XX դարում Հեկշեր-Օհլինի տեսությունը հիմնավորեց, որ երկրները պետք է արտահանեն այն ապրանքները, որոնց արտադրության գործոնները բավարար են:

Մինչ այս տեսությունները փորձում են մեկնաբանել արտաքին առևտրի աճող ծավալները, ծառայությունների հատվածը դրսևորում է ծավալների առավել առաջանցիկ աճի տեմպ: Հաղորդակցման տեխնոլոգիաների կատարելագործումը հնարավորություն ստեղծեց վաճառել այն, ինչը նախկինում համարվում էր «չվաճառվող»: 1995թ. ստորագրված Ծառայությունների առևտրի ընդհանուր համաձայնագիրը (GATS-General Agreement on Trade-in Service) տնտեսության այս հատվածի արագ աճի վառ ապացույցն էր: Սակայն մինչ օրս քիչ է ուսումնասիրված, թե ինչու են որոշ երկրներ մասնագիտացել ծառայությունների կամ դրանց որոշ տեսակների արտահանման վրա, իսկ մյուսները՝ ոչ: Արդյո՞ք վերոնշյալ առևտրային տեսությունները կիրառելի են նաև ծառայությունների ոլորտի ուսումնասիրությունների համար և վկայում են առանձին պետությունների ծառայությունների ոլորտում հարաբերական առավելությունների մասին:

Ընդ որում, եթե ապրանքային առևտուրն ունի տարեկան 7% միջին աճ, ապա ծառայությունների արդյունաբերությունը ապահովում է տարեկան մոտ 8% աճ: Այս ցուցանիշների ձեռքբերման գործընթացում ճանապարհորդության ցուցանիշն էական դեր ունի:

Չնայած ոչ բոլոր պետություններն են օգտվում այս ցուցանիշների արդյունքներից, այնուամենայնիվ, աղքատ երկրները ստանում են իրենց մասնաբաժինը: Մասնավորապես, ասիական և աֆրիկյան երկրները ապահովում են համաշխարհային միջին արդյունքները: Այսպիսով, հասկանալով ճանապարհորդական ծառայությունների բաղադրիչները կամ երկրի ճանապարհորդությունների ծառայությունների արտահանման մրցակցային առավելությունները, կարելի է բացահայտել զբոսաշրջության արտահանման քաղաքականության գերակայությունները:

Այս հիպոթեզը դրդում է բացահայտել երկրների հարաբերական մրցակցային առավելությունները ծառայությունների, մասնավորապես՝ զբոսաշրջության, ոլորտում: Այն ապացուցելու համար դիտարկել ենք Ռիկարդյան հարաբերական առավելությունների ստանդարտ բնութագրող փոփոխականները (արտադրության գործոններ՝ ներառյալ բնական միջավայրը), ինչպես նաև ենթակառուցվածքը, առողջությունը, անվտանգությունը, զբոսաշրջային առաջնահերթությունը և այլ փոփոխականներ: Դիտարկվել են նաև նոր փոփոխականներ, մասնավորապես տարածաշրջանային զբոսաշրջային կլաստերները:

Զբոսաշրջության վերաբերյալ գրականությունը հիմնականում զարգացման հիմքը դիտարկում է պահանջարկի գործոնները՝ զբոսաշրջային հոսքերի կանխատեսմամբ (նույն սկզբունքն է կիրառվում նաև ՀՀ-ում)[1]: Միևնույն ժամանակ, կիրառվում են առաջարկի գործոնները, որպեսզի մեկնաբանվեն զբոսաշրջային հոսքերը, ինչը ենթադրում է բնական միջավայրի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների ուսումնասիրությունը:

Ծառայությունների առևտուրը ներառում է մի շարք ոլորտներ: Արժույթի միջազգային հիմնադրամի Վճարումների հաշվեկշռի ուղեցույցում (5-րդ հրատարակություն) առանձնացվում են ծառայությունների 11 ենթախմբեր.

- տրանսպորտ,
- ճանապարհորդություն,
- այլ ծառայություններ, որը ներառում է՝
  - հաղորդակցություն,
  - շինարարություն
  - ապահովագրություն,
  - ֆինանսներ,
  - տեղեկատվություն և բարձր տեխնոլոգիական ծառայություններ,
  - ռոյալթի և լիցենզավորում,
  - այլ գործարար ծառայություններ[2],
  - անհատական, մշակութային և վերականգնողական ծառայություններ,
  - պետական ծառայություն[3]:

Աղյուսակ 1

Արտահանման համաշխարհային ցուցանիշները ըստ ծառայությունների տեսակների, տոկոս[4]

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Տրանսպորտ	22	22	22	23	20	21	20	20
Ճանապարհորդություն	27	26	25	25	25	24	25	25
Հաղորդակցություն	2	3	2	3	3	3	3	3
Շինարարություն	2	2	3	3	3	3	3	3
Ապահովագրություն	2	2	2	2	3	3	2	2
Ֆինանսներ	7	8	9	8	8	7	7	7
Տեղեկատվություն և բարձր տեխնոլոգիական ծառայություններ	4	4	5	5	6	6	6	6
Ռոյալթի և լիցենզավորում	6	6	6	6	7	7	7	7
Այլ գործարար ծառայություններ	24	24	24	24	25	25	25	26
Անհատական, մշակութային և վերականգնողական ծառայություններ	1	1	1	1	1	1	1	1
Պետական ծառայություն	2	2	2	2	2	2	2	2

[1] Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ: Երևան, 2008 // http://mineconomy.am/uploades/conceptpaper.pdf
[2] Ներառում է բոլոր այն առևտրային ծառայությունները, որոնք ներառված չեն մյուս խմբերում, մասնավորապես՝ միջնորդություններ, լիզինգ և վարձակալություն, ինժեներական, նախագծման և այլ ծառայություններ:
[3] Balance of Payments Manual. International Monetary Fund // http://www.imf.org/external/pubs/ft/bopman/bopman.pdf
[4] Տվյալները հավաքագրված են Միացյալ ազգերի առևտրի և զարգացման վիճակագրական կայքից: // http://unctadstat.unctad.org/TableViewer/tableView.aspx

Ընդ որում ճանապարհորդությունը արտահանվում է ժամանման վայրում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների ամբողջության տեսքով, սակայն չի ներառում ժամանման վայր հասնելու տրանսպորտային ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջիկների տեղափոխումը ժամանման վայրում, որոնք ներառված են տրանսպորտային ծառայությունների կազմում: Այդուհանդերձ դրանք էական մասնաբաժին ունեն ծառայությունների ընդհանուր արտահանման մեջ:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ի տվյալները, ճանապարհորդության արտահանմանը գերազանցում է միայն «Այլ գործարար ծառայություններ» ենթաբաժինը, որը ներառում է մի շարք ծառայությունների համալիր:

ՀՀ ծառայությունների արտահանման ցուցանիշները մի փոքր այլ արդյունքներ են ցույց տալիս: Այստեղ ծառայությունների ընդհանուր ծավալի կեսից ավելին բաժին է ընկնում հենց ճամփորդություններին, սակայն սա դեռ չի վկայում ՀՀ զբոսաշրջության ոլորտի զարգացվածության մասին, ավելի շուտ այն ծառայությունների մյուս տեսակների փոքր ծավալների արդյունք է:

Աղյուսակ 2

Արտահանման հայաստանյան ցուցանիշները ըստ ծառայությունների տեսակների, տոկոս[1]

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Տրանսպորտ	22,4	21,1	22,9	21,3	18,4	20,5	21,4	21,5
Ճանապարհորդություն	53,5	55,9	52,6	51,2	56,7	53,6	54,0	54,7
Հաղորդակցություն	6,9	4,7	7,1	9,6	8,8	8,5	5,6	3,9
Շինարարություն	2,6	2,1	1,9	2,2	1,3	1,1	1,0	1,0
Ապահովագրություն	2,9	3,0	2,5	2,4	1,8	1,7	2,3	2,3
Ֆինանսներ	0,8	0,7	0,7	0,6	0,9	0,9	1,0	0,5
Տեղեկատվություն և բարձր տեխնոլոգիական ծառայություններ	5,5	6,8	7,5	7,8	7,3	8,3	6,8	8,0
Ռոյալթի և լիցենզավորում	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a
Այլ գործարար ծառայություններ	2,3	2,6	2,1	2,2	2,2	1,3	2,6	2,6
Անհատական, մշակութային և վերականգնողական ծառայություններ	1,2	1,1	1,0	1,1	1,1	2,5	2,3	2,3
Պետական ծառայություն	2,0	2,0	1,6	1,5	1,6	1,6	3,0	3,2

Դիտարկելով Հայաստանի, սահմանակից երկրների և մի շարք այլ զբոսաշրջային կենտրոնների ճանապարհորդության արտաքին շրջանառությունը, ակնհայտ է դառնում, որ ընտրված 13 երկրներից միայն Հայաստանն է, որ որևէ դերակատարում չունի ճանապարհորդությունների համաշխարհային շրջանառության մեջ (աղյուսակ 3):

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ Մեծ Բրիտանիան և Գերմանիան առավելապես ճանապարհորդություններ ներմուծող, քան արտահանող երկրներ են: Նշենք, որ 2013թ. Զբոսաշրջության մրցունակության զեկույցի տվյալների համաձայն, Գերմանիան և Մեծ Բրիտանիան առավել մրցունակ երկրներից են, զբաղեցնում են համապատասխանաբար 2-րդ և 5-րդ տեղերը:

Ըստ վիճակագրական տվյալների 2012թ. հունվար-դեկտեմբերին Հայաստան է ժամանել 843 330 զբոսաշրջիկ, իսկ հանրապետությունից մեկնել է 806 555 մարդ: Զբոսաշրջային հոսքերի նման իրավիճակում արտահանման և ներմուծման ծավալների տարբերությունը վկայում է ՀՀ զբոսաշրջային ենթակառուցվածքների թերի զարգացման մասին, ինչը հնարավորություն չի տալիս ՀՀ տնտեսությանը ապահովել պոտենցիալ եկամուտներ, մասնավորապես 2012թ. զբոսաշրջիկների հաշվեկշիռը 36 775 մարդ է, իսկ գումարային առումով՝ -34 մլն ԱՄՆ դոլար:

Այստեղ անհրաժեշտություն է առաջանում հաշվարկել, թե որքան է ծախսում յուրաքանչյուր զբոսաշրջիկ. կստանանք աղյուսակ 4-ում ներկայացված պատկերը.

[1] Տվյալները հավաքագրված են Միացյալ ազգերի առևտրի և զարգացման վիճակագրական կայքից: // http://unctadstat.unctad.org/TableViewer/tableView.aspx

Աղյուսակ 3

2012թ. ճանապարհորդության արտաքին շրջանառության ցուցանիշները[1]

	Ճանապարհորդության արտահանման ծավալները, մլն ԱՄՆ դոլար	Տոկոսը ծառայությունների արտահանման մեջ	Արտահանման մասնաբաժինը համաշխարհային ճանապարհորդությունների մեջ	Ճանապարհորդության ներմուծման ծավալները, մլն ԱՄՆ դոլար	Տոկոսը ծառայությունների ներմուծման մեջ	Ներմուծման մասնաբաժինը համաշխարհային ճանապարհորդությունների մեջ
Ֆրանսիա	53,724	25,4	4,8	37,18	21,5	3,7
Իտալիա	41,22	39,5	3,7	26,177	24,5	2,6
Գերմանիա	38,107	14,6	3,4	83,861	28,5	8,4
Մեծ Բրիտանիա	36,614	12,9	3,3	52,732	29,3	5,3
Թուրքիա	23,819	55,7	2,1	4,173	20,2	0,4
Ռուսաստան	11,187	18,9	1	42,798	40,3	4,3
ԱՄԷ	10,38	68,9	0,9	8,741	13,7	0,9
Չեխիա	7,009	31,8	0,6	4,294	22,6	0,4
Դանիա	6,161	9,5	0,6	9,347	16,2	0,9
Իսրայել	5,146	17,3	0,5	3,436	16,8	0,3
Ադրբեջան	2,433	56,8	0,2	2,477	34,4	0,2
Վրաստան	1,411	55,5	0,1	256	17,8	0
Հայաստան	451	54,7	0	485	42	0

Աղյուսակ 4

Ներգնա զբոսաշրջությունը, դրանից ստացված եկամուտները 2012թ.[2]

	Ներգնա զբոսաշրջիկները 2012թ., մարդ	Եկամուտը ներգնա զբոսաշրջությունից, ԱՄՆ դոլար	Մեկ զբոսաշրջիկից ստացված միջին եկամուտը, ԱՄՆ դոլար
Իսրայել	2886000	5493000000	1903
Գերմանիա	30400000	38114000000	1254
Մեծ Բրիտանիա	29300000	36373000000	1241
Ադրբեջան	1986000	2433000000	1225
ԱՄԷ	8977000	10380000000	1156
Իտալիա	46400000	41185000000	888
Դանիա	7363000	6162000000	837
Չեխիա	8908000	7035000000	790
Վրաստան	1790000	1411000000	788
Թուրքիա	35700000	25653000000	719
Ֆրանսիա	83000000	53697000000	647
Հայաստան	843000	451000000	535
Ռուսաստան	25700000	11187000000	435
Միջինը	***21788692***	***18428769231***	***955***

[1] Տվյալները հավաքագրված են Միացյալ ազգերի առևտրի և զարգացման վիճակագրական կայքից: // http://unctadstat.unctad.org/TableViewer/tableView.aspx

[2] Տվյալները վերցված են UNWTO. Tourism Highlights 2013 Edition. // http://dtxtq4w60xqpw.cloudfront.net/sites/all/files/pdf/unwto_highlights13_en_hr_0.pdf

Ինչպես ցուց են տալիս աղյուսակի տվյալները, առավել քիչ գումարներ են ծախսվում Ռուսաստանում, այնուհետև՝ Հայաստանում: Ներգնա ճանապարհորդություններից առավել մեծ եկամուտներ է ապահովում Ֆրանսիան՝ բացարձակ մեծությամբ, սակայն արտադրողականության տեսանկյունից առավել բարձր ցուցանիշներ է ապահովում Իսրայելը, որը Ֆրանսիայի հետ համեմատությամբ ապահովում է յուրաքանչյուր զբոսաշրջիկից 2,9 անգամ ավելի եկամուտներ: 1,9 անգամ ավել եկամուտ են ապահովում Ադրբեջանը, Մեծ Բրիտանիան և Գերմանիան: Հայաստանը և Ռուսաստանը առավել քիչ եկամուտներն են ստանում՝ չապահովելով անգամ Ֆրանսիայի՝ մեր կողմից ընտրված բազային ցուցանիշը: Ստացված եկամուտների հարաբերակցության ճշտության ապահովման համար, նշենք, որ մեր թվարկած երկրների շարքում զբոսաշրջության համար առավել թանկ 50 քաղաքներից են Մոսկվան՝ 4-րդ տեղ, Կոպենհագենը՝ 21-րդ, Լոնդոնը՝ 25-րդ, Թել Ավիվը՝ 31-րդ, Փարիզը՝ 37-րդ, Հռոմը՝ 42-րդ և Բաքուն՝ 49-րդ, ինչը ենթադրում է միջինից բարձր զբոսաշրջային ծախսումներ[1]: Չնայած այս տվյալներին, ըստ 2013թ. Զբոսաշրջության մրցունակության համաթվի գնային մրցունակության ենթահամաթվով (աղյուսակ 5) Ռուսաստանն ու Ադրբեջանը առավել բարձր դիրքերում են քան Հայաստանը, սակայն մեր երկիրը առավել մրցունակ է քան դիտարկվող եվրոպական երկրները:

Աղյուսակ 5

Գնային մրցունակությունը 2012թ.[2]

	Զբաղեցրած տեղը	Գնահատականը
ԱՄԷ	35	4,90
Վրաստան	52	4,67
Ռուսաստան	72	4,54
Ադրբեջան	77	4,47
Հայաստան	80	4,44
Չեխիա	99	4,23
Թուրքիա	112	3,98
Գերմանիա	125	3,70
Իսրայել	133	3,41
Իտալիա	134	3,40
Դանիա	135	3,33
Մեծ Բրիտանիա	138	3,05
Ֆրանսիա	140	2,96

2013թ. Զբոսաշրջության մրցունակության զեկույցի տվյալներով մեր ընտրած երկրները ստացել են աղյուսակ 6-ում ներառված գնահատականները:

Ինչպես կարող ենք տեսնել, կանոնակարգող դաշտ ենթահամաթվի տվյալներով առավել բարձր դիրքերում է գտնվում Գերմանիան՝ 8-րդ հորիզոնական: Առավել ցածր ցուցանիշը Ռուսաստանինն է՝ 92-րդ հորիզոնական: Հայաստանը 51-րդ տեղում է: Հետաքրքրական է, որ 50-րդ հորիզոնականում Իտալիան է, որը չնայած ապահովում է մեծ եկամուտներ և զբոսաշրջային հոսքեր, այնուամենայնիվ, իր գնահատականով ընդամենը 0,02 միավորով է գերազանցում Հայաստանին:

Բիզնես միջավայր և ենթակառուցվածք համաթվով մեր ցուցակի առաջատարը կրկին Գերմանիան է, սակայն այստեղ հետնապահը արդեն Հայաստանն է՝ 88-րդ հորիզոնականում:

---

[1] Which is the world's most expensive city? Cost of living survey 2012 // http://www.theguardian.com/news/datablog/2012/jun/12/city-cost-of-living-2012-tokyo

[2] World Economic Forum. The Travel and Tourism Competitiveness Index 2013 Data Analyzer. B.10 Price competitiveness in T&T ind. // http://www.weforum.org/issues/travel-and-tourism-competitiveness/ttci-platform

Աղյուսակ 6

Զբոսաշրջության մրցունակության համաթիվը ըստ 2013թ. Զբոսաշրջության մրցունակության զեկույցի[1]

	Զբաղեցրած տեղը	Ընդհանուր գնահատականը	Կանոնակարգող դաշտ		Բիզնես միջավայր և ենթակառուցվածք		Մարդկային, բնական և մշակութային ռեսուրսներ	
Գերմանիա	2	5,39	8	5,57	6	5,29	7	5,31
Մեծ Բրիտանիա	5	5,38	17	5,44	10	5,13	3	5,57
Ֆրանսիա	7	5,31	9	5,56	7	5,18	11	5,2
Դանիա	21	4,98	25	5,31	16	4,98	26	4,64
Իտալիա	26	4,9	50	4,9	29	4,76	14	5,05
ԱՄԷ	28	4,86	45	4,95	9	5,14	35	4,51
Չեխիա	31	4,78	28	5,24	37	4,49	28	4,61
Թուրքիա	46	4,44	64	4,62	52	4,08	27	4,63
Իսրայել	53	4,34	36	5,07	51	4,08	71	3,86
Ռուսաստան	63	4,16	92	4,24	46	4,22	58	4,02
Վրաստան	66	4,1	30	5,18	80	3,46	91	3,67
Ադրբեջան	78	3,97	46	4,94	87	3,34	96	3,63
Հայաստան	79	3,96	51	4,88	88	3,34	94	3,65

Մարդկային, բնական և մշակութային ենթահամաթվով առաջատարը Մեծ Բրիտանիան է, իսկ հետնապահը՝ Ադրբեջանն է, այն դեպքում, երբ Հայաստանը նախավերջինն է՝ 94-րդ հորիզոնականում:

Ուշագրավ է նաև մեկ այլ հետազոտություն, որն իրականացվել է զբոսաշրջության ոլորտում երկրների մրցակցային առավելությունները բացահայտելու համար: Ըստ այդ հետազոտության արդյունքների 146 երկրների շարքում Գերմանիան վերջինն է և չունի որևէ մրցակցային առավելություն, ի տարբերություն Հայաստանի, որն ունի մրցակցային առավելություն, չնայած՝ թույլ: Մրցակցային առավելությունները դիտարկվել են ինչպես ընդհանուր տնտեսական, այնպես էլ զբոսաշրջային ռեսուրսների և արդյունքների վերլուծության արդյունքում (աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Երկրների մրցակցային առավելությունները[2]

	Զբաղեցրած դիրքը	Հարաբերական մրցակցային առավելությունը	Հարաբերական առավելությունների նորմավորված ցուցանիշ
Թուրքիա	3	Շատ ուժեղ	0,0010212
Ֆրանսիա	4	Շատ ուժեղ	0,0010083
Իտալիա	6	Ուժեղ	0,0008342
Վրաստան	61	Միջին	0,0000125
Հայաստան	74	Թույլ	0,00000571
Չեխիա	106	Չունի	-0,0000119
Ադրբեջան	110	Չունի	-0,0000152
Իսրայել	113	Չունի	-0,0000299
Մեծ Բրիտանիա	124	Չունի	-0,000102
Դանիա	127	Չունի	-0,0001295
Ռուսաստան	138	Չունի	-0,0006763
Գերմանիա	146	Չունի	-0,0024941
ԱՄԷ	n/a	n/a	n/a

[1] http://www3.weforum.org/docs/TTCR/2013/TTCR_OverallRankings_2013.pdf

[2] Leon du Toit, Johan Fourie and Devon Trew. The Sources of Comparative Advantage in Tourism. Stellenbosch Economic orking Papers: 01/10.

Հետաքրքրական է, որ մրցակցային առավելություններ չունեցող երկրների շարքում են նաև Իսրայելը և Չեխիան, որոնք ապահովում են բավականաչափ եկամուտներ ճանապարհորդություններից:

Հաշվի առնելով վերոբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, մեր կարծիքով, առաջնային կարևորություն են ստանում զբոսաշրջային ենթակառուցվածքի և բիզնես միջավայրի բարելավման գործընթացները՝ ՀՀ զբոսաշրջային շուկայի մրցունակության բարձրացման տեսանկյունից: Այն, որ Հայաստանի Հանրապետությունն ունի մրցակցային առավելություններ զբոսաշրջային շուկայում, և այն, որ մեր երկիրը կարող է առաջարկել մրցունակ զբոսաշրջային արդյունք, կասկածներ չի հարուցում, սակայն առանց արդյունավետ օրենսդրահիրավական կարգավորման մեխանիզմների, առանց ժամանակակից ենթակառուցվածքների և վստահելի գործարար միջավայրի խնդրահարույց է դառնում միջազգային շուկայի լիիրավ մասնակից լինելու հնարավորությունը:

Хорен Мхитарян
Рубен Айрапетян
Асмик Амбарцумян

СРАВНИТЕЛЬНЫЕ КОНКУРЕНТНЫЕ ПРЕИМУЩЕСТВА В СФЕРЕ ТУРИЗМА

Аннотация

Хотя торговые отношения стали известны человечеству со времен существования первых цивилизаций, но только в последнее время эксперты пытаются понять, какие именно товары и услуги конкретные страны должны производить и как. Тем не менее, до сих пор еще очень мало изучен вопрос о том, почему некоторые страны специализируются на экспорте тех или иных услуг или их типов, а другие нет. Этот вопрос подразумевает определение и изучение сравнительных конкурентных преимуществ в сфере услуг, в частности, в сфере туризма. Для объяснений и комментарий по этому вопросу, в данной статье рассмотрены типовые переменные сравнительных преимуществ Рикардо. Рассмотрены также некоторые новейшие переменные, в частности, региональные туристические кластеры.

Khoren Mkhitaryan
Ruben Hayrapetyan
Hasmik Hambardzumyan

COMPARATIVE COMPETITIVE ADVANTAGES IN TOURISM INDUSTRY

Abstract

Although trade relations are known to humanity ever since the creation of first civilizations, but only recently experts have been trying to understand which goods and services certain countries should produce and how. However, so far very little has been studied on why certain countries are specialized in exports of certain services or their certain types, while others are not. This hypothesis is proposed to identify the comparative competitive advantages in service sector, particularly in tourism industry. To prove it, the article considers and discusses standard variables that are used to explain Ricardo's theory of comparative advantage. New variables have also been considered and discussed, in particular, regional tourism clusters.

SHAHRAM TARJOMAN

Ph.D. Student at the M.Kotanyan Institute of Economics
National Academy of Scineces, Republic of Armenia

ISSUES AND CONSTRAINTS HINDERING TOURISM DEVELOPMENT IN LAHIJAN CITY

Tourism Industry is an important source of income. Therefore, in order to benefit from this huge industry, it is required to study strategies for removing the constraints and bottlenecks the industry faces to report growth. Study of constraints, hindering tourism development and eliminating them is the first step towards attracting tourists.

This requires sufficient capital and tourism planning. Lahijan city is located in the Northern Iran and it has many sites attractive for tourists for mountaineering and climbing, winter sports, for visiting villages and tribes, hunting, and etc. Proper management practices and attracting and training specialized workforce, could make it possible to attract many tourists to this beautiful city. For the purpose of the study the Independent variables are constraints and bottlenecks that hinder tourism development such as: workforce, services and facility constraints.

In studying these constraints, the following causes are mentioned based on previous survey results. Certainly, this is not the complete list of all constraints and it is likely that there are others as well that are not addressed by the author: lack of training of the workforce, not employing the skilled workforce, lack of proper advertisement and awareness, lack of high-quality training programs, no increase in hotel/residential capacity in terms of rooms available, reception service, tourism agencies, transportation system, notification system and travelers' guidance, lack of renovated and reconstructed tourism facilities, water supply and other sanitary services, reconstruction and renovation of guest houses and rooms/houses for rent provided by households/individuals, improvement of parking spaces along the roads, required maintenance of attractions and lack of infrastructure and equipment. What has been mentioned with respect to workforce, services and facility constraints can be minimized by efforts and aspiration and it is possible satisfy of local residents and tourists. The dependent variable is Tourism and Lahijan city's development.

The current study attempts to answer following research question:

What are the problems, issues and constraints, hindering tourism development in Lahijan city and what are the strategies to eliminate them? The research hypotheses are:

1. There is a correlation between removing the constraints hindering tourism development and Lahijan city's development.
2. There is a correlation between elimination of bottlenecks hindering tourism development and Lahijan city's development.
3. it's possible to support the development of Lahijan city through recognizing and planning the tourism development processes.

In the current study, descriptive and inferential statistical tools are utilized to calculate correlations, process survey data, and etc. Fieldwork is chosen for the purpose of this study. 150 survey questionnaires were disseminated among respondents.

Introduction

Rapid growth of tourism industry has led many scholars to call the 20th century a "Tourism Century". From viewpoint of tourism professionals, a revolution in tourism industry would occur in the late 20th and early 21st century, affecting each nation. Upon identifying the potential, it is required to take steps to remove development constraints so that many tourists will be attracted to

a given area, will be provided with safety conditions and security, thus on other occasions they will be encouraged to return to the same place.

Given the fact that area of interest (Lahijan city) has various tourism attractions, and high potential, it is required to study the constraints and bottlenecks hindering the development and to contribute to economic growth, thus increasing the incomes and employment rate in the region, preventing the interanl migration, and etc. Authorities are required to take steps to remove these constraints or minimize the impact. The purpose of this study is to identify problems and constraints hindering tourism development in Lahijan, and the impact of independent variables on the dependent variable.

Research Objective

Tourism attracts capital, increases national income, employment rate, results in development, cultural and social exchange, and etc. But economic activity is so broad that it requires involvement of all interested institutions, organizations and corporations. Tourism planning is of special importance. Tourism development, particularly in developing countries can reduce poverty, increase the incomes of various income groups, decrease the rate of unemployment and lead to economic development, thus, to improving the quality of life. Some scholars have estimated that tourism receipts will amount up to $2,000 billion dollars in 2020. The importance of tourism should not be neglected. Many consider importance of tourism from the point of view of providing income and job opportunities. With planning and programmed development, tourism is able to lead to improved social justice index scores, better life style, social welfare, and reduce regional disparity. Our country also has considerable unaddressed capabilities for tourism development and given the importance of tourism, planning, paying attention to this sector is inevitably essential. The progress in tourism development will attract various global, national and regional players.

An efficient factor for this purpose is having diverse tourism attractions. Lahijan city is an attractive region with historic, religious sites, cultural and religious heritage, variety of languages and local dialects, and etc. But the fact is that attractions are required for tourism development, it is not enough. Tourism development at the national level leads to economic development, growth in employment and increase in household income.

The current study attempts to answer following research question:

What are the problems, issues and constraints, hindering tourism development in Lahijan city and what are the strategies to eliminate them?

Methodology

In the current study, descriptive and inferential statistical tools are utilized to calculate correlations, process survey data, and etc. The data were processed using Excel and SPSS. Fieldwork is chosen for the purpose of the study. 150 survey questionnaires were disseminated among respondents.

Hypothesis testing

The first hypothesis is: there is a correlation between removing the constraints hindering tourism development and Lahijan city's development.

$H_0 : \mu = 0$	There is no correlation between removing the constraints hindering tourism development and Lahijan city's development.
$H_1 : \mu \neq 0$	There is a correlation between removing the constraints hindering tourism development and Lahijan city's development.

Due to the fact that variables used (constraints and bottlenecks and development) are ordinal and interval with a likert scale, spearman index has been used to calculate the correlation between variables. This index range is range is: $-1 \leq rs \leq 1$ and it is symmetrical.

Table 1

Spearman correlation coefficient for removing constraints hindering development and Lahijan city development

Spearman's rho	0.462
Sig	0.000
N	329

The calculated spearman coefficient is 0.462. The sig is lower than 0.01: Sig0.000 < 0.01. It can be stated with 99% confidence, that there is a positive correlation between removing the constraints, hindering tourism development and Lahijan city development. Then, with error less than 0.01% and 99% confidence, H_0 is rejected and H_1 is accepted.

Second hypothesis testing

H_2: There is a correlation between elimination of bottlenecks hindering tourism development and Lahijan city's development.

$H_0 : \mu = 0$	There is no correlation between elimination of bottlenecks hindering tourism development and Lahijan city's development.
$H_1 : \mu \neq 0$	There is a correlation between elimination of bottlenecks hindering tourism development and Lahijan city's development.

Table 2

Spearman correlation coefficient for elimination of bottlenecks hindering tourism development and Lahijan city's development

Spearman's rho	0.429
Sig	0.000
N	329

The spearman coefficient is 0.429. The sig is smaller than 0.01: Sig: 0.000 < 0.01.

Thus, it can be stated with 99% confidence that, there is a positive correlation between elimination of bottlenecks hindering tourism development and Lahijan city's development. So, with the error lower than 0.01 and 99% coefficient, H_0 is rejected and H_1 is accepted.

Third hypothesis testinging

It's possible to support the development of Lahijan city through recognizing and planning the tourism development processes.

$H_0 : \mu = 0$	It's not possible to support the development of Lahijan city through recognizing and planning the tourism development processes.
$H_1 : \mu \neq 0$	It's possible to support the development of Lahijan city through recognizing and planning the tourism development processes.

Since planning for tourism development variables are qualitative, testing of this hypothesis can be performed descriptively. 89% of respondents (see table 3) believed that it is possible to support the development of the city through recognizing and planning tourism development processes.

Overall, 90.5% of respondents affirmed the accuracy of the hypothesis, only 9.3% of them rejected it. Thus, it is possible to state that with more than 90% the hypothesis is correct. Hence, H_0 is rejected and H_1 is accepted.

Table 3

Correlation between recognizing and planning tourism development processes and Lahijan city's development

Description	Frequency				%			
	Very high	High	Low	Very low	Very high	High	Low	Very low
Rural and urban families	81	74	13	6	46.5	42.5	7.4	3.4
Rural and urban managers	47	47	4	3	46.5	46.5	3.9	2.9
Citywide	128	121	17	9	46.5	44	6.1	3.2

Source: Survey results, 2012.

Conclusions and Recommendations

Tourism industry is the largest service industry worldwide. Tourism receipts are very high and play an important role in improving the social welfare, creating employment opportunities and reducing unemployment rate, preventing internal migration of people from villages and small towns to large cities, developing infrastructure and resulting in economic development, thus improving the quality of life in cities and villages, increasing the life expectancy, and etc. The author proposes the followings:

1. Increase IT penetration rate and improve the road infrastructure to have an access to various sites and attraction;
2. Reconstruction and renovation of guest houses and rooms/houses for rent provided by households/individuals and increase the quality of services provided to tourists;
3. Create a network of road-signs and information billboards to assist travelers across the city, and etc.;
4. Raise culture awareness in the society;
5. Adequate preservation of natural attractions/sites by allocating the required resourcing;
6. Restoring and renovating the historic sites;
7. Holding sport events and various local festivals.

Շահրամ Թարջման

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԼԱՀԻՋԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Ամփոփագիր

Զբոսաշրջության ոլորտը, հանդես գալով որպես եկամտի կարևորագույն աղբյուր, միաժամանակ նպաստում է տարբեր ազգերի միջև մշակութային ավանդույթների փոխանակման գործընթացին: Տնտեսական ու սոցիալական բարձր չափանիշներով կազմակերպված զբոսաշրջության ոլորտը աշխարհի տարբեր վայրերում զարգացնում է մարդկանց ճաշակ ու թելա-

դրում է ինքնատիպ մտածելակերպ: Զբոսաշրջության ոլորտը կայուն և արագ զարգացող ոլորտ է: Իրանի Իսլամական Հանրապետությունն իր հարուստ պատմամշակութային ռեսուրսներով կարող է ակտիվորեն ներգրավվել և իր արժանի տեղը զբաղեցնել զբոսաշրջության համաշխարհային շուկայում:

Шаграм Тарджоман

ПРОБЛЕМЫ И ОГРАНИЧЕНИЯ РАЗВИТИЯ ТУРИЗМА В ГОРОДЕ ЛАГИДЖАН

Аннотация

Сфера туризма, являясь важнейшим источником доходов, одновременно способствует процессу обмена культурных традиций между различными нациями. Высокие социальные и экономические критерии, лежащие в основе организации сферы туризма, развивают вкус у людей в различных уголках мира и диктуют своеобразное мышление. Туризм является стабильной и быстро развивающейся сферой. Исламская Республика Иран со своими богатыми историко-культурными ресурсами может быть активно вовлечена и занимать достойную нишу в мировом туристическом рынке.

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԵՐԻՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
հանրային կառավարման ամբիոնի ավագ լաբորանտ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԷԼԻՏԱԼՈԳԻԱՅԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հանրային բոլոր կառույցների արդյունավետ գործառնության մեջ բացառիկ է անհատների, գործի գլուխ կանգնած, վճռական որոշումներ կայացնող, այլոց գործողությունները կողմնորոշող անձանց՝ առաջնորդների դերը: Դեռևս հնագույն ժամանակներից նույնիսկ այն ղեկավարները, առաջնորդները, որոնք թեոկրատական գաղափարների վրա հիմնված, համարել են, որ երկրի վրա իրենց իշխանությունը աստվածաշնորհ բարիք է, հստակ գիտակցել են, որ իշխանությունը նախ և առաջ տրված է հանրային կյանքի կարգավորման գործառույթների իրականացման համար: Այս իմաստով միանգամայն հասկանալի է հանրային և պետական կառավարման ընդհանրությունը: Ավելին, ժամանակակից ընկալման համաձայն, պետական կառավարումը էվոլյուցիոն զարգացման շնորհիվ վերածվել է հանրային կառավարման: Նշանակո՞ւմ է դա արդյոք, որ հանրության դերը բարձրացել է կառավարման իրականացման գործում: Այս, ինչպես նաև այն հարցը թե ով է իրականում կառավարում՝ մեծամասնությունը (հասարակություն), թե փոքրամասնությունը (ընտրյալ մարդկանց խումբ, անհատներ), մինչ այժմ գիտական բարձր շրջանակներում շրջանառվող հարցերից մեկն է[1]: Խնդրի վերաբերյալ գիտական, պատմական դիսկուսը կօգնի առավել հստակ պատկերացնել այն:

Պետական կառավարումը իրականացվում է պետության խնդիրները լուծելու և հասարակական գործերը կառավարելու համար: Ցանկացած հասարակություն կառավարման համակարգի և կառավարում իրականացնող, կառավարման գործընթացը վերահսկող մարդկանց կարիք ունի:

Պետության ծնունդը հենց նման պահանջ ունեցող հասարակության կողմից ստեղծված, կառավարում իրականացնող առաջին ինստիտուցիոնալ կառույցն էր: Կառավարելու գործառույթը, պետության և իշխանության ձևավորումից հետո, ստանձնում է քաղաքական էլիտան, որի համար կարևոր է կառավարման ընդունակությունը: Էլիտայի նեղ իմաստով սահմանման մեջ ընդգծվում է վերջինիս կառավարչական, քաղաքական-ադմինիստրատիվ բնույթը: Ուստի քաղաքական էլիտայի կառավարման օբյեկտը դառնում է հասարակությունը, կառավարման նպատակը՝ հասարակական ծառայությունների տրամադրումը, իսկ կառավարման սուբյեկտը՝ հասարակական կառավարման մարմինները[2]:

Էլիտարության ընդգծումը կառավարման իրականացման ժամանակ դառնում է առանցքային, քանզի հստակ է, որ դեռ վաղ ժամանակներից հասարակությունը կամ ինչպես ընդունված է օգտագործել էլիտալոգիայի բառապաշարում «մեծամասնությունը» չի կարող կառավարել: Հասարակությունը չի կարող ամեն օր զբաղվել կառավարմամբ և կառավարչական գործառույթներ իրականացնելով: Ելնելով այդ օբյեկտիվ հանգամանքից էլիտալոգիայի դասական դպրոցի հիմնադիր Նիկոլո Մաքիավելլին առանձնացրեց քաղաքականությունը որպես հասարակության

---

[1] Охотский Е. В. “Теория и механизмы современного государственного управления”, М: Издательство Юрайт, 2013г, стр 19-20.

[2] “Процесс конституционно-политической реформы в Грузии, в Армении, в Азербайджане: Политическая элита и голос народа”, Тбилиси 2005г, стр 247-248.

կենսագործունեության առանձին բնագավառ, որին մասնակցում են ընտրանու կամ էլիտայի ներկայացուցիչները:

Կառավարիչների և ենթակաների տարանջատումը հասարակության մեջ ցայսօր մնում է անփոփոխ և դրա պատճառներից մեկն էլ այն է, որ հասարակությունն ինքն է ծնում այդ հարաբերությունները, չէ որ «էլիտան մարդկանց համակեցության օրգանական ծնունդ է»[1]: Էլիտան տիրապետող դիրք ունի ցանկացած պետական ձևի, վարչակարգի և պաշտոնական գաղափարախոսության պարագայում: Այդ է պատճառը, որ դեմոկրատական տեսության համար նույնիսկ առաջնային է ոչ թե էլիտարության դեմ պայքարը, այլ հասարակության համար առավել արդյունավետ, օգտակար քաղաքական էլիտայի ձևավորման խնդիրը, հասարակության սոցիալական ներկայացուցչության ապահովումը: Այնուամենայնիվ էլիտարիզմի տեսանկյունից էլիտաների դասական կամ մաքիավելլական դպրոցի ականավոր ներկայացուցիչ Գաետանո Մոսկան թշնամաբար էր վերաբերում դեմոկրատիային՝ համարելով այն ուտոպիա, տեսիլք, ուր «ոչ բանիմաց» զանգվածները մանիպուլյացիայի օբյեկտ են դառնում: Ի դեպ, «կառավարող դաս» կատեգորիայի մեջ Գաետանո Մոսկան բացի քաղաքական էլիտայից, ներառում էր նաև ոչ քաղաքական կառուցվածքային տարրեր, ինչպիսիք են տնտեսական, հոգևոր և այլ տիպի էլիտաները[2]: Էլիտար դեմոկրատիայի տեսության կողմնակիցները պնդում են, որ էլիտան չի տիրապետում, այլ իրականացնում է կառավարում զանգվածների ինքնակամ համաձայնությամբ՝ ազատ և թափանցիկ ընտրությունների միջոցով: Էլիտաներն առաջին հերթին անհրաժեշտ են որպես բարձրորակ ղեկավարների խումբ, որոնք ընտրվում են բնակչության կողմից: Ըստ այս մոտեցման կողմնակիցների, ինքնին դեմոկրատիայի սոցիալական արժեքը կախված է էլիտայի որակից: Ղեկավարող շերտը ընդունակ է զսպել զանգվածներին բնորոշ քաղաքական և գաղափարական իռացիոնալիզմը, զգացմունքային անհավասարակշռությունը և ռադիկալիզմը: Հասարակության էլիտան ինտեգրացնում է բազմադեմ շահեր, ինչպես, օրինակ, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլն, ապահովում գործարարության (բիզնեսի), ռազմական վերնախավի, քաղաքականության և ՁԼՄ-ների միջև կապը[3]:

Կառավարման իրականացման հիմնախնդրի ուսումնասիրության փորձն ու ձեռք բերված գիտելիքները նպաստեցին դրա վերաբերյալ ժամանակակից տեսությունների զարգացմանը, մասնավորապես էլիտալոգիայի շրջանակներում: Էլիտայի և զանգվածների միջև փոխհարաբերությունները սկսում են ենթադրել ոչ այնքան քաղաքական և սոցիալական տիրապետություն, որքան կառավարում: Իսկ այդ կառավարման համար մարդկանց ընտրության հարցը դառնում է առաջնային:

Էլիտային պատկանելությունը, ըստ արժեքային տեսության ներկայացուցիչների որոշվում է հասարակական կենսագործունեության ոլորտներում ունեցած բարձր ընդունակություններով և ցուցանիշներով: Էլիտան սահմանվում է որպես յուրաքանչյուր հասարակության գլխավոր կառուցողական ուժ: Էլիտաների մասին ժամանակակից տեսություններից արժեքային տեսության կողմնակիցները պնդում են, որ էլիտայի գործառնությունը պետք է հիմնվի հանրության վստահության վրա: Ըստ նրանց, էլիտարությունը նաև ցանկացած հասարակության արդյունավետ գործառնության պայմանն է: Հասարակությունը պետք է ձգտի կատարելագործել էլիտաների ընտրության մեխանիզմները, փնտրի առավել ռացիոնալ մարդկանց հասարակության բոլոր շերտերից:

Կառավարման վերաբերյալ աջ-լիբերալիստական տեսության կողմնակիցները համոզված էին կառավարող էլիտաների լիակատար փակ կաստա լինելու մեջ: Շատ տեսաբանների համոզմամբ, կառավարում են քաղաքական ինստիտուտներում բարձր դիրք զբաղեցնող մարդիկ[4]: Կառավարող էլիտայի ձևավորման հիմքում ոչ այնքան հռչակավոր անհատական հատկանիշներն են, որքան ղեկավար պաշտոններին տիրապետելը: Կառավարող էլիտան կազմում են

---

[1] Мартышин О.В., “История политических и правовых учений”, Москва 2007г, стр 537.
[2] Моска Г., “Правящий класс. Анталогия мировой политической мысли в пяти томах”, Том 2, 1997г, стр 115.
[3] Жиков В.Н., Красов Б.И., “Общая и прикладная политология”, Москва 1997г, стр 614.
[4] Нерсесянц В.С., “История политических и правовых учений”, Москва 1988г, стр 733.

մարդիկ, ովքեր զբաղեցնում են դիրքեր, որոնք հնարավորություն են տալիս ավելի բարձր լինել սովորական մարդկանց նկատմամբ և ընդունել որոշումներ, որոնք ունեն մեծ ազդեցություն: Սոցիալական համակարգում նրանք զբաղեցնում են ռազմավարական դիրքեր, որոնցում էլ կենտրոնացած միջոցներն ու ռեսուրսները ապահովում են նրանց համար իշխանություն և հռչակ[1]: Հասարակության մյուս անդամները կարող են էլիտա մուտք գործել միայն այն դեպքում, եթե հասարակական աստիճանակարգում (հիերարխիա) զբաղեցնեն բարձր դիրքեր:

Ի հակադրություն վերը նշված կարծիքներին, նորագույն տեխնոլոգիաների փոփոխվող աշխարհում կառավարման գործառույթը, շատերի կարծիքով, պետք է ստանձնեն տեխնոկրատները: Տեխնոկրատները համոզված են, որ կառավարումը արդյունավետ կլինի միայն այն դեպքում, երբ կառավարումն իրականացվի փորձագետների, կրթված և առանձին հարցերում ավելի փորձառու մարդկանց, քան թե ընտրողների և ժողովրդի ընտրյալների կողմից[2]: Ի դեպ, տեղին է այստեղ հղում անել Պլատոնին, ով համոզված էր, որ իդեալական կառավարում կարող են իրականացնել միայն փիլիսոփաները: Իշխանությունը, համաձայն այս տեսության կողմնակիցների, պետք է փոխանցվի կառավարողների մասնագիտական շերտին՝ մենեջերներին: Մասնագիտական պատրաստվածությունը դիտարկվում է կոնկրետ հասարակական գործընթացների կառավարման համար կառավարչի կարևորագույն որակներից: Էլիտան կառավարողների, մտածողների խավ է: Քաղաքական գործընթացները բարձր մասնագիտական հմտությամբ վարելու կարողությունն էլ էլիտային դարձնում է քաղաքականության կրողն ու արարողը[3]:

Կառավարման խնդրի ուսումնասիրությունը էլիտաների մասին տեսությունների շրջանակում նպատակաուղղված էր ընդգծելու այն փաստը, որ կառավարումը միշտ և ամենուր իրականացվում է փոքրամասնության կողմից: Ինքնին էլիտաների տեսությունը համոզմունք է, որ կառավարումը գործնականում իրականացնում է փոքրամասնությունը: Կառավարում իրականացնող քաղաքական էլիտան, որը կանգնած է «համընդհանուր» շահերի պահակության վայրում, օժտված է տարբեր հատկանիշներով, առավելություններով, որոնք էլիտալոգիայի շրջանակներում շրջանառվող տեսությունների համաձայն փոքրամասնության բանալին է դեպի իշխանություն: Այդ տեսություններից յուրաքանչյուրը փորձում է տալ էլիտայի ընկալման սեփական տարբերակները, սակայն բոլորից պարզ է դառնում մեկ իրողություն, որ հասարակական կյանքի որակական փոփոխությունները, կառավարման բոլոր բնագավառներում, անհնարին են առանց կոորդինալ վերածնավորված, առանց էլիտայի կազմի մեջ մտնող մարդկանց քաղաքական և բարոյական հասուն հիմքի:

Катерина Алтунян

ВОПРОС УПРАВЛЕНИЯ В РАМКАХ ТЕОРИЙ ЭЛИТОЛОГИИ

Аннотация

Во все времена вопрос управления имел черезвычайно важное значение, особено с точки зрения эффективного функционирования общественных структур. В процессе управления отдельно подчеркивается роль индивидов, лиц принимающих решения. Однако ключевым моментом является выяснение того, кто в реальности осуществляет управление, большинство или меньшинство. После формирования государства, управление офицально берет на себя правящая элита, которая функционирует в любом государственном строе, политическом режиме. Объектом управления политической элиты становится общество, целью управления-предостовление общественных услуг, а субъектом–органы об0щественного управления. Так как общество не в состоянии ежедневно заниматься управлением, то встает вопрос о том, что нужно, для обеспечения эффективного управления. Расмотривая вопрос управления, в часности, кем осущестляется управление, в рамках теорий элитологии

[1] Мухаев Р.Т., “Политология”, Москва 1998г, стр 158.
[2] Мухаев Р.Т., “Политология”, Москва 1998г, стр 160.
[3] Մարգարյան Մ. , «Քաղաքական էլիտա», Երևան 1991թ, էջ 4:

подчеркивается тот факт, что всегда и везде управление осуществляется меньшинством. Исторический экскурс по теориям элитологии подчеркивает разные аспекты управления, таких как образованость управляющих, место индивидов в социальной иерархии, проффесиональные навыки упровляющего и т.п.

Katerina Altunyan

THE ISSUE OF GOVERNANCE IN THE ELITE THEORY

Abstract

At all times the issue of governance has had an extremely important role, especially from the point of view of efficiently functioning public institutions. In the governance process, the role of individuals is especially stressed, those who make decisions. However, the key point is who governs/rules in the reality: minority or majority. Upon establishing the state, the ruling elite are officially in charge of governing the nation that functions in any political regime or order. The object of governance by the political elite is the society in order to supply with the public goods and services, while the subjects are the public institutions. Since the society can't be engaged in the governance process on daily basis, the question becomes the following: what is required to ensure efficient governance? While considering the governance issues, namely governance by those, who rule, the theory of elite stresses the fact that always and everywhere the minority governs/rules. The review of theories of elite stresses the importance of various governance/management aspects, such as educational attainment, the role of individuals in the social hierarchy, professional managerial skills, and etc.

ՄԱՐԻՆԵ ԱՂԱՅԱՆ

ՀՊՃՀ, պ.գ.թ., դոցենտ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Տնտեսագիտական գրականության մեջ շատ է շրջանառվում իշխանության հիմնահարցը: Սակայն գրեթե միշտ առաջնային պլան է մղվում տնտեսական արդյունավետության խնդիրը՝ կապված ռեսուրսների ու բարիքների արտադրության, փոխանակության և բաշխման հետ: Պատահական չէ, որ տնտեսական արդյունավետության վրա այս կամ այն գործոնի, ինչպես օրինակ, գների, ինֆլյացիայի, տնտեսության պետական կարգավորման, սեփականության հարաբերությունների ազդեցության վերլուծությունների արդյունքում առաջացել են տեսություններ, որոնցում անդրադարձը վերաբերում է արդյունավետության վրա իշխանության գործոնի ազդեցությանը: Խոսքը հատկապես վերաբերում է տնտեսական գործոնին: Իշխանության ձևերից հատկապես առանձնանում է տնտեսականը: Նկատենք, որ տնտեսական իշխանության տեսությունը ոչ թե բացառապես հիմնվում է տնտեսական արդյունավետության վերլուծության վրա, այլև ենթադրում է հետազոտական լայն շրջանակներ տարբեր գիտությունների հետ ունեցած առնչությունների մեջ: Եվ այս իմաստով է, որ անհրաժեշտություն է առաջանում տնտեսական իշխանության սահմանների բացահայտումը:

Տնտեսական իշխանությունն առաջին հերթին դրսևորվում է իբրև իշխանություն՝ տնտեսության ոլորտում: Մյուս կողմից, դա այն իշխանությունն է, որը ձեռք է բերվում տնտեսական միջոցների, մասնավորապես ֆինանսական կապիտալի օգնությամբ: Ի վերջո, գործնականում իշխանության ցանկացած ձև հիմնվում է իշխանական բոլոր ռեսուրսների օգտագործման վրա; Հարցը թերևս, դրանց հարաբերակցության համամասնությունների մեջ է: Այս իմաստով դժվար է իշխանության տնտեսական և մյուս ձևերը հստակ սահմանազատել, քանի որ հաճախ տնտե-

սական իշխանության հասնելու յուրօրինակ «իմպուլս» են դառնում ոչ տնտեսական մեթոդները: Իրողություն է, որ շատ խոշոր ու հայտնի գործարարներ ազդեցության և հարստության են հասել ի հաշիվ պետական ապարատի հետ ունեցած կապերի: Նեղ իմաստով, տնտեսական իշխանությունը տնտեսավարող սուբյեկտների իշխանությունն է տնտեսության ոլորտում: Այստեղ նկատի ենք ունենում նաև տնտեսական իշխանության «սահմանակից» կամ հարազատ ձևերը: Խոսքը վերաբերում է տնտեսական վերնախավի իշխանությանը, որն ազդում է քաղաքական որոշումների վրա (օրինակ լոբբիզմի միջոցով): Իշխանության նմանօրինակ ձևերը դժվար է առանձնացնել տնտեսականից, քանի որ քաղաքական որոշումների հետևանքները ազդեցություն են ունենում ամբողջ տնտեսության և վերջինիս արդյունավետության վրա: Նույնը վերաբերում է պետական իշխանությանը, որը մի կողմից ներկայացնելով քաղաքական ոլորտը, տնտեսական քաղաքականության շրջանակներում ընդունում է որոշումներ, որոնք ազդում են տնտեսական արդյունավետության վրա: Այս իմաստով, տնտեսական իշխանությունը տնտեսական հաստատությունների և կազմակերպությունների, ինչպես նաև սոցիալական խմբերի ու առանձին անհատների միջև առանձնահատուկ հարաբերություն է՝ կապված տնտեսության հետ, որի շրջանակներում տնտեսական իշխանության սուբյեկտը իր շուրջը ստեղծում է իշխանական տարածություն:

Հաճախ ասում են, թե նորը դա մոռացված հինն է: Դա վերաբերում է նաև իշխանության հիմնահարցին: Բանն այն է, որ տնտեսագիտական հետազոտություններում ավելի մեծ ուշադրություն էր հատկացվում կատարյալ մրցակցության շուկային, որտեղ փոխազդում են բազմաթիվ արտադրողներ և գնորդներ, առք ու վաճառքի օբյեկտներ են միատարր ապրանքները, խոչընդոտներ չեն ստեղծվում որևէ ճյուղ մտնելու կամ նրանից հեռանալու համար, առկա է ապրանքների արտադրության և իրացման մասին լիարժեք տեղեկատվություն: Նման մոդելի պայմաններում ցանկացած տնտեսական սուբյեկտ կարող է գործել՝ ամբողջովին հաշվի չառնելով մյուսների որոշումները, որոնք գործնականում չեն կարող ազդել շուկայի՝ մասնավորապես գների մակարդակի վրա: Այլ կերպ ասած կատարյալ մրցակցության մոդելը, որը ենթադրում է իշխանության ցրվածություն, հաշվի չի առնում իշխանության գործոնը: Մոնոպոլիաների և օլիգոպոլիաների ի հայտ գալը արդեն ենթադրում էր հակառակը՝ անկատար մրցակցության կացությունը: Նկատենք, որ վերջինիս ավելի վաղ անդրադարձել են Օ.Կուրնոն, Ֆ. էջոուրտը և ուրիշներ, սակայն խնդիրը համակարգված հետազոտության են ենթարկել է.Չեմբերլենը և Ջ.Ռոբինսոնը: Նոր մոտեցումն արդեն ենթադրում էր այն իրավիճակը, երբ շուկայի առանձին գործակալներ ի վիճակի են ազդելու մնացած մասնակիցների վարքագծի վրա, այլ խոսքով ունեն որոշակի իշխանություն, որն իրացվելով անուղղակիորեն, որոշ գործակալների վրա ունեցած ազդեցության շնորհիվ ազդում է նաև գների մակարդակի վրա: Այսպիսով, գնային կոորդինացնող մեխանիզմի՝«անտեսանելի ձեռքին» փոխարինելու է գալիս խոշոր կորպորացիաների շուկայական իշխանությունը: Սա արդեն նշանակում է, որ տնտեսական գիտությունն ընդունում է իշխանության գոյությունն իբրև տնտեսական արդյունավետության վրա ազդող գործոնի: Այնուամենայնիվ, անկատար մրցակցության տեսությունն ամբողջովին չի ընդգրկում տնտեսության մեջ իշխանության դերի ողջ հիմնահարցը: Այստեղ ավելի շուտ ուշադրություն է դարձվում գնային մեխանիզմի միջոցով դրսևորվող անուղղակի իշխանության վրա: Մինչդեռ, ֆիրմաների և կազմակերպությունների շրջանակներում գների միջոցով կոորդինացումը բացակայում է կամ հասցված է նվազագույնի, իսկ արտադրության գործոնների և բարիքների տեղափոխությունը տեղի է ունենում ձեռնարկատիրոջ կարգադրությամբ (ուղղակի իշխանություն): Ի վերջո, ճյուղային շուկաների տեսության մեջ մոնոպոլ իշխանությունը գրեթե միշտ դիտարկվում է իբրև տնտեսական արդյունավետությունը իջեցնող գործոն: Այս մոտեցման կողմնակիցները պետության կողմից հակատրեստային կարգավորման պայմաններում ֆիրման ներկայացնում են որպես «սողանցք»՝ մոնոպոլ իշխանության օգտագործման համար: Կազմակերպության ներսում իշխանության հարցին անդրադարձել են Ռ.Քոուզը, Օ.Ուիլյամսոնը, Ա.Ալչիյանը, Հ.Դեմսեցը: Նոր ինստիտուցիոնալ մոտեցումների շրջանակներում նրանք ցույց են տալիս, որ մի շարք դեպքերում ուղղակի տնտեսական իշխանությունը ավելի արդյունավետ է, քան գնային մեխանիզմը:

Ավելին, նրանք պնդում են, որ իշխանական հարաբերությունների առկայությունը լինելով հիերարխիայի հատկանիշներից մեկը, թույլատրում է նվազագույնի հասցնել տրանսակցիոն ծախսերը: Այսինքն՝ իշխանությունը որոշակի սահմաններում կարող է լինել արդյունավետ: Վերջին հաշվով, տնտեսական իշխանությունը միջոց է տնտեսական նպատակներին հասնելու համար: Դա առաջին հերթին վերաբերում է օգտակարության, շահույթների մաքսիմալացմանը կամ տրանսակցիոն ծախսերի իջեցմանը: Ինչ խոսք, նման մոտեցումները հիմնականում կապված են միկրոտնտեսագիտության հետ: Սակայն մակրո- և մեգամակարդակներում իշխանությունը զգալի ազդեցություն է թողնում տնտեսական արդյունավետության վրա: Շուկայում սուբյեկտի իշխանությունը հիմնված է գների վրա ազդելու, տնտեսական շահույթը բարձրացնելու հնարավորության վրա: Ինչ վերաբերում է շուկայական մրցակցությանը, ապա այն դրսևորվում է նաև ինովացիոն մրցակցության ձևով: Տնտեսական իշխանության տարբեր շերտերում կիրառվում են տարբեր գործիքներ ու ռեսուրսներ, տարբեր լուծումներ են տրվում նաև իշխանության տնտեսական արդյունավետության հարցին: Այսպես, եթե շուկայական իշխանությունը անարդյունավետ է հիմնականում իշխանության եսասիրական օգտագործման պատճառով, ապա կազմակերպական իշխանությունը անարդյունավետ է՝ կապված մասշտաբի ընդլայնման և հսկողության ծախքերի աճի հետ:

Տնտեսական իշխանության հիմնական սուբյեկտները ֆինանսական և ոչ ֆինանսական կորպորացիաներն են, բազմաթիվ ընկերություններ կամ բանկեր ընդգրկող խմբերը, միջազգային կառավարական և ոչ կառավարական տնտեսական և ֆինանսական կազմակերպությունները և այլն, որոնք ազդում են ամբողջ տնտեսական գործընթացների վրա: Այստեղ հատկապես ուշագրավ է այն, որ վերոնշյալ կառույցներում հիմնականում թաքնվում է կոնկրետ մարդկանց իշխանությունը:

Վերջին տասնամյակներին կորպորացիաներում տեղի է ունենում իշխանության աստիճանական անցում սեփականատերերից մենեջմենթին, չնայած նրան, որ շատ երկրներում ընդունվում են մենեջմենթի իշխանությունը սահմանափակող օրենքներ, որոնք երաշխավորում են սեփականատերերի շահերն ու իրավունքները: Մինչդեռ կառավարչական կառույցների ու բյուրոկրատացման աճը խոշոր կորպորացիաների մենեջմենթի մակարդակների միջև առաջ է բերում հակասություններ, որոնց առկայությունը թույլատրում է ենթադրել, այսպես կոչված, «կորպորատիվ ֆեոդալիզմի» ձևավորման մասին: Խոսքը վերաբերում է կազմակերպություններում վարձու աշխատողների իշխանության ուժեղացմանը:

Իշխանության սուբյեկտների տիրապետությունը հիմնվում է նրա ռեսուրսների վրա, այսինքն՝ իշխանության սուբյեկտին օբյեկտից տարբերակող հատկության վրա, որն առաջինին հնարավորություն է ընձեռում մուտք ունենալ դեպի համապատասխան գործիքները: Ցանկացած կոնկրետ սուբյեկտի իշխանությունը որոշվում է այն ռեսուրսներով, որին տիրապետում է: Բնականաբար, բոլոր ռեսուրսները հազվագյուտ են ու առանձնահատուկ, որոնք գտնվում են տվյալ տնտեսական գործակալի տիրապետության տակ: Տնօրինելով ռեսուրսներին, սուբյեկտը երբեմն դիմում է այնպիսի միջոցների(կաշառք, հարկադրանք և այլն), որոնք ազդելով իշխանության օբյեկտի վրա, ի վերջո բերում են նրա իշխանական տարածության ընդլայնմանը: Այսպիսի միջոցները, կամ որ նույն է գործիքները, բնութագրում են ոչ միայն իշխանության սուբյեկտի, այլ նաև օբյեկտի վիճակը:

Տնտեսական իշխանությունը միշտ չէ, որ նպաստում է տնտեսական գործընթացների արդյունավետության բարձրացմանը, ավելին՝ այն հաճախ ունենում է հակառակ ազդեցությունը: Բանն այն է, որ սուբյեկտը իշխանությունը պահելու համար ջանք չխնայելով ծախսում է զգալի ռեսուրսներ, դրանք դուրս մղելով արտադրության ոլորտից: Արդյունքում ծագում են, այսպես կոչված, «հսկողության ծախքեր», որոնք աճում են բյուրոկրատացման աճին զուգահեռ: Բացի այդ, տնտեսության մեջ առկա են նաև իշխանության եսասիրական օգտագործման ծախքեր: Մասնավորապես, մոնոպոլիստը կրճատելով արտադրության ծավալները, բարձրացնում է գները, ինչը հասարակությանը բերում է կորուստներ, կամ նա կարող է չհոգալ ծախսերի տնտեսման և ինովացիաների ներդրման մասին: Այս իմաստով, չի կարելի սպասել, թե սուբյեկտը, ով գիտակ-

ցում է ամբողջ հասարակության համար իր գործողությունների անարդյունավետությունը, կսկսի իրեն պահել այլ կերպ, եթե այն չի ապահովում իր իշխանության ընդլայնում կամ շահույթի աճ: Հայտնի ճշմարտություն է, որ իշխանությունն իր բնույթով արդեն իսկ եսասիրական է: Ուստի ընդհանուրի բարեկեցության աճի մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ այն շահավետ է տվյալ սուբյեկտին: Ի վերջո, առաջ են գալիս իշխանության սուբյեկտի վարքագծի անբավարար ռացիոնալության և ոչ լիարժեք տեղեկատվության ծախքեր, որոնք հետևանք են սխալների, քանի որ տվյալ դեպքում ոչ մի տնտեսական գործակալ ապահովագրված չէ սխալներից: Իսկ ինչ վերաբերում է հետևանքներին, ապա դրանք իրենց զգացնել են տալիս իշխանության բոլոր օբյեկտների վրա: Եվ, վերջապես, գոյություն ունի որոշակի լագ սուբյեկտի կողմից որոշումների ընդունման և դրանց կատարման միջև:

Ներկա զարգացումները թույլ են տալիս փաստել, որ ժամանակակից տնտեսական համակարգը մեծ մասամբ համարվում է «իշխանության տնտեսություն»: Դեռևս XX դարասկզբին երկրների մեծ մասում ստեղծվեցին խոշոր կորպորատիվ կառուցվածքներ, որոնք գերիշխելով շուկաներում, մեծ ազդեցություն են թողնում հասարակության կյանքում ընթացող գործընթացների վրա: Թերևս կորպորացիաների տիրապետության պայմաններում է արագանում ԳՏՀ-ն, ինչի շնորհիվ իշխանության հարաբերությունները դառնում են արդյունավետ: Նախ, շուկայական տնտեսությունը կապված է զգալի տրանսակցիոն ու տեղեկատվական ծախքերի հետ, իսկ տնտեսական իշխանությունը բերում է դրանց անհետացմանը: Ճիշտ է, ծագում են «հսկողության ծախքեր», որոնք մինչև իշխանության որոշակի սահման ավելի փոքր են, քան շուկայի ծախքերը: Բացի այդ, գոյություն ունեն շուկայի շատ «ձախողումներ», որոնք էլ անհրաժեշտություն են դարձնում տնտեսական իշխանության՝ գերազանցապես պետության միջամտությունը: Հաճախ իշխող սուբյեկտի վարքագիծը թույլատրում է բարձրացնել արտադրության արդյունավետությունը: Հենց իշխանության համար պայքարն է խթանում տնտեսական սուբյեկտների զարգացմանը, ինչն էլ իր հերթին ենթադրում է եռակողմ մրցակցություն: Առաջինը միկրոտնտեսական մրցակցությունն է, որի դեպքում առանձին տնտեսական սուբյեկտներ գնային կամ ինովացիոն մրցակցության մեջ հնարավորություն ունենալով հաղթող դուրս գալ, կտրուկ ընդլայնում են իրենց իշխանության սահմանները, երբեմն մասշտաբային առումով համեմատվելով ամբողջ շուկայի հետ: Մրցակցության մյուս կողմը մակրոտնտեսականն է, որի դեպքում ցանկացած սուբյեկտ ձգտում է կրճատել հսկողության ծախքերը, բարձրացնել իշխանության արդյունավետությունը: Խոշոր կորպորացիաները՝ իբրև կոորդինացնող համակարգի, ամբողջովին կարող են դառնալ արդյունավետ միայն այն դեպքում, երբ նրանք մրցակցեն միմյանց կամ շուկայի հետ: Ընդ որում, այդ մրցակցությանը մասնակցում է նաև երրորդ կողմը՝ պետությունը, որը հանդես է գալիս միջնորդ հաշտարարի դերում, մասնավորապես, նրա հիմնական խնդիրը տնտեսության մեջ շուկայի ու իշխանության հավասարակշռելն է: Եվ, վերջապես, հանդես է գալիս քաղաքական մրցակցությունը: Պետությունը հաստատությունների և կազմակերպությունների շարք է, որը հաճախ դառնում է կոնկրետ անձանց իշխանության «դիմակ», որոնց նպատակը քաղաքական ռենտայի փնտրտուքն է կամ հասարակական ազդեցության մաքսիմալացումը: Հետևաբար, անհրաժեշտություն է դառնում պետության այնպիսի կառույցը, երբ քաղաքական մրցակցությունը կստիպի պետական այրերին ու քաղաքագետներին օպտիմալացնել իրենց գործունեությունը:

XX դարի տնտեսական հաստատությունների էվոլյուցիան մեծ հաշվով պայմանավորված էր մրցակցության վերոնշյալ ձևերով: Տնտեսական իշխանության սուբյեկտները, ձգտելով ընդլայնել իրենց դերը, այս կամ այն ձևով իջեցնում են հսկողության ծախքերը, ինչն իր հերթին բերում է կազմակերպությունների նոր ձևերի, ինչպես օրինակ մետակորպորացիաների, ցանցային ընկերությունների ի հայտ գալուն: Վերջիններս հատկանշվում են նրանով, որ դրանցում առկա են իշխանության և ազդեցության բազմաթիվ կենտրոններ: Ներկա պայմաններում ակտիվացել է բանկային և արտադրական կապիտալի ինտեգրման գործընթացը: Եթե մինչև 1990-ական թթ. մեծանում էր հոլդինգային կառույցների դերը, ապա ներկայումս դրանց դերն ու նշանակությունը աստիճանաբար իջնում է. մետակորպորացիաներն ավելի ու ավելի ակտիվորեն են օգտագործում ռեսուրսների հսկողության վրա հիմնված ազդեցության լծակները, կորպորատիվ

ինտեգրացիայի գործիքները, որոնք իրենց ամբողջության մեջ բերում են մետակորպորացիաների կազմակերպական ձևերի բազմազանությանը: Հետևանքը լինում է այն, որ տեղի է ունենում իշխանության գործիքային լաբորատորիայի ու ռեսուրսների նշանակության փոփոխություն, ինովացիոն մրցակցությունը գնայինի համեմատությամբ սկսում է ընդլայնել իր սահմանները: Ինովացիոն գործոնի հաշվի առնելը օգնում է տեղի ունեցող տնտեսական գործընթացներն առավել լրիվ գնահատել: Եթե նախկինում տնտեսագիտական վերլուծություններում հիմնականում դիտարկվում էին օբյեկտիվ գործոնները, ապա իշխանության բնույթի հետազոտությունը թույլ է տալիս մեծ ուշադրություն դարձնել հաճախ թերագնահատված իռացիոնալ, սուբյեկտիվ գործոններին: Կորպորացիաների ձուլումը նշանակում է ոչ միայն օբյեկտիվ ձգտում դեպի կապիտալի համակենտրոնացում, այլ տնտեսական իշխանության ձգտում:

Շուկան մշտապես ծնում է մոնոպոլիա: Այս իմաստով անհրաժեշտություն է դառնում իշխանության գործոնի վերլուծությունը դիտարկել իբրև տնտեսագիտության որոշակի ուղղություն:

Марине Агаян

К ВОПРОСУ О РОЛИ ВЛАСТИ В ЭКОНОМИКЕ

Аннотация

Современная экономическая система в большей степени является «экономической властью», которая приобретается посредством экономических средств, в частности, с помошью финансового капитала. Будучи средством достижения экономических целей, она предполагает использование различных инструментов и ресурсов в различных слоях власти, давая разные решения вопросам эффективности. В статье сделана попытка выявить границы экономической власти путем обращения к неэкономическим методам, выступающих в роли своеобразного «импульса» достижения власти.

Marine Aghayan

ON THE ISSUE OF THE ROLE OF THE POWER IN THE ECONOMY

Abstract

Modern economic system is mainly considered a “power economics” that is achieved by economic resources, namely financial capital. Being considered a mean to meet economic objectives, various resources and tools are expected to be leveraged at different levels of power to tackle efficiency issues. The article attempts to identify the limits of the economic power by discussing non-economic methods of coming to a power as a unique “impulse”.

ԳՐԻԳՈՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԵՊՀ, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

ՎԻԿՏՈՐԻԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան, տնտեսության և ֆինանսների ամբիոնի ավագ դասախոս, տ.գ.թ.

ԵՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հայաստանի և ԵՄ միջև համագործակցության հիմքը դրվել է Գործընկերության և համագործակցության համաձայնագրով (Partnership and Co-operation Agreement, PCA), որը ստորագրվել է 1996թ. և ուժի մեջ է մտել 1999թ.-ից[1]: 2006թ. Հայաստանը և ԵՄ-ն ընդունեցին Եվրոպական հարևանության քաղաքականության (European Neighborhood Policy, ENP) 5 տարվա գործողությունների ծրագիրը (Action Plan): 2009թ. Հայաստանը միացավ Արևելյան գործընկերություն (ԱԳ) (Eastern Partnership, EP) նախաձեռնությանը: Արևելյան գործընկերությունը նախատեսված է ընդլայնելու համագործակցությունը ԵՄ 27 անդամ երկրների և նախկին ԽՍՀՄ եվրոպական հատվածի վեց պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի և Ադրբեջանի միջև: Արևելյան գործընկերության շրջանակներում բազմակողմ համագործակցությունն իրականացվում է չորս տարբեր թեմատիկ պլատֆորմների միջոցով.

1. ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում և կայունություն,
2. տնտեսական ինտեգրում և ԵՄ քաղաքականության հետ համապատասխանեցում,
3. էներգետիկ անվտանգություն,
4. մարդկանց միջև շփումներ[2]:

2010թ. սկսած ԵՄ ԱԳ ծրագրի բանակցությունները, ենթադրում են նոր Ասոցացման համաձայնագրի ստորագրում (Association Agreement), որը պետք է փոխարինի Գործընկերության և համագործակցության համաձայնագրին[3]: Ասոցացման համաձայնագիրը նպատակ ունի խորացնելու ԵՄ հետ գործընկեր երկրների քաղաքական ասոցացումը և խթանելու տնտեսական ինտեգրումը՝ ԵՄ օրենսդրության և չափանիշների հետ մոտարկման և երկուստեք շուկաներ մուտք ապահովելու նպատակով: Այս նոր համաձայնագիրը իր մեջ պետք է պարունակի միջոցառումների իրականացում, որոնք պետք է հիմք հանդիսանան Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (ԽՀԱԱՀ) ստորագրման համար (Deep and Comprehensive Free Trade Agreement, DCFTA): Այս քաղաքականությունների և ծրագրերի իրականացման համար ԵՄ-ն տրամադրել է ֆինանսական և տեխնիկական օժանդակություն: Այսպես, 2007-2010թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ Հայաստանին տրամադրել է 98.4 մլն. եվրո, իսկ 2011-2013թթ.՝ 157 մլն. եվրո օժանդակություն[4]: Հայաստան-ԵՄ հարաբերություններում կարևոր տեղ է զբաղեցնում ՀՀ քաղաքացիների համար ԵՄ-ն երկրներ մուտքի արտոնագրերի ստացման գործընթացը դյուրացնելու խնդիրը: 2012թ. փետրվարին մեկնարկել են մուտքի արտոնագրերի և հետընդունման Հայաստան-ԵՄ համաձայնագրերի շուրջ բանակցությունները: Բանակցային արդյունավետ մի քանի փուլերից հետո երկու համաձայնագրերի տեքստերը նախաստորագրվել են: Հայաստան-ԵՄ մուտքի վիզաների դյուրացման համաձայնագիրը ստորագրվել է 2012թ. դեկտեմբերի 17-ին:

---

[1] Համաձայնագիրը ստորագրվել է 10 տարի ժամկետով: Ըստ համաձայնագրի համապատասխան դրույթի՝ ժամկետը լրանալուց հետո այն տարեկան ինքնաբերաբար երկարաձգվում է:

[2] http://www.mfa.am/hy/country-by-country/eu/ Արտաքին գործերի նախարարություն: Ինտերնետային կայքն այցելվել է 28.10.13թ.:

[3] Բոլոր Արևելյան գործընկերներին առաջարկվել է ստորագրել Ասոցացման համաձայնագրեր, որոնք տարբերակվելու են համաձայն առանձին երկրների համագործակցության պահանջների և խնդիրների:

[4] http://eeas.europa.eu/armenia Եվրոպական միություն: Ինտերնետային կայքն այցելվել է 28.10.13թ.:

2012թ. տվյալներով Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ադրբեջանի համար ԵՄ-ն համարվում է գլխավոր առևտրային գործընկեր, իսկ Ուկրաինայի և Բելառուսի համար ԵՄ-ն գրավում է երկրորդ տեղը Ռուսաստանից հետո: Այստեղ հարկ է նշել, որ չնայած ԵՄ-ն համարվում է Հայաստանի գլխավոր առևտրային գործընկեր երկիր, նրա հետ Հայաստանի արտաքին առևտուրը, հատկապես արտահանումը դեպի ԵՄ ներկայումս ունի և՛ աշխարհագրական, և՛ ապրանքային խիստ կենտրոնացվածություն: ԵՄ անդամ երկրներից Գերմանիային, Բուլղարիային, Բելգիային և Նիդեռլանդներին բաժին է ընկնում ամբողջ ԵՄ արտահանման 87.3%-ը, չնայած վերջին տարիներին նկատվում է դրական տեղաշարժեր[1]:

Չնայած ԱԳ երկրների համար ԵՄ-ն համարվում է գլխավոր գործընկեր երկիր, այս երկրներին ԵՄ արտաքին առևտրում շատ քիչ բաժին է հասնում: Բոլոր 6 երկրներին բաժին է ընկնում ԵՄ արտաքին առևտրի մոտ 2%[2]:

Բացի արտաքին առևտրային կապերից ԱԳ երկրների համար մեծ տեղ և նշանակություն ունեն ԵՄ կողմից իրականացվող ներդրումները: ԵՄ կողմից ԱԳ երկրներում իրականացվող ՕՈՒՆ-ի բաժինը 2012թ. կազմել է ամբողջ ՕՈՒՆ-երի 30-80%-ը: Ամենաշատը բաժին է ընկել Ուկրաինային, իսկ ամենաքիչը՝ Բելառուսին: Հայաստանում ԵՄ երկրների կողմից իրականացված ՕՈՒՆ-երը կազմել են ընդհանուր օտարերկրյա ուղղակի ներդրումների 49%-ը, այդ թվում Ֆրանսիային բաժին է ընկել 40.6%, իսկ Գերմանիային՝ 8.4%[3]: Այստեղ հարկ է նշել, որ 1991-2012թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալով առաջին տեղում է Ռուսաստանը (2.6 մլրդ. դոլար), երկրորդ տեղում՝ Ֆրանսիան (934.1 մլն. դոլար) և Գերմանիան(394.2 մլն. դոլար)[4]:

ԱԳ երկրների տնտեսությունների ԵՄ ինտեգրման աստիճանն առավել պատկերավոր բացահայտելու համար մենք կօգտվենք Եվրոպական ինտեգրման ինդեքսից: Եվրոպական ինտեգրման ինդեքսը քաղաքացիական հասարակության մոնիտորինգի համար օգտագործվող գործիք է, որը կիրառվում է Արևելյան գործընկերության երկրների համար և ցույց է տալիս դրանց ինտեգրման աստիճանը Եվրոպային: Այս ինդեքսի հիմնական նպատակն է պահել երկրներին ճիշտ ուղու վրա և զգուշացնել, երբ երկրները շեղվում են նշված ուղուց: Կարելի է առանձնացնել ինդեքսի 3 հիմնական ուղղությունները.

1. Խորը և կայուն դեմոկրատիա,
2. Երկրների և տնտեսության տարբեր ոլորտների միջև համեմատություն,
3. Ինդեքսը փորձում է տրամադրել անկախ վերլուծություն ԱԳ երկրների և ԵՄ համագործակցության բնագավառում:

Ինդեքսը կազմվում է տարեկան կտրվածքով: Ինչպես արդեն նշեցինք, այս ինդեքսը ցույց է տալիս ԵՄ ինտեգրման առաջընթացը երկու դեռևս տարբեր անկախ պրոցեսների յուրաքանչյուր ԱԳ երկրի և ԵՄ միջև առկա կապերի ավելացման և ԱԳ երկրների ինստիտուցիոնալ ու իրավական համակարգերի ԵՄ համակարգի հետ մոտարկման աստիճանի բարձրացման և համապատասխանեցման համար: Սակայն, հաշվի առնելով, որ քաղաքական որոշումները զգալի ազդեցություն են ունենում վերը նշված երկու պրոցեսների դինամիկայի վրա, այստեղ առանձնացվում է նաև երրորդ ուղղվածությունը՝ կառավարումը, որն իրենից ներկայացնում է ԱԳ երկրների կառավարման կառուցվածքը և քաղաքականությունը, որը ազդում է ԵՄ ինտեգրման վրա: Այսպիսով՝ ինդեքսն ունի գնահատման 3 հիմնական ուղղվածություն.

1. ԱԳ առանձին երկրների և ԵՄ միջև կապերի ավելացում, որը ցույց է տալիս ԱԳ երկրների և ԵՄ երկրների տնտեսական, քաղաքական և սոցիալական փոխկախվածությունը,
2. ԱԳ երկրների և ԵՄ միջև ինստիտուցիոնալ և իրավական մոտարկման աստիճանը, որը ցույց է տալիս, թե ինչ մակարդակով է յուրաքանչյուր ԱԳ երկիր կատարում ԵՄ նախապայմանները,

---

[1] www.armstat.am ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք:
[2] http://ec.europa.eu/trade/policy/countries-and-regions/statistics/index_en.htm Եվրոպական հանձնաժողով: Ինտերնետային կայքն այցելվել է 30.10.13թ.:
[3] http://www.ada.am/eng/for-investors/fdi-statistics Զարգացման հայկական գործակալություն: Ինտերնետային կայքն այցելվել է 30.10.13թ.:
[4] www.armstat.am ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012:

3. Կառավարում, որն իրենից ներկայացնում է ԱԳ երկրների կառավարման կառուցվածքը և քաղաքականությունը, որը ազդում է ԵՄ ինտեգրման վրա[1]:

Ներկայացնենք ՀՀ տնտեսության գնահատականը համաձայն այս ինդեքսի: Այսպես՝ Հայաստանը 2012թ. զգալի առաջընթաց է գրանցել դեպի ԵՄ: Տնտեսական, քաղաքական և սոցիալական փոխկապվածությամբ Հայաստանը դասվել է 4-րդ տեղը՝ Մոլդովայից, Ուկրաինայից և Վրաստանից հետո, իսկ ինստիտուցիոնալ և իրավական մոտարկմամբ՝ 3-րդ տեղը՝ Մոլդովայից, և Վրաստանից հետո՝ առաջ անցնելով նույնիսկ Ուկրաինայից: Այստեղ հարկ է նշել, որ 5 և 6-րդ տեղերում են համապատասխանաբար Ադրբեջանը և Բելառուսն:

Չնայած համաձայն այս ինդեքսի Հայաստանը գրավում է 4-րդ տեղը, սակայն գրանցել է հարաբերական բարձր արդյունքներ ԵՄ ծրագրերին իր մասնակցությամբ: Մյուս կողմից, ՀՀ կապերը ԵՄ էներգիայի, տրանսպորտի ոլորտների և մարդկանց շարժունության հետ բավականին ցածր է:

Հայաստանը 2012թ. զգալի բարելավել է իր ինստիտուցիոնալ և իրավական մոտարկման աստիճանը: Էներգիայի, տրանսպորտի, կրթության, մշակույթի, երիտասարդության և տեղեկատվական հասարակության մոտարկման մակարդակներով Հայաստանը տարածաշրջանում զբաղեցնում է առաջին տեղը: Ինչպես նկատում ենք, էներգիայի և տրանսպորտի ոլորտներով Հայաստանի կապերը ԵՄ հետ բավականին ցածր էին, սակայն տնտեսության տարբեր ոլորտների մոտարկման աստիճանով Հայաստանը տարածաշրջանում առաջատար է:

Աղյուսակ 1

Տնտեսական և քաղաքական փոխկապվածություն

	Ուկրաինա	Մոլդովա	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Բելառուս
Քաղաքական երկխոսություն	0.88	0.79	0.69	0.69	0.62	0.28
Առևտուր և տնտեսական ինտեգրում	0.72	0.71	0.54	0.54	0.57	0.38
Համագործակցություն ըստ տնտեսության տարբեր ոլորտների	0.66	0.61	0.23	0.51	0.36	0.32
Օժանդակություն	0.46	0.68	0.52	0.65	0.25	0.21

Աղբյուր՝ European Integration Index 2013 for Eastern Partneship Countries. Civil Society Forum

Աղյուսակ 2

Ինստիտուցիոնալ և իրավական մոտարկում

	Ուկրաինա	Մոլդովա	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Բելառուս
Խորը և կայուն դեմոկրատիա	0.60	0.75	0.59	0.64	0.31	0.27
Շուկայական տնտեսություն և ԽՀԱԱՀ	0.54	0.61	0.57	0.66	0.43	0.38
Մոտարկում ըստ տնտեսության տարբեր ոլորտների	0.60	0.65	0.62	0.59	0.53	0.35

Աղբյուր՝ European Integration Index 2013 for Eastern Partneship Countries. Civil Society Forum

Ինչպես նկատում ենք Աղյուսակ 1-ից, ըստ «քաղաքական երկխոսություն» ու «առևտուր և տնտեսական ինտեգրում» ցուցանիշների Հայաստանը գրավում է երրորդ տեղը՝ Ուկրաինայից և Մոլդովայից հետո: Ավելին, այս երկու ուղղություններով Հայաստանի և Վրաստանի ցուցանիշները նույնն են: Ըստ տնտեսության տարբեր ոլորտների համագործակցության ցուցանիշի՝

[1] European Integration Index 2013 for Eastern Partneship Countries. Civil Society Forum.

Հայաստանը զբաղեցնում է վերջին տեղը, իսկ ըստ ստացված օժանդակության ցուցանիշի՝ երրորդ տեղը Մոլդովայից ու Վրաստանից հետո:

Աղյուսակ 2-ում ներկայացված «խորը և կայուն դեմոկրատիայի» ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է չորրորդ տեղը՝ Մոլդովայից, Վրաստանից և Ուկրաինայից հետո: Շուկայական տնտեսություն և ԽՀԱԱՀ ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է երրորդ տեղը՝ Վրաստանից և Մոլդովայից հետո: Այստեղ հարկ է նշել, որ շուկայական տնտեսության և ԽՀԱԱՀ կնքման պատրաստվածության աստիճանով Հայաստանը առաջ է անցել նույնիսկ Ուկրաինայից[1]: Եվ վերջապես, ըստ տնտեսության տարբեր ոլորտների մոտարկման աստիճանով Հայաստանը Մոլդովայից հետո զբաղեցնում է երկրորդ տեղը:

Ամփոփելով Աղյուսակ 1 և 2-ի տվյալները՝ կարող ենք նշել, որ Հայաստանը ԵՄ հետ տնտեսության տարբեր ոլորտների համագործակցությամբ զբաղեցնում է վեջին տեղը, սակայն ԵՄ հետ ըստ տնտեսության տարբեր ոլորտների մոտարկման աստիճանի՝ տարածաշրջանում առաջատարն է: Այստեղ հարկ է նշել մեկ կարևոր հանգամանք: Այսպես, այլ հավասար պայմաններում, տնտեսական, քաղաքական և տեխնիկական կապերը ԵՄ հետ կարող են օժանդակել ԵՄ արժեհամակարգի փոխանցմանը և իրականացմանը: Մյուս կողմից՝ ԵՄ արժեհամակարգին մոտ համակարգ ունեցող ԱԳ երկիրը կարող է զգալի ավելացնել ԵՄ կողմից իրականցվող ներդրումների և առևտրի ծավալները: Եթե այս փոխկապվածությունն անխափան աշխատի, ապա կարելի է ակնկալել, որ տնտեսական կապերի ավելացումը բերելու է ԵՄ արժեհամակարգի մոտարկման ավելի բարձր աստիճանի, և՛ հակառակը: Մեր պարագայում կարող ենք փաստել, որ ինստիտուցիոնալ և իրավական մոտարկման ավելացումը դեռևս չի բերել ԵՄ հետ տնտեսական և քաղաքական կապերի նկատելի ավելացման:

Հայաստանի և ԵՄ միջև Ասոցացման համաձայնգրի շուրջ բանակցությունները, որոնք իրենց մեջ ներառում էին նաև ԽՀԱԱՀ, ավարտվեցին 2013թ. հուլիսին: Այնուհետև, 2013թ. սեպտեմբերին Հայաստանը ցանկություն հայտնեց անդամակցել Մաքսային միությանը (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան): Այստեղ հարկ է նշել, որ ԽՀԱԱՀ հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսության և դրա առանձին հատվածների վրա մանրամասն ներկայացվել է էքորիս (Ecorys) ու Սոցիալ և տնտեսական հետազոտությունների կենտրոնի (The Center for Social and Economic Research, CASE) կողմից կատարված վերլուծության մեջ[2]: Մյուս կողմից, չկան աշխատանքներ, որտեղ մանրամասն ներկայացված կլինեն, թե Մաքսային միությանն անդամակցության դեպքում վերջինս ինչ հնարավոր ազդեցություն կարող է ունենալ Հայաստանի տնտեսության և դրա առանձին հատվածների վրա: Այս համատեքստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ասոցացման համաձայնագիրն անհամատեղելի է Մաքսային միության հետ, ԵՄ-ն դադարեցրեց ՀՀ հետ Ասոցացման համաձայնգրի կնքման գործընթացը, որը պետք է կայանար սույն թվականի նոյեմբերին: Ավելին, ԵՄ-ն պաշտոնապես հայտարարել է, որ շարունակելու է համագործակցել ՀՀ հետ բոլոր այն ոլորտներում և ուղղություններով, որոնք համատեղելի են Հայաստանի ընտրության հետ: Հայաստանն իր հերթին պաշտոնապես հայտարարել է, որ պատրաստ է կնքել Ասոցացման համաձայնագիրն առանց ԽՀԱԱՀ կնքելու: Այստեղ ամբողջ հարցը կայանում է նրանում, որ առանց ԽՀԱԱՀ Ասոցացման համաձայնագիրը չի կարող համարվել ամբողջական: Արդյունքում կարող է առաջանալ երկու մակարդակ ունեցող ԱԳ ծրագիր: Առաջին մակարդակում կլինեն այն երկրները, որոնք ԵՄ հետ ունեն ուժեղ քաղաքական և տնտեսական կապեր (Ուկրաինա, Մոլդովա և Վրաստան), իսկ երկրորդ մակարդակում կլինեն Հայաստանը, Ադրբեջանը և Բելառուսը[3]: Առաջին մակարդակում գտնվող երկրները ԵՄ հետ կունենան Ասոցացման համաձայնագրեր, ազատ առևտուր և կշարունակեն մարդկանց ազատ տեղաշարժի հետ կապված

---

[1] ԽՀԱԱՀ հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա տե՛ս Հայաստան-Եվրամիություն տնտեսական հարաբերություններ, ԵՊՀ, Եվրոպական Ուսումնասիրությունների կենտրոն, Երևան 2012:

[2] Trade Sustainability Impact Assessment in support of negotiations of a DCFTA between the EU and the Republic of Armenia, Ecorys, CASE, 2013. Տվյալ աշխատանքի իրականացման շրջանակներում հեղինակը հանդիսացել է հայաստանյան փորձագետներից մեկը:

[3] Nicu Popescu “Behind – and beyond – Armenia’s choice” EU Institute for Security Studies, 2013.

բանակցությունները, իսկ երկրորդ մակարդակում գտնվող երկրները ԵՄ հետ հարաբերություններում կունենան շատ ավելի համեստ արդյունքներ:

Մեր կարծիքով, Հայաստանի նման փոքր երկիրը պետք է ակտիվորեն մասնակցի համաշխարհային տնտեսության մեջ ընթացող տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներին: Հայաստանը համարվում է փոքր երկիր և ունի բավականին սահմանափակ շուկա (ոչ տարողունակ), և հետագա տնտեսական աճի ապահովումը միանշանակ կախված է Հայաստանի՝ տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներին մասնակցության մակարդակից: Այստեղ կարևոր է նշել ևս մեկ կարևոր հանգամանք: Տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումների հետ համագործակցությունը չպետք է կրի զուտ քաղաքական բնույթ, այլ պետք է հիմնավորված լինի արդեն առկա տնտեսական կապերով: Ինչպես մենք նկատեցինք, Հայաստանը ԵՄ հետ ունի զարգացած տնտեսական և քաղաքական կապեր և զգալի բարելավել է իր ինստիտուցիոնալ և իրավական մոտարկման մակարդակը: Այս պարագայում, կարծում ենք, որ ԵՄ հետ Ասոցացման համաձայնագրի կնքումը երկարաժամկետ հատվածում շատ ավելի մեծ արդյունքներ կապահովեր Հայաստանի տնտեսության համար, քան Հայաստանի Մաքսային միությանն անդամակցությունը, քանի որ առաջինը շատ ավելի զարգացած ինտեգրացիոն խմբավորում է: Ավելին, ԵՄ-ն սովորաբար նպատակային ծրագրերով ֆինանսական և տեխնիկական օժանդակություն ու խորհրդատվություն է տրամադրում իր հետ համագործակցող երկրներին՝ դրանց տնտեսության տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրների լուծման համար:

Григор Айрапетян
Виктория Айрапетян

ВЛИЯНИЕ ПРОГРАММЫ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА «ВОСТОЧНОЕ ПАРТНЕРСТВО» НА ЭКОНОМИКУ РА

Аннотация

В данной статьи рассмотрено влияние программы ЕС «Восточное партнерство» на экономику РА. В работе показано, что из себя представляет эта программа, какие институциональные и правовые реформы были проведены в Армении в рамках этой программы, а также представлено какое место и какую позицию занимает Армения среди других стран-членов программы.

Grigor Hayrapetyan
Victoria Hayrapetyan

THE IMPACT OF THE EU'S EASTERN PARTNERSHIP PROGRAMME ON THE ECONOMY OF REPUBLIV ARMENIA

Abstract

The article discusses the impact of the EU's Eastern Partnership Programme on the economy of the Republics of Armenia. The article presents the meaning of the Programme, institutional and legal reforms implemented by Armenia within the scope of the Programme. The article presents Armenia's progress in comparison to the peer nations.

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ցանկացած երկրում՝ պատմական զարգացման ողջ ընթացքում պետությունը իր համապատասխան լծակների միջոցով իրականացրել է որոշակի տնտեսական գործառույթներ: Նախ և առաջ, նա օրենսդրորեն ամրագրել է ընդհանուր խաղի կանոններ, որոնց միջոցով կարգավորվում են շուկայի մասնակիցների հարաբերությունները, այդ թվում՝ նաև այնպիսի կառույցների, ինչպիսիք են առևտրային բանկերը, կենսաթոշակային հիմնադրամները, բաժնետիրական ընկերությունները: Տնտեսական զարգացման պրակտիկան ցուցադրել է առանց պետական կարգավորման, ինչպես նաև դրա չափազանց մեծ կիրառման մոդելների անկենսունակությունը: Այստեղ խոսքը գնում է ինչպես դասական շուկայական կապիտալիզմի մասին, որի կարգավորման գործընթացին պետությունը համարյա մասնակցություն չունի, այնպես էլ սոցիալիզմի մասին, որտեղ պետությունը որոշիչ դեր է կատարում, և տնտեսական բոլոր լծակները գտնվում են նրա տրամադրության տակ:

Ըստ հասարակական արտադրության վրա պետական ազդեցության բնույթի՝ առանձնացվում են տնտեսական կարգավորման երկու հիմնական ձևեր՝ կարճաժամկետ կամ հակացիկլիկ կարգավորում (ինչը անվանվում է նաև կոնյուկտուրային քաղաքականություն) և երկարաժամկետ նպատակային կարգավորում: Այն իր մեջ ներառում է կառուցվածքային քաղաքականություն և որոշակի ժամանակահատվածի համար տնտեսության ընդհանուր խթանման քաղաքականություն, որն իրականացվում է տարբեր ծրագրերի և կանխատեսումների օգնությամբ: Այս երկու ձևերի օպտիմալ հավասարակշռության դեպքում հնարավոր է ապահովել կայուն տնտեսական աճ, իսկ ճգնաժամային իրավիճակներում՝ խուսափել խորը տնտեսական անկումներից:

Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը, ինչպես նաև դրա ավարտից հետո, մինչև 1950-ական թվականների կեսերը, աշխարհի շատ երկրներում պետության ազդեցությունը տնտեսական կոնյուկտուրայի վրա իրականացվել է անկանոն կերպով՝ դեպքից դեպք և թելադրվել է, սովորաբար, արտակարգ իրավիճակների ի հայտ գալու հանգամանքներով: Նախորդ դարի 50-ական թվականների առաջին կեսին այդօրինակ ազդեցությունը սկսեց կրել արդեն անընդհատ բնույթ՝վերածվելով հակացիկլիկ կարգավորման կամ, որը որոշ դեպքերում տնտեսագետների կողմից անվանվում է նաև իրավիճակային (կոնյուկտուրային) քաղաքականություն: Վերջինս միտված է տնտեսության մեջ տեղ գտնող ցիկլային տատանումների համահարթեցմանը և հատկապես խորը և սուր բնույթ կրող ցիկլային ճգնաժամերի կանխարգելմանը կամ մեղմմանը, տնտեսության միջնաժամկետ և երկարաժամկետ կարգավորման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, ինչը նպաստելու էր դրա հետագա աճին ու զարգացմանը:

Նախորդ դարի 50-ից 70-ական թվականներին՝ արևմտյան երկրների մեծ մասում իրականացվում էր քեյնսյան տեսության հիմնադրույթների վրա հիմնված տնտեսության հակացիկլիկ կարգավորում: Բարձր պետական ծախսերը՝ տնտեսության ենթակառուցվածքներում համապատասխան ներդրումների ուղղությամբ (օրինակ, տրանսպորտ, կապ, սոցիալական ենթակառուցվածք), մասնավոր ներդրումների խթանումը և պետական գնումները զգալիորեն մեծացրել էին համախառն պահանջարկը: Քեյնսյան քաղաքականությունը մեծապես նպաստեց նրան, որ վերը նշված ժամանակահատվածում ՀՆԱ աճի տեմպերը հասնեն ամենաբարձր նիշին՝ կապի-

տալիզմի գոյության ողջ ընթացքում, իսկ գործազրկության մակարդակը՝ ամենացածրին, ընդ որում՝ աշխատուժի պահանջարկը, հատկապես Արևմտյան Եվրոպայում գերազանցում էր դրա առաջարկը, ինչը բերեց դրա զանգվածային ներմուծմանն այլ աշխարհամասերից: Նման քաղաքականությունը թելադրվում էր ոչ միայն ներտնտեսական պահանջմունքներով՝ հետպատերազմյան տնտեսության վերականգնման և վերակառուցման հետ կապված, այլև երկու հակադիր հասարակարգերի սուր պայքարով:

Վերը նշված ժամանակահատվածում Արևմտյան Եվրոպայում և Ճապոնիայում, ճիշտ է, նկատվում էր ՀՆԱ աճի տեմպերի ցիկլային տատանումներ, սակայն, տեղի չունեին որևէ նշանակալի ցիկլային ճգնաժամեր: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա այստեղ այդպիսի ճգնաժամերը նկատվել են ոչ մեկ անգամ, քիչ թե շատ արտահայտված պարբերականությամբ, սակայն, դրանք չէր կարելի ոչ մի կերպ համեմատել «Մեծ դեպրեսիայի» հետ, երբ ամերիկյան և ընդհանրապես աշխարհի կապիտալիստական ողջ տնտեսությունը հետ մղվեց մոտ 30 տարով: Այդ ժամանակահատվածից հետո տեղ գտնող առանձին ճգնաժամային դրսևորումները արագ կերպով հաղթահարվում էին քեյնսյան տնտեսական կարգավորման մեթոդներով: Դրա վառ օրինակ է հանդիսանում Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում 1966-1967թթ. տեղ գտած ցիկլային ճգնաժամի հաղթահարումն՝ ընդամենը 5–6 ամսում:

Քեյնսյան կարգավորման մեթոդներից բխող՝ հակացիկլային կարգավորմանը և տնտեսական աճի ապահովմանն ուղղված պակասորդային ֆինանսավորումը նպաստեց դրամական շրջանառության արագ ընդլայնմանը և տնտեսության մեջ սղաճային ճնշումների ի հայտ գալուն: Նշված ուղղությամբ էր գործում նաև պետական մեղմ դրամավարկային քաղաքականությունը, որի նպատակն էր ներդրումների խթանմանն ուղղված ցածր բանկային տոկոսադրույքների սահմանումը: Այս քաղաքականության արդյունքում՝ արագ տեմպերով աճում էր փողի զանգվածը, ինչն, իր հերթին, ևս նպաստում էր տնտեսության մեջ սղաճային էֆեկտների առաջացմանը, և որոնք ևս գիտակցաբար հաշվի էին առնվում: Մեղմ կամ սողացող ինֆլյացիան դիտարկվում էր որպես անխուսափելի վճար կամ հատուցում՝ տնտեսական աճի դիմաց, ինչը, բնականաբար, ավելի քիչ չարիք էր տնտեսության համար, քան խորը ցիկլային ճգնաժամն՝ իր բոլոր բացասական դրսևորումներով: Քեյնսյան քաղաքականությունը ընդհանուր առմամբ, նպաստում էր բարձր զարգացվածություն ունեցող սոցիալական ապահովության համակարգի ձևավորմանը և ֆինանսավորմանը, չնայած դա իր հետ բերում էր մեծ սղաճային ռիսկեր: Սակայն, մյուս կողմից, պակասորդային ֆինասավորումը՝ըստ քեյնսյան մեթոդների՝ աստիճանաբար հանգեցնում էր բյուջետային ճգնաժամի և սահող ինֆլյացիան՝ քառարշավի վերածվելու: Այն, որ այդպիսի ճգնաժամ ի հայտ է եկել, ակնհայտ դարձավ 1974–1975 թթ., երբ կապիտալիստական արևմտյան տնտեսությունը՝ բազմաթիվ բացասական գործոնների՝ ժամանակային համընկնման հետևանքով առճակատվեց ճգնաժամերի մի ամբողջ «փնջի» հետ, որոնք իրենց բնույթով ինչպես ցիկլիկ, այնպես էլ կառուցվածքային (էներգետիկ, էկոլոգիական, հումքային) էին: Բյուջետային ճգնաժամը պայմանավորված էր նաև նրանով, որ տնտեսական աճին և սոցիալական ապահովությանն ուղղված բյուջեների պակասորդային ֆինանսավորումը լրացվում էր նաև ռազմական ոլորտին ուղղվող խոշոր ծախսերով՝ ինչը թելադրվում էր այդ ժամանակահատվածում մոլեգնող «սառը» պատերազմի հրամայականով:

1970-ական թվականների ճգնաժամերը, ինչպես նաև մեղմ սղաճի վերահսկողությունից դուրս գալն ու քառարշավի վերածվելը՝ արևմտյան երկրների ղեկավարությանը դրդեցին իրականացնել տնտեսական կուրսի կտրուկ փոփոխություն: Պետական տնտեսական կարգավորման տեսական և գործնական ոլորտներում «քեյնսյան հեղափոխությանը» եկավ փոխարինելու «նեոպահպանողական հակահեղափոխությունը», որի գաղափարական հենքն էին հանդիսանում մոնետարիզմի և առաջարկի տեսության հիմնադրույթները, որոնք հիմնականում բնորոշվում էին տնտեսության ապակարգավորմամբ:

1980–1990-ական թվականներին կոնյուկտուրային քաղաքականությունն ընդհանուր առմամբ ավելի սահուն և զուսպ բնույթ ձեռք բերեց: Քեյնսյան տեսության շրջանակում ՀՆԱ և զբաղվածության դինամիկայի հակացիկլիկ կարգավորման համար նախկինում իրականացվող՝

սղաճի հանգեցնող լրացուցիչ առաջարկի խթանման զանգվածային միջոցառումներն այդ ժամանակահատվածում արդեն արդիական չէին, քանի որ այդ փուլում համաշխարհային շուկայական տնտեսությունն անցում էր կատարել երկարատև և համեմատաբար կայուն տնտեսական աճի: Վերջինս պայմանավորված էր տեխնոլոգիական տեղաշարժերով (գիտատեխնիկական հեղափոխության նոր փուլը՝ կապված հիմնականում միկրոէլեկտրոնիկայի զանգվածային տարածման հետ), և ՀՆԱ ու զբաղվածության մակարդակների շարժը որոշվում էր ոչ այնքան պահանջարկի շարժով, որքան տնտեսության տեխնոլոգիական զարգացման և համաշխարհային տնտեսական գործոններով: Այդ իսկ պատճառով կոնյուկտուրային քաղաքականությունը կենտրոնացվել էր հիմնականում դրա հակասղաճային ասպեկտներում՝ պահպանելու 1980–1990-ական թվականներին բնորոշ սղաճի ցածր տեմպերը, ինչպես նաև դրա խելամիտ աճի տեմպերը՝ տնտեսության կտրուկ աճի փուլ թևակոխելուց:

Նշենք, որ ավելի զուսպ ու կանխատեսելի կոնյուկտուրային քաղաքականության անցումը տեղ գտավ տնտեսագիտության մեջ գիտական առաջընթացի շնորհիվ՝ կապված տնտեսական իրավիճակների կանխատեսման գործիքակազմի և մեթոդների կատարելագործման հետ, ինչը լայնորեն կիրառություն գտավ պետությունների, տարբեր հետազոտական կենտրոնների ու այլ կառույցների կողմից:

Ինչ վերաբերում է պետության կողմից կիրառվող երկարաժամկետ նպատակային կարգավորման ուղղությանը, ապա պետք է ասել, որ այն, հիմնականում, ուղղված է տնտեսության արդիականացմանն ու դրա աճին: Այս քաղաքականությունը ենթադրում է պետության կողմից յուրաքանչյուր ժամանակահատվածի համար ընտրվող կառուցվածքային քաղաքականության և փոխկապակցված միջնաժամկետ ու երկակարաժամկետ կանխատեսումների ծրագրերի, ինչպես նաև տնտեսական աճին միտված քաղաքականության կիրառում՝ ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ դրա առանձին ճյուղերի և տարածաշրջանների համար:

Պետական տնտեսական կարգավորման տեսական և կիրառական հիմնադրույթներում կարգավորման այս ձևը տարբեր անվանումներ ունի. մակրոտնտեսական, շրջանակային և ինդիկատիվ պլանավորում, գլոբալ կարգավորում և այլն:

Շրջանակային պլանավորման հիմքում ընկած է տնտեսության զարգացման միջնաժամկետ (4–5 տարի) և երկարաժամկետ կանխատեսումների համակարգը: Միջնաժամկետ կանխատեսումները, որպես կանոն, մշակվում են «սահող» մեթոդով, այսինքն, յուրաքանչյուր տարի ճշգրտվում և երկարաձգվում են մեկ տարով (օրինակ, 2013–2017թթ. ծրագիրը վերափոխվում է 2014–2018թթ. ծրագրի): Միջնաժամկետ ծրագրերի առաջնահերթ նշանակությունը կայանում է նրանում, որ դրանք ելակետ են հանդիսանում կանխատեսվող տարում պետական բյուջեի եկամուտների և ծախսերի հաշվարկման համար:

Որպես կանոն, պետությունը հանձնարարում է նմանօրինակ կանխատեսումների մշակումը միաժամանակ մի քանի հեղինակավոր գիտահետազոտական կենտրոնների: Ներկայացված կանխատեսումներից ընտրվում է մեկը կամ կատարվում է դրանցից մի քանիսի միաձուլում: Արդյունքում՝ ձևավորվում են նպատակային կանխատեսումներ, որոնք ծառայում են որպես հիմք՝ պետական ֆինանսների պլանավորման համար: Այնուհետև, պետական մարմինների կողմից ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ՝ պետական կարգավորման գործիքակազմն՝ այս կանախատեսումներն ի կատար ածելու գործում ավելի նպատակային և փոխկապակցված կիրառելու առումով:

Կառավարության կողմից հետապնդվող մակրոտնտեսական նպատակների հասնելուն է միտված նաև ճյուղային և տարածաշրջանային ծրագրերը, որոնց բովանդակությունը սահմանվում է պետական կառուցվածքային քաղաքականության առաջնահերթություններով: Այս քաղաքականության հիմնական թիրախներից է ճգնաժամի հաղթահարումը և դրա ազդեցությունների մեղմացումը, տնտեսության կայունացումը, ինչպես նաև տնտեսական որոշակի ճյուղերի, ոլորտների և տարածաշրջանների տնտեսական խթանումը: Կառուցվածքային քաղաքականության նպատակների իրագործման համար օգտագործվում են այնպիսի գործիքներ, ինչպիսիք են պետական վարկային երաշխիքները, սուբսիդիաները, հարկային արտոնությունները

և այլն: Մասնավորապես, ԵՄ շրջանակներում ազգային ճյուղային և տարածաշրջանային ծրագրերը համադրվում են դրան անդամակցող երկրների նմանատիպ ծրագրերի հետ, այսինքն կազմակերպվում է, այսպես կոչված, «կոմունիտար» սկզբունքով[1]:

Հարկ է նշել, որ զարգացած երկրներում՝ տնտեսության ճյուղերի մեջ այդպիսի երկարաժամկետ արտոնություններ են սահմանված գյուղատնտեսության ոլորտի համար: Վերջինիս աջակցման համար ծախսվում է միջինում ՀՆԱ 3–4%, իսկ Շվեյցարիայում՝ ընդհուպ մինչև ՀՆԱ 6%–ը կազմող միջոցներ: ԵՄ-ում գյուղատնտեսության աջակցությունը՝ բոլոր անդամ-պետությունների համար իրականացվում է Միասնական ագրարային հիմնադրամի միջոցներից, որին ուղղվում է Միության բյուջետային ամբողջ ծախսերի գրեթե 3/4-ը: Այդպիսի աջակցությունը ուղղված է հիմնական սննդամթերքներով ԵՄ անդամ-պետությունների ինքնաբավարարմանը և գյուղացիական խավի պահպանմանը, որպես հասարակության սոցիալական կայունության կարևոր նեցուկ[2]:

Հավելենք նաև, որ երկարաժամկետ պետական անհատույց աջակցությունից օգտվում են արդյունաբերության կառուցվածքաճգնաժամային ճյուղերը, որոնց արտադրության ծավալները այս կամ այն պատճառներով օժտված են կրճատման տենդենցներով: Այսպես, Արևմտյան Եվրոպայում դրանց շարքին են դասվում ածխաարդյունաբերությունը, տեքստիլ արդյունաբերությունը, սև մետալուրգիան և նավաշինությունը: Վերջիններիս ուղղվող օժանդակությունը, առաջին հերթին, ֆինանսական է և ապահովում է արտադրության սահուն կրճատում մինչև այն չափերը, որի դեպքում թողարկվող արտադրանքը կմնա մրցունակ և շուկայում բավարար իրացում կունենա: Այս օժանդակությունը մեղմացնում է նաև այդ ճյուղերում ճգնաժամի բացասական սոցիալական հետևանքները՝ դրանցում ընդգրկված աշխատողների համար, որոնք վերարտակավորվում են նոր մասնագիտությունների գծով, ինչպես նաև ստանում են միանվագ նպաստներ՝ ժամկետից շուտ թոշակի անցնելու դեպքում: Նմանատիպ «կոմունիտար» (ինտեգրացիոն միավորման շրջանակում) ծրագրերի տիպային օրինակ է հանդիսանում նաև, այսպես կոչված, «Դավինյոնի պլանը»՝ ԵՄ անդամ-պետությունների սև մետալուրգիայի ճյուղի համար[3]:

Նորագույն՝ ապագային ուղղված տնտեսական ճյուղերը, որպես կանոն, ստանում են պետության աջակցություն ժամանակավոր հիմունքներով, մինչև նոր արտադրանքի մասսայական արտադրության ներդրումը և բավարար շահութաբերության ապահովումը: Այդպիսի օգնություն, համատարած կերպով ստացավ միկրոէլեկտրոնիկայի ճյուղը, իսկ Արևմտյան Եվրոպայում նաև՝ քաղաքացիական ավիաշինությունը (օրինակ, եվրոպական արտադրության «A-310» աէրոբուսների արտադրությունը): Նման օգնությունը կարող է լինել ինչպես անշահախնդիր, այնպես էլ արտոնյալ ու վերադարձելի:

ԵՄ տարածաշրջանային հիմնադրամի միջոցներով իրականացվում է թույլ զարգացած տարածաշրջանների տնտեսական աջակցության «կոմունիտար» ծրագրերը: ԵՄ ամբողջ տարածքն՝ ըստ տնտեսական զարգացվածության աստիճանի՝ բաժանված է հինգ առանձին կատեգորիաների դասվող տարածաշրջանների: Որքան ցածր է տվյալ տարածաշրջանի տնտեսական զարգացվածությունը և համապատասխանաբար՝ նրա կատեգորիան, այդքան ավելի մեծ աջակցություն է այն ստանում ԵՄ-ից: ԵՄ «կոմունիտար» տարածաշրջանային ծրագրերը յուրաքանչյուր երկրում լրացվում են նաև ազգային նմանատիպ ծրագրերով:

Ամփոփելով, նշենք, որ ինչպես հակացիկլիկ, այնպես էլ երկարաժամկետ նպատակային կարգավորումները կարևոր տեղ են զբաղեցնում տնտեսության պետական կարգավորման համակարգում և դրանց օպտիմալ հավասարակշռության դեպքում՝ հնարավոր է ապահովել կայուն տնտեսական աճ, իսկ ճգնաժամային իրավիճակներում խուսափել խորը տնտեսական անկումներից:

---

1 http://ec.europa.eu/environment/integration/recovery_plan.htm
2 http://ec.europa.eu/agriculture/
3 www.larouchepub.com/eiw/public/1979/eirv06n13-19790403/...

Карен Саргсян
Армен Саргсян

АНТИ-ЦИКЛИЧЕСКОЕ И ДОЛГОСРОЧНОЕ ЭКОНОМИЧЕСКОЕ РЕГУЛИРОВАНИЕ В КОНТЕКСТЕ ГОСУДАРСТВЕННОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ

Аннотация

Любая страна, на протяжении всего исторического развития при осуществлении некоторых экономических функций пользуется соответствующими рычагами. В зависимости от воздействия на общественное воспроизводство, выделяются две основные формы экономического регулирования: антициклическая или краткосрочная и долгосрочная или целевая. При условии их оптимального балансирования возможно обеспечение устойчивого экономического роста и избежание глубоких экономических спадов в кризисных ситуациях.

Karen Sargsyan
Armen Sargsyan

ANTI-CYCLIC AND LONG-TERM ECONOMIC REGULATIONS WITHIN THE CONTEXT OF STATE ECONOMIC POLICY

Abstract

Any country, throughout the course of the historical development, has implemented some of the economic functions by means of its appropriate tools. Depending on the nature of impact on the common industry, there are two main forms of economic regulation: anti-cyclic or short-term regulation and target or long-term regulation. In the case of the optimal balance between them, it is possible to provide a sustainable economic growth and to avoid deep economic declines during crisis situations.

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.

ԵՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Վերջին համաշխարհային ֆինասատնտեսական ճգնաժամը ԵՄ համար ունեցավ երկու կարևոր առանձնահատկություններ: Առաջինը կապված էր աշխատանքի միջազգային բաժանման մեջ ԵՄ դերի փոփոխման և նրա մրցակցային դիրքի թուլացման վտանգի հետ: Երկրորդ առնաձնահատկությունը կապված էր ԵՄ-ի դեպի արևելք տարածման ու ընդլայնման հետ: Ծավալված ինտեգրացիոն գործընթացների հետևանքով՝ անցումային բնույթի տնտեսությունները ևս համարվում էին ԵՄ տնտեսական ընդհանուր տարածության բաղկացուցիչ մաս և իրենց ազդեցությունն էին թողնում ԵՄ ողջ տնտեսության մեջ ընթացող գործընթացների վրա: Բնականաբար, այդպիսի տնտեսությունները ճգնաժամի ազդեցություններին բոլորովին այլ կերպ կարձագանքեին, քան հարևան զարգացած շուկայական տնտեսությունները: Այլ կերպ ասած, ճգնաժամը ԵՄ-ում առաջ բերեց, այսպես կոչված, «ասիմետրիկ շոկ»:

ԵՄ հակաճգնաժամային միջոցառումների բնույթին անդրադառնալուց առաջ՝ նախ և առաջ պետք է հասկանալ, թե ինչպիսին է նրա ընդհանուր տնտեսական քաղաքականությունը:

Փաստացի, այն իրենից ներկայացնում է կարգավորման տարբեր ուղղությունների մի համախումբ, որոնք առաջացել և զարգացել են ինտեգրացիոն գործընթացների շրջանակներում և տարբեր ժամանակահատվածներում: Անդրադառնանք այդ քաղաքականության հիմնական գործառնական բաղադրիչներին:

Առաջին հերթին, ԵՄ-ն ունի միասնական ներքին շուկա, որի ներսում ազատ տեղաշարժվում են ապրանքները և ծառայությունները, իսկ դրա սահմաններից դուրս գտնվող երրորդ երկրների նկատմամբ գործում է ԵՄ բոլոր անդամների համար միասնական կարգ: Այստեղ գործում է ընդհանուր մրցակցության խթանման, արտաքին տնտեսական, ինչպես նաև արդյունաբերական և հարկային քաղաքականությունները: Այս հարաբերությունների կարգավորման գործում էական դեր է խաղում ԵՄ իրավական դաշտն ու դատական համակարգը՝ հանձինս Եվրոդատարանի: Երկրորդ հերթին, ԵՄ տրամադրության տակ առկա է ֆինանսական գործիքակազմ, որոնցից ամենագլխավորը՝ ԵՄ բյուջեն է, որը ներկայումս կազմում է ԵՄ անդամ երկրների բյուջեների մոտ 1%-ը: Դրա միջոցները բաշխվում են մի շարք նպատակային ֆոնդերի միջև, այդ թվում՝ գյուղատնտեսական, տարածաշրջանային, սոցիալական, համախմբման ու համերաշխության ֆոնդեր և այլն :

Եվրոպական ներդրումային բանկը հավաքագրում է դրամական շուկայի միջոցները՝ ԵՄ համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ներդրումային նախագծերի ֆինանսավորման նպատակով:

Երրորդ հերթին, ԵՄ-ն ակտիվորեն գործում է մի քանի ճյուղային ուղղվածությամբ: Սրանց թվին է դասվում՝ գյուղատնտեսական, էներգետիկ, տրանսպորտային ոլորտներում իրականացվող քաղաքականությունները:

Չորրորդ հերթին, գործում է Տնտեսական և արժութային միությունը՝ բաղկացած երկու մասից: Միասնական դրամավարկային քաղաքականությունն իրականացնում է ԵՄ Կենտրոնական բանկը (ԵԿԲ)-ն, իսկ ընդհանուր տնտեսական քաղաքականությունը՝ Խորհուրդը և հանձնաժողովները: Յուրաքանչյուր երեք տարին մեկ՝ վերջիններս ընդունում են ԵՄ տնտեսական քաղաքականության գերակա ուղղությունները՝ հիմնական շեշտը դնելով Մաաստիխտյան համաձայնագրով ամրագրված չափորոշիչների իրականացման վրա, ինչպիսիք են, օրինակ՝ բյուջետային կարգապահության ապահովումը և ցածր սղաճի պահպանումը: Վերը հիշատակված փաստաթղթի ինքնուրույն մաս է հանդիսանում զբաղվածության ոլորտում գործողությունների պլանը, ինչի հիման վրա յուրաքանչյուր անդամ երկիր ընդունում է համապատասխան ազգային ծրագիր:

2000 թվականի մարտ ամսին Լիսաբոնում կայացած Եվրախորհրդի նստաշրջանին ընդունվեց ԵՄ Լիսաբոնյան ռազմավարությունը: Դրա գլխավոր նպատակն էր 10 տարվա ընթացքում ԵՄ-ի վերածումը աշխարհի ամենադինամիկ զարգացող և մրցունակ տնտեսության: Այսպիսով, ԵՄ-ն փորձում էր ոչ միայն միավորել մեկ տանիքի տակ տնտեսական քաղաքականության հիմնական տարրերը, այլև դրանք համաձայնեցնել և կապել ընդլայնողականացման մարտահրավերների հետ:

Համաձայն նոր ծրագրի՝ ԵՄ տնտեսությունը պետք է հիմնված լինի գիտելիքների և կայուն զարգացման սկզբունքների վրա, որոնք ենթադրում են զարգացման կայուն տեմպերի ապահովում, բազմաթիվ նոր աշխատատեղերի ստեղծում և կյանքի բարենպաստ ու արժանի մակարդակի ապահովում ազգաբնակչության բոլոր խմբերի համար:

Սակայն, շուտով պարզ է դառնում, որ ԵՄ-ին չի հաջողվելու իրականացնել դրված խնդիրը: Որպեսզի չխափանվի Լիսաբոնյան ռազմավարությունը՝ 2005 թվականին այն բարեփոխվեց՝ անվանվելով «Տնտեսական աճի և զբաղվածության Լիսաբոնյան ռազմավարություն»: Վերջինիս հիմնական նպատակներն էին տնտեսական աճը և աշխատատեղերի թվաքանակի ավելացումը: Այլ նպատակներից կարող ենք նշել՝ գիտատեխնիկական առաջընթացի խթանումը, կյանքի որակի բարելավումը, շրջակա միջավայրի բարելավումը, ԵՄ էներգետիկ անվտանգության ապահովումը:

Ինչպես տեսնում ենք, ԵՄ մարմինների տրամադրության տակ չկային բազմաթիվ տնտեսական գործիքներ, որոնց օգնությամբ նրանք կկարողանային դիմակայել ճգնաժամի ազդեցություններին:

Միայն առևտրային քաղաքականության ոլորտում ԵՄ-ն օժտված է բացառիկ լիազորություններով. հենց նրան, այլ ոչ թե առանձին երկրների կառավարություններին է վերապահված մաքսատուրքերի սահմանումը և առևտրային հոսքերի կանոնակարգման այլ մեթոդների կիրառումը: Սակայն, ներկայումս այդ լծակի կիրառումը իրատեսական չէ, քանի որ ԵՄ-ն հանդես է գալիս պրոտեկցիոնիզմի ուժեղացման դեմ՝ ինչպես ԵՄ տարածքում, այնպես էլ ողջ աշխարհում: Ճգնաժամի սկսելուն պես այս դիրքորոշումն ավելի ամրապնդվեց:

Հարկային քաղաքականության ոլորտում ԵՄ-ն ակտիվորեն պայքարում է հարկային, այսպես կոչված, «դեմփինգի» դեմ և զբաղված է ազգային հարկային համակարգերի ներդաշնակեցմամբ: Հենց դրանց շրջանակներում՝ ճգնաժամի պայմաններում կարող են փոփոխվել հարկային դրույքները և հարկման մակարդակները:

Բյուջետային միջոցների օգտագործման հնարավորությունները ԵՄ-ում մեծ չեն: Այստեղ գործող 2007-2013թթ. բյուջետային ծրագիրը համաձայնեցվել էր երկարատև բանակցությունների արդյունքում՝ հանդիսանալով բարդ կոմպրոմիսային լուծում բազմաթիվ շահագրգռված կողմերի համար: Դա է հիմնական պատճառը, որ ամենամյա բյուջեում կատարվում են միայն աննշան ճշգրտումներ: ԵՄ մարմինները նույնիսկ խիստ դեպրեսիայի պարագայում չեն կարող կրճատել, օրինակ, գյուղատնտեսության սուբսիդիաները և դրա արդյունքում մեծացնել բարձր տեխնոլոգիական արտադրությունների զարգացմանն ուղղվող միջոցները: Դրա փոխարեն նրանք հնարավորություն ունեն կատարել ավանսային վճարումներ այս ուղղությամբ, ինչը և տեղի ունեցավ 2009 թվականին:

Ճյուղային տնտեսական քաղաքականության շրջանակում (գյուղատնտեսական, տրանսպորտային և էներգետիկ) ԵՄ-ն կիսում է լիազորությունները՝ անդամ-պետությունների հետ: Հանձնաժողովը զբաղվում է ռազմավարական պլանավորման խնդիրներով, իսկ Խորհուրդը՝ իրավական ակտերի մշակմամբ: Երկու այս գործիքներն էլ ցուցաբերում են երկարատև ազդեցություններ շուկայի վրա, իսկ դրանց իրականացման ձևերը մեծապես կախված են ազգային իշխանությունների որոշումներից: Բացի այդ, նշված ճյուղերը չեն հանդիսանում որպես հիմնականներ՝ ռեցեսիայից դուրս գալու համար: Ինչ վերաբերում Տնտեսական և արժութային միությանը, ապա ճգնաժամի սկսվելուն պես դրա հիմնական նպատակը, այն է՝ պետական ֆինանսների առողջացումը, կորցրեց իր հրատապությունը: Ճգնաժամի պայմաններում՝ համարյա բոլոր անդամ-երկրները ներգրավվեցին փրկելու իրենց հայրենական բանկերը և բիզնեսը, իսկ ԵՄ-ն խելամտորեն «աչքերը փակեց» պետական բյուջեների պակասորդների աճի վրա: Ամենապահանջված տնտեսական քաղաքականության ուղղությունը հանդիսացավ զբաղվածության ոլորտում իրականացվող միջոցառումների պլանը և հենց գործազրկության դեմ պայքարը: Վերջինս ԵՄ-ն հայտարարեց որպես իր հակաճգնաժամային քաղաքականության հիմնական ուղղություն:

Չեռնարկված միջոցառումները և դրանց հետևանքները: 2008 թվականի հոկտեմբեր ամսից արդեն ճգնաժամն իրեն զգացնել տվեց ամբողջ ուժով: 2008 թվականի նոյեմբերի 27-ին Եվրոպական հանձնաժողովը Խորհրդին ներկայացրեց «ԵՄ տնտեսական վերականգնման պլան» (“European Economic Recovery Plan”)-ի նախագիծը, որը հաստատվեց նույն տարվա դեկտեմբերին: Փաստաթղթում մասնավորապես ասվում էր, որ ձևավորված իրավիճակը հանդիսանում է «ԵՄ կառավարական մարմինների համար իսկական փորձություն», և որ անդամ-երկրները պետք է միասնաբար դիմակայեն ճգնաժամին[1]:

Ի հակադրություն ձևավորված ավանդույթին՝ փաստաթղթի հեղինակները թողեցին ավանդական բյուրոկրատական ոճը և տեքստը լցրեցին զգայական կոչերով: Մասնավորապես, դրանցից մեկը հնչում է այսպես. «Մենք կխորտակվենք կամ կփրկվենք միասին»[2]: Պլանը հիմնված էր երկու հիմնական հիմքերի վրա: Դրանցից առաջինը՝ սպառողական վստահության խթանումը և

[1] ec.europa.**eu**/**economy**_finance/publications/publication13504
[2] Տե՛ս նույն տեղում:

պահանջարկի ընդլայնումն էր: Հանձնաժողովն առաջարկեց, որ անդամ-երկրները և ԵՄ-ն հրատապ կերպով այդ նպատակին հատկացնեն 200 մլրդ եվրո (ՀՆԱ 1,5%): Երկրորդ հիմքը՝ ԵՄ մրցակցային դիրքի ուժեղացումն է: Այդ նպատակով մշակվեցին, այսպես կոչված, «խելացի» ներդրումների ծրագրեր, որոնք իրենց մեջ ներառում էին նաև ներդրումներ՝ ուղղված էներգախնայողությանը և էներգիայի արդյունավետ օգտագործմանը, մաքուր տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպես նաև գիտահետազոտական ենթակառուցվածքների զարգացմանը: Պլանի հիմնական սկզբունքներ հայտարավեցին համերաշխությունը և սոցիալական պատասխանատվությունը: Այստեղ, մասնավորապես, խոսք էր գնում գործող աշխատատեղերի պահպանման, գործազուրկների աջակցության, էներգիայի գնի նվազեցման և ազգաբնակչության խոցելի խավերի համար ինտերնետային ծառայությունների մատուցման միջոցառումների մասին:

2009 թվականի մարտի 4-ին՝ ԵԽ-ի գարնանային նստաշրջանի նախաշեմին Հանձնաժողովն ընդունեց «Տնտեսական վերականգնմանն աջակցություն» անվանումը կրող մի փաստաթուղթ (“Driving Economic Recovery”): Եթե 2008 թվականի դեկտեմբերին ընդունված պլանը ուղղված էր ռեցեսիայի տեմպերի նվազեցմանը և տնտեսության աշխուժացմանը, ապա այժմ խնդիր էր դրվում անդամ-երկրների միջև կոորդինացիայի ուժեղացման և տնտեսական աճի փուլին անցնելու: Նշված փաստաթուղթը պարունակում էր ֆինանսական հատվածի բարեփոխումների լայն ծրագիր: Այն ավելի ճշգրտում և ուղղորդում էր սպառողական պահանջարկի աջակցմանը, ներդրումների աճին և առկա աշխատատեղերի պահպանմանն ու նորերի ստեղծմանն ուղղված միջոցառումները: Բացի այդ, նշված փաստաթղթում խոսվում էր 2009թ. մայիսին ԵՄ գագաթնաժողովի անցկացման մասին, որը նվիրվելու էր զբաղվածության հիմնախնդիրների քննարկմանը, ինչպես նաև ապրիլ ամսին Լոնդոնում տեղի ունենալիք «Մեծ քսանյակի» գագաթաժողովին առաջարկությունների նախապատրաստման մասին՝ ԵՄ կողմից ներկայացվելու համար: Պետք է ասել, որ դեկտեմբերյան պլանը համահունչ էր կայուն զարգացման Լիսաբոնյան ռազմավարությանը և նախատեսում էր երկարատև բնույթի միջոցառումների լայն սպեկտր, այդ թվում՝ գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների արդյունավետության բարձրացման, տնտեսության էներգատարության կրճատման և մաքուր տեխնոլոգիաների զարգացաման ուղղությամբ: Այս առումով, մարտին ընդունված ծրագիրն ավելի համեստ էր, գործնական և կոնկրետ ուղղորդված: Կարծում ենք, հենց դրանում է կայանում ԵՄ հակաճգնաժամային քաղաքականության ձախողումը: Մի կողմից, նա փորձում էր լուծել Միության՝ աշխարհում ունեցած դիրքերի երկարատև ամրապնդման խնդիր՝ հատկապես նոր ինդուստրիալ երկրների տնտեսությունների արագ աճի պարագայում (Չինաստան, Հնդկաստան և այլն), իսկ մյուս կողմից, իրավասությունների սահմանափակման պարագայում՝ իրականացվող միջոցառումների արագ և սոցիալական առումով շոշափելի արդյունքներ ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ ստիպված էր զգալի կերպով կրճատել նախապատվությունների շրջանակը:

Հակաճգնաժամային քաղաքականության ամենամեծ ու շոշափելի հաջողությանը, թերևս, ԵՄ-ն հասավ ֆինանսական շուկաների կայունացման ոլորտում: Անդամ–պետությունների զգալի մասում իրականացվեցին բանկային համակարգի աջակցության լայնամասշտաբ ծրագրեր, մեծացվեցին ավանդների պետական երաշխավորությունների չափերը, խստացվեց ֆինանսական հաստատությունների վերահսկողությունը:

ԵՄ մարմինների ներդրումը մեծ էր նաև ճգնաժամի պատճառների խորը և բազմակողմանի վերլուծության, կոլեկտիվ առաջարկությունների և նոր ստանդարտների մշակման գործում: 2009 թվականի փետրվարին՝ ԱՄՀ նախկին գործադիր տնօրեն Ժակ դե Լառոսյերի գլխավորությամբ աշխատանքային խումբը՝ Եվրոհանձնաժողովին ներկայացրեց զեկույց՝ ԵՄ անդամ–պետությունների ֆինանսական հաստատությունների վերահսկողության համակարգի զարգացման վերաբերյալ: Այդ զեկույցը պարունակում էր առաջարկություն՝ համակարգային ռիսկերի գծով Եվրոպական համակարգ (ESRB) ձևավորելու վերաբերյալ, որն իրականացնելու էր ֆինանսական շուկաների բոլոր հատվածների մակրոտնտեսական վերահսկողություն՝ թույլ չտալու ճգնաժամի կրկնումը:

Նույն զեկույցով առաջարկվում էր ստեղծել նաև Ֆինանսական վերահսկողության եվրոպական համակարգ (ESFS), որը կապահովեր ազգային վերահսկողական մարմինների գործողությունների կոորդինացիան և այս ոլորտում նոր ստանդարտներ կսահմաներ:

ԵՄ-ին, չնայած հաջողվեց կանխել բանկային խուճապը և բանկերի զանգվածային սնանկացումները, սակայն, ազգաբնակչության և ձեռնարկությունների վարկավորման պայմանները դեռ բավականաչափ անբարենպաստ էին:

Ճգնաժամի սկսվելուց հետո ԵՄ-ն՝ տնտեսության իրական հատվածի և ազգաբնակչության աջակցության նպատակով հատկացրեց շուրջ 400 մլրդ եվրո, ինչը հավասարազոր էր համախմբված ՀՆԱ 3,3%-ին: Այս միջոցների գերակշիռ մասը հատկացրել էին ազգային կառավարությունները, իսկ ԵՄ ներդրումը բավականաչափ համեստ էր: Այսպես, տարածաշրջանային քաղաքականության գծով 2009 թվականին նախատեսվել էր իրականացնել ավանսային վճարումներ՝ 6,26 մլրդ եվրո՝ համախմբման հիմնադրամից, Տարածաշրջանային զարգացման եվրոպական հիմնադրամից և Եվրոպական սոցիալական հիմնադրամից: Արդյունքում, այս ուղղությամբ տարեկան վճարները կաճեն 5-ից մինչև 11,25 մլրդ եվրո: Միաժամանակ, վերացվեց ազգային իշխանությունների կողմից նախագծերի պարտադիր համաֆինանսավորման կարգը: Եվրոպական ներդրումային բանկը հայտարարեց հունիս ամսին ԵՄ անդամ-երկրներում նախագծերի տարեկան վարկավորման չափաբաժինը՝ սովորաբար կիրառվող 45 մլրդ եվրոյից մինչև 60 մլրդ եվրո:

Փորձագետների կարծիքով, վերջին ճգնաժամի արդյունքում տեղ գտած ռեցեսիան ամենածանրն է այս տարածաշրջանի համար՝ հետպատերազմյան ժամանակաշրջանում: 2009 թվականին ԵՄ համախառն ՀՆԱ-ն նվազեց 4%-ով, իսկ համախառն ներդրումները 10.5%-ով: Նշենք, որ 1974–1975թթ. ՀՆԱ առավելագույն անկումը կազմել էր 2%, 1980–1982թթ.՝ 0,5%, իսկ1992–1993թթ.՝ 1,5%, իսկ ներկա ճգնաժամի արդյունքում ՀՆԱ կրճատումը կազմել է մինչև 5,5%:

Աղյուսակ 1

ԵՄ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2006-2010թթ. (տարեկան աճը %--ով)[1]

Մակրոտնտեսական ցուցանիշը	2006	2007	2008	2009	2010
ՀՆԱ	3.1	2.9	0.9	-4.0	-0.1
Մասնավոր սպառում	2.3	2.2	0.9	-1.5	-0.4
Պետական սպառում	1.9	1.9	2.2	1.9	1.7
Համախառն ներդրումներ	6.2	5.4	0.1	-10.5	-2.9
Զբաղվածություն	1.5	1.7	0.7	-2.6	-1.4
Սղաճ	2.3	2.4	3.7	0.9	1.3
Բյուջեի հաշվեկշռվածություն, ՀՆԱ%	-1.4	-0.8	-2.3	-6.0	-7.3
Պետական պարտք, ՀՆԱ%	61.3	58.7	61.5	72.6	79.4

Հարկ է նշել, որ ֆինանսատնտեսական ճգնաժամը կարող է բերել ԵՄ տնտեսական ռազմավարության երկարաժամկետ որոշակի փոփոխությունների: Նախ և առաջ, կծավալվի մաաստրիխյան չափանիշների վերանայման գործընթաց, որոնք ընդունվել են դեռևս 1992 թվականին՝ Եվրոպական արժութային համակարգ ստեղծելու և եվրոյի կայունությունն ապահովելու համար: Ինչպես վերևում բերված աղյուսակից երևում է՝ 2009–2010թթ. ԵՄ-ում միջին պետական բյուջեի պակասորդը կազմել է ՀՆԱ 6,0-ից 7,3%, այն դեպքում, երբ թույլատրելի առաստաղն այստեղ 3%-ն է: Լատվիայում, Մեծ Բրիտանիայում և Իռլանդիայում 2009 թ. պետական բյուջեների պակասորդը հասել է ընդհուպ մինչև ՀՆԱ 13–15% չափի: Բացի դրանից, զգալի կերպով գերազանցվեց պետական պարտքի սահմանաչափը. 79,4% 2010թ.-ին՝ սահմանված ՀՆԱ 60%-ի փոխարեն: «Կայունության և աճի» պակտը, որը կոչված էր ԵՄ անդամ-

[1] European Commission. Economic Forecast. Spring 2009, p.3.

երկրների բյուջետային կարգապահության ապահովմանը, զգալի թուլացել էր 2005թ. բարեփոխումների արդյունքում: Ճգնաժամի արդյունքում դրա հակառակորդների համար նոր հիմնավորումներ հայտնվեցին՝ պահանջելու ԵՄ-ն վերահսկողական գործառույթի փոխարինում՝ տնտեսական աճի խթանման գործառույթով: Ճգնաժամի ընթացքում տեղ գտած՝ պետական պարտավորության և սղաճի ավանդական կապի խախտումը, ընդդիմադիրներին թույլ կտա հավաստել, որ ԵԱՀ-ն կարող է նորմալ կերպով գործել նաև առանց պետական ծախսերի խիստ վերահսկողության: Երկրորդ հերթին, ճգնաժամը նախադրյալներ ստեղծեց ԵՄ բյուջետային քաղաքականության նոր վերանայումների համար:

Ամփոփելով, հարկ է նշել, որ ԵՄ շրջանակներում իրականացված հակաճգնաժամային միջոցառումները ունեին ինչպես դրական, այնպես էլ բացասական էֆեկտներ ԵՄ տնտեսության վրա: Հենց այդ բացասական էֆեկտների խորը վերլուծությունը թույլ կտա ավելի կատարելագործել հետագայում հնարավոր տնտեսական ճգնաժամերի հաղթահարմանն ուղղված ձեռնարկումները:

Karen Sargsyan

EU ECONOMIC POLICY WITHIN THE CONTEXT OF THE GLOBAL FINANCIAL CRISIS

Abstract

The anti-crisis measures within the framework of EU had both positive and negative effects on the economy of the Union. In-depth analysis of these adverse effects will allow to improve the initiatives aimed to overcome further possible economic crises.

Карен Саргсян

ЭКОНОМИЧЕСКАЯ ПОЛИТИКА ЕС В КОНТЕКСТЕ МИРОВОГО ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКОГО КРИЗИСА

Аннотация

Антикризисные меры, реализованные в рамках ЕС, имели как положительные, так и отрицательные последствия для экономики ЕС. Именно углубленный анализ этих негативных последствий позволит усовершенствовать инициативы ЕС, направленные на преодоление потенциальных экономических кризисов в дальнейшем.

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 2013

ԳԻՐՔ 2

Հրատարակչության խմբագիր՝ Ա. Հովակիմյան
Նյութերի հավաքագրող՝ Ա. Մարկոսյան
Համակարգչային ձևավորումը՝ Մ. Համբարձումյանի

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ
Հասցեն՝ 0037, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փ. 15

Հրատ. պատվեր № 483
Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60×84 1/8:
Ծավալը՝ 28 պայմ. տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100 օրինակ:

Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: